ISSN 0135-0536

ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

Историко-филологический журнал

1

2022

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА

ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЙ ЖУРНАЛ

2022, 1 (219)

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ИЗДАТЕЛЬСТВО «ГИТУТЮН» НАН РА

ԵՐԵՎԱՆ 2022 ЕРЕВАН

Հանդեսը լույս է տեսնում 1958 թվականից
Հիմնադիր խմբագիր՝ Մ. Գ. Ներսիսյան

Журнал выходит с 1958 года
Редактор-основоположник М. Г. Нерсисян

Խ մ բ ա գ ր ա կ ա ն խ ո ր հ ո ւ ր դ

Ն ա խ ա գ ա հ՝ ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ
Գ լ խ ա վ ո ր խ մ բ ա գ ի ր՝ ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ
Գ լ խ ա վ ո ր խ մ բ ա գ ր ի տ ե ղ ա կ ա լ՝ ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ
Ա ն դ ա մ ն ե ր՝ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԼԵՎՈՆ, ԱՎԵՏԻՍՅԱՆ ՊԱՎԵԼ,
ԲԱՐԴԱԿՉՅԱՆ ԳԵՎՈՐԳ (ԱՄՆ), ԴԵՎՐԻԿՅԱՆ ՎԱՐԴԱՆ, ԶԵՔԻՅԱՆ ԼԵՎՈՆ (Իտալիա),
ԿԱՏՎԱԼՅԱՆ ՎԻԿՏՈՐ, ՀԱՍՐԱԹՅԱՆ ՄՈՒՐԱԴ, ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԵՆՐԻԿ,
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԻԿՈԼԱՅ, ՄՈՒՐԱԴՅԱՆ ՍԱՄՎԵԼ, ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ ՎԱՀԱՆ,
ՏԵՐՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ (ԱՄՆ), ՏՈՆԱՊԵՏՅԱՆ ԱՆԱՀԻՏ (Ֆրանսիա)

Редакционная коллегия

Председатель – АШОТ МЕЛКОНЯН
Главный редактор – АНУШАВАН ЗАКАРЯН
Заместитель главного редактора – АЭЛИТА ДОЛУХАНЯН
Члены – АБРАМЯН ЛЕВОН, АВЕТИСЯН ПАВЕЛ, АСРАТЯН МУРАД,
БАРДАКЧЯН ГЕВОРГ (США), ДЕВРИКЯН ВАРДАН, ЗЕКИЯН ЛЕВОН (Италия),
КАТВАЛЯН ВИКТОР, МУРАДЯН САМВЕЛ, ОГАНЕСЯН НИКОЛАЙ, ОГАНИСЯН ГЕНРИК,
ТЕР-ГЕВОНДЯН ВААН, ТЕРЯН АБРААМ (США),
ТОНАПЕТЯН АНАИТ (Франция)

Պատմաբանասիրական հանդես, 2022 Հապավումը՝ ՊԲՀ
© Историко-филологический журнал, 2022 Аббревиатура – ИФЖ

I

Doi:10.54503/0135-0536-2022.1-3

ՊՈՂՈՍ ՆՈՒԲԱՐԻ
ԾՆՆԴՅԱՆ 170-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ԳՈՐԾԻՉԸ ԵՎ ԲԱՐԵՐԱՐԸ. ՊՈՂՈՍ ՆՈՒԲԱՐ ՓԱՇԱ*

ՄԻՔԱՅԵԼ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Բանալի բառեր՝ Պողոս Նուբար փաշա, Գևորգ Հինդերորդ, Կ. Պոլսի պատրիարքարան, Հայ ազգային պատվիրակություն, հայկական բարեկործական միություններ, ռուս-թուրքական համաձայնագիր, Սևրի պայմանագիր, ՀԲՄ, մեծ բարերար, ազգային գործիչ, Մարի Նուբար:

Նախաբան

XX դարասկզբի հայ ազգային, հասարակական և քաղաքական գործիչների անզուգական փաղանգում Պողոս Նուբար փաշան չահեկանորեն առանձնանում է իր ազգանպաստ գործունեությամբ, որի համար ժամանակակիցների շրջանում վաստակեց բարձր հեղինակություն, իսկ սերունդների հիշողության մեջ մնաց իբրև մեծ բարերար և անսահման հայրենասեր: Եվրոպական հասարակական, քաղաքական և կառավարող շրջանների հետ ունեցած անձնական կապերը և ծանոթությունները, հեղինակավոր դիրքն ու նյութական հարստությունը ծառայեցրեց Հայկական հարցի լուծմանը, որի համար աշխատեց օրնիբուն՝ չխնայելով ո՛չ ժամանակը և ո՛չ առողջությունը: Նրա հիմնադրած «Հայ բարեգործական ընդհանուր միությունը» (ՀԲՄԸ) առ այսօր շարունակում է հաջողությամբ իրագործել աշխարհասփյուռ հայ կարիքավորներին օգնելու և Հայաստանի Հանրապետությունը չենացնելու բազմաթիվ ու բազմապիսի ծրագրեր:

Կրթությունը և աշխատանքային գործունեությունը

Պողոս Նուբարը ծնվել է 1851 թ. օգոստոսի 2-ին Կ. Պոլսում: Նուբարյան գերդաստանը սերում էր Սյունիքից: Նրանք ակտիվորեն մասնակցել էին XVIII դարի 20-ական թվականների Սյունիքի ազատագրական պայքարին, եղել էին Դավիթ Բեկի զինակիցներից[1]: Ազատագրական պայքարի անկումից հետո՝ 1732 թ., Նուբարյաններն արտագաղթել են ու հաստատվել Զմյուռնիայում (Իզմիր), ուր ծավալել են առևտրաարտադրական գործունեություն: Երվանդ Օտյանի վկայությամբ՝ «Պողոս փաշայի հայրը՝ մեծն Նուբար ծնած է Իզմիր, իր հայրն էր Մկրտիչ Նուբարյան, որ անցյալ դարու սկիզբները

---

* *Ներկայացվել է 06. XII. 2021 թ., գրախոսվել է 28. XII. 2021 թ., ընդունվել է տպագրության 07. III. 2022 թ.:*

[1] *Տե՛ս «Տարազ» (Թիֆլիս), հունվար 1913, թ. 1, 5:*

կապրեր ...»[2]: Նուբար փաշան եգիպտոսի պետական ու քաղաքական նշանավոր գործիչներից էր. 1875–1876 թթ. եղել էր արտաքին գործերի և առևտրի, իսկ հետո՝ 1878–1879 թթ., 1884–1888 թթ. և 1894–1895 թթ., եգիպտոսի վարչապետ:

Պ. Նուբարը սկզբնական կրթությունը ստացել է եգիպտոսում, իսկ միջնակարգը՝ Շվեյցարիայում ու Ֆրանսիայում: Ավարտելով Փարիզի "Ecole Centrale" բարձրագույն դպրոցը՝ ստացել է ճարտարագետ-երկրաչափի մասնագիտություն և աշխատանքի անցել Ֆրանսիայի հանքերում ու երկաթուղային ցանցում: Վերադառնալով եգիպտոս՝ Պ. Նուբարը չի ցանկանում հետևել հորը, ով արդեն պետական ու քաղաքական նշանավոր գործիչ էր, սկսում է զբաղվել տնտեսական գործունեությամբ: 1878–1879 թթ. և 1891–1898 թթ. եղել է եգիպտոսի պետական երկաթուղային ցանցի գլխավոր տնօրենն: Նրա հեղինակությամբ կազմվել ու հաջողությամբ իրագործվել է եգիպտոսի երկաթուղիների վերակառուցման և Սուդանի ջրամբարտակի ջրաբաշխական համակարգի բարեփոխման դժվարին աշխատանքը: 1880–1891 թթ. եղել է Բեհերա նահանգի անգլիական երկրագործական ընկերության տնօրենը և ծանրակշիռ ներդրում ունեցել նահանգում ջրհան կայաններ կառուցելու աշխատանքներում: Այդ տարիներին նա հիմնադրել է եգիպտոսի հանրակառքերի (տրամվայների) վարչությունը, ինչպես նաև գահաժառանգ, հետո նաև սուլթան Հուսեյին Առաջինի աջակցությամբ հիմնել է եգիպտոսի երկրագործական ընկերությունը: 1900 թ. Պ. Նուբարը նոր տեսակի ինքնաշարժ արոր (տրակտոր) ստեղծելու համար, որը ցուցադրվել է Փարիզի գյուղատնտեսական միջազգային ցուցահանդեսի թուրքական բաժնում, պարգևատրվել է ոսկե մեդալով և Պատվո լեգեոնի ասպետության խաչով: 1906 թ. Միլանի ցուցահանդեսում նմանատիպ հաջողությունից հետո ստացել է նաև Պատվո լեգեոնի սպայի աստիճան: Գյուղատնտեսության բնագավառում տարբեր գյուտերի համար Ֆրանսիայի երկրագործական ընկերությունը Պ. Նուբարին պարգևատրել է նաև ոսկե պատվավոր "Oliver de Servs" շքանշանով: Որպես պետական պաշտոնյա, գործարար և գյուտարար՝ նա բարձր է գնահատվել նաև եգիպտական կառավարության կողմից ու պարգևատրվել «Մեջիդիե», «Օսմանիե» և «Նեղոսի» մեդալներով[3]:

Թեև Պ. Նուբարը չհետևեց հորը և քաղաքական գործունեություն չծավալեց, այդուհանդերձ, կարճ ժամանակում հասավ երևելի դիրքի ու հարգանքի: Նա մտերիմ հարաբերություններ հաստատեց Եվրոպայի դիվանագիտական և քաղաքական շրջանակների հետ: Պաշտոնական կամ մասնավոր այցով Եգիպտոս ժամանած գրեթե բոլոր քաղաքական գործիչներն ու մտավորականները հյուրընկալվել և հյուրասիրվել են նրա տանը:

Պ. Նուբարը կարևոր դեր էր խաղում ոչ միայն եգիպտոսի պետական ու տնտեսական կյանքում, այլ նաև տեղի հայ համայնքի ազգային կյանքում: Լինելով Ալեքսանդրիայի (1888–1902 թթ.) և Կահիրեի (1905–1914 թթ.) հայոց թեմական ժողովի ատենապետ՝ նա բացառիկ դերակատարում ունեցավ եգիպտահայերի համայնքային հիմնարկությունների դրամական եկամուտները բազմապատկելու գործում: Հատկապես չոչափելի էր արդուլհամիդյան

---

[2] *Օ ա ե ա ն. 1913, 4:*

[3] *Տե՛ս Բ ո յ ա ջ յ ա ն. 2010, 30:*

ջարդերից մազապուրծ եգիպտոս հասած հայ փախստականներին ցուցաբերած աջակցությունը:

Պ. Նուբար փաշան ամուսնացել է 1880 թ. Տատյան նշանավոր գերդաստանից Հովհաննես բեյի դուստր Մարիի հետ: Ամուսնությունը նրա կյանքում բախտորոշ դեր խաղաց, քանի որ հիմնադրվեց հայկական ավանդական ընտանիք: Նրանք ունեցան չորս որդի և մեկ դուստր: Պ. Նուբարը մի առանձին սիրով կապվեց Մարիի հետ, նրա հորդորով ու աջակցությամբ էլ հետագայում սկսեց զբաղվել ազգային գործերով:

Ամենակարևոր դերը, որ Պ. Նուբարը խաղաց հայոց ազգային կյանքում, 1906 թ. ապրիլին Կահիրեում ՀԲԸՄ-ի հիմնումն էր: Միության ծրագրային դրույթները կրում էին 1860 թ. Փարիզում Ադոլֆ Կրեմյեի հիմնադրած հրեական "Alliance Israelite Universelle" կազմակերպության ազդեցությունը: Միության նպատակն էր՝ նյութապես օգնել աշխարհասփյուռ կարիքավոր հայերին, նպաստել հայ երիտասարդության կրթադաստիարակչական զարգացմանը, աջակցել արտերկրում հայապահպանության ճեռնարկներին, զորավիգ լինել հայրենիքի տնտեսական բարգավաճմանը և այլն: Այն ուներ բացառապես մարդասիրական բնույթ և մերժում էր առևտրատնտեսական ու քաղաքական գործունեության ծավալումը, որի դրամական միջոցները գոյանում էին անդամավճարներից, նվիրատվություններից և հանգանակություններից: Միությունը ղեկավարում էր սկզբում Կահիրեում, իսկ 1922 թ.՝ Փարիզում տեղակայված կենտրոնական վարչությունը, որի նախագահը Պ. Նուբար փաշան էր: Մինչ Առաջին աշխարհամարտը ՀԲԸՄ-ն նրա ջանքերով հաջողությամբ իրագործում էր իր առջև դրված խնդիրները: Միությունն ուներ 8500 անդամ՝ 150 մասնաճյուղով, որից միայն 70-ը՝ Օսմանյան կայսրությունում[4]*:*

Հայ ազգային պատվիրակության նախագահի գործունեությունը (1912–1914 թթ.)

Երիտթուրքերի քաղաքականության հետևանքով զրկանքների դատապարտված արևմտահայության կացությունը, ինչպես նաև իտալա-թուրքական, ապա նաև Բալկանյան Առաջին պատերազմում Օսմանյան կայրության չախչախիչ պարտությունները 1912 թ. աշնանը պատճառ դարձան Հայկական հարցի վերաբացման համար: Հոկտեմբերի 2-ին Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Հինգերորդ Սուրենյանցը Կ. Պոլսի պատրիարք Հովհաննես Արշարունու խնդրագրերի հիման վրա հատուկ աղերսագրով Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովի միջոցով դիմեց ռուսաց ցարին՝ խնդրելով «առնել յուր հովանավորության տակ Տաճկաստանում ապրող բազմաչարչար հայ ազգը»[5]*: Ռուսական կառավարող շրջանները Պետերբուրգում ջերմ ընդունելության արժանացրին կաթողիկոսական հատուկ բանագնաց Մովսես եպիսկոպոս Տեր-Մովսեսյանին, ում արտգործնախարար Սերգեյ Սազոնովը խորհուրդ տվեց Եվրոպայի հասարակական, քաղաքական և դիվանագիտական շրջաններում հայանպաստ տրամադրություններ ձևավորելու նպատակով ստեղծել հատուկ պատվիրակություն*[6]*: Գևորգ Հինգերորդը,*

---

[4] *Տե՛ս Զ ո ր մ ի ր ս ե ա ն. 1975, 117:*

[5] *Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 57, ց. 5, գ. 26, թ. 6, ՊԲՀ, 1993, № 1–2, 169:*

[6] *Տե՛ս Մ. Մաշտոցի անվան մատենադարան, կաթ. դիվան, ց. 20, թղթ. 238, վավ. 164, ՊԲՀ, 1993, № 1–2, 170:*

համոզված, որ ռուսաց արտգործնախարարի խորհուրդը լիովին համապատասխանում է կաթողիկոսական և պատրիարքական դիվանագիտության տրամաբանությանը, ձեռնամուխ եղավ ազգային պատվիրակություն ստեղծելու աշխատանքներին: Սակայն պարզվեց՝ կան որոշակի դժվարություններ, քանի որ անհրաժեշտ էր գտնել այնպիսի թեկնածու, ով կապեր կունենար եվրոպական պետական ու հասարակական-քաղաքական շրջանների հետ, նյութապես ապահովված և անկուսակցական լինելով՝ անվիճելի հեղինակություն վայելեր: Մի քանի թեկնածուներ քննարկելուց հետո՝ 1912 թ. նոյեմբերի 10-ին, Գևորգ Հինգերորդը 1482 թվակիր կոնդակով դիմեց Փարիզում գտնվող Պ. Նուբար փաշային՝ խնդրելով նրան ստանձնել հայոց ներկայացուցչի պաշտոնը և «յանձն առնուլ երթալ ի Վեհաժողով (կոնֆերանս) եւ առաջի առնել պատգամաւորաց Եւրոպական Պետութեանց զխնդիր Հայոց և զտեղեկագիր մեր, հայցելով զմիջնորդութիւն նոցա առ ողբալի կացութիւն հայ ժողովրդեան Տաճկաստանի»[7]:

Պ. Նուբար փաշան կաթողիկոսական կոնդակը ստացավ դեկտեմբերի 2-ին: Նա, առանց երկմտելու, ընդունեց Ամենայն Հայոց հայրապետի խնդրանքը. հետաձգեց Եգիպտոս վերադառնալու ծրագրերը, և հաստատապես կարելի է պնդել, որ հենց այդ պահից նրա անձնական կյանքն ու գործերը մղվեցին երկրորդական ասպարեզ:

Հայ ազգային պատվիրակության նախագահ նշանակվելը Պ. Նուբարին միանգամից հռչակավոր դարձրեց: Հայ հասարակության բոլոր հատվածների և շերտերի հայացքն ուղղվեց դեպի Պ. Նուբարը, ում երակներում, չատերի համոզմամբ, հայ ազատատենչ մելիքների արյունն էր հոսում: Հայկական պարբերական մամուլը հեղեղված էր նրա անձնական կարողությունների, հմտությունների և հնարավորությունների մասին հիացական հոդվածներով: Ահավասիկ, օրինակ, «Մշակ» թերթի կարծիքը. «Կաթողիկոսը՝ խիստ նպատակայարմար ընտրութիւն մը ըրած էր Պողոս Նուբարի յանձնելով եւրոպական պետութեանց մոտ դիմում կատարելու պաշտօնը: Պողոս փաշան ունի ընդարձակ հարաբերութիւններ և ծանոթութիւններ դիվանագիտական աշխարհին մէջ, ունի անսահման ծախսելու դիւրութիւն – ինչ որ մեծ ջիղ մըն է այս տեսակ գործերու մէջ և հմտութիւն դիվանագիտական ասպարեզին մէջ»[8]:

Իսկ թե ինչպես ինքը՝ Պ. Նուբարը, ընդունեց ընտրությունը, ներկայացնում է հայ անվանի գրող, բանասեր և հասարակական գործիչ Արշակ Զոպանյանը, ով ներկա է եղել կաթողիկոսական կոնդակի հանձնմանը. «Կորովի, ձեռներեց և գործունեա մարդ, արդար ու գեղեցիկ փառասիրութիւն ուներ ան իր մեծանուն հոր, որուն համար պաշտամունք մը կը տածեր արժանավոր զավակ մ'ըլլալու, իր իսկ գործերով պատմութեան մէջ արձանագրվող անուն մը ձգելու, և ահա պատեհութիւնն իրեն կը տրվեր իր ցեղին զատին համար իսկ աշխատելով՝ ծառայելու, օգտակար հանդիսանալու, յանրօգուտ դեր կատարելու իր ներքին բուռն ու տիրական ըղձանքին գոհացում տալու և նույն ատեն իր ազգին պատմական անձնավորութեանց շարքին մէջ իր անձնավորութեան ու ճիգերուն չնորհիվ իր իրավունքն եղող տեղը գրավելու»[9]:

---

[7] *ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 27, թ. 1–2:*
[8] *«Մշակ» (Թիֆլիս), 04. I. 1913:*
[9] *«Անահիտ» (Փարիզ), 1930, թիվ 2, մայիս–հունիս, 120:*

Նոյեմբերի 10-ի կոնդակով Հայ ազգային պատվիրակությանը տրվել էին բավականաչափ լիազորություններ, որոնք, սակայն, չուտով սահմանափակվեցին: Արդեն 1913 թ. հունվարի 5-ին Պ. Նուբարին գրած նամակում կաթողիկոսը պահանջում էր նախ՝ բացարձակապես ոչ մի հավատ չընծայել թուրքական կառավարությանը և երկրորդ՝ ամենուր սերտ կապեր հաստատել ռուսաց ղեսպանների հետ[10]: Համանման պահանջ առաջադրեց նաև պատրիարք Հովհ. Արշարունին, ով մարտի 30-ին Պ. Նուբարին ուղղված նամակում գրում էր՝ Հայկական հարցի բարենպաստ լուծման նպատակով «միշտ խորհրդակցաբար հարկ է գործել ռուս կառավարութեան ներկայացուցիչներուն հետ»[11]: Ե՛վ կաթողիկոսը, և՛ պատրիարքը Պ. Նուբարին խորհուրդ էին տալիս կենտրոնացնել ու համակարգել Եվրոպայի հայազգի բարձրաստիճան բոլոր պաշտոնյաների, գիտության և մշակույթի գործիչների ջանքերը, օգտագործել նրանց ծանոթություններն ու կապերն ազգային պատվիրակությանն օժանդակելու համար:

Երբ Վորոնցով-Դաշկովի միջոցով Գևորգ Հինգերորդ կաթողիկոսը տեղեկացավ, որ ռուսական կառավարությունը մտադիր չէ Հայկական հարցն արծարծել Լոնդոնի հաշտության բանակցություններում, հունվարի 4-ին Պ. Նուբարին հրահանգեց՝ «չդիմել Լոնդոնի դեսպանախորհրդին և առ այժմ գործունեութիւնը սահմանափակել եւրոպական պետութեանց կառավարող և ազդեցիկ շրջանների կարծիքները և տրամադրութիւնները նախապատրաստելով»[12]: Պ. Նուբարը, համոզված, որ Հայկական հարցի լուծումը հնարավոր է միայն Ռուսաստանի օգնությամբ, ստիպված էր տեղի տալ: Փարիզում ռուսական դեսպան Ալեքսանդր Իզվոլսկու հետ հանդիպման ժամանակ նա հայտարարեց, որ Հայ ազգային պատվիրակությունը, չցանկանալով ձեռնարկել ռուսական կառավարության հետ չհամաձայնեցված քայլ, ստիպված է հրաժարվել Լոնդոն գնալու մտադրությունից[13]:

Պ. Նուբարը հարկադրված էր առայժմ բավարարվել միայն Եվրոպայի հայկական կոմիտեների ու մամուլի միջոցով հայասիրական տրամադրությունների քարոզչությամբ: Կ. Պոլսի ռուսաց դեսպան Միխայիլ Նիկոլաևիչ Գիրսը պատրիարքարանի ներկայացուցիչ Գրիգոր Զոհրապին հավաստիացնում էր, որ Հայ ազգային պատվիրակության գործունեությունը չատ օգտակար կարող է լինել դիվանագիտական աշխարհի հետ՝ «կապ պահելով, պրոպագանդա ընելով, հարաբերութիւններ մշակելով և համակրանք ստեղծելով հայոց դատին համար: «Պիտի գիտնաք,– հավաստիացնում էր դեսպանը,– որ այսպիսի պարագաներու մէջ ժողովրդի համակրանքը և հանրային կարծիքը մեծ դեր կխաղան»»[14]:

Պ. Նուբար փաշան, համոզված, որ հանրային կարծիքը կարող է ազդու լծակ լինել Հայկական հարցում եվրոպական երկրների միակամության հասնելու համար, մեծածավալ աշխատանքներ կատարեց Եվրոպայում գործող հայկական կոմիտեների աշխատանքների աշխուժացման, ինչպես նաև՝ նոր կոմիտեների ու մասնախմբերի ստեղծման գործում: 1913 թ. ընթացքում այդպիսի կոմիտեներ ստեղծվեցին Անգլիայում, Ֆրանսիայում, Գերմանիա-

[10] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 19, թ. 9:*

[11] *ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 26, թ. 8–9:*

[12] *ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 26, թ. 25:*

[13] *Տե՛ս* Архив внешней политики Российской империи *(այսուհետ՝* АВПРИ), ф. «Посольство в Константинополе», оп. 517/2, д. 3727, л. 22.

[14] *Մայր Աթոռ ս. Էջմիածնի ձեռագրատուն, վավ. 288, 28:*

յում, Ռուսաստանում, Ավստրո-Հունգարիայում, Շվեյցարիայում և այլուր: Կոմիտեների ու մասնախմբերի կազմում ընդգրկվում էին հայասիրական տրամադրություններ ունեցող եկեղեցական, հասարակական ու կուսակցական նշանավոր գործիչներ, գիտության և մշակույթի հայտնի դեմքեր, դիվանագետներ, անգամ՝ խորհրդարանների պատգամավորներ և այլք: Կոմիտեներն իրենց ներուժն օգտագործում էին Հայկական հարցի արդար լուծումը քարոզելու, հայասիրական տրամադրությունները մշտարթուն պահելու, եվրոպական կառավարող շրջանների հետ սերտ կապեր հաստատելու համար, իսկ անդամները մամուլում հանդես էին գալիս հայանպաստ հոդվածներով ու հարցազրույցներով, որտեղ աշխատում էին ներկայացնել Օսմանյան կայսրությունում արևմտահայության ծանր կացությունը, Հայկական հարցի պատմությունը և երբեմն առաջադրում էին խնդրի կարգավորման իրենց տարբերակը: Կոմիտեների ջանքերով հաճախ կազմակերպվում էին դասախոսություններ, զեկուցումներ և քննարկումներ, որոնց, որպես կանոն, ներկա էին լինում Հայ ազգային պատվիրակության անդամները: Այդ միջոցառումները կազմակերպվում էին զերազանցապես Պ. Նուբար փաշայի նախաձեռնությամբ ու հովանավորությամբ:

Ահա այդպիսի ներկայացուցչական համաժողովներից էր 1913 թ. ապրիլի 25-ին Լոնդոնի հայկական կոմիտեի ջանքերով կազմակերպված միջոցառումը, որը տեղի ունեցավ բրիտանական խորհրդարանում: Նրա աշխատանքներին մասնակցում էին պատգամավորներ, Լոնդոնի, Մանչեստրի, Փարիզի, Բեռլինի և Շվեյցարիայի հայկական կոմիտեների ներկայացուցիչներ: Համաժողովում Հայ ազգային պատվիրակության անունից հանդես եկավ Պ. Նուբար փաշան և Կ. Պոլսի Կեդրոնական վարժարանի նախկին տեսուչ Հարություն Մոստիչյանը: Իր ելույթում Պ. Նուբարը ներկայացրեց պատվիրակության մշակած բարենորոգումների ծրագրի հոդվածները, որոնք հիմնված էին Բեռլինի վեհաժողովի 61-րդ հոդվածի և տերությունների կողմից Բ. Դռանը 1895 թ. մայիսին ներկայացրած հուշագրի վրա: Համաժողովում ելույթ ունեցան նաև բրիտանական պառլամենտի պատգամավորներ Աննան Բրայան ու Թ. Բ. Օ'Քոննորը, Բեռլինի կոմիտեից դոկտոր Յոհաննես Լեփսիուսը, Փարիզի կոմիտեից՝ Ռոբեր դը Քենը, Շվեյցարիայից՝ Լեոպոլդ Ֆավրը և այլք[15]:

Պ. Նուբար փաշայի գործունեությունը թշնամանքով ընդունվեց երիտթուրքական կառավարության կողմից: Խեղաթյուրելով Հայ ազգային պատվիրակության նպատակների և ձեռնարկած քայլերի էությունը՝ երիտթուրքերը հայտարարում էին, թե Պ. Նուբար փաշան հայերի համար ցանկանում է բացառիկ արտոնություններ և առանձնաշնորհումներ ձեռք բերել: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ Պ. Նուբարն իր հրապարակային ելույթներում հաճախ ընդգծում էր՝ բարենորոգումները նույնքան անհրաժեշտ են մահմեդականներին, որքան քրիստոնյաներին, որ հայերն օսմանյան «հայրենիքը» մասնատելու ձգտումներ չունեն և այլն: 1913 թ. մայիսի 15-ին անգլիական "Times" թերթի խմբագրապետին ուղղված նամակում ի թիվս այլ հարցերի Պ. Նուբարը պարզաբանում էր, որ պատվիրակությունը «ո՛չ բաժանում, ո՛չ անկախություն եւ ո՛չ այլ քաղաքական ինքնավարություն կը պահանջէ (ինչ որ ութոպիա մը պիտի ըլլար՝ նկատելով Հայաստանի աշխարհագրական պայմանները), մենք կը պահանջենք միմիայն Բեռլինի դաշնագրին 61-րդ յօդուածով խոստացած և 11 մայիսի 1895 ի յիշատակագրով Պոլսոյ օտար

[15] Տե՛ս Լիւսօվիք տը Քօնթանսօն. 1913, 65–74:

դեսպաններուն մատուցած ծրագրին պարունակած բարենորոգումներուն գործադրութիւնը»[16]:

1913 թ. հունիսի 1-ին Փարիզում Ֆրանսիայի Ասիական ընկերության նախաձեռնությամբ և Հայ ազգային պատվիրակության ջանքերով տեղի ունեցավ Եվրոպայի հայկական կոմիտեների երկրորդ խոշոր համաժողովը, որի աշխատանքները ղեկավարեց ընկերության հայկական բաժնի ղեկավար գեներալ Լակրուան: Իր ելույթում Պ. Նուբարը, հակիրճ շարադրելով Հայկական հարցի պատմությունը, հիմնավորում էր, որ բարենորոգումների պահանջն ունի միջազգային իրավական հիմքեր: Դրանց կիրառման գլխավոր պայմանը եվրոպական վերահսկողությունն է, առանց որի թուրքական կառավարությունն անկարող է զսպել հայկական նահանգներում տեղի ունեցող զեղծումներն ու ոճիրները: Տերությունների միջոցով իրականացվող իրական ու ազդեցիկ վերահսկողությունը թույլ կտար «հսկել որպէս զի տեղական պաշտօնեաները, որոնք բարենորոգումները իրագործելու պաշտօն ունին, զանոնք ճշմարտապէս գործադրեն, առանց տկարութի, առանց կողմնակցութեան, առանց ի դերեւ հանելու օրէնքին գործադրութիւնը»[17]:

Փարիզի համաժողովը մեծ նշանակություն ունեցավ ֆրանսիական հասարակական-քաղաքական շրջանակներում հայկական պահանջների մասին անաչառ պատկերացում կազմելու գործում: Ավարտից անմիջապես հետո՝ հունիսի 5-ին, Պ. Նուբարն ընդարձակ նամակով դիմեց "L' homme Libre" *թերթի խմբագրապետին, որտեղ մանրամասնեց համաժողովում հնչեցրած իր տեսակետները*[18]:

Թեև ռուսական դիվանագիտությունը դեմ էր, որ Հայ ազգային պատվիրակությունը պաշտոնական դիմումներ ներկայացնի տերություններին, այդուհանդերձ, 1913 թ. ընթացքում Պ. Նուբարը տարբեր առիթներով մի քանի անգամ հանդես եկավ եվրոպական դիվանագիտական աշխարհին ուղղված պաշտոնական հուշագրերով: Դրանցում Հայ ազգային պատվիրակության նախագահը տնտեսական, սոցիալական, մարդասիրական ու քաղաքական չարժառիթներով հիմնավորում էր հայկական բարենորոգումների անհրաժեշտությունը, տերություններին հիշեցնում էր՝ հայկական բարենորոգումներն ամրագրված են Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածով, որ բարենորոգումների նկատմամբ անհրաժեշտ է սահմանել եվրոպական վերահսկողություն, և որ դրանց կիրառումը չի հանգեցնի Օսմանյան կայսրության մասնատմանը և այլն:

Հայկական հարցի նկատմամբ ռուսաց դիվանագիտության բարյացակամ դիրքորոշումը և Հայ ազգային պատվիրակության գործունեությունը հայ ժողովրդի տարբեր հատվածների մոտ հուսառատ ակնկալիքներ ծնեցին: Երկրագնդի ամենատարբեր մասերում բնակվող հայերը կազմում էին հայկական բարենորոգումների բազմազան ծրագրեր: Պ. Նուբարի առջև ծառացավ դժվարին խնդիր՝ ի մի բերել այդ առաջարկները և ստեղծել մեկ միասնական ծրագիր: Այլապես կստեղծվեր կարծիք, «թե հայերն իրանք եւս չգիտեն, թե ինչ են խնդրում կամ պահանջում»[19]: *Ուստի Հայ ազգային պատվիրակությունը, համակարգելով հայկական շրջանների առաջարկները, մշակեց բարենորոգումների միասնական ծրագիր, որն ամբողջովին հենվում էր 1878 թ.*

---

[16] *ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 34, թ. 31:*

[17] *Օ տ ե ա ն. 1913, 68:*

[18] *Տե՛ս Օ տ ե ա ն. 1913, 72–78:*

[19] *«Մշակ», 01. II. 1913:*

Բեռլինի վեհաժողովի և 1895 թ. Մայիսյան ծրագրի վրա: Պ. Նուբարն այն կարծիքին էր, որ բարենորոգումների չափավոր ծրագրի պահանջներն ավելի դյուրին կլինի երիտթուրքական կառավարությանն ընդունելի դարձնել, քանզի ղրանք արդեն վավերացվել էին 1895 թ. հոկտեմբերի 20-ի սուլթանական հրովարտակով: Հայ ազգային պատվիրակության նախագիծը բաղկացած էր յոթ հոդվածից, որոնք նախատեսում էին. ա) հայկական վիլայեթների համար տերությունների համաձայնությամբ նշանակել եվրոպացի կոմիսար, բ) ստեղծել տերությունների կողմից կազմված մշտական հանձնաժողով, որը կվերահսկեր բարենորոգումների իրագործումը, գ) հիմնել հավասար թվով հայ և մահմեդական ներկայացուցիչներից կազմված նահանգային ընդհանուր ժողով, դ) կազմավորել տեղական ոստիկանություն, ե) իրագործել դատական և ֆինանսական բարենորոգումներ, զ) հատուկ վարչության միջոցով փոխհատուցել հողային բռնագրավումները, է) քրդական և թափառական այլ ցեղերի դեմ ձեռնարկել հակակշռող միջոցներ[20]:

Հայ ազգային պատվիրակության նախագիծը թեև չափավոր, բայց իրատեսական էր, քանզի դուրս չգալով թուրքական գործող օրենսդրության շրջանակներից՝ հենվում էր արդեն միջազգայնորեն ընդունված և սուլթանի կողմից վավերացված իրավական դրույթների վրա: Այսուհանդերձ Պ. Նուբարի նախագիծը չդարձավ միանական և շրջանառության մեջ չդրվեց: Բանն այն է, որ Կ. Պոլսի ռուսաց դեսպան Միխայիլ Գիրսը պատրիարքարանին առաջարկեց իրեն ներկայացնել հայերի համար բարենորոգումների ընդունելի նախագիծ: Պատրիարքարանի հատուկ հանձնախումբը մշակեց բարենորոգումների նախագիծ, որն աչքի էր ընկնում իր պահանջների արմատականությամբ: Դրանում ամփոփված էին ավելի շատ արևմտահայության ցանկություններն ու երազանքները, քան թե այն, ինչ տվյալ պահին կարելի էր ձեռք բերել:

Պ. Նուբար փաշան իր անհամաձայնությունը հայտնեց նախագծի՝ երկու առանցքային հոդվածներին: Նախ՝ հայկական նահանգի ընդհանուր վերատեսուչը պետք է նշանակվեր ոչ թե եվրոպական երկրների, այլ Բ. Դռան կողմից՝ տերությունների համաձայնությամբ, և երկրորդ՝ վերահսկողության իրականացման ձևն անհրաժեշտ էր վերապահել եվրոպական երկրներին, այլ ոչ թե նրանցից ամենաշահագրգիռ պետությանը: Այս երկու հոդվածների շուրջ պատրիարքարանի և պատվիրակության միջև տարակարծությունն այն աստիճան սրվեց, որ Պ. Նուբարը սպառնաց, թե կհրաժարվի իր պաշտոնից. դիմեց կաթողիկոսին, որպեսզի վերջինս ստիպի պատրիարքարանին հրաժարվել վերահսկողությունը Ռուսաստանին հանձնելու առաջարկից[21]: Իր հերթին պատրիարքարանը դիմեց Կ. Պոլսի ռուսաց դեսպանին, որպեսզի վերջինս արտգործնախարարության միջոցով ազդի Պ. Նուբարի վրա[22]: Տարակարծությունները վերացնելու նպատակով՝ Փարիզ ժամանած պատրիարքարանի ներկայացուցիչ Վահան Փափազյանը (Կոմս) ձեռնունայն վերադարձավ:

1913 թ. ապրիլի 7-ին պատրիարքարանը, անտեսելով Պ. Նուբարի նկատառումները, իր կազմած նախագիծը հանձնեց Կ. Պոլսի ռուսական դեսպանությանը: Տեղեկանալով այդ մասին՝ ապրիլի 22-ին Պ. Նուբարը Գևորգ Հինգերորդին ներկայացրեց հրաժարականի դիմում: Հայ ազգային պատվի-

---

[20] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 34, թ. 23:*

[21] *ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 34, թ. 21:*

[22] *Տե՛ս* АВПРИ, ф. «Посольство в Константинополе», оп. 517/2, д. 3728, л. 46.

րակության ղեկավարը համոզված էր, որ պատրիարքարանի գործելակերպը չափազանց վտանգավոր է, քանզի բանակցությունների հաջողության համար «երկու հաւատացեալ գլուխ եւ տնօրինութիւն, մին ի Պոլիս եւ միւսն Եւրոպա, անկարելի է»[23]:

Իրադարձությունների վտանգավոր ընթացքը կասեցվեց ռուսական դիվանագիտության ջանքերով: Ուսումնասիրելով պատրիարքարանի նախագիծը՝ ռուս դիվանագետները գտան, որ այն, ընդհանուր առմամբ, անընդունելի դրույթներ չի պարունակում: Միաժամանակ նրբանկատորեն հասկացրին՝ դժվար կլինի թուրքական կառավարությանն ընդունել տալ հատկապես այն պահանջները, որոնք դուրս էին թուրքական գործող օրենսդրության շրջանակներից: Դեսպան Մ. Ն. Գիրսը պատրիարքարանի ներկայացուցիչներ Գրիգոր Զոհրապին և Լևոն Տեմիրճիպաշյանին առաջարկեց փոխել եվրոպացի կոմիսարի նշանակման կարգը, իսկ վերահսկողության ձևը թողնել տերությունների հայեցողությանը[24]: Փաստորեն, ռուսաց դեսպանը նախագծի երկու հոդվածների վերաբերյալ առաջարկում էր ճիշտ այն տարբերակը, ինչն այդքան համառորեն պաշտպանում էր Պ. Նուբար փաշան: Կարճ ժամանակ անց փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունն էլ վերացավ, քանի որ ռուսական դեսպանության առաջին թարգման Ա. Մանդելշտամը, համադրելով հայկական նախագծերը, ստացավ Անտանտի երկրների համար ընդունելի տարբերակ:

Ռուսական նախագիծը շրջանառության մեջ դնելը նշանակում էր, որ հայկական բարենորոգումների հարցում «առաջին ջութակի դերը» պաշտոնապես ստանձնում է Ռուսական կայսրությունը, իսկ քննարկման կենտրոնը դառնում է Կ. Պոլիսը: Պ. Նուբար փաշային թվաց, թե ավարտվել է պատվիրակության առաքելությունը, ուստի դիմեց կաթողիկոսին՝ իր լիազորությունները դադարեցնելու խնդրանքով: Սակայն Գևորգ Հինգերորդը եզրակացրեց, որ նոր իրողությունները չեն փոխում Եվրոպայում պատվիրակություն ունենալու անհրաժեշտությունը, հետևաբար, պետք է պատրաստ լինել՝ սկսելու աշխատանքների նոր փուլ[25]: Եվ չսխալվեց:

Եոյակ դաշինքի ջանքերով 1913 թ. հունիսի 20–հուլիսի 11-ը Կ. Պոլսի ավստրո-հունգարական դեսպանատանը վեց տերությունների ներկայացուցիչների միջև հայկական բարենորոգումների խնդիրը քննարկելու համար հրավիրված համաժողովը ձախողվեց: Ռուսական դիվանագիտությունը նպատակահարմար գտավ վիճելի հարցերի շուրջ, մասնավորապես՝ մեկ միասնական հայկական նահանգ ստեղծելու, տերությունների համաձայնությամբ եվրոպացի նահանգապետ նշանակելու, բարենորոգումների նկատմամբ եվրոպական վերահսկողություն հաստատելու և այլն, ուղիղ բանակցություններ սկսել Գերմանիայի հետ: Ռուսական նոր մարտավարությունը ենթադրում էր քայլերի հետևյալ հերթականությունը. նախ՝ վիճելի հարցերի շուրջ համաձայնության գալ Գերմանիայի հետ, և երկրորդ՝ ռուս-գերմանական փոխզիջումային համաձայնությունը պարտադրել թուրքական կառավարությանը: Այս քայլերից յուրաքանչյուրն ուներ իր դժվարությունները, որոնց հաղթահարման համար Հայ ազգային պատվիրակությունը կարող էր ունենալ կարևոր դերակատարություն:

[23] *ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 34, թ. 10:*
[24] *ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 34, թ. 3:*
[25] *ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 34, թ. 6–9:*

Պատրիարքարանի հուլիսի 18-ի խնդրագիր-դիմումի հիման վրա Պ. Նուբարն օգոստոսի սկզբներին մեկնեց Բեռլին: Հայկական բարենորոգումների չուրջ ռուս-գերմանական հակասությունները մեղմելու նպատակով նա հանդիպումների շարք սկսեց ինչպես պետական բարձրաստիճան պաշտոնյաների, այնպես էլ՝ հասարակական-քաղաքական շրջանների հեղինակավոր ներկայացուցիչների հետ և ծանրակշիռ ներդրում ունեցավ գերմանական հանրային կարծիքը հօգուտ հայկական բարենորոգումների տրամադրելու գործում: Այս առումով հատկապես կարևոր էր նշանավոր արևելագետ Յո. Լեփսիուսի հետ հանդիպումը, ով մեծ հեղինակություն ուներ Գերմանիայի գիտական, համալսարանական և արտաքին քաղաքականությունը տնօրինող անձանց շրջանակներում: Գերմանական ընդդիմադիր և անգամ կիսապաշտոնական թերթերում հայտնվեցին հայասիրական տրամադրություններ արտահայտող հոդվածներ, որոնց հեղինակները պնդում էին, թե իզուր է Գերմանիան հայերի բարեկամի դերը հանձնել այլ տերությունների, ու կառավարությանը կոչ էին անում դիմել վճռական գործողությունների՝ հայկական բարենորոգումներին աջակցելու համար[26]:

Բեռլինում պետքարտուղարի տեղակալ Արթուր Ցիմմերմանի հետ Պ. Նուբարի հանդիպումը ցույց տվեց, որ գերմանական դիվանագիտությունը չի վստահում ռուսական կողմի անկեղծությանը: Պ. Նուբարը ստիպված էր բազում հիմնավորումներ ներկայացնել, որ արևմտահայերը Օսմանյան կայսրությունը մասնատելու կամ Ռուսաստանին միանալու ձգտումներ չունեն, պարզապես ապահով ու խաղաղ կյանքի խնդիր ունեն: Նա փաստական ու իրավական հիմնավորումներով կարևորեց հատկապես եվրոպական վերահսկողության անհրաժեշտությունը: Հանդիպման ավարտական մասում Ա. Ցիմմերմանը հայտարարեց, որ ինքն ընդունում է հայաբնակ վիլայեթներում եվրոպական վերահսկողությամբ լուրջ բարենորոգումներ կատարելու անհրաժեշտությունը[27]: Օգոստոսի վերջին պետքարտուղար Գոթլիբ Ֆոն Յագովի հետ հանդիպումը վկայեց, որ Գերմանիան ոչ միայն կսատարի հայկական բարենորոգումներին, այլև կոշմնակից է դրանց նկատմամբ եվրոպական վերահսկողության հաստատմանը:

Պ. Նուբար փաշայի անցկացրած հանդիպումների շարքը որոշակի դեր խաղաց հայկական բարենորոգումների չուրջ ռուս-գերմանական համաձայնության կայացնելու գործում: 1913 թ. սեպտեմբերի 10-ին Կ. Պոլսում Ռուսաստանի և Գերմանիայի դեսպաններ Մ. Գիրսը և Հ. Վանգենհայմը կայացրին փոխզիջումային համաձայնություն վեց կետից բաղկացած հայկական բարենորոգումների ծրագրի չուրջ, որը մի քանի օր անց ներկայացվեց թուրքական կառավարությանը: Վարչապետ Սայիդ Հալիմ փաշան հայտարարեց, որ իր կառավարությունը երբեք չի ընդունի բարենորոգումների նկատմամբ եվրոպական վերահսկողության պահանջը:

Հայկական բարենորոգումների նկատմամբ թուրքական կառավարության ժխտական դիրքորոշումը Հայ ազգային պատվիրակության գործունեությունում նոր փուլի սկիզբ դրեց: Անհրաժեշտ էր տերությունների միակամության և ազդեցիկ լծակների կիրառմամբ բարենորոգումները պարտադրել թուրքական կառավարությանը: Պ. Նուբարը գտնում էր, որ այդպիսի ազդու լծակ կարող է լինել ֆինանսական ճնշումը: Բանն այն է, որ երիտթուրքական կառավարությունը իտալա-թուրքական և Բալկանյան պատե-

---

[26] *Տե՛ս «Բյուզանդիոն» (Կ. Պոլիս), 04. IX. 1913:*
[27] *ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 46, թ. 1–4:*

բազմների հետևանքով հայտնվել էր ֆինանսական ճգնաժամի մեջ ու նոր փոխառություններ ստանալու հույսով Եվրոպա էր գործուղել ֆինանսների նախարար Ջավիդ բեյին: Այդ պահին եվրոպական երկրներից՝ հիմնականում Ֆրանսիան, հնարավորություն ուներ ընդառաջել թուրքական կառավարությանը: Միաժամանակ երիտթուրքերը դիմել էին տերություններին՝ թույլատրելու Օսմանյան կայսրության ներմուծվող ապրանքների վրա սահմանված մաքսային տուրքերը 4 % ավելացնելու խնդրանքով: Պ. Նուբարը գտնում էր, որ անհրաժեշտ է օգտվել բարեպատեհ առիթից և եվրոպական կառավարող շրջաններին համոզել՝ հրաժարվել Բ. Դռանը նոր փոխառություններ տրամադրելուց և 4 % մաքսային հավելումներին համաձայնություն տալուց, քանի դեռ չէր ընդունել հայկական բարենորոգումների ռուս-գերմանական համաձայնությունը:

Հոկտեմբերի 17-ին Փարիզում Պ. Նուբարի և Ռուսաստանի արտգործնախարար Ս. Սազոնովի, իսկ հոկտեմբերի 18-ին Ֆրանսիայի արտգործնախարար Ս. Պիշոնի հետ հանդիպումները ցույց տվեցին, որ երկու երկրները մաքսային հավելումների հարցում համաձայնության դիմաց արդեն ստացել են իրենց պահանջած փոխհատուցումները և թուրքերին լրացուցիչ պահանջներ այլևս չեն կարող ներկայացնել: Ինչ վերաբերում է փոխառությանը, ապա Ս. Պիշոնը կարծում էր՝ Ֆրանսիան կարող է դիմել այդպիսի քայլի՝ պայմանով, որ մյուս տերությունները ևս մերժեն թուրքերի խնդրանքը[28]:

Ֆինանսական ճնշման հարցում գերմանական կառավարող շրջանների կարծիքը շոշափելու համար Պ. Նուբարը մեկնեց Բեռլին, ուր հանդիպեց Ա. Ցիմմերմանին: Պետքարտուղարի տեղակալը թեև հայտարարեց, որ արևմտահայությունն «այլևս չի կարող բավարարվել թուրքական դեղատոմսերով պատրաստված բարենորոգումների ծաղրանմանություններով», այնուամենայնիվ, գերմանական կառավարության դիրքորոշումը պայմանավորեց մյուս տերությունների կեցվածքով[29]:

Թուրքիային ֆինանսապես ճնշելու հարցում եվրոպական երկրների միջև ներդաշնակություն ստեղծելու նպատակով Հայ ազգային պատվիրակության նախաձեռնությամբ 1913 թ. նոյեմբերի 17-ին Փարիզում հրավիրվեց Եվրոպայի հայկական կոմիտեների համաժողով, որի աշխատանքներին մասնակցեցին Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Ռուսաստանի, Ավստրո-Հունգարիայի, Իտալիայի ու Շվեյցարիայի նշանավոր հայասերներ, պառլամենտների պատգամավորներ, հասարակական-քաղաքական գործիչներ և այլք: Ի թիվս այլոց, համաժողովում ընդարձակ ճառով հանդես եկավ նաև Պ. Նուբար փաշան: Նրա առաջարկությունների հիման վրա միաձայն ընդունվեց բանաձև, որը յուրաքանչյուր պատվիրակ պետք է հանձներ իր կառավարությանը: Բանաձևը ցանկություն էր հայտնում, որպեսզի տերությունները համաձայնեն թուրքական կառավարությանը փոխառություն տրամադրելուն, եթե Բ. Դուռը պաշտոնապես ընդունի հայկական բարենորոգումների ռուս-գերմանական փոխզիջումային համաձայնությունը[30]:

Պ. Նուբարի ջանքերով Փարիզի համաժողովը համաեվրոպական հնչեղություն ստացավ, և ֆրանսիական կառավարությունը, նաև հաշվի առնելով դաշնակից Ռուսաստանի համառ պնդումները՝ հայկական բարենորոգումների ու գերմանացի գեներալ Լիման ֆոն Սանդերսի ռազմական առա-

[28] *ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 47, թ. 3–4:*

[29] *Տե՛ս* АВПРИ, ф. «Посольство в Константинополе», оп. 517/2, д. 3734, л. 304.

[30] *Բ ա բ գ է ն վ ա ր դ ա պ ե տ. 1914, 31:*

քելութ֊յան խնդիրները կապել փոխառութ֊յուն տրամադրելու հարցի հետ, առժամանակ կասեցրեց Օսմանյան կայսրութ֊յանը վարկեր տրամադրելու գործընթացը: Դեկտեմբերի 12-ին, երբ դեսպաններ Մ. Գիրսը և Հ. Վանգենհայմը այցելեցին Բ. Դուռ, վարչապետ Սայիդ Հալիմ փաշան հայտարարեց, որ թուրքական կառավարութ֊յունն ընդունում է եվրոպացի վերատեսուչներ նշանակելու առաջարկը[31]:

Պ. Նուբար փաշան համոզված էր, որ ֆինանսական ճնշումը ժամանակավոր միջոցառում է, քանզի տերութ֊յունները խիստ շահագրգիռ էին Օսմանյան կայսրութ֊յան ֆինանսական կայունութ֊յունում: Ուստի պատրիարքարանին, ինչպես նաև Փարիզ ժամանած դեսպան Մ. Գիրսին խորհուրդ տվեց երկրորդական խնդիրների վրա ավելորդ չծանրանալ և ռուս-գերմանական համաձայնութ֊յան նախագծի մյուս կետերի շուրջ արագ համաձայնութ֊յան գալ թուրքական կառավարութ֊յան հետ[32]: Եվ ահա, 1914 թ. հունվարի 26-ին Կ. Պոլսում ռուսական հավատարմատար Կ. Գուլկևիչը և Ս. Հալիմ փաշան ստորագրեցին համաձայնագիր հայկական բարենորոգումների վերաբերյալ, որի ստորագրումը ոչ միայն ռուսական դիվանագիտութ֊յան, այլև հայ ազգային պատվիրակութ֊յան կարևոր ձեռքբերումն էր, քանի որ որոշակի երաշխիքներ էր տալիս արևմտահայութ֊յան կյանքի, գույքի ու պատվի ապահովութ֊յան համար:

Ռուս-թուրքական համաձայնագրի ստորագրումից հետո Պ. Նուբարի ծրագրերում առաջին պլան մղվեցին Արևմտյան Հայաստանի տնտեսական զարգացման խնդիրները, որոնց լուծման ճանապարհային քարտեզում կարևորում էր երկրագործական բանկի հիմնումը: Օգտագործելով վերջինիս հնարավորութ֊յունները՝ նա նախատեսում էր եռգնել թուրքական բանկերում հայերի գրավադրած հողերն ու այլ գույքերը, հողազուրկ և սակավահող գյուղացիներին տրամադրել հող, սերմացու, անասուններ, աշխատանքային գործիքներ, ինչպես նաև արևմտահայ երիտասարդութ֊յան համար հիմնել բարձրորակ կրթական համակարգ[33]: Ընդլայնվելու էր նաև ՀԲԸՄ-ի գործունեութ֊յան շրջանակները:

Յավոք, հայրենիքի վերաշինութ֊յան Պ. Նուբարի ծրագրերին վիճակված չէր իրականութ֊յուն դառնալ: 1914 թ. մայիսի 10-ին Կ. Պոլսում ընդհանուր վերատեսուչներ ընտրված Լուիս Վեստենենկը և Նիկոլա Հոֆֆը Օսմանյան կայսրութ֊յան ներքին գործերի նախարար Թալեաթ փաշայի հետ ստորագրեցին համաձայնագիր իրենց պարտականութ֊յունների և իրավունքների մասին: Համաձայնագիրը ոչ միայն կրճատեց ընդհանուր վերատեսուչների իրավասութ֊յունները, այլև վերջիններիս դարձրեց թուրքական կառավարութ֊յանը ենթակա չարքային չինովնիկներ: Ռուսական «Речь» թերթը գրում էր՝ Բ. Դուռը թուրքական ազգային տարազով վերազգեստավորեց ռուս-թուրքական միջազգային համաձայնագիրը, որը դարձավ ընտանեկան համաձայնութ֊յուն ներքին գործերի նախարարութ֊յան և ընդհանուր վերատեսուչների միջև[34]: Թուրքական իրականութ֊յանը քաջածանոթ հայկական շրջանները հասկացան, որ բարենորոգումների գործը տապալման եզրին է: Պատրիարքարանը Պ. Նուբարին հեռագրեց չուտափուլթ դիմել տերութ֊

---

[31] *Տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտութ֊յան և սովետական արտաքին քաղաքականութ֊յան փաստաթղթերում (1828–1923 թթ.). 1972, 307:*

[32] АВПРИ, ф. «Политархив 1914 г.», оп. 482, д. 3472, л. 40.

[33] *ՀԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 216, թ. 5–10:*

[34] «Речь» (СПб.), 19. VI. 1914.

յուններին՝ մայիսի 10-ի համաճայնագրի հրահանգները վերանայելու խնդրանքով: Եվ նորից Հայ ազգային պատվիրակությունը դիմեց եվրոպական կառավարություններին՝ հայկական բարենորոգումների խնդիրը պաշտպանելու համար: Պ. Նուբարին հատկապես անհանգստացնում էր Լ. Վեստենենկի հետ հունիսի 6-ին Հաագայում տեղի ունեցած հանդիպումը: Վերջինս Պ. Նուբարին պատմեց, որ Թալեաթը համաճայնագրի ստորագրումից հետո պահանջել է մոռանալ հունվարի 26-ի համաճայնագիրը և առաջնորդվել միայն մայիսի 10-ի համաճայնագրի հրահանգներով: Պ. Նուբարի այն ակնարկին, թե ընդհանուր վերատեսուչները տերությունների ներկայացուցիչներ են, Վեստենենկը պատասխանեց, որ դրա համար այլևս ոչ հնարավորություններ կան, և ոչ էլ՝ իրավական հիմքեր: Ֆրանսիայի վարչապետ Գաստոն Դումերգին տեսակցելուց հետո՝ հունիսի սկզբներին, Պ. Նուբարը մեկնեց Բեռլին, ուր հանդիպեց Ա. Ցիմմերմանին: Ֆրանսիական և գերմանական կառավարող շրջաններն «անկեղծորեն» ցավակցեցին կատարվածի համար և խոստացան իրենց դեսպաններին հրահանգել, որպեսզի գլխավոր վերատեսուչներն առաջնորդվեն հունվարի 26-ի համաճայնագրով[35]*:*

Հունիսի 12-ին Պ. Նուբարը Բեռլինից մեկնեց Պետերբուրգ: Նա ռուսական կառավարությանը հանձնեց ընդհանուր վերատեսուչների իրավասությունների վերաբերող հատուկ հուշագիր, որտեղ վերլուծելով մայիսի 10-ի հրահանգներում երիտթուրքական կառավարության ինքնագուխ մտցրած հոդվածները՝ ցույց էր տալիս, որ դրանք ոչ միայն խեղաթյուրում են ռուս-թուրքական համաձայնագրի իմաստը, այլև, առհասարակ, ձախողում են հայկական բարենորոգումների իրագործումը: Խոսելով ընդհանուր վերատեսուչներին պաշտոնազրկելու թուրքական կառավարության իրավունքի մասին՝ Պ. Նուբարը նկատում էր. «Տարակույս չկա, որ եթե պայմանագրութեան սույն հոդվածը մնա և կամ անոր ազդեցութիւնը չփոխվի, ... մեր բարենորոգումները ապահու և ստույգ ձախողված մը պիտի ըլլան»[36]*: Արտգործնախարար Ս. Սազոնովի և արտգործնախարարության Մերձավոր Արևելքի բաժնի վարիչ իշխան Գրիգորի Տրուբեցկոյի հետ հանդիպումների ժամանակ Պ. Նուբարն առաջարկում էր հարկադրել երիտթուրքական կառավարությանը, որպեսզի վերջինս տերություններին դիմի հունվարի 26-ի համաճայնագրի ոգուն համապատասխան հուշագրով, ինչը կդառնար ընդհանուր վերատեսուչների գործունեության ուղեցույցը:*

Ինչպես ֆրանսիական ու գերմանական, այնպես էլ ռուսական արտաքին քաղաքականությունը տնօրինող անձինք ընդունեցին Պ. Նուբարի առաջարկը: Իր հերթին, թուրքական կառավարությունը ևս չզլացավ ընդունել ընդհանուր վերատեսուչների իրավասություններին նվիրված հատուկ հուշագրով հանդես գալու ռուսական դիվանագիտության առաջարկը, սակայն զանազան պատրվակներով սկսեց ձգձգել, իսկ վերջին հաշվով՝ նաև խուսափել իրագործումից[37]*:*

Հայ ազգային պատվիրակությունն աշխարհամարտի տարիներին

1914 թ. օգոստոսի 1-ին սկսվեց Առաջին համաշխարհային պատերազմը, և երիտթուրքական կառավարությունը, օգտվելով այդ առիթից, ոչ միայն տապալեց հայկական բարենորոգումների խնդիրը, այլև ձեռնամուխ եղավ

[35] Международные отношения в эпоху империализма. 1933, 370.

[36] *ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 58, թ. 65:*

[37] Международные отношения в эпоху империализма. 1933, 274.

Հայկական հարցի լուծման իր տարբերակի՝ ցեղասպանության իրականացմանը: Օսմանյան կայսրությունը պատերազմի մեջ մտավ 1914 թ. հոկտեմբերին: Այդ ժամանակ Պ. Նուբարը գտնվում էր Եգիպտոսում և առաջնահերթության կարգով կազմակերպեց դրամական խոշոր հանգանակություններ գաղթականների ու կամավորականների համար: 1915 թ. ապրիլի 28-ին նա ստացավ Ամենայն Հայոց կաթողիկոսի կոնդակը, որով լիազորվում էր մեկնել Եվրոպա՝ չեզոք երկրների օգնությամբ կանխելու հայկական կոտորածները, իսկ պատերազմից հետո օժանդակելու Անտանտի կողմից Հայաստանին ինքնավարություն չնորհելու գործընթացին[38]: Ժամանելով Փարիզ՝ Պ. Նուբարը մայիս–հուլիս ամիսներին մի շարք հանդիպումներ ունեցավ Անգլիայի և Ֆրանսիայի պետական ու հասարակական-քաղաքական գործիչների հետ, անհրաժեշտ հուշագրեր ներկայացրեց Ֆրանսիայի արտգործնախարար Թ. Դելկասեին և Անգլիայի պետքարտուղարի տեղակալ Հ. Նիքոլսոնին՝ պատերազմի հաղթական ավարտից հետո Արևմտյան Հայաստանին ու Կիլիկիային ինքնավարություն չնորհելու մասին: Անգլո-ֆրանսիական կառավարող շրջանները հայ ժողովրդի տառապանքների և իղձերի նկատմամբ մեծագույն հարգանք ու համակրանք ցուցաղրելով հանդերձ՝ Հայկական հարցի լուծումը հետաձգում էին մինչև պատերազմի հաղթական ավարտ՝ առանց այդ մասին որևէ գրավոր հավաստիացման կամ արձանագրման:

1916 թ. ապրիլին Պ. Նուբարը տեղեկացավ, որ Ֆրանսիայի և Ռուսաստանի միջև կայացել է գաղտնի համաձայնություն, ըստ որի Վանի, Բիթլիսի, Էրզրումի ու Տրապիզոնի վիլայեթները պատերազմից հետո անցնելու են Ռուսաստանին, իսկ Դիարբեքիրի, Խարբերդի և Սեբաստիայի վիլայեթների մեծ մասը Կիլիկիայի հետ՝ Ֆրանսիային: Նրա համար ակնհայտ դարձավ, որ անհաղթահարելի խոչընդոտներ են ստեղծվում Միացյալ Հայաստան երազն իրականացնելու ճանապարհին: Նա աստիճանաբար հակվեց Ֆրանսիայի հովանու ներքո ինքնավար Կիլիկիա ստեղծելու գաղափարին, ինչի համար դրական ազդակներ էին տալիս հենց Ֆրանսիայի պետական ու քաղաքական գործիչները: Ինքնավար Կիլիկիա հիմնելու գաղափարն իրականացնելու նպատակով էլ Պ. Նուբարն ակտիվորեն ներգրավվեց Ֆրանսիական կառավարության նախաձեռնությամբ Արևելյան (Հայկական) լեգեոնի կազմավորման աշխատանքներին: Պ. Նուբարը սկզբում կտրականապես դեմ էր հայկական առանձին զորամիավորում ստեղծելուն, քանի որ մտավախություն ուներ, թե երիտթուրքական կառավարությունը, պատրվակելով այդ իրողությունը, կարող էր վրեժխնդիր լինել հայազգի իր քաղաքացիներից: Ի պատասխան Ֆրանսիական կառավարության առաջարկի՝ նա Միջերկրական ծովի երրորդ էսկադրիայի հրամանատար փոխծովակալ Մորոյին զգուշացնում էր. «Մենք ցանկանում ենք ձեր հոգածությամբ ուսուցում ստացած բոլոր հայերին տեսնել ձեր զրոչների ներքո ծառայելիս, ցրված ձեր գնդերում, բայց ոչ մի դեպքում՝ առանձին հայկական ջոկատներ կազմավորելիս»[39]: 1915 թ. օգոստոսի 16-ի օրենքը Ֆրանսիական հրամանատարությանն արգելում էր թշնամական երկրի քաղաքացիներին զինվորագրել Ֆրանսիական գործող բանակ, հետևաբար, հայ կամավորականները չէին կարող Ֆրանսիական բանակի մաս կազմել: Սակայն Ֆրանսիան մարդուժի խիստ կարիք ուներ, ուստի Ֆրանսիական բանակի գլխավոր հրամանատար, գեներալ

---

[38] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 27, թ. 31:*

[39] *Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը Ֆրանսիական արխիվներում (1914–1918). 2005, 277:*

Ժոֆրը և ռազմական նախարար, գեներալ Ռոքը խիստ չահագրգիռ էին՝ «որքան հնարավոր է արագ, Կիպրոսում կազմավորել ֆրանսիական սպաներով համալրված հրամանատարական կազմ ունեցող և Սիրիայի ռազմածովային դիվիզիան գլխավորող զերծովակալի ենթակայության ներքո գտնվող՝ 5000 հայերից բաղկացած կորպուս»[40]: 1916 թ. հոկտեմբերի 24–27-ին Լոնդոնում տեղի ունեցան բանակցություններ՝ մի կողմից Պ. Նուբարի, մյուս կողմից՝ Ֆրանսիայի ներկայացուցիչ Ժորժ Պիկոյի և Մեծ Բրիտանիայի ներկայացուցիչ Մարկ Սայքսի միջև: Պ. Նուբարին ընդունեց նաև Անգլիայի պետքարտուղար Էդուարդ Գրեյը: Այս բանակցությունների արդյունքում ձևավորվեցին այն հիմնական սկզբունքները, որոնց հիման վրա էլ սկսվեց հայ կամավորների մասնակցությամբ Արևելյան (Հայկական) լեգեոնի կազմավորումը[41]: Բանակցային այս ամբողջ գործընթացի ժամանակ Պ. Նուբարը պահանջում էր՝ անգլո-ֆրանսիական բարձրագույն ղեկավարությունը պաշտոնապես ու գրավոր հայտարարի, որ պատերազմից հետո հաշվի կառնվի հայ ժողովրդի ներդրումը ընդհանուր հաղթանակի գործում և Ֆրանսիային անցնող հայկական տարածքներին կշնորհվի ինքնավարության իրավունք: Սակայն Անտանտի ղեկավարությունը բարի կամեցողության բանավոր խոստումների սահմանը չանցավ:

1917 թ. գարնանը Պ. Նուբար փաշան վերադարձավ Արևմտյան Հայաստանի ու Կիլիկիայի միասնությամբ Ինքնավար և Միացյալ Հայաստան հիմնելու գաղափարին: Դրանում կարևոր դեր խաղացին աշխարհաքաղաքական երկու կարևոր իրադարձություններ: Նախ՝ մարտի 2-ին ռուսաց Նիկոլայ Երկրորդ ցարը գահազրկվեց և Ռուսաստանում հաստատվեցին ժողովրդավարական կարգեր, երկրորդ՝ ապրիլի 6-ին ԱՄՆ-ն պատերազմ հայտարարեց Գերմանիային: Պ. Նուբարը կարծում էր, որ եկել է պատմական նպաստավոր պահ, երբ կարելի էր պայքարել Անտանտի երկրներից մեկի հովանու ներքո Ինքնավար և Միացյալ Հայաստան ստեղծելու համար: Այս տեսակետն էլ նա չարադրեց մայիսի 24-ին Անտանտի երկրներին ուղղված «Հայկական հարցի և Հայաստանի ազատագրության վերաբերյալ» հուշագրում[42]: ԱՄՆ հովանու ներքո Միացյալ Հայաստան ստեղծելու տեսլականով էլ նա չարունակեց Անտանտի պետական ու քաղաքական ազդեցիկ գործիչների հետ իր հանդիպումները, պաշտոնական դիմումները, թերթերին տրվող հարցազրույցները և հասարակական կարծիքը հօգուտ միացյալ Հայաստանի գաղափարի տրամադրելու քարոզչական դժվարին աշխատանքները:

1917 թ. հայ հասարակական-քաղաքական կյանքում տեղի ունեցան կարևոր իրադարձություններ, որոնք վկայեցին հայ ժողովրդի երկու հատվածներում Պ. Նուբար փաշայի բարձր հեղինակության մասին: Նախ՝ մայիսին Երևանում՝ արևմտահայերը, այնուհետև սեպտեմբերին Թիֆլիսում արևելահայերը գումարեցին իրենց առաջին համագումարները, ուր քննարկվեցին համազգային նշանակության խնդիրներ: Եվ արևմտահայ, և՛ արևելահայ համագումարներն ընդունեցին անհրաժեշտ բանաձևեր, որոնցով վստահություն էին հայտնում Պ. Նուբար փաշայի գլխավորությամբ գործող Հայ ազգային պատվիրակությանը:

[40] *Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914–1918). 2005, 318:*

[41] *Պողոսեան. 2004, 103–124:*

[42] *Պողոսեան. 2004, 127:*

1918 թ. հոկտեմբերի 30-ին կնքվեց Մուդրոսի զինադադարը, ինչը թեև հայության համար ուրախալի փաստ էր, սակայն Պ. Նուբարը խիստ դժգոհ մնաց զինադադարի՝ Հայաստանին առնչվող հոդվածներից: Մասնավորապես՝ նրա համար վրդովեցուցիչ էր, որ անգամ պարտությունն ընդունելուց հետո էլ թուրքական զորքերը չարունակելու էին մնալ հայկական վիլայեթներում: Տերությունների ուղղված դիմումներում, հուշագրերում ու մամուլին տրված հարցազրույցներում նա պահանջում էր հաղթանակած երկրների զինված ուժերով ռազմակալել հայկական վիլայեթները և Կիլիկիան, իսկ այնուհետև ձեռնամուխ լինել հայկական միասնական պետության ստեղծմանը: Սակայն պատերազմն արդեն ավարտվել էր, և ուխտադրուժ Անտանտը մեծ հաշվով արդեն հայերի օգնության կարիքը չուներ, ուստի Պ. Նուբարի կոչերն ու բողոքները մնացին ձայն բարբառո հանապատի:

Հայ ազգային պատվիրակությունը և Փարիզի խաղաղության վեհաժողովը

Պ. Նուբար փաշայի գործունեությունը նոր բովանդակություն ստացավ, երբ խաղաղության վեհաժողովին մասնակցելու համար 1919 թ. Փարիզ ժամանեց Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը՝ հայ հասարակական-քաղաքական գործիչ, գրող Ավետիս Ահարոնյանի գլխավորությամբ: Տարակարծությունների հաղթահարումից հետո զույգ պատվիրակությունները ջանք ու եռանդ չխնայեցին հայ ժողովրդի արդար դատը պաշտպանելու համար: Պատվիրակությունները լիահույս էին, որ տերությունները, հաշվի առնելով հաղթանակի գործում հայ ժողովրդի ծանրակշիռ ներդրումը և կրած տառապանքները, վերջապես կստեղծեն Մեծ Հայաստանը: Այս վստահությամբ էլ փետրվարի 12-ին Ավ. Ահարոնյանն ու Պ. Նուբարը ստորագրեցին և Փարիզի վեհաժողովին ներկայացրին հայկական պահանջների մասին տեղեկագիր, որը ԱՄՆ քսանամյա մանդատի ներքո Արևմտյան Հայաստանի վեց և Տրապիզոնի վիլայեթներից, Կիլիկիայի չորս սանջակներից ու Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքից կազմված ծովից ծով Հայաստան ստեղծելու պահանջագիրը էր[43]*:*

1919 թ. փետրվարի 6–13-ը Երևանում տեղի ունեցավ արևմտահայերի երկրորդ համագումարը, որը հայկական բոլոր երկրամասերը մեկ պետության մեջ միավորելու ձգտումով ընդունեց Ազատ և Միացյալ Հայաստանի անկախություն հայտարարելու մասին բանաձև: Հայության հատվածական բաժանումը վերացնելու նպատակով մայիսի 28-ին ՀՀ կառավարությունը հայտարարեց, որ «Հայաստանի խորհրդարանն ու կառավարությունը հանդիսանում են միացյալ Հայաստանի ազատ ժողովուրդը շաղկապող բարձրագույն օրենսդիր և գործադիր իշխանությունը»[44]*: Միացյալ Հայաստանի հռչակումը ենթադրում էր, որ ՀՀ և Հայ ազգային պատվիրակությունները պետք է միավորվեին՝ ունենալով մեկ նախագահ: Սակայն այդ տրամաբանությունը չգործեց, ինչը փոխադարձ անվստահության ու անմիաբանության պարարտ հող ստեղծեց զույգ պատվիրակությունների գործողություններում:*

1919 թ. փետրվարի 24-ից ապրիլի 22-ը Փարիզում Պ. Նուբար փաշայի նախաձեռնությամբ հրավիրվեց ազգային համագումար՝ համազգային կարևորության խնդիրներ քննարկելու և «մշակելու համար հայ ազգի պա-

[43] *Հայկական հարցը խաղաղության կոնֆերանսի առաջ. 1919, 6–9:*
[44] *Վ ր ա ց յ ա ն. 1993, 278:*

հանջներուն ծրագիրը»[45]: Համագումարը վավերացրեց Փարիզի վեհաժողովին ներկայացված փետրվարի 12-ի պահանջագիրը, Պ. Նուբարի գլխավորությամբ ընտրեց ազգային նոր պատվիրակություն, որը ՀՀ պատվիրակության հետ կազմելու էր միասնական պատվիրակություն:

Միացյալ Հայաստանի հռչակումից հետո Պ. Նուբարը պահանջում էր կազմել հավասար թվով արևմտահայերից ու արևելահայերից բաղկացած միացյալ խորհրդարան և միացյալ ժամանակավոր կառավարություն, որի վարչապետ կլիներ ինքը՝ մնալով պատվիրակության նախագահ: Այս հարցերի շուրջ բանակցություններ վարելու նպատակով Վ. Թեքեյանի գլխավորությամբ Երևան ժամանած առաքելությունը դրական արդյունքներ չգրանցեց: Ավ. Ահարոնյանը դժգոհում էր, որ Պ. Նուբարի հետ յուրաքանչյուր ընդհարումից հետո իր համար անասելի տանջանք էր նրա հետ «նորից տեսնվել, նորից ժողովներ անել, դիմումներ կատարել միասին»[46]: Անտանտի երկրների կողմից ՀՀ ճանաչումը և նրա հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատումը ենթադրում էր, որ հետայսու Խաղաղության վեհաժողովի կողմից ներկայացվող պաշտոնական փաստաթղթի տակ կարող էր դրվել միայն նրա լիազոր ներկայացուցչի ստորագրությունը: Պ. Նուբարը վախ ուներ, որ ՀՀ կործանման պարագայում Արևմտյան Հայաստանը լքված ու անտերության մատնված կլինի, ուստի ցանկանում էր Եվրոպայում իր դիրքերն ամրապնդել որպես Արևմտյան Հայաստանի ներկայացուցիչ:

Որքան էլ դժվարին լիներ համատեղ աշխատանքը, այդուհանդերձ, ազգային և հանրապետական պատվիրակությունները նշանակալի ներդրում ունեցան Փարիզի վեհաժողովին հայկական պահանջները ներկայացնելու գործում:

1920 թ. մայիսի 5-ից հուլիսի 13-ը Փարիզում տեղի ունեցավ ազգային երկրորդ համագումարը, որը քննարկեց Հայ ազգային պատվիրակության մեկամյա գործունեության հաշվետվությունը, պատվիրակության վերակազմության և այլ հարցեր: Համագումարն արձանագրեց, որ Հայ ազգային պատվիրակությունը ոչ միայն Փարիզի վեհաժողովի մասնակից պետություններին ներկայացրել է դիմումներ և հուշագրեր, վարել է բանակցություններ, այլև «աշխատանք է տարել հայ-պոնտական (հունական) հարաբերություններ հաստատելու, հայ-քրդական համաձայնություն կայացնելու և այլ հարցերի ուղղությամբ: Սան Ռեմոյի կոնֆերանսում բանակցություններ են վարվել Վրաստանի և Ադրբեջանի պատվիրակությունների հետ տարածքային և այլ հարցերի շուրջ»[47]: Պ. Նուբար փաշան դարձյալ ընտրվեց Հայ ազգային պատվիրակության նախագահ:

Սևրի պայմանագրին նախորդող բանակցային գործընթացի ժամանակ Պ. Նուբարը հանդիպեց և բանակցություններ վարեց Վերսալյան համակարգի գլխավոր ճարտարապետներ Ս. Պիչոնի, Ժ. Կլեմանսոյի, Ա. Միլերանի, Լ. Բուրժուայի, Վ. Վեսթերմանի, Վ. Վիլսոնի, լորդ Քերզոնի, Լլոյդ Ջորջի, Ռ. Սեսիլի և պաշտոնատար ու անպաշտոն բազմաթիվ այլ անձանց հետ: Այդ հանդիպումների ու բանակցությունների հիմնական հարցերը երկուսն էին. ա) ապագա Հայաստանի սահմանների ճշգրտումը և բ) հովանավոր

---

[45] *Համահայկական խորհրդակցություններ (1912–1920 թթ.), փաստաթղթերի և նյութերի ժողովածու. 2004, 6:*

[46] *Ահարոնյան. 2001, 88:*

[47] *Համահայկական խորհրդակցություններ (1912–1920 թթ.), փաստաթղթերի և նյութերի ժողովածու. 2004, 7:*

պետության ընտրությունը: Ցավոք, նրա ներկայացրած ծրագրերն ու պահանջները քաղաքական ռոմանտիզմի և առավելապաշտության դրսևորումներ էին, ուստի անիրական էին:

1920 թ. օգոստոսի 10-ին փարիզամերձ Սևր ավանում Անտանտի ու Օսմանյան կայսրության միջև ստորագրվեց պայմանագիր, որը Հայաստանի տարածքը սահմանում էր Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի վիլայեթներով, իսկ սահմանազատումը կատարվելու էր ԱՄՆ որոշմամբ: Հայաստանի կողմից պայմանագիրը ստորագրեց Ավ. Ահարոնյանը, և քանի որ Պ. Նուբարը ներկայացնում էր արևմտահայության չահերը՝ նրան ստորագրելու արտոնություն չտրվեց: Եթե Սևրի պայմանագիրը բավարարեր հայության բոլոր հատվածների պահանջները, ապա Հայ ազգային պատվիրակության գործունեությունն ավելորդ կդառնար: Սակայն պայմանագրում ոչինչ ասված չէր կիլիկիահայության մասին: Ուստի Պ. Նուբարը շարունակեց իր գործունեությունը՝ նպատակ ունենալով պաշտպանել Կիլիկիայում վերահաստատված հայերի իրավունքները: Ցավոք, այդ աշխատանքները որևէ իրական արդյունքներ չտվեցին, ինչը պայմանավորված էր առաջին հերթին Հայաստանի նկատմամբ քեմալական Թուրքիայի ռազմական հաղթանակներով, ինչպես նաև՝ Կիլիկիան Թուրքիային հանձնելու Ֆրանսիայի որոշմամբ: Պ. Նուբարի համար իսկական ողբերգություն էր Թուրք-հայկական պատերազմում հայկական բանակի խայտառակ պարտությունը, քանզի այն ազգապարում էր մեծ երազի ավարտը: Դեռ 1919 թ. ամռանը, հիասթափված անգլո-ֆրանսիական դիվանագիտության կեղծ խոստումներից և Հայաստանի մանդատի հարցում ամերիկյան որոշման ձգձգումներից, նա վարչապետ Ավ. Խատիսյանին հորդորում էր մի կողմ դնել «կիրքերը եւ ամեն բան գոհելով կանոնաւոր եւ ուժեղ բանակ մը մէջտեղ բերել, փրկուած ենք, այլապես ես ուրիշ ապահով ելք չեմ գտներ»[48]: Գրող և հասարակական-քաղաքական գործիչ Ավետիս Թերզիպաշյանի վկայությամբ՝ Կարսի անկման լուրը Պ. Նուբարի դեմքին դալջեց «ժժգունութեան և դալկութեան ... մռայլ դրոշմ մը»[49], իսկ «աչքերուն մէջ կար տխրութիւն, կար յուսաբեկութիւն, կար նաեւ և չատ չեչտուած զայրոյթ»[50]:

Հայաստանի Հանրապետության անկումից հետո գույգ պատվիրակությունները վերակազմավորվեցին որպես միացյալ պատվիրակություն, որի նախագահը թեև Ավ. Ահարոնյանն էր, բայց նիստերը նախագահում էր Պ. Նուբարը: 1921 թ. փետրվար–մարտ ամիսներին Լոնդոնի համաժողովում Հայկական հարցի ճախողումը նոր հիասթափություններ պատճառեց նրան: Համաժողովում Պ. Նուբարը ցավով ու տագնապով հայտարարեց. «Անհնար է պատկերացնել, որ մի պատերազմից հետո, որն այսքան շատ ժողովուրդների վերականգնեց իրենց երկրներում, հայերը, ովքեր սոսկալի տառապանքներ են կրել և ովքեր մարտնչել են դաշնակիցների կողքին այն միակ ժողովուրդն են լինելու, որի համար սեփական երկրում նույնիսկ մեկ անկյուն չի կարող վերապահվել»[51]:

Ամռանը Պ. Նուբարը դադարեցրեց իր մասնակցությունը Հայ ազգային պատվիրակության աշխատանքներին:

---

[48] *Թ է ր զ ի պ ա շ ե ա ն. 1939, 289:*

[49] *Թ է ր զ ի պ ա շ ե ա ն. 1939, 347:*

[50] *Թ է ր զ ի պ ա շ ե ա ն. 1939, 348:*

[51] *Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828–1923 թթ.). 1972, 700:*

Մեծ բարեգործը

Հայ ազգային պատվիրակության նախագահի պաշտոնը լքելուց հետո էլ Պ. Նուբարը չդադարեցրեց ազգանպաստ գործունեությունը ՀԲՄ-ի շրջանակներում, հետևողականորեն շարունակեց բարեգործությունները: Գրող, հրապարակախոս, ՀԲՄ ընդհանուր քարտուղար Վահան Մալեզյանը, ով եղել էր նաև ազգային պատվիրակության ընդհանուր քարտուղարը, վկայում է. «Ինքզինքը այնուհետեւ տկար և յոգնած զգալով, մանաւանդ հայկական դատին համար թափուած չանքերուն և ահագին զոհողութեանց ապարդիւն մնալէն խոցուած, քաշուեցաւ Ազգ. Պատուիրակութենէն, նախագահութիւնը յանձնելով Վսեմ. Գ. Նորատունկեանի, և այդ թուականէն ի վեր ամբողջովին նուիրուեցաւ Բարեգործականի զարգացման և զօրացման, հիմնական լուրջ կարգադրութիւններով և անձնական խոշոր նուիրատուութիւններով»[52]: Կյանքի վերջին տասնամյակում Պ. Նուբարը բարեգործական մեծաթիվ աշխատանքներ և նվիրատվություններ կատարեց. նրա ֆինանսական օժանդակությամբ 1920-ական թվականներին կառուցվեց Կահիրեի Նուբարյան վարժարանը, Փարիզի Նուբարյան մատենադարանը և Մարի Նուբարի անվան ուսանողական տունը: 1924 թ. նա եգիպտոսից Բրյուսել տեղափոխեց հայ ուսանողական հիմնադրամը, որը կրթաթոշակով ապահովելու էր Եվրոպայում սովորող հայ երիտասարդներին՝ հատկապես նրանց, ովքեր կպարտավորվեին ուսումնառությունից հետո մեկնել Հայաստան:

Չնայած բոլշևիկյան վարդապետության հանդեպ ունեցած ժխտական վերաբերմունքին՝ Պ. Նուբարը ծանրակշիռ ներդրում ունեցավ աշխարհասփյուռ հայության հայրենադարձության և հայրենիքի վերաշինության գործերում: 1920-ական թվականներին նա անգնահատելի աջակցություն ցուցաբերեց սփյուռքահայերի ներգաղթի և Մերձավոր Արևելքի հայ որբերին Հայաստան տեղափոխելու դժվարին աշխատանքներին: Երևանի Ջրհեղեղի ու Լենինականի երկրաշարժի ժամանակ նա դարձյալ աղետյալների կողքին էր և ֆինանսական մեծ օգնություն տրամադրեց նրանց: Առողջապահության բնագավառում նրա ամենակարևոր ներդրումը 1929 թ. Մարի Նուբարի անվան ակնաբուժական կլինիկայի կառուցումն էր Երևանում: Ներգաղթյալների համար Երևանի հարևանությամբ բնակելի ավան կառուցելու գաղափարը Պ. Նուբարինն էր: Ավանը կառուցվեց անձնական և ՀԲՄ-ի ֆինանսական միջոցներով, բայց արդեն իր մահից հետո:

Պ. Նուբարի վրա ծանր էր անդրադարձել 1925 թ. տիկնոջ՝ Մարի Նուբարի մահը: Ա. Թերզիպաշյանը վկայում է, որ կնոջ մահով «Փաշայի մէջն ալ մեռաւ բան մը, բան մը որ կնոջը չունչովն էր միայն որ կ'ապրէր, անոր ներկայութեամբը, անոր ձայնովը, անոր անունովը: ... Մահին կարծես թէ յիշատակի համար բան մը խլած ըլլար ամուսնոյն էութիւնէն եւ հետը տարած: Անոր մահէն վերջ Փաշան այլ եւս առջի Փաշան չէր»[53]:

Պ. Նուբարը մահացավ 1930 թ. հունիսի 25-ին Փարիզում, թաղված է Պեր Լաշեզ գերեզմանատանը:

---

[52] *Նուպար և Նուպարաշէն. 1929, 12: Թեև գրքի վրա բացակայում է հեղինակի անուն-ազգանունը, սակայն Վ. Մալեզյանը «Ճամբուս ծայրը» Ա. հատորի էջ 290-ում փաստում է, որ «Նուպար և Նուպարաշէն» աշխատության հեղինակն ինքն է:*

[53] *Թէրզիպաշեան. 1939, 366:*

Եզրակացություն

Պողոս Նուբարի կյանքը պայմանականորեն կարելի է բաժանել երեք փուլերի: Առաջինը նրա աշխատանքային շրջանն էր, երբ կայացավ որպես պետական պաշտոնյա, ձեռներեց, ազգային գործիչ և բարերար: Այս փուլում նրա կարևորագույն ներդրումը ՀԲԸՄ-ի ստեղծումն էր, ինչի կայացումը Պ. Նուբարի անուրանալի ծառայությունն էր հայ ժողովրդի առջև: Թե՛ ձեռնարկատիրական, թե՛ ազգային և թե՛ բարեգործության ասպարեզներում նա իրեն դրսևորեց որպես գերազանց կազմակերպիչ և հայրենանվեր գործիչ:

Երկրորդ փուլը սկսվում է 1912 թ., երբ նշանակվեց Հայ ազգային պատվիրակության նախագահ և անձնվիրաբար ծառայեց Հայկական հարցի լուծմանը: Նրա դիվանագիտական ջանքերը ծանրակշիռ էին հատկապես Եվրոպայի հասարակական կարծիքը հօգուտ Հայկական հարցի տրամադրելու, ինչպես նաև հայկական բարենորոգումների չուրջ ռուս-գերմանական և ռուս-թուրքական համաձայնություն կայացնելու գործում: 1912–1921 թթ. նա ղեկավարեց Հայ ազգային պատվիրակությունը և հայ ժողովրդի համար այդ ողբերգական ժամանակահատվածում ոչ միայն չարունակեց զբաղվել բարեգործությամբ, այլ նաև միայնակ կրեց դիվանագիտական աշխատանքի ամբողջ ծանրությունը: Պատվիրակության անդամները տարբեր հանգամանքների բերումով և պատճառաբանություններով մի քանի անգամ լրացվեցին ու փոփոխվեցին, սակայն, միևնույն է, նա մինչև վերջ կրեց դժվարություններն ու պատասխանատվությունը: Որքան էլ խաբված ու հիասթափված լիներ օտարերկրյա կառավարող շրջանների խոստումներից, միևնույն է անտրտունջ և անմնացորդ նվիրումով պաշտպանեց իր ժողովրդի շահերը: Ջանենալով իշխանավարության ազդու լծակներ կամ գործընթացների վրա ազդելու իրական որևէ հնարավորություն՝ նա պատվով կատարեց Ամենայն Հայոց կաթողիկոսի և ՀՀ կառավարության հրահանգներն ու ցուցումները: Նրա կենսագիրներից Հակոբ Ալթունյանը նկատել է. «Ան (Պողոս Նուբարը – Մ. Մ.) պայծառորեն կը տեսնէր թէ Մեծ Պետութիւններու շահերը լողքարի մը նման պիտի ճզմէին փոքրազգերու իրաւունքները: Սակայն իր բոլոր կարողութիւններովը, իր հոգեկան վերջին ուժերովը, ան կը պայքարէր փրկելու համար գէթ նուազագոյնը իր ժողովուրդին համար: Ուրիշ ի՞նչ զենք կրնար գործածել, երբ ետին չունէր բանակ ու թնդանօթ, այլ ցիրուցան, գաղթական ու խեղճացած ժողովուրդ մը»[54]:

Կյանքի երրորդ փուլում արդեն յոթանասունամյա գործիչը գերազանցապես զբաղվեց բարեգործությամբ: Անգամ անկողնուն գամված՝ հետևում էր աշխարհասփյուռ հայության և Հայաստանի կարիքավորներին ու աղետյալներին օգնելու իր ծրագրերի ճշգրիտ իրականացմանը:

Պողոս Նուբար փաշան հայոց պատմության մեջ մնաց որպես ազգային մեծ գործիչ և բարերար:

Միքայել Մարտիրոսյան – պ. գ. թ., դոցենտ, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի համաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոս: Գիտական հետաքրքրությունները՝ հայ-ռուսական առնչությունները, Հայկական հարցի պատմություն: Հեղինակ է ուսումնամեթոդական ձեռնարկի և շուրջ 30 հոդվածի: martirosyanmiqael02@gmail.com

[54] *Ալթունեան. 2012, 162:*

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ալթունեան Յ. 2012, Կենսագրութիւն Նուպար փաշայի եւ Պօղոս Նուպար փաշայի, Թորոնթօ, 169 էջ:

Ահարոնյան Ավ. 2001, Սարդարապատից մինչև Սևր և Լոզան, Երևան, Երևանի համալս. հրատ., 252 էջ:

«Անահիտ» (Փարիզ), 1930, թիվ 2, մայիս-հունիս:

Բաբգէն վարդապետ. 1914, Հայկական հարցը և Պօղոս Նուբար փաշան, Վաղարշապատ, տպ. ս. Էջմիածին, 32 էջ:

«Բյուզանդիոն» (Կ. Պոլիս), 04. IX. 1913:

Բոյաջյան Հ. 2010, Պողոս Նուբար փաշան և բարենորոգումների խնդիրն Արևմտյան Հայաստանում 1912–1914 թթ., Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 208 էջ:

Թէրզիպաշեան Ա. 1939, Նուպար, Փարիզ, 384 էջ:

Լիւտօվիք տը Քօնթանսօն. 1913, Հայկական հարցին վերջին փուլերը, Կ. Պոլիս, տպագր. Օսմ. Գործակից ընկ., 78 էջ:

Համահայկական խորհրդակցություններ (1912–1920 թթ.), փաստաթղթերի և նյութերի ժողովածու. 2004, Երևան, «Գրիգ տպագրատուն», 787 էջ:

Հայկական հարցը խաղաղության կոնֆերանսի առաջ. 1919, Բոստոն, Hairenik Press, 32 էջ:

Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828–1923 թթ.). 1972, պրոֆ. Զ. Ս. Կիրակոսյանի խմբագրությամբ, Երևան, Հայաստան հրատ., 810 էջ:

Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 57, g. 5, գ. 26, ֆ. 57, g. 5, գ. 27:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ձեռագրատուն, վավ. 288:

Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914–1918). 2005, հ. 1, աշխատ. Արթուր Պեյլերյանի, Երևան, «Հայաստան», 484 էջ:

Մ. Մաշտոցի անվան մատենադարան, Կաթ. դիվան, g. 20, թղթ. 238, վավ. 164:

«Մշակ» (Թիֆլիս), 04. I. 1913, 01. II. 1913:

Նուպար և Նուպարաշէն. 1929, Փարիզ, տպարան Մասիս, 47 էջ:

ՊԲՀ, 1993, № 1–2:

Պօղոսեան Ս. 2004, Պողոս Նուբար փաշա. ազգային գործիչը, Երևան, «Զանգակ–97», 264 էջ:

Չորմիրսեան Լ. 1975, Համապատկեր արևմտահայոց մէկ դարու պատմութեան, հ. Գ., տպ. Սևան, 750 էջ:

Վրացյան Ս. 1993, Հայաստանի Հանրապետություն, Երևան, «Հայաստան», 704 էջ:

«Տարազ» (Թիֆլիս), 1913, հունվար, թ. 1:

Օտեան Ե. 1913, Պօղոս փաշա Նուպար (կենսագրական նոթեր), Կ. Պոլիս, Եփրատ գործակալութիւն, 100 էջ:

Архив внешней политики Российской империи, ф. «Посольство в Константинополе», оп. 517/2, д. 3727, л. 22; д. 3728, л. 46; д. 3734, л. 304.

Международные отношения в эпоху империализма, серия III, т. III. М.–Л., Государственное социально-экономическое издательство, 1933, 467 с.

«Речь» (СПб.), 19. VI. 1914.

ВЕЛИКИЙ НАЦИОНАЛЬНЫЙ ДЕЯТЕЛЬ И ФИЛАНТРОП: ПОГОС НУБАР-ПАША

МИКАЕЛ МАРТИРОСЯН

Р е з ю м е

Ключевые слова: Погос Нубар-паша, Геворг Пятый, патриархат Константинополя, Армянская национальная делегация, армянские реформы, русско-турецкое соглашение, Севрский договор, ВАБС, великий филантроп, национальный деятель, Мари Нубар.

Среди армянских национальных, общественных и политических деятелей начала XX века своей патриотической деятельностью выделяется Погос Нубар-паша. Он родился в 1851 г. в Константинополе. Будучи сыном премьер-министра Египта Нубара-паши, он получил европейское образование и начал свою карьеру во Франции, позже продолжил трудовую деятельность в Египте. Погос Нубар-паша сыграл значительную роль в национальной жизни армян Египта. Он был основателем и пожизненным почетным президентом Всеобщего армянского благотворительного союза. В 1912 г. католикос всех армян Геворг Пятый назначил его главой Армянской национальной делегации в Европе. Вплоть до 1921 года он боролся за справедливое решение Армянского вопроса. С его помощью французскому правительству удалось создать Восточный (Армянский) легион. После Первой мировой войны Погоса Нубар вел переговоры практически со всеми архитекторами Версальской системы и обосновал требования армян.

Погос Нубар-паша известен также как великий филантроп. Он потратил свои финансовые средства на спасение от голода беженцев и сирот, уцелевших от Геноцида. Организовал не только репатриацию армян Ближнего Востока и Греции, но и образование молодежи. На средства Погоса Нубара в Ереване построена офтальмологическая клиника им. Мари Нубар и жилой квартал Нубарашен. Погос Нубар-паша скончался в 1930 г. и был похоронен на кладбище Пер Лашез в Париже.

Микаел Мартиросян – к. и. н., доцент, преподаватель кафедры всемирной истории и методики ее преподавания АГПУ им. Х. Абовяна. Научные интересы: армяно-русские связи, история Армянского вопроса. Автор учебно-методического пособия и около 30 статей.
martirosyanmiqael02@gmail.com

GREAT NATIONAL FIGURE AND PHILANTHROPIST: POGHOS NUBAR PASHA

MIKAEL MARTIROSYAN

S u m m a r y

Key words: Poghos Nubar Pasha, Gevorg the Fifth, Patriarchate of Constantinople, Armenian National Delegation, Armenian reforms, Russian-Turkish agreement, Treaty of Sevres, AGBU, great philanthropist, national figure, Marie Nubar.

Among the Armenian national, public and political figures of the early 20th century, Poghos Nubar Pasha stands out with his patriotic activities. He was born in 1851 in Constantinople. As the son of Egyptian Prime Minister Nubar Pasha, he received a European education and began his career in France, later continuing his labour activities in Egypt. Poghos Nubar Pasha played a significant role in the national life of the Armenians of Egypt. He was the founder and lifetime honorary president of the General Armenian Benevolent Union. In 1912, the Catholicos of all Armenians, Gevorg the Fifth, appointed him head of the Armenian National Delegation in Europe. Until 1921, he fought for a fair solution to the Armenian Question. With his support, the French government managed to create the Eastern (Armenian) Legion. After the First World War, Poghos Nubar conducted negotiations with almost all the architects of the Versailles system and substantiated the demands of the Armenians.

Poghos Nubar Pasha is also known as a great philanthropist. He spent his financial resources to save from starvation the refugees and orphans who survived the Genocide. He organized not only the repatriation of Armenians from the Middle East and Greece, but also the education of young people. At the expense of Poghos Nubar, an ophthalmological clinic named after A. Marie Nubar and Nubarashen residential quarter were built. Poghos Nubar Pasha died in 1930 and was buried in the Père Lachaise cemetery in Paris.

Mikael Martirosyan – Candidate of Sciences in History, Associate Professor, Lecturer at the Chair of World History and its Teaching Methods of the ASPU after Kh. Abovyan. Scientific interests: Armenian-Russian relations, history of the Armenian Question. Author of educational-methodical manuals and about 30 articles. martirosyanmiqael02@gmail.com

Պատմաբանասիրական հանդես 2022 № 1 Историко-филологический журнал

Doi:10.54503/0135-0536-2022.1-26

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ. ՀԱՅ ԱՌԱՋԻՆ ԽՈՇՈՐ ՁՈՒԹԱԿԱՀԱՐԸ*

ԱՆՆԱ ԱՍԱՏՐՅԱՆ

Բանալի բառեր՝ Հովհաննես Նալբանդյան, արտիստ, ջութակահար-վիրտուոզ, մանկավարժ, Պետերբուրգի կոնսերվատորիա, հուշագրություն, Պ. Սարասատե, Լ. Աուեր:

Նախաբան

«Ես մեծ հաճույքով լսեցի Լեոպոլդ Աուերի շատ հայտնի ուսանող Հովհաննես Ռոմանովիչ Նալբանդյանին, որը ջութակահարի մեծ տաղանդ ունի»[1]. ահավասիկ աչխարհահռչակ ջութակահար Պաբլո դե Սարասատեի կարծիքը Պետերբուրգի կոնսերվատորիայի շրջանավարտ, տակավին 24-ամյա հայ տաղանդավոր ջութակահար, ՌՍՖՍՀ վաստակավոր արտիստ (1926), ՌՍՖՍՀ արվեստի վաստակավոր գործիչ (1937) Հովհաննես Առաքելի (Ռոմանի) Նալբանդյանի (15 սեպտեմբերի 1871, Սիմֆերոպոլ – 23 փետրվարի 1942, Տաշքենդ) մասին Լոնդոնում 1895 թ. տեղի ունեցած նրանց հանդիպումից հետո: Հիացած երիտասարդ ջութակահարի նվագով՝ իր փառքի գագաթին գտնվող Սարասատեն, տեղեկանալով, որ Նալբանդյանն աշնանը մտադիր է վերադառնալ Պետերբուրգ, նրան խորհուրդ է տալիս մնալ արտասահմանում և համերգներով հանդես գալ. իհարկե, սկզբնական շրջանում դա դժվար կլինի, սակայն հետո՝ ամեն ինչ լավ կընթանա: «Սարասատեի այս խոսքերը հետագայում ես շատ անգամ եմ հիշել իմ կյանքում, – տարիներ անց կգրի Նալբանդյանը, – և շատ ափսոսում էի, որ չհետևեցի նրա խորհրդին»[2]:

Նալբանդյանը վերադարձավ Պետերբուրգ, որը դարձավ նրա երկրորդ հայրենիքը: Այստեղ նա ծավալեց ակտիվ համերգային և մանկավարժական գործունեություն՝ 47 տարի լինելով Պետերբուրգի կոնսերվատորիայի պրոֆեսոր: Հենց այստեղ Նալբանդյանը հետագայում առիթներ ունեցավ կրկին

---

* *Ներկայացվել է 21. II. 2022 թ., գրախոսվել է 01. III. 2022 թ., ընդունվել է տպագրության 10. III. 2022 թ.:*

[1] *ՀՀ գրականության և արվեստի թանգարան (այսուհետ՝ ԳԱԹ), Հովհ. Նալբանդյանի ֆ., № 350:*

[2] *ԳԱԹ, Հովհ. Նալբանդյանի ֆ., № 2:*

հանդիպելու Սարասատեի հետ՝ Ռուսաստանում նրա հյուրախաղերի ընթացքում: Այդ հանդիպումների տպավորությունների տակ ծնվեց Նալբանդյանի հուշագրությունը Սարասատեի մասին, որը հեղինակն ավարտեց Լենինգրադում մահից ընդամենը ամիսներ առաջ, ինչպես նշված է ձեռագրում՝ «2–4–41»[3]:

Սիմֆերոպոլ. մանկության և պատանեկության տարիները

Հովհ. Նալբանդյանը ծնվել է երաժշտասերների ընտանիքում, և նրա մանկական բոլոր վառ տպավորությունները կապված էին երաժշտության հետ. «Հայրս հայ դրող էր: Մնողներս երաժշտություն էին սիրում: Հայրս ֆլեյտա էր նվագում, իսկ մայրս՝ ռոյալ»[4]:

Դեռևս մանկությունից նրա մեջ տպավորվեցին մոր՝ Աննա Նալբանդյանի օրորոցային երգերը, որոնք նա երգում էր՝ քնեցնելով երեխային: «Թեև ես արդեն 4–5 տարեկան էի, – հետագայում կդրի երաժիշտն իր ինքնակենսագրության մեջ, – սակայն առանց այդ երգերի ես հազվադեպ էի քնում և դրանք միշտ ինձ վրա ազդում էին իրենց թախծոտ, լիակատար անելանելիության մոտիվով»[5]: Իսկ երբ երեկոյան՝ գործերից հետո, հայրը նվագում էր ֆլեյտա, փոքրիկը սուսուփուս գնում էր այդ սենյակը և ունկնդրում հոր նվագը: Սիրում էր նաև մոր նվագը ռոյալի վրա, որի հնչյունները միշտ գերում էին նրան:

Հայրը՝ Առաքել (Ռոման) Նալբանդյանը, «շատ տաղանդավոր մարդ էր, հասարակական գործչի նատուրայով այնքան հեռու էր առևտրական գործերից, որոնք ճակատագիրը նախանշել էր որպես իր զբաղմունք, նա ամենևին պատրաստված չէր դրան:

Լինելով հայ-կաթոլիկ ծխական եկեղեցու հոգաբարձու, հայրս խանդով էր վերաբերվում և մեր համայնքի գործերին: Նրա բաղձալի երազանքն էր երկու հայկական համայնքների՝ գրիգորյանական և կաթոլիկ, միավորումն ու նրանց միջև գոյություն ունեցող անբարյացակամության վերացումը: Այդ գաղափարին էր նա նվիրում իր լավագույն ուժերն ու եռանդը: Հայրս ներշնչում էր մեր հասարակությանը, որ մենք հայեր ենք, այլ ոչ թե կաթոլիկներ, որ կրոնը ոչ մի կապ չունի ազգության հետ և որ և՛ գրիգորյանականը, և՛ կաթոլիկը, և՛ բողոքականը, բոլորը միայն հայեր են, նրանք ունեն նույն արյունը, նույն հոգին ու նույն սիրտը: Եվ եթե հորս այդ հայացքները չընդունվեցին մեր հասարակության կողմից, ապա մեր՝ նրա զավակների, դաստիարակության համար հսկայական նշանակություն ունեցան. մանկուց այդ հարցերի նկատմամբ մենք ունեինք սթափ և ճիշտ հայացքներ»[6]:

Ինը տարեկանում Հովհ. Նալբանդյանը սկսում է հաճախել հայկական կաթոլիկ դպրոց. սովորում էր վատ, սակայն շատ էր սիրում երգչախմբային

---

[3] *Պ. Սարասատեի մասին Հովհ. Նալբանդյանի արժեքավոր հուշագրությունը, որի ձեռագիրը գտնվում է ԳԱԹ-ի նրա արխիվում, մեր ջանքերով հատվածաբար հրապարակվեց ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական պարբերականի՝ «Արվեստագիտական հանդեսի» անդրանիկ համարում. տե՛ս Ա ս ա տ ր յ ա ն. 2019, 188–206:*

[4] *ԳԱԹ, Հովհ. Նալբանդյանի ֆ., № 1 (դ):*

[5] *ԳԱԹ, Հովհ. Նալբանդյանի ֆ., № 1 (ա), 1913, էջ 1:*

[6] *ԳԱԹ, Հովհ. Նալբանդյանի ֆ., № 1 (ա), 1913, էջ 5:*

երգեցողության դասերը, և, մասնավորապես՝ կիրակի օրերին եկեղեցում երգել երգեհոնի նվագակցությամբ: Ջութակ նվագել Նալբանդյանը սկսում է պատահաբար: Ինչպես հայտնի է, 1879 թ. տեղի ունեցան Պետերբուրգի կոնսերվատորիայի ջութակի դասարանի առաջին պրոֆեսոր, «ջութակի Շոպեն» Հենրիկ Վենյավսկու հյուրախաղերը Ռուսաստանում, որոնք դարձան նրա համերգային գործունեության վերջին ակորդը: Իր հյուրախաղերի ընթացքում նա այցելում է նաև Սիմֆերոպոլ:

Համերգը ճակատագրական է դառնում Հովհ. Նալբանդյանի կյանքում: Այդ համերգին ներկա Նալբանդյանի մայրը՝ հիացած Վենյավսկու նվագով, սիրահարվում է ջութակին և որոշում, որ իր ավագ որդին պիտի ջութակ նվագի: Մոր խոսքերով՝ ջութակահարն իր նվագով այնպես էր հափշտակում ունկնդիրներին, որ իր «Լեգենդի» կատարման ժամանակ նրանցից չատերն արտասվում էին, և, երբ Վենյավսկին նվագում էր իր պոլոնեզներն ու մազուրկաները, առաջ էր բերում հիացմունքի փոթորիկ. «Վենյավսկուն ես համարում էի ջութակահար-արտիստի իդեալ»[7]: Ի դեպ, Սարասատեի մասին իր հուշագրության մեջ հետագայում Նալբանդյանը կգրի, որ «առաջին ականավոր ջութակահարները, ում անունները ես լսել եմ իմ մանկական տարիներին, Պագանինին էր ու Վենյավսկին»[8]:

Այդ ժամանակ Հովհ. Նալբանդյանը տասը տարեկան էր: Նրա համար գնում են ջութակ, և որդու հետ պարապելու նպատակով հայրը հրավիրում է իր ընկերոջը՝ սիրող-ջութակահար Մալյանին. «Ես շատ սիրեցի ջութակն ու իմ ուսուցչին և ջերմեռանդորեն պարապում էի և մի քանի ամսվա ընթացքում, Մալյանի խոսքերով, այնքան առաջադիմեցի, որ նա խնդրեց մեկ այլ, ավելի տեղյակ ուսուցիչ գտնել: Մենք փոխեցինք մի քանի ուսուցիչների, մինչև որ գտանք տաղանդավոր ջութակահար Ֆիերկովսկուն»[9]: Նրանց պարապմունքներն օրիգինալ էին. ուսուցիչը գրեթե ոչինչ չէր հարցնում Նալբանդյանին, այլ ամբողջ ժամանակ նվագում էր ինքը, իսկ աշակերտը բավականության ունկնդրում էր նրան և նմանակելով՝ ձգտում փոխառել այն, ինչ կարող էր …

Նալբանդյանի հրապարակային անդրանիկ ելույթը Սիմֆերոպոլում տեղի է ունենում բարեգործական համերգի ժամանակ՝ տասնմեկ տարեկանում և անցնում մեծ հաջողությամբ: Հաջորդում են ևս մի քանի ելույթները Սիմֆերոպոլում, իսկ ամռանը նա մեկնում է Թեոդոսիա. «Թեոդոսիայում շուտով տեղեկացան, որ ես ջութակ եմ նվագում և հրավիրեցին մասնակցել բարեգործական համերգին, որտեղ մեծ հաջողություն ունեցա: Այդ համերգին ներկա էր Այվազովսկին»[10]: Տեղի է ունենում նրանց հանդիպումը, և իր կյանքում առաջին անգամ պատանի ջութակահարը տեսնում է կտավներ. դրանք Այվազովսկու կտավներն էին Թեոդոսիայի նրա պատկերասրահում:

1883-ին Հովհ. Նալբանդյանի մայրը՝ բուժվելու նպատակով, մեկնում է Խարկով: Այնտեղից վերադառնալով՝ իր հետ բերում է Պաբլո դե Սարասատեի լուսանկարն ու համերգի հայտագիրը: Որդու հարցին, թե ինչպե՞ս է նվագում Սարասատեն և արդյո՞ք նրա նվագը նման է Վենյավսկու նվագին, թե՞

---

[7] *Ա ս ա տ ր յ ա ն. 2015, 101:*
[8] *Ա ս ա տ ր յ ա ն. 2015, 101:*
[9] *ԳԱԹ, Հովհ Նալբանդյանի ֆ., № 1 (ա), 1913 թ., էջ 2:*
[10] *ԳԱԹ, Հովհ Նալբանդյանի ֆ., № 1 (ա), 1913 թ., էջ 2:*

նրա նվագում կա ինչ-որ արտասովոր, դիվային բան, ինչպես Պագանինիի նվագում, մայրը պատասխանում է. «Ոչ, նա չի նվագում Վենյավսկու նման: Սարասատեի նվագի մեջ կան ինչ-որ երկնային, զարմանալիորեն գեղեցիկ, թեթև հնչյուններ, որոնք, ասես, հրեշտակային երգեցողություն լինեն: Իսկ Սարասատեն նվագում է, ասես, ոչ թե ջութակ, այլ ինչ-որ անհայտ գործիք»[11]: Ամեն անգամ՝ Սարասատեի մասին մոր պատմությունները լսելուց հետո, փոքրիկն աստիճանաբար «նեղանում էր ջութակահարից՝ ջութակի փոխարեն». «Ես՝ տասնմեկամյա տղաս, պաշտում էի իմ ջութակն ու այն համարում աշխարհի լավագույն գործիքը»[12]:

Հովհ. Նալբանդյանի կյանքում հաջորդ բախտորոշ իրադարձությունը տեղի է ունենում 1885-ին: Համերգներով հանդես է գալիս ռուս թավջութակահար, Պետերբուրգի կոնսերվատորիայի նախկին շրջանավարտ, իսկ 1885-ից՝ նույն կոնսերվատորիայի պրոֆեսոր Ալեքսանդր Վերժբիլովիչը. «Սա առաջին մեծ արտիստն էր, ում ես լսել եմ: Տպավորությունը հսկայական էր»: Նալբանդյանին ցույց են տալիս Վերժբիլովիչին. նա նվագում է: Վերժբիլովիչը մեծ ապագա է գուշակում և համոզում Նալբանդյանի հորը, որպեսզի տղային ուղարկի Պետերբուրգ՝ սովորելու:

Պետերբուրգ. ուսումնառություն կոնսերվատորիայում

1886-ի օգոստոսի վերջին Նալբանդյանը հոր հետ արդեն Պետերբուրգում էին: «Պետերբուրգում մենք ոչ ոքի չէինք ճանաչում: Հորս մոտ միտք հղացավ՝ ծանոթացնել ինձ հայկական-գրիգորյանական եկեղեցու հոգևորական Օ. Խանտարջյանի հետ: Մենք գնացինք նրա մոտ, նա մեզ ընդունեց սիրալիր, ջերմ և խորհուրդ տվեց տեղավորվել հայկական եկեղեցու տանը, որտեղ բակում, բնակարաններից մեկում մի սենյակ վարձով էր տրվում: Հենց այդ նույն օրը ես տեղափոխվեցի նոր բնակարան»[13],— հիշում է պատանի ջութակահարը: Մեկնելուց առաջ հայրը որդուն տանում է հայկական եկեղեցի և ասում. «Ահա՛ քո եկեղեցին, ե՛կ այստեղ և եղի՛ր հայ»[14]:

Նալբանդյանը քննություն է հանձնում և դրանցվում կոնսերվատորիայի ավագ դասախոս, ռուս ջութակահար, դիրիժոր և մանկավարժ Նիկոլայ Գալկինի դասարանում: 1886–1887 ուսումնական տարեվերջի բնութագրում Ն. Գալկինը գրում է. «Մեծ տաղանդ է, դրա հետ մեկտեղ՝ սիրում է աշխատել: Տարվա ընթացքում փայլուն առաջադիմություն է ցույց տվել: Կարելի է հուսալ, որ նրան շատ լավ ապագա է սպասում»[15]: Իսկ մեկ տարի անց Գալկինը բնութագրում նշում է. «... խոշոր, աչքի ընկնող տաղանդ է, հիանալի և լուրջ վերաբերմունք ունի դեպի արվեստը»[16]:

1887-ի գարնանը տաղանդավոր երաժիշտը պատրաստվում է ավարտական քննության, որից կախված էր նրա ողջ ապագան: Հոր գործերը վատացել էին, և նա այլևս չէր կարող վճարել կոնսերվատորիայում սովորելու հա-

[11] *Ա ս ա տ ր յ ա ն. 2015, 102:*
[12] *Ա ս ա տ ր յ ա ն. 2015, 103:*
[13] *ԳԱԹ, Հովհ. Նալբանդյանի ֆ., № 1 (ա), 1913 թ., էջ 3:*
[14] *ԳԱԹ, Հովհ. Նալբանդյանի ֆ., № 1 (ա), 1913 թ., էջ 3:*
[15] *Գ և ո ր գ յ ա ն. 1962, 17:*
[16] *Գ և ո ր գ յ ա ն. 1962, 18:*

մար որդու ուսման վարձը: Գալիս է քննությոյան օրը. «Ես սարսափելի հուզվում էի, բայց երբ բեմ դուրս եկա, տեսա սփռոցով ծածկված սեղանն ու կենտրոնում Ռուբինշտեյնի (կոնսերվատորիայի դիրեկտորը – Ա. Ա.) հզոր, առյուծային, ուժով և վեհագեղությամբ լի մեծ գլուխը, և ասես թռա անդունդը, բայց կամքի սարսափելի ուժով ինձ հավաքեցի և սկսեցի նվագել: Ամեն ինչ, ասես, երազում լիներ: Ինձ այդ վիճակից հանկարծ արթնացրեց ձայնը. «Բռավո, բռավո», – դա Ռուբինշտեյնի ձայնն էր»[17]:

Բեմից իջնում է Նալբանդյանը, և նրան շրջապատում է ուսանողների բազմությունը՝ շնորհավորանքներով, մոտենում է դասախոսը և արցունքն աչքերին գրկում, ապա՝ պրոֆեսոր Լ. Աուերը մեկնում է ձեռքն ու շնորհավորում: Այդ ամենից հետո հայտարարում են, որ դիրեկտորը պատանի ջութակահարին դարձրել է կրթաթոշակառու և բացի այդ՝ նշանակել ամսեկան 10 ռուբլի աջակցություն: «Ես այնքան ուրախ էի այդ օրն իմ հանդեպ Ռուբինշտեյնի ցուցաբերած մեծ ուշադրության համար, որ նա ինձ առանձնացրեց քննություն հանձնող ուսանողների մեջ և հնարավորություն տվեց շարունակելու իմ երաժշտական կրթությունը Կոնսերվատորիայում: Այդ օրվանից ես տեղ գրավեցի մեր Կոնսերվատորիայի լավագույն ուսանողների շարքում»[18]:

Այսպես՝ Ն. Գալկինի մոտ ուսումնառության երկու տարիներին Հովհ. Նալբանդյանն աճում է անճանաչելիորեն՝ իր վրա հրավիրելով կոնսերվատորիայի դիրեկտոր Ա. Ռուբինշտեյնի և պրոֆեսոր Լ. Աուերի ուշադրությունը: Իր վայելուն հաջողությունների համար 1888 թ. Նալբանդյանը տեղափոխվում է վիրտուոզ-ջութակահար, խոշոր մանկավարժ, դիրիժոր Լ. Աուերի դասարան:

Դեռևս ուսանողական տարիներին Աուերը միշտ զարմանալի լավ էր վերաբերվում Նալբանդյանին. մեծ ուշադրությամբ ու հոգատարությամբ նա զգում էր այն պահերը, երբ Նալբանդյանը հոգեպես ընկճվում էր և նրա համար շատ ծանր էր, ու ամեն կերպ աջակցում էր: Հաճախ հրավիրում էր իր տուն. նրա ընտանիքը Նալբանդյանին սիրում էր: Իսկ երբ արդեն վերջինս Պետերբուրգի կոնսերվատորիայի դասախոս էր ու նրա օգնականը, պրոֆեսորի և նրա սանի միջև գոյություն ունեցող սահմանը վերացավ, ու նրանք դարձան մեծ բարեկամներ: «Ես պիտի այդ բոլոր տարիների ընթացքում, 17 տարիների ընթացքում, չաբաթը երկու անգամ ճաշեի նրա մոտ, իսկ հետո երեկոները մենք նվիրում էինք երաժշտության մասին զրույցներին: Հաճախ և գրեթե միշտ ինձ հաջողվում էր խնդրել նրան ջութակ նվագել և լսելով նրան, հանգիստ նստած խաղաղ իրադրության մեջ ես շատ բան սովորեցի այդ խոշոր ջութակահար-արվեստագետից և նրանով, որ ինձ հնարավորություն ընձեռեց, որպես իր օգնականի, պարապել իր դասարանում, նա ինձ հսկայական օգուտ տվեց, սովորեցնելով ուրիշներին՝ ես շատ բան սովորեցի: Ե՛վ որպես արտիստ, և՛ որպես պրոֆեսոր-մանկավարժ և շատ բանով եմ պարտական Աուերին, և իմ ուսուցչի հանդեպ ջերմ երախտագիտությունը միշտ կապրի իմ մեջ»[19], – հետագայում կխոստովանի Նալբանդյանը:

---

[17] ԳԱԹ, Հովհ. Նալբանդյանի ֆ., № 1 (ա), 1913 թ., էջ 3:
[18] ԳԱԹ, Հովհ. Նալբանդյանի ֆ., № 1 (ա), 1913 թ., էջ 4:
[19] ԳԱԹ, Հովհ. Նալբանդյանի ֆ., №1 (ա), 1913 թ., էջ 16:

Հովհ. Նալբանդյանի արխիվում են գտնվում իր դասախոսի՝ իրեն հասցեագրված ռուսերեն ու գերմաներեն նամակներն ու բացիկները, որոնք ուղարկվել են 1897-ից մինչև 1923 թվականը Կիևից, Փարիզից, Յալթայից, Մյունխենից, Դյուսելդորֆից, Քյոնիգսբերգից, Բեռլինից, Լոնդոնից, Դրեզդենից, Նյու-Յորքից …[20]

Նալբանդյանն Աուերի ամենասիրելի սանն էր ու օգնականը[21]*: Որպես օգնական՝ Նալբանդյանն Աուերի դասարանի համար նախապատրաստեց ամերիկյան ջութակահար Միչա Էլմանին, ամերիկյան ջութակահար, կոմպոզիտոր և մանկավարժ Եֆրեմ Ցիմբալիստին, Պետերբուրգի կոնսերվատորիայի առաջին արտասահմանցի սան, հետագայում կանադացի ջութակահար Կեռլին Պարլոուին, ամերիկյան ջութակահար, կոմպոզիտոր ու մանկավարժ Իոսիֆ Ախրոնին և այլոց: Իսկ 1903-ից Հովհ. Նալբանդյանի դասարանում են իրենց ուսումնառությունը սկսել ամերիկյան ջութակահար, մանկավարժ, XX դ. խոշորագույն ջութակահարներից մեկը՝ Յաշա Հայֆեցը, Մ. Պիաստրոն: Մեծն ջութակահարի սաներից անհրաժեշտ է հիշատակել նաև Ա. Պրանդին և Տ. Շվարցին, ովքեր կոնսերվատորիան ավարտեցին Ա. Ռուբինշտեյնի մրցանակով:*

Նկատենք, որ հենց Նալբանդյանի միջոցով հետագայում նշանակալիորեն իրականացավ աուերյան դպրոցի և սովետական ջութակի դպրոցի միջև կապը: Նալբանդյանի՝ սովետական շրջանի ուսանողներից հիշատակության են արժանի ջութակահար, մանկավարժ, ՌՍՖՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Իլյա Լուկաշևսկին (հետագայում իր իսկ ստեղծած՝ Ա. Կ. Գլազունովի անվան հանրահայտ կվարտետի ղեկավար), ջութակահար, մանկավարժ, Կիևի կոնսերվատորիայի պրոֆեսոր Յակով Մագազինները, Լենինգրադի Ս. Մ. Կիրովի անվան թատրոնի նվագախմբի կոնցերտմայստեր Ե. Մ. Խանտան, Լենինգրադի ֆիլհարմոնիայի կոնցերտմայստեր Ի. Ա. Շպիլբերգը:

Ջութակահարի բնորոշմամբ՝ 1889 թ. անցնում է անհետաքրքիր: Նալբանդյանը եռանդուն պարապում է, միաժամանակ զբաղվում ընթերցանությամբ, հատկապես հրապուրվում Տոլստոյի, Տուրգենևի, Գոգոլի և Դոստոևսկու ստեղծագործություններով: Գարնանը Նալբանդյանը տուն է մեկնում սովորականից շուտ. հիվանդության պատճառով չէր հանձնել ջութակից քննությունը. «Ինչպիսի ուրախությամբ ես մեկնեցի տուն և ինչքան երջանիկ էի առաջին օրերին՝ ջերմորեն սիրող ընտանիքում: Յավոք, այդ երջանիկ տրամադրությունը շուտով իր տեղը զիջեց ճնշող զգացումին, ինչը հորս առևտրական գործերի մասին տխուր պատմությունների հետևանք էր»[22]*:*

1889-ին Սիմֆերոպոլում հյուրախաղերով հանդես է գալիս Պետրոս Ադամյանը, ում խաղով Հովհ. Նալբանդյանը հիանում է. «Նա թողեց հսկայական տպավորություն՝ իր տեմպերամենտով, կրքով, արտիստիկ նյարդայնությամբ և այն ազնվությամբ ու չափի զգացումով լի խաղով, որը հատուկ է միայն

[20] *ԳԱԹ, Հովհ. Նալբանդյանի ֆ., № 13–79:*

[21] *Ի դեպ, Լ. Աուերը Նալբանդյանին առաջարկում է դառնալ իր օգնականը: Այդ պահից սկիզբ է առնում նաև Նալբանդյանի մանկավարժական կարիերան, որին նա տրվեց իր երիտասարդ ոգու ողջ ուժով:*

[22] *ԳԱԹ, Հովհ. Նալբանդյանի ֆ., № 1 (ա), 1913 թ., էջ 4:*

գեղարվեստական մեծ անհատականություններին: Դա վիթխարի տաղանդ էր: Շատ տարիներ են անցել, բայց նրա խաղի ազդեցությունը դեռևս կենդանի է իմ հիշողության մեջ և ինքնաբերաբար ծագում էր համեմատությունը Ադամյանի հետ, երբ տեսնում էի մեծ ողբերգակների, ինչպիսիք էին Ռոսին, Սալվինին, Պոսարտը և այլք: Այդ համեմատությունից Ադամյանը չէր տուժում: Նա մեր ժողովրդի ծնած խոշորագույն տաղանդներից է»[23]:

1890 թ. աշնանը Հովհ. Նալբանդյանը Պետերբուրգում ծանոթանում է մի քանի հայ ուսանողների հետ, որոնցից առանձնանում էր Գրիգորի Եվանգուլովը՝ հայկական ուսանողական երեկոյի կազմակերպիչներից մեկը: Նա պնդում է, որպեսզի Նալբանդյանը մասնակցի այդ երեկոյին. դա Նալբանդյանի անդրանիկ հանրային ելույթն էր կոնսերվատորիայի պատերից դուրս:

Հարկ է նշել, որ մինչ այդ հայկական երեկոն ջութակահարը կրում էր Նալբանդով ազգանունը: Ուսանող ընկերները նրան համոզում են ազգանվան «ով»-ը փոխարինել «յան»-ով, որպեսզի բոլորն իմանան, որ նա հայ է: Դիրեկտոր Ռուբինշտեյնը հավանություն է տալիս այդ մտադրությանը և կարգադրում, որպեսզի փոխեն Նալբանդյանի բոլոր փաստաթղթերը:

«Ես փրակ չունեի, համերգից առաջ ուսանողներն ինձ համար փրակ գտան, ես հագա և ի սարսափ ինձ՝ նկատեցի, որ աջ թևիս ծակ կա, և ընդհանուր խորհրդակցությունից հետո որոշեցինք թանաքով ներկել իմ վերնաշապկի՝ երևացող ճերմակ մասը: Ես մեծ հաջողություն ունեցա: Այդ երեկոյի ընթացքում ծանոթացա Գ. Ա. Էզովի հետ (խոսքը նշանավոր հայագետ Կարապետ Եզյանի մասին է– Ա. Ա.), ով ինձ վերաբերվեց շատ ջերմ և սրտագին: Նա խորապես սիրում էր իր ժողովրդին. նրան հիացնում էր որևէ հայի մոտ տաղանդի ցանկացած դրսևորում և նա ունակ էր այնպիսի քնքշության ու հոգատարության, ինչն ամենևին ներդաշնակ չէր նրա դեմքի խիստ արտահայտության: Ինչքան շատ էի ճանաչում Գ. Ա. Էզովին, այնքան ավելի էի համոզվում նրա ազնիվ հայրենասիրության և բարձր արժանիքների մեջ: Օրերից մի օր Գ. Ա. Էզովն ինձ ուրախությամբ տեղեկացրեց, որ Ռուբինշտեյնը եղել է Այվազովսկու մոտ և շատ լավ բաներ ասել իմ մասին, ու Էզովի ներկայությամբ Այվազովսկին Ռուբինշտեյնին խոստացել է ինձ նկար նվիրել, որպեսզի այն վաճառեմ և ինձ համար ջութակ գնեմ: Գ. Ա. Էզովի և իմ վաղաժամ ուրախությունն անտեղի էր՝ նկարը ես չստացա ...»[24]:

Հայկական երեկոյից հետո Նալբանդյանը հրապարակային ելույթներ շատ է ունենում, ընդ որում՝ մեծ հաջողությամբ. «Երկար տարիների փորձառությունից հետո ես եկա այն եզրակացության, որ էստրադան մեծ ուսուցիչ է, երբեք մարդը տանը չի կարող նկատել այն թերությունները, որոնք հուզմունքի արդյունքում ի հայտ են գալիս բեմում»[25]:

Մոտենում է ջութակի գարնանային քննության ժամանակը: Աուերը հանձնարարում է Հ. Էռնստի դժվարագույն ֆանտազիան, որը Նալբանդյանը պետք է պատրաստեր 12 օրվա ընթացքում: «Մենք՝ աշակերտներս, լսել էինք, որ մեր դիրեկտորը հեռանում է կոնսերվատորիայից, բոլորս սաստիկ տխրել էինք: Այդ քննությունը Ռուբինշտեյնի օրոք վերջինն էր, և քննության

---

[23] ԳԱԹ, Հովհ. Նալբանդյանի ֆ., № 1 (ա), 1913 թ., էջ 5:
[24] ԳԱԹ, Հովհ. Նալբանդյանի ֆ., № 1 (ա), 1913 թ., էջ 6:
[25] ԳԱԹ, Հովհ. Նալբանդյանի ֆ., № 1 (ա), 1913 թ., էջ 7:

ժամանակ մենք հատկապես ոգևորված էինք՝ ուզում էինք մեզնից հեռացող դիրեկտորի մոտ մեր մասին լավ հիշողություն թողնել: Քննությունն անցավ փայլուն: Ես նվագեցի վերջինը: Քննությունից հետո Ռուբինշտեյնն ինձ կանչեց իր մոտ կաբինետ, շատ լավ բաներ ասաց և խնդրեց Այվազովսկուն հիշեցնել նկարի վերաբերյալ խոստման մասին, ինչպես նաև իր անունից հորս փոխանցել, որ նա կարող է ուրախանալ իր որդու հաջողություններով: Տեղեկանալով իմ ֆինանսական դժվարությունների մասին՝ Ռուբինշտեյնն ու Առւերը ինձ փող տվեցին ճանապարհի համար: Երջանիկ՝ ես մեկնեցի տուն»[26]:

Ամռանը Սիմֆերոպոլում Նալբանդյանին է այցելում ուսանող, հետագայում՝ խոշորագույն կոմպոզիտոր, հայ սիմֆոնիկ երաժշտության հիմնադիր Ալեքսանդր Սպենդիարյանը: Միևնույն քաղաքի բնակիչներ լինելով՝ նրանք իրար ճանաչում էին հեռվից, մոտիկից ծանոթ չէին: «Սաշան ինձ մոտ եկավ ուսանողական համազգեստով, – տարիներ հետո պատմում էր Նալբանդյանը: –Նա ինձ անմիջապես դուր եկավ. ոսկեգույն հրաշալի մազեր, երկնագույն լավ աչքեր, նուրբ, ձվաձև դեմք: Այն ժամանակ նա արդեն պենսնե էր կրում:

Ես Սիմֆերոպոլում հայտնի էի որպես ջութակահար: Այդ տարիներին Պետերբուրգից գալիս էի և ելույթներ ունենում: Հավանական է, այդ պատճառով էլ նա եկավ ինձ հետ ծանոթանալու:

Ներկայանալով՝ նա նստեց դաշնամուրի մոտ և սկսեց հանդարտ, հանպատրաստից նվագել ու ինձ պատմել մոսկովյան երաժշտական կյանքից, այն մասին, որ ինքը ջութակի դասեր է առնում Պեկարսկուց: Հետո նա նստեց ավելի հարմար և նվագեց իր ռոմանսները, երգելով ցածր, «կոմպոզիտորական» ձայնով: Երբ վերջացրեց, ես նետվեցի դեպի նա, ամուր գրկեցի և ասացի, որ նա անպայման կոմպոզիտոր դառնա: Իսկ նա համեստորեն հարցրեց. «Արժե՞, արդյոք»»[27]:

Անդրադառնալով իրենց հանդիպմանը՝ Նալբանդյանն իր «Ինքնակենսագրության» մեջ կխոստովանի, որ Սպենդիարյանի «ռոմանսներն ինձ շատ դուր եկան և ես նրանցում զգացի տաղանդ ու համոզեցի նրան լրջորեն զբաղվել երաժշտությամբ: Սպենդիարովի ստեղծագործություններն այն ժամանակ արդեն առանձնանում էին երաժշտականությամբ, նրբագեղությամբ և ազնվությամբ: Հետագայում մենք նրա հետ շատ ընկերացանք, լինում էինք իրար մոտ, և մեր ողջ ժամանակը նվիրում երաժշտությանը, շատ էինք նվագում, նա ինձ բազմիցս նվագակցում էր դոյալի վրա՝ Սիմֆերոպոլում, Եվպատորիայում մեր համերգային ելույթների ժամանակ: Այդ ժամանակ էլ նա ինձ համար գրեց ջութակի համար շատ գեղեցիկ ռոմանս («Կանցոնետտա»– Ա. Ա.), որը ես նվագում էի հափշտակվածությամբ: Շատ ափսոս, որ այդ գեղեցիկ ստեղծագործությունը հետագայում կորավ»[28]:

Ճակատագրական էր Նալբանդյանի դերը Սպենդիարյանի ստեղծագործական կյանքում: Հենց նա էլ Պետերբուրգում 1896 թ. Սպենդիարյանին ծանոթացնում է ռուս ականավոր կոմպոզիտոր, կոնսերվատորիայի պրոֆեսոր Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովի հետ, որի ղեկավարությամբ նա չարունակում է կա-

[26] *ԳԱԹ, Հովհ. Նալբանդյանի ֆ., № 1 (ա), 1913 թ., էջ 7:*
[27] *Սպենդիարովա. 1966, 32:*
[28] *ԳԱԹ, Հովհ. Նալբանդյանի ֆ., №1 (ա), 1913 թ., էջ 8:*

տարելագործվել կոմպոզիցիայի գծով[29]: Հետագայում Նալբանդյանը կհիշի. «Նա (Սպենդիարյանը – Ա. Ա.) ինձ մոտ եկավ առանց նախազգուշացման: Հիշում եմ, սաստիկ հուզված էր: Նա հարցրեց ինձ. «Ծանո՞թ ես, արդյոք, Ռիմսկի-Կորսակովին»: – Ինչպես կարող էի ծանոթ չլինել, երբ այն ժամանակ արդեն դասավանդում էի կոնսերվատորիայում: – «Չե՞ս կարող, արդյոք, իմանալ ... Աղաչում եմ քեզ, խոսիր նրա հետ ... Ուզում եմ մոտը սովորել»:

Ես Ռիմսկի-Կորսակովին հանդիպեցի հենց հաջորդ օրը, կոնսերվատորիայում՝ երրորդ հարկում: Սովորաբար Ռիմսկի-Կորսակովը, Լյադովը, Լավրովսկին և Գլազունովը ընդմիջումներին թեյում էին կոնսերվատորիայի տեսուչ Աբրամիչևի առանձնասենյակում:

Ես Նիկոլայ Անդրեևիչին հաղորդեցի Սաշայի խնդրանքը: «Մի շատ չնորհալի պատանի է եկել, – ասացի ես: – Նա շատ է ուզում, որ Դուք իրեն լսեք, շատ է ցանկանում ձեզնից դասեր վերցնել»: Ռիմսկի-Կորսակովն իմ խոսքերը լսեց բարյացակամորեն:

Նա նշանակեց ժամադրության օրն ու ժամը, և մենք գնացինք: Հիշում եմ, ցերեկ էր: Նիկոլայ Անդրեևիչը մեզ ընդունեց նախասենյակում: Պետք էր տեսնել Սաշայի դեմքը, երբ նա մոտեցավ նրան: Որպիսի հիացմունք: Ես հիանում էի, որ նա այդպես զգայուն է»[30]:

Շնորհիվ Նալբանդյանի՝ իրականանում է Սպենդիարյանի երազանքը. 1896 թ. ապրիլին նա իր աշխատանքները ներկայացնում է Ռիմսկի-Կորսակովին: Պայմանավորվածության համաձայն՝ մայիսի 10-ին Սպենդիարյանը ստանում է կոմպոզիտորի պատասխանն առ այն, որ նա պետք է պարապի կոմպոզիցիայով և համաձայն է լինել նրա ուսուցիչը:

Հովհ. Նալբանդյանը «հիացած էր Սպենդիարյանի ստեղծագործական տաղանդով և գտնում էր, որ ժամանակակից կոմպոզիտորներից դեռևս ոչ մեկին չի հաջողվել Արևելքը պատկերել այնպիսի հարազատությամբ, վառ գույներով ու կոլորիտով, ինչպես նրան: Նալբանդյանը նկատի ուներ «Երեք արմավենի» սիմֆոնիկ պատկերը և «Ղրիմի էսքիզների» երկու սերիաները: Երկու հայրենակիցների բարեկամական ջերմ փոխհարաբերությունները կտևեին դեռևս երկար տարիներ, եթե վրա չհասներ Սպենդիարյանի անժամանակ մահը»[31]:

Կոնսերվատորիայում ուսումնառության վաղ շրջանում Հովհ. Նալբանդյանը ծանոթանում է կոմպոզիտոր, խմբավար, մանկավարժ, հայ երաժշտության մեջ օրատորիա-կանտատի («Պատարագ») ժանրի հիմնադիր Մակար Եկմալյանի հետ, ով արդեն ավարտում էր կոնսերվատորիան: Եկմալյանը շատ ջերմ վերաբերմունք է ունեցել իր կրտսեր ընկերոջ՝ Նալբանդյանի նկատմամբ և ռոյալի վրա որոշ հատվածներ է նվագել իր «Պատարագից», որի վրա աշխատում էր այդ տարիներին:

Խմբավար, կոմպոզիտոր, երաժշտական-հասարակական գործիչ Քրիստափոր Կարա-Մուրզան Նալբանդյանի հորական տատի քրոջ կամ եղբոր որդին էր, և մանկական հիշողությունները կապված են նրա հետ: Նա հաճախ էր

[29] Գևորգյան. 1962, 27:
[30] Սպենդիարովա. 1966, 59–60:
[31] Գևորգյան. 1962, 28:

այցելում Նալբանդյաններին, սիրում էր զբաղվել Հովհաննեսի հետ. «Ես շատ էի սիրում նրան և միշտ սպասում էին նրա գալուն»[32]:

1892 թ. աշնանը տեղի է ունենում երիտասարդ ջութակահարի ծանոթությունը Պյոտր Չայկովսկու հետ: Պրոֆեսոր Աուերի մոտ տեղի ունեցած երեկոյի ժամանակ Աուերն առաջին անգամ կատարում է Չայկովսկու կոնցերտը, որը կոմպոզիտորը նվիրել էր նրան, ինչպես նաև Չայկովսկու կվարտետն ու լարային սեքստետը: Երեկոյին ներկա էին Չայկովսկին և Աուերի աշակերտներից մի քանիսը: «Արժե արդյոք խոսել այն մասին, թե մենք ինչպիսի հիացմունքով էինք նայում Չայկովսկուն, որն այդ ժամանակ գտնվում էր փառքի գագաթին: Չայկովսկու ստեղծագործությունները, նրանց հետ առաջին իսկ ծանոթությունից, գրավեցին ինձ և մեծապես ազդեցին իմ պատանեկան էության վրա ... : Հատկապես ես սիրում էի նրա «Ֆրանչեսկա դա Ռիմինին», «Ռոմեո և Ջուլիետը», մի քիչ ավելի պակաս՝ «Եվգենի Օնեգինը»: Այդ երեկո ես քիչ էի լսում և հասկանում՝ իմ ողջ ուշադրությունը կլանել էր Չայկովսկին, իմ աչքերում նա հրաշագործ էր, ով կարողանում էր ստեղծել այդպիսի երաժշտություն: Ընթրիքից հետո արդեն շատ ուշ էր, ներկաներից ինչ-որ մեկը նրա ուշադրությունը հրավիրեց ինձ վրա, որին հետևեց նրա խնդրանքը՝ ջութակի վրա նվագել ինչ-որ բան: Ես շատ չփոթվեցի նրա անսպասելի ուշադրությունից և մերժեցի, բայց մեզ մոտեցած իմ պրոֆեսորը կարգադրեց նվագել: Ես նվագեցի իմ մշակած ղրիմյան մոտիվը, որը նրան շատ դուր եկավ, ապա նա խնդրեց նվագել եվրոպական ինչ-որ բան, ինչպես ինքն արտահայտվեց: Վերջում նա ինձ ասաց շատ լավ բաներ և հատկապես ուշադրություն դարձրեց իմ հնչյունի և կատարման ջերմության վրա: Պե՞տք է արդյոք ասել, թե ինչքան երջանիկ էի Չայկովսկու ուշադրությունից»[33]:

Նկատենք, որ Պետերբուրգում Հովհ. Նալբանդյանը ծանոթանում է ռուս բանաստեղծներ Վ. Ի. Մայկովի և Յա. Պ. Պոլոնսկու, ինչպես նաև՝ հայ երգիչ Ներսես Շահլամյանի հետ, ով իր ձայնի գարմանալի գեղեցկությամբ և ուժով, հայկական երգերի իր կատարմամբ հիացնում էր Նալբանդյանին: Ծանոթանում է նաև նկարիչ Գևորգ Բաշինջաղյանի հետ:

Առաջին հյուրախաղերը Թիֆլիսում

1893 թ. ամռանը, հոր պնդմամբ, Հովհ. Նալբանդյանը կատարում է անդրանիկ համերգային շրջագայությունը Թիֆլիս: «Տարազ» թերթը դեռևս ապրիլի 25-ի կիրակնօրյա համարում տպագրում է «Երիտասարդ ջութակահար Յովհաննէս Նալբանդեան» վերնագրով հոդվածը, որտեղ, ներկայացնելով 21-ամյա երաժշտի համառոտ կենսագրականը, նշում է՝ Նալբանդյանը «մտադիր է մայիս ամսին գալ Թիֆլիս. յուսով ենք, որ Թիֆլիսի հասարակութիւնը կը քաջալերէ երիտասարդ արտիստին ըստ արժանւոյն»:

Նալբանդյանի Թիֆլիսյան դեբյուտը տեղի ունեցավ մայիսի 31-ին Արքունական թատրոնում և «ընդհանրապէս չատ ախորժելի տպաւորութիւն թողեց հանդիսականների վրա»[34]: Ունկնդիրների պահանջով՝ ջութակահարը մի քանի

[32] *ԳԱԹ, Հովհ. Նալբանդյանի ֆ., № 1 (ա), 1913 թ., էջ 9:*
[33] *ԳԱԹ, Հովհ. Նալբանդյանի ֆ., № 1 (ա), 1913 թ., էջ 9:*
[34] *«Արձագանք» (Թիֆլիս), 02. VI. 1893:*

անգամ նվագում է բիս[35]: Ծրագրում տեղ էին գտել Մենդելսոնի ջութակի կոնցերտի ֆինալը, Վենյավսկու Մազուրկան, Բրամսի պարերը և այլն: Համերգից հասարակությունը «ցրտեց այն համոզմունքով, որ պ. Նալբանդեան (որ այժմ 21 տարեկան է) տարէց տարի կ'առաջադիմի, և այն քաղցր զգացմունքով, որ պատահում է մարդուս, երբ նա տեսնում է իր առաջ որևէ դեռ մշակուղ, սակայն անկասկած տաղանդ»[36]:

Մամուլը գովեստի խոսքեր է չռայլում երիտասարդ ջութակահարի հաջողին, միաժամանակ նկատում. «Ցավոք, ջութակահարի գործիքն այնքան էլ առաջնակարգ չէ, ինչը զգալիորեն նվազեցնում է նրա նվագի տպավորությունը»[37]:

Նալբանդյանի երկրորդ համերգը Թիֆլիսում տեղի է ունենում հունիսի 5-ին՝ չաբաթ օրը, կրկին Արքունական թատրոնում. «Երիտասարդ Նալբանդեանի կոնցերտից չատ գոհ էին թատրոնի փոքրաթիւ հանդիսականները, որոնք և յաճախ կրկնուող ծափահարութիւններով իրենց գոհութիւնն էին արտայայտում»[38]:

Հունիսի 17-ին Թիֆլիսի ժողովարանի այգում տեղի է ունենում «մեր երիտասարդ ջութակահար Յ. Նալբանդեանի երրորդ նուագահանդէսը: Այս անգամ մեծ բազմութիւն էր հաւաքւել: Մարդ քանի լսում է պ. Նալբանդեանին՝ այնքան համոզւում է, որ մեծ տաղանդ պիտի լինի նա ապագայում: Նրա ամեն մի նւագած կտորը, ինչքան էլ որ հասարակ լինի դա, բանաստեղծական քաղցրահնչիւն թելերով է ոլորած – յատկութիւն, որ չատ սակաւ երաժիշտներին է պարգևած: Նրա ջութակը չէ նւագում, նա իր առջ նստած՝ յուզւած բազմութեան հետ խոսում է, հին հելլենական բանաստեղծ-երգչի նման նա մերթ հերոսների քաջագործութիւններն կարծես պատմելիս լինի և այստեղ ջութակը այնպիսի հնչիւններ է հանում, որ մարդ ակամայ ներկայացնում է այդ հերոսներին ճակատամարտի դաշտում – բայց ահա՝ ընկաւ հսկան – իսկ հեռու՝ նրա այրին օրօրք է ասում իր տղային և արտասւալի աչքերով մեղմահնչիւն երգում. «Քուն եղիր, պալաս, որ մեծանաս, վերցնես հօրդ զրահները, և նրա նման հերոս դառնաս». լռում են հնչիւնները – և այստեղ միայն սթափւում է մարդը և տեսնում որ ջութակն էր այդպիսի երգեր երգում: Պետերբուրգում զուր չեն ասում, որ Նալբանդեանը իր ջութակով երգում է»[39]: Երկու բաժնից բաղկացած համերգի ծրագրում տեղ էին գտել Վիյոտանի, Բրամսի, Յոախիմի, Վենյավսկու և այլոց պիեսները:

Հովհ. Նալբանդյանի արտիստական գործունեության մեկնարկը

Հովհ. Նալբանդյանի կյանքում նշանակալից էր 1894 թ.: Գարնանը նա ավարտում է կոնսերվատորիան և աշակերտներից առաջինն է արժանանում կոնսերվատորիայի պատերի ներսում Զայկովսկու կոնցերտը կատարելու պատվին: Կոնցերտի առաջին մասը նվագում է հրապարակային քննության

[35] «Новое обозрение» (Тифлис), 29. V. 1893.
[36] *«Տարազ» (Թիֆլիս), 06. VI. 1893:*
[37] «Каспий» (Баку), 04.VI. 1893.
[38] *«Նոր-դար» (Թիֆլիս), 10. VI. 1893:*
[39] *«Տարազ», 20. VI. 1893:*

ժամանակ նվագախմբի նվագակցությամբ և ստանում ամենաբարձր գնահատականը:

Ապրիլի 27-ին Պետերբուրգի կոնսերվատորիայում տեղի ունեցած Եվգենյա Շումանի համերգին[40] ելույթ է ունենում «պ. Աուերի տաղանդավորագույն աշակերտներից մեկը՝ ջութակահար Նալբանդյանը»[41], ով փայլուն կատարելով «Andante»-ն Վենյավսկու կոնցերտից, Գոդարի «Berceuse»-ը և որպես բիս՝ Վենյավսկու Մազուրկան՝ «հիացնում է ունկնդիրներին զերազանց տեխնիկայով և հյութեղ, հնչեղ տոնով»[42]: Ակնհայտ է, որ Նալբանդյանին «սպասում է մենակատար-ջութակահարի փայլուն կարիերա»[43]:

Նալբանդյանի նախկին պրոֆեսոր Ն. Գալկինը, ով 1892–1903 թթ. Պավլովսկի կայարանի[44] Ամառային սիմֆոնիկ համերգների դիրիժորն էր, որոնցում պրոպագանդում էր «Նոր ռուսական երաժշտական դպրոցի» կոմպոզիտորների ստեղծագործությունները, հրավիրում է Նալբանդյանին որպես Պավլովսկի կայարանի սիմֆոնիկ համերգների մենակատար: 1894 թ. հունիսի 3-ին Պավլովսկի երրորդ սիմֆոնիկ երեկոյին Նալբանդյանը կատարում է Մենդելսոնի ջութակի կոնցերտը՝ փայլուն տեխնիկայով: Սիմֆոնիկ նվագախմբի հետ հենց առաջին ելույթից երջանկությունը ժպտում է նրան, և նա մեծ հաջողություն է ունենում, որը նրան ուղեկցում է հետագա երկու ամսվա ընթացքում՝ յուրաքանչյուր բեմելին:

Հունիսի 22-ին Իվանովսկում տեղի է ունենում Գալկինի նվագախմբի բենեֆիսը, որին մասնակցում են նաև մենակատարներ, այդ թվում՝ Բրյուսելի կոնսերվատորիայի պրոֆեսոր Էդուարդ Ժակոբսը: Մեծ հաջողություն է ունենում «Երիտասարդ ջութակահար-մենակատար պ. Նալբանդյանը, որի նվագը առանձնանում է նրբագեղությամբ և աղեղի երգեցիկությամբ»[45]: Համերգին մասնակցում է նաև հայ տենոր Ներսես Շահլամյանը. ի դեպ՝ հետագայում բազմաթիվ համերգների հայտագրերում կտեսնենք երկու հայորդիների՝ Հ. Նալբանդյանի և Ն. Շահլամյանի անուններն ու համատեղ ելույթները:

Հոկտեմբերի 1-ին Պավլովսկում տեղի ունեցած 7-րդ սիմֆոնիկ երեկոն, որը կայարան է բերում բազմաքանակ ունկնդիրների, անցնում է մեծ աշխուժու-

[40] «Петербургская газета» (СПб.), 29. IV. 1894.

[41] «Новости» (СПб.), 29. IV. 1894.

[42] «Новости», 29. IV. 1894.

[43] «Новое время» (СПб.), 01. V. 1894.

[44] *Պավլովսկի կայարանը համերգային դահլիճ էր Պավլովսկում՝ Պետերբուրգի արվարձանում, որտեղ XIX դարում և XX դարասկզբին ամռան ամիսներին կենտրոնանում էր Պետերբուրգի երաժշտական կյանքը: Բացվել է 1838-ին: Առաջին 40 տարիներին երաժշտական երեկոները հիմնականում կրում էին զվարճանքի բնույթ, հետագայում ստացան ավելի լուրջ բնույթ: 1880-ականների սկզբից գործում էր Պավլովսկի կայարանի մշտական նվագախումբը, որը 1890-ականներից կազմված էր գլխավորապես ռուս երաժիշտներից: 1900-ականների սկզբներին Պավլովսկի կայարանի համերգները ղեկավարել են Ա. Կ. Գլազունովը, Մ. Մ. Իպոլիտով-Իվանովը և ուրիշներ: 1917-ին միավորվեցին Պավլովսկի նվագախումբը և պետական սիմֆոնիկ նվագախումբը (1921-ից՝ Լենինգրադի ֆիլհարմոնիայի սիմֆոնիկ նվագախումբ):*

[45] «Сын отечества» (СПб.), 24. VI. 1894.

յամբ: Համերգի առաջին բաժնում Հովհ. Նալբանդյանը նվագում է Շպորի 8-րդ կոնցերտը և Ռիսի ոչ մեծ պիեսներից մեկը: «Կարճ ժամանակահատվածում այս երիտասարդ և չնորհալի ջութակահարը դարձավ իսկական սիրելին Պավլովսկի հասարակության, որը նրան առատաձեռնորեն չռայլում էր իր ծափահարությունները: Պ. Նալբանդյանի հաջողությունն ինքը լիարժեքորեն վաստակել է»[46]:

Հուլիսի 13-ին Պավլովսկում կազմակերպված վոկալ-գործիքային երաժշտության համերգին՝ ի շարս մեծ թվով մենակատարների, ելույթ է ունենում Նալբանդյանը և կատարում Բրուխի 2-րդ կոնցերտի առաջին մասը: Հուլիսի 20-ին տեղի ունեցած երեկոյին էլ, որին մասնակցում էին Ֆիգներ ամուսիններ, պրոֆեսոր Ժակոբսը, նվագախումբը՝ Գալկինի ղեկավարությամբ, Նալբանդյանը նվագում է Վիյոտանի "Reverie"*-ը և բիս՝ փոքրիկ պիես:*

Օգոստոսի 19-ին Պավլովսկի 13-րդ սիմֆոնիկ երեկոյին Գալկինը դիրիժորական վահանակը զիջում է կոմպոզիտոր Մ. Իվանովին, ով առաջին անգամ հանդես է գալիս որպես դիրիժոր: Համերգի ծրագրում տեղ էին գտել վերջինիս ստեղծագործությունները[47]: Իվանովի կոնցերտի երկու մասերի կատարմամբ հանդես եկած Նալբանդյանը նվագում է հիանալի: «Պ. Նալբանդյանն ունի ապագա. նրա տոնը շատ լավն է, աղեղը՝ բավականաչափ ուժեղ և երգեցիկ: Նա, իհարկե, նվագեց որպես բիս և կատարեց Ռիսի «Gondelied»*-ը: Հասարակությունը սիրում է այս ջութակահարին, և նա արժանի է դրան»[48]:*

Օգոստոսի 26-ին Պավլովսկի վերջին սիմֆոնիկ երեկոն նվիրված էր Զայկովսկու հիշատակին և բաղկացած էր բացառապես նրա ստեղծագործություններից: Մենակատարը՝ Նալբանդյանը, նվագում է Զայկովսկու կոնցերտը:

Հովհ. Նալբանդյանի հանդիպումները Յոզեֆ Յոախիմինի և Պաբլո Սարասատեի հետ

1894 թ. աշնանը կայսերական թատրոնների դիրեկցիան՝ հետագա կատարելագործման նպատակով, Նալբանդյանին գործուղում է արտասահման: Այդ ուղևորության միջոցները՝ 2500 ռուբլի, հատկացնում է Նորին մեծության կայսեր կաբինետը: Պրոֆեսոր Լ. Աուերը տալիս է երաշխավորություն-նամակներ՝ ուղղված ջութակահարների պատրիարք, հունգար ջութակահար, մանկավարժ, կոմպոզիտոր ու դիրիժոր Յոզեֆ Յոախիմին և իսպանացի ջութակահար, խոշորագույն վիրտուոզ Պ. Սարասատեին:

Ժամանելով Բեռլին՝ Նալբանդյանն ուղևորվում է Յոախիմի մոտ, որն այդ ժամանակ Արքայական կոնսերվատորիայի դիրեկտորն էր, և նրան է հանձնում վերջինիս նախկին աշակերտ Աուերի նամակը: Յոախիմը Նալբանդյանին թույլ է տալիս ներկա գտնվել իր դասերին: Շաբաթական չորս օր՝ առավոտյան ժամը 10-ից 14-ը, նա մասնակցում է Յոախիմի պարապմունքներին: Վերջինիս դասարանն առանձնահատուկ էր, քանի որ բաղկացած էր տարբեր վայրերից իր մոտ սովորելու եկած երիտասարդ արտիստներից: Յոախիմը դասեր, ըստ էության, չէր տալիս, այլ ունկնդրում էր վերջին-

[46] «Петербургский листок» (СПб.), 03. VII. 1894.

[47] «Новое время», 22. VIII. 1894.

[48] «Петербургская газета», 21. VIII. 1894.

ներիս արդեն պատրաստի կոնցերտը, անում էր դիտողություններ, այնուհետև Ստրադիվարիուսի վրա նվագում տվյալ կոնցերտը: «Այդ 67-ամյա ծերուկը դասարանում ցույց էր տալիս ամենատարբեր կոնցերտներ, տարբեր ոճերով, և ինչպես էր նվագում: Այն ամենը, ինչ ես լսեցի մեծ Յոախիմի կատարմամբ, մինչ օրս կենդանի է իմ հիշողության մեջ: Մի քանի անգամ ես պատիվ ունեցա նվագել նրա մոտ և արժանացա գովասանական գրավոր կարծիքի, որի պատճենը պիտի ուղարկեի Պետերբուրգ՝ թատրոնների դիրեկցիային, իսկ բնօրինակը[49] պահպանում եմ ինձ մոտ որպես մասունք»[50]: Այդ երկտողում Յոախիմը գրել է. «Ես լսեցի Նալբանդյանին և գտա, որ նա ունի ջութակահարի շատ լավ հատկություններ, որոնք խոստանում են մեծ զարգացում. նա արդեն շատ լավ է նվագում»[51]:

Ի դեպ, Նալբանդյանը հետագայում գրել է իր հուշերը Յո. Յոախիմի մասին, որոնք պահվում են ՀՀ գրականության ու արվեստի թանգարանում գտնվող ջութակահարի արխիվում և մեր ջանքերով հրապարակվեցին վերջերս՝ «Արվեստագիտական հանդես»-ում[52]:

Լ. Աուերը, բավարարված լինելով Հովհ. Նալբանդյանի՝ Բեռլին կատարած այցելության արդյունքներով և իր աշակերտի հանդեպ Իոախիմի ցուցաբերած ուշադրությունից, խորհուրդ է տալիս նրան մայիսին մեկնել Լոնդոն՝ այնտեղ համերգներով հանդես եկող Սարասատեին լսելու և նրան ներկայացնելու նպատակով: Լոնդոնում Նալբանդյանը ներկա է գտնվում Սարասատեի համերգին. վերջինիս նվագը նրա վրա թողնում է անանց տպավորություն. «Հնչյունի ոչ երկրային զարմանալի գեղեցկություն, այնպիսի նրբագեղություն և այնպիսի տեխնիկական կատարելություն, ասես ես լսում էի ոչ թե ջութակ, որը լավ գիտեի, այլ ինձ համար բոլորովին նոր գործիք: Համերգից հետո ես եղա նրա մոտ արտիստական սենյակում, մենք ծանոթացանք և նա նշանակեց օր, որպեսզի ինձ լսի: Նա շատ ուշադիր և սիրալիր էր իմ հանդեպ, ըստ երևույթին, իմ նվագը նրան շատ դուր եկավ, քանի որ իմ մասին տվեց փայլուն կարծիք, որի պատճենը նույնպես ես ուղարկեցի Պետերբուրգ՝ թատրոնների դիրեկցիային, իսկ բնօրինակը պահում եմ ինձ մոտ»[53]:

Բեռլինում ու Լոնդոնում Նալբանդյանը հաճախում է սիմֆոնիկ և մենակատարային բոլոր համերգներին, ինչպես նաև՝ օպերային ներկայացումներին ու կվարտետային հավաքույթներին: Բեռլինում ծանոթանում է Վագների բոլոր օպերաներին՝ բացառությամբ «Պարսիֆալի», Յոախիմի կվարտետներին, Լոնդոնում լսում է ժամանակի խոշոր դաշնակահարներից մեկին՝ ռոմանտիկական ոճի ներկայացուցիչ, նշանավոր լեհ դաշնակահար, կոմպոզիտոր ու հասարակական գործիչ Իգնացի Յան Պադերևսկուն, նաև՝ Նիկիչ Ռիխտերին ու շատ ուրիշ մեծ արտիստների:

1895 թ. աշնանը Նալբանդյանը վերադառնում է Պետերբուրգ, առաջին իսկ օրն այցելում է Աուերին ու մանրամասն զեկուցում իր՝ լոնդոնյան երաժշտական տպավորությունների մասին: «Իմ զեկույցը տևեց շատ երկար, բայց

[49] ԳԱԹ, Հովհ. Նալբանդյանի ֆ., № 348:
[50] ԳԱԹ, Հովհ. Նալբանդյանի ֆ., № 1 (ա), 1913 թ., էջ 13:
[51] ԳԱԹ, Հովհ. Նալբանդյանի ֆ., № 348:
[52] Асатрян. 2021, 201–219:
[53] ԳԱԹ, Հովհ. Նալբանդյանի ֆ., № 1 (ա), 1913 թ., էջ 13–14:

Աուերը լսում էր շատ ուշադիր, երբեմն՝ հարցեր տալիս, իսկ երբ ավարտեցի, ասաց. «Ահա, տեսնու՞մ եք, Նալ, ինչ օգտակար էր Ձեզ համար արտասահմանյան ուղևորությունը. Բեռլինում Դուք ունկնդրեցիք դասական ստեղծագործությունների՝ մեծ երաժիշտ-արվեստագետների կատարումների բարձրագույն նմուշները, իսկ Լոնդոնը Ձեզ հնարավորություն ընձեռեց լսել Սարասատեին՝ վիրտուոզ բարձրագույն կատարելությանը, ջութակի նվագի ֆենոմենալ երևույթին»»[54]:

Հովհ. Նալբանդյանի համերգային գործունեությունը

Արտասահմանից վերադառնալով՝ ամբողջ մի տարի՝ մինչև 1896-ի վերջը, Նալբանդյանը Ջերմեռանդորեն պարապում է, քանի որ 1897 թ. հունվարի 4-ին նախատեսվում էր նրա ելույթը կայսերական ռուսական երաժշտական ընկերության Սանկտ-Պետերբուրգի մասնաճյուղի 6-րդ սիմֆոնիկ համերգին: Դա Նալբանդյանի առաջին ելույթն էր Ռուսական երաժշտական ընկերության սիմֆոնիկ համերգում, որն ունեցավ հսկայական հաջողություն: Նվագախումբը ղեկավարում էր գերմանացի դիրիժոր Մաքս Էրդմանսդյորֆերը, ով այդ տարիներին Պետերբուրգում РМО-*ի* (Русское музыкальное общество) *սիմֆոնիկ համերգների դիրիժորն էր: Համերգին որպես մենակատար հանդես եկած Հովհ. Նալբանդյանը կատարում է ռոմանտիկական ուղղության խոշորագույն ներկայացուցիչներից մեկի՝ բելգիացի ջութակահար, կոմպոզիտոր ու մանկավարժ Անրի Վիյոտանի Ջութակի և նվագախմբի չորրորդ՝* d-moll *բարդագույն կոնցերտը: Կատարման ընթացքում նա ցուցադրում է «հիանալի տեխնիկա, վիրտուոզություն, հյութեղ, գեղեցիկ, երգեցիկ տոն, գերազանց ֆրազավորում, ջերմություն, նրբագեղություն և արտիստիկ ճաշակ»*[55]*: Մամուլում արձանագրվում է՝ Հովհ. Նալբանդյանը «պ. Աուերի հիանալի ղալրոցի նոր ապացույցն է. վերջինս կարող էր հպարտորեն ներկա գտնվել երեկ իր սանի տրիումֆին և իր հաշվին ընդունել ծափահարությունների զգալի մասը»*[56]*:*

Ունկնդիրների աղմկոտ ծափահարություններից հետո, որպես բիս՝ ծրագրից դուրս Նալբանդյանը նվագում է Զայկովսկու «Մեղեդին»: Ի դեպ, «Նալբանդյանի հաջողությունն այնքան մեծ էր, որ նա որպես bis *կարող էր նվագել մի քանի համարներ, և ոչ թե սահմանափակվեր Զայկովսկու ռոմանսի կատարմամբ, որը, ի դեպ, նվագեց աքանչելիորեն»*[57]*:*

Այսպիսով՝ Պետերբուրգի երաժշտասեր հանրության առջև Հովհ. Նալբանդյանի առաջին ելույթն ունեցավ մեծ հաջողություն. «Բոլոր լրագիրները լի էին գովեստներով, դուշակելով պ. Նալբանդեանին փառավոր ապագա»[58]*:*

1897 թ. հունվարի 31-ին Պետերբուրգում տեղի է ունենում Նալբանդյանի առաջին մենահամերգը: Համերգին մասնակցում են բարիտոն Մ. Վ. Լունաչարսկին և դաշնակահար Ա. Մ. Միկլաշևսկին: Հովհ. Նալբանդյանը կատարում է իտալացի ջութակահար, կոմպոզիտոր, երաժիշտ-տեսաբան և ման-

---

[54] *ԳԱԹ, Հովհ. Նալբանդյանի ֆ., № 2:*

[55] «Петербургский листок», 06. I. 1897.

[56] «Петербургская газета», 05. I.1897.

[57] «Биржевые ведомости» (СПб.), 06. I. 1897.

[58] *«Արձագանք», 09. II. 1897:*

կավարժ Ջուզեպե Տարտինիի ջութակի g-moll *Սոնատը, Մենդելսոնի Ջութակի կոնցերտը, Աուերի* «Reverie»-*ն («Անուրջներ»), Սարասատեի* «Zigeunerweisen»-*ը, ինչպես նաև ջութակի համար գրված սեփական ստեղծագործությունները՝* G-dur *Ռոմանսը և* A-dur *էտյուդը*[59]*: Ուշագրավ է, որ իր առաջին համերգին Նալբանդյանը հանդես է գալիս ոչ միայն որպես վիրտուոզ, այլև որպես կոմպոզիտոր՝ կատարելով սեփական երկու պիեսներ, որոնցով սկսեց համերգի երկրորդ բաժինը:*

Համերգին ներկա էին մեծ թվով հայեր. նրանք չեն հանդարտվում, մինչև որ Նալբանդյանն առանց նվագակցության կատարում է «Հայերի արցունքները» վերնագրով մեղեդին: «Այս լայնաշունչ մեղեդին խորապես թախծոտ է, խիստ բնորոշ և չափազանց հմայիչ անհուն տխրության իր արտահայտությամբ: Ամեն ոք, ով հետևում է իրադարձությունների ընթացքին, գիտե, թե ինչ սարսափելի պահեր են ապրում այժմ Թուրքիայի հայերը և ինչ ահավոր չքավորության մեջ են այնտեղից մազապուրծ փախածները: Այս մեղեդին, որը նվագեց պ. Նալբանդյանը, խորապես սրտագին՝ իր մաքուր ժողովրդական ոճով, առաջ բերեց հավանության միահամուռ պայթյուն, որում զգացվում էր ինչ-որ ցավագին խանդավառություն: Յուրաքանչյուր հայ, ըստ երևույթին, հիշում էր իր եղբայրներին, և հրաշալի նվագված մեղեդին էլ ավելի էր բորբոքում նրա հոգու վերքը»[60]*:*

«Անվերջ bis*-երից յետոյ, պ. Նալբանդեանը նուագեց «Կռունկ»-ը, որն ընդունեց մեծ ոգևորությեամբ: Չենք կարող չարձանագրել այն փաստը, որ պ. Նալբանդեանը ձրի բաժանեց մօտ 50 տոմսակ հայ ուսանողներին, հասուցանելով այդպիսով նրանց մեծ բավականութիւն»*[61]*:*

Նկատենք, որ Նալբանդյանը բազմիցս մասնակցել է բարեգործական համերգների: Փետրվարի 28-ին գերմանական եկեղեցում կարիքավոր հայերի օգտին կազմակերպված հոգևոր համերգի ժամանակ Նալբանդյանը, հայ ժողովրդի դժբախտ վիճակի մասին մտքերով տարված, Ալեսանդրո Ստրադելլայի «Արիան» մենակատար ջութակի համար նվագում է այնպես, ասես «… ջութակահարը տառացիորեն ողբաց Ստրադելլայի «Արիան»»[62]*:*

Տարիներ կանցնեն, և արձագանքելով Հայոց մեծ եղեռնի ողբերգական իրադարձություններին, 1916 թ. հունվարի 18-ին Պետերբուրգի կոնսերվատորիայի փոքր դահլիճում տեղի ունեցած իր համերգի ողջ հասույթը ջութակահարը կտրամադրի հայ փախստականներին: «Պատերազմին մասնակցած հայ չքավոր ընտանիքներին օգնության Ընկերությանը և ռազմական գործողություններից տուժած և աղքատության մեջ գտնվող հայ ազգաբնակչությանը» կուղղվի 1916 թ. նոյեմբերի 22-ին կոնսերվատորիայի փոքր դահլիճում Նալբանդյանի համերգի ողջ հասույթը ևս[63]*…*

… Երբ սկսվեց Հայրենական մեծ պատերազմը, ճիշտ երկու ամիս անց՝ 1941 թ. օգոստոսի 22-ի գիշերը, Լենինգրադի կոնսերվատորիայի կոլեկտիվը էվա-

---

[59] *Տե՛ս ԳԱԹ, Հովհ. Նալբանդյանի ֆ., № 143:*

[60] «Биржевые ведомости», 02. II. 1897.

[61] *«Արձագանք», 09. II. 1897:*

[62] «Русь» (СПб.), 02. III. 1897.

[63] *Տե՛ս ԳԱԹ, Հովհ. Նալբանդյանի ֆ., № 305:*

կոչացվեց Տաչքենդ: Այստեղ էլ 1942 թ. փետրվարի 23-ի երեկոյան հարազատների, աշակերտների և ընկերների համար անսպասելի հանկարծամահ եղավ Հովհ. Նալբանդյանը 70 տարեկան հասակում: Ի՞նչն էր պատճառը՝ մնաց անհայտ: Միգուցե իր սիրելի Լենինգրադի համար մշտական տագնապը, անհանգստությունները ու ապրումները պատերազմի արհավիրքների դեմ մաքառող լենինգրադցիների համար: Կամ էլ՝ հիասթափությունը ֆաշիստական Գերմանիայից. չէ՞ որ տաղանդավոր ջութակահարի նվագացանկի անբաժան մասն էին գերմանացի կոմպոզիտորների՝ Բախի, Բեթհովենի, Հենդելի, Շուբերտի, Շումանի, Մենդելսոնի, Բրամսի, Մաքս Ռեգերի, Մաքս Բրուխի, Լյուդվիգ Շպորի, Յոզեֆ Ռաֆֆի ստեղծագործությունները, ինչպես նաև՝ Մոցարտի և Ռամոյի գործերի՝ գերմանացի ջութակահար Վիլլի Բուրմեստերի տրանսկրիպցիաները: Չէ՞ որ նրա կատարողական արվեստի մի շատ կարևոր էջը հենց 1911-ի և 1914-ի համերգային երկու շրջագայություններն էին Գերմանիայում, որի ընթացքում փայլուն ելույթներ ունեցավ Բեռլինում, Լայպցիգում, Դրեզդենում, Քյոլնում, Մայնի Ֆրանկֆուրտում, Դյուսելդորֆում, Բոննում, Կոբլենցում և այլ քաղաքներում: Փայլուն ելույթներ, որոնց ջերմ դրախոսականներով արձագանքեց գերմանական մամուլը, համերգներ, որոնց ականատեսն էր գերմանացի ունկնդիրը: Չէ՞ որ հենց Բեռլինն էր այն քաղաքը, որտեղ տեղի ունեցավ նրա ճակատագրական հանդիպումն աչխարհահռչակ ջութակահար Յոզեֆ Յոախիմի հետ: Չէ՞ որ հիշողություններից չէին կարող ջնջվել XX դարասկզբի իր կիևյան համերգները՝ գերմանացի ղեկավարությամբ …

Ինչ իմանար Հովհ. Նալբանդյանը, որ ֆաշիստներն այրելու են Պավլովսկի կայարանի համերգային դահլիճը, որտեղ 1894-ի հունիսին՝ Պետերբուրգի կոնսերվատորիան ավարտելուց անմիջապես հետո, տեղի էր ունեցել իր ղեբյուտը, և սիմֆոնիկ նվագախմբի հետ առաջին իսկ ելույթից հետո երկու ամիսների ընթացքում հաջողությունը հավատարմորեն ուղեկցել էր իրեն … Ու դժվար, շատ դժվար էր համակերպվել այն մտքի հետ, որ գերմանացիներն այժմ ավերում ու ոչնչացնում են իր շատ սիրելի Լենինգրադը:

Այդպես էլ հեռացավ կյանքից Նալբանդյանը՝ չտեսնելով ազատագրված Լենինգրադը:

Եվ պատահական չէ, որ ջութակահարի մահից 20 տարի անց՝ 1962-ին, Երևանում լույս տեսած Գուրգեն Գևորգյանի «Հովհաննես Նալբանդյան. կենսագրական ակնարկ» գրքույկը նվիրվեց հենց «Լենինգրադի կոնսերվատորիայի հիմնադրման 100-ամյակին»[64]:

Եզրակացություն

Տաղանդավոր ջութակահար և հմուտ մանկավարժ Հովհ. Նալբանդյանի գործունեությունը XIX դարավերջին և XX դարասկզբին ընթացավ երկու ճանապարհով՝ մանկավարժական և կատարողական՝ երկուսում էլ արձանագրելով ակնառու նվաճումներ:

Նալբանդյանի մանկավարժական գործունեության չնորհիվ կապ ստեղծվեց ջութակի կատարողական աուերյան և սովետական դպրոցների միջև: Նալ-

[64] *Գ և ո ր գ յ ա ն. 1962, 1:*

բանդյանը, իր սանների վկայությամբ, բարյացակամ, զգայուն և ուշադիր ուսուցիչ էր: Լինելով Աուերի վաղ շրջանի սաներից մեկը՝ նա ուսանողների մեջ ձևավորում էր անհատականություն՝ իր ուշադրությունը սևեռելով նրանց անհատական որակների և ընդունակությունների վրա[65]: Տաղանդավորների ընթացքում նա կրթեց մենակատար ջութակահարների, անսամբլիստների, նվագախմբային արտիստների և մանկավարժների մի քանի սերունդներ:

Մեծանուն ջութակահարի ստեղծագործական կյանքի կարևոր բաղադրիչն էր կատարողական գործունեությունը: Ժամանակակից ջութակահարներից քչերը կարող էին Նալբանդյանին հավասարվել համերգային ինտենսիվ գործունեության ասպարեզում: Ժամանակակիցների վկայությամբ՝ նա այն վիրտուոզներից էր, ում ազգանվանն ամեն շաբաթ կարելի էր հանդիպել համերգային հայտագրերի վրա: Երաժշտասերները նրան շատ լավ ճանաչում էին ինչպես Պետերբուրգում, այնպես էլ Կիևում, Վիլնոյում, Ռիգայում, Բեռլինում, Քյոլնում, Դյուսելդորֆում, Բոննում, Կոբլանցում, Մայնի Ֆրանկֆուրտում, Թիֆլիսում, Բաքվում, Երևանում և այլուր:

Հովհ. Նալբանդյանն իր մշտական ունկնդիրը, իր ուրույն լսարանն ունեցող եզակի արտիստներից էր: Նրա համերգներին գնում էին հենց իրեն ունկնդրելու և ոչ թե նրա կատարմամբ տվյալ ստեղծագործությունները լսելու նպատակով: Վիրտուոզ ստեղծագործությունների կողքին ջութակահարը միշտ նվագում էր կամերային գործեր, ջութակի դրականության նորույթներ. նա մրցակիցներ չուներ ջութակի դրականության նորությունների ներկայացման ասպարեզում ևս:

Մեծ ջութակահարի նվագն առանձնանում էր տոնի հրաշալի գեղեցկությամբ, վստահ և ճկուն տեխնիկայով, կատարման փայլով ու բազմազան տեխնիկայով, ցայտուն ֆրազավորմամբ: Ընդ որում՝ աջ ու ձախ ձեռքերի տեխնիկան նրա մոտ զարգացած էր հավասարապես: Ու թեև նա միշտ հաղթահարում էր տեխնիկական դժվարությունները, այնուամենայնիվ, նրա նվագն ունկնդրին գրավում էր ոչ այնքան վիրտուոզությամբ, որքան՝ կանտիլենայով. իսկական արտիստ էր և ոչ թե՝ լոկ վիրտուոզ:

Նալբանդյանի՝ դասական ստեղծագործությունների լավագույն մեկնաբաններից մեկի, նվագացանկում էին Բախի d-moll *կոնցերտը երկու ջութակի համար, Բախի № 2 կոնցերտը, Մոցարտի Ջութակի և նվագախմբի* № 6 Es-dur *կոնցերտը, Մենդելսոնի, Պ. Չայկովսկու (ի դեպ՝ Չայկովսկու կոնցերտը կոնսերվատորիայի պատերի ներսում առաջինը ինքն է նվագել), Ա. Գլազունովի ջութակի կոնցերտները, Վիյոտանի ջութակի № 2, № 4 և № 5 կոնցերտները, Շպորի ջութակի 8-րդ կոնցերտը, Բրուխի 2-րդ կոնցերտը, Իվանովի կոնցերտը, Ա. Ռուբինշտեյնի ջութակի սոլ մաժոր կոնցերտը, Պագանինիի* D-dur *կոնցերտը, Յու. Կոնյուսի* e-moll *կոնցերտը … Մի առանձին սիրով է Նալբանդյանը կատարել Սարասատեի, Յոախիմի և Վենյավսկու ստեղծագործությունները: Մյուս կողմից՝ Նալբանդյանը, տուրք չտալով ունկնդրի ճաշակին, հաճախ էր նվագում այս կամ այն սուբյեկտիվ պատճառներով սակավ հնչող ստեղծագործությունները, այդ թվում՝ Բրամսի Սոնատը դաշնամուրի ու ջութակի համար, Շումանի լյա մինոր Սոնատը և այլն:*

[65] *Տե՛ս* Н а л б а н д я н. 2015, 72.

Հովհ. Նալբանդյանը կատարում և անդուլ պրոպագանդում էր ռուս, արևմտաեվրոպական և հայ կոմպոզիտորների ստեղծագործությունները: Նրա նվագացանկում կարևոր տեղ էր գրավում ժամանակակից երաժշտությունը: Մենակատար ջութակահարը հաջողությամբ հանդես է եկել նաև անսամբլային և կվարտետային երաժշտության կատարմամբ:

Հատուկ Նալբանդյանի համար են գրվել ու նրան նվիրվել Վիտոլի «Լատինական ֆանտազիան», Ս. Լյապունովի Ջութակի և նվագախմբի կոնցերտը, Լ. Նիկոլաևի Սոնատը ջութակի և դաշնամուրի համար, Ա. Սպենդիարյանի Ջութակի և դաշնամուրի ռոմանսը, «Կանցոնետը», ժամանակակից կոմպոզիտոր Պոգոժևի «Նոկտյուրնը», որոնց առաջին կատարողը հենց ինքն էր:

Անվանի ջութակահարը հանդես է եկել նաև որպես հմուտ անսամբլիստ և պրոպագանդել կվարտետային երաժշտությունը:

Հարազատ մնալով աշխարհահռչակ ջութակահար-վիրտուոզների ավանդույթներին՝ Նալբանդյանը ևս ստեղծագործում էր ու ջութակի համար գրած պիեսներով հանդես գալիս իր համերգների ընթացքում: Ցավոք, այսօր մեզ համար այդ ստեղծագործությունները մատչելի չեն. նոտաները չկան Հովհաննես Նալբանդյանի ԳԱԹ-ի արխիվում և դրանց մասին կարող ենք պատկերացում կազմել միայն ժամանակի մամուլի արձագանքներով: Նրա գործերից մեծ հաջողություն են ունեցել G-dur *Ռոմանսը,* A-dur *Էտյուդը, «Արևելյան կապրիսը»,* «Le Tourment»*-ը,* G-dur *Պրելյուդը,* G-dur *Էտյուդը, «Հեքիաթը» մենակատար ջութակի համար, «Քայլերգը», «Նոկտյուրնը», «Ֆանտազիան»,* «Mlancolic»*-ը,* «Orinetale»*-ը:*

Իր ողջ կյանքն ապրելով Ռուսաստանում և համարվելով Ռուսաստանի լավագույն ջութակահարներից մեկը՝ Հովհ. Նալբանդյանը հավատարիմ էր իր հայկական արմատներին:

Հավելենք. համաշխարհային բեմահարթակ բարձրացած հայ առաջին խոշոր ջութակահար Հովհաննես Նալբանդյանի հանդեպ մեծ հետաքրքրությունն կա աշխարհում՝ մասնավորապես Ռուսաստանում ու Գերմանիայում: Միևնույն ժամանակ՝ ցավով նշենք, որ՝

1. այսօրվա մեր սերնդին անծանոթ է ղրիմահայ երաժշտության այդ լեգենդար ներկայացուցիչը, նրա արվեստը,

2. Սիմֆերոպոլում ծնված, Պետերբուրգում ապրած և իր մանկավարժական ու կատարողական արգասաբեր գործունեությունը ծավալած, աշխարհի տարբեր երկրներում համերգներով հանդես եկած ու իր արվեստով միշտ հարազատ ժողովրդին ծառայած հայորդու գերեզմանը գտնվում է հեռավոր Տաշքենդում: Եվ այսօր՝ նրա մահից 80 տարի անց, հարց է, կան, արդյո՞ք, նրա շիրմին այցելողներ ու ծաղիկներ դնողներ, նրան ու նրա արվեստը հիշողներ …

Աննա Ասատրյան – արվ. գ. դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար, երաժշտության բաժնի վարիչ, դխավոր գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ նոր և նորագույն շրջանի հայ երաժշտության ուսումնասիրություն: Հեղինակ է 11 մենագրության և շուրջ 210 հոդվածի: annaasatryan2023@mail.ru

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ասատրյան Ա. 2015, Պետերբուրգի կոնսերվատորիայի հայ սանը և պրոֆեսորը. Հովհաննես Նալբանդյան. – Աղասյան Ա., Ասատրյան Ա. Հայ-ռուսական գեղարվեստական առնչությունների պատմությունից. Սանկտ Պետերբուրգ, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., էջ 93–205:

Ասատրյան Ա. 2019, Հովհաննես Նալբանդյանի հուշերը Պաբլո Սարասատեի մասին.– «Արվեստագիտական հանդես», № 1, էջ 188–206:

«Արծագանք» (Թիֆլիս), 02. VI. 1893, 09. II. 1897:

Գևորգյան Գ. 1962, Հովհաննես Նալբանդյան. կենսագրական ակնարկ, Երևան, Հայպետհրատ, 135 էջ:

ՀՀ գրականության և արվեստի թանգարան (ԳԱԹ), Հովհ. Նալբանդյանի ֆ., № 1 (դ), (1913, 1932, 39, 40), ընդ. 14 թ., № 1 (ա), 1913 թ., 21 թ. (ինքն.), մեք. 17 թ., № 2; № 13–79, № 143, № 305, № 348, № 350:

«Նոր-դար» (Թիֆլիս), 10. VI. 1893:

Սպենդիարովա Մ. 1966, Սպենդիարով, Երևան, «Հայաստան», 231 էջ:

«Տարազ» (Թիֆլիս), 25. IV. 1893, 06. VI. 1893, 20. VI. 1893:

Асатрян А. Г. 2021, Воспоминания Иоанесса Романовича Налбандяна о Йозефе Иоахиме. – «Искусствоведческий журнал», № 1, с. 201–219.

«Биржевые ведомости» (СПб.), 06. I. 1897; 02. II. 1897.

«Каспий» (Баку), 04.VI. 1893.

Налбандян С. 2015, Памяти Иоанесса Романовича Налбандяна. К 70-летию победы. –Альманах «Малоизвестные страницы истории консерватории» (СПб.), вып. XV, с. 69–73.

«Новости» (СПб.), 29. IV. 1894.

«Новое обозрение» (Тифлис), 29. V. 1893.

«Новое время» (СПб.), 01. V. 1894; 22. VIII. 1894

«Петербургская газета» (СПб.), 29. IV. 1894; 21. VIII. 1894; 05. I.1897.

«Петербургский листок» (СПб.), 03. VII. 1894; 06. I. 1897.

«Русь» (М.), 02. III. 1897.

«Сын отечества» (СПб.), 24. VI. 1894.

ИОАННЕС НАЛБАНДЯН: ПЕРВЫЙ КРУПНЫЙ АРМЯНСКИЙ СКРИПАЧ

АННА АСАТРЯН

Р е з ю м е

Ключевые слова: Иоаннес Налбандян, артист, скрипач-виртуоз, педагог, Петербургская консерватория, мемуары, П. Сарасате, Л. Ауэр.

Выдающийся скрипач и педагог, Заслуженный артист РСФСР (1926), Заслуженный деятель искусств РСФСР (1937) Иоаннес Романович Налбандян (Ованес Аракелович, 1871–1942) – ярчайший символ армяно-русских музыкальных связей. Родившись в Симферополе (Крым), он долгие годы жил и творил в Петербурге. Северная столица России стала для него второй родиной. Выпускник Петербургской консерватории, профессор И. Р. Налбандян 47 лет преподавал в Петербургской, а затем – в Ленинградской консерватории. Через Налбандяна осуществилась связь ауэровской скрипичной школы с советским скрипичным искусством.

Осенью 1890 г. он впервые выступил на армянском студенческом вечере. Именно тогда товарищи-студенты убедили его переменить окончание фамилии «ов» на «ян», чтобы все знали, что он армянин. Директор Петербургской консерватории А. Рубинштейн одобрил это намерение и велел переделать все бумаги.

С 1897 года Налбандян давал ежегодные концерты в Петербурге, принимая активное участие в музыкальной жизни города. Он был одним из лучших интерпретаторов классической скрипичной музыки (Концерт для двух скрипок d-moll Баха, Концерт № 2 Баха, Концерт для скрипки и оркестра № 6 Es-dur Моцарта, Скрипичный концерт Мендельсона, Концерты № 2, 4, и 5 Вьетана, Восьмой скрипичный концерт Шпора, Второй концерт Бруха, D-dur-ный концерт Паганини, произведения Бетховена, Генделя, Шуберта, Шумана, Регера, Раффа, Моцарта, Рамо и т. д). С особой любовью скрипач исполнял произведения Сарасате, Иоахима и Венявского. С другой стороны, Налбандян охотно обращался к мало звучавшим произведениям (Соната для фортепиано и скрипки Брамса, Соната ля минор Шумана и т. д.).

И. Налбандян пропагандировал русскую классическую и современную музыку [Скрипичный концерт Чайковского, Скрипичный концерт Глазунова, Скрипичный концерт (Соль мажор) А. Рубинштейна, e-moll-ный концерт Ю. Конюса и т. д.] как в Петербурге, так и в Тифлисе, Баку, Ереване, Киеве, Вильно, Риге, Берлине, Лейпциге, Дрездене, Кельне, Франкфурте-на-Майне, Дюссельдорфе, Бонне …

Специально для Налбандяна были написаны и ему были посвящены Концерт для скрипки и оркестра С. Ляпунова, «Латышская фантазия» Я. Витоля, Соната для скрипки и фортепиано Л. Николаева, Романс для скрипки и фортепиано Ал. Спендиаряна и другие произведения, которые впервые исполнял именно он.

Следуя традициям виртуозов-скрипачей, И. Налбандян сам сочинял музыку и исполнял на своих концертах. Среди его пьес особой популярностью пользовались Романс G-dur, Этюд A-dur, «Сказка» для соло-скрипки, Ноктюрн, Фантазия, «Le Tourment», «Melancolic», «Orientale» и т. д.

В течение всей своей жизни И. Налбандян был верен своим армянским корням.

Анна Асатрян – д. иск., проф., РА, временно исполняющая обязанности директора Института искусств НАН РА, заведующая отделом музыки, главный научный сотрудник. Научные интересы: исследование армянской музыки нового и новейшего времени. Автор 11 монографий и около 210 статей. annaasatryan2023@mail.ru

HOVHANNES NALBANDYAN: THE FIRST GREAT ARMENIAN VIOLINIST

ANNA ASATRYAN

S u m m a r y

Key words: Hovhannes Nalbandyan, artist, virtuoso violinist, pedagogue, St. Petersburg Conservatory, memoirs, P. Sarasate, L. Auer.

Outstanding violinist and pedagogue, Honored Artist of the RSFSR (1926), Honored Art Worker of the RSFSR (1937) Hovhannes Romanovich Nalbandyan (Hovhannes Arakelovich, 1871–1942) is the brightest symbol of Armenian-Russian musical ties. Born in Simferopol (Crimea), he lived and acted in St. Petersburg for many years. The northern capital of Russia became his second homeland. A graduate of the St. Petersburg Conservatory, Professor H. R. Nalbandyan taught for 47 years at the St. Petersburg Conservatory, and then at the Leningrad Conservatory. Through Nalbandyan, the connection between the Auer violin school and the Soviet violin art was realized.

In the fall of 1890, he made his first appearance at an Armenian student evening. It was then that fellow students convinced him to change the ending of his surname "ov" to "yan" so that everyone would know that he was an Armenian. Director of the St. Petersburg Conservatory A. Rubinstein approved this intention and ordered all the papers to be redone.

Since 1897, Nalbandyan gave annual concerts in St. Petersburg, taking an active part in the musical life of the city. He was one of the best interpreters of classical violin music ("Bach's Concerto for Two Violins in d-moll", Bach's Concerto No. 2, Mozart's Violin Concerto No. 6 Es-dur, Mendelssohn's Violin Concerto, Concertos Nos. 2, 4, and 5 Vietana, Spohr's Eighth Violin Concerto, Bruch's Second Concerto, Paganini's D-dur concerto, compositions of Beethoven, Handel, Schubert, Schumann, Reger, Raff, Mozart, Rameau, etc.). With special love, the violinist performed compositions of Sarasate, Joachim and Wieniawski. On the other hand, Nalbandyan willingly took to compositions that were less played (Brahms' Sonata for Piano and Violin, Schumann's Sonata in A Minor, etc.).

H. Nalbandyan propagandized Russian classical and modern music [Tchaikovsky's Violin Concerto, Glazunov's Violin Concerto, A. Rubinstein's Violin Concerto (G Major), Y. Konyus' E-moll Concerto, etc.] both in St.

Petersburg and Tiflis, Baku, Yerevan, Kyiv, Vilna, Riga, Berlin, Leipzig, Dresden, Cologne, Frankfurt am Main, Dusseldorf, Bonn...

The Concerto for violin and orchestra by S. Lyapunov, "Latvian Fantasy" by J. Vitol, Sonata for violin and piano by L. Nikolaev, Romance for violin and piano by Al. Spendiaryan and other compositions were especially written for Nalbandyan and dedicated to him which were first performed by the latter.

Following the traditions of violin virtuosos, H. Nalbandyan himself composed music and performed at his concerts. Among his pieces, Romance in G-dur, Etude in A-dur, "The Fairy Tale" for solo violin, Nocturne, Fantasia, "Le Tourment", "Melancolic", "Orientale", etc., were especially popular. Throughout his life H. Nalbandyan was true to his Armenian roots.

Anna Asatryan – Doctor of Arts, Prof., Acting Director of the NAS RA Institute of Arts, Head of the Music Department, Chief Researcher. Scientific interests: the study of Armenian music of the new and modern times. Author of 11 monographs and about 210 articles. annaasatryan2023@mail.ru

Doi:10.54503/0135-0536-2022.1-49

ԼԵՎՈՆ ԼԻՍԻՑՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ
130-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ԼԻՍԻՑՅԱՆՆԵՐԻ ՏԱՂԱՆԴԱՎՈՐ ԶԱՎԱԿԸ. ԼԵՎՈՆ ԼԻՍԻՑՅԱՆ*

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ

Բանալի բառեր՝ Լիսիցյաններ, Լևոն Լիսիցյան, Թիֆլիս, Մոսկվա, Վիեննա, Յո. Ստրժիգովսկի, Թ. Թորամանյան, կամավորական խմբեր, Պետրոգրադ, Ն. Մառ, Լ. Աուեր, Կ. Պոլիս, Երևան, Սարիղամիշ, Էջմիածին, Հովհ. Թումանյան, Ավ. Իսահակյան, Ալ. Կուլեբյակին, Կ. Բախչի:

Նախաբան

XIX դարավերջի – XX դարի հայ իրականության մեջ իր արժանավոր տեղն ունի Լիսիցյան գերդաստանը: Վարչավայի համալսարանի պատմա-բանասիրական ֆակուլտետում բազմակողմանի ուսում առած Ստեփան Լիսիցյանը (1865–1947) հայ մշակույթի մեծ երախտավոր էր՝ բանասեր, աշխարհագրագետ, ազգագրագետ, պատմաբան, մանկավարժ, հրատարակիչ, այդ թվում՝ «Հասկեր» մանկական ամսագրի հիմնադիր ու խմբագիր, Հովհ. Թումանյանի և Լ. Շանթի հետ «Լուսաբեր» մայրենի լեզվի դասագրքի կազմող, թարգմանիչ. հիշարժան է լեհերենից թարգմանած Հ. Սենկևիչի հանրահայտ «Յո՞ երթաս» վեպը: Ստ. Լիսիցյանի կինը՝ Կատարինե (Եկատերինա) Լիսիցյանը (1863–1957), եղել է Թիֆլիսում հայոց երկսեռ գիմնազիայի հիմնադիրն ու տեսուչը, միաժամանակ՝ հասարակական գործիչ և հրատարակիչ:

Լիսիցյաններն ունեցել են երեք զավակ՝ երկու աղջիկ և տղա: Անգնահատելի է նրանց ավագ դստեր՝ ազգագրագետ, արվեստաբան Սրբուհի Լիսիցյանի (1893–1979) վաստակը պարարվեստի ընագավառում: Տակավին 1917 թ. նա Թիֆլիսում հիմադրել է Արտասանության, ռիթմի և պլաստիկայի ստուդիան, կից՝ պարի անսամբլ: 1930–1937 թթ. եղել է Երևանի նոր հիմնադրված Ռիթմի, պլաստիկայի և պարի տեխնիկումի տնօրենը, ապա դասավանդել է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտում: Աշխատանքի անցնելով ՀԽՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտում՝ տարիների ուսումնասիրության արդյունքում ստեղծել է «Հայ ժողովրդի հնօրյա պարերն ու թատերական ներկայացումները» երկհատոր հիմնարար մենագրությունը: Մյուս դուստրը՝ Նազելի Լիսիցյանը (1906–2005), տնտեսագիտության դոկտոր էր, Հայրենական մեծ պատերազմի վետերան, երկար տարիներ աշխատել է ԽՍՀՄ պետբանկի

---

* *Ներկայացվել է 27. XII. 2021 թ., գրախոսվել է 23. II. 2022 թ., ընդունվել է տպագրության 03. III. 2022 թ.:*

համակարգում, ապա՝ Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի տնտեսագիտության ինստիտուտում:

Լևոն Լիսիցյանի ուսանողական տարիները. գիտական գործունեության սկզբնավորումը

Հայրենիքի և հայ մշակույթի նվիրյալ էր Ստ. Լիսիցյանի որդին՝ ազգագրագետ, բանասեր, պատմաբան ու հասարակական գործիչ Լևոն Լիսիցյանը: Ծնվել է Թիֆլիսում 1892 թ. հունվարի 9-ին: Մանուկ հասակից փայլուն ընդունակություններ է դրսևորել ուսման մեջ ու երաժշտության ասպարեզում. ոսկե մեդալով ավարտել է Թիֆլիսի № 1 գիմնազիան և զուգահեռ՝ տեղի երաժշտական ուսումնարանի ջութակի բաժինը: Ի դեպ, աշակերտական մի համերգի ժամանակ, երբ Լևոնը հանդես է եկել Մենդելսոնի կոնցերտի կատարմամբ, նշանավոր ջութակահար Հովհաննես Նալբանդյանը[1] բեմ է բարձրացել, գրկել պատանուն, չոյել գլուխը և ասել. «Դու իսկական ջութակահար կդառնաս, երբեք չթողնես ջութակը»[2]: Ականջալուր լինելով պատգամին՝ Լ. Լիսիցյանն երբեք չմոռացավ այդ գործիքը, չարունակեց ջութակ նվագել:

«Եկավ 1905 թվականը: Տպավորվող պատանին տեսավ մասսաների երթը, ինքն էլ նետվեց փողոց: Նրա աչքի առաջ կազակ հեծյալները հարձակվեցին Առաջին գիմնազիայի վրա և 22 գիմնազիստներ ... զոհվեցին: ... Այդ օրերին էլ նրա առջև մի նոր աշխարհ բացվեց՝ բանտը: Ընդամենը մի քանի օր նա մնաց ցարական բանտում, բայց մի ամբողջ դպրոց էր դա՝ կյանքի դասերով ու քննություններով, դառնություններով ու փորձություններով ...,– գրում է Մ. Հակոբյանը: – Գիմնազիան նա ավարտեց ոսկե մեդալով, բայց չստացավ այն. գիմնազիայի խորհրդի մի այլ որոշմամբ ոսկե մեդալները տրվեցին Գոգոլի արձանի կառուցման համար ստեղծվող ֆոնդին: Վայրկյան իսկ չափսոսաց նա դրա համար, չափազանց շատ էր սիրում Գոգոլին»[3]:

1909 թ. Լ. Լիսիցյանը մեկնում է արտասահման և ընդունվում Մյունխենի համալսարանի փիլիսոփայական ֆակուլտետը: Մեկ տարի անց փոխադրվելով Մոսկվա՝ ընդունվում է տեղի համալսարանի պատմաբանասիրական ֆակուլտետը: Եվ, սակայն, չուտով՝ 1910 թ., ուսանողական ցույցերին ու Յասնայա Պոլյանայում Լև Տոլստոյի թաղմանը մասնակցելու համար, չատերի թվում հեռացվում է համալսարանից: Ջերբակալությունից խուսա տալու և ուսումը չարունակելու նպատակով կրկին մեկնում է արտասահման: Նախ որոշ ժամանակ ապրում է Շվեյցարիայում՝ Լոզանում, հաճախ այցելում է իրենց ընտանիքի մտերիմ Լևոն Շանթին: Վերջինս 1910 թ. մարտի 26-ին Ստ. Լիսից-

---

[1] *Հովհ. Նալբանդյանի մասին մանրամասն տե՛ս Ա ա տ ր յ ա ն. 2021, նաև՝ ՊՌՀ-ի սույն համարում նրա հոդվածը՝ էջ 26–48:*

[2] *Հ ա կ ո բ յ ա ն. 1964, 96:*

[3] *Հ ա կ ո բ յ ա ն. 1964, 96:*

յանին գրում է. « ... Լևոնդ ... եկավ ... Առողջ է, ուրախ, հանգի՛ստ եղիր: Աս մոտ շաբաթ մըն է՝ իր նոր պանսիոնն է, չա՛տ գոհ է ամեն տեսակետե. մինչև անգամ մտադիր է ավելի երկար մնալու: Առաջ կ'ուզեր «ղալմաղալ» տեղ մը իյնա. ես, իհարկե, ոչինչ չըսի, պատանութիւնը իր պահանջներն ունի. բավական երկար որոնումներե վերջը ինկավ ընտանիք մը, որ թեև «ղալմաղալ» չէ, բայց ընտանիք է և լեզվի տեսակետեն բացառիկ հարմար: Մանրամասնութիւնները երևի ինքը կը գրե, այնպես որ, ըսել կ'ուզեմ, հանգի՛ստ եղիր»[4]: Մարտի 30-ին էլ հայտնում է. «Ջավոն (Ջավո Ներսիսյանը Լ. Շանթի կինն է– Ա. Ջ.) ու Լևոնդ այս երրորդ օրն է գացեր են Ժընև. երևի այսօր-վաղը կը վերադառնան»[5]: Ապրիլի 18-ին Լ. Շանթը կրկին Ստ. Լիսիցյանին գրում է. «Անցած շաբթու ստացա ուղարկած 80 ռուբլիդ. Լևոնի հետ խորհուրդ ընելով՝ հասանք այն եզրակացութեան, որ իրեն համար է ըլլալու այդ աննամակ, անորոշ ու անժամանակ գումարը: Լևոնը լավ է. հիմա ուշ-ուշ կուգա մեզի, խրվեր է իր պանսիոնին մեջը և որ գլխավորն է՝ չատ գոհ է»[6]:

Լ. Լիսիցյանը, հավանաբար, 1910 թ. վերջերին մեկնում է Ավստրիա և 1911–1914 թթ. սովորում Վիեննայի համալսարանի պատմաբանասիրական ֆակուլտետում: Այստեղ նա շփվում է Մխիթարյան միաբանութեան հայրերի հետ, պարապում նրանց գրադարանում, ուսումնասիրում հայկական մատենագրական աղբյուրները: «Իր բարեմասնութիւններով» վայելում է Մխիթարյանների համակրանքը[7]:

Երիտասարդ Լիսիցյանը բազմակողմանի զարգացած անձնավորութիւն էր, առանձնապես ընդունակութիւն է դրսևորում գիտահետազոտական աշխատանքների ոլորտում. հետաքրքրվում էր հայկական ճարտարապետութեամբ, սոցիոլոգիայով, աշխարհագրութեամբ, տնտեսագիտութեամբ: Տիրապետում էր մի քանի լեզուների. ազատ խոսում էր ռուսերեն ու գերմաներեն, գիտեր գրաբար, ֆրանսերեն, լատիներեն, անգլերեն, վրացերեն, ուսումնասիրում էր հունարեն, արաբերեն, նաև՝ սանսկրիտ, թուրքերեն: Հետաքրքրութիւնների այդ լայն շրջանակով ու բանիմացութեամբ՝ համալսարանում գրավում է ավստրիացի հայտնի գիտնական, պատմութեան և ճարտարապետութեան պրոֆեսոր Յոզեֆ Ստրժիգովսկու ուշադրութիւնը. վերջինս նրան հրավիրում է գիտահետազոտական աշխատանքի համալսարանին կից գործող Արվեստների պատմութեան ինստիտուտում, դառնում է հայկական մշակույթի հարցերով նրա խորհրդատուն: Յո. Ստրժիգովսկին մեծ հույսեր էր կապում Լևոնի հետ. դեռևս 1913 թ. ասում էր, որ նրանից «դուրս պիտի գա ... eine tüchtige Wissentschafliche Kraft» *(մի կարևոր գիտական ուժ), և հայ ճարտարապետութեան տեսութեան ու պատմութեան մի շարք խնդիրների լուծումը*

[4] *Շ ա ն թ . 2017, 165: Ի դեպ, Լ. Շանթը Մյունխենից 1898 թ. դեկտեմբերի 7-ին Ստ. Լիսիցյանին գրում է. «Կը համբուրեմ և փոքրիկներդ, ո՞վ գիտե հիմա ինչպես մեծցած են չալ Լևոնիկդ ու քոքեղ աղվորիկ Սրբուհիդ (ընդգծումը մերն է – Ա. Ջ.)» (Շ ա ն թ . 2017, 52):*

[5] *Շ ա ն թ . 2017, 167:*

[6] *Շ ա ն թ . 2017, 173:*

[7] *Տ է ր -Յ ա կ . 1922, 317:*

կապում էր նրա հետ[8]: Այս առումով ուշագրավ են նույն թվականի սկզբին ծնողներին Լ. Լիսիցյանի գրած նամակի հետևյալ տողերը. «Մի նոր աշխարհ է բացվում մեր պատմագիրների էջերից: Հին Հայաստանի կյանքը դեռ կենդանի է նրանց մեջ և հարկավոր է միայն մի կարող ձեռք, մի հմուտ աչք, որ կարողանա ըմբռնել այդ հին, սրբազան, խորհրդաստ և մութ տողերի մեջ՝ կյանքի չունչը, ժողովրդի հոգին և պատմությունը՝ նրա բազմակողմանի կողմերով, կենդանի գույներով և ամեն կյանքին հատուկ անբաժանելի ամբողջականությամբ: Մինչև այժմ այդ դեռ ոչ ոք չի կատարել: Բայց ես կարծում եմ, որ այժմ հասել է այդ ժամանակը, երբ հնարավոր է անել այդ»[9]:

Լ. Լիսիցյանը նպաստում է Յո. Ստրժիգովսկու և նշանավոր ճարտարապետ-ճարտարապետ Թորոս Թորամանյանի միջև կապերի ստեղծմանը. վերջինս «Տեկորի տաճարը» և «Էջմիածնի տաճարը» աշխատությունների՝ իր կատարած գերմաներեն թարգմանությունների տեքստերը Ստրժիգովսկուն ներկայացնելը հիմք են հանդիսանում նրանց անձնական ծանոթությանն ու հետագա համագործակցությանը հայոց ճարտարապետությունը Եվրոպային ճանաչելի դարձնելու գործում:

Գիտական արշավախումբը Հայաստանում. Լ. Լիսիցյանի ներդրումը հավաքված նյութերի մշակման գործում

Լ. Լիսիցյանի խորհրդով ու աջակցությամբ, հոր՝ Ստ. Լիսիցյանի ջանքերով հավաքված նյութական միջոցներով 1913 թ. ապրիլի 16-ին Թ. Թորամանյանը գալիս է Վիեննա: Վերջինիս կողմից այդ որոշումը կայացնելու գործում, ինչպես ակնարկվեց, զգալի դեր է կատարել Լ. Լիսիցյանը, ով հույս է ներշնչել Թորամանյանին նրա աշխատությունները Վիեննայում հրատարակելու հնարավորության մասին: Այդ առթիվ Լիսիցյանը 1913 թ. մարտի 7-ին Թորամանյանին գրում է. «... Պ. Ստրչիգովսկին չատ կցանկանար, որ Դուք գաք գոնե այս մի չորս ամսով Վիեննա, երբ հայկական գեղարվեստի վրա պետք է աշխատեն Ինստիտուտի մեջ և Ձեր նյութերն էլ բերեք, որ այստեղ անշուշտ կարելի կլինի գործադրել գիտական ուսումնասիրությունների համար և թերևս հրատարակել: Ստրչիգովսկին պատրաստ է ինստիտուտի բյուջեից 200 կրոն (որն անում է 80 ռուբլի) հատկացնել Ձեզ իբրև օժանդակություն և խնդրում է, որ գրեմ Ձեզ այդ»[10]:

«... Թորամանյանը հրավիրվել էր այնտեղի (Վիեննայի – Ա. Զ.) համալսարանին կից արվեստի պատմության ինստիտուտի պրոֆ. Յ. Ստրժիգովսկու կողմից՝ մասնակցելու նույն տարվա (1913 թ. – Ա. Զ.) գարնանային սեմինարին, որը նվիրված է եղել հայ-վրացական արվեստի ուսումնասիրությանը»[11]: Թորամանյանը մասնակցում է սեմինարին՝ հայ ճարտարապետության վերաբերյալ իր ունեցած նյութերով: «Սեմինարի ավարտումից հետո Թորամանյանին տրվում է արվեստի լավագույն աշխատության համար

---

[8] *Հարությունյան. 1973, 98, Ղարիբջանյան, Վարդանյան. 1993, 54:*

[9] *Հակոբյան. 1964, 99:*

[10] *Թորամանյան. 2014, 442:*

[11] *Թորամանյան. 2014, 442:*

հատկացված մրցանակը և պայմանագիր է կնքվում նրա հետ՝ սեմինարին ներկայացրած նյութերով պատմական հայ ճարտարապետության վերաբերյալ Վիեննայում ուսումնասիրություն հրատարակելու մասին՝ պրոֆ. Ստրժիգովսկու մասնակցությամբ»[12]*:*

Հայոց դարավոր ճարտարապետության պատմության ու տեսության իր խորունկ իմացությամբ՝ Թ. Թորամանյանը նաև որոշ ժամանակ պարապում է Արվեստների պատմության ինստիտուտում, խրախուսում, արագացնում է ինստիտուտի կողմից գիտական արշավախմբի կազմակերպումը և այցը Հայաստան:

Լևոն Լիսիցյանը հոր, մոր և քրոջ՝ Նազելիի հետ (Թիֆլիս):

Դեռևս հունվարի 17-ին Վիեննայից Լ. Լիսիցյանը ծնողներին հասցեագրած նամակում մանրամասն պատմում է իր մասնակցությամբ Հայաստան մեկնելիք հնագիտական արշավախմբի նպատակի և ուղերթի մասին. «Անցին հայրիկ և մայրիկ // Ճամփորդությունը սկսվելու է սեպտեմբերի 2–3-ից (մեր հաշվով), երբ Ստրժիգովսկին և ուրիշները Թիֆլիս կհասնին, այնտեղից ես ու Թ[որամանյանը] կմիանանք նրանց: Ամբողջ օգոստոս ամիսը ես ուզում եմ անցնել Թիֆլիս և պատրաստվել ճամփորդության, պարապելով մի ամիս գրադարաններում: Ճամփորդության գլխավոր նպատակն է՝ հնագույն ճարտարապետական հիշատակարաններ (ուսումնասիրելը – Ա. Զ.): Մարշրուտը որոշված է՝ Սանահնից սկսած – Ալագյազի չուրջը – Աբարանը մինչև Էջմիածին, Գառնիչայ հովիտը մինչև Այրիվանք – հետո Բաքաբան, Երևան-դակերտ, Թալին, Թալիշ, Մաստարա – Ախուրյանի ձոր մինչև Անի և Ալեք-

[12] *Թ ո ր ա մ ա ն յ ա ն. 2014, 443–444:*

սանդրապոլի չուրջը՝ մի իսկական մուզեյ է, ճարտարապետության բազմաթիվ չուսումնասիրված նյութ– սկսած 5-րդ (և մի երկու տեղ հին) դարից: Kittler-*ը կկատարի ազգագրական, իսկ* Hanslik-*ը աշխարհագրական և* Kultur *(հաջորդ մեկ բառն անընթեռնելի է) ուսումնասիրություններ: Լավն այն է, որ հենց նույն չրջանները նրանց համար էլ վերին աստիճանի չհավետ է: Ուրեմն, մենք չուտով կտեսնվենք»*[13]*:*

Արշավախումբը, Ստրժիգովսկու դխավորությամբ, արվեստաբան, դոկտոր-պրոֆեսոր Հենրիխ Գյուսկի, ազգագրագետ Էդմոնդ Գյուտերի, Լիսիցյանի մասնակցությամբ և Թ. Թորամանյանի առաջնորդությամբ 1913-ի սեպտեմբերի 14-ից հոկտեմբերի 4-ը Հայաստանում զբաղվում է գիտական մի չարք հարցերի մշակումով: Նրանք այցելում են Ալեքսանդրապոլ, Մարմաշեն, Հաղիճ, Քասախ, Աշտարակ, Եղվարդ, Գառնի, Գեղարդ, Էջմիածին և այլ վայրեր, ծանոթանում, լուսանկարում, չափագրում ճարտարապետական հուշարձաններ: Այդ ընթացքում Լ. Լիսիցյանը և՛ թարգմանիչ էր, և՛ վիմագրեր վերծանող: Հայտնի է, որ գյուղացիներից մեկի ուղեկցությամբ Գառնիից նա բարձրանում է Գեղամա լեռները և ուսումնասիրում Պայտասարի ժայռապատկերները, լուսանկարում ու արտանկարում դրանք, հավաքած նյութերի հիման վրա գերմաներեն հոդված պատրաստում[14]*:*

Նկատենք, որ Յո. Ստրժիգովսկու ծրագրում, բացի հետազոտական ուղևորությունից, նախատեսվում էին նաև հրապարակային դասախոսություններ Թիֆլիսում ու Բաքվում: Դրանց կազմակերպման գործում մեծ է եղել Լ. Լիսիցյանի և նրա հոր դերը: Ծրագրված դասախոսություններից Թիֆլիսինը կայացել է հոկտեմբերի 5-ին հայկական պատմական ընկերությունում հայ գեղարվեստի մասին, որն անմիջապես Լ. Լիսիցյանը թարգմանել է:

Հավաքված նյութերը Լ. Լիսիցյանը Վիեննայում սկսում է մշակել ու դասդասել: Այդ ամբողջ ընթացքում այնքան կարևոր ու ծանրակշիռ է եղել նրա ներդրումը դրանց գիտական մշակման գործում, որ հետագայում՝ 1918 թ., Վիեննայում գերմաներեն լույս տեսած «Հայերի ճարտարապետությունը և եվրոպան» ծավալուն երկհատոր աշխատության տիտղոսաթերթի վրա Յո. Ստրժիգովսկին՝ Թ. Թորամանյանի և Հ. Գյուսկի անունների կողքին հիշատակել է նաև Լ. Լիսիցյանինը[15]*: Ինչպես հայտնի է, աշխատությունը խոշոր ներդրում էր հայկական ճարտարապետության ուսումնասիրման գործում, նրանում հետևողականորեն առաջ է քաշվում և հիմնավորվում հայկական ճարտարապետության ինքնուրույնության տեսակետը, որը մինչ այդ ժխտվում էր եվրոպական որոշ գիտնականների կողմից*[16]*:*

---

[13] Էվոյան. 1973, 185–186: Ի դեպ, «Բանբեր»-ի տարեթիվը մի չարք աղբյուրներում սխալմամբ նշված է՝ 1972 (տե՛ս, օրինակ, «Ով ով է. հայեր: Կենսագրական հանրագիտարան», 2005, 482):

[14] Հոդվածը, որն այսօր էլ չի կորցրել իր գիտական նշանակությունը, Գ. Ա. Տիրացյանի թարգմանությամբ տե՛ս ՀԽՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1972, № 1, էջ 51–57:

[15] Լ. Լիսիցյանի, Յո. Ստրժիգովսկու և Թ. Թորամանյանի գիտական բովանդակալից համագործակցության մասին տե՛ս Հարությունյան. 1973, 89–104:

[16] Յո. Ստրժիգովսկու աշխատության մասին առաջին ծավալուն գրախոսականը տե՛ս Գարեգին Եպիսկոպոս. 1922, 282–294: Նաև տե՛ս Арутюнян.

… Համալսարանական տարիներին Լ. Լիսիցյանը հանդես է եկել «Վրաց ճարտարապետությունը», «Հայ-վրաց պատմությունը» զեկուցումներով, համարյա ավարտին է հասցրել «Հայ ճարտարապետության պատմություն» դիսերտացիոն աշխատանքը, գրել է «Նախապատմական գյուտերը Կովկասում», «Հայաստանի սոցիալ-կուլտուրական աշխարհագրությունը» ռեֆերատները, սևագրել է Հայաստանի բնակչության քարտեզը և այլն:

Միաժամանակ ունեցել է բազմակողմանի հետաքրքրություններ. զբաղվել է լուսանկարչությամբ ու սպորտով, հաճախել գեղանկարչության դասերի … երբեք չմոռանալով ջութակն ու երաժշտությունը: Հայտնի է, որ Լ. Լիսիցյանը մասնակցել է Վիեննայում գտնվող հայ նոր պրոֆեսիոնալ կոմպոզիտորական դպրոցի հիմնադիրներից նշանավոր կոմպոզիտոր ու դաշնակահար Նիկողայոս Տիգրանյանի համերգին, նվագել «Շահնազ», «Լեկուրի», «Բինգյոլ», «Քյոր-օղլի», ուղեկցել կույր երաժշտին: «Մի շաբաթ զբաղված էի Տիգրանյանի փոքրիկ նվագահանդեսով, որին մասնակցեցի էլ»[17],– գրում է նա 1914 թ. փետրվարին:

Հավելենք. երիտասարդ Լևոնը շրջապատի նկատմամբ ունեցած իր պարզ, անմիջական, պատրաստակամ շփումներով հարգանք ու հեղինակություն է ձեռք բերել, որի մասին կան խոսուն վկայություններ: Այսպես, 1913 թ. հունիսի 11-ին Վիեննայից Թ. Թորամանյանը Ստ. Լիսիցյանին գրում է. «Ան-

---

1997, 93–102: *Ի դեպ, Յո. Ստրժիգովսկու աշխատությունը ռուսերեն թարգմանությամբ հրատարակել է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը (Հ. 1, գիրք 1, 2011, հ. 1, գիրք 2, 2018):*

[17] *Հ ա կ ո բ յ ա ն. 1964, 99: Հարկ ենք համարում հակիրճ անդրադառնալ Ն. Տիգրանյանի տեսողության կորստի և Վիեննայում ուսանելու հետ կապված որոշ մանրամասների: «Ինն տարեկան հասակում (ծնվել է 1856 թ. – Ա. Զ.) ծաղիկ հիվանդությունը զրկեց ինձ տեսողությունից. տեղական բժիշկների և ծնողներիս բոլոր ջանքերն ապարդյուն անցան, և մանուկ հասակում ես զրկվեցի տեսողությունից, խոր սգի մեջ թողնելով ծնողներիս և շրջապատիս: Սակայն, ծնողներս իրենց հեռատես հոգատարությամբ որոնեցին և գտան մի այլ ասպարեզ: Հայրս Կովկասի մի խուլ անկյունում նստած (Ակեքսանդրապոլում – Ա. Զ.), հետաքրքրվեց ու տեղեկություններ հավաքեց Եվրոպայում գոյություն ունեցող կույրերի դպրոցների մասին, և Վիեննայի կույրերի կայսերական ինստիտուտը լավագույնը գտնելով՝ 1873 թ. տարավ ինձ Ավստրիայի մայրաքաղաքը: Վեց տարի ես մնացի Վիեննայի կույրերի ինստիտուտում և երաժշտական կրթությունից բացի (հայտնի պրոֆեսոր Վ. Շեննների մոտ նա ստանում է դաշնամուրի դասեր, ուսումնասիրում երաժշտության տեսությունը, հարմոնիան և կոմպոզիցիայի հիմունքները – Ա. Զ.) ստացա նաև լայն հանրակրթական ուսում,– «Իմ կյանքի ուղին» վերնագրում ուշագրավ հուշերում գրում է Ն. Տիգրանյանը: – Վիեննայում ես ապրեցի մի այնպիսի պատկառելի ընտանիքում, որն իր անբնչելի կնիքը դրոշմեց իմ ամբողջ կյանքի վրա: Դա պրոֆեսոր և կայսերական ինստիտուտի դիրեկտոր Պաբլասեկի ընտանիքն էր. պրոֆեսորն ուներ 6 մանկամարդ դուստրեր, որոնք զարմանալի պատրաստակամությամբ կարդում էին ինձ համար գերմանական լավագույն հեղինակների երկերը: Այս կերպ և նուրբ շրջանում հղկվեցի ես և յուրացրի գերմանացու հատուկ մի քանի գծեր, որոնք կարևոր դեր կատարեցին կյանքիս և երաժշտական գործունեությանս ընթացքում» (Տ ի գ ր ա ն յ ա ն. 1981, 52–53): Ն. Տիգրանյանի կյանքի ու գործունեության հետաքրքիր մանրամասների մասին նաև տե՛ս Թ ե ր լ ե մ ե զ յ ա ն. 1936,* Мазманян. 1978.

շուշտ պ. Լևոնը Ձեզ կգրե իրերի դրումը և իմ հույսերը աշխատութիւններուս հրատարակութեան մասին՝ շնորհիվ Ստչիգովսկիի նախաձեռնութեան և Ձեզ ու ինձ անհունապես սիրելի պ. Լևոնի անկեղծ ջանքերով: Ձեմ կարող կրկին անգամ շնորհակալութիւնս չի հայտնել Ձեզ պ. Լևոնի մասին, որ ծայրահեղ հոգածութեամբ կմտածե ու կգործե իմ մասին: Եկան օրեր, որ անոր գոյութեամբը միայն ես մոռանում էի շատ դառն ու անախորժ օրերուս ցավը Վիեննայի մէջ: Պետք է խոստովանիմ, որ մի քիչ հանդուգն էր իմ ճանապարհորդութիւնս՝ առանց լիակատար պատրաստութեան, սակայն պ. Լևոնը անզգալի դարձուց այդ հանդգնութենես հառաջ եկած նեղութիւնները»[18]: Բերենք մեկ վկայութիւն ևս. Լ. Շանթը 1914 թ. ապրիլի 24-ին Լոզանից Լ. Լիսիցյանին հայտնում է. «Սիրելի՛ Լևոն, շաբաթե մը գալու եմ Վիեննա. Մխիթարյաններու գրադարանը աշխատիլ կ'ուզեմ, կ'ուզեմ աչքե անցընեմ ամբողջ արևմտյան գրականութիւնը, վստահ եմ, որ անոնք կ'ունենան, ինչ որ վերջին 50-ամյակին մեջ տպված է ... Ուրախ պիտի ըլլամ, եթե ստուգես այս կետը և ինձի անմիջապես տեղեկացնես: Հույս ունիմ նույնպես, որ որևէ ձևականութեյան կամ դժվարութեյան չեմ հանդիպելու իրենց գրադարանեն օգտվելու համար: Իսկ եթե բարի ըլլաս և ինձի համար աչքի առաջ ունենաս սենյակ մը մեկ ամսվան համար պարզ, բայց կոկ ու մաքուր, ո՛չ հեռու Մխիթարյաններեն ու քաղաքի կեդրոնեն, որ չիտակ հոն իջնեմ, առանց կողմնակի ծախքերու՝ չափազանց շնորհակալ կ'ըլլամ քեզի: Մնացածը կը խոսինք, երբ միասին ըլլանք, առայժմ սրտանց ու կարոտով կը համբուրեմ քեզի»[19]:

1914–1915 թթ. Լ. Լիսիցյանի մասնակցութիւնը կամավորական խմբերի և հայ գաղթականների եղբայրական օգնութեյան կոմիտեի գործունեութեյանը

Երբ արդեն իսկ սկսվել էր Առաջին համաշխարհային պատերազմը, 1914 թ. օգոստոսի 9-ին Նոր Նախիջևանից Լ. Շանթը Ստ. Լիսիցյանին գրում է. «Լևոնեն լուր ունի՞ս. անհանգիստ չըլլաս. հոս շատ-շատերն են քու վիճակիդ. Լևոնը խելոք տղա է, և հարկ եղած ժամանակ Մխիթարյանները կ'օգնին նրան, ինչպես և իր ինատիտուտը, թե փողով և թե այլ ամեն կերպով. հավանորեն հիմա Զվիցերիա է, և շատ ուրախ պիտի ըլլամ՝ եթե խելք ըրած ու Ջավոյի մոտ գացած ըլլա»[20]:

Սակայն ստեղծագործական ավյունով լեցուն Լ. Լիսիցյանը, անավարտ թողնելով գիտական աշխատանքները, գրքերը, ձեռագրերը, իբրև ռուսահպատակ հարկադրված էր թողնել Վիեննան և օգոստոսի կեսերին վերադառնալ Թիֆլիս: Որոշ ժամանակ անց նա շտապում է Հայաստան. որպես կամավոր մեկնում է ռուս-թուրքական ռազմաճակատ՝ նախ որպես 5-րդ, 1915 թ.՝ 2-րդ կամավորական ջոկատի զինվոր:

Հայ գաղթականներին օգնութեյուն ցույց տալու նպատակով 1914 թ. դեկտեմբերին Էջմիածնի Մայր Աթոռին առընթեր կազմակերպվում է Հայ գաղ-

---

[18] Թ ո ր ա մ ա ն յ ա ն. 2014, 230: Ի դեպ, 1913 թ. հոկտեմբերի 2-ին Լոզանից Լ. Շանթը Ստ. Լիսիցյանին գրել է. «Լևոնը նորեն Վիեննա՞ է, հասցեն ղրկե՛ մեզի» (Վ ա ր դ ա ն յ ա ն. 1992, № 3, 131, Շ ա ն թ. 2017, 227):

[19] Շ ա ն թ. 2017, 234–235: Լ. Շանթի այցը Վիեննա, սակայն, չի կայացել:

[20] Վ ա ր դ ա ն յ ա ն. 1992, № 1, 124: Համմտ. Շ ա ն թ. 2017, 237:

թականների եղբայրական օգնության կոմիտե: Այն ուներ իր ենթակոմիտեները Երևանում, Թիֆլիսում և Անդրկովկասի այլ վայրերում: Լ. Լիսիցյանը նշանակվում է կոմիտեի լիազոր-ներկայացուցիչ Բայազետում: Սկզբնական շրջանում նա իր գործունեությունը ծավալում է սահմանամերձ գոտում:

Դեռևս հոկտեմբերի 8-ին Հայ գաղթականների եղբայրական օգնության կոմիտեի անդամ, անվանի հայագետ, հոգևորական գործիչ Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանին հասցեագրած նամակում Լ. Լիսիցյանը տեղեկացնում էր. «Թալիշյան քարերը տեղ են հասել: Առայժմ պահվում են ոստիկանության վարչությունում: Եթե Դուք ցանկանում եք դրանք տեսնել, ապա մի մերժեք վաղը այցի գալ մինչև օրվա ժամը 2-ը. լավ կլիներ, եթե Դուք որոշեք դրանց ֆոտոպատճենները հանել, ես կօգտվեի նաև մեկ օրինակը Պետերբուրգի հնագիտական ընկերությանն ուղարկելու համար: Որոշ ժամանակից հետո այդ քարերը ես ուղարկելու եմ Կովկասյան թանգարան»[21]:

Հիշատակելի է նաև, որ դեկտեմբերի 5-ին «Թիֆլիսի Բնագիտական Ընկերության» նիստում Լ. Լիսիցյանը զեկուցում է կարդացել «Հայաստանը ֆիզիկական տեսակետով» թեմայով: Անչափ ուշագրավ, մինչ օրս իր գիտական արժեքը չկորցրած այդ զեկուցումն ավարտվում է հետևյալ եզրակացությամբ. «Հազիվ թե գտնվի մի այլ երկիր, որի աշխարհագրական դիրքը, տեղը ուրիշ երկիրների մեջ և ներքին ֆիզիկական կազմությունը այն աստիճան, այնպես չեչտակի և անողոք կերպով ազդած և ուղղություն տված լինեին նրա ազգաբնակության բախտին, ինչպես Հայաստանում: Հայկական բարձրավանդակի ֆիզիկական կազմությունը հնարավոր է դարձրել նրա վրա մի այնպիսի մարդկային սոցիալական օրգանիզմի կազմությունը, որ ընդունակ է մշակույթ ստեղծելու և իր պատմությունը ունենալու: Խիստ որոշված աշխարհագրական անհատականությունը նրան ասպարեզ է դարձրել անհատական պատմության: Տեղագրության գծերն ու հատկությունները և ամբողջ ձևը արտացոլացել են պատմության մեջ, որը կարծես կոփվել, ճուլվել է աշխարհագրության կաղապարի մեջ»[22]:

1914 թ. դեկտեմբերի 30-ին Լ. Լիսիցյանը Գ. Հովսեփյանին հայտնում է Իգդիրից ռազմատրանսպորտային 40 փոխադրամիջոցով հայ գաղթականների՝ հիմնականում կանայք ու երեխաներ, տեղ հասնելու, նրանց տեղավորելու և սնունդով ապահովելու անհրաժեշտության մասին[23]:

«[30] հունվարի 1915 թ. [Ուլուխանլու]» թվակիր նամակով Լ. Լիսիցյանը ծնողներին հայտնում է գնացքով Իգդիր մեկնելու մասին. «Գնում ենք մեծ ծրագրերով, կունենանք բազմաթիվ հանձնարարություններ և մեծ ասպարեզ գործելու ու մեր ուժերը գործադրելու»[24]: Իսկ արդեն «սահմանի այն կողմից»՝ Արծափից, փետրվարի 9-ին նախ պատմում է ուղևորությունից ստացած տպավորությունը՝ գրելով. «Իգդիրից դուրս եկանք … փետրվարի 6-ին.

---

[21] *Էվոյան. 1973, 188:*

[22] *Լիսիցեան. 1922, 243: Այս զեկուցումը տարիներ անց գտնվել է Էջմիածնի գիտական ինստիտուտի անդամ, վաղամեռիկ Լ. Լիսիցյանի թղթերի մեջ և վերամշակմամբ նրա հիշատակին տպագրվել է Էջմիածնի գիտական ինստիտուտի «Բանբեր»-ում (տե՛ս Լիսիցեան. 1922, 234–243):*

[23] *Էվոյան. 1973, 188:*

[24] *Կիրիմյան. 1991, 147:*

… Անցանք Օրջով (Օրգով – Ա. Զ.), Զինգիլիժյաղուկը ու գիշերեցինք տաճկական նախկին մաքսատանը՝ Ղարեում: Մյուս առավոտ հասանք Արծափ … երբեք չեմ մոռանա մեր վերելքը դեպի Զինգիլ: Ձյուն էր գալիս, բայց օդը մեղմ էր, և մեր բախտից քամի չկար. մեր ձիերը հոգնել էին և դանդաղ առաջ էին քայլում: Թե որ պարզ օր լիներ, ամբողջ Արարատյան դաշտը կերևար մեր առջև, իսկ դիմացը՝ հեռում, ահագին բարձրության վրա՝ Արագածի գագաթներն ու Ախմանջանը՝ ձյունով պատած. այս տեսարանը ես լուսանկարեցի մի քանի օր առաջ, երբ գնացել էի Օրջով: Բավականին տաք օրեր են. քամի չկա, երկինքը մի օր ծածկվեց ամպերով և հետո արդեն պարզվեց: Կապույտ երկինք, առանց մի ամպի, Բայազետի ընդարձակ դաշտը ձյունով ծածկված, որի վրա սևին են տալիս ճահիճները, սպիտակ Մասիսը, որը այս կողմից շատ ավելի ցածր է երևում (Բայազետի դաշտը մոտ 2500 ոտնաչափ բարձր է Արարատյան դաշտից) և Հայկական պարը, դեմ ու դեմ Ալ-դաղը և Պարսկաստանից բաժանող չղթան, մյուս կողմից էլ՝ Դիադինից բաժանող լեռնաշղթան»[25]: Այնուհետև շարունակում է. «Մենք … եկել ենք առայժմ գաղթականներին օգնելու և նրանց վերադարձը պատրաստելու գործով, … սակայն մեր անելիք գործը շատ ավելի բազմակողմանի է. մինչնորդ պիտի լինենք ժողովրդի և գինվորական իշխանության մեջ, հսկենք գյուղերի ապահովությունը և դրա համար ինքնապաշտպանություն և գյուղական մարմիններ կազմակերպենք, դատավորի դեր խաղանք, գաղտնի լրտեսի և պոլիցիայի դեր ստանձնենք (մանավորապես քրդերի վերաբերմամբ), պաշտպանենք ու պահպանենք հայերի հոգային ու չարժական սեփականությունը (մասնավորապես գաղթականներ[ին]ը), գաղթականների տները և գյուղերը ապահովենք քանդվելուց, աչքի առաջ ունենալով վերադարձը, որն անհրաժեշտ է»[26]:

Ըստ Կովկասյան 4-րդ բանակային կորպուսի թիկունքի պետ, գեներալ-մայոր Յուրևիչի կողմից 1915 թ. օգոստոսի 25-ին Լ. Լիսիցյանի ինքնության մասին տված վկայականի, նա, որպես հայկական 2-րդ ջոկատի կամավորական, գործուղվել է Արևմտյան Հայաստանի կրկին վերանվաճված տարածքներ՝ վերականգնելու վերադարձող գաղթականների թալանված տնտեսությունները, ընդամին՝ կարգադրվել է այդ հարցում նրան աջակցել: Բացի այդ, վկայականում նշված է, որ նրան թույլատրվել է ինքնապաշտպանության համար կրել զենք և իր ենթակայության տակ ունենալ 10 գինված անձ[27]:

Լ. Լիսիցյանը լինում է Արևմտյան Հայաստանի մի շարք վայրերում, ականատես դառնում ժողովրդին վիճակված ողբերգությանը՝ ամենուրեք գործադրելով օգնության անձնուրաց ջանք ու եռանդ:

Նկատենք, որ թեև Լ. Լիսիցյանը ծանրաբեռնված էր գաղթականներին օգնություն ցուցաբերելու ամենօրյա հոգսերով, այնուամենայնիվ, ժամանակ էր գտնում զբաղվելու հայկական մշակութային արժեքների ճակատագրով. հավաքում է ազգագրական բնույթի նյութեր, կատարում հայկական ճարտարապետական հուշարձանների վերաբերյալ համառոտագրություններ: Այսպես, վերը նշված փետրվարի 9-ի նամակում ծնողներին հայտնում է. «Երկու

[25] *Կ ի ր ի մ յ ա ն. 1991, 148:*
[26] *Կ ի ր ի մ յ ա ն. 1991, 148:*
[27] *Է վ ո յ ա ն. 1973, 189:*

հնություն գտա այստեղ, որոնք ահագին արժեք ունեն մեր ճարտարապետության համար: Մեկը Արծափի եկեղեցին է, պատկանում է ամենահին շրջանին՝ երևի IV–VI դարի, 14 կողմանի, երկու մուտքերի վրա, նարտեքսով (բյուզանդական տիպի հատակագծով), մեզ մոտ չտեսնված հատակագիծ, սակայն, անշուշտ, հնագույն շրջանի, ինչպես ցույց են տալիս քանդակները (ոչ շատ), պրոֆիլները, պայտաձև կամարները և այլն: Այս եկեղեցին վերին

Աջից՝ Լևոն Շանթ, Ստեփան Լիսիցյան, երրորդը՝ անհայտ, կանգնած՝ Լևոն Լիսիցյան:

աստիճանի հետաքրքիր մի պրոբլեմ է, որ շատ բան (թերևս անսպասելի) կարող է պարզել: Այս եկեղեցին ունի մի արձանագրություն գոտիաձև եկեղեցու շուրջ, երկաթագիր, պատի միջին բարձրության վրա, ոչ ուշ, քան VII դար, սակայն հազիվ թե հիմնադրության մասին: Դժբախտաբար միայն սկիզբն է մնացել (այն էլ եղծված), մնացածը դիտմամբ տաշած, բավականին լավ է պահպանվել, [կան] նաև մի քանի այլ արձանագրություններ, մեկը՝ 1285 թվի, երկրորդը՝ Քորանի եկեղեցին, այժմ փայտածածկ, Քասախի և Երերույքի տիպի՝ նույնությամբ, արձանագրություն չկա: Մուտքերը փոխարինված են փայտե այուններով, պայտաձև աբսիդ, կապետելների հին ձևի պրոֆիլ, արևելյան խորանների դռների գլխին փորագրված՝ ձուկ, օձ»[28]*:*

1916 թվական. պետրոգրադյան շրջան

… Բծավոր տիֆով հիվանդանալն անհնար է դարձնում ռազմաճակատում Լ. Լիսիցյանի մնալը: Նա վերադառնում է Թիֆլիս: 1915 թ. սեպտեմբերի 17-ին Լոզանից Լ. Շանթը Ստ. Լիսիցյանից հետաքրքրվում է. «Կը հուսամ Լևոնդ կազդուրված է արդեն բոլորովին»[29]*:*

[28] *Կ ի ր ի մ յ ա ն. 1991, 151–152:*

[29] *Վ ա ր դ ա ն յ ա ն. 1992, № 1, 129, Շ ա ն թ. 2017, 249: Հոկտեմբերի 6-ին էլ Ստ. Լիսիցյանին Լ. Շանթը գրում է. «Կը հուսամ, առողջ եք բոլորդ, և որ Լևոնը արդեն ապաքինված է վերջնապես» (Շ ա ն թ. 2017, 251: Համմտ. Վ ա ր դ ա ն յ ա ն. 1992, № 1, 130):*

Ամենայն հավանականությամբ, 1916 թ. հունվարին Լ. Լիսիցյանը մեկնում է Պետրոգրադ[30] իր վաղեմի երազանքն իրագործելու համար, այն է՝ ուսանել մեծ հայագետ ու գիտնական Ն. Մառի մոտ: Մայիսի 29-ին Բաքվից Լ. Շանթը Ստ. Լիսիցյանին հայտնում է. «Սիրելի՛ Ստեփանս, շատ-շատ բարև ու համբույր քեզի Լևոնեդ ու Սրբուհիեդ. չաբաթ մը Պետրոկրատ էի, չաբաթվան մը չափ Մոսկվա: Լևոնի տրամադրությունը սկիզբը շատ լավ էր, պատմեց ինծի իր առաջիկա ամառվան ծրագիրը, մտադիր էր մնա իր տեղը ու աշխատի. ելավ գորակոչի նոր կարգադրությունը ուսանողների վերաբերմամբ, ու ամեն ինչ դարձավ տակնուվրա: Իսկույն դիմեց պրոֆ. Մարին և փորձեց մտնե անոր կազմակերպած Անիի արշավախմբին մեջ, որ քանի մը ամիս ժամանակ չահվի. կամ կը մտածեր քաղաքներու միության կողմից երթա նոր դրավված հայկական վայրերը, դեռ պատասխան չուներ, որ ես մեկնեցա Պետրոկրատեն. վերջը գրեց Մոսկվա, որ Անիի պատմության համար արդեն ուշ էր, և որ ինքը վճռեր է մայիսի վերջը ճամփա ելնե Կովկաս զինվորական վարժարան մտնելու»[31]:

Պետրոգրադում գտնվելու ընթացքում Լ. Լիսիցյանը ջութակի դասեր է առնում հայտնի ջութակահար, դիրիժոր, Պետրոգրադի կոնսերվատորիայի ջութակի, կվարտետի և կամերային անսամբլի դասարանի ղեկավար, պրոֆեսոր Լեոպոլդ Աուերի մոտ[32]: Միաժամանակ քարտուղարություն է անում «պարոն Պապաջանյանի մոտ»[33], աշխատավարձն ուղարկում է Թ. Թորամանյանին՝ «մինչև որ հաջողվի նրա համար մի տեղից թոշակ գտնել: խեղճի դրությունը շատ դժվար է»[34]:

---

[30] *1916 թ. փետրվարի 15-ին Բաքվից Լ. Շանթը գրում է Ստ. Լիսիցյանին. «Ստեփա՛ն ջան, քենիներեդ իմացա, որ Լևոնը մեկներ է մայրաքաղաք, ուրեմն այդպե՛ս վճռեցիք. զինվորագրության հարցը անչուշտ ստուգած ես նախապես» (Շ ա ն թ . 2017, 259):*

[31] *Շ ա ն թ . 2017, 262: Համմտ. Վ ա ր դ ա ն յ ա ն. 1992, № 1, 137–138:*

[32] *Նկատենք, որ Լ. Աուերի ամենասիրելի աշակերտն ու օգնականն է եղել հանրահռչակ ջութակահար Հովհ. Նալբանդյանը (տե՛ս ՊՒՀ-ի սույն համարում Ա. Ասատրյանի հոդվածը՝ էջ 26–48):*

[33] *Խոսքը Նովոռոսիյսկի համալսարանի իրավաբանական ֆակուլտետն ավարտած, Ռուսաստանի 4-րդ Պետական դումայի (1912–1917), Անդրկովկասյան հատուկ կոմիտեի (1917) անդամ, Հայ ժողովրդական կուսակցության հիմնադիրներից (1917), Բաթումում և Կ. Պոլսում Հայաստանի Հանրապետության պատվիրակության (1918), Փարիզի խաղաղության վեհաժողովի Հայոց ազգային պատվիրակության (1919–1922) անդամ, ՀՕԿ-ի՝ Ժնևի կենտրոնական վարչության նախագահ (1926), հասարակական-քաղաքական հայտնի գործիչ Միքայել Պապաջանյանի (1868–1929) մասին է: Ցավոք, մեզանում հրատարակված հանրագիտարաններում՝ «Հայկական սովետական հանրագիտարան»-ում (հ. 9, Երևան, 1983, էջ 130), «Հայկական համառոտ հանրագիտարան»-ում (հ. 4, Երևան, 2003, էջ 155), «Ով ով է. հայեր: Կենսագրական հանրագիտարան»-ում (հ. 2, Երևան, 2007, էջ 305), «Հանրագիտական բառարան»-ում (հ. 2, Երևան, 2018, էջ 604) այս գործչի մասին խոսք չկա: Հավելենք, սակայն, որ պատմաբան Գոհար Ավագյանը 2009 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Միքայել Պապաջանյանի հասարակական-քաղաքական գործունեությունը» վերնագրով:*

[34] *Հ ա կ ո բ յ ա ն. 1964, 100:*

Ի դեպ, Լ. Լիսիցյանը Պետրոգրադում ծանոթանում է Հնչակյան կուսակցության հիմնադիրներ Մարո և Ավետիս Նազարբեկյանների դստեր՝ Հեղինեի (Ելենա) հետ, ով սովորում էր տեղի կոնսերվատորիայում, և Թիֆլիսում 1919 թ. նրանք ամուսնանում են[35]*:*

Լ. Լիսիցյանի գործունեությունը Հայաստանի առաջին Հանրապետության շրջանում

1916 թ. հոկտեմբերի սկզբին Լ. Լիսիցյանն արդեն Թիֆլիսում էր, և չուտով զորակոչվում է տեղի սպայական հետևակային դպրոցում սովորելու: Իր փայլուն ընդունակությունների շնորհիվ՝ ավարտելուց հետո նույն դպրոցի ուսուցիչ է նշանակվում: «Երբ Կովկասը անջատվում է Ռուսաստանից, Լ. Լիսիցյանին հայկական կառավարության կողմից առաջարկվում է հիմնել ենթասպայական դպրոց. այս պարտականությունը նրան թելադրեց հայերենի վերածելու զինվորական ծառայության և վարժությունների ուղեցույց դասագրքերը և հրամանատարական տերմինոլոգիան, այս միջոցին հրատարակում է՝ «Հրահանգ զինվորական վարժությունների» գիրքը 1918 թ., – գրում է Ս. Տեր-Հակոբյանը: – Որպես Հայաստանի աշխարհագրության և պատմության գիտակ մի անձ՝ արձակվելով զինվորական ծառայությունից, 1918-ին Հայաստանի կառավարության կողմից Պոլսի կոնֆերանսին ուղարկված պատգամավորության կցորդ նշանակվեց, որտեղ պատրաստել է պատգամավորության տված հուշագրին կցված Հայաստանի սահմանների մասին պատմական ակնարկը – Aperçu Historique *(տպված)»*[36]*:*

Հավելենք. 1918 թ. հունիսի 13-ին Հայաստանի նորաստեղծ Հանրապետության պատվիրակությունը Ավետիս Ահարոնյանի գլխավորությամբ մեկնում է Կ. Պոլիս՝ մասնակցելու միջազգային խորհրդաժողովին: Պատվիրակության քարտուղարը և գլխավոր գրիչը Լ. Լիսիցյանն էր: Պատվիրակության նպատակն էր՝ «ցույց տալ մեր անվիճելի իրաւունքները Ախալքալաքի, Լոռիի, Զանգեզուրի, Ղարաբաղի եւ Նախիջևանի վրայ, որոնց վրայ յատկնուիրիւններ ունէին մեր կովկասեան հարեւանները»[37]*: Խորհրդաժողովը, սակայն, տեղի չի ունենում, և նոյեմբերի 1-ին պատվիրակությունը ձեռնունայն վերադառնում է Երևան: Պատվիրակության գործունեության մասին Լ. Լիսիցյանը թողել է խիստ ուշագրավ օրագրային գրառումներ*[38]*:*

---

[35] *1920 թ. հունվարին նրանք ունենում են Նորայր անունով զավակ, ով 10 տարեկան հասակում անգինայով հաճախակի հիվանդանալու հետևանքով՝ ինֆարկտից մահացել է* (Лисициан. 2002, 8)*:*

[36] *Տէր-Յակ. 1922, 318:*

[37] *Սուքիասյան. 2015, 194:*

[38] *Մանրամասն տե՛ս Սուքիասյան. 2015, 193–203: Հավելենք. ճանաչված պատմաբան, տնտեսագետ-վիճակագիր Ա-Դոյի (Հովհաննես Տեր-Մարտիրոսյան) ուշագրավ հուշերից տեղեկանում ենք, որ 1918 թ. օգոստոսի 7-ին Դիլիջանում հանդիպել է մի անձնավորության, ում հետ տաճկական փոստատար ավտոմեքենայով ուղևորվել է Աղստաֆա, ապա՝ գնացքով մեկնել Թիֆլիս: Այդ ընթացքում պարզվել է, որ անծանոթ խոսակիցը Լ. Լիսիցյանն է, ով Կ. Պոլսից Հայաստան էր եկել կառավարությանը հանձնելու պատվիրակության զեկուցագրերը և նորից*

… Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից անմիջապես հետո Փարիզում նախատեսվում էր անցկացնել խաղաղության վեհաժողով, և հզոր ու ոչ հզոր ժողովուրդներից պահանջվում էր ներկայացնել հաշվարկված փաստացի հուշագիր (մեմորանդում)՝ հզորների պարագայում ծառայությունների և մասնակցության չափերի, ոչ հզորներինը՝ ըստ կրած վնասների ու կորուստների: Զորավար Անդրանիկին հասցեագրած 1918 թ. դեկտեմբերի 14-ի թվակիր նամակում Հովհ. Թումանյանը մասնավորապես հայտնում է. «Մեր կառավարությունը մինչև էսօր էլ կոնգրեսին (Փարիզում կայանալիք խաղաղության վեհաժողովին – Ա. Զ.) ներկայացնելիք մեմորանդումի համար հոգս չքաշեց, նյութեր չհավաքեց, թե ինչ կորուստներ ենք ունեցել մենք կամ ինչ բռնություններ են կատարվել մեր ժողովրդի վրա: Ստիպված մենք սկսեցինք՝ Հայրենակցական միությունների կենտրոնական խորհուրդը: Այժմ իմ նախագահությամբ մի բյուրո է կազմված (1918 թ. նոյեմբերի 21-ին՝ «Համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողով»– Ա. Զ.) և աշխատում է եռանդով»[39]: Քննիչ հանձնաժողովի աշխատանքները կազմակերպելու համար ստեղծվում է չորս ենթահանձնաժողով կամ բաժին՝ պատմաքաղաքական, ռազմապատմական, տնտեսական և քրեական[40]: Ռազմապատմական բաժնի վարիչ է նշանակվում 1914 թ. աշնանից Կովկասյան ճակատում և Արևմտյան Հայաստանում լայն գործունեություն ծավալած զորավար, գեներալ-մայոր, բանաստեղծ Ալեքսանդր Կուլեբյակինը[41]:

1918 թ. դեկտեմբերի 19-ին պոդպորուչիկ Լ. Լիսիցյանը դիմում է Քննիչ հանձնաժողովին. «Առաջարկում եմ իմ աշխատակցությունը Քննիչ հանձնաժողովիդ զինվորապատմական բաժնի մեջ»[42]: Նա աշխատանքի է ընդունվում ռազմապատմական բաժնում՝ որպես քարտուղար:

Բաժինն իր գործունեության շրջանակում ծրագրել էր փաստական նյութերի հիման վրա ներկայացնել «Հայերի մասնակցությունը համաշխարհային պատերազմին» վերնագրով տեսություն, որի մեջ հատուկ տեղ պետք է զբաղեցներ «Կամավորական շրջանի՝ 1914–1916 թթ.» պատմությունը: Տքնաջան աշխատանքի շնորհիվ՝ չուտով զանազան նյութեր են հավաքվում (զեկուցումներ, հրամաններ և այլն) Ազգային բյուրոյի, Հայոց ազգային խորհրդի, Զինվորական խորհրդի անդամներից, ինչպես նաև կամավորական ջոկատների հրամանատարներից: Անխոհեր բոլոր հասցեատերերը հապշտապ արձագանքում են: Խոսուն է հետևյալ իրողությունը. Հովհ. Թումանյանը 1919 թ. փետրվարի 11-ին Բաքվում գտնվող Համազասպ Սրվանձտյանցին հասցեա-

---

վերադառնում էր Պոլիս (այդ մասին հետաքրքիր մանրամասները տե՛ս Ա. - Դ ո. 2015, 424–429):

[39] Թ ո ւ մ ա ն յ ա ն. 1999, 299:

[40] Քննիչ հանձնաժողովի մասին մանրամասն տե՛ս Հայ ժողովրդի կորուստները Առաջին աշխարհամարտի տարիներին («Համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողովի» փաստաթղթերի և նյութերի ժողովածու), կազմող, առաջաբանի և ծանոթագրությունների հեղինակ՝ Ա. Զաքարյան, Երևան, 2005:

[41] Ալ. Կուլեբյակինի մասին մանրամասն տե՛ս З а к а р я н. 2003.

[42] Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 221, ց. 1, գ. 38, թ. 25: Թղթոն: Ձեռագիր:

գրած նամակում խնդրում է՝ զորավարի մոտ եղած նյութերը հնարավորինս շուտ ուղարկել իրեն: Վերջինս ռազմապատմական բաժնին տրամադրել է ինչպես կամավորական 3-րդ ջոկատի, այնպես էլ Բաքվի 1918 թ. պաշտպանությանը վերաբերող նյութերը: Այդ մասին տեղեկանում ենք Լ. Լիսիցյանի՝ 1920 թ. հունիսի 16-ին Վրաստանում Հայաստանի Հանրապետության դիվանական ներկայացուցիչ, գեներալ-մայոր Հ. Քիւմիւշյանին ուղղված զեկուցագրից, որտեղ հիշատակված թվով 13 նյութերի ցանկում 3-րդ ու 6-րդ համարների տակ նշված են «Համազասպի արխիվը» և «Գրառումներ Բաքվի պաշտպանությունում Համազասպի ջոկատի գործունեության մասին» խորագրերով փաստաթղթերը: Այդ զեկուցագրից նաև իմանում ենք, որ հավաքված որոշ նյութեր (350 մեքենագիր էջ) 1919 թ. ապրիլին Հայոց ազգային պատվիրակության անդամ Մ. Պապաջանյանի միջոցով ուղարկվել են Փարիզի հաշտության կոնֆերանսին[43]*:*

Ինչևէ, ռազմապատմական բաժնի քարտուղարի պաշտոնում Լ. Լիսիցյանը բոլորանվեր գործունեություն է ծավալում. դրա վկայությունը նաև այն է, որ հատուկ աշխատություն է պատրաստում՝ «Հայերի մասնակցությունը 1914–1918 թթ. համաշխարհային պատերազմին: Ռազմա-պատմական տեսություն: Նախնական ծանոթություն» վերնագրով[44]*:*

Հայտնի է, որ Առաջին Հանրապետության ստեղծումը բուռն ոգևորություն առաջ բերեց հայության շրջանում. յուրաքանչյուր ոք աշխատում էր ներածին չափով օգնել հայրենիքի հոգևոր և տնտեսական վերածննդի գործին[45]*: Վերջիններիս թվում էին նաև բաքվաբնակ մեծահարուստ ձեռնարկատերեր Մայիլյան եղբայրները՝ Եղիան, Դանիելը և Հովհաննեսը: Ժամանակին նրանք հայտնի էին իրենց ծավալած ազգօգուտ բարեգործությամբ: 1919 թ. սկզբներին իրենց նյութական միջոցներով եղբայրները ստեղծում են մի կազմակերպություն, որն անվանվում է «Մայիլյան եղբայրների գիտական-տնտեսական արշավախումբ»:*

Լ. Լիսիցյանն ակտիվորեն մասնակցում է կազմակերպության աշխատանքներին: Արշավախմբի պատվերով հոր՝ Ստ. Լիսիցյանի հետ մտադրվել էին ընդարձակ հետազոտություն պատրաստել՝ «Աչխարհագրության ազդեցությունը Հայաստանի պատմության, մշակույթի և երկրի ազգաբնակության հոգեբանության վրա» թեմայով: Ուսումնասիրության ընթացքի մասին 1919 թ. օգոստոսի 27-ին Սարիղամիշից հորը գրած նամակում Լևոնը նախ հետաքրքրվում է՝ «< …> Հայրիկ ջան, արդյոք, ինչպե՞ս է գնում աշխատությունդ», ապա՝ հայտնում. « … ես, առայժմ, իհարկե, ոչինչ գրեթե չեմ արել, բացի խորենացու ընթերցանությունից, որը ինձ վրա խոր տպավորություն է թողնում, առաջին անգամն է, որ կարդում եմ և որ առաջադույնն է մեր պատմագիրներից և հայրենասերներից, գրաբարը մի քիչ մոռացել եմ, բայց արագ կեր-

---

[43] *Ս տ ե փ ա ն յ ա ն. 2016, 23–25: Ռազմապատմական բաժնում հավաքված նյութերի հետագա ճակատագրի մասին տե՛ս Ս տ ե փ ա ն յ ա ն. 2016, 29–34:*

[44] *Տե՛ս* З а к а р я н. 2003, 233–236.

[45] *Մանրամասն տե՛ս* М и к а е л я н, М и р з о я н. 1990, 74–81.

պով վերականգնում եմ»[46]: Սեպտեմբերի 14-ին էլ դարձյալ Սարիղամիշից հետաքրքրվում է. «Հայրիկ ջան, աշխատանքդ արդյոք ի՞նչ դրության մեջ է: Ի՞նչ է անում «Մայիլյան արշավանքը». արդյոք կառավարչական է դառել, թե՞ ոչ»[47]:

Լ. Լիսիցյանն արշավախմբի ստեղծման, նրա առջև դրված խնդիրների ու նպատակների, կատարված աշխատանքի մասին գրել է ամփոփ տեղեկատվություն՝ «Տեսություն գործունեության «Մայիլյան եղբայրների գիտական-տնտեսական արշավանքի ի Հայաստան» առ 1-ն հունվարի 1920 թվի» վերնագրով[48]:

… 1919 թ. կեսերին տեղեկանալով Սարիղամիշին սպառնացող վտանգի մասին՝ Լ. Լիսիցյանը «ինքնաբերաբար հայտնում է Երևանի կառավարության իր ծառայելու պատրաստակամությունը»[49] և ՀՀ զինվորական նախարարի հրամանով ծառայության է անցնում Սարիղամիշում գտնվող հայկական «ամենալավ»՝ 4-րդ գնդում՝ որպես 3-րդ կամավորական վաշտի վաշտապետ. իր ենթակայության տակ ունեցել է 110 զինվոր ու մի սպա:

Ծնողներին գրած նամակներում Լ. Լիսիցյանը տեղեկացնում է իր զինվորական գործի, ծառայողական պարտականությունների ու հոգսերի, չքնաղ բնության, Ղարսի «հոյակապ բերդի», ժողովրդի հետ իր շփումների, երեկոները և գիշերները ընթերցանությամբ զբաղվելու մասին (« … ես ճարել եմ … բավականաչափ պատմական և կովկասագիտական գրքեր»), հետաքրքրվում է հոր գիտական աշխատանքներով և այլն: Այսպես. « … Ի միջի այլոց, իմ «Ներհակ զորակազմի կանոնագրքի» թարգմանությունս գործ է ածվում ամեն տեղ մեր զորքերում, ուր մտցված է հայերեն կոմանդոն»[50]:

1919 թ. սեպտեմբերի 14-ին Սարիղամիշից «Անգին հայրիկ և մայրիկ»-ին ուղղված նամակում Լ. Լիսիցյանը հայտնում է. «Բաչ-քեյում (Բաչ-գեղ) վերցրի մի հին, 260 տարվա հայ տան հատակագիծ և գրեցի նկատողություններս և նկարագրությունը: Երբ առիթ հանդիսանա, նույնը կանեմ քրդական, հունական և տաճկական տան համար: … < …> Հայրիկ, ես կմշակեմ և կուղարկեմ քեզ հայկական տան մասին իմ գրածս և հատակագծերը, ափսո՛ս, որ ձեռքիս տակ չունեմ Մեսրոպ եպ[իսկոպոս]ի «Հայկ[ական] գյուղացու տունը» և «Ազգագրական հանդեսի» նյութերը: Կարծես նաև այլ նյութեր հետաքրքիր կլինի համեմատել[ու] հայկ[ական] տունը քրդականի, տաճկա-թուրքականի և հունականի հետ: Խոշոր և նշանակալից տարբերություններ կան: Հայկականը ամենից մեծն է, կատարելագործվածը, հաստատունը»[51]:

Նույն նամակում Լ. Լիսիցյանը, խոսելով իր ապագա ծրագրերի մասին, գրում է. «< … > Զգիտեմ ինչպես է դասավորվելու վերջ ի վերջո մեր քաղաքական դրությունը: Համենայն դեպս ամեն գնով պիտի աշխատեմ, որ-

---

[46] *Կ ի ր ի մ յ ա ն. 1991, 152:*

[47] *Կ ի ր ի մ յ ա ն. 1991, 154:*

[48] *Մայիլյան եղբայրների գիտատնտեսական արշավախմբի մասին մանրամասն տե՛ս Զ ա ք ա ր յ ա ն. 2001, 277–285,* Г а з и я н. 2008, 244–251.

[49] *Տ է ր-Յ ա կ. 1922, 318:*

[50] *Կ ի ր ի մ յ ա ն. 1991, 152:*

[51] *Կ ի ր ի մ յ ա ն. 1991, 154–155:*

պետի եկող ամառվանից կամ աշնանից անցնեմ արտասահման, այնտեղ մնալու համար մի երկու տարի, ավարտելու և կատարելագործելու իմ ուսումնական պակասները ու ինքնուրույն մի գործ գլուխ բերելու: Իհարկե, խնդիրը ամենից առաջ նյութականի մեջն է, գուցե մեր կառավարությունը մյուսների նման, կամ մեր համալսարանը կամանդիրովկաներ տա կամ գուցե հաջողվի որևէ մի դիվանագիտական միսիա ստանձնել. մասնավոր որևէ աղբյուրներ հազիվ թե ճարվեն: Այդ մասին ես լուրջ մտածում եմ: … Կաշխատեմ, որ որքան կարելի է կարճ լինի իմ զինվորությունս: Իմ մնայուն և վերջնական նպատակն է՝ գիտնական աշխատանքը, և ինչ էլ որ լինի իմ պարապմունքս, փորձառությունս կամ կյանքի հասունությունը, ես նայում եմ նրան այդ գլխավոր նպատակի տեսակետից (ընդգծումը մերն է – Ա. Զ.)»[52]*:*

Սարիղամիշին սպառնացող անմիջական վտանգի վերացումից հետո Լ. Լիսիցյանին արձակուրդ է տրվում. նա վերադառնում է Թիֆլիս[53]*:*

1920 թ. ամռանը Լ. Լիսիցյանը կրկին կանչվում է Երևան՝ գլխավոր շտաբին կից ծառայության: «Մի երկու ամիս անց սկսվում է տաճիկների հարձակումը, Կարսի անկումը, … կառավարության տեղատվությունը … »[54]*: Երևանում Լ. Լիսիցյանը խոր հիասթափություն է ապրում, որի վկայությունը նոյեմբերի 2-ի՝ պատմաճանաչողական որոշակի արժեք ունեցող նամակի հետևյալ տողերն են. «Իմ անգին հայրիկ // Ապրում ենք մղձավանջի օրեր: Կարսը ընկավ ամենաանսպառնալիք կերպով մեկ օրվա թուլլ դիմադրությունից հետո: Բերդապահ զորքը չնկատեց, ինչպես թշնամին մտավ քաղաքի փողոցները: Այժմ կռիվները փոխվել են Ալեքսանդրապոլի շրջանը և շատ հավանական է, որ մեր կապը իրար հետ կտրված կլինի շուտով: Կառավարությունը և տիրող կուսակցությունը մեռցրել են ժողովրդի մեջ հերոսության ոգին և ամբոխների ինքնապաշտպանության ու տիրության կույր բնազդը, և նրանք չեն, որ պետք է կարողանան նորից զարթնեցնել: Կառավարության անդամների ու ղեկավար գործիչների բոլոր ղեկույցներն ու խորհրդակցությունները արվում են դռնփակ, «ֆրակցիաների» ժողովներում, իսկ ժողովուրդն ու հասարակությունը ապրում են ստահոդ կամ չարանենգ փսփսուկներով ու անտարբեր անցնում է պաշտոնական «կոչերի» ու «հաղորդագրությունների» մոտով: Չգիտեմ, պիտի զարթնի՞ արդյոք և ե՞րբ ժողովրդի առողջ ու կատաղի բնազդը: Մինչև այժմ մեր բանակը, որը չատ մեծ է իր բազմությամբ, փախուստի է դիմում ոչխարի հոտի նման: Ամենազարհուրելին այն է, որ երբ թշնամին քթի տակ է արդեն, մայրաքաղաքի կյանքն ունի իր նույն առօրյա տաղտկությունը և թմրությունը, որին խառնվել է միայն վախի զգացումը, բայց դարձյալ բավականին անտարբեր: Դատապարտված թմրություն, զառամած կենդանու հոգեբանություն, թե՛ կառավարության և թե՛ ժողովրդի մեջ: Իսկ մինչ այս եղել է զարմանալի անփութություն և թեթևամիտ խաղի վերաբերմունք ամեն ասպարեզում: Մենակ Իգդիրի (Դրոյի) ճակատում առայժմ կայուն է ու հաստատ: Ռոլանի փողն է հարկավոր, Գամբետայի ավյունն ու վարակիչ հավատը [խոսքը «Երգ Ռոլանդի մասին» ասքի և ֆրանսիացի քաղաքական ու պետական նշանավոր գործիչ Լեոն Գամբետայի (1838–1882) մասին է – Ա. Զ.]: Չկա՛: Ամենքս սպասում ենք օրեցօր, որ զարթնի, արտա-*

[52] Կ ի ր ի մ յ ա ն. 1991, 154–155:
[53] Տ է ր - Յ ա կ. 1922, 318:
[54] Տ է ր - Յ ա կ. 1922, 318:

հայտվի ժողովրդի ոգու արիությունն ու կատաղի բնազդը»[55]: Այնուհետև չարունակում է. «Մեր ոճրագործ, կարճամիտ, ժողովրդակործան, ունայն ու թայֆայական «կառավարության» քաղաքականության ամբողջ սնանկությունն ու դատարկությունը երևաց այժմ այս մեծ փորձության ժամին: Յուզբաշու նման ժողովրդին հրամայել, բայց ոչ՝ կազմակերպել, հավասարապես կրթել … Ամոթ և խայտառակություն»[56]: Բայցև՝ «Համենայն դեպս, այնքան արագ է իրերի ընթացքը, որ դժվար է ասել, ինչ կլինի վաղը: … Դե, հույսներս չկորցնենք, լինենք զգոնացկուն և հավատացող մինչև ամենավերջին վայրկյանը, ո՞վ գիտե, ինչպես և որտեղից կգա փրկությունը, մեկ ու կես միլիոն ժողովուրդ՝ սա մի ուժ է, որ պիտի էլեկտրականանա միայն թշնամուն կործանելու համար»[57]:

Հենց այդ օրերին էլ Լ. Լիսիցյանը խորապես համոզվում է, որ հայ ժողովրդի փրկության միակ ուղին ռուսական կողմնորոշումն է, Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումը:

Էջմիածնի կուլտուր-պատմական հաստատությունների վերակազմակերպիչը

Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո չլինելով կոմունիստական կուսակցության անդամ՝ Լ. Լիսիցյանը դառնում է նորաստեղծ իշխանության ջերմ պաշտպաններից մեկը: «Խորհրդային Իշխանությունը Լիսիցյանին ազատում է զինվորական ծառայությունից և նշանակում է Էջմիածնի կուլտուրական հիմնարկությունների (Թանգարան, Մատենադարան, Տպարան) կոմիսար[58]. այստեղ նա ցույց է տալիս պաշտամունքի հավասար սեր և հոգածություն բոլոր այն պատմական-կուլտուրական արժեքներին, որոնք ժամանակի ընթացքում հավաքված էին այդ հնավայրում: Իսկ երբ հիմնվում է Կուլտուր Պատմական Ինստիտուտը (1921 թ. փետրվարի 5-ին – Ա. Զ.), որ Լիսիցյանի վաղեմի փափագն էր եղել, նշանակվում է Ինստիտուտի կոլեգիայի

---

[55] *Կ ի ր ի մ յ ա ն. 1991, 156:*

[56] *Կ ի ր ի մ յ ա ն. 1991, 157–158:*

[57] *Կ ի ր ի մ յ ա ն. 1991, 158:*

[58] *1920 թ. դեկտեմբերի 20-ին ՀՍԽՀ լուսժողկոմատի կողմից Լ. Լիսիցյանին տրված մանդատում ասվում է. «Տրվում է ընկ. Լեւոն Լիսիցեանին առ այն, որ նա նշանակւում է Էջմիածնի նախկին վանական բոլոր կուլտուր-կրթական հիմնարկութիւնների կոմիսար:*

Ընկ. Կոմիսարը լիազօրւած է ստանալ նախկին տէրերից այդ հիմնարկութիւններն ու նրանց պատկանող շարժական եւ անշարժ գոյքերը՝ համաձայն ՀՍԽՀ Յեղկոմի 17 դեկտ[եմբերի] 1920 թ. դեկրետի և լուսժողկոմի նո. 1 եւ 3 հրամանների: Ընկ. Կոմիսարին վերապահւած է իրաւունք տեղական Յեղկոմի միջոցով բռնագրաւել պետականացւող հիմնարկութիւնների համար մասնաւոր անձանց մօտ գտնւած այն բոլոր հնութիւններն ու գեղարւեստական գործերը, որոնք ունեն համապետական նշանակութիւն:

Ընկ. Կոմիսարին իրաւունք է տրւում կազմակերպել իր հսկողութեան տակ գտնւած հիմնարկութիւններում ընթացիկ աշխատանքները:

Խնդրում եմ բոլոր խորհրդային և կոմունիստական հիմնարկութիւններին և կազմակերպութիւններին լայն աջակցութիւն ցոյց տալ ընկ. Կոմիսարին նրա վրայ դրած պարտականութիւնները կատարելու ժամանակ» (Ս ո ւ ք ի ա ս յ ա ն. 2013, 77–78):

անդամ և թանգարանի վարիչ»[59]: Այդ ինստիտուտի բազայի վրա էլ, ի դեպ, 1921 թ. մայիսի 26-ին կազմակերպվում է Էջմիածնի գիտական ինստիտուտը[60]:

Սկզբնական շրջանում Լ. Լիսիցյանը չի ունեցել ոչ գրասենյակ, ոչ էլ հատիքային աշխատողներ. բոլոր փաստաթղթերը նրա ձեռքով գրված զեկուցագրերի, հաշվետվությունների, նամակների պատճեններ են: Դրանք վկայում են, թե նա ինչ ջանքեր է թափել՝ ի մի բերելու, հավաքելու համազգային նշանակություն ունեցող հոգևոր գանձերը: Հատուկ չեշեռենք, որ այդ պաշտոնում Լ. Լիսիցյանի նշանակումը հիմնականում պայմանավորված էր նրա գիտական ու գիտավորական հարուստ գիտելիքներով ու փորձառությամբ, նման աշխատանքի համար շատ կարևոր անձնական որակներով. անսահման հայրենասիրություն, Հայաստանի մշակույթի նկատմամբ նվիրվածություն, հանձնարարված գործի համար պատասխանատվության մեծ զգացում, աշխատանքը կազմակերպելու և իրականացնելու կարողություն, մարդկանց նկատմամբ զգայուն վերաբերմունք:

Արխիվային վավերագրերը լուսաբանում են սիռում Լ. Լիսիցյանի լարված աշխատանքի վրա. դեկտեմբերի 21-ին գալով Էջմիածին՝ «... Մայր Աթոռի վանական խորհրդից, Սինոդից, Դիվանից, չուրջ երկու տասնյակ հոգևորականներից պահանջեց իրեն հանձնել Հայաստանի հեղկոմի դեկրետի և Լուսավորության ժողկոմատի հրամանների հիման վրա պետականացվող հիմնարկներն ու նրանց պատկանող գույքը»[61]:

«Լ. Լիսիցյանի կարգադրությամբ՝ մատենադարանի կարիքների համար Մայր Աթոռից և նրա միաբաններից առգրավվեց մեծաքանակ գույք (Սինոդի մեծ և միջակ սեղանները, գրքերի պահարան, թանաքամաններ, կարկին, գրասեղան, դահլիճի սեղանը, երկու մեծ գորգեր, մեծ համրիչ, երեք երկաթե վառարան, տախտակներ՝ մատենադարանի դարակները պատրաստելու համար, լվացարաններ, դույլեր, ինքնաեռներ, լուսանկարչական ապարատ, ապակիներ, թուղթ և այլն)»[62]:

Դեկտեմբերի 23-ին լուսժողկոմ Աչոտ Հովհաննիսյանին ուղղված զեկուցագրում մանրամասն տեղեկացնելով վանքապատկան գույքի, ունեցվածքի պետականացման ուղղությամբ կատարված առաջին քայլերի մասին՝ Լ. Լիսիցյանը գրում էր, որ «կարևոր է համարում պետականացված մատենադարանն ու թանգարանը «մշտական ու կարող աշխատակիցների կազմով» ապահովելը: Նա առաջարկում է նաև Էջմիածին ուղարկել ճարտարապետ Թորոս Թորամանյանին՝ շրջանի ճարտարապետական հուշարձանների պահպանության պատասխանատու աշխատանքը ղեկավարելու համար[63]:

---

[59] *Տէր-Յակ. 1922, 318–319:*

[60] *Ինստիտուտի հիմնադրման և գործունեության պատմությունը հանգամանորեն տե՛ս Տէր-Մինասեան. 1922, 320–327, նաև կանոնադրությունը՝ 327–329:*

[61] *Սուքիասյան. 2014, 97:*

[62] *Սուքիասյան. 2014, 97–98:*

[63] *Սուքիասյան. 2014, 97: Զեկուցագիրը տե՛ս Սուքիասեան. 2013, 80–82: Լ. Լիսիցյանը Թ. Թորամանյանի առնչությամբ մանավորապես գրում է. «Ինդրում եմ նաև Ձեր կարգադրությունը առաջարկելու ճարտարապետ Թ. Թորամանեանին (այժմ Երևանումն է) անցնել Էջմիածին և ստանձնել այստեղի և շրջանի ճարտարապետական յիշատակարանների վերահսկողությունը: Այդ նպատակայարմար է նաև այն պատճառով, որ նա զբաղւած է այժմ Զուարթնոցի մօնոգրաֆիկ*

ՀՍհՀ լուսժողկոմ Աչ. Հովհաննիսյանը 1920 թ. դեկտեմբերի 28-ին նամակով Լ. Լիսիցյանին տեղեկացնում է Կուլտուր-պատմական ինստիտուտի գործերն իր հաջորդին՝ գրական-հասարակական գործիչ, մանկավարժ, սոցիալ-դեմոկրատ Լևոն Սարգսյանին, փոխանցելու և Երևանի պետհամալսարանում դասախոսական աշխատանքի անցնելու մասին: Նամակում, մասնավորապես, ասվում է. «Ես ենթադրում եմ, որ Էջմիածնում Ձեր գործունեությունը ժամանակավոր բնույթ է կրելու: … Ձեր աշխատակցությունը կարևոր եմ համարում ուրիշ ասպարեզներում՝ ավելի գիտական, մասնագիտական հարցերում: Դուք արդեն իսկ մտնում եք Երևանի ժող. համալսարանի դասախոսների ցուցակի մեջ, այդտեղ դուք պիտի դասախոսեք սոցիալ-տնտեսական աշխարհայացք (աշխարհագրություն– Ա. Զ.) և ուրիշ Ձեզ հետաքրքրող հարցերից: Ենթադրում եմ, որ դուք պետք է մտնեք նաև վերակազմվելիք հնության պահպանության կոմիտեի մեջ և այլն: Սիրում եմ հավատալ, թե իմ այդ ենթադրությունները համապատասխանում են Ձեր հակումներին, և դուք չպետք է պլանաք պահանջված վայրկյանին անմիջապես աջակցություն ցույց տալ (ինձ– Ա. Զ.) ժողովրդական լուս. գործերում»[64]*:*

Նշենք. որպես Էջմիածնի կուլտուր-պատմական ինստիտուտի կոմիսար Լ. Լիսիցյանը պաշտոնը հանձնելիս մանրամասն հաշվետվություն է ներկայացնում 1920 թ. դեկտեմբերի 20-ից 1921 թ. փետրվարի 1-ը ընկած ժամանակահատվածում կատարած աշխատանքի մասին, հանգամանորեն անդրադառնում իր իրավասության տակ գտնվող մատենադարանին, թանգարանին, տպարանին, ճեմարանին՝ հարակից բոլոր շինություններով, Զվարթնոցի ավերակներին՝ հարակից շինություններով, «Օբսերվատորիա» կոչված կիսավարտ շենքին և էլեկտրակայանին՝ ներկայացնելով յուրաքանչյուրի վիճակը[65]*:*

Լ. Լիսիցյանի ողբերգական մահը

Եվ, սակայն, Լ. Լիսիցյանին վիճակված չէր շարունակել իր բազմաբեղուն գործունեությունը. ընդամենը 29 տարեկան հասակում ողբերգորեն զոհվում է 1921 թ. փետրվարյան հակաբոլշևիկյան ապստամբության օրերին՝ Էջմիածնում: «Փետրվարյան հեղաշրջման միջոցին Ինստիտուտի հիմնարկությունները պաշտպանելու համար գինված (Լ. Լիսիցյանը– Ա. Զ.) դուրս է գալիս և նույն օրը բանտարկվում է. իսկ հաջորդ օրը, փետ<րվարի> 18-ի գիշերը մի հարբած խումբ, հավանորեն մութ թելադրանքներից մղված, հարձակվում է բանտի վրա և մի ուրիշ բանտարկվածի հետ միասին բռնությամբ դուրս են բերում բանտից և վերջ ղնում նրա երիտասարդ կյանքին»,[66]*– գրում է Ս. Տեր-Հակոբյանը:*

Լ. Լիսիցյանի հետ կատարվածի մասին Հովհ. Թումանյանը 1921 թ. ապրիլի 8-ին Երևանից Թիֆլիս՝ զավակներին գրած նամակում հայտնում է. «Զգիտեմ, արդյոք տեղեկություն է հասել Թիֆլիս խեղճ Լևոնի – Լիսիցյանի սպանության մասին, թե չէ: Ձեք կարող երևակայել, թե ինչպես չանթահա-

---

ուսումնասիրությամբ (Թ. Թորամանյանի «Զվարթնոց» աշխատությունը լույս է տեսել 1978 թ. – Ա. Զ.)». Սուքիասեան. 2013, 81–82:

[64] *Էվոյան. 1973, 191: Համմա. Սուքիասեան. 2013, 85:*

[65] *Էվոյան. 1973, 191–194: Համմա. Սուքիասեան. 2013, 89–94:*

[66] *Տէր-Յակ. 1922, 319:*

րեց ինձ նրա սպանության պատմությունը: Փետրվարի 18-ին, հեղաշրջումի օրը, հրացան է առել, դուրս եկել փողոց (Էջմիածնում): Հրացան է արձակել մի սաուննցու թևը վիրավորել ու փախել մտել Հովհ. Հովհաննիսյանի (խոսքը Էջմիածնի գիմնազիայի վերատեսուչ, Հայաստանի խորհրդայնացումից հետո Վաղարշապատի գավառի լուսավորության բաժնի վարիչ, անվանի բանաստեղծ և մանկավարժ Հովհ. Հովհաննիսյանի մասին է – Ա. Զ.) տունը: Եկել են էնտեղից տարել բանտարկել, իսկ մյուս օրը բանտից հանել ու տարել նոր վեհարանի առաջ սպանել:

Խեղճ Ստեփան, խեղճ տիկին Կատարինե: Էլ նրանք ինչպես են ապրելու: Խեղճ Լևոն, էնքան ջահել, էնքան պատրաստված ... (ընդգծումը մերն է – Ա. Զ.)»[67]:

Առնելով Լ. Լիսիցյանի ողբերգական մահվան բոթը՝ 1921 թ. սեպտեմբերի 14-ին Ավետիք Իսահակյանն էլ Ազոյից Վարդգես Ահարոնյանին գրել է. «Լսեցի, որ Լիսիցյանի տղան (Լևոնը – Ա. Զ.) սպանված է Երևանում (Էջմիածնում – Ա. Զ.), շա՜տ ցավեցի, սիրուն տղա էր և պատրաստված (ընդգծումը մերն է – Ա. Զ.). ափսո՜ս, որ երիտասարդ ուժերը գոհ են գնում անգութ հանգամանքներին. հեղափոխական Մոլոխը շա՜տ զուր զոհեր է տանում. Աստված իմ, ե՞րբ պիտի վերջանա այս արյան բաղանիքը»[68]:

Էջմիածնի գիտական ինստիտուտի «Բանբեր»-ում՝ «Հայ գիտության կրաստներից (1914–1921)» բաժնում, Ս. Տեր-Հակոբյանը «Լևոն Լիսիցյան» վերնագրով հիշատակի խոսքում գրել է. «Եղեռնորեն կյանքից խլված ազնիվ երիտասարդի բոլոր իղձերն ու աշխատանքները անկատար մնացին, որի մահը անմոռաց վիշտ զարճավ բոլորի համար՝ որոնց շրջանում երբևիցե եղել է Լևոն Լիսիցյանը, որ իր վերին աստիճանի կիրթ, բարեհամբույր, շիտակ բնավորությամբ միշտ սեր և հարգանք է գրավել, իսկ իբրև հասարակական աշխատավոր նա միշտ ցույց է տվել կատարյալ ուղղամտություն, լայն կարողություններ և աշխատասիրություն: Նա դեռ նոր էր իջել աշխատանքի ասպարեզը, բայց արդեն սկսել էր ցույց տալ ապագա փայլուն և արդյունալից մի գործունեության լավագույն նախանշանները: Լիսիցյանի կոչումը գիտության ասպարեզում գործելն էր, որի այս բուռն հակումը չկարեցրին պատերազմական տարիների և զինվորական տարիքի արգելքները: ... Հավերժ հիշատակ ազնիվ նահատակի աճյունին»[69]:

Լ. Լիսիցյանի անժամանակ ու ողբերգական մահը խորապես ցնցել է նաև նրա հետ դեռևս պատերազմի տարիներից մտերիմ, այնուհետև «Համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողովի» ռազմապատմական բաժնում և Մայիլյան եղբայրների գիտատնտեսական արշավախմբի կազմում համատեղ գործունեություն ծավալած, հայ ժողովրդին բոլորանվեր ծառայած ռուս գեներալ-բանաստեղծ Ալեքսանդր Կուլեբյակինին: Իր երիտասարդ ընկերոջ ու բարեկամի մահվան տարելիցին նա գրում է ստորև բերվող զգայացունց բանաստեղծությունը և ընծայագրով նվիրում Լ. Լիսիցյանի կնոջը.

[67] *Թ ու մ ա ն յ ա ն. 1999, 380–381:*
[68] *Ի ս ա հ ա կ յ ա ն. 2020, 372:*
[69] *Տ է ր - Յ ա կ. 1922, 319:*

ПАМЯТИ ЛЕВОНА ЛИСИЦИАНА
(19/II 1921 г.)

В годину бед, когда вся жизнь – ничто,
Одна есть ценность – дух неистребимый.
Жив человек, – толпа проходит мимо,
Один, быть может, спросит:– это кто?–

Работник сильный скромен у станка,
Но за него горда его работа.
Знаток посмотрит, скажет:– сделал кто-то,
Но видимо способная рука.–

А он попал под зубья колеса
И превращен в кровавый слепок мяса:
Он не предвидел гибельного часа,
Когда взмахнет жестокая коса.

Но нет! ты жив: твой подвиг налицо.
Ты жив, герой! я в смерть твою не верю.
Ты заплатил собою Року–зверю,
Но от тебя осталось деревцо.

Ты из зерна на вспаханном пути
Вспоил росток его грядущей жизни.
Его плоды оценятся в отчизне,
И ты ее за кровь твою ... прости!!...

Елене Аветовне Лисициан в знак памяти и глубокого почитания дорогого имени погибшего моего молодого друга: да будет живо оно. А. Кулебякин. 23/II 1922 Тифлис[70].

Վերոգրյալներին հավելենք. տարիներ անց ռուս նշանավոր դրող-հրապարակախոս, կինոդրամատուրգ Կիմ Բակչին անդրադարձել է Լ. Լիսիցյանի մահվան հանգամանքներին: Օգտագործելով էջմիածնի շրջանային Զեկայի պարետի հիշողությունները (վերջինս դրանք գրել է Նազելի Լիսիցյանի խնդրանքով՝ դեպքերից, հավանաբար, 50 տարի անց)՝ ներկայացրել է Լ. Լիսիցյանի կյանքը վերջին ամիսներին: Հուշերի հեղինակը եղել է Լևոնի կողքին նաև բանտում՝ միևնույն խցում: Ըստ հուշագրի, որպես խորհրդային իշխանության ներկայացուցչի՝ չատերի թվում իր հետ Լևոնին էլ են ձերբակալել, բանտ նետել, պատժախուց նստեցրել: Օրեր անց՝ առավոտյան,

[70] *Ղ ա ր ի բ ջ ա ն յ ա ն, Վ ա ր դ ա ն յ ա ն. 1993, 58,* З а к а р я н. 2003, 198. *Ի դեպ, Հայաստանի ազգային արխիվում ժամանակին հայտնաբերել ենք այս բանաստեղծության երկրորդ օրինակը՝ ընծայագրով Լ. Լիսիցյանի ծնողներին.* «Отцу и матери на память о любви моей к их безвременно павшему дорогому сыну» (З а к а р я н. 2003, 198).

բանտի բակում քաղաքային ամբոխը հարձակվել է նրա վրա, գետնին տապալել, ապա ղաչունահարելով-դանակահարելով՝ սպանել[71]*:*

… Իբրև վերը շարադրված նյութի ամփոփում՝ մեջբերենք Լ. Լիսիցյանի քրոջ՝ Նազելիի բնութագրական խոսքը եղբոր մասին. «Լևոնը տաքարյուն և բռնկուն էր, բայց արագ նահանջում էր: Իր մարդամոտությամբ և սրամտությամբ շնորհիվ շրջապատում վայելում էր սեր ու հարգանք: Նա բարեկազմ էր, միջին հասակից բարձր, ուներ չազանակագույն աչքեր, կանոնավոր դիմագծեր, կանանց նա շատ էր դուր գալիս: Լևոնը հիանալի ջութակ էր նվագում, չէ որ ավարտել էր Թիֆլիսի կոնսերվատորիան: Մի ժամանակ բոլորը կարծում էին, որ նա ջութակահար կդառնա, և թեպետ հետագայում գիտական ուսումնասիրությունների նկատմամբ ձգտումը նրա մեջ գերիշխեց երաժշտության հանդեպ նկրտումից, նա միշտ շարունակում էր ջութակ նվագել»[72]*:*

Եզրակացություն

Լ. Լիսիցյանի կարճատև, բայց բովանդակալից, իրաղարձություններով լեցուն կյանքն ու գործունեությունը կարելի է բաժանել հետևյալ շրջափուլերի. ա) ուսանողական տարիներ (Մյունխենի, Մոսկվայի, Վիեննայի համալսարանները), որի ժամանակ սկզբնավորվել է նրա գիտական գործունեությունը. նա եղել է ավստրիացի նշանավոր պատմաբան ու ճարտարապետ, պրոֆ. Յոզեֆ Ստրժիգովսկու՝ հայկական մշակույթի հարցերով խորհրդատուն, բ) ներդրումը 1913 թ. սեպտեմբերի 14-ից հոկտեմբերի 4-ը Յո. Ստրժիգովսկու գլխավորությամբ Հայաստան այցելած գիտական արշավախմբի աշխատանքներին, գ) 1914–1915 թթ. մասնակցությունը հայկական կամավորական խմբերի գործողություններին և ազգօգուտ գործունեությունը Հայ գաղթականների եղբայրական օգնության կոմիտեի Բայազետի լիազոր-ներկայացուցչի պաշտոնում, դ) 1916 թվական. պետրոգրադյան շրջան, ե) գործունեությունը Հայաստանի առաջին Հանրապետության շրջանում. 1918 թ. հունիսի 13-ից նոյեմբերի 1-ը Կ. Պոլսում Հայաստանի Հանրապետության պատ-

---

[71] *Լ. Լիսիցյանի կյանքի վերջին շրջանի՝ հոգևորականների նյութած դավերի, քաղաքի բնակիչների շրջանում նրա գործունեության և Մոսկվայի գործակալ լինելու մասին տարածված ստահոդ լուրերի, բանտում դաշնակցության կենտկոմի լիազոր-ներկայացուցչի՝ Հայրենիքի փրկության կոմիտեի նախագահ Սիմոն Վրացյանի անունից կատարած առաջարկի մերժման և հետաքրքիր այլ մանրամասների մասին տե՛ս* Бакши. 2002; Гарибджанян. 1972. *Ա-Դո-ն գրում է. «Հայաստանի խորհրդայնացումից հետո նա (Լ. Լիսիցյանը – Ա. Զ.) հաստատվեց Էջմիածնում և գործունեության ասպարեզ ընտրեց Էջմիածնի Հարուստ մատենադարանը, որտեղ վանքի մի երկու կրոնամոլ սևագլուխների դրդմամբ իբրև Էջմիածնի սրբությունները պղծողի 1921 թ. փետրվարի 18-ին զոհ գնաց խելառ ավիններից» (Ա-Դ ո. 2015, 427):*

Հավելենք. Կ. Բակշին իր «Из монастыря – о любви» *վերնագրով էսսեների ժողովածուում՝ «Նրան պարզապես սրախողխող արեցին» նյութում, գրում է. «Լևոնն այն շատերի թվում էր, ով հավատում էր, որ բոլշևիկները նոր կյանք կբերեն իր Հայրենիքին: Եվ չհրաժարվեց իր համոզմունքներից նույնիսկ մահվան սպառնալիքի տակ: Եվ դրանով իր դեմ ատելության նոպա, դաժան մահ գրգռեց այն անողոք ժամանակում»* (Бакши. 2000, 140)*:*

[72] Лисициан. 2002, 8.

վիրակոթյան քարտուղար և դիվանագիտական ցրիչ, այնուհետև դեկտեմբերից 1920 թ. բոլորանվեր աշխատանքը նախ Հովհ. Թումանյանի գլխավորած «Համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողովի» ռազմապատմական բաժնում որպես քարտուղար, ապա Մայիլյան եղբայրների կազմակերպած գիտատնտեսական արշավախմբում, զ) գինվորական ծառայությունը 1919 թ. կեսերից Սարիղամիշում և 1920 թ. ամռանից՝ Երևանում՝ գլխավոր շտաբին կից, է) ներդրումը էջմիածնի կուլտուրապատմական հաստատությունների վերակազմակերպման գործում:

Ի դեմս վաղամեռիկ Լ. Լիսիցյանի՝ հայ ժողովուրդը կորցրեց, ըստ ամենայնի, պատրաստված, տաղանդավոր գիտնականի, որի համար Հայաստանի և նրա մշակույթի նկատմամբ անսահման սերն ու նվիրվածությունը եղավ կարճատև կյանքի իմաստը:

Անուշավան Զաքարյան – բ. գ. դ., ՊԲՀ-ի գլխավոր խմբագիր, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի ավագ գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ XX դարասկզբի առաջին քառորդի հայ իրականության հարցեր, Հայկական հարց և Հայոց ցեղասպանություն, հայ-ռուս պատմագրական, մշակութային կապեր: Հեղինակ է 21 մենագրության ու ժողովածուի, ավելի քան 250 հոդվածների և հրապարակումների: patmhandes@rambler.ru

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ա - Դո. 2015, Իմ հիշողությունները / Առաջաբանը և ծանոթագրությունները՝ Ռ. Գասպարյանի և Ռ. Սահակյանի, Երևան, «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ, 507 էջ:

Ասատրյան Ա. 2021, Հայ առաջին խոշոր ջութակահարը.– «Գիտություն», № 9, սեպտեմբեր, № 10, հոկտեմբեր:

Ասատրյան Ա. 2022, Հովհաննես Նալբանդյան. հայ առաջին խոշոր ջութակահարը. – ՊԲՀ, № 1, էջ 26–48:

Ավագյան Գ. Գ. 2009, Միքայել Պապաջանյանի հասարակական-քաղաքական գործունեությունը. – «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պ. գ. թ. գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 21 էջ:

Գարեգին եպիսկոպոս. 1922, Հայ ճարտարապետութիւնը Ստչիգովսկու նոր աշխատութեամբ.– «Բանբեր էջմիածնի գիտական ինստիտուտի», գիրք Ա. եւ Բ., 1921–1922, էջմիածին, Լուսժողկոմատի տպարան Վաղարշապատում, էջ 282–294:

Զաքարյան Ա. 2001, Լևոն Լիսիցյանը Մայիլյան եղբայրների գիտատնտեսական արշավախմբի մասին. – ՊԲՀ, № 3, էջ 277–285:

Էվոյան Կ. 1973, Փաստաթղթեր Լևոն Լիսիցյանի մասին. – «Բանբեր Հայաստանի արխիվների» (Երևան), № 1, էջ 183–196:

Թերլեմեզյան Ռ. 1936, Նիկողայոս Տիգրանյան (ծննդյան 80-ամյակի առթիվ), Երևան, Պետհրատ, 23 էջ:

Թորամանյան Թ. 2014, Նամականի, Կազմել և ծանոթագրությունները պատրաստել է Նազիկ Թորամանյանը, Երևան, «Գրաբեր» ՍՊԸ, 532 էջ:

Թումանյան Հովհ. 1999, Երկերի լիակատար ժողովածու: Տաս հատորով, հ. 10, Նամակներ 1905–1922, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 771 էջ:

Իսահակյան Ավ. 2020, Երկերի լիակատար ժողովածու տասնչորս հատորով, հ. 13, Նամակներ (1889–1923), Երևան, «Էդիթ Պրինտ» հրատ., 720 էջ:

Լիսիցեան Լ. 1922, Հայաստանը ֆիզիքական տեսակետով. – «Բանբեր էջմիածնի գիտական ինստիտուտի», գիրք Ա. և Բ., 1921–1922, էջմիածին, Լուսժողկոմատի տպարան Վաղարշապատում, էջ 234–243:

Լիսիցյան Լ. 1972 [Գեղամա լեռների ժայռապատկերներից], Գերմաներենից թարգմանեց Գ. Ա. Տիրացյանը. – ՀԽՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», № 1, էջ 51–57:

Կիրիմյան Ա. Մ. 1991, Լևոն Լիսիցյանի նամակները իր ծնողներին (1915–1920 թթ.) [Ծննդյան 100-ամյակին]. – «Բանբեր Հայաստանի արխիվների» (Երևան), № 3, էջ 145–159:

Հակոբյան Մ. 1964, Հայ մտավորականի ուղին. – «Լենինյան ուղիով» (Երևան), № 1, էջ 96–101:

Հայ ժողովրդի կորուստները Առաջին աշխարհամարտի տարիներին («Համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողովի» փաստաթղթերի և նյութերի ժողովածու), Կազմող, առաջաբանի և ծանոթագրությունների հեղինակ՝ Ա. Զաքարյան, 2005, Երևան, ՀՀ ԳԱԱ հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 239 էջ:

Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 221, g. 1, գ. 38, թ. 25: Թողոն: Ձեռագիր:

«Հայկական համառոտ հանրագիտարան», հ. 4, Երևան, Հայկական հանրագիտարան. հրատարակչություն, 2003, էջ 155:

«Հայկական սովետական հանրագիտարան», հ. 9, Երևան, Հայկական սովետական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն, 1983, էջ 130:

«Հանրագիտական բառարան», հ. 2, Երևան, Հայկական հանրագիտարան. հրատարակչություն, 2018, էջ 604:

Հարությունյան Վ. Մ. 1973, Գիտական մի համագործակցության մասին. – ՊԲՀ, № 2, էջ 89–104:

Ղարիբջանյան Գ. Բ., Վարդանյան Լ. Մ. 1993, Լևոն Լիսիցյան (1892–1992). – ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», № 1, էջ 53–58:

Շանթ Լ. 2017, Երկերի ժողովածու, հ. IX, Նամակներ և բացիկներ, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 712 էջ:

«Ով ով է. հայեր: Կենսագրական հանրագիտարան», հ. 1, Երևան, Հայկական հանրագիտարան. հրատարակչություն, 2005, էջ 482:

«Ով ով է. հայեր: Կենսագրական հանրագիտարան», հ. 2, Երևան, Հայկական հանրագիտարան. հրատարակչություն, 2007, էջ 305:

Ստեփանյան Գ. 2016, Համազասպ Սրվանձտյանց, Երևան, «Լուսակն» հրատ., 1088 էջ:

Սուքիասեան Հ. 2013, Վավերագրեր Մայր Աթոռի կրթամշակութային հաստատությունների պետականացման և կուլտուր-պատմական ինստիտուտի հիմնադրման մասին. – «Էջմիածին» (Էջմիածին), է, հուլիս, էջ 77–78:

Սուքիասյան Հ. Կ. 2014, Եկեղեցու սեփականության բռնագրավումը Խորհրդային Հայաստանում (1920 թ. դեկտեմբեր – 1921 թ. փետրվար). – ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», № 1, էջ 95–102:

Սուքիասյան Հ. 2015, Կոստանդնուպոլսում Հայաստանի Հանրապետության պատվիրակության գործունեության լուսաբանումը պատվիրակների օրագրություններում (1918 թ. հունիս – նոյեմբեր). – Միջազգային գիտաժողով «Առաջին աշխարհամարտը և հայ ժողովուրդը (պատմության և արդիական խնդիրներ)», 1–2 հոկտեմբերի 2014 թ.: Զեկուցումների ժողովածու, Երևան, էջ 193–203:

Վարդանյան Խ. Գ. 1992, Լևոն Շանթի նամակները Ստ. Լիսիցյանին. – «Բանբեր Երևանի համալսարանի», № 1, էջ 121–147, № 3, էջ 121–135:

Տէր-Մինասեան Ե. 1922, Տեղեկագիր էջմիածնի գիտական ինստիտուտի (5 փետրուարի 1921– 1 յունիսի 1922).– «Բանբեր էջմիածնի գիտական ինստիտուտի», գիրք Ա. եւ Բ., 1921–1922, էջմիածին, Լուսժողկոմատի տպարան Վաղարշապատում, էջ 320–329:

Տէր-Յակ. Ս. 1922, Լեւոն Լիսիցեան. – «Բանբեր էջմիածնի գիտական ինստիտուտի», գիրք Ա. եւ Բ., 1921–1922, էջմիածին, Լուսժողկոմատի տպարան Վաղարշապատում, էջ 317–319:

Տիգրանյան Ն. 1981, Հոդվածներ, հուշեր, նամակներ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 197 էջ:

Арутюнян В. М. 1997, Й. Стржиговский об армянской архитектуре. – ИФЖ, № 1, с. 93–102.

Бакши К. 2000, Из монастыря – о любви / Сб. эссе. Ереван – Москва, Изд. Арк. Вартаняна, 288 с.

Бакши К. О Левоне Лисициане. – «Новое время» (Ереван), 30. I. 2002.

Газиян А. 2008, Интересный документ об экспедиции братьев Маилянов (1919 г.). – ИФЖ, № 2, с. 244–251.

Гарибджанян Г. Во имя будущего. К 80-летию со дня рождения Л. С. Лисициана. – «Коммунист» (Ереван), 17. II. 1972.

Закарян А. 2003, Александр Кулебякин и Армения. Ереван, Авторское изд., 238 с.

Лисициан Н. Неистовый исследователь и патриот. К 110-летию со дня рождения Левона Лисициана. – «Ноев ковчег» (М.), № 1, февраль, 2002, с. 8.

Мазманян Р. 1978, Никогайос Тигранян. Очерк жизни и творчества (Ред. В. А. Габриелян). Ереван, «Советакан грох», 79 с., 4 с. илл.

Микаелян В. А., Мирзоян С. С. 1990, Участие армян в экономической жизни Восточного Закавказья (вторая половина XIX – первые десятилетия XX вв.). – «Вестник общественных наук» АН АрмССР, № 2, с. 74–81.

Стржиговский Й. 2011, Архитектура армян и Европа, т. 1, кн. первая (пер. П. Амбургера), ред.: М. Асратян, А. Агасян. Ереван, Изд-во «Гитутюн» НАН РА, 364 с. с илл.

Стржиговский Й. 2018, Архитектура армян и Европа, т. 1, кн. вторая (пер. П. Амбургера), ред.: М. Асратян, А. Агасян. Ереван, Изд-во «Гитутюн» НАН РА, 399 с. с илл.

ТАЛАНТЛИВЫЙ СЫН ЛИСИЦИАНОВ: ЛЕВОН ЛИСИЦИАН

АНУШАВАН ЗАКАРЯН

Р е з ю м е

Ключевые слова: Лисицианы, Левон Лисициан, Тифлис, Москва, Вена, Й. Стрижиговский, Т. Тораманян, добровольческие дружины, Петроград, Н. Марр, Л. Ауэр, Константинополь, Ереван, Сарикамыш, Эчмиадзин, Ов. Туманян, Ав. Исаакян, Ал. Кулебякин, К. Бахши.

9 января 2022 г. исполнилось 130 лет со дня рождения талантливого сына выдающихся представителей армянской действительности конца XIX –

начала XX в. Лисицианов – этнографа, филолога, историка и общественного деятеля Левона Лисициана.

Короткую, но содержательную, полную событиями жизнь и деятельность Л. Лисициана можно разделить на следующие этапы: а) студенческие годы (университеты Мюнхена, Москвы, Вены), в течение которых зарождалась его научная деятельность: он был консультантом по вопросам армянской культуры выдающегося австрийского историка и архитектора проф. Йозефа Стрижиговского; б) вклад в возглавляемую Й. Стрижиговским научную экспедицию, посетившую Армению с 14 сентября по 4 октября 1913 г.; в) участие в действиях армянских добровольческих дружин в 1914–1915 гг. и полезная для нации деятельность на должности полномочного представителя в Баязете Комитета братской помощи армянским беженцам; г) 1916 год: петроградский период; д) деятельность в Первой Республике Армении: с 13 июня по 1 ноября 1918 г. – в качестве секретаря и дипломатического курьера делегации Республики Армения в Константинополе, затем, с декабря 1918 г. по 1920 г., активная работа в качестве секретаря военно-исторического отдела возглавляемого Ов. Туманяном «Бюро по установлению потерь армян от Всемирной войны» и в научно-экономической экспедиции, организованной братьями Маилянами; е) военная служба в Сарикамыше с середины 1919 г. и в Ереване, при Главном штабе – с лета 1920 г.; ж) вклад в реорганизацию культурно-исторических учреждений Эчмиадзина.

Преданный Родине ученый и гражданин прожил недолгую жизнь: погиб в 1921 г. в Эчмиадзине, в возрасте 29 лет, во время известных февральских событий. В лице Л. Лисициана армянский народ потерял талантливого, высокообразованного интеллигента, для которого любовь и преданность Армении и ее культуре стали смыслом его короткой жизни.

Анушаван Закарян – д. филол. н., главный редактор ИФЖ, старший научный сотрудник отдела искусства армянской Диаспоры и международных связей Института искусств НАН РА. Научные интересы: вопросы первой четверти армянской действительности XX века, Армянский вопрос и Геноцид армян, армяно-русские историко-литературные и культурные связи. Автор 21 монографии и сборников, более 250 статей и публикаций. patmhandes@rambler.ru

Պատմաբանասիրական հանդես 2022 № 1 Историко-филологический журнал

THE TALENTED SON OF THE LISITSYANS: LEVON LISITSYAN

ANUSHAVAN ZAKARYAN

Summary

Key words: the Lisitsyans, Levon Lisitsyan, Tiflis, Moscow, Vienna, J. Strzygowski, T. Toramanyan, volunteer squads, Petrograd, N. Marr, L. Auer, Constantinople, Yerevan, Sarikamish, Etchmiadzin, Hov. Tumanyan, Av. Isahakyan, Al. Kulebyakin, K. Bakhshi.

January 9, 2022 marks the 130th anniversary of the birth of Levon Lisitsyan – an ethnographer, philologist, historian and public figure, the talented son of the Lisitsyans – prominent representatives of the Armenian reality of the late 19th and early 20th cc.

The short but meaningful, eventful life and activities of L. Lisitsyan can be divided into the following stages: a) student years (universities of Munich, Moscow, Vienna), during which his scientific activity was born: he was the advisor in Armenian culture to the outstanding Austrian professor of history and architecture Josef Strzygowski; b) contribution to the scientific expedition headed by J. Strzygowski, who visited Armenia from September 14 – October 4, 1913; c) participation in the actions of the Armenian volunteer squads in 1914–1915 and useful activities for the nation in the position of plenipotentiary representative in Bayazet of the Committee of Fraternal Assistance to Armenian Refugees; d) 1916: Petrograd period; e) activities in the period of World War I: from June 13 to November 1, 1918 as a secretary and diplomatic courier of the delegation of the Republic of Armenia in Constantinople, thereupon from December 1918 to 1920, active work as secretary of the military history department of the "Bureau for Establishing the Losses of Armenians from the World War" headed by Hov. Tumanyan and in the scientific and economic expedition organized by the Mailyan brothers; f) military service in Sarikamish from the middle of 1919 and in Yerevan, at the General Staff – from the summer of 1920; g) contribution to the reorganization of the cultural and historical institutions of Etchmiadzin.

The scientist and devoted citizen to the Motherland lived a short life: he died in 1921 in Etchmiadzin, at the age of 29, during the famous February events. In the person of L. Lisitsyan, the Armenian people lost a talented, highly educated intellectual, for whom love and devotion to Armenia and its culture became the meaning of his short life.

Anushavan Zakaryan – Doctor of Sciences in Philology, Editor-in-Chief of the HPHJ, Senior Researcher at the Department of Arts of the Armenian Diaspora and International Relations at the NAS RA Institute of Arts. Scientific interests: issues of the first quarter of the Armenian reality of the 20th century, the Armenian Question and the Armenian Genocide, Armenian-Russian historical-literary and cultural ties. Author of 21 monographs and collections, over 250 articles and publications. patmhandes@rambler.ru

Doi:10.54503/0135-0536-2022.1-73

ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԵՎ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՈՉԱԿՈՒՄԻՑ ՀԵՏՈ
(1918 թ. հունիս–հուլիս)*

ՎԱՀԱՆ ՄԵԼԻՔՅԱՆ

Բանալի բառեր՝ Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Գերմանիա, Օսմանյան կայսրություն, Օ. Ֆոն Լոսսով, Ն. Ժորդանիա, Վեհիբ փաշա, Թ. Նազարբեկյան, Արամ Մանուկյան, Խ. Կարճիկյան, Լոռի, Բորչալու, Ախալքալաք, Ղարաբաղ:

Նախաբան

Բաթումի պայմանագիրը, որը դարձավ Վրաստանի, Ադրբեջանի ու Հայաստանի անկախությունը ճանաչող առաջին միակ քաղաքական ակտը և այդպիսով ընդունեց անկախ հանրապետությունների տարածքներն ու պայմանական սահմանները, չկանխեց Օսմանյան Թուրքիայի և Գերմանիայի ներկայության կասեցումը տարածաշրջանում:

Անդրկովկասի հանրապետությունների անկախության հայտարարման նախօրեին երկրամասի քաղաքական շրջանակներում արդեն կիսվում ու բաժանվում էին ազգային տարածքները: Այդ գործընթացն ուղղակիորեն կապվում էր Բաթումի բանակցություններից բխող պահանջների, հայկական կողմի համար՝ թուրքական վերջնագրի հետ: Միաժամանակ Անդրկովկասի սահմանաբաժանման սկզբունքների հիմնահարցը և դրա խախտումն է հիմնականում ընկած հետագա վեճերի, ընդհարումների ու պատերազմների հիմքում:

Անդրկովկասի վարչատարածքային սահմանաբաժանումների հիմնահարցը 1917 թ. Ռուսաստանյան հեղափոխությունների համատեքստում

Անդրկովկասի ժողովուրդները և կառավարությունները, որոնք իրենց անկախ հռչակեցին, հայտարարեցին՝ իրենք հավասարապես իրավատեր են Անդրկովկասի տարածքի նկատմամբ[1]: Այդ տարածքը պետք է բաժանվեր ազատ ինքնորոշման իրավունքի և էթնիկական սկզբունքի հիման վրա՝ համաձայնեցված տեղագրական (տոպոգրաֆիկական) ու տնտեսական պայմաններով: Պարզ էր նաև, որ, եթե Անդրկովկասի երեք գլխավոր ազգերը համաձայնվում էին համատեղ հայտարարել իրենց որպես Անդրկովկասի ընդհանուր տարածքի տեր, ապա որևիցե պայմանագրեր, որոնք կնքվել էին այդ ժողովուրդների ու երրորդ կողմի միջև, ինչպես, օրինակ, 1783 թ. Գեոր-

* *Ներկայացվել է 06. VII. 2021 թ., գրախոսվել է 30. VII. 2021 թ., ընդունվել է տպագրության 24. I. 2022 թ.: Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ-ի և ՀՀՌՀ (ՌԴ) տրամադրված ֆինանսավորմամբ՝ 20RF–103 ծածկագրով գիտական համատեղ ծրագրի շրջանակներում:*

[1] *Հանգամանորեն տե՛ս Մ ե լ ի ք յ ա ն. 2010, 125–145:*

դիվյան պակտը, չէին կարող ազդել այդ սեփականատերերի իրավունքների և հարաբերությունների վրա[2]:

1917 թ. Ռուսաստանյան հեղափոխությունների չրջանում էթնիկական բաժանման սկզբունքը դրվել էր ինչպես իշխանական, այնպես էլ ազգամիջյան բազմաթիվ խորհրդակցությունների հիմքում և հավանություն էր արժանացել կուսակցությունների կողմից:

Մեր կողմից բազմիցս հիմնավորվել է, որ 1917 թ. Փետրվարյան հեղափոխությամբ սկսված ու բոլշևիկյան հեղաշրջմամբ ամրապնդված վրաց-թաթարական հակահայկական դաշինքը, ի դեմս Կոմխարհատի զեմստվային դրծունեության, «վիճելի տարածքներ» դարձրեց հենց հայկական տարածքները, այդ թվում՝ Բորչալուն, Գանձակը, Զանգեզուրը, Ղարաբաղը, Լոռին և այլն:

1917 թ. հոկտեմբերի 14–15-ն Ա. Ջխենկելու նախագահությամբ և Ն. Ժորդանիայի ու Ե. Գեգեչկորու մասնակցությամբ կայացած Օզակոմի խորհրդակցությունը մերժել էր Ավ. Խատիսյանի ու Ա. Շահխաթունյանի՝ Պետրոգրադում ներկայացված ծրագիրը: Ա. Շահխաթունյանի արտահայտությամբ՝ «վերաբաժանման հարցում «հայկական», «կուսակցական», «միակողմանի» նախագծի դեմ դարձյալ սկսվեց վրաց-ադրբեջանական դաշինքի գործունեությունը՝ այս անգամ որպես վարչական վերաբաժանման դեմ արհեստականորեն ստեղծված երկարաժամկետ գենք[3]:

Անկախ Վրաստանի տարածքը որոշելու ընթացքում ոչ միայն ջնջվում էին ազգային հարցում վրացական կուսակցությունների միջև եղած իրարամերժ ու խորքային տարաձայնությունները, այլև հարևաններ՝ հատկապես Հայաստանի տարածքները կորզելու հարցում անտեսվում էին «սրբորեն» ընդունված սահմանաբաժանումների սկզբունքները:

Վրաց մենշևիկների «Борьба», «էրթոբա» թերթերը, որոշելով, որ եկել է վճռական պահը և մոռանալով ոչ վաղ անցյալում ընդունած որոշումները, «Հուգենոտների տրամաբանությամբ», հիմա էլ ապացուցում էին՝ Վրաստանը չի կարող կանգնել սկզբունքային դեմոկրատական հայեցակարգի վրա՝ ելնելով ազգերի ռեալ բնակության սկզբունքից, այլ «պետք է կանգնի պետության պատմական և ստրատեգիական խնդիրների հայեցակետի վրա»[4]: Այս տեսակետից մենշևիկներն ու իրենց մամուլը միանգամայն նպատակահարմար էին գտնում, որ Բորչալուի գավառը, Ղարաքիլիսան, Սևանա լիճը, Ղազախը և Ջաբաթալան կցվեն Վրաստանին:

Անդրկովկասը 1918 թվականին՝ չհաշված Դաղստանը, ուներ 210.000 քառ. կիլոմետր տարածք ու 7.100.000 բնակչություն, որից 2.650.000-ը՝ մահմեդական, 1.825.000-ը՝ հայ, 1.750.000-ը՝ վրացի (այդ թվում՝ 150.000 վրացի մահմեդականներ) և 900.000 այլ ազգություններ: 1918 թ. մարտի 3-ի Բրեստ-Լիտովսկի պայմանագրի համաձայն՝ Անդրկովկասից պոկվում էին Կարսի ու Բաթումի չրջանները՝ 25.000 քառ. կիլոմետր տարածքով և 600.000 բնակչությամբ:

---

[2] *Տե՛ս* Армяно-грузинский вооруженный конфликт. 1919, 7–9.

[3] *Մ ե լ ի ք յ ա ն. 1997, 119–120, Մ ե լ ի ք յ ա ն. 2010, 125–145:*

[4] *Տե՛ս «Աչխատավոր» (Թիֆլիս), 02. VII. 1918:*

Քանի որ սպասվող սահմանաբաժանումների գործընթացում այդ երկու շրջանները հաշվի չէին առնվում, ստացվում է՝ Անդրկովկասին մնում էր 185.000 քառ. կիլոմետր՝ 6.650.000 բնակչությամբ, որից 2.450.000 մահմեդական, 1.650.000 հայ, 1.600.000 վրացի և 800.000 այլ ազգություններ[5]:

Բրեստ-Լիտովսկի պայմանագրի համաձայն՝ համեմատաբար չատ տարածք էր զրավվում Թուրքիայի կողմից: Բաթումի պայմանագրով Արևելյան Հայաստանից ու Վրաստանից խլվում էր 38 հազար քառ վերստ[6] 1.250.000 բնակչությամբ:

Վրաստանից անջատվում էր 10 հազար քառ. վերստ՝ 350 հազար բնակչությամբ, Հայաստանից՝ 28 հազար քառ. վերստ՝ 900 հազար բնակչությամբ: Հայաստանի տարածքը 12 հազար 421 քառ. վերստով ավելին էր (655 հազար բնակչություն), քան այն, որ պետք է ազատվեր Բրեստի համաձայն: Այսպես, Թուրքիային էին անցնում Ախալցխայի գավառը՝ 2.377 քառ. վերստ, Ախալքալաքի գավառը՝ 2.407 քառ. վերստ, Սուրմալուի գավառը՝ 3.147 քառ. վերստ, Ալեքսանդրապոլի գավառի 3/4-ը՝ 2.540 քառ. վերստ, Երևանի գավառի 1/2-ը 1.360 քառ. վերստ, Շարուր-Դարալագյազի գավառի 1/5-ը – 590 քառ. վերստ, ընդամենը՝ 12.421 վերստ[7]: Պատմաբան Դ. Զավրիևը, Մոսկվայի արխիվի տվյալների համաձայն, ներկայացնում է այն տարածքների ազգային կազմը, որոնք թուրքերի պահանջով ավելին էին, քան Բրեստ-Լիտովսկի պայմանագրով նախատեսվածը[8].

Գավառներ	*Քարթվելներ*	*Մահմեդականներ*	*Հայեր*	*Ռուսներ*	*Այլ*
Ախալցխայի	*6.430*	*17.915+19.470 քարթվել-մահմեդական*	*26.800*	*540*	
Ախալքալաքի	*7.570*	*7.910*	*63.840*	*8.150*	
Սուրմալուի	*–*	*66.300*	*30.300*	*–*	
Ալեքսանդրապոլի	*420*	*5.250*	*172.4000*	*1.950*	
Էջմիածնի	*–*	*41.600*	*75.850*	*420*	
Երևանի	*–*	*48.000*	*30.100*	*1.300*	
Շարուր-Դարալագյազի	*–*	*12.000*	*4.700*	*60*	
Ընդհանուր	*14.420*	*199.000+19.470*	*404.000*	*12.400*	*4.150*

Այս թվերին Վրաստանի Արտաքին գործերի նախարարությունն ավելացնում է 300 հազար արևմտահայ փախստականներին. 100 հազար՝ Վանից, Ալաշկերտից (բնակվել են Սուրմալուի, Էջմիածնի, Երևանի գավառներում), 200 հազար՝ Էրզրումից, Երզնկայից, Բիթլիսից, Մուշից, Մանազկերտից (բնակվել են Ալեքսանդրապոլի, Ախալցխայի գավառներում): Այսպիսով, Թուրքիան գավթել էր տարածքներ, որտեղ թուրքերը կազմում էին բնակ-

[5] *Տե՛ս* Армяно-грузинский вооруженный конфликт. 1919, 4–5.

[6] *Վերստ՝ ռուսական չափման միավոր, հավասար է 500 սաժենի – 1 վերստը կազմում է 1.0688 կմ:*

[7] Заврие в. 1947, 69–70.

[8] Заврие в. 1947, 70.

չության միայն 30 տոկոսը, հայերն ու վրացիները՝ 67, փախստականներին հաշվի առնելով՝ համապատասխանաբար՝ 16 և 83 տոկոս: Ընդհանուր առմամբ՝ Հայաստանի և Վրաստանի հաշվին Անդրկովկասից Թուրքիան խլեց տարածքի 20.6 տոկոսն ու բնակչության 18.5 տոկոսը: Բացի դրանից, Անդրկովկասը զրկվեց Անդրկովկասյան երկաթուղու գրեթե ողջ հարավային հատվածից՝ Սարիղամիշ-Կարս-Ալեքսանդրապոլ-Ջաջուռ-Ուլուխանլու (Մասխա)–Ջուլֆա, այսինքն՝ երկաթուղին կրճատվեց 868 վերստով[9]*:*

Աշխարհագրական սկզբունքից ելնելով՝ նոր սահմանագիծն արհեստական բնույթ էր կրում. այդ կոնֆիգուրացիան, միաժամանակ բացահայտում էր Թուրքիայի ապագա նվաճողական պլանները՝ մասնավորապես Բաքուն գրավելու ծրագիրը:

Նորանկախ հանրապետությունների սահմանաբաժանումների հիմնահարցը

Անդրկովկասի նորանկախ հանրապետությունների առջև ծառանում էր երկրամասի տարածքային սահմանաբաժանման հիմնահարցը:

Հունիսի 2-ին Վրաստանի Դեմոկրատական Հանրապետության (ՎԴՀ) կառավարության նիստը որոշեց, որ «Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի միջև սահմանների ուղղումն ու հաստատումը կազմում է բացառապես այդ երկրների կառավարությունների իրավասությունը: Վրաստանի կառավարությունը Թիֆլիսում, առանց Թուրքիայի միջամտության, կարող է Ադրբեջանի և Հայաստանի ներկայացուցիչների հետ անմիջական բանակցություններ վարել: Իսկ եթե այս հարցի առնչությամբ հայտնվի այս կամ այն պայմանագիրը, մի կողմից՝ Օտտոմանյան կայսրության, մյուս կողմից՝ Ադրբեջանի ու Հայաստանի միջև, կամ նրանցից մեկի հետ, ապա Վրաստանի կառավարությունը ոչ մի դեպքում չի կարող ճանաչել այն՝ իր համար ընդունելի ու պարտադիր»[10]*:*

Հունիսի 5-ին բանվորների և գինվորների պատգամավորների երկրամասային կենտրոնն ու Գործադիր կոմիտեն ընդունում են բանաձև: Այնտեղ նշվում էր՝ Ն. Ժորդանիայի գլխավորած կենտրոնը, տեղեկանալով Բաթումի պայմանագրի մասին, որոշում է իր բոլոր ուժերն ուղղել կայուն դեմոկրատական կարգի կազմակերպմանը և ռազմական ուժի ստեղծմանը, «որը ունակ կլինի այդ պայմանագիրը կյանքի կոչելու ընթացքում պաշտպանել դեմոկրատիայի իրավունքները և Վրաստանի Հանրապետության ինքնիշխանությունը ու հեղափոխության նվաճումները»[11]*:*

Այս երկու որոշումները վկայում են, որ նորաստեղծ ՎԴՀ-ը պատրաստվում էր նոր սահմանները հարևանների հետ «ուղղել և հաստատել» իր օգտին ու զենքի ուժով, ապա և իրականում լրջորեն մտահոգված էր ինչպես Թուրքիայի ծավալապաշտական նկրտումներով, այնպես էլ Գերմանիայի

---

[9] Заврие в. 1947, 70–71.

[10] *Տե՛ս* Национальный архив Грузии (*այսուհետ՝* НАГ), ф. 1861, оп. 2, д. 1, л. 111; *Նաև՝ Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 200, ց. 1, գ. 17, թ. 11:*

[11] Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии. 1919, 366–367.

անկանխատեսելի վարքագծով, թեև մայիսի 28-ին Փոթիում կնքված վրաց-գերմանական նախնական պայմանագրով Գերմանիան ճանաչում էր Վ.Դ.Հ-ը և պարտավորվում պաշտպանել նրա տարածքի անձեռնմխելիությունը[12]:

Այդ մասին է վկայում գեներալ Օ. Ֆոն Լոսսովի հեռագիրն՝ ուղղված Վրաստանի կառավարությանը. «Գերմանական բարձրագույն հրամանատարությունը և կառավարությունը համաձայն է ձեր նախաձեռնած բոլոր գործողություններին: Թուրքերի մոտենալու ժամանակ կայարաններում և նավահանգիստներում դրված պարեկակետերը չպետք է թշնամաբար վերաբերվեն նրանց, բայց ամեն գնով պետք է մնան իրենց տեղում և հայտարարեն թուրքերին, որ նրանք տեղակայվել են Գերմանական բարձրագույն հրամանատարության կողմից ու դաշնակիցների չահերից ելնելով՝ պաշտպանում են վրացական երկաթուղիները»[13]:

Վրացական կողմը հատուկ չեշտադրում էր Բաթումի պայմանագրի 3-րդ հոդվածը, ըստ որի պարզվում էր՝ Վրաստանի և Հայաստանի միջև սահմանաբաժանումը պետք է դառնար երկու հանրապետությունների հատուկ համաձայնության առարկա[14]: Սակայն այդ համաձայնությունը չկնքվեց:

Հայ-վրացական տարածքային սահմանազատման հիմնահարցի բեկումնային փուլը սկսվում է 1918 թ. հունիսի 11-ից: Այդ օրը Թիֆլիսում Ն. Ռամիշվիլու կողմից հրավիրվեց խորհրդակցություն, որտեղ Վ.Դ.Հ կառավարության նախագահը հայտարարեց, որ նկատի ունենալով հայերի ու վրացիների միջև տարաձայնությունների բացակայությունը՝ անհրաժեշտ է լուծել հայ-ադրբեջանական վեճը[15]: Սա հեռուն գնացող հայտարարություն էր. ի դեպ՝ այդ ուղղվածությամբ էլ ընթացավ խորհրդակցությունը, որի ծրագրային զարգացումներին էլ կփորձենք հետևել: Կարևորն այն էր, որ տվյալ փուլում փաստվում էր՝ հայ-վրացական տարածքային վեճ չկա: Ավելին, Ն. Ռամիշվիլին և Վրաց ազգային խորհրդի՝ (ՎԱԽ) նախագահ Ն. Ժորդանիան Թիֆլիսում այցելում են Հայոց ազգային խորհրդի (ՀԱԽ) և Ավ. Ահարոնյանին, Հ. Քաջազնունուն ու Ալ. Խատիսյանին հավաստիացնում. «Բորչալուի խնդիրը անհրաժեշտ է լուծել էթնիկական սկզբունքով»: Ախալքալաքի մասին խոսք չէր գնում, քանի որ Բաթումի պայմանագրով այն զբաղեցված էր թուրքական զորքերի կողմից[16]:

Հունիսի 12-ին ՀԱԽ-ը դիմում է Վ.Դ.Հ կառավարության նախագահ Ն. Ռամիշվիլուն՝ Բորչալուի գավառում երկաթուղային հաղորդակցությունը վերաբացելու հարցով: Կարելի է վստահաբար պնդել, որ այն փակվել էր վրացիների կողմից: Ավ. Ահարոնյանը տեղեկացնում էր Վեհիբ փաշայի հանձնարարականի մասին, ըստ որի վերջինս, ելնելով Բաթումի պայմանագրից, Թիֆլիս էր գործուղել բրիտանացի կապիտան Ռեջենտին, որը երկաթուղու ողջ երկայնքով ընկած բնակավայրերում՝ իրենց հայ, թաթար, վրացի բնակ-

[12] *Տե՛ս «Հորիզոն» (Թիֆլիս), 19. VI. 1918:*

[13] Документы и материалы. 1919, 367.

[14] Из истории армяно-грузинских отношений, 1918 год (Пограничные конфликты; переговоры; война; соглашение). 1919, 9.

[15] Армяно-грузинский вооруженный конфликт. 1919, 11.

[16] Армяно-грузинский вооруженный конфликт. 1919, 11.

չումիյամը, պետք է հաղորդեր պայմանագրի ստորագրման և բոլոր տեսակի թշնամական գործողությունների դադարեցման մասին: Ելնելով ասվածից՝ ՀԱԽ-ի նախագահը խնդրում էր Ն. Ռամիշվիլուն՝ չոգեքարշ և մի վագոն տրամադրել կապիտանի անարգել Ղարաքիլիսա հասնելու համար, քանի որ «Երևանի հետ հաղորդակցության վերականգնումը Հայկական կառավարության առաջնահերթ խնդիրն է»[17]:

Հունիսի 13-ին ՀԱԽ-ը դիմում է ՎԱԽ-ին՝ Բորչալուի հարցի շուրջ բանակցություններ սկսելու վերաբերյալ՝ ելնելով հունիսի 11-ի հաղորդակցության հաստաղրող հարցաղրումից: Նշվում էր, որ համաձայն մի կողմից Ն. Ժորդանիայի ու Ն. Ռամիշվիլու, մյուս կողմից՝ Ավ. Ահարոնյանի, Հ. Քաջազնունու և Ալ. Խատիսյանի միջև ընթացող բանակցությունների, ՀԱԽ-ը Հայաստանի ու Վրաստանի միջև սահման հաստատելու և ընդ որում, այդ բանակցությունների համաձայն Բորչալուի գավառը էթնիկական սկզբունքով բաժանելու նպատակով, ընտրել է լիազոր-ներկայացուցիչներ[18]: Նրանց թվում էին հունիսի 11-ի խորհրդակցության մասնակիցներ Խ. Կարճիկյանը, Գ. Խատիսյանը և Գ. Ղորղանյանը[19]:

Մինչդեռ, երբ հայ լիազորները վրացական կողմի լիազոր Ի. Ծերեթելու հրավերով ներկայացան, ապա վերջինս ՎԱԽ-ի անունից հայտարարեց, որ Վրաստանի կազմի մեջ են մտնում ոչ միայն Բորչալուի և Ղազախի գավառները ամբողջությամբ, այլև Ալեքսանդրապոլի գավառի Փամբակի տեղամասը: Եվ դա հիմնավորվում էր նրանով, որ հայերով բնակեցված շրջանների կցումը Վրաստանին թելադրվում է ինչպես Վրաստանի, այնպես էլ Հայաստանի շահերից ելնելով, «քանի որ հայերը Բաթումի համաձայնությունից հետո չեն կարող ձևավորել որևէ կենսունակ պետություն, ուստի նրանց համար շահավետ է ամրացնել Վրաստանը, որպեսզի Կովկասում լինի հզոր քրիստոնյա պետություն, որը գերմանացիների օգնությամբ կպաշտպանի թե իրենց և թե հայերին»[20]: Դրան հետևեց Ավ. Ահարոնյանի պահանջը՝ բանակցությունները սկսել միայն ազգաբնակչության «իրական բաշխման սկզբունքի հիման վրա», ինչը հաստատվել էր փոխադարձ համաձայնություններով[21]:

Խ. Կարճիկյանն էլ պատասխանում է Ի. Ծերեթելուն, թե նրա առաջարկը Վրաստանի, Ադրբեջանի ու Թուրքիայի միջև Հայաստանի բաժանման վերաբերյալ հին պլան է, և որ վերջինիս առաջարկությունը հակասում է Ժորդանիայի ու Ռամիշվիլու այն հայտարարություններին, որոնց հիմքի վրա հավաքվել էին լիազոր ներկայացուցիչները[22]:

Վրաստանի հիմնադիր-հայրերի կտրուկ շրջադարձը և համարձակությունը բացատրվում է վիճելի տարածքում գերմանական զորքերի հայտնվելով: Հունիսի 17-ի թուրք-գերմանական համաձայնագիրը Թուրքիային տրամադրում էր Երևանի, Գերմանիային՝ Թիֆլիսի նահանգը:

---

[17] *ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 17, թ. 14:*
[18] *ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 17, թ. 15:*
[19] Армяно-грузинский вооруженный конфликт. 1919, 11.
[20] *ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 17, թ. 15:*
[21] *ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 17, թ. 15:*
[22] *Տե՛ս* Армяно-грузинский вооруженный конфликт. 1919, 11.

Հունիսի 18-ին գնդապետ Տ. Բաղդասարովը[23] վկայում էր, որ գերմանական զորքերը մարտեր են մղում տեղացիների դեմ, հնարավոր է՝ և թուրքերի: Նրանք հասել էին Քոլագերան կայարան, որի միջով թուրքերը փորձում էին անցնել Ղազախ: «Քոլագերանում կանգնած է զրահագնացք՝ գերմանական դրոշներով,– նշում էր նա:– Դսեղում գերմանացի զինվորները զգուշացրին հայերին, որ Ղազախ չարժվող թուրքական բանակը վերադառնալու է: Եղան և հայ կամավորներ, որոնք ուզեցին զինվորագրվել գերմանացիներին, բայց մերժվեցին: Հաստատվեց նաև, որ Սաղախլոյի մոտ մարտերից հետո գերմանացիներն ու վրացիները գրավեցին Սանահինը, որտեղ զինաթափ արին թուրքական երկու էշելոն: Հաղորդվում է նաև, որ մոտ օրերս նրանք մտնելու են Ղարաքիլիսա»[24]: Ի դեպ, Կ. Պոլիս մեկնող հայ պատվիրակներին ուղղված Ն. Աղբալյանի զեկուցագրում նշվում էր, որ Հայաստանի «սահմանների» երկայնքով՝ Երևանից Դիլիջան ու Նոր Բայազետի հատվածում կուտակվել են 500 հազար զաղթականներ. Իրանի մոտ կոտորվել էին մի ամբողջ գնացք որբեր ու գաղթականներ[25]: Ինչպես տեսնում ենք, վրաց-գերմանական դաշինքը գործում էր: Միաժամանակ, մի փոքր ուշ՝ հունիսի 24-ին, ՀԱԽ-ի նիստում Հովհ. Թումանյանը հայտնում է, որ թուրքերը գրավել են Սաղախլոն և Դսեղը, գաղթականներին անխնա կոտորում եմ Ջալալօղլիում (Ստեփանավան) և Դիլիջանում[26]:

Անհրաժեշտ է նաև նշել, որ Բորչալուում տեղի ունեցած թուրքերի, թաթարների և վրաց-գերմանական զորքերի միջև ընդհարումների ժամանակ վրաց գործիչները հայտարարեցին հայկական կողմին, որ «Բորչալուի հայկական մասը զբաղեցվում է վրացիներով միմիայն թուրք-թաթարների դեմ պաշտպանվելու նպատակով. հետո այն կվերադարձվի հայերին»[27]:

Ակնհայտ է, որ վրացիների գործողություններն ընթացան Ի. Ծերեթելու հայտարարության ոգով. վերջնականապես փչրվեց հայերի իլյուզիան՝ հայկական շրջանների հանդեպ վրացական դիրքորոշման արդարության նկատմամբ: Եղան և նոր քննարկման առաջարկներ, բայց իրականում հայկական տարածքները զբաղեցվում էին վրաց-գերմանական զորքերի կողմից:

Մրագիրը, փաստորեն, իրականացավ. թուրքերն իրենց առջև գտնելով գերմանական հենակետերը՝ կանգ առան … բայց կանգ չառան Բաքվի հարցում:

Հիմք ընդունելով հունիսի 2-ի ՎԴՀ կառավարության սահմանների ճշգրտման վերաբերյալ որոշումը՝ հունիսի 5-ի նիստում Ռազմական նախարար Գ. Գեորգաձեն զեկուցում է «Իրավիճակը Բորչալուի գավառում և վրացական պետության հստակ սահմանների որոշման անհրաժեշտությունը» թեմայով: Որոշվում է՝ «ներկա սահմանների պաշտպանության համար հանձնարարել Ռազմական նախարարին՝ ներքին գործերի նախարարի մասնակ-

---

[23] *ՀՀ բանակի գեներալ-մայոր, Հայկական համահավաք ջոկատի 3-րդ բրիգադի և 1918 թ. Հայկական դիվիզիայի 3-րդ բրիգադի հրամանատար:*

[24] *Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. Քաղաքական պատմություն, փաստաթղթերի և նյութերի ժողովածու. 2000, 47:*

[25] *Տե՛ս Սուքիասյան. 2019, 87–88:*

[26] *Սուքիասյան. 2019, 88:*

[27] *Տե՛ս* Армяно-грузинский вооруженный конфликт. 1919, 11.

ցութիյամբ, զինված ուժեր տեղակայել Բորչալուի, Սղնախի ու Թիֆլիսի գավառների սահմաններին. սահմանների առարկայական ճշգրտման նպատակով ձևավորել մասնավոր հանձնաժողով, որի կազմի մեջ կմտնեն Դ. Օնիաշվիլին, Ալ. Մղիվանին և Տակայշվիլին»[28] *(ընդգծումը մերն է – Վ. Մ.):*

Հունիսի 11-ին կառավարության նախագահի՝ «Հայաստանի և Ադրբեջանի հետ սահմանների ճշգրտման համար հանձնաժողով ստեղծելու մասին» զեկուցման արդյունքում որոշվեց՝ «Հիմնել հանձնաժողով Վրաստանի սահմանները որոշելու համար»: Դրա կազմում էին Ի. Ծերեթելին, Դ. Օնիաշվիլին, Ի. Ինգորոկովը, գեներալ Ի. Օդիշելիձեն[29]*: Հունիսի 11-ին հանձնաժողովը լսեց Ի. Ինգորոկովի զեկույցը, որի հիմնական եզրակացությունները հետևյալն էին. Վրաստանը, որպեսզի պետություն դառնա, պետք է պարփակվի այնպիսի սահմաններում, որոնք հարմար կլինեն թե՛ տնտեսական, թե՛ ռազմական առումով: «Արևելյան Վրաստանի միակ բնական սահմանը արևելքում և հարավում այսպիսին են,– ասվում էր զեկուցման մեջ. – հարավից սահմանը ձգվում է Փոքր Կովկասի լեռնաշղթայով, անցնում է Բորչալուի գավառի հարավային սահմանի մոտով, Ղարաքիլիսայից (Վանաձոր – Վ. Մ.) հարավ, հասնում է մինչև Գոքչի (Սևանա լիճ – Վ. Մ.) լճի հյուսիսային ափը, թեքվում է հյուսիս ու Աղստեֆ գետով հասնում է մինչև Ջեղամ կայարանը, ներառում է Ջաքաթալայի օկրուգը և ավարտվում Սիլավաթ լեռով»*[30]*: Զեկուցողն «ապացուցում» էր, որ «Վրաստանի պատմության ողջ ընթացքում նկատվում է հենց այս սահմաններին հասնելու ձգտումը և այդ սահմաններում՝ մինչև Սուրամի լեռնաշղթա չկա պաշտպանության»*[31]*: Ի. Ինգորոկովը վճռականապես դեմ էր ազգագրական-էթնիկական սահմանների գծմանը, ինչը հետևողական պաշտպանում էր վրաց սոցիալ-դեմոկրատ մենշևիկների կուսակցությունը: Նա կարծում էր, որ նման սահմանազատումը «չի համապատասխանում պետականության պահանջներին»*[32]*:*

Վրացական կողմի տեսանկյունից, այս հանձնաժողովը կարծիքների փոխանակման համար հրավիրել էր հայկական ու ադրբեջանական ազգային խորհուրդների ներկայացուցիչներին. ադրբեջանցիները չէին ներկայացել: Հայոց ազգային խորհրդի կողմից մասնակցում էին Գ. Խատիսյանը, գեներալ Գ. Ղորղանյանը և Խ. Կարճիկյանը: Ներկայացվում են հայկական պահանջները. « … նրանք հավակնում են,– (նկատի ունեին վրացական կողմը – Վ. Մ.) այն գծին, որի հետ ավելի վաղ համաձայնեցվել են երեք ազգերը[33] *(նկատի ունեն Անդրկովկասյան կոմիսարիատի իրականացրած հետհոկտեմբերյան սահմանաբաժանումները և զեմստվային բարեփոխում-*

[28] Из истории армяно-грузинских отношений. 1919, 10.

[29] Из истории армяно-грузинских отношений. 1919. *Կովկասյան ռազմաճակատի նախկին հրամանատար Ի. Օդիշելիձեն 1918 թ. փետրվար–մարտ ամիսներին հայտնի է երզնկայի ու Կարինի պաշտպանության ժամանակ իր՝ բացահայտ հակահայկական ու թուրքամետ քաղաքականությամբ: Հանգամանորեն տե՛ս Մ ե լ ի ք յ ա ն. 2019:*

[30] Из истории армяно-грузинских отношений. 1919, 10.

[31] Из истории армяно-грузинских отношений. 1919, 10.

[32] Из истории армяно-грузинских отношений. 1919, 10–11.

[33] *Հանգամանորեն տե՛ս Մ ե լ ի ք յ ա ն. 2010:*

ները – Վ. Մ.), ըստ որի Բորչալուի գավառի 2/3-ը մտնելու էր Հայաստանի սահմանների մեջ, բայց դրա փոխարեն՝ նույն գավառի 1/3-ը բնակեցված էր թաթարներով ու պետք է տրամադրվեր Ադրբեջանին, այդ թվում և Սղնախի գավառի մեծ մասը»[34]: Դրանով, մտքերի փոխանակումն ավարտվում է: Հանձնաժողովի աշխատանքներն այլևս չշարունակվեցին և Վրաստանի ու Հայաստանի միջև համաձայնության չհանգեցրին: Ի դեպ, ՀՅԴ անդամ Ա. Ջամալյանի վկայությամբ, 1917 թ. հոկտեմբեր – 1918 թ. մայիս ժամանակաշրջանում հայկական բոլոր շրջանները, այդ թվում Ախալքալաքն ու հայկական Բորչալուն, ենթարկվում էին բացառապես ՀԱԽ-ին[35]:

Այն, որ վրացական կառավարությունը վճռականորեն ու մեծ ախորժակով պատրաստվում էր գավթել հայկական տարածքները, որտեղ, ընդհանրապես, վրացիներ չեն բնակվել, դա կայացած իրողություն էր: Մինչև հունիսի 11-ի գործընթացը պարզվում է՝ դեռևս հունիսի 8-ին արդեն Վ.Դ.Հ կառավարության նախագահի հրամանով Գերմանիայի ռազմական առաքելության պետին հաղորդվում էր, որ «Վրաստանի կառավարությունը կարգադրել է զբաղեցնել Անդրկովկասյան երկաթուղու դեպի Բաքու ընթացող տարածքը, մինչև Կուր գետի կամուրջը՝ Փոյլի կայարանի առջևում, իսկ Ալեքսանդրապոլի տեղամասում՝ մինչև Ջալուռի թունելի կեսը, Ղարաքիլիսա և Շահալի (Վահագնի – Վ. Մ.), չնայած 1783 թ. կնքված Վրաստանի և Ռուսաստանի միջև կնքված պայմանագրով (Գեորգիևյան – Վ. Մ.) վրացական նախկին թագավորության սահմանը նշված գծից էլ այն կողմ է ընկնում»[36]:

ՀԱԽ-ը[37] բողոքեց այդ որոշման դեմ, ինչը հրապարակվեց «Պայքար» թերթում: Այն հիմնվում էր կարևորագույն այն մոտեցման վրա, որ երկու հարևան հանրապետությունների միջև համաձայնություն չի կայացել, ուստի «միակողմանի որոշմամբ Վրաստանի կառավարությունը չի կարող սահմանային հարց լուծել, այդ սահմանները պետք է հաստատվեն Վրաստանի և Հայաստանի միջև համաձայնության պայմանագրով: Վրաստանի կառավարության որոշումը հակասում է դեմոկրատական սկզբունքներին, որոնց հիմքում ընկած է ժողովուրդների ինքնորոշման և էթնիկական սկզբունքը, որով և մինչ այժմ առաջնորդվել է Կովկասի դեմոկրատիան»[38]: «Հորիզոն»-ը որոշումը որակեց որպես «վտանգավոր ճանապարհ»[39]:

Բաթումի պայմանագրի հոդվածները կյանքի կոչելու և Կ. Պոլսում մեկ ամիս անց այն վավերացնելու գործընթացի համատեքստում, անչափ ուշագրավ է այդ օրերին օտոմանյան բանակների գլխավոր հրամանատար, գեներալ լեյտենանտ Ջեվրիկ Մեհմեդ Վեհիբ փաշայի գաղտնի գրության բովանդակությունը՝ ուղղված Հայոց ազգային կորպուսի հրամանատար, գեներալ Թովմաս Նազարբեկյանին: Ոմն Ա. Մակեդոնսկին այն ուղարկել էր նաև Կով-

---

[34] Из истории армяно-грузинских отношений. 1919, 11.

[35] *Տե՛ս Մ ե լ ք ո ն յ ա ն. 2003, 275:*

[36] *Մ ե լ ք ո ն յ ա ն. 2003, 11:*

[37] *1918 թ. հունիսի 12-ին Կ. Պոլիս մեկնող Ավ. Ահարոնյանին ՀԱԽ-ի նախագահի պաշտոնում փոխարինեց Խ. Կարճիկյանը, իսկ հունիսի 21-ին՝ Ավ. Սահակյանը:*

[38] *Մ ե լ ք ո ն յ ա ն. 2003, 11–12, նաև՝ «Հորիզոն», 19. VI. 1918:*

[39] *Տե՛ս «Հորիզոն», 15. VI. 1918:*

կայան ռազմաճակատի գլխավոր շտաբի պետ, գեներալ Եվգենի Վիչինսկուն, Մովսես Սիլիկյանին և վերջինիս միջոցով Սարդարապատի ջոկատի հրամանատար Դանիելբեկ Փերումյանին[40]: Վեհիբ փաշան հայտնում էր Հայկական կորպուսի հրամանատար Թ. Նազարբեկյանին. «Հայկական և Վրացական պետությունների սահմանները մինչև այժմ չեն որոշված: Ես անհրաժեշտ և անխուսափելի եմ համարում զորքերը (թուրքական – Վ. Մ.) թողնել Ալեքսանդրապոլ-Ղարաքիլիսա գծի վրա և այնտեղից հյուսիս՝ մինչև Սաղախլո կայարանը ներառյալ: Դա բխում է ձեր չահերից մինչև սահմանի ճշգրիտ հաստատումը: Հավատացեք, որ եթե ես ետ կանչեմ իմ զորքերը, վրացիները կմտնեն ձեր շրջանը և կգրավեն այն: Եթե դուք իմ կարծիքը սխալ եք համարում և կգնաք ավելի հարմար և իրար հետ ավելի հեշտ համաձայնության, ապա իմ կողմից չի լինի ոչ մի արգելք զորքերը ետ քաշելու հարցում: Ես հրամայել եմ նորին գերազանցություն Շևքի փաշային՝ Ղարաքիլիսայից հարավ գրավված տարածքներից մեր զորքերը դուրս բերել: Իմ կորպուսներից մեկի հրամանատար գնդապետ Քյազիմ-բեյ Կարաբեքիրը Ալեքսանդրապոլում սպասում է Ձեր հանձնաժողովին»[41]: Մինչդեռ, Թուրքիան Վրաստանից այդ նույն օրերին պահանջեց ժամանակավորապես նահանջել Բաթումի պայմանագրի 2-րդ հոդվածից և թույլ տալ թուրքական զորքերին դարձյալ ժամանակավոր գրաղեցնել Բորչալուի գավառի մի մասը՝ Կամենկա գետով մինչև Քոլեր ու Քոլագերան կայարանները (117-րդ վերստի վրա): Դրանով թուրքերը հնարավորություն էին ձեռք բերում Ղարաքիլիսա-Դիլիջան-Ղազախ մայրուղով զորքերի տեղաշարժման համար: Ստացվում էր՝ Վրաստանը ստիպված ու թուրքերի օգտին ետ էր կանգնում իր հայցած տարածքներից, Թիֆլիսի ամբողջական նահանգից մանավանդ, որ այդ հարցում միջնորդել էր և գերմանական ռազմական առաքելությունը:

Փաստորեն, 1918 թ. հունիսի 20-ից Լոռվա հարավային մասը, Փամբակը և Բորչալուն գրաղեցվում էր թուրքերի կողմից …

1918 թ. հունիսին Բորչալուի գավառի թաթարական շրջանում, որը գտնվում էր Վրաստանի իշխանության տակ, սկսվեցին մահմեդական-թաթարների ապստամբություններ, որոնց նպատակն էր շրջանն անջատել Վրաստանից և միացնել Ադրբեջանին: Դրանք պատրվակ դարձնելով՝ թուրքական զորքերը փորձեցին մտնել հայկական Բորչալու՝ միանալու ապստամբներին: Արշակ Ջամալյանի կարծիքով, ո՛չ ՀԱԽ-ը և ո՛չ էլ տեղական իշխանությունները չէին կարող կասեցնել այդ շարժումը, ինչը լուրջ վտանգ էր ներկայացնում նաև Թիֆլիսի համար: Այդ վտանգը կանխելու համար վրաց կառավարությունը Փոթիում 1918 թ. մայիսի 28-ին համաձայնագիր ստորագրեց գերմանացիների հետ՝ Վրաստանը նրանց հովանավորության տակ դնելով[42]: Թիֆլիսում տեղակայված գերմանական փոքր զորամասը համալրվեց վրացիներով և գրավեց Բորչալուի մեծ մասը, նախքան թուրքերն այնտեղ կհասնեին[43]:

---

[40] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 289, ց. 1, գ. 2, թ. 3–4:*
[41] *ՀԱԱ, ֆ. 289, ց. 1, գ. 2, թ. 3–4:*
[42] Пипия. 1971, 34–41.
[43] *Տե՛ս Ջամալյան. 2011, 31:*

Այսքանով սահմանափակվեցին սահմանային հարցում հայ–վրացական կառավարությունների հարաբերությունները. Կ. Պոլսի խորհրդակցությունը ևս արդյունք չտվեց:

1918 թ. հոկտեմբերի 18-ին Սանահին կայարանի մոտ սկսվեց հայ-վրացական ռազմական ընդհարում, որը դեկտեմբերին վերածվեց կարճատև պատերազմի:

Հունիսի 16-ին հետևում է Թ. Նազարբեկյանի ռադիոհեռագիրը Վեհիբ փաշային, նա հայտնում էր, որ ժամը 16[00]-ին Երևանից հատուկ գնացքով Ալեքսանդրապոլ է մեկնել հանձնաժողովը խառը՝ օտոմանյան բանակի հրամանատարության ներկայացուցիչների հետ հաշտության նախնական պայմանագրի հարցերի լուծման նպատակով[44]:

Մեր կարծիքով՝ բավական հետաքրքիր «հակասություն» է ստեղծվում երկու գեներալ-հրամանատարների լրջագույն բանակցությունների ու միաժամանակ, գնդապետ Տ. Բաղդասարովի հունիսի 18-ի հաղորդագրության բովանդակության միջև: Խոսքը վերաբերում էր հունիսի 18–19-ը ընկած հատվածում, զարգացող իրադարձությունների մասին, երբ Ղազախի ճանապարհին՝ Քոլագերան կայարանի մոտ, բախվել էին թուրքական ու գերմանա-վրացական զորքերը: Սաղախլոյի մարտերից հետո վրացիներն ու գերմանացիները գրավեցին Սանահին կայարանը[45]:

Ստացվում է, որ Վեհիբ փաշայի զգուշացումները վրացական նկրտումների վերաբերյալ լիովին արդարացված էին: Հունիսի 16-ի գիշերը ժամը մեկին հանձնաժողովը հասավ Ալեքսանդրապոլ, որի կազմում էին գեներալ Վաղարշակ Տեր-Հակոբյանը, գնդապետ Իոսիվ (Հովսեփ) Քիչմիչյանը, փոխգնդապետ Ալեքսանդր Վեքիլյանը, Մկրտիչ Մուսինյանը, Կոնստանտին Թամամշյանը և Հովհաննես Մելիքյանը: Հունիսի 16-ից մինչև հուլիսի 3-ը հանձնաժողովը կիսաբանտարկված, բայց կենցաղային «չքեղ» պայմաններում անցկացրեց[46]: Հունիսի 25-ին նահանգապետ Ռաֆաթ բեյը հայտնեց, որ Սարղարապատի մոտ հայերը հարձակում են իրականացրել, սպանել են 7 հոգու, վիրավորել՝ 27-ին, ուստի և դրանով բացատրեց հանձնաժողովի մեկուսացված «անվտանգ» կարգավիճակը:

Ալեքսանդրապոլում կայացան 5 պաշտոնական նիստեր՝ հունիսի 19-ին, 20-ին, 22-ին, հուլիսի 5-ին և 6-ին: Թուրքերի կողմից մասնակցում էին Կովկասյան առաջին կորպուսի հրամանատար Քյազիմ Կարաբեքիր բեյը, մայոր Ավնի բեյը, կապիտան Հալիլ բեյը, սպա Սալահէդդինը: Նախագահում էր Քյազիմ Կարաբեքիրը: Առաջին նիստին հիմնվելով Բաթումի պայմանագրի վրա՝ թուրքերը պահանջեցին. 1. հանձնել Երևանի շրջանում գտնվող երկաթուղային շոգեքարշներն ու վագոնները, 2. հայկական զորքերը հետ քաշել Բաշ-Ապարանի ճակատից և կարգ ու կանոնի պաշտպանության համար այնտեղ թողնել փոքրաթիվ զորաջոկատ, 3. թույլ տալ Դիլիջանի վրայով թուրքական զորքերի, ինչպես և թուրքական փոստի անցումը: Այս պահանջներին

---

[44] *Ջամալյան. 2011, 8:*

[45] *Ջամալյան. 2011, 9: Տե՛ս նաև՝* Allen, Muratoff. 1953, 477–478; Maxмурян. 2019, 90–91; *Մախմուրյան. 2020, 18:*

[46] *Հանգամանորեն տե՛ս Ա-Դո. 2019, 459–465:*

տրվեցին բավարարող պատասխաններ: Պարզվում է, որ՝ 1. հունիսի 24-ին կամ 25-ին Սարդարապատի մոտ հայկական կողմը նոր գրոհ է իրականացրել, 2. մինչև հունիսի 16-ը Բաշ-Ապարանում կանգնած են եղել հայկական զորքեր, 3. Դիլիջանով թուրքական զորքեր ու փոստ տեղափոխելու խնդիրն էլ առաջացել էր այն պատճառով, որ Թ. Նազարբեկյանի խնդրանքով գեներալ Անդրանիկը հունիսի սկզբին իր Առանձին հարվածող զորամասով ամրացել էր Դիլիջանում՝ ապահովելով թուրքական կործանարար շրջանցի կանխումը դեպի Երևան:

Հայ ներկայացուցիչները պահանջեցին. 1. թույլ տալ արևմտահայ փախստականներին վերադառնալ իրենց բնակավայրերը և 2. Ղարաքիլիսայից դուրս բերել թուրքական զորքերն ու շրջանը հանձնել հայկական կառավարությանը: Քյազիմ Կարաբեքիրը պատասխանեց, որ առաջին պահանջի կապակցությամբ կդիմի թուրքական բարձր հրամանատարությանը և կպատասխանի նրա ցուցումներին, իսկ երկրորդ պահանջի առթիվ նշեց այն, ինչ գրում էր Վեհիբ փաշան Թ. Նազարբեկյանին. այսինքն՝ վրացիներն ուզում են մտնել նաև Շահալի կայարան՝ համարելով այն իրենց սահմանը:

Հաջորդ երեք նիստերում քննարկման առարկա դարձավ սահմանագծի խնդիրը, քանի որ հրապարակ էին եկել դաշնագրի երկու օրինակներ (խոսքը վերաբերում է Բաթումի լրացուցիչ դաշնագրին), մասնավորապես՝ էջմիածնի հարցում: Վերջապես, էջմիածնից ոչ հեռու գտնվող Քյորփալու հայկական գյուղը որոշվեց կցել Հայաստանի Հանրապետությանը[47]:

Քյազիմ Կարաբեքիրի հարցին՝ հայկական զորքերի զորացրման և Բաքվից դրանք հանելու մասին, Ալեքսանդրապոլի հայկական պատվիրակությունը պատասխանեց, որ այդ խնդիրը դուրս է իրենց իրավասությունից: Համաձայն հայկական կողմի հանձնառության՝ Երևանից Գանձակի վրայով թաթար պատվիրակների հետ ՀԱԽ-ը Բաքու ուղարկեց Մ. Արզումանյանին և Մ. Հարությունյանին՝ հայկական զորամասերը Բաքվից հանելու նպատակով: Իբր թուրքերի խորհրդով նրանք չեն մեկնել Բաքու թուրքական զորքի առաջնագծից՝ Մյուսիլի (Քյուրդամիրի մոտ) կայարանից վերադարձել են Գանձակ, այնտեղից՝ Թիֆլիս: Մի քանի օր անց Վլադիկավկազից Բաքու անցնելու փորձը ևս չիրականացավ, քանի որ բոլշևիկները գրավել էին Քյուրդամիրը, Շամախու ողջ շրջանը, Դաղստանի ծովափնյա շրջանները՝ մինչև Պետրովսկ: Կ. Պոլիս մեկնած հայկական պատվիրակությանն ուղղված Ն. Աղբալյանի զեկուցագրում նշվում էր. «Հուսով ենք, որ մեր պատվիրակությունը մի հնար կգտնի խաղաղությամբ լուծելու Բաքվի խնդիրը և փրկելու այդ չատ կարևոր տնտեսությունը»[48]: Պարզվում է նաև, որ Գանձակում հայերին զինաթափել են, հայկական թաղում նշանակվել է թաթար պարետ, և հայկական կոմիտեի շենքի վրա ծածանվում է թուրքական դրոշը[49]: Հայկական կողմը բարձրացրեց նաև Կարս-Էրզրում հատվածում հայ ռազմագերիների և Ալեքսանդրապոլի գավառից քշված 6.000–7.000 հայ տղամարդկանց, ինչպես նաև՝ փախստական հայերին իրենց բնակավայրերը վերադարձնելու հարցը:

[47] Ա-Դ ո. 2019, 463:
[48] Մ ո ւ ք ի ա ս յ ա ն. 2019, 87:
[49] Մ ո ւ ք ի ա ս յ ա ն. 2019, 89:

Թեև առաջին կետին տրվեց դրական պատասխան, բայց ոչ մի հայ գինվոր ու փախստական այդպես էլ չվերադարձան, բացի մի քանի հարյուր հյուծված ու կիսամեռ մարդկանցից: Երկրորդ հարցին պատասխանեց հունիսի 23–24-ն Ալեքսանդրապոլ ժամանած Վեհիբ փաշան, ըստ որի՝ Արդահանի, Բաթումի և Կարսի շրջանի փախստականները չեն կարող վերադառնալ, քանի դեռ այդ շրջանների բնակչության ինքնորոշման հանրաքվեն չավարտվի: Հասկանալի է, որ այդ պահին հիշյալ տարածքներում գերակշռում էին մահմեդականները:

Քյազիմ Կարաբեքիրը մերժեց հունիսի 19-ի հայկական պատվիրակության պահանջը՝ փախստականների վերադարձի մասին՝ հիմնավորելով, որ «հայ և մահմեդական ազգությունների միջև թշնամությունը դեռևս չարունակվում է և 2. Պետք է անմիջապես և պարտադիր բոլոր մահմեդականները Հայաստանից փոխադրվեն Օսմանյան կայսրություն, իսկ կայսրության սահմաններից էլ քրիստոնյաները փոխադրվեն Հայաստան»[50]:

Աստվածատուր Խաչատրյանի[51] կարծիքով՝ Գերմանիան՝ ի դեմս Լյուդենդորֆի ու Հինդենբուրգի սպառնալից հեռագրերի, Թուրքիայից պահանջում էր զորքերը դուրս բերել Անդրկովկասից, ուստի և թուրքերն այս առումով անորոշ կացության մեջ էին: Այդ պատճառով նրանց ավանդական ձգձգելու քաղաքականությունն Ալեքսանդրապոլում էլ իր դերը խաղաց և հանձնաժողովի առջև դրված չորս խնդիրներն էլ վերջնականապես լուծում չստացան: Այդ մասին է վկայում հուլիսի 13-ին կազմված հանձնաժողովի տեղեկագիրը: Երկու կողմն էլ համաձայն էին արձանագրել. «…քանի որ Բաթումի հաշտության պատվիրակության և Պոլսի կոնֆերանսի որոշումներն ու համաձայնությունները պետք է վճռական նշանակություն ունենան, այդ պատճառով պետք է չեղյալ համարել Ալեքսանդրապոլում օսմանյան և հայկական հանձնախմբի հինգ տեղեկագրերում գտնված որոշումներն ու համաձայնությունների այն կետերը, որոնք ամբողջությամբ կամ մասնակի պիտի չհամապատասխանեն կամ հակառակեն Բաթումի պատվիրակության կամ Պոլսի ժողովի որոշումներին կամ համաձայնությանը»[52]:

Հարց է առաջանում, թե Ալեքսանդրապոլում գործող հայ-թուրքական հանձնաժողովի ընդունած ո՞ր որոշումները պետք է չեղյալ համարվեին: Արխիվային նորահայտ փաստաթղթերը որոշակի լույս են սփռում այն իրադարձությունների վրա, որոնք զարգանում էին հետաթուրքական Հայաստանում և բացահայտում մինչև 1918 թ. հուլիսի վերջը թուրքական ռազմական ակտիվ ներկայության փաստն անկախ Հայաստանում:

Հուլիսի 11-ին ՀԱԽ-ը, դիմելով Թ. Նազարբեկյանին, հայտնում է, որ հուլիսի 9-ին քննել է նրա որոշումը՝ Թազաքենդից ու Աղբաշայից ետ քաշվելու վերաբերյալ և պարզել՝ այդ վճիռը չի բխել ռազմավարական նկատառումներից, այլ եղել է զուտ քաղաքական քայլ: ՀԱԽ-ը կարծում էր, որ նպատակը

---

[50] *Տե՛ս Ա.-Դ ո. 2019, 464–465:*

[51] *Լեզվաբան, մանկավարժ, կուսակցական (ՀՅԴ անդամ՝ 1906–1922 թթ.) ու հասարակական գործիչ, Փարիզի ազգային համագումարի պատվիրակ: 1925 թ. պրոֆ. Ա. Խաչատրյանն ընտրվել է ՀՍԽՀ գիտության և արվեստի ինստիտուտի իսկական անդամ:*

[52] *Տե՛ս Խ ա չ ա տ ր յ ա ն. 2010, 107:*

Թ. Նազարբեկյանի կողմից Ալեքսանդրապոլի հանձնաժողովին տրված ՀԱԽ-ի հուլիսի 8-ի որոշմանը (որին ներկա էր Թ. Նազարբեկյանը) հակասող գեներալի գրավոր խոստումը փրկելն էր, այն է՝ պաշտպանել նշված սահմանը: ՀԱԽ-ը որոշում է. 1. «ախտոսանք հայտնել մեր զորքերի ետ քաշվելու կապակցությամբ, ինչը տեղի է ունեցել թուրքական զորքերի ճնշման պայմաններում, որը և հաշտության պայմանագրի խախտում է», 2. ՀԱԽ-ն այլևս չի հանդուրժի նման գործողություններ, որոնց պետք է հասցվի հզոր հակահարված և 3. խնդրում է Թ. Նազարբեկյանին ընդունել բոլոր միջոցները՝ հայկական զորքերը մարտական պատրաստվածության մեջ պահելու ուղղությամբ[53]*:*

Հուլիսի 17-ին էլ ՀԱԽ-ը դիմում է Նոր Բայազետի ազգային խորհրդին և խնդրում՝ «չտապ, Դարալագյազ (Եղեգնաձոր), Յապոնին (Հովհաննես Պարոնյան-Յապոնացի Սաքո – Վ. Մ.) ուղարկել հետևյալ հեռագիրը. հաղորդում եմ ձեզ կատարման համար՝ Ալեքսանդրապոլի հայ-թուրքական հանձնաժողովի տեղեկությունը զեմարկացիոն գծի վերաբերյալ: Քարտեզի վրա որոշվել է Սարդարապատի ուղղության զեմարկացիոն գիծը, 5 վերստի վրա: Հայկական զորքերը չպետք է առաջ անցնեն հետևյալ գյուղերից հարավ-արևելք-Բայրամլի, Խզնաուզ, Քյուրաքլու, Քյորփալու, Ալիբեկլյու, Կալարա, Նորագավիթ, Ջանաղլու, Ջաթմա, Դախնազ, Երանոս, Արշիկ, Գորտուն և ելցին: Իսկ թուրքական զորքերն էլ չէին անցնելու նույն գիծը՝ իրենց տնօրինության տակ պահելով Քայթուլ, Զեյվա, Այլանլու, Կարաչիմաղ, Քաչապարաղ, Ենգիջա, Թազաքենդ, Աղբաշ, Դվին, Շուքալաքենդ, Աղդամլար, Թաչլու, Կարաբաքլար, Ներքին Շալաբլու, Կարիդ, Արղալազ և Ալչաքու, Գևանդ գյուղերը»[54]*: Բաշ-Ապարանի և Ղարաքիլիսայի ուղղություններով սահմանը ժամանակավոր, բայց նույնն էր թողնվում, մինչև կլուծվեր Վրաստանի և Ադրբեջանի սահմանի հարցը:*

Ընդհանուր պատկերն ամբողջացնում է Դարալագյազի Առանձին պարտիզանական գումարտակի հրամանատար Յապոնի գործունեության սկզբնական դրվագներից մեկը, տվյալ դեպքում՝ Արամ Մանուկյանի հետ նամակագրական կապի միջոցով որոշ սահմանային խնդիրների մանրամասների փոխանցումը[55]*: Հուլիսի 31-ին Մխակ վանքից Յապոնը գրում էր Արամին, թե ստացել է նրա հուլիսի 25-ի նամակը և կշտամբում՝ «դու գրում ես, որ իբր թե հարյուր, հազար անգամ գրել եք սահմանների մասին և հրահանգել եք մեզ կանգնել մեր սահմանների վրա, դուք մեր գիտակցության և անհասկացողության վրա եք զարմանում, իսկ մենք զարմանում ենք, որ դուք հազարավոր անգամ գրում եք սահմանների մասին, բայց ամեն անգամ էլ միայն նույնը կրկնում*[56]*:*

Նախքան Զնգլուովի դեպքերը, այդ մասին ոչինչ չգիտեինք. մենք համոզված էինք, որ հաշտությունը խախտված է. այդ դեպքերից անմիջապես հետո իմացանք, որ ձեր սահմանը մինչև Արփա գետն է հասնում. իսկ այնուհետև, մի՞թե Արփայից ղենը սահման գծելու պետք չունիք: Եթե դուք պետք

---

[53] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 24, մաս 3-րդ, թ. 373:*

[54] *ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 24, մաս 3-րդ, թ. 373:*

[55] *ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 24, մաս 3-րդ, թ. 382–389: Ա. Մանուկյանն այս նամակը ստացել է 1918 թ. նոյեմբերի 14-ին:*

[56] *ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 24, մաս 3-րդ, թ. 382:*

չեք զգում, մեզ համար խիստ կենսական է այդ հարցը, որովհետև Արփաչայ (Արփա – Վ. Մ.) գետի մյուս կողմում կան 14–15 հայկական գյուղեր, որոնք խարխափում են տարատամուլթյան մեջ»[57]*: Յապոնն ուզում էր պարզել շատ կոնկրետ հարց, այսինքն՝ եթե «այդ կողմի սահմանը պարզ է», ապա ինքն ակնկալո՞ւմ էր հստակ հրահանգ երևանից այդ տարածքի հայ գյուղացիներին Արփայի մյուս ափը իրենց ցորենով անցկացնելու վերաբերյալ:*

Զափազանց կարևոր ու արդիական էր Յապոնի հարցադրումն այն մասին, թե «շատ անհրաժեշտ է մեր երկրամասի լրիվ սահմանները գիտենալ»[58]*, քանի որ համեստորեն ներկայացվող տողերի արանքում բացահայտվում է նրա իրականացրած վիթխարի ու հերոսական աշխատանքը: Ըստ այդմ՝ Յապոնը ռմբակոծությամբ ջախջախել էր Ղոզլջայի թուրքական ավազակախմբերին, տեղում բնակեցրել Ղարախաչի հայ գաղթականությանը: Խմբապետ Արսենի առաջարկությամբ՝ անցնող զորքերին թալանելու, ճանապարհին ավազակություններ, սպանություններ անելու պատճառով, զինաթափվելու պահանջ էր ներկայացրել Սալլի և Ղշլաղ գյուղերի մահմեդական բնակչությանը: Այդ նպատակով Յապոնն ուղարկել էր կոմիսար Հայրիկ Տեր-Ավագյանի մլիցիայի ջոկատը, որի զինաթափվելու պահանջը մերժվել էր և վերոհիշյալ գյուղերի մահմեդականներն իրենց զենքով փախել էին սարերը: Յապոնը նաև ընդհանրացնում էր՝ «զինաթափ լինելու առաջարկիս չհամաձայնվելու ու բոլոր փորձերից եզրակացնել կարելի է, որ թրքությունը (մեր սահմաններում եղած) ոչ մի տեղ զինաթափ լինելու տենդենց չի ցույց տալիս, ընդհակառակը, ամեն տեղ զինված դիմադրություն ենք գտնում, այդ պատճառով էլ շատ դեպքերում ստիպված եմ զենքի ուժի դիմելու... Շարունակում եմ մեր Զանգեզուրի արանքում ընկած բոլոր գյուղերի զինաթափ անելու գործը: Դրանցից գլխավորը և առաջինը Հերհերն է: Հերհերի օպերացիայից հետո ես կամ Նորայրը կգանք Երևան»*[59]*:*

Յապոնը հաղորդում էր նաև Արամին՝ Անդրանիկի և Նախիջևանի հետ կապ չունեն, ենթադրում են, որ նա Ագուլիսի կողմերում է, Մեղրիից Ղարաբաղ անցած լինել չէր կարող, քանի որ Գորիսից ստացված նամակն էլ չէր պարզում գեներալի գտնվելու վայրը: Գորիսից հայտնում էին՝ այնտեղ է խմբապետ Մանուկը, ով հետո անցնելու է Սիսիան, Կապան և Զանգեզուր՝ տեղական ուժերի ինքնապաշտպանությունը «ամուր հողի վրա դնելու»: 7.000 գաղթականության մի մասը Գորիսից անցել էր Շուշի: Ղարաբաղում պատրաստվում էր դիմադրել Արմեն Սասունին[60]*: Այսպիսով, պարզ է դառնում, որ գոնե մինչև 1918 թ. հուլիսի վերջը, Բաթումի պայմանագիրը հայկական կողմի համար գրեթե չէր գործում, թուրքական զորքերը չէին հեռացում գծված սահմաններից, Հայաստանում չէին դադարում մահմեդական զինված խռովությունները, տիրում էր կատարյալ անիշխանություն: Եվ այս ամենին զուգահեռ՝ չէր լուծվում իշխանության հաստատման խնդիրը:*

Հայաստանի Ապահովության խորհրդի անդամ Մ. Մուսինյանի ամփոփումն արդիական է, հատկապես՝ Արցախյան հիմնահարցի համատեքստում.

---

[57] *ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 24, մաս 3-րդ, թ. 382:*
[58] *ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 24, մաս 3-րդ, թ. 382:*
[59] *ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 24, մաս 3-րդ, թ. 382:*
[60] *ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 24, մաս 3-րդ, թ. 382:*

«Օր չէր լինում, որ զրավոր կամ բերանացի դիմում չանեին (թուրքական կողմը – Վ. Մ.) ու չհայտարարեին, թե հայ զորամասերը, հայ զինված բանդաները և տեղական հայ բնակիչները հարձակվում են տաճիկ զորքերի վրա, թե Հայաստանի սահմաններում մինչև օրս էլ չարունակվում են հալածանքները մահմեդականների դեմ և այլն: Եվ այս բոլորը նրա համար, որ մեզ վրա ճնշում գործ դնեն, որ արդարացնեն իրենց գործողությունները և հող պատրաստեն իրենց հետին նպատակներն իրագործելու համար»[61]: Դրան զուգահեռ՝ Ն. Աղբալյանը վկայում է, որ «Շուշիում ևս թուրք պարետ կա, հայերը պահում են Ակերանը և տաճիկները երես չեն տալիս տեղական թուրքերին և հայերի վերաբերմամբ չատ կօրեկտ են»[62]:

Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության (ԱԴՀ) և Օսմանյան Թուրքիայի միջև Բաթումի պայմանագիրը ստորագրեցին ԱԴՀ Ազգային խորհրդի նախագահ Մ. Ռասուլզադեն և ԱԳ նախարար Մ. Հաջինսկին, Թուրքիայի կողմից՝ արդարադատության նախարար ու պետական խորհրդի նախագահ Հալիլ Մենթեշեն և Կովկասյան ռազմաճակատի օսմանյան բանակների հրամանատար Ֆերիկ Մեհմետ Վեհիբ փաշան: Պայմանագրի 4-րդ հոդվածի համաձայն՝ Թուրքիան Ադրբեջանի դիմումի դեպքում երկրում «կարգ հաստատելու համար իրավունք ունի զինված ուժով միջամտելու»[63]: ԱԴՀ-ն պարտավորվում էր երկրից վտարել Թուրքիայի հետ պատերազմող երկրների բոլոր սպաներին ու պաշտոնյաներին, ինչպես նաև սահմանամերձ տարածքներից հեռացնել զինված խմբավորումները: Պայմանագրով կարգավորվում էին նաև կողմերի միջև առևտրատնտեսական, հյուպատոսական, փոստ-հեռագրային հարաբերությունները: Նույն օրը՝ հունիսի 4-ին, Բաթումում ստորագրված եռակողմ թուրք-վրաց-ադրբեջանական պայմանագրով սահմանվում էին Բաքու-Բաթում նավթամուղի վերագործարկման պայմանները: Երկկողմ ժամանակավոր պայմանագրով Ադրբեջանը նաև պարտավորվում էր «իր» երկաթուղիներով թուրքական բանակի զորամասերի ու սպառազինության փոխադրումը: Երկաթուղային հանգույցներում տեղակայվելու էին թուրք սպաներ, և ԱԴՀ երկաթուղային ցանցն անցնում էր Թուրքիայի վերահսկողության տակ[64]:

Անդրադառնալով Ադրբեջանի անկախության գործընթացին՝ ընդգծենք հռչակագրի առաջին կետը, ըստ որի «Ադրբեջանը բաղկացած է արևելյան և հարավային Անդրկովկասից», այսինքն՝ ըստ «Кавказское слово»*-ի դիպուկ արտահայտության՝ «Ադրբեջանի մեջ պետք է մտներ այն ամենը, ինչը չէր մտնում Վրաստանի մեջ»[65]:*

Ստանալով Թուրքիայի բաղձալի աջակցությունը՝ Կովկասի մահմեդական թաթարները վստահաբար սկսեցին նաև իրենց «թուրք» անվանել: Այդ առումով հիշարժան է Թիֆլիսի «Թուրքական ազգային կոմիտեի» որոշումը:

---

[61] *ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 24, մաս 3-րդ, թ. 382:*
[62] *Տե՛ս Սուքիասյան. 2019, 89:*
[63] *«Հորիզոն», 06. VI. 1918:*
[64] *Կնյազյան. 2008, 25–26:*
[65] «Кавказское Слово» (Тифлис), 01. VIII. 1918.

Բաթումի պայմանագրից անմիջապես հետո՝ հունիսի 5-ին, այդ խորհրդի նիստը բանաձև ընդունեց.

1. «Նկատի ունենալով ստեղծված կացությունը, Թիֆլիսի թուրքական ազգային կոմիտեն ճանաչում է Ադրբեջանի անկախությունը: Ինչ վերաբերում է թուրքական ազգային կենտրոնական խորհրդին, որ ճնշող մեծամասնությամբ կազմված է Մուսավաթ կուսակցության անդամներից, որոնք երկիրը կործանեցին ու հասցրին ներկա դրությանը (նկատի ունի, մասնավորապես, Բաքվի մարտյան խռովության պարտությունը – Վ. Մ.), Թիֆլիսի ազգային կոմիտեն իր անվստահությունն է հայտնում կենտրոնական խորհրդին և առաջարկում է նրան չխառնվել Վրաստանի հասարակապետության մեջ մնացած թուրքերի գործերին:

2. Թիֆլիսի թուրքական ազգային կոմիտեն իրեն հայտարարում է Վրաստանի հասարակության մեջ գտնվող թուրքերի ժամանակավոր ազգային խորհուրդ և իր վրա է վերցնում մոտիկ ապագայում Վրաստանի թուրքերի ազգային համագումարի հրավիրման նախաձեռնությունը[66]:

3. Նկատի առնելով այն անիշխանությունը, որ տիրում է Արևելյան Անդրկովկասում, կոմիտեն Ադրբեջանի հասարակապետության կառավարությանն առաջարկում է անմիջապես մեկնել գավառները՝ պաշտպանելու Ադրբեջանի քաղաքացիներին»[67]:

Թիֆլիսի թուրքական ազգային կոմիտեի «Ալ-Բայրաք» լրագիրը հրապարակել էր «Մուսավաթիստները» վերտառությամբ հոդված: Կոմիտեն, մեղադրելով Գանձակի կենտրոնական ազգային խորհրդին և նրա գործունեությունը համարելով «Անդրկովկասի թուրք ժողովրդի կործանման պատճառ»՝ մասնավորապես նշում էր, որ «եթե Շամքորում չվառեր հրդեհը (Կովկասյան բանակի նահանջող ռուս զինվորների զինաթափումը և կոտորածը 1918 թ. հունվարին – Վ. Մ.), չէր էլ կործանվի ոչ Բաքուն, ոչ էլ Շամախին: Ապացույցն այն է, որ եթե Գանձակի ազգային կոմիտեն ժամանակին չփակեր Բաքվում հավաքված հայ էչելոնների ճանապարհը, ապա նրանք չէին մնա Բաքվում փակված, ու նրանք չէին հակվի դեպի բոլշևիկները ու չէին հարձակվի Բաքվի խեղճ թուրք ժողովրդի վրա, կամ Բաքվից չէին անցնի Շամախի և Շամախին իր ամբողջ գավառով չէին ավերի»[68]:

Հիմնականում օբյեկտիվ եզրահանգումները կեղծվում են փոքր թվացող, բայց ամենաէական հարցադրմամբ, այն է՝ «Բաքվի խեղճ թուրք ժողովրդի վրա» ոչ թե հայերն ու բոլշևիկներն էին հարձակվել, այլ հենց իրենց գլխավոր ընդդիմախոս Մուսավաթը, որը կազմակերպել էր խռովություն՝ Բաքուն գրավելու, Ադրբեջանի մայրաքաղաք դարձնելու, Բաքվի խորհրդի իշխանությունը տապալելու և հայկական տարրի ոչնչացման նպատակով:

Վերոգրյալից կարելի է եզրակացնել. 1. անմիջապես ի հայտ է գալիս նորաստեղծ «Ադրբեջանին» տեր կանգնելու վստահ միտումը, որի առաջամարտիկ է դիտարկվում Օսմանյան Թուրքիան, 2. վերջինիս ուղղակի աջակցությամբ խնդիր է դրվում վերջ տալ Արևելյան Անդրկովկասի «անիշխա-

[66] *Հանգամանորեն տե՛ս Մ ե լ ի ք յ ա ն. 2018,* М е л и к я н. 2019.
[67] *«Հորիզոն», 05. VI. 1918:*
[68] *«Հորիզոն», 21. VI. 1918:*

նութ յանը», այսինքն՝ Բաքվի հայամետ բոլշևիկյան իշխանութ յանը և 3. Թիֆլիսից հնչող «նոր թուրքերի» այս համարձակ տոնը ենթադրում էր վրաց-թաթարական կայուն դաշինքի հակահայկական ուղղվածութ յունը, որն ավելի էր ամրապնդվել թուրք-գերմանական հովանավորութ յան տեսքով:

Վերոնշյալի առումով թերևս միակ թույլ տեղն Ախալցխայի ու Ախալքալաքի գավառների պատկանելիութ յան հարցն էր: Հունիսի 3-ի երեկոյան ժամը 11-ին Բաթումում Վրաստանի և Թուրքիայի միջև ստորագրված հաշտութ յան պայմանների համաձայն այդ երկու գավառների որոշ մասեր անցնում էին Թուրքիային: Վրաստանին էր թողնվում հարևան Աբաստումանը[69]: Որպես պատրվակ՝ ընդունվում էր տեղի մահմեդական բնակչութ յան նկատմամբ կիրառվող հալածանքները: Դեռ մայիսի 16-ին՝ Անդրկովկասի անկախ հանրապետութ յան օրոք, կովկասյան օտոմանյան բանակի գլխավոր հրամանատար Վեհիբ Մեհմեդը Վրաստանի կառավարութ յան նախագահ Ա. Ջխենկելիին թուրքերենով հայտնում էր՝ «վերջին շրջանում Ախալցխայի ու Ախալքալաքի գավառների մահմեդական բնակավայրերում տուժածների ցուցակը»[70]: Դա օգտագործելով՝ Բաթումի խորհրդաժողովին են ներկայացնում այդ գավառների մահմեդական պատվիրակները՝ իրենց անհանգստացնող պահանջներով: 6 կետից բաղկացած և 40 հոգու կողմից ստորագրված պետիցիան թաթար-մահմեդականների կարծիքով լիովին հիմնավորում էր Ախալցխայի ու Ախալքալաքի գավառների Օսմանյան Թուրքիային պատկանելիութ յան խնդիրը[71]: Միաձայն որոշվում է. խնդրել թուրքական կառավարութ յանը հաշտութ յան պայմանագրով իրենց միացնել ամբողջ Ախալցխայի գավառը և Ախալքալաքի գավառի մի մասը: Նրանք հայտնում էին նաև, որ մերժման դեպքում իրենք մինչև վերջին փամփուշտը կկռվեն ինքնորոշման համար[72]:

Ընդգծենք, որ, ի տարբերութ յուն վրաց ազգայնականների, թաթար-մահմեդական պատվիրակները, փաստորեն, հրաժարվում էին Ախալքալաքի գավառի հայկական զգալի մասից:

Թաթարները «հրաժարվում» էին, բայց գրավում էին թուրքերը. հունիսի 3-ին Ախալքալաքի գավառի Զամտուրա գյուղի համայնքի ներկայացուցիչ Սարգիս Աբելյանցը տեղեկացնում էր ՀԱԽ-ին, որ «թուրքերն արդեն գրավել են Ախալքալաքը. քաղաքը այրվում է, զինվորները բարոյալքված են, չեն կռվում»[73]:

Ինչ վերաբերում էր Ղարաբաղին, ապա հայտնի է դառնում՝ նախ՝ 1918 թ. հունիս 13-ին Թիֆլիսում կայացել էր Հայկական և Ադրբեջանական ազգային խորհուրդների նիստ՝ նվիրված Հայաստանի և Ադրբեջանի տարածքային սահմանազատման հարցին: Ադրբեջանի ազգային խորհուրդը, փաստորեն, մերժելով Թիֆլիսի ժողովի որոշումը՝ հայտարարել էր՝ Ղարաբաղի և Հայաստանի Արևելյան Սահմանների հարցը քննարկվելու է Մահմեդական

---

[69] «Հորիզոն», 05. VI. 1918:

[70] НАГ, ф. 1818, оп. 2, д. 276, л. 29.

[71] Кариби (П. Гелешвили). 1920, 161.

[72] Кариби (П. Гелешвили). 1920, 161–162.

[73] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 36, թ. 82:

ազգային խորհրդում, որից հետո կվերսկսվեն բանակցությունները: ՀԱԽ-ը պարզապես խնդրում էր տեղյակ պահել, թե երբ են վերսկսվելու նշված բանակցությունները[74]*:*

1918 թ. հունիսի 12-ին «Արցախի և Սյունիքի Հայրենակցական միության»[75] *վարչությունը, դիմելով ՀԱԽ-ին, հայտնում էր. «Նկատի ունենալով, որ ներկայումս որոշվում է երկու հայաշատ երկրների վիճակը, պարտք համարեց Թիֆլիսում գումարել ձեռնահաս հայրենակիցներից մի խորհրդակցություն»*[76]*:*

Հունիսի 14-ին Թիֆլիսի Վաճառականական բանկի շենքում ՀԱԽ-ի անդամ Տիգրան Բեկզադյանի նախագահությամբ կայացավ այդ խորհրդաժողովը, որը, բազմակողմանի քննության ենթարկելով խնդիրը և «նկատի առնելով, որ չկա ոչ մի պատմական, աշխարհագրական, քաղաքական և ազգագրական հանգամանք, որ զրկավոր լիներ Արցախի և Սյունիքի հայաբնակ մասերը Հայաստանի անկախ հանրապետությունից կտրելու համար, միաձայն որոշեց. 1. Անպայման անհրաժեշտ համարելով, որ Հայոց երկրի վերոհիշյալ մասերը միացվեն Հայաստանին, 2. Խնդրել Ազգային խորհրդից, որ նա Ադրբեջանի ազգային խորհրդի հետ մղած բանակցությունների մեջ անպայման պահանջե, որ այժմյան Ղարաբաղը իր բոլոր հայաբնակ գավառներով (Ջրաբերդ, Խաչեն, Վարանդա, Դիզակ, Գյուլիստան) և Զանգեզուրը համարվեն Անկախ Հայաստանի անբաժանելի մաս»[77]*:*

Ժողովում ընտրվեց նաև երեք հոգուց բաղկացած հանձնաժողով՝ Շուշիի քաղաքագլուխ Գերասիմ Շահնազարյանի, Առաքել Բաբախանյանի (Լեո) և Մ[իքայել] Ղարաբեկյանի մասնակցությամբ: Հավելենք, որ Հայրենակցական միության վարչության նախագահն անվանի պատմաբան Լեոն էր[78]*: Սա Արցախի ինքնորոշման գործընթացում, թերևս, առաջին փաստաթուղթ-իրավական հիմքն է. այն հրապարակվում է առաջին անգամ:*

*Այդ նույն օրն Ադրբեջանի Մահմեդական ազգային խորհուրդը պատասխանում է հունիսի 13-ի հայկական ու ադրբեջանական ազգային խորհուրդների նիստի սահմանազատման խնդիրներին, որ նախորդ օրը կայացած խորհրդակցության ժամանակ, որտեղ ՀԱԽ-ից մասնակցել են Մ. Պապաջանյանը, Ս. Հարությունյանը (ՀԺԿ), կայացել է բանավոր համաձայնություն և Ղարաբաղի հարց ընհանրապես չի բարձրացվել. «Այժմ Ադրբեջանի ազգային խորհուրդը քննարկելով ՀԱԽ-ի նոր առաջարկը Ղարաբաղի մասին, կտրականապես մերժեց այդ առաջարկը,– ասվում էր փաստաթղթում,– գտնելով, որ Ադրբեջանի և Հայաստանի միջև տարածքային սահմանների վերաբերյալ բոլոր բանակցությունները կարող են ընթանալ միայն հունիսի 13-ի համաձայնության սահմաններում և դրա հիմքի վրա: Ինչ վերաբերում է սահմանային գծի հաստատմանը, ապա դա կարող է դառնալ Ադրբեջանի և**

---

[74] *ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 17, թ. 20:*

[75] *Փաստաթղթի կնիքի վրա մակագրված է՝* «Союз армян Карабаха и Зангезура».

[76] *ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 36, թ. 41–42:*

[77] *ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 36, թ. 41–42:*

[78] *ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 36, թ. 41–42:*

Հայաստանի կառավարությունների կողմից ձևավորված հատուկ հանձնաժողովների քննարկման առարկա»[79]:

Մեզ համար անհայտ է մնում հունիսի 13-ի «բանավոր համաձայնության» բովանդակությունը: Ակնհայտ է, որ հանդիպմանը մասնակցել են ՀԺԿ-ի վերոհիշյալ ներկայացուցիչները:

Հունիսի 25-ին Թիֆլիսում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչ Մ. Ջաֆարովը ՀԱԽ-ին հայտնում էր, որ «ներկայումս Ադրբեջանի Հանրապետության կառավարությունը ձեռնամուխ է եղել իր պետական սահմանների որոշմանը, ուստի իմ պարտքն եմ համարում այդ հարցի շուրջ մեր հարևան բոլոր պետությունների, այդ թվում և Հայաստանի հետ նախնական հարաբերությունների մեջ մտնել»[80]: Այդ նպատակով նա առաջարկում էր ստեղծել «Ադրբեջանա-հայկական սահմանաբաժանման հանձնաժողով»: Համաձայնության դեպքում առաջարկվում էր ՀԱԽ-ին նշել հանդիպման վայրը և ժամկետը. Մ. Ջաֆարովն առաջարկում էր Ելիզավետպոլը (Գյանջա)[81]:

Նորահռչակ Հայաստանի տարածքային հարցն առաջին անգամ պաշտոնապես լսվել է ՀԱԽ-ում 1918 թ. հունիսի 1-ին, երբ դեռ քննարկվում էր Հայաստանի Հանրապետության անկախության հայտարարման ձևն ու բովանդակությունը: ՀԱԽ-ի նիստում Ավ. Ահարոնյանը բարձրացնում է «Սահմանափոխման հարցը»: Կանխելով կարծիքների բազմազանության հնարավորությունը, ինչպես, օրինակ, Ռ. Տեր-Մինասյանի մտահանգումն էր, թե «օսմանցիները ցանկություն ունեն մեր սահմանները լայնացնելու հյուսիսից»՝ Խ. Կարճիկյանը «խնդիրը վերջացած է համարում, առաջարկում է «պետության» քարտեզը գծել». որոշվում է «Պետության» քարտեզի գծումն ու մշակումը հանձնարարել Գ. Խատիսյանին, Ս. Կամսարականին և գեներալ Մ. Արեշյանին[82]: Նկատենք, որ պետություն եզրույթն առայժմ չակերտների մեջ էր առնվում: Հայաստանի Հանրապետության անունից Բաթումի պայմանագիրը ստորագրեցին Ավ. Խատիսյանը, Հ. Քաջազնունին ու Մ. Պապաջանյանը, Օտոմանյան կայսերական կառավարության կողմից՝ Հալիլ բեյը և գեներալ-լեյտենանտ Ֆ. Վեհիբ փաշան:

Պայմանագրի 2-րդ հոդվածով գծվում էր հայ-թուրքական սահմանը: 3-րդ հոդվածով ՀՀ և ԱԴՀ միջև փոխադարձ սահմանի մասին համաձայնության բանաձևը պետք է տեղյակ պահվեր Թուրքիային: 4-րդ հոդվածով Օտոմանյան կառավարությունը «պարտավորվում էր ՀՀ կառավարությանը օգնություն ցույց տալ զենքի ուժով, եթե վերջինս խնդրի երկրում կարգ ու հանգստություն ապահովելու համար»[83]: 5-րդ տխրահռչակ հոդվածը նախատեսում էր, որ «ՀՀ կառավարությունը պարտավորվում է գործնականորեն հակադարձել, որպեսզի իր տարածքում ոչ մի բանդա չձևավորվի և չզինվի, ինչպես նաև զինաթափել և ցրել բոլոր բանդաները, որոնք կգան այնտեղ

---

[79] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 17, թ. 25:*

[80] *ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 17, թ. 23:*

[81] *ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 17, թ. 23:*

[82] *Տե՛ս Հայաստանի անկախության հռչակումը և իշխանության կենտրոնական մարմինների ձևավորումը (1918 թ. մայիս–հուլիս). 2009, 37–38:*

[83] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 24, 2-րդ մաս, թ. 332–333:*

պատսպարվելու»: Թուրքերը հատկապես նկատի ունեին Անդրանիկի Առանձին հարվածող զորամասը (1918 թ. փետրվար-ապրիլ ժամանակահատվածում՝ Արևմտահայ դիվիզիա): 6-րդ հոդվածով ՀՀ տարածքում բնակվող մահմեդականները պետք է օգտվեին բոլորին հավասար իրավունքներից, դխավոր մուֆթին նստելու էր Երևանում, մյուսները՝ հանրապետության այլ վայրերում: 11-րդ հոդվածով «ՀՀ կառավարությունը պարտավորվում էր զործադրել բոլոր ջանքերը, որպեսզի Բաքու քաղաքից, պայմանագիրը ստորագրելուց անմիջապես հետո անհապաղ էվակուացվեն բոլոր հայկական զինյալ ուժերը և ապահովել, որ այդ էվակուացիան առիթ չտա ընդհարումների»[84]: Այս կետն ուղղակիորեն նկատի ուներ ՀՅԴ - Շահումյան համագործակցությունը և դրա վտանգը:

Պայմանագրի գործարկման մասին են վկայում տասնյակ փաստեր, որոնցից նշենք երկուսը: Հունիսի 9-ին թուրքական բանակային կորպուսի պարետ Քյազիմ Կարաբեքիրը, դիմելով Թ. Նազարբեկյանին, կարգադրում էր, որպեսզի, թուրքական զորքի հարավային ուղղությամբ առաջխաղացման հետ կապված, մինչև նշանակված սահմանը (ըստ Բաթումի պայմանագրի) տարհանել տարածքները և երկաթուղով առաջանալու համար Ալեքսանդրապոլ ուղարկել 15 չարժակազմ[85]:

Գանձակից էլ (Ելիզավետպոլ) տեղեկացնում էին՝ «տաճիկները զինաթափ են արել բոլոր հայերին, հայտնելով, որ բոլշևիկների Գանձակ գալու դեպքում հայերը կարող են միանալ նրանց»[86]:

Այսպիսով, ստեղծվեց 12 հազար քառակուսի կիլոմետր տարածքով, բոլորիս հայտնի Հայաստանը. «Պետական սահմանն անցնում էր Երևանի տակով,– գրում էր Լեոն,– էնվեր փաշան գտել էր, որ միայն այսպիսի չափ ունեցող Հայաստանը կարող է երկյուղ չներշնչել Թուրքիային: Իսկությունն այն էր, որ Թուրքահայաստանը ոչնչացնելուց հետո երիտթուրքերը ոչնչացնում էին նաև Ռուսահայաստանը: Այս ծաղրական հանրապետությունն էլ, իհարկե, ժամանակավոր խաղ էր: Կ. Պոլսում թուրքերը հրատարակել էին Անդրկովկասի քարտեզը, որի վրա այլևս Հայաստան չէր մնում: Թուրքերի ամենամեծ հոգսն էր այժմ Ադրբեջան կազմակերպելը: Էնվերի եղբայրը՝ Նուրի-փաշան, Պարսկաստանի վրայով գնաց Գանձակ, սկսեց այնտեղ տեղական թուրքերից զորքեր կազմել և միևնույն ժամանակ ավելի մեծ ուժերով վերանորոգել կռիվը Բաքվի դեմ, որ հեղափոխական պրոլետարիատի ձեռքին էր, բայց պիտի դառնար Ադրբեջանի մայրաքաղաք»[87]:

Հունիսի 16-ին Լոռու և Ղազախ-Շամշադինի հայրենակցական միությունների ընդհանուր ժողովը բանաձև ընդունեց այդ զավառները Վրաց Հանրապետությանը կցելու դեմ[88]: Հունիսի 26-ին Հայրենակցական միությունը դիմում է ՀԱԽ-ին՝ «դիմել ամենակտրուկ միջոցների այդ առթիվ և վարչություններին իրազեկ պահել այդ խնդրի վերաբերյալ արված քայ-

---

[84] *ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 24, 2-րդ մաս, թ. 332–333:*
[85] *ՀԱԱ, ֆ. 121, ց. 1, գ. 50, թ. 4:*
[86] *«Հորիզոն», 15. VI. 1918:*
[87] *Լ. և ո. 2009, 369:*
[88] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 36, թ. 108:*

լերին»: Նկատենք, որ Լոռու և Ղազախ-Շամշադինի Հայրենակցական միության նախագահն էր Հովսեփ Արղությանը (Իչխան)[89]:

Հունիսի 20-ին Շուլավերի հասարակական լիազորները դիմում են ՀԱԽ-ին՝ «հնդիր» ձևակերպումով: Ներկայացնելով մայիսի 7-ից սկսած թուրքական վայրագությունները, թալանը, վրաց-գերմանական զորքերի հետ ընդհարումից հետո՝ թշնամական վերաբերմունքի սաստկացումը, սպանությունները, տեղի թաթարների ավազակային հարձակումները և ինքնապաշտպանական միջոցների բացակայությունը՝ նրանք ՀԱԽ-ին խնդրում էին ապահովել հայ բնակչության ֆիզիկական գոյությունը[90]:

Անկախության սկզբնական փուլում ՀԱԽ-ի և ՀՅԴ վերջին հստակեցումները քաղաքական կողմնորոշման հարցում

Անհրաժեշտ է հասկանալ ու հստակեցնել ՀՅԴ և ՀԱԽ-ի համատեղ ձևակերպած «հայկական գավառներ» եզրույթի ի հայտ գալու և վերջնականապես կիրառվելու հարցում: Վրաստանն ամենամանրակրկիտ ձևով և բավական վստահ նախանշում էր իր սահմանները, Ադրբեջանը նույնպես հստակ շրջանակ էր վերցնում՝ յուրացնելով արևելյան ու հարավային Անդրկովկասը: Երկուսն էլ իրենց նորաստեղծ պետությունները փորձում էին ձևավորել հայկական ու հայաբնակ տարածքների հաշվին և դա ամրագրել էին իրենց անկախության հռչակագրերում: Հարց է առաջանում՝ ինչո՞ւ հայկական քաղաքական վերնախավը՝ ի դեմս ՀԱԽ-ի որոշում է սահմանափակվել «հայկական գավառներ» անորոշ տերմինաբանությամբ: Թերևս դրսևորվում էր դեռ 1917 թ. փետրվարից հետո կայացած համառուսական ու անդրկովկասյան խորհրդակցություններում ձևակերպված սահմանազատման գործոնը, որը իբր բոլորի համար պարզ էր դարձնում «հայկական գավառների» ընդգրկումը:

Վրաստանի՝ գերմանական, Ադրբեջանի՝ թուրքական բաց ու համարձակ քաղաքական կողմնորոշումները Բաթումի պայմանագրից անմիջապես հետո բացահայտեցին հարևանների անթաքույց զավթողական հակումները: Դա էր, որ հայկական քաղաքական վերնախավին դես ու դեն էր նետում՝ թուրք-գերմանական-խորհրդային կողմնորոշումների ջրապտույտի մեջ:

Եթե նրանց մոտ դա հետևողական ու նպատակային գործընթաց էր, ապա հայկական քաղաքական դաշտը, հասկանալի է՝ Դաշնակցության դխավորությամբ «փրփուրներից բռնվելու» վարքագիծ էր ընտրել, ավելի ճիշտ՝ անհեռատես վարքագծի հետևանքով հայտնվել էր այնպիսի իրավիճակում, երբ ամեն ինչ հնարավոր էր նրան թելադրել ու պարտադրել:

Այդպես, մայիսի 26-ի ՀԱԽ-ի նիստում հնչեց ՀԺԿ ղեկավարներից Սամսոն Հարությունյանի կարծիքը, որ, եթե Վրաստանի անկախացմամբ բոլոր պետական կառույցները մնում են այդ անկախ Վրաստանի տարածքում, «իսկ թուր-

[89] *ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 36, թ. 109:*
[90] *ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 36, թ. 97:*

քերն ու հայերը զուրկ են բոլոր միջոցներից, ուրեմն պետք է իրար հետ խորհրդակցել և փոխադարձ համաձայնությամբ մի կամ առանձին իշխանություն (հայ-ադրբեջանական – Վ. Մ.) կազմել՝ առայժմ մնալով Թիֆլիսում, մինչև կպարզվի դրությունը»[91]*: Զգիտես ինչու, Ս. Հարությունյանը վստահում էր, որ ադրբեջանցիների ներսում երկու հոսանք կա: Մեկը ցանկանում է օսմանյան տիրապետություն, մյուսը՝ անկախություն՝ Թուրքիայի հովանավորությամբ, ուստի և եզրակացնում էր, որ «պետք է օգտվել մի իշխանություն կազմելու հնարավորությունից, քանի դեռ օսմանցիք չեն առաջացել»*[92]*:*

Խ. Կարճիկյանը հակադարձում է, որ Երևանի ու Գանձակի բոլոր թուրք ներկայացուցիչները կողմնակից են օսմանյան տիրապետությանը, և միայն Բաքվի «մի փոքրիկ ինտելիգենցիայի խմբակ Մ. Ռասուլզադեի գլխավորությամբ դեմ են այդ քայլին: Ղ. Տեր-Ղազարյանն, օրինակ, «Հայասեր» թաթարներին չէր հավատում»[93]*:*

Եվ ահա այս համատեքստում ու թաթար-ադրբեջանցիների հետ մերձենալու տեսքով, ավարտուն կերպարանք էր փորձում ստանալ արդեն Հայաստանի Հանրապետության թուրքական քաղաքական կողմնորոշումը: Դաշնակցության պաշտոնաթերթ «Հորիզոն»-ը հունիսի 8-ին արդեն գտնում էր, որ «Հաշտությունը կնքված է ուրեմն հայ ժողովուրդը այսօր այլևս թշնամի չունի և արմատորեն պիտի փոխվի նրա մտածելակերպն ու վերաբերմունքը դեպի իր դրացիները քանի չի խախտվել կնքված խաղաղությունը: Հայ և թուրք մասսաները Անդրկովկասում երկար տարիներ ապրել են կողք կողքի և եղել են միշտ բարեկամներ[94]*: Խմբագրականի հեղինակը՝ հավանաբար, Ս. Վրացյանը, չգիտես ինչու, ընդգծում էր Անդրկովկասի «հայ և թուրք մասսաներին՝ մոռանալով՝ հաշտությունը Թուրքիայի հետ է կնքվել, որը Հայաստանից գրեթե ոչինչ չէր թողել: Հասկանալի է, որ նոր «Ադրբեջանի» հետ մտերմանալով՝ ապահովվում էր և թուրքական կողմնորոշումը:*

Անգամ դժվար է մեկնաբանել՝ կարելի է, իհարկե, հանգիստ ու կշռադատելով հիմնավորել քաղաքականության և կողմնորոշումների էությունը, շահավետության առաջնության գործոնը, էլ չենք ասում Անտանտի դաշնակիցների հանդեպ՝ մեղմ արտահայտված ոչ պարկեշտ ու պատեհապաշտ վարքագիծը, սակայն դա էր թելադրում և պարտադրում նորանկախ Հայաստանին ստեղծված իրավիճակը:

Դեռ մայիսի 5 (18)-ին ՀՅԴ Թիֆլիսի կենտրոնական և տեղական կոմիտեների օրգան «Աշխատավոր»-ը, նշելով, որ «մեր դժբախտ երկիրը հեշտությամբ Շվեյցարիա չի դառնալու և մենք էլ չվեյցարացի,– եզրակացնում էր,–

---

[91] Տե՛ս Հայաստանի անկախության հռչակումը և իշխանության կենտրոնական մարմինների ձևավորումը (1918 թ. մայիս–հուլիս). 2009, 24:

[92] Հայաստանի անկախության հռչակումը և իշխանության կենտրոնական մարմինների ձևավորումը (1918 թ. մայիս–հուլիս). 2009, 24:

[93] Հայաստանի անկախության հռչակումը և իշխանության կենտրոնական մարմինների ձևավորումը (1918 թ. մայիս–հուլիս). 2009, 24–25:

[94] «Հորիզոն», 08. VI. 1918:

որ նա գնում է ստրկանալու տաճկա-գերմանական իմպերալիզմին»[95]: Դա միանգամայն լուրջ ընտրություն էր: Ալ. Խատիսյանը ընթերցողին անհայտ իր «Օրագրում»[96] մայիսի 23-ի Բաթումի գործընթացից հայտնում էր, որ Հ. Օհանջանյանը, Մ. Պապաջանյանը և ինքը՝ Օ. Ֆոն Լոստովից խնդրում էին օգնություն և հայություն պաշտպանություն: Վերջինս խոստանում էր այդ մասին հեռագրել կայզեր Վիլհելմին, զորաջոկատ ճևավորել, նախատեսվող հայկական պատվիրակությանը իր հետ տանել Գերմանիա: Առանճնահատուկ հույսեր Օ. Ֆոն Լոստովը չէր տալիս և խնդրում էր քննարկել այն հարցը, թե որքանո՞վ է նպատակահարմար հայերի համար, որպեսզի Գերմանիան Կովկասում չունենա իրական ուժ և միաժամանակ հայտարարի, որ վերցնում է հայերի պաշտպանության գործը: «Մենք 23-ի գիշերը,– հիշում է Ալ. Խատիսյանը,– գրավոր դիմում ուղարկեցինք՝ Կովկասի հայկական գավառների օկուպացիայի խնդրանքով: Մայիսի 24-ին Կարճիկյանին հեռագրեցինք, որ խորհուրդ ենք տալիս թուրքերին չդիմադրել»[97]: Մայիսի 25-ի երեկոյան Օ. Ֆոն Լոստովը խնդրում է այցելել իրեն: Ալ. Խատիսյանը և Հ. Քաջազնունին 1,5 ժամ զրուցում են նրա հետ չոգենավի վրա: Նա առաջարկում էր. անհապաղ պատվիրակություն ուղարկել Բեռլին, հռչակել Հայաստանի անկախությունը, առայժմ չկապվել Վրաստանի և Ադրբեջանի հետ, վստահել իր ու Շուլենբուրգի պաշտպանությանը, թուրքերի հետ ռազմական ընդհարումները դադարեցնել, այդ ամենն անել 2–3 շաբաթվա ընթացքում և հաշտություն կնքելիս դա չանել միայն Թուրքիայի հետ[98]:

Ի դեպ, Բաթումում՝ մայիսի 26-ին ՀԱԽ-ի անդամ Մ. Պապաջանյանի և նրա գործընկերներ Աղաևի ու Հուսեյնովի միջև զրույցի ընթացքում՝ հաստատվում է հայ-ադրբեջանական համաձայնություն ճևավորելու ծրագրի առկայությունը, որն ընդունվում էր և Թուրքիայի կողմից: «Հեռացան ավտոմեքենաները, պատվիրակները և մենք արցունքախառը կատակում էինք, – նշում էր Ալ. Խատիսյանը,– որ Անդրկովկասը փլուզվում է, զգացվում էր, որ մահմեդականներն ու հայերը ավելի մոտ են իրար, քան վրացիներն ու հայերը»[99]: Ցավոք, այս խոստովանությամբ անգամ բացահայտվում էր թե՛ Ալ. Խատիսյանի և թե՛ իր գործընկերների անհեռատեսությունը, պատեհապաշտական զգացումները, մոլորվածությունը: Ուշագրավ են նաև Ալ. Խատիսյանի ևս մի քանի վկայություններ. հունիսի 1-ին, երբ Բաթումում վրացիները սրեր էին ճոճում, Վեհիբ փաշան և Խալիլ բեյն ասում էին, թե «մի՞թե վրացիները լուրջ մտածում են, որ Վրաստանի համար գերմանացիները կկռվեն Թուրքիայի հետ: Դրա համար խելագար պետք է լինել: Մենք նրանց հետ միլիոն

---

[95] *Տե՛ս «Աշխատավոր» (Թիֆլիս), 05. V. 1918:*

[96] *Ալ. Խատիսյանի օրագրությունը հրատարակության է պատրաստվել 1919 թ. բնագրից կատարված մեքենագրության հիման վրա: Վերջինս պատրաստվել է Աստվածատուր Խաչատրյանի աշխատանքի համար (տե՛ս Խ ա չ ա տ ր յ ա ն. 2010, 262):*

[97] *Խ ա չ ա տ ր յ ա ն. 2010, 161–162:*

[98] *Խ ա չ ա տ ր յ ա ն. 2010, 163:*

[99] *Խ ա չ ա տ ր յ ա ն. 2010, 163:*

անփոփոխ կապեր ունենք: Խալիլը տարակուսանք հայտնեց, թե Ադրբեջանի համար անկախությունն անհրաժեշտ է»[100]*:*

Ալ. Խատիսյանը կուսակից ընկերներին հայտնում էր իր վերջին երեք ամիսների տատանումները՝ ստորագրելու կամ կռիվը չարունակելու հարցում: «Եվ հիմա ասում եմ,– եզրակացնում էր նա,– եթե չլիներ Ղարաքիլիսայի հերոսամարտը, որ թուրքական գեներալի հիացմունքն է առաջացրել, եթե չլիներ այդ վերջին կռիվը, գուցե այսօր մենք լինեինք ավելի վատ պայմաններում: Ճիշտ է Տրապիզոնյան բանակցությունների ժամանակ մենք մտածում էինք ունենալ Գերմանիայի չափ տերիտորիա, այսօր ունենք Բելգիայից երկու անգամ փոքր, սակայն երկու անգամ մեծ, քան Զեռնոգորիան էր: Մենք ունենք վերջապես մի անկախ Հայաստան. ընդամենը 12.000 քառ. վերստ տարածություն ունի նա և 800.000 բնակիչ: Չհուսահատվենք»[101]*:*

Ինչպես կարելի է չհուսահատվել, երբ Տրապիզոնի՝ ողջ ճախողված ու հակահայկական գործընթացն Ալ. Խատիսյանը նույնացնում է 1918 թ. մարտ–ապրիլ ամիսների ընթացքում չկռվելու, Էրզրումն ու ողջ Արևմտյան Հայաստանը հանձնելու քաղաքականությամբ՝ Գերմանիայի չափ երկիր ունենալու հետ: Անգամ Բաթումից հետո հույսը կապելով հայ ժողովրդի ստեղծարար ոգու ու կամքի հետ՝ նա դարձյալ գտնում էր, թե «միայն կարողանանք միանալ թուրք և վրացի դեմոկրատիաների հետ և միացյալ ուժերով ամրացնենք մեր սահմանները: Այս է օրվա պահանջը, այս ուղղությամբ պիտի աշխատեն Անդրկովկասի 3 կառավարությունները»[102]*:*

Ինչպե՞ս կարելի էր «միացյալ ուժերով ամրացնել սահմանները, երբ վրաց-գերմանական զորքերն արդեն Սանահինում էին, թաթար-մահմեդականները իրենց պատառն էին պոկել ու թուրքերի հետ դեռ նոր ոճիրների էին պատրաստվում: Հայ ազգային գործիչներից չատերը, ինչպես այս բախտորոշ, այնպես էլ Հանրապետության ողջ գոյության ընթացքում, չկարողացան տարանջատել հերթապահ կարգախոսները, «դեմոկրատիայի» առջև կույր խոնարհումը՝ իրական քաղաքականությունից: Վրաց մենշևիկներն ու թաթար գործիչները ևս օգտագործում էին ժամանակի արդեն մոդայիկ դարձած եզրույթները, բայց միաժամանակ «գործ» էին անում՝ Հայաստանի տարածքների հաշվին պետություն էին ստեղծում:

Եվ, վերջապես, ՀԱԽ-ը, այսինքն՝ ՀՀ կառավարությունը, Երևան ժամանեց միայն 1918 թ. հուլիսի 19-ին, բավական ուշ, երբ հարևաններն իրենց դաշնակիցների հետ հիմնականում լուծել էին իրենց խնդիրները:

Եզրակացություն

1918 թ. մայիսին անդրկովկասյան հանրապետությունների անկախության հռչակումից և Բաթումի պայմանագրի կնքումից հետո մինչև սեպտեմբերի կեսերը, թուրքական բանակն ու գերմանական որոշ զորամասեր ոչ

[100] *Խաչատրյան. 2010, 160:*
[101] *«Աշխատավոր», 05. V. 1918:*
[102] *«Աշխատավոր», 05. V. 1918:*

միայն տեղաբաշխված էին Հայաստանում և Վրաստանում, այլև ակտիվորեն ներգրավված էին մանանակի ռազմական գործողությունների մեջ ու տարածքային, սահմանային վերաբաժանումների հարցերում: Հակամարտությունների ակտիվ գոտիներ էին Արարատյան դաշտը, Սյունիքը, Լոռին, Բորչալուի գավառը, Վայոց ձորը, Ղարաբաղը:

Բաթումի պայմանագիրն իրականում չէր գործում. վրացական ու ադրբեջանական կառավարությունները, ելնելով անկախության հռչակագրերի տարածքային դրույթներից, վճռականորեն փորձում էին գավթել հայկական տարածքները:

Վահան Մելիքյան – պ. գ. դ., պրոֆ., Մ. Հերացու անվ. ԵՊԲՀ հասարակական գիտությունների ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ընդհանուր պատմության բաժնի առաջատար գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ Հայոց պատմության 1914–1921 թթ. ժամանակաշրջան, մանավորապես՝ 1917 թ. ռուսաստանյան երկու հեղաշրջումների, կուսակցությունների, Հայկական հարցի, անդրկովկասյան իշխանությունների ու անկախ հանրապետությունների առաջացման, արևմտահայության խնդիրները և այլ հիմնահարցեր: Հեղինակ է 9 մենագրության, 1 կոլեկտիվ դրքի, փաստաթղթերի ժողովածուի և 100 հոդվածի: v_melikyan@mail.ru

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ա-Դո. 2019, Հայության երկունքը, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 763 էջ:

Խաչատրյան Ա. 2010, Արևելահայ և թուրք դիվանագիտական հարաբերությունները, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 286 էջ:

Կնյազյան Դ. 2008, Ադրբեջանի դեմոկրատական հանրապետության կովկասյան քաղաքականությունը 1918–1920 թթ., Երևան, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ, 200 էջ:

Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. Քաղաքական պատմություն, փաստաթղթերի և նյութերի ժողովածու, կազմողներ՝ Վ. Ղազախեցյան, Գ. Գալոյան, Մելիքյան Վ. և ուրիշներ, Երևան, 2000, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 454 էջ:

Հայաստանի անկախության հռչակումը և իշխանության կենտրոնական մարմինների ձևավորումը (1918 թ. մայիս–հուլիս), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, կազմող՝ Հ. Սուքիասյան. 2009, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 219 էջ:

Մախմուրյան Գ. 2020, Հովհաննես Թումանյանի մասնակցությունը Հայաստանի Հանրապետության դիվանագիտական առաքելությունը Բաթումում (1918 թ. հուլիսի 3–5). – ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», № 3, էջ 17–30:

Մելիքյան Վ. 1997, Փետրվարյան հեղափոխությունը և Հայաստանը (1917 թ. մարտ–հոկտեմբեր), Երևան, «Մխիթար Գոշ», 319 էջ:

Մելիքյան Վ. 2018, Պայքար Բաքվի համար (1917 թ. նոյեմբեր–1918 թ. ապրիլ), Երևան, ԵՊՀ հրատ., 223 էջ:

Մելիքյան Վ. 2010, Իշխանության հիմնահարցը Անդրկովկասում, Անդրկովկասյան կոմիսարիատի գործունեությունը և հայ իրականությունը (1917 թ. նոյեմբեր–1918 թ. փետրվար), Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 263 էջ:

Մելիքյան Վ. 2019, Արևմտահայ հասարակական-քաղաքական կյանքը 1917–1918 թթ.: էրզրումի պաշտպանությունը և անկման պատճառները, Երևան, «Զանգակ-97», 246 էջ:

Մելքոնյան Ա. Ա. 2003, Զավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 543 էջ:

Ջամալյան Ա. 2011, Հայ-վրացական կնճիռը, Երևան, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ «Միտք» վերլուծական կենտրոն, 243 էջ:

Армяно-грузинский вооруженный конфликт. 1919, Баку, Изд. Бак. Арм. Нац. Совета инс. Урардия, Б. И. Тип. Им. Мясникова, 38 с.

Завриев Д. С. 1947, К новейшей истории Северо-восточных вилайетов Турции. Тбилиси, Тбилис. гос. ун-т., 369 с.

Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии. 1919, Тифлис, 504 с.

Из истории армяно-грузинских отношений, 1918 год (Пограничные конфликты; переговоры; война; соглашение). 1919. Тифлис, Гос. типография, 141 с.

Кариби (П. Гелешвили). 1920, Красная книга. Тифлис, 173 с.

Allen W., Muratoff P., Caucasian Battlefields: A History of the Wars on the Turco – Caucasian Border 1828–1921. Cambridge, 1953, p. 477–478.

МЕЖГОСУДАРСТВЕННЫЕ ТЕРРИТОРИАЛЬНЫЕ И ПОГРАНИЧНЫЕ ПРОБЛЕМЫ ПОСЛЕ ПРОВОЗГЛАШЕНИЯ НЕЗАВИСИМОСТИ ЗАКАВКАЗСКИХ РЕСПУБЛИК (Июнь–июль 1918 г.)

ВААН МЕЛИКЯН

Р е з ю м е

Ключевые слова: Армения, Грузия, Азербайджан, Германия, Османская империя, О. фон Лоссов, Н. Жордания, Вехиб-паша, Т. Назарбекян, Арам Манукян, Х. Карчикян, Лори, Борчалу, Ахалкалак, Карабах.

Батумский договор как пока что единственный международный политический акт, признающий независимость Грузии, Азербайджана и Армении и тем самым принявший территории и условные границы независимых республик, все-таки не смог предотвратить военное присутствие Османской Турции и Германии в регионе и, в частности в Армении, до конца июля 1918 года. Об этом свидетельствуют нововыявленные архивные документы.

С географической точки зрения конфигурация новых границ носила искусственный характер и выявила захватнические планы Турции, в частности план захвата Баку.

Накануне объявления независимостей, в политических кругах края уже делились национальные территории.

По сравнению с воззванием-объявлением независимости Армении, в декларациях о независимости Грузии и Азербайджана четко определялись территории новообразованных государств: грузины претендовали на все северные районы Армении, включая до северного побережья озера Севан; Азербайджан отмечал, что ему принадлежит Восточное и Южное Закавказье, то есть, все то, что не входило в состав Грузии. Получается, что остальное и есть определенные Армянским национальным советом «армянские уезды».

Процесс обсуждений начался 2-го, а уже с 11 июня – практическое осуществление раздела территорий, когда заседание Правительства Грузинской демократической республики решило, что определение границ между республиками всецело является приоритетом трех правительств.

С 19 июня по 6 июля 1918 г. в Александраполе (Гюмри) состоялись пять заседаний армяно-турецкой межгосударственной комиссии, основная цель которой состояла в установлении демаркационной линии. Большая часть обсуждаемых вопросов комиссии не получила решения, и 26 июля армянская делегация покинула Александраполь.

Армяно-грузинские пограничные споры привели к тому, что весь Лори и Борчалу были заняты турками. В июне 1918 г. в татарских районах Борчалинского уезда, где установилась власть Грузии, начались мусульманские восстания, а также столкновения между турецкими и германскими военными формированиями.

Согласно подписанному 3 июня грузино-турецкому соглашению, некоторые части Ахалкалакского и Ахалцыхского уездов переходили к Турции. Претензии на те же уезды имели также Грузия и Азербайджан. Азербайджан, одновременно, отказывался от армянской части Ахалкалакского уезда.

14 июня «Земляческий союз Арцаха и Сюника» вынес решение о том, что эти области обязательно должны быть присоединены к Республике Армения. Этот факт является правовой основой в процессе уступок армянских территорий. Значительную роль сыграло также запоздалое формирование армянского правительства: Армянский национальный совет прибыл из Тифлиса в Ереван только 19 июля 1918 года.

Ваан Меликян – д. и. н., проф., заведующий кафедрой общественных наук ЕГМУ им. М. Гераци, ведущий научный сотрудник отдела всеобщей истории Института истории НАН РА. Научные интересы: история Армении периода 1914–1921 гг., в частности вопросы, связанные с двумя российскими революциями 1917 г., партиями, Армянским вопросом, закавказскими властями, возникновением независимых республик, задачами западных

армян и др. Автор 9 монографий, 1 коллективной монографии, сборника документов и 100 статей. v_melikyan@mail.ru

INTERSTATE TERRITORIAL AND BORDER DISPUTES AFTER THE DECLARATION OF INDEPENDENCE OF THE TRANSCAUCASIAN REPUBLICS (June–July1918)

VAHAN MELIKYAN

S u m m a r y

Key words: Armenia, Georgia, Azerbaijan, Germany, Ottoman Empire, O. von Lossov, N. Jordania, Vehib Pasha, T. Nazarbekyan, Aram Manukyan, Kh. Karchikyan, Lori, Borchalu, Akhalkalaki, Karabakh.

The Batumi Treaty, so far the only international political act recognizing the independence of Georgia, Azerbaijan and Armenia thereby accepting the territories and conditional borders of independent republics, still could not prevent the presence of the military troops of Ottoman Turkey and Germany in the region and, in particular, in Armenia until the end of July 1918. This was evidenced by newly discovered archival documents.

From a geographic point of view, the configuration of the new borders was artificial and revealed the aggressive plans of Turkey, in particular, the plan to seize Baku.

On the eve of the declaration of independence, national territories in the political circles of the region were already being divided.

Compared to the proclamation-announcememt of independence of Armenia, the declarations of independence of Georgia and Azerbaijan clearly defined the territories of the newly formed states: Georgians claimed all northern regions of Armenia, including the northern coast of Lake Sevan, Azerbaijan noted that it owned the Eastern and Southern Transcaucasia, that is, all the territories which were not included in the territory of Georgia. Consequently, the rest were the "Armenian districts" defined by the Armenian National Council.

The discussions began on the 2nd, and already on the 11th of June, the practical implementation of the division of territories, when the meeting of the Government of the Georgian Democratic Republic decided that the determination of the borders between the republics was entirely a priority of the three governments.

From June 19 to July 6, 1918 five sessions of the Armenian–Turkish interstate commission were held in Alexandrapol (Gyumri), whose main goal was to establish a demarcation line. Most of the issues discussed by the commission were not resolved and on July 26 the Armenian delegation left Alexandrapol.

Պատմաբանասիրական հանդես 2022 № 1 Историко-филологический журнал

The Armenian–Georgian border disputes led to the result that all of Lori and Borchalu districts were occupied by the Turks. In June 1918 in the Tatar regions of the Borchalu district, where the Georgian forces were established, Muslim uprisings began, as well as collisions between Turkish and German military formations.

According to the Georgian–Turkish agreement signed as of June 3, some parts of the Akhalkalaki and Akhaltsikhe districts were transferred to Turkey. Georgia and Azerbaijan also had claims to the same districts. Azerbaijan, at the same time, renounced the Armenian part of the Akhalkalaki district.

On June 14, the "Compatriotic Union of Artsakh and Syunik" made a decision that these regions had to be joned to the Republic of Armenia. This fact was a legal basis in the process of concessions to Armenian territories, a significant role was also played by the belated formation of the Armenian government: the Armenian National Council from Tiflis arrived in Yerevan only on July 19, 1918.

Vahan Melikyan – Doctor of Sciences in History, Professor, Head of the Chair of Social Sciences of the YSMU after M. Heratsi, Leading Researcher at the NAS RA Institute of History. Scientific interests: the history of Armenia of the period 1914–1921, in particular, the issues of the two 1917 Russian coups, the political parties, the Armenian question, Transcaucasian authorities, the emergence of independent republics, the problems of Western Armenians and other issues. Author of 9 monographs, collection of documents, 1 collective monograph and over 100 articles,. v_melikyan@mail.ru

Doi:10.54503/0135-0536-2022.1-103

ԵՐԻՏԹՈՒՐՔԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԵՎ ՀՆՉԱԿՅԱՆՆԵՐԸ (XIX դ. վերջ – XX դ. սկիզբ)*

ԳԵՂԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Բանալի բառեր՝ երիտթուրքական շարժում, հնչակյաններ, Օսմանյան կայսրություն, բարենորոգումներ, Հայկական հարց, Ինքնավար Հայաստան, Ստեփան Սապահ-Գյուլյան:

Նախաբան

XIX դ. վերջին՝ Օսմանյան կայսրության հպատակ ժողովուրդների ազգային-ազատագրական շարժման վերելքի շրջանում, սուլթանական բռնապետության դեմ ծավալվեց նաև թուրքական ընդդիմադիր ուժերի՝ երիտթուրքերի շարժումը: Այդ շարժման սոցիալական բազան կազմող թուրք՝ նոր ձևավորվող բուրժուազիայի, մտավորականության և զինվորականության ներկայացուցիչների մի մասը ձգտում էր տապալել սուլթանական վարչակարգը, որը դիտվում էր որպես կայսրության զարգացման համար խոչընդոտ, և երկիրը դնել զարգացման եվրոպական ուղու վրա: Իրականում, XIX դ. ընթացքում Օսմանյան կայսրության քաղաքական ու տնտեսական համակարգի բարեփոխման ուղղությամբ մի շարք փորձեր կատարվեցին նաև եվրոպական մեծ պետությունների կողմից, սակայն ինչպես ղրանք, այնպես էլ սուլթանների ընդունած թանզիմաթները (բարենորոգումների մասին հրովարտակները) 1839 թ. և 1856 թ. չկենսագործվեցին:

Հնչակյանները երիտթուրքական շարժման ակունքների մասին

Օսմանյան կայսրության քաղաքական ու տնտեսական համակարգի բարեփոխումների հարցին անդրադարձել են XIX դ. վերջին քաղաքական պայքարի թատերաբեմ իջած Հնչակյան կուսակցության տեսաբանները: «Հիվանդ մարդն» առաջնորդող հոդվածում կուսակցության պաշտոնաթերթ «Հնչակը» համակողմանիորեն վեր է հանում Օսմանյան կայսրության արատավոր կողմերը, ցույց տալիս, որ նրա բարենորոգման փորձը «զուր ջանք և անօգուտ վաստակ եղավ յուր հեղինակների և պաշտպանների համար: Անողոք փորձը ցույց տվեց, որ թուրքը բարեփոխվելու ընդունակ ազգ չէր»[1]: Հոդվածի հեղինակի (Ստ. Սապահ-Գյուլյան) կարծիքով, եթե այդ ընթացքում որոշ փոփոխություն տեղի էր ունեցել, ապա միայն իշխող վերնախավի արտաքին ձևերի մեջ, իսկ բացարձակ մեծամասնությունը մնացել էր նույն մղեհանդ մուսուլմանը, «նոյն բարբարոսը, նոյն անտարբերը դեպի քաղաքակրթութիւնը, նոյն նենգ թշնամին՝ դեպի ճնշվող, մարդկային տարրական իրավունքներին ձգտող

---

* *Ներկայացվել է 01. X. 2021 թ., գրախոսվել է 10. I. 2022 թ., ընդունվել է տպագրության 20. I. 2022 թ.:*

[1] *«Հնչակ» (Լոնդոն), 10. IV. 1900:*

ազգումիւնները: Եվ անփոփոխ մնաց նաև իրերի դրումիւնը՝ երկրի վարչումիւնը՝ կաշառակեր ու ավերող, արդարադատումիւնը՝ ծախու և կողմնակալ»[2]:

Այս համատեքստում բոլորովին պատահական ու անհիմն չէին օսմանյան պետությանը տրված ինչպես հայ, այնպես էլ օտար հեղինակների գնահատականները: Օրինակ՝ Մեծ Բրիտանիայի վարչապետ Ուիլյամ Գլադստոնի բնորոշմամբ՝ «Թուրքիայի պատմությունը տխուր և չար գործերով լի մի պատմություն է»[3], իսկ ըստ գերմանացի Հենրիխ Ֆիրբյուխերի՝ «Աչխարհի ոչ մի մասում կործանարար ուժերն այնպիսի բացառիկությամբ չեն իշխել..., ինչպես Թուրքիայում ...»[4]: Հնչակյան պարբերականի բնորոշմամբ՝ այս իրադրության անխուսափելի հետևանքը եղավ այն, որ «Հիվանդ մարդը» կորցրեց իր եվրոպական, ասիական, աֆրիկյան տիրույթների զգալի մասը, բայց դեռ պահպանում է իր գոյությունը՝ չնորհիվ եվրոպական տերությունների այն հակասությունների, որոնք առաջացել էին նույն «Հիվանդ մարդու» վերջնական բաժանման հարցի շուրջ: Ահա այս վտանգի կանխազգացումն էր այն ազդակը, որը համախմբեց թուրքական պետության քաղաքական համակարգի փոփոխության և Թուրքիան կործանումից փրկելու կողմնակիցներին, որոնք պատմության մեջ մտան «Երիտասարդ թուրքեր» անունով: Ջ. Կիրակոսյանը նչում է, որ երիտթուրքական առաջին անլեգալ խմբակը ստեղծվել է 1889 թ. Կ. Պոլսի ռազմաբժշկական ուսումնարանում: Նաև կա տեսակետ, որ այն ստեղծվել է Ժնևում 1891 թ.: Շարժման գաղափարախոսությունը պանթուրքիզմն էր (համաթյուրքականություն), որի տեսաբաններն էին Յուսուֆ Ակչուրան, Ահմեդ Աղաևը, Զիա Գյոք Ալփը և այլոք: Նրանք հիմնավորում էին Միջերկրական ծովից մինչև Չինաստան տարածվող թյուրքալեզու ժողովուրդների քաղաքական միավորման ու Մեծ Թուրանի ստեղծման անհրաժեշտությունը[5], սակայն, ինչպես նկատում է Զարեվանդն իր աչխատության մեջ՝ լեզվով, հավատով և մչակույթով մոտիկ ժողովուրդների միավորման գործում կար մի խոչընդոտ՝ դա Հայաստանն էր: «Արդյո՞ք դրանով չի բացատրվում հայերի նկատմամբ թուրքերի չդադարող թշնամանքն ու թուրքական բոլոր կառավարությունների կողմից վերջիններիս նկատմամբ պարբերաբար իրականացվող կոտորածները»[6], – հռետորական հարցադրում է անում հեղինակը:

Արծարծելով այս հարցը՝ հնչակյան տեսաբան Ստ. Սապահ-Գյուլյանը գրում է. «Թուրք ազգայնական քաղաքականությունը ո՛չ «Իտտիհատն» է սկզբնաւորել, ո՛չ էլ «Կարմիր Սուլթանը» (նկատի ունի Աբդուլ Համիդ II-ին – Հ. Գ.): Նրանք ավելի չեչտուած ձեւերով չարունակել են այն, ինչը որ արդեն գոյություն ունէր, գործում էր դեռ 1840-ական թուականներից: Որպէսզի Ասիայի մեջ էլ չենթարկուէր անղամահատումիւնների, ազատագրուած ազգերի օրինակը աչքի առաջ ունենալով, թուրք ազգայնականությունը աչխատել է Օսմանեան ներքին քաղաքականութեան կռուաննե-

---

[2] «Հնչակ», 10. IV. 1900:

[3] Լ է օ. 1899, 243:

[4] Ֆ ի ր բ յ ո ւ խ ե ր. 2000, 27:

[5] Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ (19-րդ դարի 90-ական թթ. – 1914 թ.). 1982, 119–120:

[6] З а р е в а н д. 1930, 36.

րից մէկն էլ համախլամութիւնը դարձնել: Դա քաղաքական մի գաղափար էր, որ գալիս էր իր մէջ ամփոփելու Թուրքին, Քիւրդին, Աւշարին, Թաթարին, Լազին, Աջարին, Չերքէզին ... Արաբներին ու նրանցից ժողովրդագրական, ազգագրական մի ամբողջութիւն, միութիւն կազմելով՝ հակադրէր Հայերին Հայաստանի մէջ»[7]*:*

1889 թ. ստեղծված երիտթուրքական առաջին կազմակերպությունը «Իթթիհատ Օսմանիեն» էր (Օսմանների միություն), որը հետո կոչվեց «Իթթիհատ վե թերաքքը» (Միություն և առաջադիմություն): Չկարողանալով ազատ գործել Թուրքիայում՝ ընդդիմադիրները գործում էին Եգիպտոսում, եվրոպական մի շարք երկրներում, ուր հրատարակում էին իրենց պարբերականները՝ «Հուրիեթը»՝ Լոնդոնում, «Մեշվերեթը»՝ Փարիզում, «Օսմանլը», «Հագիգաթ», «Միզան» թերթերը՝ Ժնևում, «Սանջակը», «Ֆերատը»՝ Եգիպտոսում:

Գիտակցելով, որ սուլթանական վարչակարգի փոփոխությունը միայն իրենց ուժերով չեն կարող իրականացնել՝ երիտթուրքերի առաջնորդներն արտասահմանի իրենց մասնաճյուղերի առջև խնդիր են դնում համաձայնություն կայացնել սուլթանական վարչակարգին ընդդիմադիր բոլոր ուժերի, այդ թվում՝ նաև հայ կուսակցությունների հետ: «Տակավին ամեն բան կորած չէ, — նշում էր երիտթուրք պարագլուխ Ահմեդ Ռզան, — դեռ կարող ենք մեր պետութիւնը անկումից ազատել, արաբներից ավելի այս գործի մէջ մեզ կարող են օգնել մեր հայ հայրենակիցները. հարկավոր է, որ միայն հասկացողութեան գանք և մեր փոխադարձ շահերը լավ հասկանանք»[8]*:*

Այսպիսի հանգամանքներում տեղի ունեցան երիտթուրքերի առաջնորդների առաջին շփումները հնչակյանների հետ: 1895 թ. Լոնդոնում Ահմեդ Ռզան հանդիպել է հնչակյանների հետ: Վերջիններս առաջ են քաշում հայկական նահանգներում բարենորոգումների անցկացման հարցը և ինքնավարության գաղափարը, որոնք չեն ընդունվում: 1896 թ. Լոնդոնում Ահմեդ Ռզան վերակազմյալ հնչակյաններին առաջարկում է հրաժարվել Ինքնավար Հայաստանի պահանջից: Վերակազմյալներն առարկում են՝ պատճառաբանելով, որ այդ խնդրի տնօրինումը պատկանում է ողջ հայությանը, և կուսակցությունն իրավունք չունի ազգի փոխարեն վճիռներ կայացնել[9]*:*

«Երիտասարդ Թիւրքիա» հոդվածում Ա. Արփիարյանն, արտահայտելով իր դիրքորոշումն այդ շարժման նկատմամբ, գրում էր, որ Երիտասարդ թուրքերը Թուրքիայի քրիստոնյաներին ավելի թշնամի են, քան հին թուրքերը, իսկ ինչ վերաբերում է Օսմանյան Սահմանադրությանը, ապա, ըստ նրա, այն «քրիստոնեաները պարզապես օսմանցիներ ընելու միջոցն էր»[10]*: Խոսելով 1896 թ. Փարիզում երիտթուրքերի առաջնորդների հետ հնչակյանների հանդիպումների մասին, որոնց մասնակցել էր նաև ինքը՝ Արփիարյանը գրում էր՝ ընդհանուր համաձայնություն չկայացավ այն պատճառով, որ ցանկանալով հայերի հետ համագործակցել՝ նրանք հայտարարում էին՝ հայերը պետք է հրաժարվեն բարենորոգումների պահանջից*[11]*:*

---

[7] *Ս ա պ ա հ - Գ ի ւ լ ե ա ն. 1915, 47–48:*
[8] *Ս ա պ ա հ - Գ ի ւ լ ե ա ն. 1916, 202–203:*
[9] *Հայոց պատմություն. 2015, 118:*
[10] *«Մարտ» (Լոնդոն), 20. XII. 1897:*
[11] *«Նոր կեանք» (Լոնդոն), 1900, թիւ 21, 323–326:*

Սապահ-Գյուլյանը «Հնչակում» գրում էր, որ Միջհատյան Սահմանադրությունը իրական ոչ մի ծառայություն չի կարող մատուցել օսմանյան պետությանը, եթե այն վերահաստատվի ու գործադրվի: Ըստ նրա, երիտասարդ թուրքերը սխալվում են՝ գտնելով, որ օսմանյան պառլամենտի վերաբացումը միակ միջոցն է Թուրքիան հզորացնելու և կործանումից փրկելու: Նա ընդգծում էր, որ այն չի արտահայտում հպատակ ժողովուրդների, այդ թվում՝ հայերի իրական շահերն ու ձգտումները: Ըստ այդ Սահմանադրության՝ ընտրական այնպիսի իրավունք էր կազմվել, այնպիսի պայմաններ էին սահմանվել, որ «քրիստոնեայ որևէ համայնք, հազիւ նրա մէջըն 5–10 պատգամաւոր ունենար»: Կարո՞ղ էին արդյոք «բողոքող, դժգոհող ժողովրդի ներկայացուցիչները իրենց 5–10 ձայնով պաշտպանելու ընդդեմ 240-ի», – հռետորական հարցադրում էր անում Սապահ-Գյուլյանը, և ինքն էլ պատասխանում՝ մեծամասնության իրավունքն ու կամքն անվիճելի պիտի լիներ, և այդ պայմաններում դժգոհողներն ու իրենց ներկայացուցիչները «օտար պետութիւններին օգնութեան կանչելու իրավունք այլեւս չպիտի ունենային, ապա նրանց պիտի մնար միայն կամա-ակամա հնազանդել մեծամասնութեան»[12]: Եթե երիտասարդ թուրքերը ցանկանում են առաջադիմական դեր կատարել իրենց պատմության մեջ, ապա ըստ Սապահ-Գյուլյանի՝ նրանք պիտի աշխատեն ավելի լավ ճանաչել թուրքական պետությունը, նրա բաղկացուցիչ ժողովուրդներին: Դրանից հետո միայն պիտի կազմակերպվեն իբրև պայքարող քաղաքական մարմին ու իրենց նպատակը դարձնեն փոխել տիրող պայմանները և ստեղծել «իրերի իսկական պահանջներին համապատասխան այնպիսի նոր հաստատութիւններ, որից հաւասարապես կարող լինեն օգտուել թէ՛ բաղկացուցիչ պայքարող ազգութիւնները և թէ՛ նոյն ինքն Թիւրքիան»[13]:

Պատահական չէր այն հանգամանքը, որ, երբ 1902 թ. Փարիզում կայանալիք Օսմանյան կայսրության ընդդիմադիր ուժերի կոնգրեսին մասնակցելու համար երիտթուրքերը հրավեր են ուղարկում նաև հնչակյաններին, վերջիններս մերժում են՝ պատճառաբանելով, որ իրենց ծանոթ է հայկական հարցի վերաբերյալ երիտթուրքերի տեսակետը:

1906 թ. հուլիսին երիտթուրքերի ղեկավարներից Ահմեդ Ռզան, բժիշկներ Նազըմը, Բեհաէդդին Շաքիրը նորից Փարիզում հանդիպումներ ունեցան հնչակյան ղեկավարների հետ: Քննարկվել են հետևյալ հարցերը.

1. Հայկական հարց և համապետական ուղղություն,

2. Ինքնավար Հայաստան և Թուրքիա,

3. Ժողովրդավարական Սահմանադրություն և Միջհատյան Սահմանադրություն,

4. Հայկական հարց և արտաքին միջամտություն,

5. սոցիալիզմ և ազգայնականություն,

6. ազգություն և օսմանցիություն,

7. կազմակերպություն, քարոզչություն և հեղափոխական գործունեություն,

[12] «Հնչակ», 10. I. 1901:
[13] «Հնչակ», 10. I. 1901:

8. միջկուսակցական մարմիններ և միջկուսակցական հարաբերություններ[14]:

Տարաձայնությունները սկսվեցին հենց առաջին հարցի քննարկման ժամանակ: Երիտթուրքերը պաշտպանում էին այն տեսակետը, որ հայկական, մակեդոնական, արաբական հարցերը պետք է լուծվեն Օսմանյան կայսրության ամբողջականության և համապետական բարեփոխումների պայմաններում՝ բերելով Ռուսական կայսրությունում ծավալված իրադարձությունների օրինակը: Եթե ընդունվեն օսմանյան պետության դեմ ծառացած խնդիրները և կատարվի համապատասխան բավարար աշխատանք այդ ուղղությամբ, ապա կլուծվեն նաև «առանձին դատերը»:

Ի պատասխան երիտթուրքերի տեսակետին՝ հնչակյանները հայտնեցին, որ Ռուսական և Օսմանյան կայսրությունների պատմական զարգացումներն ու ներկա իրավիճակները տարբեր են: Ռուսական ընդդիմադիր ուժերը կռվում են ոչ թե պետության, այլ՝ պետականության դեմ, իսկ Օսմանյան կայսրությունում ազատագրական շարժումներն ուղղված են պետության դեմ: Արևելյան հարցը, մասնավորապես՝ նրա բաղկացուցիչ մաս կազմող Հայկական հարցը, պահանջում են առանձին լուծումներ: «Հայկական խնդրի լուծումը, – նշում էր Սապահ-Գյուլյանը, – պիտի գար, որոշ աստիճանով նպաստելով ամբողջութեանը, մասնավորից ընդհանուրին երթալու մեթոտով»[15]:

Այնուհետև հնչակյանները պահանջ էին դնում ընդունել Հայ Դատը, ինչպես նաև՝ քարոզել այն, հակառակ դեպքում համագործակցության մասին խոսք անգամ լինել չէր կարող: Երկար ու ձիգ վիճաբանություններից հետո երիտթուրքերը խոստանում էին ընդունել Հայ Դատը, սակայն պայմանով, որ հնչակյանները նպաստեն համապետական խնդիրների լուծմանը: Հնչակյաններն ընդգծեցին, որ Թուրքիան կարող է գոյությունը պահպանել իր կազմի մեջ մտնող ազգություններին քաղաքական ինքնավարություն տալու պարագայում: «Հայաստանի քաղաքական ինքնավարութիւնը մեր էական և առաջին պայմանն էր. միայն այդ գաղափարի ընդունելովն էր, որ մենք կարող պիտի լինեինք համաձայնութեան եզր գտնել»[16],– հայտնում էին հնչակյանները: Երիտթուրքերը՝ ի դեմս Նազըմ բեյի, փորձում էին չրջանառության մեջ դնել ընդհանուր բարեփոխումների թեզիսը՝ տեղական լայն բարեկարգումներով: Սակայն հնչակյանները մերժեցին այն՝ պատճառաբանելով, որ դա բոլորովին չի համապատասխանում «հայ ազգի հրամայական պահանջներին»[17]:

Բնականաբար, երիտթուրքերին սկսեց անհանգստացնել հայկական քաղաքական ինքնավարության սահմաններում ապրող մահմեդական ազգաբնակչության ճակատագիրը: Հնչակյանները պատասխանեցին, որ նրանք կմնան և կօգտվեն այն բոլոր քաղաքական, տնտեսական, ընկերային իրավունքներից, ինչպես՝ հայերը:

Դիրքորոշումների այս տարբերությունները տեղիք տվեցին սուր հակասությունների առաջացմանը, որից հետո Ահմեդ Ռզան ասաց. «Քանի որ վճռել ենք ձեզ հետ համաձայնիլ, ուստի Ինքնավար Հայաստանի գաղափարը սկզ-

[14] *Ս ա պ ա հ-Գ ի ւ լ ե ա ն. 1916, 203–204:*
[15] *Ս ա պ ա հ-Գ ի ւ լ ե ա ն. 1916, 205–206:*
[16] *Ս ա պ ա հ-Գ ի ւ լ ե ա ն. 1916, 206:*
[17] *Ս ա պ ա հ-Գ ի ւ լ ե ա ն. 1916, 206–207:*

բունքով ընդունում ենք, բայց ավելի մանրամասնումներով ծանոթանալու համար կ՚ուզէինք տեսնել քարտէզը ձեր պահանջած վայրերի և մեզ երկարօրէն բացատրիք ո՛չ միայն Ինքնավարութեան ձևն ու կիրառումները, այլև՝ թէ նա ինչ կապ և յարաբերութիւն պիտի ունենար Օսմանեան պետութեան հետ»[18]:

Հաջորդ նիստին հնչակյանները ներկայացրեցին պատմական Հայաստանի քարտեզը՝ ցույց տալով, թե որ մասն է գտնվում Թուրքիայի, որը՝ Իրանի և որը՝ Ռուսաստանի տիրապետության տակ: Այդ քարտեզի մեջ, որպես Հայաստանի մաս, ներառված էր նաև Կիլիկիան, որը հարուցեց երիտթուրքերի դժգոհությունը, «որովհետև, կայսրութիւնը երկու մասի պիտի բաժանուէր, – Միջագետքը, Արաբիան, Սիրիան ... իրականորէն պիտի կտրուէին Օսմանութեան Մայր կտորից»[19]:

Ինքնավար Հայաստանի պետական համակարգն ու կառուցվածքը հնչակյանները պատկերացնում էին հետևյալ կերպ.

1. Ինքնավար Հայաստանը գտնվելու էր թուրքական գերիշխանության ներքո, բայց միաժամանակ ունենալու էր եվրոպական պետությունների հովանավորությունը,

2. ընդհանուր կառավարչապետը նշանակվելու էր եվրոպական տերությունների կողմից,

3. լինելու էր պառլամենտական համակարգ,

4. գործադիր իշխանությունը խորհրդարանի հովանավորությամբ իրականացնելու էր կառավարչապետը, որը հաշվետու էր լինելու խորհրդարանին,

5. տեղական նահանգային մարմիններն օժտված էին լինելու լայն ինքնավարությամբ,

6. պետական լեզու էր ճանաչվում հայերենը,

7. հատկացվելու էր գումար համապետական խնդիրների համար,

8. հասարակական կարգը պահպանելու էր ժողովրդական ոստիկանությունը և այլն[20]:

Վիճաբանությունները ծավալվեցին նաև ազգության և օսմանցիության հարցի քննարկման ժամանակ: Երիտթուրքերն առաջ էին մղում անկախ կրոնից ու ազգությունից՝ կայսրության բոլոր ժողովուրդների ձուլման և օսմանյան ազգի ստեղծման գաղափարը: Դրանով նրանք հասկացնում էին հայերին, որ Ինքնավար Հայաստանի գաղափարի քարոզչությունն ավելորդ է և, փաստորեն, հրաժարվում էին Հայկական հարցի ճանաչումից:

«Մենք և մեր քննադատները» հոդվածում պատասխանելով այն հարցին, թե ինչո՞ւ հայ կուսակցությունները մասնաճյուղային կազմակերպություններ չեն ստեղծում թուրքերի հետ՝ Սապահ-Գյուլյանը վկայակոչում է եվրոպական կրթություն ստացած մի թուրք մտավորականի հետևյալ խոսքերը, ըստ որի՝ «դեռ 2–3 հոգի չհավաքված լուրը հասցնում են կառավարութեանը: Դեռ մոլա, կրոնական զգացմունքներ, ավանդութիւններ մեր մեջ տիրապետող են»[21]: Շարունակելով միտքը՝ թուրք մտավորականը նշել է՝ հեղափոխական կազմա-

---

[18] Սապահ-Գիւլեան. 1916, 207:
[19] Սապահ-Գիւլեան. 1916, 208:
[20] Սապահ-Գիւլեան. 1916, 209:
[21] «Հնչակ» (Փարիզ), 1906, թիւ 9–10:

կերպություններ ստեղծելու իրենց բոլոր փորձերը Թուրքիայում ձախողվել են և իրենք համոզվել են, որ դեռ շատ վաղ է անլեգալ նման կազմակերպություններ ստեղծելը: Սապահ-Գյուլյանը վկայակոչում է նաև հնչակյան հայտնի գործիչ Արամ Աչըգպաշյանի այն խոսքերը, ըստ որի՝ «ամբողջ 12 տարի աշխատելով հազիվհազ 2–3 թուրք կարողացա շահիլ և յեղափոխական դարձնիլ մեր գործակցելու համար»[22]: Հոդվածագիրը գտնում է՝ Օսմանյան կայսրության ամբողջականությունը պահպանելու համար անհրաժեշտ է նաև, որ նրա բաղկացուցիչ մասերը կազմող ժողովուրդները ևս դա ցանկանան: Այնուհետև մակեդոնացիների ու արաբների օրինակներով նա ցույց է տալիս, որ նման ցանկություն նրանք չունեն. «Ո՞վ է մնում՝ քուրդը, չերքեզը, լազը … սրա՞նք են, որ պիտի կարողանան և աշխատեն նորագույն պետութիւն կազմել Օսմանեան խարխլուած կայսրութիւնից, երբ իրենցից ոմանք նստակեաց չեն, ոմանք էլ կիսաբարբարոսներ են»[23]: Ինչ վերաբերում է տիրող թուրք ժողովրդին, ապա Սապահ-Գյուլյանը մատնանշում է, որ նրա առաջադեմ մասը միավորված է միայն երկու խմբակի մեջ՝ «Իթթիհատ վե թերաքքը» և «Մեշվերեթ», միաժամանակ ընդգծում է՝ դրանք դեռևս չունեն ճյուղավորված կազմակերպություններ և, որ էական է, երկուսն էլ մոլի ազգայնականներ են ու չեն ուզում լսել «ոչ յեղափոխութեան, ոչ Հայկական խնդրի, ոչ էլ անգամ մայիսի 11-ի ծրագրի անունը»[24]:

Ամփոփելով հոդվածը՝ Սապահ-Գյուլյանը եզրակացնում է, որ եթե օսմանյան պետության «հին ու նոր տարրերը հայ ժողովրդին ապրելու նուազագոյն պայմաններ չեն տալիս, ապա մեր սահմանափակ ուժերով չենք կարող կանգնեցնել պատմութեան ընթացքը և գործադրել այն, ինչը որ անգամ եվրոպական պետութիւնները չկարողացան անել,– այն է՝ ընդհանուր Թուրքիայի բարեկարգման մեջ տեսնել մեր վիճակի բարվոքումը»[25]:

Երիտթուրքական հեղաշրջումը և հնչակյանները

1908 թ. երիտթուրքական հեղաշրջումը նոր իրադրություն առաջացրեց Օսմանյան կայսրությունում: Ազգային կուսակցությունները՝ ՀՅԴ-ն, Հնչակյանները և մյուսները, ոգևորված երիտթուրքերի ազատության, հավասարության կարգախոսներով, հրաժարվեցին անլեգալ գործելակերպից՝ իրենց ուշադրությունը կենտրոնացնելով գլխավորապես պառլամենտական պայքարի վրա[26]:

Արևմտահայ գրող Արշակ Ալպոյաճյանի բնորոշմամբ՝ երիտթուրքական հեղաշրջումը գավառահայության հասարակական մտայնության մեջ լուրջ տեղաշարժեր առաջացրեց: Հայերի մոտ պատրանք էր առաջացել, թե «փշրուած էին գիրենք ճնշող և կաշկանդող շղթաները»[27]: Նա գրում է, որ Օսմանյան կայսրության տարբեր շրջաններում ոգևորված բազմաթիվ հայեր, հույների ու թուրքերի հետ անդամագրվում էին «Իթթիհատ վե թերաքքը» կուսակցությանը, սակայն հատկապես կիլիկիահայության 1909 թ. կոտորա-

[22] *«Հնչակ», 1906, թիւ 9–10:*
[23] *«Հնչակ», 1906, թիւ 9–10:*
[24] *«Հնչակ», 1906, թիւ 9–10:*
[25] *«Հնչակ», 1906, թիւ 9–10:*
[26] *Ն ե ր ս ի ս յ ա ն. 2013, 81:*
[27] *Ա լ պ օ յ ա ճ ե ա ն. 1937, 1269:*

ծից հետո հեռացան այդ կուսակցությունից՝ տեսնելով, որ թուրքական մտայնության մեջ ոչինչ չի փոխվել[28]:

Երիտթուրքական հեղաշրջումից հետո հնչակյանները դուրս եկան ընդհատակից: 1908 թ. օգոստոսի 16-ին հնչակյան պատվիրակությունը [Սապահ-Գյուլյան, Մուրատ (Հ. Պոյաճյան), Հ. Ճանկյուլյան] պաշտոնական այցելություն կատարեցին Կ. Պոլսի իթթիհատական կոմիտեի պաշտոնատեղին, ուր նրանց ընդունեց Բեհաէդդին Շաքիրը: Նրանք ողջունեցին երկրում հռչակված Սահմանադրությունն ու հույս հայտնեցին, որ այն հնարավորություն կընձեռնի խորհրդարանական պայքարով ընդլայնել դեմոկրատական կարգերը:

Նոյեմբերին հատուկ շրջաբերականով կուսակցության կենտրոնական վարչությունը հայտարարեց՝ հայ ժողովուրդն անջատողական չէ և Թուրքիայի միասնականության կողմնակից է, որ դաղարեցնում է անլեգալ գործունեությունն ու լծվում «Տաճկահայաստանի ընդհանուր զարգացան գործին», հույս էր հայտնվում, որ Սահմանադրությունը կնպաստի ոչ թուրք ժողովուրդների տնտեսական ու մշակութային զարգացմանը: Հայտարարվեց, որ հնչակյանները կաատարեն սահմանադրական կարգին, եթե հետադիմականները փորձեն այն տապալել: Այդպես էլ եղավ: 1909 թ. մարտի 31-ին՝ սուլթանական ուժերի խռովության օրերին, դաշնակցության հետ հնչակյանները նույնպես սատարեցին երիտթուրքերին: Մուրատն ու Հ. Արծրունին առաջարկում են նաև հնչակյան կամավորական ջոկատով օգնել բանակային զորամասերին, որը, սակայն, չի ընդունվում երիտթուրքերի կողմից:

Այն նույն օրերին կիլիկիահայության կոտորածներն անակնկալի են բերում օսմանյան Սահմանադրությամբ և երիտթուրքական լոզունգներով ոգևորված հնչակյաններին: Ստեղծված քաղաքական նոր իրադրության պայմաններում խնդիր էր առաջացել ճշգրտելու կուսակցության գործունեությունը նոր պայմաններին համապատասխան: Այդ հարցերը քննարկվեցին 1909 թ. հուլիսին Կ. Պոլսում կայացած կուսակցության 6-րդ պատգամավորական ժողովում: Այստեղ պայքար ծավալվեց Թուրքիայի հանդեպ հնչակյան կուսակցության դիրքորոշման ճշտման հարցի շուրջ: Արևելահայ պատգամավորների մեծ մասը՝ Սապահ-Գյուլյան, Փարամազ, Բագրատ Այունիք, հավատ չէին ընծայում օսմանյան Սահմանադրությանը և պնդում էին՝ շարունակելու անլեգալ գործունեությունը: Արևմտահայ պատգամավորների մեծամասնությունը՝ Մուրատ, Աչըգպաչյան, Արամյանց և այլոք, որոնք կազմում էին ժողովի մեծամասնությունը, դեմ էին պայքարի արմատական-հեղափոխական մեթոդներին: Նրանք գտնում էին, որ արևմտահայությունը գտնվում է ուժասպառ վիճակում, և անլեգալ գործունեության անցնելը կարող էր մեծ փորձության առջև կանգնեցնել նրան:

Ձայների մեծամասնությամբ ընդունվեց արևմտահայ պատգամավորների տեսակետը, ըստ որի՝

1. Թուրքիայում կուսակցությունն անցնում է գործունեության լեգալ պառլամենտական ձևին,

2. մերժում է ոչ թուրք ժողովուրդների թուրքերի հետ ձուլվելու և մեկ ընդհանուր օսմանցի անվանումն ընդունելու երիտթուրքերի դաղափարը,

---

[28] *Ա լ պ ո յ ա ճ ե ա ն. 1937, 1272:*

3. կիլիկիահայության կոտորածի տխուր փորձը նկատի ունենալով՝ ժողովը հանձնարարեց կազմակերպել ժողովրդի ինքնապաշտպանության նախապատրաստման գործը,

4. փոփոխվեց կուսակցության անվանումը. այն կոչվեց Սոցիալ-Դեմոկրատ Հնչակյան կուսակցություն,

5. ընտրվեց կուսակցության Տաճկաստանի կենտրոնական վարիչ մարմինը՝ Մուրատ, Ա. Աչըգպաշյան, Հմ. Արամյանց, Ն. Զաքարյան, Հ. Արծրունի,

6. Թուրքիայից դուրս գտնվող հնչակյան կազմակերպությունները չպետք է պաշտոնական որևէ հարաբերության մեջ մտնեն Տաճկաստանի կազմակերպության հետ՝ նրա լեգալիզմը չվտանգելու համար,

7. Ռուսաստանում և Կովկասում կուսակցությունը շարունակելու էր նախկին անկեղծ գործունեությունը:

Իթթիհատի՝ հատկապես ազգային քաղաքականության քննադատության հիմքի վրա հնչակյանները մերձեցան ընդդիմադիր «Հյուրիեթ վե Իթիլաֆ» (Ազատություն և համաձայնություն) կուսակցության հետ, և 1912 թ. փետրվարի 7-ին ստորագրվեց համագործակցության մասին պայմանագիր: Համաձայնագրի ստորագրմամբ հնչակյանները որոշ հույսեր ունեին, որ իշխանության գալու դեպքում կբարելավվի արևմտահայության դրությունը, քանի որ, ընդհանուր առմամբ, Իթթիլաֆը հանդես էր գալիս օսմանյան պետության բաղկացուցիչ ժողովուրդների իրավահավասարության սկզբունքի դիրքերից: Ինչ վերաբերում է անգլիական կողմնորոշում ունեցող Իթթիլաֆին, ապա այս համաձայնությունը նրան ավելի շատ անհրաժեշտ էր իր քաղաքական դիրքերն ամրապնդելու նպատակով:

Այս շրջանում արծարծելով Արևմտյան Հայաստանի բարենորոգումների հարցը՝ ժնևում հրատարակվող հակաիթթիհատական օրգան «Իգտամ» թերթի խմբագիր Ալի Քեմալը գրում էր. «Օսմանեան կառավարութեան արաբներուն նման հայերուն հետ նախաշաւիղ համաձայնութիւն մը կնքելով յիշեալ բարենորոգմանց սկսիլը շատ պատշաճ է. նոյնիսկ միակ ճշմարիտ ճամբան է»[29]: Պետք է ընդգծել, որ պարբերականն իրավացիորեն նշում էր, որ մեծ պետությունների գլխավոր նպատակը «հայերն ու Հայաստանի բարենորոգումները չեն, այլ բոլորովին մասնաւոր շահեր ունին»[30]:

Կարճ ժամանակում ակնհայտ դարձավ, որ հեղաշրջումից հետո էլ կայրության հպատակ ժողովուրդների կյանքում առաջընթաց չնկատվեց, ընդհակառակն՝ ազգային հարցում երիտթուրքերը շարունակեցին սուլթան Աբդուլ Համիդի քաղաքականությունը: «Թուրքիայում» հոդվածում Թիֆլիսի «Кавказ» թերթը գրում էր, որ օսմանյան պառլամենտում իշխող իթթիհատականների և ընդդիմության միջև եղած հակամարտությունը վերածվում է բացահայտ թշնամության: Հակակառավարական ելույթներն ավելի ու ավելի են տարածվում թուրքահպատակ ժողովուրդների մեջ՝ Ալբանիայում, Մակեդոնիայում, Անատոլիայի հայկական վիլայեթներում: Պարբերականը զարմանքով է արձանագրում՝ իշխանությունները, որոնք դեռ որոշ ժամանակ առաջ քննադատում էին սուլթանական կառավարության քաղաքականությունը,

[29] *«Կոհակ» (Կ. Պոլիս), 04. IX. 1913:*
[30] *«Կոհակ», 04. IX. 1913:*

այժմ հպատակ ժողովուրդների հարցում իրենք են վարում նախկին սուլթանական քաղաքականությունը[31]:

Երիտթուրքերի՝ ազգայնամոլ, հակահայկական քաղաքականությունը իրենց պարբերականներում սուր քննադատության ենթարկեցին հնչակյանները:

Օսմանյան կայսրությունում լայն տարածում գտած հայերի հողային զավթումների, նրանց նկատմամբ վարվող տնտեսական, կրոնական ու ազգային հալածանքների չարունակվող քաղաքականությունը թուրքական իշխանությունները փորձում էին արդարացնել մտացածին և հնարովի պատճառաբանություններով: Այդ խնդիրների անտեսումը, ժխտումը կամ փաստերի կեղծումը դարձել էր կառավարության հիմնական գործելակերպը: Դրա վառ ապացույցը 1909 թ. Կիլիկիայի հայության կոտորածն էր և դրան հետևող կառավարության ու պետական պաշտոնյաների մեկը մյուսին հակասող կեղծ պատճառաբանությունները: Եթե կառավարությունը փորձում էր մեղքը բարդել տապալված սուլթանի կողմնակիցների վրա, ապա Փարիզի թուրքական դեսպանը հայտարարում էր, որ Կիլիկիայի դեպքերը հայերի անջատողական ձգտումներին հետևանքն են միայն[32]:

Երիտթուրքական հեղաշրջումից հետո թուրքական մամուլը նյութեր էր տպագրում հպատակ ժողովուրդների նկատմամբ օսմանյան պետության բարեգութ վերաբերմունքի մասին: Այդ հրապարակումների նպատակն էր ապացուցել՝ թուրքերը չատ վաղուց բարի կամք ու ցանկություն են դրսևորել և թույլ տվել, որ նվաճված ժողովուրդները պահպանեն իրենց ազգային լեզուն, կրոնը, սովորույթները, մի խոսքով՝ հարգել են հպատակ ժողովուրդների պատմամշակութային առանձնահատկությունները:

Արծարծելով խնդիրը՝ Ստ. Սապահ-Գյուլյանը պատմական բազում փաստերով ապացուցում էր, որ աչխարհակալ ոչ մի ազգ այնքան վայրագ աչխատանք չի կատարել ենթակա ազգություններին քայքայելու, բռնի ուժով ճուլելու համար, որքան օսմանցի իշխողները: Նա գրում էր. «Հայ, հույն, բուլղար, սերբ, ռումեն, մաչար պատմություններուն մարտիրոսական էջերը վկա են հաստատելու համար, թե պարտվող այդ ազգերը ինչ ճիվաղային տառապանքների, ինչ անլուր հալածանքների են ենթարկվել իրենց գոյությունը պահելու համար»[33]: Դառնալով 1908 թվականից հետո տիրող իրավիճակի բնութագրմանը՝ հնչակյան տեսաբանն ընդգծում էր, որ, չնայած այն բանին, հայ ժողովուրդը և նրա կուսակցությունները սատարեցին սահմանադրական Թուրքիայի ստեղծման գործին՝ հանձն առնելով նյութական, ֆիզիկական և բարոյական զոհողություններ, առավել քան ուրիշ մի ժողովուրդ, այնուամենայնիվ, գալով իշխանության՝ Իթթիհատը չանք չի խնայել հայերին տնտեսապես քայքայելու[34]:

Պատահական չէր այն փաստը, որ, երբ օսմանյան պառլամենտում 1911 թ. հնչակյան պատգամավոր Մուրատը քննադատում է ներքին գործերի նախա-

[31] «Кавказ» (Тифлис), 01. I. 1912; 04. I. 1912.
[32] *«Կոհակ», 30. V. 1909:*
[33] *«Հնչակ», 1913, թիւ 3:*
[34] *«Հնչակ», 1913, թիւ 3:*

բար խալիլ Բեյին երկրի տարբեր շրջաններում ամեն օր կատարվող սպանությունների, հափշտակությունների, առևանգումների ու բռնի կրոնափոխությունների սպառնալի չափերի համար և պահանջում կտրուկ միջոցներ ձեռք առնել, նախարարը հանդիստ պատասխանել է, թե այլ երկրներում էլ են նման դեպքեր պատահում: Ներքին գործերի նախարարն այստեղ գիտակցաբար լռում էր՝ փորձելով դրանց տալ առօրեական դեպքերի բնույթ, որպեսզի կոծկի կազմակերպված ու հետևողական բնույթը. մի քաղաքականություն, որը տարվում էր հենց կառավարության կողմից[35]*:*

1908 թ. հեղաշրջումից հետո Կ. Պոլսում հրատարակվող հնչակյանների «Կոհակ» պարբերականն անդրադառնում է հետևյալ հարցին. Հայկական հարցի միջազգայնացումից հետո թուրքերը ձգձգում և չեն իրագործում հայկական նահանգներում բարենորոգումների իրագործման ուղղությամբ իրենց ստանձնած պարտավորությունները՝ պատճառաբանելով, որ հայերը խռովարար են ու անջատողական ձգտումներ ունեն: «Կոհակը» բազում փաստերով ապացուցում էր, որ հայ ժողովրդի միակ ձգտումը եղել և մնում է Օսմանյան կայսրության տարածքում իր կյանքի ու գույքի ապահովությունը, ինչպես պարբերականն էր գրում՝ «Բարեկարգ վարչություն» հաստատելու ձգտումը[36]*:*

Կուսակցության գլխավոր պարբերական «Հնչակը» հանգում է այն եզրակացության, ըստ որի՝ թուրքական կառավարությունը հարմար առիթի է սպասում մեկընդմիշտ ոչնչացնելու հայությանը. «Թուրք ազգայնականությունը մեզ չի խնայելու ոչ մի պայմանով, իսկ նրա բոլոր չողոքորթություններն ու մեղրածորուն հայտարարությունները ընդհամենը ժամանակ շահելու միջոցներ են»[37]*:*

1912–1913 թթ. Բալկանյան պատերազմների շրջանում, երբ վերաբացվեց Հայկական հարցը և եվրոպական պետություններն ակտիվացրին հայկական բարենորոգումների նախագծի քննարկումները, երիտթուրքական կառավարությունն էլ ավելի խստացրեց իր հալածանքները հայերի նկատմամբ՝ դրա հետ սաստկացնելով հակահայկական քարոզչությունը: Այդ տարիներին թուրքական թերթերն ու կառավարական պաշտոնյաները, մեկը մյուսին հակասելով, տարածում էին այն կեղծիքը, թե Հայկական հարց գոյություն չունի և որ բարենորոգումները վերաբերում են ոչ միայն հայկական, այլև Օսմանյան կայսրության բոլոր նահանգներին: Այսպես, Գերմանիայում Թուրքիայի դեսպան Մահմուդ Մուխթար փաշան հայտարարում էր, որ թուրքական պետության համար Հայկական հարց գոյություն չունի: Կառավարության խնդիրն է միայն կարգավորել քրդերի ու հայերի միջև գժտությունները: Շարունակելով միտքը՝ նա հայտարարում էր. «Մենք ամեն բան անելու ենք ուժով, մեկ Օսմանեան կայսրութիւն հիմնելու համար»[38]*:*

Իր հրապարակումներում ավելի առաջ գնաց Իթթիհատի պաշտոնական օրգան «Թանին» թերթը: Ժխտելով ընդհանրապես հայ ազգի գոյությունը՝

[35] *«Կոհակ», 15. V. 1911:*
[36] *«Կոհակ», 27. VI. 1909:*
[37] *«Հնչակ», 1913, թիւ 3:*
[38] *«Հնչակ», 1914, թիւ 2:*

պարբերականը հայտարարում էր, որ Օսմանյան կայսրությունում միայն մեկ ազգ կա՝ Օսմանցի ազգը[39]:

Պետք է ընդգծել այն իրողությունը, որ 1908-ից մինչև 1914 թ. ընկած ժամանակահատվածում՝ այսինքն՝ իշխանության գալուց հետո, երիտթուրքերի ներքին քաղաքականության առաջնահերթ խնդիրներից մեկը, այսպես կոչված, մեկ միասնական ազգի ստեղծումն էր, որն իրենից ներկայացնում էր կայսրության բոլոր հպատակ ազգությունների և ժողովուրդների առանձին, ինքնուրույն գոյության անտեսումն ու մերժումը և թուրքերի մեջ տարրալուծելով մեկ ընդհանուր օսմանյան ազգի ստեղծումը: Իր հետադիմական էությամբ հանդերձ՝ սա ինքնին հակասում էր օսմանյան հպատակ ժողովուրդների նկատմամբ սուլթանների վարած առաջադեմ և լուսավորյալ քաղաքականության մասին թուրքերի՝ նախորդ շրջանի հրապարակումներին ու հայտարարություններին: Գիտակցելով Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին հայությանը սպառնացող մեծ վտանգը, կարևորելով ու առաջ մղելով հայ ժողովրդի ինքնապաշտպանության դժվարին խնդիրը՝ հնչակյան կուսակցությունը հակահարված էր տալիս նաև թուրքական նենգափոխություններին փորձերին: Իրենց պարբերականներում հնչակյան տեսաբանները ցույց են տվել դրանց միտումնավորությունն ու անանկությունը, ինչպես նաև՝ կեղծ և հակահայկական էությունը:

Եզրակացություն

XIX դարավերջին և XX դարասկզբին երիտթուրքերի հետ չփումները հնչակյաններին հանգեցրին այն եզրակացության, որ երիտթուրքերը Օսմանյան կայսրության ամբողջականության պահպանման կողմնակիցներն են, ազգային հարցում չարունակում են սուլթանների հետադիմական քաղաքականությունը, ղեմ են ոչ միայն Ինքնավար Հայաստանի, այլև հայկական նահանգներում բարենորոգումների իրականացման գաղափարին և նպատակ ունեն թուրքահպատակ մյուս ժողովուրդների հետ հայ ժողովրդին ձուլել մեկ ընդհանուր՝ «օսմանյան ազգի» մեջ:

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին հնչակյանների համար ակնհայտ էր, որ համաթուրանական գաղափարներ որդեգրած երիտթուրքական կառավարության քաղաքականությունը հանգեցնելու էր հայ ժողովրդի ոչնչացմանը:

Այդ պայմաններում հնչակյաններն առաջ քաշեցին արևմտահայերի ինքնապաշտպանության նախապատրաստման անհետաձգելի գաղափարը:

Համաթուրանականությունը (պանթուրքիզմ) ներկայումս պահպանում է իր կենսունակությունը և մնում է ժամանակակից Թուրքիայի արտաքին քաղաքականության օրակարգում՝ լուրջ սպառնալիք ներկայացնելով հայոց պետականության համար:

Գեղամ Հովհաննիսյան – պ. գ. թ., դոցենտ, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի նոր պատմության բաժնի ավագ գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ հայ ազգային կուսակցությունների պատմություն և

[39] *«Հնչակ», 1914, թիւ 2:*

Հասարակական-քաղաքական միտք: Հեղինակ է 2 մենագրության և շուրջ 30 հոդվածի: gegam.hovhannisian@mail.ru

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ալպոյաճեան Ա. 1937, Պատմութիւն հայ Կեսարիոյ, հ. I, Գահիրէ, Կեսարիոյ և շրջակայից հայրենակցական միութեան Գահիրեյի վարչութեան հրատ., 1295 էջ:

Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ (19-րդ դարի 90-ական թթ. – 1914 թ.), 1982, գիրք առաջին, Երևան, «Հայաստան» հրատ., 357 էջ:

Լէօ. 1899, Գլադստոն, Թիֆլիս, Թիֆլիսի հայոց հրատ., 279 էջ:

«Կոհակ» (Կ. Պոլիս), 30. V. 1909, 27. VI. 1909, 15. V. 1911, 04. IX. 1913:

«Հնչակ» (Լոնդոն), 10. V. 1900, 10. I. 1901:

«Հնչակ» (Փարիզ), 1906, թիւ 9–10, 1913, թիւ 3, 1914, թիւ 2:

Հայոց պատմություն. 2015, հ. III, գիրք երկրորդ, Երևան, «Զանգակ» հրատ., 757 էջ:

«Մարտ» (Լոնդոն), 20. XII. 1897:

«Նոր կեանք» (Լոնդոն), 1900, թիվ 21:

Ներսիսյան Ա. 2013, Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն (1908–1918), Զավարյան մատենաշար, հ. Գ., Երևան, Ա. Հ, 351 էջ:

Սապահ-Գիւլեան Ստ. 1915, Ինքնավար Հայաստան, Գահիրէ, Զ. Պերպերեան հրատ., 96 էջ:

Սապահ-Գիւլեան Ստ. 1916, Պատասխանատուները, Փրովիդենս, «Երիտասարդ Հայաստան» հրատ., 352 էջ:

Ֆիրբյուխեր Հ. 2000, Հայաստան. 1915, գերմանացի սպայի վկայությունը, Երևան, ԵՊՀ հրատ., 108 էջ:

«Кавказ» (Тифлис), 01. I. 1912; 04. I. 1912.

Зареванд. 1930, Турция и пантуранизм (Париж). Ереван, 1991, издатель–комиссия Айдат, 168 с.

МЛАДОТУРЕЦКОЕ ДВИЖЕНИЕ И ГНЧАКИСТЫ
(Конец XIX – начало XX в.)

ГЕГАМ ОГАННИСЯН

Р е з ю м е

Ключевые слова: младотурецкое движение, гнчакисты, Османская империя, реформы, Армянский вопрос, Автономная Армения, Степан Сапах-Гюлян.

В конце XIX века, на пике национально-освободительного движения армянского народа против султанского режима, развернулось движение турецкой оппозиции, впоследствии названное движением младотурок, стремившихся утвердить в стране конституционный строй и направить Турцию в русло европейского развития. Реально осознавая, что для достижения поставленной цели собственных сил недостаточно, руководители движения

пытались добиться согласия с политическими организациями подданных народов Османской империи, в том числе с армянскими организациями, вставшими на путь борьбы против османской тирании. На этом этапе обсуждение гнчакистами рассматриваемых вопросов с младотурецкими лидерами показало, что последние не признают необходимость осуществления реформ в Западной Армении и фактически отрицают наличие Армянского вопроса.

Хотя гнчакисты приветствовали младотурецкий переворот (1908 г.), но после резни киликийских армян (1909 г.) убедились в том, что в национальном вопросе младотурки придерживаются политики султанов, и это подвигло гнчакистов выступить с резкой критикой в адрес турецкого правительства.

Накануне Первой мировой войны, осознав опасность угрозы, нависшей над армянским народом, гнчакисты стали активно выступать за необходимость организации и подготовки самообороны западных армян.

Руководствуясь идеологией пантюркизма, младотурецкое правительство, вступив в Первую мировую войну, осуществило свою программу геноцида армян. На сегодняшний день эта идеология вошла в повестку дня внешней политики турецкого государства, являя собой серьезную угрозу для армянской государственности.

Гегам Оганнисян – к. и. н., доцент, старший научный сотрудник отдела новой истории Института истории НАН РА. Научные интересы: история армянских национальных партий и общественно-политическая мысль. Автор 2 монографий и около 30 статей. gegham.hovhannisian@mail.ru

THE YOUNG TURK MOVEMENT AND THE HNCHAKYANS
(End of the 19th c. – beginning of the 20th c.)

GEGHAM HOVHANNISYAN

Summary

Keywords: Young Turk Movement, Hnchakyans, Ottoman Empire, reforms, Armenian Question, Autonomous Armenia, Stepan Sapah-Gyulyan.

At the end of the 19th century, during the rise of the national liberation movement of the Armenian people, the movement of the Young Turks – the Turkish opposition forces, was launched against the sultanate regime. The Young Turks sought to establish a constitutional, parliamentary order and put the country on a European path of development. Realizing that their forces were not sufficient to achieve this goal, the leaders of the movement tried to reach an agreement and cooperate with the subject peoples of the Ottoman Empire, including the political organizations of the Armenian people, who were fighting

against the Sultanate tyranny. Numerous meetings and discussions of the Hnchakyan party figures with the Young Turk leaders during the mentioned period showed that the latter did not recognize the need for reforms in Western Armenia, did not actually recognize the existence of the Armenian Question and were led by the idea of assimilating the subject peoples of the Ottoman Empire among the Turks and creating one Ottoman nation.

Although the Hnchakyans welcomed the Young Turk's coup (1908) and initially cooperated with them, after the massacre of the Cilician Armenians (1909) finally being convinced that the Young Turks would continue the backward policy of sultans on the national issue, began to sharply criticize the Turkish government's national and economic policies.

Realizing the danger threatening the Armenian people at the threshold of World War I, the Hnchakyans pushed forward the idea of preparing the Armenians of Western Armenia for self-defense.

Guided by the idea of pan-Turanism, the Young Turk government entered World War I and perpetrated its plan – the Armenian Genocide. Up to day this ideology remains on the agenda of the foreign policy of the Turkish state and is a serious threat to the Armenian statehood.

Gegham Hovhannisyan – Candidate of Sciences in History, Associate Professor, Senior Researcher at the New History Department of the NAS RA Institute of History. Scientific interests: history of Armenian national parties and social-political thought. Author of 2 monographs and about 30 articles.
gegham.hovhannisian@mail.ru

Պատմաբանասիրական հանդես 2022 № 1 Историко-филологический журнал

Doi:10.54503/0135-0536-2022.1-118

ԳԱՐԵԳԻՆ ՍՐՎԱՆՁՏՅԱՆՑԻ ԲԱՆԱՀԱՎԱՔՉԱԿԱՆ ՈՒ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ*

ՊԵՏՐՈՍ ԴԵՄԻՐՃՅԱՆ

Բանալի բառեր՝ Գարեգին Սրվանձտյանց, բանասեր, բանահավաք, ազգագրագետ, «Թորոս Աղբար», «Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ», Արաբկիր քաղաք, արվեստ, մշակույթ, Մատենադարան:

Նախաբան

Գարեգին եպիսկոպոս Սրվանձտյանցը (1840–1892 թթ.) հայ ժողովրդի ամենամեծ երախտավորներից մեկն է՝ թե՛ որպես հոգևոր, ազգային-հասարակական նվիրյալ գործիչ, թե՛ որպես անզուգական բանասեր, բանահավաք ու ազգագրագետ: Հատկանշական է, որ նրա գործունեությունը տասնամյակներ շարունակ չաղկապված է եղել երջանկահիշատակ Մկրտիչ Խրիմյանի՝ Խրիմյան Հայրիկի կյանքին ու գործունեությանը: Բավական է հիշել, որ Գ. Սրվանձտյանցը եղել է 1850-ականի կեսերին Խրիմյանի հիմնած «Արծուի Վասպուրական» թերթի խմբագրի տեղակալը, որտեղ և տպագրվել են նրա՝ ազգային-ազատագրական պայքարի դաղափարով ներշնչված առաջին ծանրակշիռ հոդվածները: Տարիներ անց՝ 1862 թ., ստանձնելով Տարոնի հոգևոր առաջնորդի պաշտոնը՝ Խրիմյան Հայրիկը նրան է վստահել նաև Մշո Ս. Կարապետ վանքին կից իր հիմնած ժառանգավորաց վարժարանի տնօրենուսուցչի և «Արծվիկ Տարոնոյ» երկշաբաթաթերթի խմբագրի պատասխանատու պաշտոնները: Գ. Սրվանձտյանցը Խրիմյան Հայրիկի հետ է սկսել նաև իր հոգևոր ու ազգագրական գործունեության առաջին քայլերը՝ 1860–1861 թթ., որպես նվիրակ և քարոզիչ՝ շրջագայելով հայկական տարբեր գավառներում և կատարելով իր գրառումներն ու ուսումնասիրությունները: Այդ ամենը, բնականաբար, կյանքի մեծ դպրոց է եղել երիտասարդ գործչի համար, պայմանավորել նրա հետագա բազմարդյուն ազգային-հասարակական ու ստեղծագործական գործունեության ընթացքը:

Բանահավաք-ազգագրագետը

Բացի գեղարվեստական՝ մասնավորապես՝ թատերական հայտնի գործերից, Գ. Սրվանձտյանցի ստեղծագործական վաստակի կարևորագույն մասն են կազմում ժողովրդական բառ ու բանի, զրույցների և ավանդությունների, ազգագրական հարուստ նյութերի ջանադիր հավաքչական արդյունքը հանդիսացող «Գրոց ու բրոց» (1874), «Հնոց և նորոց» (1874), «Մանանա» (1876),

* *Ներկայացվել է 20. I. 2022 թ., գրախոսվել է 01. III. 2022 թ., ընդունվել է տպագրության 09. III. 2022 թ.: Զեկուցումը կարդացվել է 2020 թ. ապրիլի 29–30-ին ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում՝ Գ. Սրվանձտյանցի ծննդյան 180-ամյակին նվիրված գիտաժողովում:*

«Թորոս Ագըար, Հայաստանի ճամբորդ» (Ա–Բ մասեր, 1879 և 1884), «Համով հոտով» (1884) ժողովածուները: Նրա անվան հետ է կապված, մասնավորապես, «Սասնա ծռեր» ազգային էպոսի՝ «Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» առաջին պատումի հայտնաբերումը, գրառումն ու հրապարակումը: Վիթխարի ծավալի նշված աշխատանքների բարձր մակարդակով իրականացման համար բանասիրության մեջ նա համարվել է հայ բանահավաքների ու ազգագիրների ռահվիրան, գնահատվել նաև միջազգային ասպարեզում՝ ընտրվելով Պետերբուրգի Կայսերական հնագիտական ակադեմիայի պատվավոր անդամ:

XIX դարակեսն ու հետագա մի քանի տասնամյակները, հիրավի, բախտորոշ ժամանակաշրջան էին Օսմանյան կայսրության լծի տակ տառապող հայ ժողովրդի համար: Ազգային զարգացման, քաղաքակրթական առաջադիմության ճանապարհին բացառիկ էր եվրոպական կրթությունն ստացած նվիրյալ գործիչների՝ Գրիգոր Օտյանի, Պալյան եղբայրների, Նահապետ Ռուսինյանի և այլոց ջանքերով ստեղծված Ազգային Սահմանադրության ընդունումը 1860 թվականին: Պատասխանելով «Ուրեմն ի՞նչ է Սահմանադրութիւնն» հարցին՝ Եղիա Տեմիրճիպաշյանը ոգևորությամբ գրում էր, թե «Հաստատութեամբ ազգային Սահմանադրութեան, Հայ ազգն ալ՝ սոյն թուականին՝ կը մտնէ հետեւաբար քաղաքակրթութեան վերջին, բարձրագոյն շրջանին մէջ»[1]:

Ազգի ու հասարակության վերափոխման, առաջադիմության իրագործման ճանապարհին գլխավոր ուժը, իհարկե, երիտասարդությունն էր: Առաջ են գալիս եռանդուն ու կարող անհատներ՝ Ներսես Վարժապետյանը, Մինաս Զերազը, Ռեթեոս Պերպերյանը, Եղիա Տեմիրճիպաշյանը, Մատթեոս Մամուրյանը, Հակոբ Պարոնյանը և ուրիշներ, որոնք մեծ ջանքեր էին գործադրում հոգևոր ոլորտում, մանկավարժության, մամուլի, լեզվի, գրականության, արվեստի բնագավառներում բարեփոխումների իրագործման համար:

Հատկապես XIX դարի վերջին քառորդին՝ 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո, ամենայն հրատապությամբ առաջադրվում էր նաև ազգային միասնության՝ Արևմտյան ու Արևելյան Հայոց ջանքերի մեկտեղման հարցը, օրակարգային էր հայկական գավառների բուն վիճակի, ժողովրդի կյանքի պայմանների, ազգային զգացմունքների և գաղափարների վերազարթոնքի խնդիրը: Դարձյալ դիմելով Ե. Տեմիրճիպաշյանի պատկերավոր խոսքի օգնությանը՝ նշենք, որ չատերի նման նա ևս համոզված էր, որ ինչպես «ճառագայթք կեդրոնէ մը բնականաբար կը բղխին ու կը սփռուին», «մայրաքաղաքէս ի գաւառս պիտի ծաւալէին լմացականութեան լոյսն եւ բարոյական կենաց սկզբունքն»[2]: Ահա թե ինչու 1878 թ. գարնանը Կ. Պոլսի պատրիարք Ներսես Վարժապետյանը որոշում է՝ հատուկ կոնդակով սահմանված առաքելությամբ երեք վարդապետ ուղարկել Փոքր և Մեծ Հայաստան: Երեքից մեկը Գ. Սրվանձտյանցն էր: «Այն օրերը Հայկական խնդիրն թեւ առած սաւառներ ու հասեր էր Եւրոպիոյ մեծ տերութեանց դահլիճները, եւ քաղցր յոյսեր կախեր սփռեր էր Հայաստանի աւերակներուն եւ Հայոց աւեր սրտերուն,– «Թորոս Ագըար»-ում գրում է Գ. Սրվանձտյանցը: – Հայ-

[1] Տէմիրճիպաշեան. 1886, 98:
[2] Տէմիրճիպաշեան. 1883, 222–223:

րենի հողն ու հողոյն հաւասարած Հայն կենաց նոր չարժում մը կ'ստանայր: Ս. Պատուիրակներն իրենց բարձր տեղերէն կ'երեւէին մինչեւ Հայաստանի խորն ու ձորը՝ ի խաւարի նստող բնակչաց: Իսկ լրագրութիւն, իբրեւ գետ, կը հոսէր կը տարածէր յաջող ակնկալիքներ»[3]*:*

Առաջին ուղևորությունը տեղի է ունենում 1878 թ. ապրիլի 30-ին: Մայիսի 1-ին պատվիրակներն արդեն չոգենավում էին, որը, ինչպես պատկերավոր նկարագրում է Սրվանձտյանցը, «զմեզ բարձած իւր թեւոց վրայ, կը թռէր դէպ՝ ի Սեւ ծով»: Ուղևորությունն անչափելի էր. «Գարունն իւր չքնաղ գեղեցկութեամբ չքեղազարդած էր Վոսքորի երեսներն ու շրթունք, արեւն պայծառ եւ փափուկ, բայց ասոնք չէին ազդեր յիս: Օտար էին անոնք. ես կ'երթայի հայրենեաց արեւն ու գարունը ողջունել»[4]*: Ընդ որում, ինչպես խոստովանել է մեկ տարի անց՝ երկրորդ ուղևորությունից առաջ, Կ. Պոլսի Գատը գյուղ Թաղամասի Արամյան սրահում կազմակերպված «ուղեւորելու հանդէսը» հիշատակելիս, պատվիրակներն իրենց հետ տանում էին բազմաթիվ պանդուխտների սրտի և հոգու հայրենաբաղձ կարոտները, հիշատակներն ու բաղձանքները ... Պանդուխտները «Շատ բարեւ կը ղրկէին իրենց տառապեալ մօրը, կարօտ՝ իրենց եղբարց եւ քոյրերուն, անձո՛ւկ՝ իրենց հօրենական տան վրայ ծագող արեւուն, համբո՛յր հողին, ջրոյն, քարին, խաչքարին, տաճարին, ողջո՛յն՝ ողջ մնացողին, խո՛ւնկ՝ հանգուցեալոց գերեզմանին ...»*[5]*:*

Հետագա երկու տարիների ընթացքում Գ. Սրվանձտյանցը եղել է հայկական մի շարք գավառներում, շրջագայել բազմաթիվ մեծ ու փոքր բնակավայրերում (Տիգրանակերտ, Սեբաստիա, Ծովք, Ակն, Երզնկա, Կարին, Վան, Մուշ ...), մանրամասնորեն ծանոթացել ժողովրդի կյանքին ու կենցաղին, վիճակագրել և ցուցակագրել հայության թվաքանակը, եկեղեցիներն ու վանքերը, գրի առել ավանդությունները և սովորությունները, բանավոր գրույցներն ու պատմությունները, կյանքի դժվարություններն ու ապագայի հույսերը... և այդ ամենը հրատարակել «Թորոս աղբար, Հայաստանի ճամբորդ» խորագիրը կրող երկու ծավալուն ժողովածուներում:

Կարևոր հանդրվաններից մեկը՝ Արաբկիր քաղաք

Ուղևորության կարևոր հանգրվաններից մեկը հինավուրց Արաբկիր քաղաքն էր: Փոքր Հայաստանի մի շարք կողմերը շրջագայելուց հետո վիճակագիրը Գ. Սրվանձտյանցն այստեղ է հասնում 1878 թ. հուլիսի 15-ին: Ինչպես ամենուրեք, ճանապարհը լի էր վտանգներով, մանավանդ ձորերի մեջ զանազան զինված խմբերի կողմից հարձակումներն ու կողոպուտներն անպակաս էին, «ուստի ոստիկանին հետ երեք ալ կտրիճ զինեալ Հայք կարմրկապէն եկան մեզ հետ», – պատմում է նա: Ահա թե ինչու մեծ էր առաքելության մասնակիցների ուրախությունը, երբ ճանապարհին հանդիպում էին «հոգւոյ կատարեալ անդորրութեամբ ընկողմանած», սրինգ նվագող այծարածների կամ լեռնահովիտներում ու արտերում խաղաղ աշխատանքով զբաղված հնձվորների: Տպավորիչ էին նաև բնության տեսարան-

[3] *Սրվանձտեանց. 1879, Ը–Թ:*
[4] *Սրվանձտեանց. 1879, Թ:*
[5] *Սրվանձտեանց. 1884, Զ:*

*ները՝ հատկապես Արաբկիրի նշանավոր Ոսկեգետակը, որի նկարագրությունը Գ. Սրվանձտյանցը տվել է, իրոք որ, բանաստեղծական մեծ ներշնչումով ու պատկերավորությամբ. «… իւր ափունքը կը նմանին կոյսի վարսերուն, սաղարթախիտ ծառաստունկներով, – գրում է նա, – եւ իւր ծոցոյն մէջ կը լողային կարմրախայտ ոսկեփայլ ձկունք»: Հրաշալի այդ տեսարանը, սակայն, խաթարվում էր գետի ափերին թավալած բազմաթիվ «աղտոտ գնչուներով», որոնք «մուրացկանութեան տոպրակներ եւ բուռները բացած» անմիջապես հավաքվում են նրանց չուրջը[6]: Շրջակա գյուղերի հայության մեջ ևս կային աղքատներ և մուրացիկներ, որոնք, իրար հերթ չտալով, մեկը մյուսից սարսափելի դեպքեր՝ «հինչ հարստահարութիւններ եւ զրկանքներ» էին պատմում, որ կրել էին «եւ կը կրեն Քրդերէ, այլ մեծաւ մասամբ քաղաքի Թուրքերէն, պաշտօնատարներէ, ոստիկաններէ եւ զօրքերէ»: Գյուղերի հայոց հողերը «Արաբկերի Թուրք պէյերուննն էր, որք առանց իրաւանց սեպհականած էին իրենց, կ'ըսուէր»: Անչափելի էր եպիսկոպոսի հուզմունքը, երբ ճանապարհին հանդիպած մանուկների խումբը «բեկբեկ ձայնիւ» սկսել էր երգել ու կրկնել. «Անգութ երկինք ալ չը յիշեր մոռցեր է Հայաստանը, // Անսիրտ Հայեր ալ չեն սիրեր անուշիկ Հայաստանը …»: «Սիրտս ծովացաւ ատոնց ձայնէն եւ ասացուածքէն,– խոստովանում է նա, – յուզեալ կը ծփայր արիւնս եւ արցունքս …»[7]: Հայերի մեծամասնությունը, սակայն, աղքատասեր էր, կրոնասեր ու եկեղեցասեր: Գ. Սրվանձտյանցը վկայում է, որ նույնիսկ առեւտրություն չկար, այսպես կոչված, «Բողոքական անունով հայերի» և հայ առաքելական եկեղեցու հետևորդների միջև: Ավելին՝ կային խոշոր բարերարներ, որոնց անունները սիրով ու ակնածանքով էին հիշատակվում:

Պատմական հնագույն ժամանակներում կառուցված և ապա («70 տարի կայ») նոր Արաբկիրին տեղը զիջած Հին քաղաքն անցնելով՝ ուղևորները մոտենում են քաղաքի դարպասներին, ուր ժողովուրդը, աշխարհիկ ու կրոնական ղեկավարությունը Գ. Սրվանձտյանցին խանդավառ ընդունելություն են ցույց տալիս: «Երբ լսեց ամեն մարդ Սրուանձտեանի ժամանելը, հետզհետէ կուգային /…/ Նորին սրբութեան գալուստը չնորհաւորելու. իսկ նա այցելուաց միշտ բարեմաղթութեամբ չնորհակալիք յայտնելէ չէր դադարէր, – վկայում է Կ. Պոլսի «Հայրենիք» օրաթերթի թղթակիցը, – որով տեղւոյս ազգային սահմանադրական ժողովներէն, խորհուրդներէն, ինչպէս եւ ամեն կարգի անհատներէ սէր եւ համակրանք կը վայելէր, եւ զինքը տեսնողները բազմիցս տեսնել կ'ուզէին»[8]: Համեստագույն եպիսկոպոսը չէր կարողանում թաքցնել զգացմունքները՝ «Խառնուեցանք հեծեալ եւ հետի բազմութեան. Եկաւեանց վարժարանի մանկտին փողոցը կայնած կ'երգէր. չուկայէն էր մեր անցքը. ամբոխ մեծ, Քիւրդ, Թուրք, Հայ, Գայմագամէն ալ չավուշ մը, որ զարդարեալ ձի մը կը բերէր, չնորհակալ եղայ առանց հեծնելու: – Դէպ Առաջնորդարան գնացինք, ուր 300ի չափ աշակերտք Ուսումնարանին եւ Մայր վարժարանին, երկու կարգ բաժանեալ կ'երգէին»: Ջարմանում, տեղը չէր գտնում Գ. Սրվանձտյանցը՝ «Ի՞նչ էր այսքան հանդիսաւորութիւնք. –

[6] *Սրվանձտեանց. 1879, 270–272:*
[7] *Սրվանձտեանց. 1879, 274:*
[8] *«Հայրենիք» (Կ. Պոլիս), 1878, թիւ 461:*

Արաբկերցւոց ազգային զգացմանց ցոյցք: Ո՛վ էի ես, /…/ քրտինքներ հոսեցին անձնէս»[9]:

Հետագա տասն օրերի ընթացքում նա այցելում է քաղաքի ազգային վարժարաններն ու կարևոր հաստատությունները, գոհունակությամբ նշում, մասնավորապես՝ քաղաքային վարչության գործունեության կանոնավորությունը. «Ահա վիճակ մը, ուր արձանագրութիւնք, տումար, դիւան, քարտուղար, եւն. կը տեսնեմ իմաստութիւն, յօժարութիւն և եռանդ, բարեխառնութեամբ կը գործեն. տոհմով ազնիւներն բարոյիւք ալ ազնիւ՝ չէին խորշիր հասարակութենէն քուէով ընտրելոյ մը հաւասար նստիլ եւ պաշտօն վարել»[10]: Արձանագրում է քաղաքի 10 վարժարանների, ուսումնական գործընթացների կազմակերպման պատշաճ մակարդակը: Մանավանդ որ վարժարաններում իր արած մի քանի դիտողությունները՝ «զորօրինակ, դասագրքերու եւ դասատուութեան մեթոտներու մասին», անմիջապես ուշադրության էին առել ու բարեփոխման ձեռնարկել[11]: Զարմացած էր նաև քաղաքի բնակչության մեջ հաստատված որոշ եվրոպական բարքերի առնչությամբ: Այն աստիճան, որ խոստովանում է, թե տեսնելով «բանթողս /գործադուլ/» անող և իրար հետ «երդմամբ կապուած» մանուսագործների վճռականությունը՝ «ինքզինքս Լոնտոնի մէջ կը կարծէի»: Թերևս, անսպասելի էր նաև այն, որ գործարաններից մեկում արտադրվող «կերպաս տարազները» մրցում էին մինչև անգամ «Հալէպի եւ Շամի ապրանքներուն հետ», իսկ գյուղերում սկսել էին «եվրոպական մաղով զտել կալերու ցորեններըե ու նաև «ճարտարագործներ կան, որ դիւրութեամբ կը չինեն Եվրոպական զէնքեր, մեքենաներ եւ նուրբ գործիքներ»[12]…

Գ. Սրվանձտյանցը քարոզներ է կարդում նաև իր ճարտարապետությամբ հռչակված Մայր եկեղեցում … երանի է տալիս Արաբկիրի նորընտիր Առաջնորդ Եղնիկ վարդապետին, «որ այսպիսի պատրաստեալ եւ հասունացեալ պատուական հունձք մը կը յանձնուէր իրեն»[13]:

Ուղևորության կարևոր արդյունքներն ու եզրահանգումները

Գարեգին եպիսկոպոս Սրվանձտյանցի համար առանձնապես կարևոր էր պանդխտության խնդիրը: Արաբկիրը, ցավոք, բացառություն չէր: «Ամեն տունէ պանդուխտ կայ Պոլիս, կամ այլ մեծ քաղաքները, – արձանագրում է նա, –/…/ թէպէտ Հայեր զինեալ լինելով և որսի վարժուած, քաջութեամբ զիրենք կը պաշտպանեն Քրդերէն, բայց յաճախ կը չարչարուին կառավարիչներէն, պետերէն եւ պէյերէն, որոց դէմ զէնք չբանիր, և կառաւարութեան օրէնքն անոնց կամքն է. ա՛լ ո՞ւր դիմեն և ի՞նչ ընեն»[14]:

Այդ իմաստով չափազանց հրատապ ու խորիմաստ էին Գ. Սրվանձտյանցի մտորումները ընդհանրապես պանդխտության վերաբերյալ: «Արդարեւ կորուստ մեծ կորուսած է Հայն, եւ այն՝ ոչ միանգամ, եւ ոչ երկիցս, այլ բազմիցս, – գրում է նա, – կորուստ մ՚ինքնին եղած է Հայն անհամար բազմու-

---

[9] *Սրվանձտեանց. 1879, 275–276:*
[10] *Սրվանձտեանց. 1879, 277:*
[11] *Սրվանձտեանց. 1879, 279:*
[12] *Սրվանձտեանց. 1879, 181–282:*
[13] *Սրվանձտեանց. 1879, 279:*
[14] *Սրվանձտեանց. 1879, 284:*

թեամբ ցիրուցան լինելով, տեղէ տեղ փոխուելով, ազգէ յազգ անցնելով, որք ի գնալն և ի մնալն աւանդած են եկեղեցւոյն ինչ որ զերծուցած են աւարէն և մահուանէն, /…/ դիպուածոց եւ արարածոց յիշատակները, որ կը տեսնուին մագաղաթներու վրայ, մատենագրութեանց մէջ …»[15]:

Իր ազգային, հոգևոր առաքելության ընթացքում Գ. Սրվանձտյանցը չափազանց կարևորում էր «մեր նախնեաց մեզ թողուցածը», արվեստի ու մշակույթի արժեքները պահել-պահպանելու անհրաժեշտությունը: Առաջարկում էր, որ «յուրաքանչիւր գաւառը իր մէջը կամ վանք մը կամ եկեղեցի մը յատկացնէ թանգարան հին մատենից, ինչպէս ըրաւ ի Վարագ մեր Ս. Հայրիկն, եւ հոն խնամքով հաւաքեն, կարգաւորեն ու պահեն այդ գանձերը ապականութենէ եւ յափշտակութենէ»: Եվ ապա՝ Ս. Էջմիածնի, Ս. Երուսաղեմի, Վենետիկի, Վիեննայի, Արմաշի ու Վարագի օրինակով, մատենադարաններ հիմնել գավառներում, որով հնարավոր կլինի «ազգային մատենագրաց եւ գրագիտաց ընծայել միջոց, ուր գտնան իրենց պէտք եղած գիրքը եւ օգտուին»[16]:

Արաբկիրից մեկնելու օրը՝ հուլիսի 24-ին, ինչպես դարձյալ վկայում է «Հայրենիք»-ի թղթակիցը, «առաջնորդարանի դռնէն մինչ հեռաւոր փողոցներ եկեղեցական դասն ու երգեցիկ ուսանողներ շարուած ողջ երթի երգերը կը հնչեցնէին, ազգային ժողովները ու խորհուրդները խումբ խումբ առաջնորդարանէն համայն երեւելեաց հետ կ'ուղեկցէին Նորին սրբութեան: Անհամար ժողովուրդ փողոցները խռնեալ ի վերջին տես կու գային կենաց քարոզ այցելուին»: Խանդավառությունն անսահման էր, քանզի «այն վերջին պահուն յորում Ս. Հայրն իր վերջին մնաք բարեաւ օրհնութիւնը կը նուիրէր Հայկական ամբոխին, կեցցէներ օդը կը թնդացնէին …»:

Ուղևորությունից հետո անդրադառնալով այդ ամբողջ ընթացքում իր տեսածին ու ապրածին՝ Գ. Սրվանձտյանցը խոստովանում է, թե, չնայած բոլոր դժվարություններին, «երբէք պատճառ մը չունիմ դժգոհելու. վասն զի յօժարութեամբ գնացի, յօժարութեամբ չրջեցայ, յօժարութեամբ գործեցի: /…/ Քրդաց վրաններու տակը և բացօթեայ վայրեր իջեւանեցայ, ասիական ուղեւորի մը կրելիք ամենն ալ կրեցի, բայց երբէք ցաւ չզգացի, վասն զի սիրով գնացի …»[17]:

Տասնամյակներ անց ԱՄՆ-ում հրատարակված «Պատմութիւն Հայոց Արաբկիրի» մեծածավալ հատորի հեղինակները հետևյալ տողերով էին գնահատում մեծ ազգասեր-ազգագրագետի պատմական այդ առաքելությունը. «Խրիմեան Հայրիկի չնորհալի աշակերտը, Գարեգին Վրդ. Սրուանձտեանց, հայ ֆոլքլորային գրականութեան բազմաշխատ դէմքերէն մին է: /…/ Ինչպես ծանօթ է, Գարեգին Վրդ. Պոլսոյ Հայոց Պատրիարքարանին կողմէ քննական ուղեւորութիւն մը կատարեց հայկական գաւառներու մէջ եւ բաբախուն տողերով ու գունագեղ ոճով տուաւ հայ ժողովուրդի զանգուածին կեանքը, իր զանազան երեսներով: Համիտեան ջարդերու նախօրեակին հայկական բնագաւառներու առօրեան ճանչնալու համար, անհրաժեշտ է կարդալ

[15] *Սրվանձտեանց. 1884, 246:*
[16] *Սրվանձտեանց. 1884, 247–249:*
[17] *Սրվանձտեանց. 1879, ԺԳ:*

այս հայրենաշունչ մատեանը՝ որ տեղագրական, ազգագրական, տնտեսական եւ կրթական տեղեկութիւններ պարունակող արժէքաւոր գործ մըն է»[18]*:*

Զարմանալին այն է, որ նման վիթխարի գործերի հեղինակն՝ ինքը չափազանց համեստորեն էր գնահատում իր կատարած գործը. «Սոյն հրատարակութիւնս պաշտօնական չէ, այլ սոսկ իբրեւ ուղեւորութիւն և զանազան ծանօթութիւնք իմ չրջած տեղեաց տեղեաց և բնակչաց կեանքի վրայ …»: Ավելին՝ արձանագրելով, թէ «Կատարեալ գործ մը չէ այս, վասն զի այնքան խառն և կարեւոր պաշտօններուս մէջ չէի կրնար լիովի ստորագրել և ամեն բան աչքի անցունել» առաջարկում է, որ «եթէ նկատեն ոմանք պակաս բաներ» իր գրվածքի մեջ, «իրենց կողմանէ» լրացնեն, սակայն պայմանով, որ այդ անեն «միշտ անկողմնակալ հոգւով, ինչպէս մեք ալ նոյն զգուշութիւն ըրած ենք», քանզի ամեն ոք կարող է համոզվել, որ իր գրածների նպատակը, իր ցնծավոր «փափաքն ու ջանքը» «ազգայնոց յառաջադիմութիւն և իրենց օգտակարութիւնը ցոյց տալ է միայն. Հայը Հայուն ծանօթացնել, Հայը Հայուն սիրել տալ է բոլորովին …»[19]*: Սակայն այն տողերը, որ նա թողել է իբրեւ իր կատարած առաքելության գլխավոր արդյունք ու եզրակացություն, չափազանց խոսուն են. «Հայ եղողը՝ Հայաստանի հողոյն վրայ ինքզինքը կը ճանաչէ, ինքզինքը վեհ և կենդանի կը գտնէ, փորձեցէք և տեսէք»*[20]*:*

Եզրակացություն

Այսպիսով, կարող ենք ասել, որ.

ա) Գարեգին եպիսկոպոս Սրվանձտյանցի գործունեությունն ակնառու և արդյունավետ էր ոչ միայն հոգևոր, ազգային ու հասարակական տարբեր ոլորտներում, այլև բանահավաքչության և ազգագրության բնագավառում: Մեկ տասնամյակի ընթացքում (1874–1884 թթ.) դեպի արևմտահայկական բազմաթիվ գավառներ ու քաղաքներ կատարած իր ուղևորությունների ժամանակ նրա իրականացրած բանահավաքչական գործունեության արդյունքը հանդիսացող մի քանի ժողովածուները մեծ բանասեր-ազգագրագետի ստեղծագործական վաստակի կարևորագույն մասն են կազմում:

բ) Հայկական գավառներում իրականացրած առաքելության ընթացքում իր դիտարկումներից ելնելով՝ Գ. Սրվանձտյանցը կարևորում էր պանդխտության խնդիրը, արվեստի ու մշակույթի ավանդական արժեքների պահպանման և զարգացման անհրաժեշտությունը:

գ) Լինելով հայ ժողովրդի մեծ երախտավորներից մեկը՝ Գ. Սրվանձտյանցը չափազանց համեստորեն էր գնահատում իր վաստակը՝ այդ թվում նաև բանահավաքչության և ազգագրության բնագավառում՝ դրանով իսկ հաստատելով իր մարդկային-բարոյական կերպարի մեծությունը:

Պետրոս Դեմիրճյան – բ. գ. դ., ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հայ նոր գրականության բաժնի առաջատար գիտաշխատող, Հայաստանի գրողների միության վարչության քարտուղար: Գի-

[18] *Պատմութիւն Հայոց Արաբկիրի. 1969, 66:*
[19] *Սրվանձտեանց. 1879, ԺԵ–ԺԱ:*
[20] *Սրվանձտեանց. 1879, ԺԴ:*

տական հետաքրքրությունները՝ դասական և ժամանակակից գրականություն: Հեղինակ է 3 մենագրության, գրականագիտական և գրաքննադատական բազմաթիվ հոդվածների: pdemirchyan@mail.ru

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

«Հայրենիք» (Կ. Պոլիս), 1878, թիւ 461:

Պատմութիւն Հայոց Արաբկիրի. 1969, կազմեց և երկասիրեց Անդրանիկ Լ. Փոլատեան, Նիւ Եորք, Ամերիկայի Արաբկիրի միութեան հրատ., 1018 էջ:

Սրվանձտեանց Գ. 1879, Թորոս Աղբար Հայաստանի ճամբորդ, մասն Ա, Կ. Պոլիս, տպագր. Ե. Մ. Տնտեսեան, 365 էջ:

Սրվանձտեանց Գ. 1884, Թորոս Աղբար, Հայաստանի ճամբորդ, մասն Բ, Կ. Պոլիս, գ. Պաղտատլեան (Արամեան), 499 էջ:

Տէմիրճիպաշեան Ե. 1883, Միացեալ ընկերութիւնք Հայոց. – «Գրական եւ Իմաստասիրական շարժում», տետր ԺԲ:

Տէմիրճիպաշեան Ե. 1886, Սահմանադրութիւն. – «Գրական եւ Իմաստասիրական շարժում», տետր վեցերորդ:

СОБИРАТЕЛЬСКАЯ И ЭТНОГРАФИЧЕСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ ГАРЕГИНА СРВАНДЗТЯНЦА

ПЕТРОС ДЕМИРЧЯН

Р е з ю м е

Ключевые слова: Гарегин Срвандзтянц, филолог, собиратель фольклора, этнограф, «Торос Ахпар», «Давид Сасунский или Дверь Мгера», город Арабкир, искусство, культура, Матенадаран.

Епископ Гарегин Срвандзтянц (1840–1892 гг.) – один из самых заслуженных представителей армянского народа – и как преданный национально-общественный деятель, и как несравненный филолог, собиратель фольклора и этнограф. Важнейшей частью его деятельности является серия сборников, являющихся результатом тщательного сбора в течение десятилетия (1874–1884 гг.) народных сказаний и преданий, богатых этнографических материалов. С именем Г. Срвандзтянца связано, в частности, выявление, записывание и публикация первого варианта армянского национального эпоса «Сасна црер» – «Давид Сасунский, или Дверь Мгера». За выполнение на высоком уровне вышеупомянутых масштабных работ, в филологии он считался основоположником армянского фольклора и этнографии. Также был оценен на международной арене, будучи избранным почетным членом Императорской археологической академии в Санкт-Петербурге.

Весной 1878 года Константинопольский Патриарх Нерсес Варжапетян решил отправить трех архимандритов в Малую и Великую Армению с

особой миссией. Одним из них был Гарегин Срвандзтянц. Первая поездка состоялась 30 апреля 1878 года. В течение следующих двух лет Г. Срвандзтянц посетил ряд армянских областей, побывал во многих крупных и малых населенных пунктах (Тигранакерт, Себастия, Цовк, Акн, Ерзнка, Карин, Ван, Муш и др.), подробно ознакомился с жизнью и бытом народа, составил достоверную статистику и демографию армян, церквей и монастырей, записывал традиции и обычаи, устные предания, рассказы о жизненных трудностях и надеждах на будущее и опубликовал все это в двух больших сборниках под названием «Торос Агбар: путник в Армению». Удивительно, но сам автор весьма скромно оценивал свой труд. «Это мое издание не является официальным,– пишет он, – а просто как путешествие, различные знакомства с местами, где я бывал, и с жизнью людей». Однако строки, которые он оставил в качестве основного результата и вывода своей миссии, очень красноречивы: «Армянин познает себя на земле Армении, находит себя возвышенным и живым, попробуйте и увидите».

Петрос Демирчян – д. филол. н., ведущий научный сотрудник отдела новой армянской литературы Института литературы им. М. Абегяна НАН РА, секретарь правления Союза писателей Армении. Научные интересы: классическая и современная литература. Автор 3 монографий, многочисленных литературоведческих и литературно-критических статей.
pdemirchyan@mail.ru

COLLECTING AND ETHNOGRAPHIC ACTIVITIES OF GAREGIN SRVANDZTYANTS

PETROS DEMIRCHYAN

Summary

Key words: Garegin Srvandztyants, philologist, folklore collector, ethnographer, "Toros Aghpar", "David of Sassoun or Mher's Door", Arabkir city, art, culture, Matenadaran.

Bishop Garegin Srvandztyants (1840–1892) is one of the most merited representatives of the Armenian people, both as a devoted national-public figure and as an incomparable philologist, folklore collector and ethnographer. The most important part of his activity is a series of collections, which are the result of a diligent collection of over a decade (1874–1884) of folk tales and traditions and wealthy ethnographic materials. The name of G. Srvandztyants is associated, in particular, with the identification, recording and publication of the first version of the Armenian national epic "Sasna Tsrer" – "David of Sassoun or Mher's Door". For the high-level performance of the abovementioned large-scale works, he was considered the founder of Armenian folklore and ethnography in philology. He

was also evaluated in the international arena, being elected an honorary member of the Imperial Archaeological Academy in St. Petersburg.

In the spring of 1878, Patriarch Nerses Varzhapetyan of Constantinople decided to send three archimandrites to Lesser and Greater Armenia on a special mission. One of them was Garegin Srvandztyants. The first trip took place on April 30, 1878. Over the next two years, G. Svandztyants visited a number of Armenian regions, many large and small settlements (Tigranakert, Sebastia, Tsovk, Akn, Yerznka, Karin, Van, Mush, etc.), got acquainted in detail with the life and lifestyle of the people, compiled reliable statistics and demography of Armenians, churches and monasteries, recorded traditions and customs, oral stories and legends, life's difficulties and hopes for the future, and published all this in two large collections entitled "Toros Aghpar: a Traveler of Armenia". Surprisingly, the author himself very modestly assessed his work. "This edition of mine is not official," he writes, "but just like a journey, various acquaintances with the places where I have been to and with the lives of the inhabitants". However, the verses that he had left as the main result and conclusion of his mission are very eloquent: "An Armenian recognizes himself in the land of Armenia, finds himself elevated and alive: try and you will see it".

Petros Demirchyan – Doctor of Sciences in Philology, Leading Researcher at the Department of Modern Armenian Literature of the NAS RA Institute of Literature after M. Abeghyan, Executive Secretary at "Writers' Union" of Armenia. Scientific interests: classical and modern literature. Author of 3 monographs, numerous literary and literary-critical articles.
pdemirchyan@mail.ru

II

Doi:10.54503/0135-0536-2022.1-128

«ՄԱՍՅԱՑ ԱՂԱՎՆԻՆ» ԱՄԵՐԻԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍԻՆ*

ՖԵԼԻՔՍ ՄՈՎՍԻՍՅԱՆ

Բանալի բառեր՝ «Մասյաց աղավնի», հյուսիս, հարավ, իշխանություն, ստրկություն, պատերազմ, երկպառակություն, խռովություն, միասնություն, համերաշխություն, Աբրահամ Լինքոլն:

Նախաբան

Ամերիկյան քաղաքացիական պատերազմը, որը «տևեց չորս տարի և վերջ դրեց առնվազն մեկ միլիոն զինվորների ու խաղաղ քաղաքացիների կյանքին, ամենամեծ պատերազմն էր, որ երբևէ մղվել էր Նոր աշխարհում»[1]: Այդ պատերազմին հյուսիսի բանակի շարքերում մասնակցել են նաև Ամերիկայի Միացյալ Նահանգներում բնակվող սակավաթիվ հայ համայնքի անդամներից 30-ը և զորակոչված մեկ չարքային զինվոր: Քաղաքացիական պատերազմի տարիներին՝ 1863 թ., Նյու Յորքում բժշկի մասնագիտություն ստացած կոստանդնուպոլսեցի Կարապետ Գալուստյանը, ակնեցի Պարոնիկ Մաթևոսյանը[2] և վիրաբույժ Սիմոն Մինասյանը ծառայել են Ֆիլադելֆիայի զինվորական հոսպիտալներում[3]:

Ամերիկյան քաղաքացիական պատերազմի նկատմամբ անտարբեր չի մնացել ժամանակի հայ պարբերական մամուլը, որի դիրքորոշումը հայ պատմագրության մեջ հանգամանորեն ուսումնասիրված չէ: Պատերազմի 100-ամյակին նվիրված ակադեմիկոս Մկրտիչ Գ. Ներսիսյանի՝ «Քաղաքացիական պատերազմը Ամերիկայում հայ պարբերական մամուլի լուսաբանմամբ» հոդվածում[4] տրված գնահատականները վերանայման կարիք ունեն: Անվանի պատմաբանը խորհրդային պատմագիտության գաղափարախոսական կաղապարների ոգով պատերազմն անվանում է «բուրժուադեմոկրատական հեղափոխություն»[5], ներկայացնում է պատերազմի ընթացքը լուսաբանած տասը պարբերականներից յուրաքանչյուրի հրապարակումներն ու բացահայտում դրանց դիրքորոշումը: Նա անտեսում է այդ պարբերականների գաղափարական ուղղվածությունը և հասարակական հոսանք

* *Ներկայացվել է 02. IX. 2021 թ., գրախոսվել է 30. IX. 2021 թ., ընդունվել է տպագրության 07. II. 2022 թ.:*

[1] Фостер. 1953, 383; Paludan. 1988, 375.

[2] *Տե՛ս «Արշալույս արարատյան» (Զմյուռնիա), 04. V. 1863:*

[3] Malcom. 1919, 58–59.

[4] *Տե՛ս Ներսիսյան. 1961, 47–66:*

[5] *Ներսիսյան. 1982, 142:*

ներկայացնելը, որը կարևոր է ինչպես պարբերական մամուլի, այնպես էլ հասարակական մտքի պատմության համար:

Ամերիկյան քաղաքացիական պատերազմը լուսաբանած պարբերականներից մեկը «Մասյաց աղավնի» ամսագիրն է: Այն 1855–1858 թթ. լույս էր տեսնում Փարիզում, իսկ 1860–1865 թթ.՝ Թեոդոսիայում, հայ ազգային պահպանողական հոսանքի երևելի դեմքերից Գաբրիել վարդապետ Այվազովսկու (1812–1880) խմբագրությամբ: Խորհրդային տարիներին ակադեմիկոս Արտաշես Կարինյանն անդրադարձել է Փարիզում հրատարակության տարիների «Մասյաց աղավնու» գաղափարական ուղղությանը և նրա խմբագրի հայացքներին[6]: Նույնը չի կարելի ասել պարբերականի հրատարակության երկրորդ փուլի մասին, որը տակավին համակողմանիորեն լուսաբանված չէ: Խորհրդահայ պատմագրության գնահատականով՝ «Մասյաց աղավնու» խմբագիրը «կղերա-աղայական հոսանքի առավել աչքի ընկած գործիչներից էր»[7], «կաթոլիկ եկեղեցու պատգամներին կառչած հրապարակախոս»[8]: Նրա խմբագրած «Հետաղեմ այդ պարբերականը»[9] Փարիզում լույս տեսած տարիներին «բոնապարտիստական ձայնատարն» էր, իսկ Ռուսաստանում՝ «ցարիզմի փողհարը»[10]: Կարելի է վստահաբար պնդել, որ այն ամենևին էլ հետաղեմ գաղափարներ կրող չէր, իսկ Գ. վրդ. Այվազովսկին կաթոլիկ եկեղեցու հրապարակախոս չէր: 1855 թ. Վենետիկի կաթոլիկ Մխիթարյանների միաբանությունից հեռացած և Հայ Առաքելական եկեղեցու գիրկը դարձած Գ. վրդ. Այվազովսկին[11] «Մասյաց աղավնում» կրոնական բնույթի նյութեր չէր հրապարակում: Ավելին, նա քննադատում էր կաթոլիկ միաբաններին՝ հակաազգասիրական գործունեության համար, հորդորում համախմբվել ազգային եկեղեցու շուրջ:

«Մասյաց աղավնին» հրատարակվում էր հինգ կայուն բաժիններով, որտեղ զետեղված բովանդակալից հրապարակումները նպատակ էին հետապնդում նպաստել հայության բարոյական ու մտավոր առաջադիմությանը, ազգային համերաշխությանը, հայրենասիրությանը և միաբանությանը: Ամսագիրը պարբերաբար հրապարակում էր նյութեր՝ նվիրված աշխարհում տեղի ունեցող քաղաքական կարևոր իրադարձություններին, պատմական խոշոր գործիչների կյանքին ու գործունեությանը, հայոց պատմության ուսանելի և հետաքրքիր էջերին: Իր տասնամյա գործունեության ընթացքում «Մասյաց աղավնի» ամսագիրը, ի թիվս այդ ամենի, որոշակի դեր է խաղացել նաև որպես «գիտամանկավարժական օրգան», դարձել է ժամանակի ազգային երկու դպրոցների՝ Հայկազյան ուսումնարանի և Խալիբյան դպրոցի տարեգրությունը: Եվ, վերջապես, «Մասյաց աղավնին» «ապագայի պատմաբաններին է հասցրել» 1860-ական թվականների «Հայ հոսանքների բուռն պայքարի պատկերը, կարևոր սկզբնաղբյուր դառնալով հայ հասարակական մտքի պատմության համար»[12]:

---

[6] *Տե՛ս Կ ա ր ի ն յ ա ն. 1960, 378–430:*
[7] *Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 1974, 387:*
[8] *Կ ա ր ի ն յ ա ն. 1960, 379:*
[9] *Ն ե ր ս ի ս յ ա ն. 1982, 158:*
[10] *Տե՛ս Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 1974, 387–388:*
[11] *Զ ա ր դ ա ր ե ա ն. 1911, 369:*
[12] *Հայ պարբերական մամուլի պատմություն. XVIII–XIX. 2006, 214:*

«Մասյաց աղավնին» ամերիկյան պատերազմի առաջին փուլի մասին

Գ. վրդ. Այվազովսկին փորձառու խմբագիր էր, հրապարակախոս, պատմաբան, Ռուսաստանի և Օսմանյան կայսրության պատմությանը նվիրված ուսումնասիրությունների հեղինակ: Այդ հրապարակումների վերլուծությունը ցույց է տալիս, որ նա բավական քաջատեղյակ էր եվրոպական քաղաքական անցքերին, որոնց արձագանքում էր հիմնականում անկողմնակալ ու անաչառ դիրքերից: Նույն դիրքորոշումը չէր պահպանում իտալական ազգային, ազատագրական պայքարի նկատմամբ՝ դրսևորելով անթաքույց համակրանք: Գ. վրդ. Այվազովսկին դրվատում էր այդ պայքարի ղեկավարներ Ջուզեպպե Գարիբալդուս, Վիտորիո Էմմանուիլ II-ի և Կամիլո Կավուրի ջանքերն ու Իտալիայի ազատագրության հույսերը կապում բացառապես նրանց հետ[13]*:*

«Մասյաց աղավնուս» խմբագիրը բավական իրազեկված և իրատեսորեն պատմում է նաև ամերիկյան քաղաքացիական պատերազմի մասին: Պարբերականի լրատվության աղբյուրը հիմնականում ստացված պաշտոնական ու հեռագրական լուրերն էին և եվրոպական մամուլի հրապարակումներ: Բայց ամսագրի խմբագիրը չի սահմանափակվում սոսկ դրանք ամբողջությամբ օգտագործելով կամ վերաշարադրելով: Գ. վրդ. Այվազովսկին այդ լուրերը վերլուծում և ներկայացնում է իր ընկալման տեսանկյունից, որը կարևոր է հայ հասարակական մտքի ու պարբերական մամուլի պատմության համար:

Մ. Ներսիսյանի կարծիքով՝ «Մասյաց աղավնին», անդրադառնալով ամերիկյան քաղաքական պատերազմին, հավատարիմ դասակարգերի, սոցիալական տարբեր խավերի, խաղաղ գործակցություն ու միաբանություն քարոզող իր դավանանքին, փորձում էր գործը պատկերել այնպես, թե իբր Ամերիկայում տեղի են ունենում «ներքին երկպառակություններ, խռովություն և եղբայրասպան պատերազմ»[14]*:*

«Մասյաց աղավնուս» խմբագիրն իրականում դասակարգային պայքարի տեսանկյունից չէր դիտարկում ամերիկյան քաղաքացիական պատերազմը, այլ հյուսիսային ու հարավային նահանգների միջև ազգային միաբանության և համերաշխության բացակայության: Ընդամին, Գ. վրդ. Այվազովսկին հայ հասարակական մտքի և պարբերական մամուլի պատմության մեջ այն եզակի խմբագիրներից է, ով դեռևս քաղաքացիական պատերազմ սկսվելուց երեք ամիս առաջ կանխատեսում էր ԱՄՆ հյուսիսային ու հարավային նահանգների միջև հակամարտության անխուսափելիությունը: Պատերազմի պատճառները «չափազանց հակասական ու բազմաբնույթ են, որպեսզի ոմանք դիմես դրանք արագորեն թվարկելու»[15]*: Այդ բազմաթիվ պատճառներից մեկը Գ. վրդ. Այվազովսկին համարում էր 1860 թ. նոյեմբերի 6-ի նախագահական ընտրություններում հյուսիսի ներկայացուցիչ «Աբրահամ Լինքոլն անունով*

---

[13] *Մովսիսյան. 2020, № 3, 75–98, Մովսիսյան. 2020, № 2, 50–65, 2021, №1, 40–58, Մովսիսյան. 2021, № 1, պր. Ա, 91–117:*

[14] *Ներսիսյան. 1982, 158–159:*

[15] Бурин. 1988, 4.

խելացի մարդու» ԱՄՆ-ի «հասարակապետության նոր նախագահ ընտրվելը»: «Մասյաց աղավնին» դա համարում է ժամանակի «նշանաւոր անցքերուն մէկը», քանի որ Ա. Լինքոլնը «գերեվաճառութեան ու գերի պահելու սովորութեան սաստիկ թշնամի ճանչցուած է»[16]: Ամսագիրը, գերիներ և գերեվաճառություն ասելով, նկատի ունի ստրկությունը, որի պատճառով ԱՄՆ-ն «մեծ կռուոյ մէջ են իրարու դէմ»:

«Մասյաց աղավնին» իրավացի է. քաղաքացիական պատերազմի նախորդած 50 տարիների ընթացքում ստրկության հարցը ԱՄՆ-ի պատմության շարժիչ ուժն էր: Հարց, որի չհանգուցալուծվելու դեպքում երկիրը կարող է լուրջ սպառնալիքների առաջ կանգնել: Նախքան քաղաքացիական պատերազմի սկսվելը, ամսագիրը համոզմունք է հայտնում, որ ԱՄՆ-ի հարավային նահանգները հետզհետե հյուսիսային նահանգներից բաժանվելու են և «այս ցաւալի երկպառակութեան պատճառը գերիներու ազատութիւն տալու դիտաւորութիւնն է, որ նորընտիր Լինքոլն գահերեց ունի»[17]: Իրականում հյուսիսի ու հարավի երկպառակության պատճառները շատ էին, խորը և անհաղթահարելի: Ստրկության հարցը շատ կարևոր էր և «անխուսափելի հակամարտության»[18] պատճառ դարձավ, թեև Ա. Լինքոլնի կառավարությունն ի սկզբանե կասկածի տակ չէր դնում ստրկության առկայությունը հարավային նահանգներում: Առավել կարևոր էին ֆինանսական, հարկային ու առևտրատնտեսական հարցերը, որոնք, հարավցիների համոզմամբ, «հյուսիսի յանկիները» իրականացնում էին ի վնաս հարավի շահերի: Դաշնային բյուջեի հարկային եկամուտների 80 տոկոսը բաժին էր ընկնում հարավին, որը հյուսիսի արդյունաբերական ապրանքների դխավոր սպառողն էր: Հարավը տարեկան արտահանում էր 213 մլն դոլարի արտադրանք, հիմնականում՝ բամբակ, իսկ հյուսիսը՝ ընդամենը 47 մլն դոլարի արտադրանք: Արտահանումը հարավի նավահանգիստներից իրականացնում էին միայն հյուսիսի նահանգներին պատկանող նավերով: Հարավի 3–4 հազար ստրկատեր ընտանիքներ բամբակի արտահանումից ստանում էին շահույթի 75 տոկոսը: Նրանք ահռելի հարստության տեր էին և չէին ցանկանում կորցնել իրենց տնտեսական շահավետ դիրքերը: Հյուսիսի ու հարավի տնտեսական հակասությունները սրվեցին հատկապես 1861 թ. մարտի 2-ի «Տարիֆների մասին» Ջասթին Մորրիլլի հեղինակած օրենքի ընդունումից հետո, որն արտահանվող ապրանքների վրա 1857 թ. մաքսային տուրքերն ավելացնում էր 47 տոկոսով: Այս օրենքը թշնամաբար ընդունվեց նույնիսկ Անգլիայում, որտեղ կողմնակից էին ազատ առևտրին[19]:

Հյուսիսի և հարավի նահանգների հակամարտության ու երկպառակության մյուս պատճառը քաղաքական իշխանության հարցն էր: Հարավի պլանտատորները 80 տարի շարունակ շահագործում էին դաշնային իշխանություններն իրենց շահադիտական նպատակների համար: Ա. Լինքոլնի նախագահ ընտրվելով՝ ակնհայտ դարձավ, որ նրանք իշխանությունը կորց-

[16] *«Մասյաց աղավնի» (Թեոդոսիա), 15. I. 1861, թիվ Բ, 23:*
[17] *«Մասյաց աղավնի», 15. I. 1861, թիվ Բ, 23:*
[18] *Տե՛ս* Бурин. 1988, 5; История США. 1983, 404.
[19] Иванян. 2008, 235; Иванов. 1960, 46–47.

րել են և պատրաստ չէին համակերպվել այդ իրողության հետ: Դա հավաստում էր նաև ժամանակի ամերիկյան մամուլը:

Անհերքելի իրողություն է, որ ԱՄՆ-ում «քաղաքացիական պատերազմից առաջ տեղի ունեցավ լիակատար բաժանում ժողովրդի մտքերում»[20]: Ամերիկացիները բաժանվեցին ստրկության կողմնակիցների և հակառակորդների, որոնց միջև անխուսափելի հակամարտությունը դարձավ միայն ժամանակի հարց:

«Մասյաց աղավնու» կարծիքով՝ հակամարտությունը հրահրում էին հարավային նահանգները, որոնք «արդէն չատոնց առիթ կփընտռէին հիւսիսային նահանգներէն զատուելու և ինքնագլուխ լինելու»[21]: ԱՄՆ-ի ուժն «այս երկպառակութեամբ չատ պիտի տկարանայ», եթե նախագահ Ա. Լինքոլնը «զօրաւոր դարման մը չգտնէ խռովութեանց»[22]: Ամսագիրն այնուհետև հայտնում է, որ ԱՄՆ-ի հարավային 7 նահանգները, 5 մլն բնակչությամբ, անջատվեցին հյուսիսային նահանգների հետ դաշնությունից և «նոր տէրութիւն մը ձևացան Ամերիկեան հարաւային Դաշնակցութիւն անունով»: Նրանք իրենց մայրաքաղաք են դարձրել Ալաբամա նահանգի Մոնթգոմերի քաղաքը, նախագահ ընտրել Ջեֆֆերսոն Դևիսին և նոր Սահմանադրություն ընդունել: Հյուսիսային նահանգների նախագահ Ա. Լինքոլնը, ով Վաշինգտոնում ստանձնել է իր պաշտոնը, ասում են, թե մտադրություն ունի «հաշտութիւն և միաբանութիւն ընելու հարաւային նահանգաց հետ»[23]:

«Մասյաց աղավնին» ներկայացնում է Ա. Լինքոլնի նախագահ ընտրվելուց հետո ԱՄՆ-ում ստեղծված վիճակը, որի փլուզման հիմքը 1860 թ. դեկտեմբերի 20-ին դրեց Հարավային Քարոլինա նահանգը՝ հայտարարելով ԱՄՆ-ի կազմից դուրս գալու մասին: 1861 թ. փետրվարի 8-ին խռովարար 7 նահանգները հայտարարեցին Համաձայնություն ստեղծելու մասին, ընդունեցին Սահմանադրություն և ձևավորեցին ժամանակավոր կառավարություն՝ Միսսիսիպի նահանգից նախկին սենատոր Ջեֆֆերսոն Դևիսի գլխավորությամբ: Համաձայնության Սահմանադրության համաձայն՝ ստրկությունը նոր պետության տնտեսական և քաղաքական կառուցվածքի հիմքն էր, որով նահանգները զրկվում էին Համաձայնությունից ազատ դուրս գալու իրավունքից[24]: «Մասյաց աղավնին» ճիշտ էր տեղեկացված 1861 թ. մարտի 4-ին ԱՄՆ նախագահի պարտականությունները պաշտոնապես ստանձնած Ա. Լինքոլնի հրապարակային առաջին ելույթի բովանդակության մասին: «Ես գտնում եմ, – հայտարարեց նա, – որ ... այս նահանգների միությունը հավերժ է... մենք չենք կարող բաժանվել»[25]: Նա հավաստիացրեց, որ իր կառավարությունը չի խախտելու ստրկության սկզբունքները և որևէ մտադրություն չունի ուղղակի կամ անուղղակի միջամտել ստրկության համակարգի գործունեությանն այն նահանգներում, որտեղ այն գո-

[20] Foner. 1980, 53.

[21] *«Մասյաց աղավնի», 01. III. 1861, թիվ Ե, 58:*

[22] *«Մասյաց աղավնի», 01. III. 1861, թիվ Ե, 58:*

[23] *«Մասյաց աղավնի», 01. IV. 1861, թիվ Է, 83:*

[24] *Տե՛ս* Родс. 2017, 10; История США. 1983, 406; Бурин. 1988, 7; Иванян. 2008, 225; Куропятник. 2009, 108; Иванов. 2002, 50–51.

[25] Родс. 2017, 5; Бурин. 1988, 8.

յութիւն ունի[26]: Կտրականապես մերժելով ստրկատիրական նահանգների անջատվելու իրավունքը՝ Ա. Լինքոլնը զգուշացրեց, որ իր կառավարությունը հարավցիների վրա չի հարձակվի, եթե նրանք հանդես չգան որպես ագրեսորներ[27]:

«Մասյաց աղավնին», չանդրադառնալով պատերազմի ընթացքին, գրում է, որ Ամերիկայում գրեթե երկու ամիս է, ինչ պատերազմ է սկսվել հյուսիսի և հարավի նահանգների միջև: Պարբերականի տեղեկություններով՝ «ամերիկացի համագգի եղբայրները անդթաբար կջարդեն մէկզմէկ իբրև անհաշտելի թշնամիք»[28]:

Անդրադառնալով 1861 թ. ամռանը հյուսիսի ու հարավի միջև սուր հակամարտությանը՝ «Մասյաց աղավնին» առանց կոնկրետ փաստեր վկայակոչելու գրում է, որ Ամերիկայի մեջ պատերազմը «օրէ օր սաստկանալու վրայ է, երկու կողմէն ալ յաղթեր ու յաղթուեր են մեկ երկու անգամ»[29]: Այս լրատվությունից մեկ ամիս անց ամսագիրը կրկին ընդգծում է, որ երկրում «համազգային պատերազմը մինչև ցայժմ դադրելու պէս չերևնար, ընդ հակառակն, օրէ օր աւելի կըորըոքի»[30]: Դրա վկայությունը պարբերականը համարում է Մանասաս քաղաքի մոտ մեծ կռիվը, որտեղ հյուսիսի զորքը պարտվել է: Ամսագիրը գրում է, որ շուտով կռիվ պիտի լինի նաև Պոտոմակ գետի մոտ: Մտավախություն կա, որ հարավի զորքերը շուտով կհարձակվեն մայրաքաղաք Վաշինգտոնի վրա: ԱՄՆ Կոնգրեսը որոշել է, և նախագահն էլ վավերացրել է այդ որոշումը, ըստ որի՝ հարավային նահանգներում ծառայության մեջ գտնվող ստրուկները, եթե անցնեն հյուսիսի կողմը, «իսկոյն ազատ համարուի: Այս բանով հավանական է որ վերջապէս յաղթութիւնը ձեռք ձգողները հիասայինք լինին»[31]:

«Մասյաց աղավնին», ուշադրությամբ հետևելով պատերազմի ընթացքին, այդ մասին առանձնապես մանրամասնություններ չի հայտնում, այլ փաստում է այն իրողությունը, որ ԱՄՆ-ի «քաղաքացիական պատերազմը քանի կերթայ աւելի կսաստկանայ»[32]: Ամսագիրը հյուսիսի ու հարավի միջև հակամարտությունն այդ իրաղարձությունների սկզբում ներկայացնում էր որպես համազգային պատերազմ, ապա ամիսներ անց ընթացող ռազմական գործողությունները իրավացիորեն գնահատում որպես քաղաքացիական պատերազմ: «Մասյաց աղավնին» միաժամանակ կռահում է, որ պատերազմը չի կրելու սոսկ ամերիկյան բնույթ և անհանգստացնելու է եվրոպական պետությունները, առաջին հերթին՝ Անգլիային: Պատերազմից ամերիկացիների երկպառակությունը ոչ միայն իրենց երկիրը պիտի թուլացնի, այլև «Անգլիային նույնպես մեծամեծ վնասներ պիտի լինեն ասկեց»[33], եթե նորընտիր նախագահ Ա. Լինքոլնը հարավի խռովությունը չկասեցնի: Պարբերականը

---

[26] *Տե՛ս* Куропятник. 2009, 111; Иванов. 1984, 123.

[27] История США. 1983, 408; Иванян. 2008, 230; Иванов. 1960, 42–43.

[28] *«Մասյաց աղավնի», 15. VI. 1861, թիվ ԺԲ, 144:*

[29] *«Մասյաց աղավնի», 01. VIII. 1861, թիվ Ժե, 180:*

[30] *«Մասյաց աղավնի», 01. IX. 1861, թիվ ԺԷ, 204:*

[31] *«Մասյաց աղավնի», 01. IX. 1861, թիվ ԺԷ, 204:*

[32] *«Մասյաց աղավնի», 01. X. 1861, թիվ ԺԹ, 223:*

[33] *«Մասյաց աղավնի», 01. III. 1861, թիվ ե, 58:*

համոզված է, որ ամերիկյան քաղաքացիական պատերազմը «եւրոպական տէրութեանց աչքը իւր վրայ կդարձնէ. մանաւանդ որ մեծ վնաս է այն Անգղիոյ, ուստի և բոլոր Եւրոպայի առուտուրին»[34]*:*

«Մասյաց աղավնին» կռահում է, որ ամերիկյան քաղաքացիական պատերազմը պետք է իր վրա հրավիրի եվրոպական պետությունների՝ հատկապես Անգլիայի ուշադրությունը: Ամսագիրը դա կապում է ամենից առաջ առևտրական խնդրի հետ՝ անտեսելով հարցի քաղաքական կողմը: Այդպես էին մտածում նաև հարավի ստրկատերերը, որոնք պատերազմ սկսելով՝ հույս ունեին Անգլիայի ու Ֆրանսիայի օգնությամբ հաղթանակ տանել: Հյուսիսի նկատմամբ հարավի առավելությունը փորձառու և համուտ զինվորական ղեկավար կադրեր ու մարտունակ բանակ ունենալն էր, որը զգացնել տվեց հատկապես պատերազմի սկզբում: Բայց արդյունաբերական հյուսիսը խոովարար հարավին գերազանցում էր՝ ունենալով բարձր տնտեսական զարգացման մակարդակ, ֆինանսներ, առավել փորձված վարչական կառավարում, ներքին երկաթուղային և ջրային հաղորդակցություն: Հյուսիսի 22 մլն բնակչությամբ 23 նահանգներին ղիմակայում էին հարավի 11 նահանգները՝ մոտ 13 մլն բնակչությամբ, որից 4 մլն սևամորթ ստրուկներ էին: Հյուսիսը կարող էր բանակ զորակոչել 2,9 մլն, իսկ հարավը՝ 1,9 մլն մարդ: Հյուսիսում էր կենտրոնացված գրեթե ողջ արդյունաբերությունը, բանկային կապիտալի չորս հինգերորդը, 31 հազար միլ երկաթուղային ճանապարհներից 22 հազար միլը[35]*: Չնայած դրան՝ հարավը պատերազմ սկսեց՝ վստահ լինելով՝ զենքի կկոչի մարտունակ ամբողջ սպիտակամորթ բնակչությանը և անպայման կստանա Անգլիայի աջակցությունը, որի տնտեսությունը չի կարող աշխատել առանց հարավի բամբակի: Համաշխության ղեկավարները կուրորեն հավատում էին «թագավոր բամբակի» ամենազոր ուժին:*

1861 թ. նոյեմբերի 8-ին անգլիական «Թրենթ» առևտրական նավի հետ կապված անգլո-ամերիկյան միջադեպ տեղի ունեցավ, որին անդրադառնում է «Մասյաց աղավնին»: Ամսագրի տեղեկություններով՝ Անգլիայի և ԱՄՆ-ի միջև «տարաձայնություններ են ծագել»: Նրանց «գժտության պատճառը» պարբերականը իրավացիորեն համարում է ամերիկյան «Սան Ջասինտո» ռազմանավի հրամանատարի կողմից Անթիլյան կղզիների մոտ անգլիական «Թրենթ» չոգենավում իրականացրած գործողությունը: Նավապետն անգլիացիներին մեղադրել է զինվորական մաքսանենգության մեջ և ձերբակալել Մեյսոն ու Սլիդել գործակալներին, ովքեր հարավի նահանգների կողմից նամակ էին տանում Անգլիա: Անգլիական իշխանություններն այս միջադեպից խիստ վրդովվել են և Վաշինգտոնում իրենց դեսպան Լայոնսին հանձնարարել ամերիկյան կողմից բացատրություն ստանալ տեղի ունեցածի կապակցությամբ, և պահանջել ամերիկացի նավապետի պաշտոնանկություն: Ամսագիրը հավանական չի համարում, որ ամերիկացիները և անգլիացիներն այս միջադեպի պատճառով կարող են պատերազմական գործողություններ սկսել՝ չնայած Անգլիան մեծ թվով նավեր է ուղարկել Կանադայի ափերը,

[34] *«Մասյաց աղավնի», 01. X. 1861, թիվ ԺԹ, 223:*

[35] Ф о с т е р. 1953, 381.

իսկ ամերիկացիներն ամրացնում են իրենց ծովափերը: Ի վերջո, ամերիկացիները զիջեցին և «խաղաղութիւն եղաւ»[36]:

«Մասյաց աղավնու» կարծիքով՝ այս հակամարտության հանգուցալուծումը փոխզիջում էր: Ամերիկացիները գնացին այդ քայլին, որովհետև իրենց ռազմանավերը զիջում են անգլիական ռազմանավերին: Բայց ամերիկացիները կարող են, ըստ ամսագրի, իրենց առևտրական նավերը համալրել 2–3 հազար հանդուգն ու կորիճ նավաստիներով և Ատլանտյան օվկիանոսում կամ Ասիայի ափերին ծովահենությամբ զբաղվել ու անգլիացիներին մեծ վնաս պատճառել: Մյուս կողմից՝ անգլիացիները հյուսիսից դժգոհ են և «սաստիկ ոխ ունեն» նրանց նկատմամբ, բայց, քանի որ կախված են ամերիկյան բամբակի ներկրումից, որի պատճառով իրենց ֆաբրիկանները կփակվեն ու վաճառականությունը կտուժի, կոնֆլիկտը խաղաղությամբ վերջացրեցին:

«Մասյաց աղավնու» կարծիքով՝ չնայած անգլո-ամերիկյան «գժտությունը դադարեց», բայց նրանց միջև «կատարեալ համաձայնութիւն լինելը շատ դժուար բան է»: Ամսագիրը մտավախություն է հայտնում, որ հակամարտության նոր պատճառներ կծագեն, եթե «երկու կողմեն խոհական մարդիկ անհոգութիւն ընեն»: Բայց առայժմ դա տեղի չի ունենում, իսկ անգլիացիները դժգոհում են՝ հյուսիսցիները շրջափակել են հարավի նավահանգիստները, որով իրենց առևտրին մեծ վնաս է պատճառվում[37]:

Ամսագիրը ճիշտ դատողություն է անում, որովհետև դեռ պատերազմի սկզբում Ա. Լինքոլնի հրամանով շրջափակվեցին հարավի նավահանգիստները՝ սկսած Հարավային Քարոլինայից մինչև Թեքսաս: Ավելի ուշ շրջափակման ենթարկվեցին նաև Հյուսիսային Քարոլինայի և Վիրջինիայի նավահանգիստները[38]:

«Մասյաց աղավնու» խմբագիրը կարևորում է Ռուսաստանի դիրքորոշումն ամերիկյան քաղաքացիական պատերազմի նկատմամբ, ցույց տալիս, որ ռուսաց կայսրը խնդրի խաղաղ կարգավորման կողմնակից է: Իր կարծիքը հիմնավորելու համար Ռուսաստանի նկատմամբ բարեհաճ վերաբերմունք ունեցող Գ. վրդ. Այվազովսկին տպագրում է Վաշինգտոնում ռուսաց դեսպան Է. Ստեկլին ուղղված արտգործնախարար Ա. Գորչակովի նամակից մի հատված: Նա գրում էր՝ ռուսաց կայսրը հավատում է, որ ԱՄՆ-ի «բնակիչները իրենց գործնական ողջամտությամբ չուտով կճանչեն իրենց ճշմարիտ օգուտն ու վնասը: Մեր ինքնակալը բարեբաղդ պիտի համարի ինքզինքը՝ թէ որ Ամերիկայի կառավարութեան անդամները և երկու կողմին ալ խօսքի տէր մարդիկը ամէն տեսակ հնարք բանեցընեն՝ գրգռուած կիրքերը հանդարտեցնելու և այս նպատակին դիւրաւ հասնելու համար: Աշխարհիս մէջ իրարու ներհակ այնպիսի չահեր չկան ամենևին որ կարելի չլինի զանոնք միաբանել՝ երբոր մարդիկ արտանց ու հաստատ կերպով հետամուտ լինին արդարութեան և չափավորութեան»[39]: Հավատի մեջբերելով Ա. Գորչակովի ճեպագիրը[40] Գ. վրդ. Այվազովսկին հաղորդագրութ-

[36] *«Մասյաց աղավնի», 01. II. 1861, թիվ Գ, 36:*
[37] *«Մասյաց աղավնի», 01. II. 1862, թիվ Գ, 36:*
[38] Иванян. 2008, 231; Бурин. 1988, 30–31.
[39] *«Մասյաց աղավնի», 01. X. 1861, թիվ ԺԹ, 223:*
[40] *Տե՛ս* Иванов. 1984, 76.

յան վերջին նախադասությունը ընդգծում է՝ նշելով, որ դիտմամբ է խոշոր տառերով գրել ռուսաց նախարարի «այս ճշմարիտ ու խորախորհուրդ խոսքերը»:

Անդրադառնալով պատերազմի հետագա ընթացքին՝ «Մասյաց աղավնին» գրում է, որ առաջվա պես ընթանում է անդիջում պայքար՝ առանց ամենևին թուլանալու կամ դադարելու, և «չատ դժուար է այժմէն գուշակելը թէ վերջապէս ում պիտի մնայ յաղթութիւնը»[41]: Ամսագիրը կարծիք է հայտնում, որ Մանասասի կռվից հետո հյուսիսցիները դժվարության առաջ են կանգնած, իսկ հարավցիներն այդ հաղթանակից հետո ավելի ուժեղ են զգում իրենց: Ամսագրի դիտարկմամբ՝ հյուսիսցիների խնդիրը գնալով դժվարանում է, որոնց վերջին անհաջողությունից հարավցիները ուժեղանում են: Ջորջ Մաք Քլելլանը զրկվել է հյուսիսի զորքերի հրամանատարությունից, ում փոխարինել է Էմբրոուզ Բերնսայդը: Նա թեև բավական անուն ուներ, բայց իր հրամանատարությունը սկսեց անհաջողությամբ: Ֆրեդերիկսբուրգում տեղի ունեցած առաջին ճակատամարտում նա «ահագին կորուստներ ունեցավ՝ 10 հազար սպանված ու վիրավոր: Այս լուրն ազատական Ամերիկան սիրողների «սիրտը տրտմեցուց», իսկ հարավի կողմնակիցներին մեծ ուրախություն պատճառեց: Հյուսիսցիները դժվարին կացության մեջ են հայտնվել, 20 հազար մարդ դասալիք է դարձել, իսկ հարավցիներն այդ հաջողությունից ոգևորված՝ այժմ համոզված են, որ «հաղթութիւնն իրենց ձեռքում է»[42]: «Մասյաց աղավնին» ճիշտ էր տեղեկացված. 1862 թ. օգոստոսի 28-ին նախ գեներալ Ջոն Փոուփը պարտություն կրեց Բալլ Ռուանի մոտ, իսկ դեկտեմբերի 13-ին գեներալ Է. Բերնսայդը Ֆրեդերիկսբուրգում ուղղակի ջախջախվեց[43]:

Ջանդրադառնալով 1862 թ. պատերազմական հետագա գործողություններին՝ «Մասյաց աղավնին» շարունակում է մնալ այն կարծիքին, որ քաղաքացիական պատերազմի պատճառը «գերիներու ազատութեան խնդիրն է»: Ամսագիրն ԱՄՆ-ն բաժանում է երկու մասի՝ հյուսիսային և հարավային: Հյուսիսային նահանգներում չկան ստրուկներ, իսկ հարավի նահանգներում ստրուկները շատ աշխատանքներ ու գործեր են անում: Ուստի «երկու կուսակցութիւն է ձևավորվել Ամերիկայում՝ եղծողականք և գերեվարք»: Ըստ պարբերականի՝ եղծողականները, ովքեր իրենց աբոլիցիոնիստ են անվանում, ցանկանում են՝ «գերի բանեցընելու սովորութիւնը վերացուի իրենց մէջէն»: Գերեվարները (ստրկատերերը) պահանջում են, որ «իրենց գերիներէն ունեցած շահը չխափանուի չդադարի»: Նրանք «զանազան իմաստութիւններով կ'ջանան ցուցընել թէ գերի բանեցընելը օրինաւոր և հարկաւոր բան է և հակառակ չէ քրիստոնեութեան և մարդկութեան»[44]:

«Մասյաց աղավնու» այս ու հետագա հրապարակումներից պարզվում է, որ ամսագիրը ստրկության կողմնակից չէ և չի ընդունում նրանց աշխատանքի շահագործումը: Կարելի է ասել, որ պարբերականի համակրանքը հյուսիսի ու հարավի հակամարտությունում հյուսիսցիների կողմն է: Ամ-

---

[41] *«Մասյաց աղավնի», 01. II. 1862, թիվ Գ, 36:*
[42] *«Մասյաց աղավնի», 15. I. 1862, թիվ Բ, 27–28:*
[43] *Տե՛ս* Куропятник. 2009, 152; Бурин. 1988, 49–56.
[44] *«Մասյաց աղավնի», 01. XII. 1861, թիվ ԻԳ, 271:*

սագրի կարծիքով՝ ամերիկյան պատերազմի պատճառն այնպիսի հայտնի խնդիր է, որ «արդարութիւն ճանչցող ու սիրող մարդը դիւրաւ կրնայ գուշակել թէ երկու կողմին որը պիտի յաջողութիւն գտնէ»: Հյուսիսում ցանկանում են՝ ստրուկ դնելն ու վաճառելը վերանա, իսկ հարավցիները դեմ են, որ այս «չահաբեր գործողութենէն զիրենք ետ քաշելու ոչ ոք իրաւունք չունի: Որչափ որ յայտնի է առաջիններուն իրաւունքը, նոյնչափ պայծառ կտեսնուի նաև հարաւայիններուն անիրաւութիւնը»[45], – եզրակացնում է ամսագիրը: «Մասյաց աղավնին» սրանով հստակ դիրքորոշում է արտահայտում ստրկության վերաբերյալ՝ հարավցիների կողմից դրա կիրառումը համարելով «անիրավություն»:

Ամսագրի իրավացի դիտարկմամբ՝ պատերազմում հաջողության հասնելու գործում հարավցիներն իրենց հույսը դրել են Անգլիայի ու Ֆրանսիայի վրա, իբր թե նրանք իրենց պիտի պաշտպանեն ու ստիպեն հյուսիսցիներին համաձայնվել հարավցիների անջատմանը, որպեսզի նրանք «ինչպես որ կուզենէ այնպէս կառաւարուին»: Եթե խնդիրը մնա ֆրանսիական և անգլիական վաճառականներին, դատողություններ է անում ամսագիրը, ապա նրանք, թերևս, այդպես էլ պետք է վարվեն, որպեսզի իրենց բամբակի ֆաբրիկաներն աշխատեն, ու հարավի բամբակն անպակաս Եվրոպա առաքվի: Բայց, որովհետև «բաժանասիրաց կամքին կատարուելովը՝ մարդավաճառութեան գարշելի սովորութիւնն ալ պիտի յաւիտեան հաստատուէր Ամերիկայի մէջ. և Եվրոպայի լուսաւորեալ տէրութիւնները չէին կրնար այս բանիս հաւանիլ, հիւսիսայինները քանի գնացին զօրացան, հարաւայինները չատ տեղ յաղթուեցան, և կերևնայ թէ քիչ ատենէն բոլորովին պիտի նուաճուին»[46]:

«Մասյաց աղավնին» ճիշտ է կռահում հարավի ստրկատերերի պլանները, ովքեր մտադիր էին հասնել Անգլիայի ու Ֆրանսիայի կողմից Համադաշնության ճանաչմանը: Նրանք հույս ունեին, որ Անգլիան, ելնելով իր առևտրատնտեսական շահերից, զավթախուժում կիրականացնի հյուսիսամերիկյան նահանգներում և հենց այդ նպատակով է զորք ուղարկել Կանադա: Հարավցիների հույսերը չարդարացան նաև դաշնային կառավարության կողմից բամբակի արտահանման արգելքի հարցում, որը, նրանց կարծիքով, կարող էր մոգական հետևանքներ ունենալ անգլիական և ֆրանսիական արդյունաբերության համար: Բայց չուտով ակնհայտ դարձավ, որ փողի կրիք զգացող ստրկատերերն իրենք սկսեցին բամբակ արտահանել՝ փորձելով ճեղքել հարավային նավահանգիստների շրջափակումը: Բացի այդ, 1861 թ. սովը եվրոպացիներին ստիպեց ավելի շատ մտահոգվել հացահատիկի ներկրման մասին, որն իրենց մատակարարում էր արդյունաբերական հյուսիսը, քան թե՝ բամբակի:

Սրանք էին հարավի առաջարկությունների մերժման իրական պատճառները, որոնք «Մասյաց աղավնին» չի ընկալում կամ տեղեկատվության պակասի պատճառով ճիշտ չի պատկերացնում: Ամսագրի համար ստրկության խնդիրն այն առանցքն էր, որի շուրջը պտտվում էին քաղաքացիական

[45] *«Մասյաց աղավնի», 15. IV. 1862, թիվ Ը, 94:*
[46] *«Մասյաց աղավնի», 15. IV. 1862, թիվ Ը, 94:*

պատերազմի դվխավոր իրադարձությունները: Այս մտայնությունից ելնելով՝ պարբերականը հարավցիներին չսատարելու «եվրոպական լուսավորյալ պետությունների» դիրքորոշումը բացատրում է հարավում «մարդավաճառության գարշելի սովորույթով»:

Հետագա հրապարակումներում «Մասյաց աղավնին» այլ տեսանկյունից է ներկայացնում քաղաքացիական պատերազմի դրդապատճառները: Ամսագիրը հղում է անում քաղաքագետներից մեկին, ըստ որի, երբ որևէ երկրում քաղաքացիական պատերազմ է սկսվում, այնտեղ «իզուր կփնտռես իրաւանց ոյժը վասնզի հոն տիրապետողը նիւթական ոյժն ու բռնութիւնն է»[47]: Համաձայնվելով այս մտքին՝ ամսագիրը հռետորական հարց է տալիս. միթե՞ իրավունք կարելի է փնտրել մի կռվում, որտեղ «երկու կողմից կռվողներն են միանգամայն իրարու դեմ և բողոքիչ և դատավոր և դահիճ»[48]: Այս տեսանկյունից նայելով ամերիկյան քաղաքացիական պատերազմին՝ «Մասյաց աղավնին» եզրակացնում է՝ այսպիսի խղճուկ վիճակում են արդեն երկու տարի Հյուսիսային Ամերիկայի բնակիչները, ովքեր մի քանի տարի առաջ «նախանձելի օրինակ էին միաբանութեան և ամէն տեսակ յառաջադիմութեան»[49]:

Գ. վրդ. Այվազովսկին «ազգային ուժերի համախմբման ջերմ կողմնակից էր»[50] և այս տեսանկյունից դիտարկելով հյուսիսի ու հարավի անհաշտ պայքարը՝ ափսոսանք է հայտնում ԱՄՆ-ի ազգային և քաղաքական պառակտման համար: Ելնելով այս իրողությունից՝ նա ԱՄՆ-ն չի համարում համախմբված, միասնական և ամբողջական պետություն, այլ պառակտված, միմյանց դեմ պատերազմող հյուսիս ու հարավ, որոնք դաժանաբար կործանում են միմյանց: ԱՄՆ-ի երբեմնի մեծությունն ու հզորությունն իր ընթերցողներին ներկայացնելու համար ամսագիրը բավական ընդարձակ հոդված է նվիրում Նյու Յորք «հոյակապ քաղաքին»՝ այն համարելով համայն «Ամերիկայի գլխաւոր քաղաքը՝ հաւասար Եւրոպայի մեծամեծ մայրաքաղաքաց»: Ամերիկայի «ամենէն վաճառաշահ ու ամենէն բազմամարդ» քաղաքի օրինակով պարբերականը եզրակացնում է. «... որքան դժուարին բան է աշխարհք մը չինելն ու պայծառացընելը՝ միաբանութեամբ ու խաղաղութեամբ, և որչափ դիւրին՝ զայն քանդելն ու հիմնայատակ կործանելը եթէ երկպառակութիւնն ու խռովութիւնը տիրապետէ անոր մէջ»[51]:

Երկպառակված Ամերիկայի մասին իր միտքը հիմնավորելու նպատակով «Մասյաց աղավնու» խմբագիրը վկայակոչում է Ֆրանսիական նշանավոր դրող, դիվանագետ, ռոմանտիզմի հիմնադիրներից Ֆրանսուա Շատոբրիանին: «Մասյաց աղավնին» Ֆրանսերենից թարգմանաբար ներկայացնում է նրա «Անդրաղամբան հիշատակ» գրքից մի հատված, որտեղ նա դատողություններ էր անում, թե արդյոք «նահանգները իրարմէ պիտի չբաժանուի՞ն ..., մթէ հիւսիսային և հարաւային նահանգները հակառակ չեն իրարու, թէ իրենց հոգւովը և թէ իրենց շահերովը»: Ֆր. Շատոբրիանը հե-

[47] «Մասյաց աղավնի», 01. XI. 1862, թիվ ԻԱ, 251:
[48] «Մասյաց աղավնի», 01. XI. 1862, թիվ ԻԱ, 251:
[49] «Մասյաց աղավնի», 01. XI. 1862, թիվ ԻԱ, 251:
[50] Կ ա ր ի ն յ ա ն. 1960, 389:
[51] «Մասյաց աղավնի», 15. XI. 1862, թիվ ԻԲ, 260:

տորական հարցադրում էր անում այն մասին, թե «ի՞նչպէս պիտի կարենայ դիմանալ» ԱՄՆ-ը, «եթե հանկարծ պատերազմ բացուի իրեն վրայ»[52]: Ամսագիրը փաստում է, որ նրա՝ 40 տարի առաջ կատարած կանխատեսումը իրականություն է դարձել:

Ամերիկյան քաղաքացիական պատերազմը լուսաբանելիս «Մասյաց աղավնին» հետևողականորեն պաշտպանում և առաջ է տանում այն միտքը, որ պատերազմի գլխավոր պատճառը ստրկության խնդիրն է: Ամսագիրը դրան այնքան մեծ տեղ է տալիս և կարևորում, որ «Ամերիկայի սև գերիներն ու նոցա հայրենիքը՝ Լիպերիա» վերնագրով հոդվածում հանգամանորեն ներկայացնում է Ամերիկայում ստրկության ծագման պատմությունը[53]: Բայց, զարմանալիորեն, ամսագիրը չի անդրադառնում քաղաքացիական պատերազմի ընթացքում բեկում մտցրած երկու կարևոր հարցի՝ հոմսթեդների մասին օրենքին և ստրկության վերացմանը: 1862 թ. մայիսին ամերիկյան կոնգրեսն ընդունեց օրենք, որով հյուսիսի բանակին անդամագրված յուրաքանչյուր քաղաքացի կարող էր պատերազմի ավարտից հետո ոչ մեծ գումար վճարելով՝ 160 ակր (65 հա) հող ձեռք բերել ԱՄՆ արևմտյան հողերում: Դա հզոր հարված էր հարավի ստրկատերերին, որոնք չէին կարող այստեղ հողի տեր դառնալ: 1862 թ. սեպտեմբերի 22-ին նախագահ Ա. Լինքոլնի հրամանագրով, եթե մինչև 1863 թ. հունվարի 1-ը խռովարար նահանգները չէին վերադառնում դաշնային պետության կազմ, ապա նրանց տարածքում ապրող բոլոր ստրուկները հայտարարվում էին «հավերժ ազատ»: 1863 թ. հունվարի հրամանագրով ստրկությունը հայտարարվում էր վերացված բոլոր նահանգներում[54]:

«Մասյաց աղավնին» պատերազմի երկրորդ փուլի մասին

Շարունակելով ստրկության վերացման կարևորագույն հարցը՝ «Մասյաց աղավնին» չարունակում է կենտրոնանալ ամերիկացիների պառակտման հարցի վրա, որը համարում է նրանց դժբախտության պատճառը: Ամսագիրը հայ պարբերական մամուլի պատմության մեջ այն եզակիներից է, որը, ամերիկյան քաղաքացիական պատերազմը լուսաբանելիս ընդգծելով հյուսիսի ու հարավի միջև «ներքին երկպառակությեանց մեծ վնասը» ամերիկյան ժողովրդի համար, միաժամանակ հայությանը հորդորում էր դասեր քաղել ամերիկացիների «եղբայրասպան պատերազմից» և լինել միասնական ու համախմբված, չցրաղվել ներքին վեճերով և աննպատակ կռիվներով: Ազգային միաբանությունը, համախմբվածությունը և միասնականությունը Գ. վրդ. Այվազովսկու գաղափարական համոզմունքն էր:

«Մասյաց աղավնու» կարծիքով՝ մինչև քաղաքացիական պատերազմը ԱՄՆ-ն ազգային միասնության և համերաշխության «մեծ խրատական օրինակ» էին: Բայց «իրենց գեղեցիկ անուանը բոլորովին ներհակ անմիաբանությամբ այս երկու տարի է բոլոր աշխարհս կսարսափեցնեն իրենց եղբայ-

[52] *«Մասյաց աղավնի», 01. IV. 1863, թիվ 7, 107:*

[53] *«Մասյաց աղավնի», 01. XII. 1861, թիվ Ի Գ, 271–280:*

[54] *Տե՛ս* История США. 1983, 420–422; Иванян. 2008, 442–443; Иванов. 1960, 110; Куропятник. 2009, 188; Бурин. 1988, 47; Иванов. 1984, 168.

բասյան ահաւոր պատերազմովը»[55]: Ամսագիրը հանդիմանում է հյուսիսին ու հարավին երկպառակութեան, եղբայրասպան պատերազմ մղելու, փոխզիջումների չգնալու և հաշտութեան եղրեր չփնտրելու համար: Պարբերականն այն կարծիքին է, որ ամերիկացիների փոխարեն հաշտութեան հարցով ավելի շատ մտահոգված են եվրոպական երկրները: «Մասյաց աղավնին» մամուլից տեղեկացված էր, որ եվրոպական երեք մեծ տերութիւնները միմյանց հետ բանակցում են, որպեսզի միջնորդեն հաշտութիւն կնքել «այն երկպառակտեալ աշխարհին»: Ամսագիրը հույս է հայտնում, որ Անգլիան, Ֆրանսիան և Ռուսաստանը կարող են ելք գտնել ու այնպիսի հաշտութեան առաջարկութիւն անել, որը «իրենց պատվոյն և չահուն օգտաւէտ լինի ... և թէ երկպառակ ազգին ընդունելի և պտղաւէտ»[56]:

«Մասյաց աղավնին» իրավացի է այնքանով, որ Անգլիան ու Ֆրանսիան, միջամտելով ամերիկյան գործերին, առաջին հերթին առաջնորդվում էին իրենց տնտեսական և քաղաքական չահերով: Երբ Անգլիայում հայտնի դարձավ ԱՄՆ-ում ստրկութիւնը վերացնելու Ա. Լինքոլնի որոշումը, ստրկատիրական հարավի ճանաչման խնդիրը կառավարութիւնն իր օրակարգից հանեց: Հակառակ անգլիական կաբինետի որոշման՝ Ֆրանսիան հարավի օգտին հանդես գալու նոր փորձ արեց:

Պատերազմում հաշտութիւն կնքելու կողմնակից «Մասյաց աղավնին» 1863 թ. ամռանը հրապարակումներից մեկում ափսոսանք է հայտնում, որ ԱՄՆ-ի «գեղեցիկ անունը» կրող երկրում «բոլորովին ներհակ անմխաբանութեամբ այս երկու տարի է բոլոր աշխարհիս կսարսափեցնեն իրենց եղբայրասպան ահաւոր պատերազմովը»[57]: Ամսագիրը միաժամանակ պատերազմին վերջ տալու լավագույն միջոցը համարում է հյուսիսի հաղթանակը, որը հնարավորութիւն կտա պահպանել ԱՄՆ-ի ամբողջականութիւնը:

1863 թ. պատերազմական գործողութիւններին ուշադրութեամբ հետևող «Մասյաց աղավնին» կարծիք է հայտնում՝ հյուսիսի հաղթանակներով Ամերիկայի խնդիրը մեծ առաջադիմութիւն ունեցավ, սակայն «մեծ դժբաղտութեամբ», որն ամսագիրը համարում է 1863 թ. մայիսի 27-ին Լուիզիանա նահանգում՝ Պորտ Հաղսոնի մոտ, հյուսիսի զորքերի հրամանատարներից գեներալ Ջ. Միդի և հարավի զորքերի հրամանատար Ռ. Լիի «սաստիկ դիմակալութեամբ» մարտը և երկուստեք կրած 50 հազար մարդկային կորուստները: Պարբերականի կարծիքով՝ «այս սարսափելի կոտորածը» հյուսիսի օգտին էր, որովհետև Ջ. Միդը մտավ քաղաք, ապա հետապնդեց հակառակորդին, բայց չկարողացավ Պոտոմակ գետն անցնել սաստիկ վարարման պատճառով: Այլապես նա էնտիետեմի հովտում կջախջախեր նահանջող հարավի զորքին: Եթե գեներալ Ռ. Լին առաջիկայում հաղթանակ չտանի հյուսիսի նկատմամբ, եզրակացնում է «Մասյաց աղավնին», ապա հարավի մայրաքաղաք Ռիչմոնդը մեծ վտանգի մեջ կհայտնվի:

Ամսագիրը հավաստի է ներկայացնում Պորտ Հաղսոնի արյունահեղ մարտը, որին առաջին անգամ՝ ազատութիւն ստանալուց հետո, մասնակցեց սևամորթների երեք գունդ: Նրանց գրեթե բոլոր սպաների ու զինվորնե-

[55] *«Մասյաց աղավնի», 15. VII. 1863, թիվ 13, 221:*
[56] *«Մասյաց աղավնի», 01. XI. 1862, թիվ ԻԱ, 251:*
[57] *«Մասյաց աղավնի», 15. VII. 1863, թիվ 14, 221:*

րի երկու երրորդը սպանվեցին կամ վիրավորվեցին: Սևամորթ զինվորներն աչքի ընկան նաև 1863 թ. հունիսի 6-ին Միլլիկենտ Բենդի կռվում: Շուրջ 250 հազար սևամորթներ անդամագրվեցին հյուսիսի բանակին՝ ճևավորելով 166 գունդ:

1863 թ. հուլիսի 4-ին հարավի զորքերը Վիքսբերգ քաղաքի մոտ, որը «Մասյաց աղավնու» բնութագրմամբ՝ Միսսիսիպի գետի բանալին է և բամբակ արտահանողը, երկար դիմադրությունից հետո անճնատուր եղան հյուսիսի գեներալներից Ու. Գրանտին: Ըստ ամսագրի՝ դա կարող է ծանր հետևանքներ ունենալ Միսսիսիպիի արևելյան կողմի մյուս քաղաքների համար, հաղորդակցությունը կկտրվի Թեքսասի, Արքանզասի, Նոր Օռլեանի և Միսսուրիի հետ[58]: Ամսագիրն իրավացի է՝ Վիքսբերգի անկումը ռազմավարական խոշոր հաջողություն էր, որը հնարավորություն տվեց վերահսկել երկրի գլխավոր ջրային ուղին՝ Միսսիսիպի գետը և հարավի տարածքը բաժանել միմյանցից կտրված երկու մասի: Հարավը զրկվեց արևմտյան տարածքների մարդկային ու նյութական ռեսուրսներից և չուտով կորցրեց Նոր Օռլեանը: Այնուհետև մի քանի կռիվներում, մեծ կորուստների գնով Ու. Գրանտն արյունաքամ արեց հարավի բանակին՝ սկիզբ դնելով համաղաշնության զինված ուժերի վերջնական ջախջախմանը[59]:

«Մասյաց աղավնին» հյուսիսի բանակների հաղթանակներն առանձնապես չի կարևորում և շարունակում է մնալ սկզբունքային այն դիրքում, որ դա եղբայրասպան պատերազմ է: «Ցավալին այն է, – գրում է ամսագիրը, – որ եղբայրն եղբոր դէմ ելած, եղբայր զեղբայրն կսպաննեն»: Այս կռվում «յաղթողը ըստ ինքնեան յաղթուածիւնը օտարին վրայ չէ»[60]: Ամսագիրը տեղեկացնում է, որ, ըստ ստացված հեռագրական լուրերի, Համադաշնության փոխնախագահը խնդրել է Ա. Լինքոլնին իրեն հնարավորություն տալ մեկնել Վաշինգտոն և նրա հետ քննարկել մի շարք կարևոր հարցեր: Ըստ պարբերականի՝ այս լուրը վկայում է, որ հարավցիները մեծ նեղության մեջ են և «կփափագին պատուաւոր պայմաններով վերջ տալ պատերազմին, քանի որ բոլորովին չեն ընկճուած»[61]: Իրականում Համադաշնության նախագահ Ջ. Դևիսը 1863 թ. կեսերին փոխնախագահ Ալեքսանդր Սթիֆենսին ուղարկեց Վաշինգտոն, որպեսզի քննարկի գերիների փոխանակության հարցը: Բայց Գետտիսբերգի հաղթանակից հետո Ա. Լինքոլնը հրաժարվեց նրան ընդունել[62]:

Ըստ «Մասյաց աղավնու»՝ ԱՄՆ-ից ստացված մի լուր ապշեցրել է բոլորին: Հարավի նախագահ Ջ. Դևիսը կես միլիոն ստրուկների ազատություն է շնորհել, որպեսզի նրանք իր դրոշի տակ հավաքվեն ու պաշտպանեն իր իշխանությունը: «Այս լուրն անկարելի պետք է համարել», եթե չիմանայինք՝ ինչ աստիճանի նեղության մեջ են հարավցիները և որքան շատ

[58] *«Մասյաց աղավնի», 15. VI. 1863, թիվ 12, 188:*

[59] *Տե՛ս* История США. 1983, 441–443; Иванян. 2008, 245; Иванов. 1960, 114; Маль. 2002, 192–196; Куропятник. 2009, 305–306; Бурин. 1988, 67–71, 86–88.

[60] *«Մասյաց աղավնի», 15. VIII. 1863, թիվ 16, 253:*

[61] *«Մասյաց աղավնի», 15. VII. 1863, թիվ 14, 188:*

[62] История дипломатии. 2009, 512.

զինվորի կարիք ունեն: Ով կարող է հավատալ, գրում է ամսագիրը, որ երկու տարի առաջ ապստամբությունն սկսվեց «այն վախճանաւ որ գերեվարութիւնը մշտենջենաւոր է Ամերկոյ մէջ, այսօրուան օրս այն կէտին հասած ըլլայ, որ նոյն իսկ գերիներուն դեմ է որ զինքը պաշտպանեն»[63]:

«Մասյաց աղավնու» տեղեկությունը հավաստի չէ. հարավի սևամորթները Ջ. Դևիսի հրամանագրով ազատություն չստացան: Փոխնախագահ Ա. Ստիֆենսը հանուն հարավի հաղթանակի առաջարկեց հյուսիսի օրինակով վերացնել ստրկությունը Համադաշնությունում, բայց Ռիչմոնդում կայացած Համադաշնության վեհաժողովը չհամարձակվեց գնալ այդ քայլին[64]:

«Մասյաց աղավնուն» հետաքրքրում է այն հարցը, թե ի՞նչ տեղի կունենա հարավում, եթե կես միլիոն «երիտասարդ կտրիճ գերիներին» ազատություն չնորհեն: Այդ դեպքում, հարցնում է ամսագիրը՝ ո՞վ է մնալու հարավի պլանտացիաներում աշխատելու, եթե ոչ ծեր, հիվանդ ստրուկները կամ նրանց երեխաներն ու կանայք: Այս մարդկանցից ի՞նչ օգուտ կա պլանտատորներին: «Տեսէք ուրեմն թէ ինչ հակասութեան մէջ կգտուին այժմ հարավացիք»[65], – եզրակացնում է ամսագիրը:

Վերլուծելով 1863 թ. սկզբներին հարավի Համադաշնությունում ստեղծված վիճակը՝ «Մասյաց աղավնին» փաստում է, որ նախագահ Ջ. Դևիսի իշխանությունը շատ տեղերում նվազել է, քանի որ Վիրջինիայի նահանգի մեկ երրորդից Քենթուքիի, Միսսուրիի, Արքանզասի, Թեննեսիի, Լուիզիանայի և Թեքսաս նահանգների կեսից հարավի զորքերը հալածվել ու դուրս են մղվել հյուսիսի կողմից: Ամսագրի կարծիքով՝ Վիքսբերգի և Պորտ Հադսոնի գրավումով հյուսիսը Միսսիսիպին տիրեց, որից հետո, անշուշտ, պիտի ձգտի գրավել նաև Արքանզասը, Լուիզիանան, Թեքսասն ու Թեննեսին: Թվական տվյալներ բերելով այն մասին, թե Համադաշնությունը Վիրջինիա, Հյուսիսային և Հարավային Քարոլինա, Ալաբամա, Ֆլորիդա ու Ջորջիա նահանգների տարածքի որ մասն է վերահսկում՝ «Մասյաց աղավնին» նշում է՝ հարավցիներն իրենց տրամադրության տակ ունեցած 244 հազար քառ. մղոնից մեկ քառորդը չեն վերահսկում և կորցրել են: Եթե այսպես շարունակվի, եզրակացնում է ամսագիրը, ապա 1864 թ. ապստամբները կարող են վերահսկել իրենց տարածքի միայն մեկ ութերորդը: Վերջին ամիսներին հարավը կորցրել է 97 հազար զինվոր, որից 45 հազարը՝ գեներալ Ռ. Լիի վերջին պարտության ժամանակ: Այժմ հարավն ունի 150 հազար զինվոր Միսսիսիպի արևելյան կողմում և 60 հազար՝ գետի հակառակ ափին: Հյուսիսին այն աստիճան տկարացրել է՝ հարավցիներին, որ «չատ չանցնի վերջապես պիտի ընկճեն և խեղդեն ապստամբութիւնը»[66]: Ամսագիրը միաժամանակ փաստում է, որ մարդկային և ֆինանսական լուրջ կորուստներ է ունեցել նաև հյուսիսը, ինչը շատ ցավալի է: Բայց ամենից ցավալին այն է, որ ամերիկացիները «մարդասպան պատերազմ են վարում միմյանց դեմ»: Ամփոփելով 1863 թ. քաղաքական տարվա արդյունքները՝

---

[63] *«Մասյաց աղավնի», 15. IX. 1863, թիվ 18, 283:*

[64] История дипломатии. 2009, 512.

[65] *«Մասյաց աղավնի», 15. IX. 1863, թիվ 18, 284:*

[66] *«Մասյաց աղավնի», 15. VIII. 1863, թիվ 16, 253:*

ամսագիրը հռետորական հարց է տալիս, թե ամերիկացիների հույսը ի՞նչի վրա է, որ երեք տարի շարունակ սարսափելի արյունահեղությամբ իրենց երկիրն ոտնակոխ են անում ու թշվառացնում: Մեզ հայտնի չէ՝ ամերիկացիների հույսը, գրում է ամսագիրը, առավել ևս հայտնի չէ՝ այդ հույսը բարի է, թե՝ ոչ: «Ուստի,– եզրակացնում է պարբերականը, – կթողումք որ իրենք նախ հասկընան իրենց ներկայ և ապագայ վիճակը: Եթէ ըսեն որ «Արասցուք գչար՝ զի եկեսցէ բարի», վախիմ թէ անյոյս կորսուին ու փճանան. – ափսոս այն մեծ ազգին»[67]:

1864 թ. հուլիսի 18-ին Ա. Լինքոլնը հայտարարեց, որ պատրաստ է «ԱՄՆ կառավարությունում ընդունել և քննարկել ցանկացած առաջարկություն Դաշնային Միության վերականգման ու ստրկության վերացման պայմանով»[68]*: Նախագահի այս հայտարարությունը մեծապես նպաստեց, որ նրա շուրջը համախմբվեն հարավին ռազմական ճանապարհով հաղթելու և ստրկությունը վերացնելու կողմնակիցները: Դա շատ կարևոր էր նախագահական մոտեցող ընտրությունների չեմին նախընտրական քարոզչություն իրականացնող Ա. Լինքոլնի համար: 1864 թ. հունիսի 7-ին Հանրապետական կուսակցության համագումարը նախագահի թեկնածու առաջադրեց Ա. Լինքոլնին: Նույն թվականի նոյեմբերի 8-ին կայացած նախագահական ընտրություններում Ա. Լինքոլնը հաղթանակ տարավ Դեմոկրատական կուսակցության թեկնածու, իր կողմից պաշտոնանկ արված գեներալ Ջ. Մաք Քլելլանի նկատմամբ*[69]*: Ա. Լինքոլնի հաղթանակին իրազեկ Գ. վրդ. Այվազովսկին այն կարծիքին է, որ նրա նախագահության ժամանակը լրանալու կապակցությամբ ԱՄՆ-ի «գլխաւորները ուզեցին, որպեսզի Ամերիկայի պատերազմը պատուավոր կերպով մը վերջացնեն»*[70]*: Ա. Լինքոլնի հաղթանակը Գ. վրդ. Այվազովսկին համարում է «ահագին առավելութեամբ քվեներով»*[71] *և կարծիք հայտնում, որ նրա նախագահ ընտրվելուց հետո երկրում խաղաղություն չհաստատվեց և «պատերազմը ավելի սաստկութեամբ առաջ տարուեցաւ»*[72]*:*

1865 թ. հունվարից «Մասյաց աղավնին», Գ. վրդ. Այվազովսկու խմբագրությամբ, սկսեց լույս տեսնել «Միածան» վերնագրով, որը թեմական, բարոյական, բանասիրական, ուսումնական և քաղաքական տեղեկություններ տպագրող ամսագիր էր: Լույս տեսավ ամսագրի ընդամենը ութ համար, որը, ըստ էության, վերածվեց առաջնորդարանի օրգանի՝ «թեմական տեղեկություններ» ծավալուն բաժնով: Նոր պարբերականում Գ. վրդ. Այվազովսկին միայն երկու անգամ է անդրադառնում ամերիկյան քաղաքացիական պատերազմին: Առաջին հրապարակման մեջ նա, շարունակելով «Մասյաց աղավնու» ուղեգիծը, հույս է հայտնում, որ «Ամերիկայի եղբայրասպան պատերազմը պիտի դադրի ու հաշտութիւն պիտի լինի երկու կողմէն

---

[67] *«Մասյաց աղավնի», 01. I. 1864, թիվ 1, 19:*

[68] История США. 1983, 444.

[69] *Տե՛ս* История США. 1983, 445; Иванов. 1960, 163; Иванян. 2008, 247; Бурин. 1988, 95.

[70] *«Միածան» (Թեոդոսիա), 1865, ապրիլ, թիվ 4, 94:*

[71] *«Միածան», 1865, հունիս, թիվ 6, 138:*

[72] *«Միածան», 1865, ապրիլ, թիվ 4, 94:*

չափաւոր պայմաններով», բայց չուտով այդ հույսը կորավ և «պատերազմը առաջ գնաց կատաղաբար»[73]: 1865 թ. ապրիլին «Միածանը» գրում է. «Օրերս խաղաղութեան և հաչտութեան ցանկալի նշոյլը սկսեր է երևնալ: Կռիվ սկսիլը չատ դիւրին է, հաչտութիւնը չատ դժուար»[74]:

Ամսագրի տեղեկություններով՝ 1865 թ. ապրիլի 3-ին գեներալ Ու. Գրանտը գրավել է Համադաշնության մայրաքաղաք Ռիչմոնդը, իսկ հարավի բանակի գլխավոր հրամանատար Ռ. Լին անձնատուր է եղել: Դրանից հինգ օր չանցած՝ «Միացեալ Նահանգաց մեծ հասարակապետութեան գահերէցն Աբրահամ Լինքոլն չարաչար մահուամբ սպանուեց» և բոլոր ամերիկացիները՝ անգամ նրա թշնամիները, մեծ տրտմութեան մեջ ընկան[75]: Հավաստի ներկայացնելով հարավի անձնատուր լինելը և թատրոնում դերասան Ջոն Բուտսի կողմից Ա. Լինքոլնի սպանությունը[76] ամսագիրը քաղաքացիական պատերազմի ավարտին չի անդրադառնում:

«Միածանն» Ա. Լինքոլնի մահը համարում է 1865 թ. «նշանաւոր դէպքերից մեկը»: Ըստ ամսագրի՝ ամեն մարդ հույսով սպասում էր, որ ամերիկյան քաղաքացիական պատերազմը կավարտվի և «բյուրավոր անմեղ արյունների հոսքը դադարի»: Բայց տեղի ունեցավ անսպասելին. նախագահ Ա. Լինքոլնը դավադրաբար սպանվեց, «ուստի պատերազմը դադարելու տեղը ևս առաւել սաստկացաւ»[77]: Ամսագիրը հարկ չի համարում անդրադառնալ Ա. Լինքոլնի սպանության «ցաւալի դէպքի մանր պարագաներին», որոնք «այնքան խրատ առնելու բաներ չեն, որքան նոյն գահերեցուն վարքն ու կենսագրութիւնը»: Այս անգամ ավելի մանրամասն ներկայացնելով նախագահ Ա. Լինքոլնի անցած ուղին՝ «Միածանը» կարևորում է այն իրողությունը՝ հասարակ ծագումով մարդը, ով երկրագործի որդի էր, փայտահատ, հյուսն ու բեռնակիր, «եղաւ աշխարհիս մեծամեծ ազգերէն մեկուն գլուխը»:

«Միածանի» խմբագիրն ԱՄՆ-ում խաղաղություն և բարեկեցություն հաստատելու հարցում հույսեր է կապում Ա. Լինքոլնին երկրի նախագահի պաշտոնում փոխարինած Էնդրյու Ջոնսոնի հետ: Նրա կարծիքով՝ «այդ անուանի և աղքատ ծնողաց որդին», մանուկ հասակից առանց ուսման մեծացած, ինքնուրույն գրել-կարդալ սովորած դերձակի աշակերտը, ով հետագայում դարձավ Ա. Լինքոլնի օգնականը, «ամէն կողմանէ ամերիկացիների մեծարանքին արժանաւոր մարդ է»: Գ. վրդ. Այվազովսկին հույս ուներ, որ Է. Ջոնսոնը «իրեն փորձառու, ուշադիր և ողջամիտ բնաւորութեան» շնորհիվ ոչ միայն կդառնա Ա. Լինքոլնի արժանի իրավահաջորդը, «այլև Ամերիկայի գործոց յաջողութեան և խաղաղութեան պատճառը պիտի լինի»[78]:

---

[73] *«Միածան», 1865, ապրիլ, թիվ 4, 94:*
[74] *«Միածան», 1865, ապրիլ, թիվ 4, 94:*
[75] *«Միածան», 1865, հունիս, թիվ 6, 138:*
[76] *Տե՛ս* Куропятник. 2009, 314; Иванов. 1960, 166; История США 1983, 456; Бурин. 1988, 110–112; Иванов. 1984, 274.
[77] *«Միածան», 1865, հունիս, թիվ 6, 138:*
[78] *«Միածան», 1865, հունիս, թիվ 6, 139:*

Եզրակացություն

Չորս տարի չարունակ ամերիկյան քաղաքացիական պատերազմի ընթացքին ուշադրությամբ հետևող «Մասյաց աղավնի» ամսագիրը և նրա ուղեգիծը հետևողականորեն չարունակող «Ծիածանն» ԱՄՆ-ում տեղի իրադարձություններն իրավացիորեն գնահատում էին որպես ազգային երկպառակություն, ազգասպան, եղբայրասպան ու քաղաքացիական պատերազմ: Ազգային միասնության, համերաշխության ու համախմբման կողմնակից «Մասյաց աղավնին» գրեթե բոլոր հրապարակումներում հանդես է գալիս պատերազմը դադարեցնելու և հաշտություն կնքելու օգտին: Պատերազմը հիմնականում անկողմնակալ դիրքերից լուսաբանած պարբերականը դեմ էր ստրկությանը և կարևորում էր հյուսիսի հաղթանակը: Ամսագիրը համոզված էր, որ հյուսիսի և հարավի աննպատակ ու անիմաստ հակամարտության վերացմամբ է միայն հնարավոր հաղթահարել ազգային պառակտվածությունը և կրկին համախմբվել ԱՄՆ ուժեղ ու մեծ հանրապետության ներքո:

Ֆելիքս Մովսիսյան – պ. գ. դ., պրոֆ., Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական համալսարանի պատմության ամբիոնի վարիչ: Գիտական հետաքրքրությունները՝ XVIII–XIX դդ. ամերիկյան, եվրոպական հեղափոխություններ, ազգային-ազատագրական շարժումներ և դրանց վերաբերյալ հայ հասարակական մտքի ու պարբերական մամուլի գնահատական, արևմտահայ հասարակական կազմակերպություններ, մասոնության պատմություն: Հեղինակ է 4 մենագրության և 90-ից ավելի հոդվածի: felmov@mail.ru

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

«Արշալույս արարատյան» (Զմյուռնիա), 04. V. 1863:

Զարդարեան Կ. 1911, Յիշատակարան, հ. 2, Կ. Պոլիս, Օսմանեան գործակցական ընկերութեան տպարան, 196 էջ:

«Ծիածան» (Թեոդոսիա), 1865, ապրիլ, թիվ 4, հունիս, թիվ 6:

Կարինյան Ա. 1960, Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության, հ. 2, Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 635 էջ:

Հայ պարբերական մամուլի պատմություն. XVIII–XIX դարեր, 2006, խմբ. կոլ. Ա. Ա. Խառատյան և ուրիշներ, հ. 1, Գահիրե, 704 էջ:

Հովհաննիսյան Ա. Գ. 1974, Արևելահայ հասարակական հոսանքները: Հայ ժողովրդի պատմություն, հ. V, Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 432 էջ:

«Մասյաց աղավնի» (Թեոդոսիա), 15. I. 1861, թիվ Բ, 01. II. 1861, թիվ Գ, 01. III. 1861, թիվ Ե, 01. IV. 1861, թիվ է, 15. VI. 1861, թիվ ԺԲ, 01. VIII. 1861, թիվ ԺԵ, 01. IX. 1861, թիվ Ժէ, 01. X. 1861, թիվ ԺԹ, 01. XII. 1861, թիվ ԻԳ, 15. I. 1862, թիվ Բ, 01. II. 1862, թիվ Գ, 15. IV. 1862, թիվ Ը, 01. XI. 1862, թիվ ԻԱ, 15. XI. 1862, թիվ ԻԲ, 01. IV. 1863, թիվ 7, 15. VI. 1863, թիվ 12, 15. VII. 1863, թիվ 13, 15. VII. 1863, թիվ 14, 15. VIII. 1863, թիվ 16, 15. VIII. 1863, թիվ 16, 15. IX. 1863, թիվ 18, 01. I. 1864, թիվ 1:

Մովսիսյան Ֆ. 2020, № 3, «Մասյաց աղավնի» ամսագիրը Իտալիայի միավորման մասին (1860–1865). – ՊԲՀ, էջ 75–98:

Մովսիսյան Ֆ. 2020, № 2, Ռուսահայ պարբերական մամուլը XIX դարի իտալական ազգային-ազատագրական պայքարի մասին.– «Պատմություն և մշակույթ» (Երևան), էջ 50–65:

Մովսիսյան Ֆ. 2021, № 1, պր. Ա, «Մասյաց աղավնի» պարբերականը Իտալիայի միավորման համար պայքարում Վիկտոր Էմմանուիլ II-ի դերի մասին. – ՎՊՀ «Տեղեկագիր», Երևան, էջ 91–117:

Մովսիսյան Ֆ. 2021, № 1, «Մասյաց աղավնի» պարբերականը Զուգեպպե Գարիբալդու ազատագրական պայքարի մասին. – «Մեսրոպ Մաշտոց համալսարանի լրատու» (Երևան), էջ 40–58:

Ներսիսյան Մ. Գ. 1961, Քաղաքացիական պատերազմը Ամերիկայում հայ պարբերական մամուլի լուսաբանմամբ. – ՊԲՀ, № 2, էջ 47–66:

Ներսիսյան Մ. Գ. 1982, Հայ ժողովրդի նոր պատմության էջերից, Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 406 էջ:

Սենդբերգ Կ. 1988, Լինկոլն, Երևան, «Հայաստան», 720 էջ:

Бурин С. Н. 1988, На полях сражений гражданской войны в США. М., «Наука», 176 с.

Ефимов А.Е. 2009, Гражданская война в Северной Америке (1861–1865). – В сб.: История дипломатии. Сост. А. Лактионов. М., «АСТ МОСКВА», 944 с.

Иванов Р. Ф. 1960, Гражданская война в США. М., Академия наук СССР, 176 с.

Иванов Р. Ф. 1984, Дипломатия Авраама Линкольна. М., «Международные отношения», 304 с.

Иванов Р. Ф. 2002, Конфедеративные штаты Америки. 1861–1865, т. 1. М., Ин-т воен. истории РАН, 275 с.

Иванян Э. А. 2008, История США. М., «Дрофа», 576 с.

История дипломатии. 2009, Сост. А. Лактионов. М., «АСТ», 944 с.

История США. 1983, т. 1, 1607–1877. Отв. ред. Н. Н. Болховитников. М., «Наука», 687 с.

Куропятник Г. П. 2009, Гражданская война в США. М., «Наука», 354 с.

Маль К. 2002, Гражданская война в США 1861–1865. Минск, «Харвест», 592 с.

Родс Джеймс Форд. 2017, История гражданской войны в США. 1861–1865. Пер. с англ. М., «КоЛибри», 431 с.

Фостер У. З. 1953, Очерки политической истории Америки. М., «Издательство иностранной литературы», 918 с.

Фостер У. З. 1955, Негритянский народ в истории Америки. Пер. с англ. М., «Издательство Иностранной литературы», 806 с.

Barney W. 1975, Flawed Victory. A New Perspective on the Civil War. New York, Praeger Publishers, 215 p.

Borit G. 1992, War Opponent and War President. New York. Oxford, 458 p.

Dengerfield G. 1952, The Era of good feelings. New York, 511 p.

Douglas Fr. 1945, Selections from his Writings Ed. By Ph. Foner, N Y. 95 p.

Foner E. 1980, Poliics and Ideology in the Age of the Civil War. New York, Oxford University Press, 250 p.

John S. D. 1999, Eisenhower. Agent of Destiny: The Life and Times of General Winfield Scott and the Profession of Arms. Kent, 496 p.

Long D. E. 1997, The Jewel of Liberty; Abraham Lincoln's Re-Election and the End of Slavery. New York., Da Capo Press, 400 p.

Milton G. 1941, Conflict. The American Civil War. New York, Coward-McCann, 433 p.

Paludan P. S. 1988, "A. Peoples Contest", The Union and Civil War New York, Harper & Row, 486 p.

Quinn C. A. 1991, Lincoln's Springfied on the Civil War. Macomb. III, Western Illinois University edition, 136 p.

Sears S. W. 1988. George B. McClellan: The Young Napoleon. New York, Generic, 482 p.

Timothy D. Johnson. 1998, Winfield Scott: A Quest for Military Glory, Lawrence. University Press of Kansas, 328 p.

Vartan Malcom M. 1919, The Armenians in America. Boston, Chicago, Pilgrim Press, 142 p.

«МАСЬЯЦ АГАВНИ» ОБ АМЕРИКАНСКОЙ ГРАЖДАНСКОЙ ВОЙНЕ

ФЕЛИКС МОВСИСЯН

Р е з ю м е

Ключевые слова: «Масьяц агавни», Север, Юг, власть, рабство, война, междоусобица, восстание, единство, согласие, Авраам Линкольн.

Американская гражданская война 1861–1865 гг. нашла широкое отражение в армянской периодической печати того времени, в том числе в журнале «Масьяц агавни». Это периодическое издание, представлявшее армянское национально-консервативное течение, выходило в свет в 1860–1865 гг. в Феодосии под редакцией Габриэла архимандрита Айвазовского.

«Масьяц агавни» был одним из тех немногих армянских изданий, которые еще до начала гражданской войны в США предвидели неизбежность противостояния между северными и южными штатами. Журнал связывал это с избранием на пост президента члена республиканской партии Авраама Линкольна, представляющего интересы северных штатов. Избрание А. Линкольна журнал считал одним из самых значительных событий своего времени. Согласно изданию «Масьяц агавни», основной причиной разжигания войны стал вопрос рабства и работорговли, против чего выступал Север, а Юг не хотел отказываться от «выгодной … отвратительной и жестокой традиции» эксплуатирования рабского труда.

По мнению журнала, «беспощадный враг» рабства А. Линкольн в период своего правления должен искоренить рабство, по этой причине произошел раскол между Севером и Югом, что привело к вражде и началу братоубийственной войны. «Масьяц агавни» считал события, происходящие в Соединенных Штатах, этнической междоусобной, брато-

убийственной, уничтожающей нацию гражданской войной. Журнал был приверженцем идеи национального единства, согласия и сплоченности, поэтому в своих многочисленных публикациях всегда выступал как сторонник прекращения войны и заключения перемирия. По убеждению редактора издания, только с устранением бесцельного и бессмысленного противоборства между Севером и Югом возможно преодолеть национальную раздробленность и снова сплотиться под сильной и могущественной государственной властью Соединенных Штатов Америки.

Феликс Мовсисян – д. и. н., проф., заведующий кафедрой истории Ванадзорского государственного университета им. Ов. Туманяна. Научные интересы: американские и европейские революции XVIII–XIX веков, национально-освободительные движения и их оценка в армянской общественной мысли и периодической печати, западноармянские общественные организации, история масонства. Автор 4 монографий и более 90 статей. felmov@mail.ru

"MASYATS AGHAVNI" ON THE AMERICAN CIVIL WAR

FELIX MOVSISYAN

S u m m a r y

Key words: "Masyats Aghavni", North, South, power, slavery, war, strife, rebellion, unity, solidarity, Abraham Lincoln.

The American Civil War of 1861–1865 received a wide response in the Armenian periodical press of the time, including the "Masyats Aghavni" magazine.This periodical, which was representing the Armenian national-conservative current, was published in 1860–1865 in Theodosia edited by Archimandrite Gabriel Aivazovsky.

"Masyats Aghavni" is one of the unique Armenian periodicals that predicted the inevitability of the conflict between the northern and southern states before the start of the US Civil War. The magazine attributes this to the election of Abraham Lincoln, the representative of the Republican Party representing the interests of the northern states, which is considered one of the remarkable events of the time. According to the "Masyats Aghavni", the main reason for the outbreak of the civil war is the issue of slavery and slave trade, which the North opposes, and the South does not want to give up the "profitable … disgusting and ruthless habit" of exploiting the slave labor.

According to the magazine, a "fierce enemy of slavery" A. Lincoln during his presidency has to abolish the slavery that is why the North and the South have split, become enemies and started the enmity, the fratricidal war. The

"Masyats Aghavni" considers the events in the United States a ethnic strife, fratricide, genocide and civil war. The magazine advocated the idea of national unity, solidarity, and consolidation, therefore, in its numerous publications it always supported the idea of ending the war and making peace. According to the editor of the periodical, only by eliminating the aimless and meaningless conflict between the North and the South it is possible to overcome the national division and be reunited under a strong and mighty power of the United States of America.

Felix Movsisyan – Doctor of Philosophy in History, Professor, Head of the Chair of History of Vanadzor State University after Hovh. Tumanyan. Scientific interests: American and European revolutions of the XVII–XIX centuries, national-liberation movements and their estimation in the Armenian press media, Western-Armenian public organizations, history of Masonry. Author of 4 monographs and over 90 articles. felmov@mail.ru

Doi:10.54503/0135-0536-2022.1-150

ԴԱՐՁՅԱԼ ԴԱՎԻԹ ԲԵԿԻ ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ*

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՅՎԱԶՅԱՆ

Բանալի բառեր՝ Սյունիքի ազատագրական կռիվները, Դավիթ Բեկ, Մխիթար Սպարապետ, Մելիք Փարսադան, Մելիք Բալի, Տեր Ավետիք, Ղուկաս Սեբաստացի, Սամուել Արամյան, «Ընտիր պատմութիւն ...», Րաֆֆի, Լալայան, Աղոնց, Հալիճոր, Բեխ, Շինուհայր, Տաթև:

Նախաբան

2022-ին լրանում է Դավիթ Բեկի գլխավորած ազատագրական պայքարի 300-ամյակը, որը հայոց պատմության ամենանշանակալի իրադարձություններից է: «Դավիթ բեկը ... հայոց պատմության մեջ ... իբրև ազգային ազատագրության մարմնացում՝ չուներ իր նմանը Կիլիկիայի հայոց անկախության խորտակումից հետո»[1],– գրել է Լեոն:

Այդ իրադարձությունների հատուկ կարևորությունն այն է, որ դրանցով է սկսվում մահմեդական լծից ազատագրվելու հայոց նորագույն շրջանը:

Հայտնի է, որ Սյունիքի ազատագրական շարժումը սկսվել է 1722-ին, ավարտվել՝ 1730-ին Մխիթար Սպարապետի դավադիր սպանությամբ: Շարժումը 1722–1728-ին գլխավորել է Դավիթ Բեկը, 1728–1730-ին՝ Մխիթար Սպարապետը:

Ժամանակին, պայքարի առանձին դրվագներից բացի, քննարկման առարկա է դարձել նաև Դավիթ Բեկի այնտեցի լինելու հանգամանքը, որովհետև այդ իրադարձությունների միակ սկզբնաղբյուր Ստեփանոս Շահումյանի և Տեր Ավետիքի պատմածից Ղուկաս Սեբաստացու գրառած պատմության մեջ այդ մասին որևէ հիշատակություն չկա:

Դավիթ Բեկի ծննդաբանության շուրջ

Առաջին տեղեկությունն այդ մասին հայտնվել է Աբգար Գյուլամիրյանցի 1871-ին հրատարակած «Ընտիր պատմութիւն...»[2] գրքով, որը տարբեր վեճերի ու պատմության նկատմամբ որոշ անվստահության պատճառ է դարձել՝ դրանում առանձին կամայական միջամտությունների պատճառով: Այն հետագայում ճշգրտել, չարադրանքի դասական գրաբարյան ձևը վերականգնել, աշխարհաբարի վերածել ու հրատարակել է Մխիթարյան միաբան Սամուել Արամ-

---

** Ներկայացվել է 11. I. 2022 թ., գրախոսվել է 18. I. 2022 թ., ընդունվել է տպագրության 09. III. 2022 թ.: Սույն ուսումնասիրության նախաձեռնությունը մասամբ գալիս է իմ բարեկամ, Մելիք-Փարսադանյան տոհմի 13-րդ սերնդի ներկայացուցիչ Ռաֆայել Բագրատի Մելիք-Փարսադանյանցից, որը տարիներ շարունակ նյութեր է հավաքել իր տոհմածառի վերաբերյալ և դրանք սիրով տրամադրել ու ընթացիկ աջակցություն է ցուցաբերել մեզ. խորին շնորհակալություն նրան:*

[1] Լ ե ո. 1946, 695:

[2] Գ յ ո ւ լ ա մ ի ր ե ա ն ց. 1871:

յանը[3], որը դարձել է պատմության ճշգրտված սկզբնաղբյուր: Արշակ Մադոյանն այն վերածել է արևելահայերենի ու իր առաջաբանով տպագրել 1978 և 1992 թթ.[4]: Ցավոք, սակայն, ցայսօր դեռևս որևէ նոր տեղեկություն չկա Դավիթ Բեկի ծագումնաբանության վերաբերյալ:

Դավիթ Բեկին ի սկզբանե սյունեցի է համարել պատմաբան Միքայել Զամչյանը («Դաւիթ, որ էր ի ցեղէ Սիւնեաց հայկազեանց»), Ալիշանն ու Լեոն՝ հալիձորցի, Րաֆֆին՝ Օրբելյանների ազգակիցը («Նա ազգակից էր Սյունյաց երկրի Օրբելյանների հետ»), ազգագրագետ Երվանդ Լալայանը՝ ղափանցի[5], պատմաբան Աչոտ Հովհաննիսյանը՝ ազգակից՝ Ղափանի տոհմերից մեկնումեկին և այլն: Ղուկաս Սեբաստացու պատմությունը բազմակողմանիորեն ուսումնասիրել են բազմաթիվ հեղինակներ[6] և բացահայտել նրա հիմքերն ու մի շարք ընդօրինակությունների առկայությունը:

Նիկողայոս Ադոնցի կարծիքով՝ Դավիթ Բեկը «գուցե Շնհերից էր, կամ Տաթեւից, եթէ իրաւ մելիքական տոհմից էր, որ եւս խնդրական է»[7]: Իսկ Միքայել բեկ Լալաբեկյանի հիշատակարանում կարդում ենք. «Մեր այս զանգեզուրցիք, սևերես լինելով, դիմել են վրաց իշխանին, վրաց իշխանը նշանակել է Շինհերցի Տավիթ Բեկին, չորս հարյուր հայ զորքի հետ ...»[8]: Այդ կարծիքը կրկնել է չինուհայրցի Խիկար Բարսեղյանը: «Մեր գյուղի նշանավոր մարդկանցից է Սյունիքի ազատագրական շարժումների ռահվիրա Դավիթ Բեկը ... Նա Շինուհայրի տանուտեր Ալիխանի որդին էր»[9],– գրել է նա ու ավելացրել, որ գյուղի տարածքում եղել է նաև Ալիխանի աղբյուր, որը կոչվել է հենց Դավիթ Բեկի հոր անունով:

Ե. Լալայանը, ըստամենայնի, համոզված էր, որ Դավիթ Բեկը ղափանցի է և ընտանեկան վեճի պատճառով գժտվել է յուրայինների հետ, մեկնել Վրաստան ու ծառայության անցել Վախթանգ VI-ի բանակում[10]:

Իսկ Գյուլամիրյանցի հրատարակած «Ընտիր պատմութիւն ...»-ի տարբերակում Դավիթ Բեկը ներկայացված է որպես սյունեցի և եկել է իր «հայրենի աշխարհն Սյունյաց» ապստամբությունը գլխավորելու համար. «... և կոչեալ Շահնավազն զԴաւիթ պէկն Սիւնեցի ի հայկազեանս տոհմէ, եւ նմա զիշխա-

---

[3] *Սեբաստացի. 1978:*

[4] *Սեբաստացի. 1992:*

[5] *Լալայան. 1904, 179:*

[6] *Զամչյան. 1784, 785–799, Լեո. 1946, Ադոնց. 1937,* Арутюян. 1952, 83–99, *Միրզոյան. 1952, 87–98, Հովհաննիսյան. 1970, 96–111, Աբրահամյան. 1972, 159–184, Աբրահամյան. 1974, 184–206, Մադոյան. 1973, 179–193, Խաչերյան, Խաչատրյան. 1974, 201–220, Մեսրոպ եպիսկոպոս. 1921–1922, 127–137, Ղլճյան. 1905, 382–387, Հակոբյան. 1954, 104, Մ. Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 2888, 8815, 3297, 6835, Շիրմանզանյանց. 1877, թիւ 11, 410–419, թիւ 12, 447–457, Այվազյան. 1990, № 2, 119–134, Այվազյան. 1990, № 3, 76–85, Այվազյան. 1992, 85–100, Այվազյան. 2006, 177–188, Գրիգորյան, Հախվերդյան. 2001, 189–190:*

[7] *Ադոնց. 1937, 67:*

[8] *Մ. Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 7429, թ. 30–31:*

[9] *Բարսեղյան. 1985, 8:*

[10] *Լալայան. 1904, 79:*

նութիւն երթալ յիւր հայրենի յաշխարհն Սիւնեաց, որ այժմ կոչի Խափան, զօրաժողով անել անդ, և պահել զերկիրն Հայոց»[11]*:*

Ուսումնասիրություններից պարզվել է, սակայն, որ այստեղ սյունեցի լինելու տեղեկությունը հետսամուտ է և չկա բնագրից: Այդ միտքը Սեբաստացու նախագաղափար բնագրում ձևակերպված է այսպես. «Դաւիթ պէկն՝ որ ի յազգէն Հայոց»[12]*, այսինքն՝ այնտեղ նա ոչ սյունեցի է, ոչ մցխեթացի, այլ՝ հայազգի մեկը:*

Դավիթ Բեկի սյունեցի լինելու մասին վաղ վկայություններից է Մեսրոպ եպիսկոպոսի «Զաքարիա նկարչի ձեռագիրը եւ Դաւիթ Բէկի մասին յիշատակարան» վերնագրով հոդվածը[13]*, որտեղ խոսվում է մի հիշատակարանի մասին, որը ձեռագիր Ավետարանի վերջում 1746-ին ավելացրել է ժամանակին հայտնի մեծահարուստ, Թիֆլիսի երբեմնի քաղաքագլուխ Փարսադան բեկի որդի Թադին: Այն կարևոր է հատկապես նրանով, որ տեղեկություններ է պարունակում նաև Դավիթ Բեկի ընտանեկան վիճակի մասին: Այստեղից տեղեկանում ենք՝ Դավիթ Բեկն ամուսնացած էր այդ նույն մեծահարուստ Փարսադան բեկի դստեր հետ, և որ Դավիթ Բեկը թիֆլիսեցի էր՝ Ալիխանի որդին: Պետք է ենթադրել, որ Փարսադան բեկի ընտանիքը Դավթի անցյալի մասին մանրամասն տեղեկություն չի ունեցել, որովհետև որևէ խոսք չկա այն մասին, թե նրանք ե՞րբ են հայտնվել (եթե հայտնվել են – Հ. Ա.) Թիֆլիսում և թե այն ազգակցական ի՞նչ կապ ունեն Ղափանի հայտնի Մելիք Փարսադանյանների հետ:*

Հիշատակարանում առկա են շատ կարևոր մի քանի տեղեկություն ևս. այն, որ Փարսադան բեկի կինն ու աղջիկները՝ Հուսնիփերն ու Ալամի Սուլթանը (հայտնի չէ, թե նրանցից որն է եղել Դավիթ Բեկի կինը), Թիֆլիսում են ապրել և այդ հիշատակարանը գրելու ժամանակ արդեն վախճանված են եղել: Ընտանիքի տղամարդիկ զինվորականներ էին. հայրը ծառայության մեջ էր Պարսկաստանի շահ Թահմասպ Բ-ի մոտ, որտեղ էլ մահացել է 1746-ին: Սկզբնապես նրա հետ էին նաև որդիներ Թադին (1694–1765) ու Ռաֆայելը (1697–1750), որոնք հետագայում դարձել են հայ-վրացական էսկադրոնի հրամանատարներ, իսկ մյուս եղբայրը՝ Աբդլմասեհը (1700–1724), եղել է Դավիթ Բեկի՝ Սյունիք մեկնած զորաջոկատի կազմում՝ որպես զորապետ: «... մեր միւս եղբայր Աբդլմասեհն, որ Վրաստան պարոնի հրամանաւն գնացին տեղն զօրաժողով առնելոյ, որ եղբայրս էլ զօրապետ էր, որոց գլխաւորն էր Ալիխանի որդի Դաւութ պէկն, որ է իմ փեսայ, որք ընդ պարսից եւ օսմանցոց բազում պատերազմս ետուն, եւ ի վախճանի անկան ի մարտին, որ իմ եղբօր գերեզմանն այժմ ի Խոտի է, ի Ղափանումն ...»[14]*,– կարդում ենք հիշատակարանում:*

Այս եղբայրները Պարսկաստանից վերադառնալուց հետո իրենց ծառայությունը շարունակել են Ռուսաստանում. Թադին ապրել է Աստրախանում և Ղզլարի լեռնական լեզգիների դեմ պատերազմի ժամանակ նրան հաջողվել է գերությունից ազատել երբևէ Ջալալյանների ընտանքին պատկանած Ավետարանն ու ավելացնել վերոհիշյալ հիշատակարանը:

---

[11] *Գ յ ո ւ լ ա մ ի ր ե ա ն ց. 1871, 5:*
[12] *Ա բ ր ա հ ա մ յ ա ն. 1972, 165:*
[13] *Մ ե ս ր ո պ ե պ ի ս կ ո պ ո ս. 1921–1922, 127–137:*
[14] *Մ ե ս ր ո պ ե պ ի ս կ ո պ ո ս. 1921–1922, 136:*

Վերոհիշյալ պատմության յուրօրինակ շարունակությունն է կարծես 1797-ի նոյեմբերի 16-ին Գրիգորիուպոլսի մագիստրատի տեղեկանքը՝ ներկայացված Ռուսիո Պավել I կայսրին՝ քաղաքի գլխավոր դատավոր Ստեփանոս Դավիդովին (Տեր-Սահակյան) ազնվականի կոչում չնորհելու մասին: Տեղեկանքում վերջինս ներկայացված է որպես Դավիթ Բեկի թոռ, որը «... ի սոյն թուոյս սկսեալ մինչեւ 1722 թուին վրկչին ... վասն զօրանալոյ ազգատոհմին իւրեանց նորոգ Դաւիթ պեկ զօրապետին, թե որպիսի հնարիւք գնացեալ է ի Սիւնիս ի նախկին հայրենին իւր ...»[15], այնտեղ զորք հավաքել, կռվել է թշնամիների դեմ և Սյունիքից հալածել «զօրան օսմանցոց»: Ըստ այդ տեղեկանքի Դավիթ բեկն ունեցել է Մխիթար անունով մի որդի, որը քահանա է ձեռնադրվել և վերանվանվել Տեր-Սահակ: Իսկ վերջինս ունեցել է երկու որդի, որոնցից մեկը սույն Ստեփանոս Դավիդովն էր, ըստ Ա. Աբրահամյանի՝ «Արարատյան դեսպանը» ռուսական արքունիքում[16], մյուսը՝ Կ. Պոլսի էջմիածնական նվիրակ Իսահակ եպիսկոպոսը[17]:

Կարևոր է, որ վերոհիշյալ տեղեկությունն արձանագրված է նաև Ստեփան Դավիդովի տապանաքարի վրա (նա վախճանվել է 1800-ի սեպտեմբերի 2-ին, 65 տարեկան հասակում):

Չնայած՝ այս վավերագրի հավաստիությունը չատերի կասկածն է հարուցել[18], բայց որ Սյունիքը միանշանակորեն հայտարարված է Դավիթ Բեկի հայրենիքը, և որ Դավիթ Բեկը որդի է ունեցել՝ Մխիթար (տեր Սահակ) անունով, կարծում ենք, կասկածից վեր է: Այս տեղեկությունը սկզբունքային նշանակություն ունի սույն ուսումնասիրության համար, որի իսկության մեջ կհամոզվենք նաև ստորև:

Խնդրո առարկա նյութի հետ կապված՝ ուշագրավ է նաև Ստեփան Լիսիցյանի «Զանգեզուրի հայերը» գրքի վերջում զետեղված Մելիք Փարսադանի տոհմածառի բացատրագիրը[19] (գրված 1966-ին՝ Արշավիր Մելիք Փարսադանյանի ձեռքով), ըստ որի՝ Դավիթ Բեկի հայր Աստվածատուրը դարձել է պարսկահպատակ, ստացել է Ալահվերդի (Աստվածատուր անվան պարսկական տարբերակն է) անունը և ապրել Տաթևի մահալում: Դավիթն այնտեղից, ընտանեկան վեճերի պատճառով, 18–19 տարեկանում եկել է Հալիճոր, որտեղից էլ նա անցել է զինվորական ծառայության:

Այդ տեղեկություններից, ըստ էության, գալիս են հաստատելու Րաֆֆու «Դավիթ Բեկ» վեպում պատկերած այն իրողությունը, որ կրակի ու բոցի մեջ այրվող տաթևացիներից մի մանուկ Դավիթ անունով ազատվում է մահից և ուղարկվում Վրաստան[20], իսկ երբ Դաւիթ Բեկը Սյունիք վերադառնալուց հետո առաջին անգամ մտնում է Տաթև, աչքին են գալիս այրվող տան պատկերներ:

---

[15] Ա ր ա հ ա մ յ ա ն. 1972, 166:

[16] Ա ր ա հ ա մ յ ա ն. 1977, 63–79:

[17] Մ. Մաշտոցի անվ. Մատենադարան, արխիվային բաժին, կաթողիկոսական դիվան, թղթ. № 6, վավ. № 45, ձեռ. № 2699, թ. 42 բ–43 ա:

[18] Հ ա կ ո բ յ ա ն. 1954, 104:

[19] Լ ի ս ի ց յ ա ն. 1969, 313–314:

[20] Ր ա ֆ ֆ ի. 1985, 109–120:

Տվյալ հարցի շուրջ մեր օրերում էլ կան տարբեր տեսակետներ ու մոտեցումներ[21], սակայն մեր դիտարկումները բավարար համարելով՝ կարող ենք ենթադրել, որ Դավիթ Բեկն, ամենայն հավանականությամբ, պետք է ծնված և մինչև 18–19 տարեկանն ապրած լիներ Տաթևում: Այսինքն՝ նա այսունեցիտաթևացի է:

Դավիթ Բեկի ազգակցական հնարավոր կապերի մասին

Այժմ տեսնենք, թե ինչ կապ կարող էր լինել Դավիթ Բեկի և Մելիք Փարսադանի միջև: Ջնայած Ե. Լալայանի տվյալներով՝ Դավթին Թիֆլիս է տարել նրա հորեղբայր Փարսադանը, սակայն այդ մասին որևէ գրավոր վավերաթուղթ գոյություն չունի, բացի ավանդազրույցի ձևով փոխանցված տեղեկություններից:

Հայտնի է, որ Մելիք Փարսադանի ընտանիքը ժամանակին Ղափանի ամենաճանաչված տոհմերից էր, ապրել են հիմնականում Հալիձորում, մի ճյուղը՝ Տաթևում: Սակայն երբ Դավիթը Վրաստանից զորախմբով եկել է Սյունիք, կանգ է առել նախ Եռաբլուր (Ուչ թեփե) կոչված սարահարթում, ապա այնտեղից անցնել է Շնեհեր և ոչ՝ Հալիձոր: Պատճառն այն է, գրում է Աղոնցը, որ Հալիձորի մելիքն էր Փարսադանը, որի հետ նա հավանաբար ինչ-ինչ խնդիրներ է ունեցել[22]: Այսինքն, եթե Մելիք Փարսադանն իսկապես նրա հորեղբայրը լիներ, Դավիթ Բեկը տրամաբանորեն առաջինը պիտի գնար նրա մոտ: Ավելին, երբ Բեկը նրան հետագայում հրավիրել է միանալ իրեն. «Հրեշտակս առաքեաց ի Հալիձոր առ տէր Աւետիսն, եւ առ մելիք Փարսադան աներ նորա, եւ ասէ. Եկայք միաբանեցարուք ընդ մեզ, զի ի բաց հանցուանք զթուրք բնակիչս ի մէջոյ, եւ նոքա ոչ եկին»[23]: Նրանք գալիս են միայն Բեկի առաջին տպավորիչ հաղթանակներից հետո. «Ապա յետ այսորիկ եկին մելիք Փարսադան եւ տէր Աւետիք յողջոյն Դաւթի. իսկ նորա բարկացեալ ի վերայ նոցա, ասէ. Կոչեցի զձեզ եւ ընդէ՞ր ոչ ելիք յօգնութիւն մեզ. եւ հրամայեաց տանիլ զնոսա ի Շնհեր, եւ անդ արկանել զնոսա ի բանտ ...»[24]: Այսինքն, պետք է ենթադրել՝ իսկապես ինչ-ինչ անհամակացողություն է եղել նրանց միջև, որի համար որոշ պատճառներ բերում է Ե. Լալայանը, որոնք, սակայն, դարձյալ ավանդազրույցի շրջանակներում են: Այդուհանդերձ, չուտով հաշտվել են, և Դավիթ Բեկը Տեր Ավետիքին ու Մելիք Փարսադանին նշանակել է զորապետեր, որոնք մինչև վերջ հավատարմորեն ծառայել են նրան:

Նկատենք, որ խոսքն այստեղ Մելիք Փարսադան Բ-ի մասին է, որը Դավիթ Բեկի հետ մի շարք կռիվների բովով անցնելով՝ 1727-ին զոհվել է Ագուլիսում՝ Մեղրիի քաղաքագլուխ Մելիք Մուսիի կողմնակիցների գնդակից, երբ նրանք

---

[21] Հոդվածի պատրաստության ընթացքում զրույց ունեցանք ՀՀ բանակի գնդապետ, չինուհայրցի Միքայել Միրզոյանի հետ, որն աներկբայորեն համոզված է, որ Դավիթ Բեկը չինուհայրցի է՝ Օրբելյան տոհմից, որի ժառանգներից է նաև ինքը, և կարծում է, որ պետք չէ այս հարցը վերարծարծելով՝ ավելի խճճել: Նա հին Շինուհայրի ավերակներից հայտնաբերել է 1724-ին Դավիթ Բեկին նվիրված սուրը՝ փորագիր մակագրությամբ, որը խնամքով պահում է որպես զորավարի Շինուհայրից լինելու փաստացի ապացույց:

[22] Ա դ ո ն ց. 2006, 549:

[23] Ղ ու կ ա ս Սե բ ա ս տ ա ց ի. 1978, 22:

[24] Ղ ու կ ա ս Սե բ ա ս տ ա ց ի. 1978, 24:

անցան օսմանցիների կողմն ու պատերազմ հայտարարեցին Դավիթ Բեկին: Բեկն իր ձեռքով է հողին հանձնել նրա դին Ագուլիսի Սբ. Թովմա վանքի բակում: Տապանաքարի վրա գրված է՝ «Այս է տապանն Հալիճորցի Մելիք Փարսաղանի, որ է որդի Պալասանի: Թվին ՌՃՀԳ (1724, պետք է լինի՝ ՌՃՀԶ, 1727 – Հ. Ա.)»: Իսկ այդ Պալասանը Մելիք Պալիի (Բալի) պապն է:

Հայր Ղևոնդ Ալիշանը, անդրադառնալով Դավիթ Բեկի գլխավորությամբ չարժման հաջողություններին, գրում է, որ դրա գրավականներից մեկը տեղի ամրասիրտ բնակչությունն էր, որոնցից նա առանձնացրել է Մելիք Փարսադանյաններին՝ «յորոց անմոռաց անուն եթող ընդ նմին՝ Տեր Աւետիս երէց աշխարհիկ, և աներ նորա Փարսադան մելիք գեղջն, եւ սորա որդին եւ յաջորդ Պալի զորավար»[25]: Ապա անդրադառնալով Հալիճորի 1727-ի ճակատամարտի ժամանակ Դավիթ Բեկի ցուցաբերած արիությանն ու հնարամտությանը՝ գրում է. «... սակայն ըստ անյողդողդ բարուցն արութեան, զորաւիգն ունենալով զնմանէս իւր, զՏէր Աւետիս եւ զՓարսադան, յաջողեցաւ գումարել զիւրեւ արս աննկունս. եւ իջեալ ի բերդէն ...»[26]: Իսկ Ստ. Լիսիցյանն իր հերթին ավելացրել է. «Ժամանակի Մելիք-Փարսադանի և նրա Բալի որդու անվերապահ մասնակցությունը Դավիթ Բեկի ձեռնարկած գործին ապահովում էր նաև հարևան մելիքների ներգրավումը ապստամբական գործողության մեջ»[27]:

Նկատենք, որ ազատագրական պայքարի ակտիվ մասնակիցներից էին ոչ միայն Փարսադան Բ-ն և նրա փեսա Տեր Ավետիքը, այլև Փարսադանի որդի զորավար Բալին, որը հոր մահից հետո ղարճավ նաև Ղափանի մելիքը և երկար ժամանակով իշխեց գավառում: Ուշագրավ է, որ 1724-ի խոտի ճակատամարտում 400–500 զոհերի թվում է եղել նաև Բալի զորավարը, որի պարանոցը կիսով չափ կտրվել էր, իսկ Ստեփանոս Շահումյանը գերեվարվել էր, որոնց համար մեծ վիշտ ապրեց Դավիթ Բեկը: Սակայն Բալին հրաշքով ողջ է մնացել. կտրված պարանոցը ձեռքերով պահած 3 օր ճանապարհ կտրելով՝ հասել է Հալիճոր, ապաքինվել ու շարունակել է իր գործը: Նա բավական երկար է ապրել, մահացել է Բեխում, տապանաքարն այդ գյուղի եկեղեցու բակում է՝ հինավուրց խաչքարերի հարևանությամբ, որի վրա գրված է. «Այս է տապան Մելիք Փարսադանի որդի Բալի զորաւարի, նորոգեցաւ ժառանգս նորա Սիմեօն բէկն Թ. ՌՄԽ (1791)»:

Դավիթ Բեկի տոհմային ծագումնաբանությանն առաջիններից մեկն անդրադարձել է Բեխ գյուղի քահանա Մովսես Մելիք Ստեփանյանցը: Ըստ նրա նյութը «Բանասերին» ուղարկած Հարություն Թումանյանցի ուղեկցող գրության, այդ տեղեկությունները քաղել է «այն ձեռագրերից եւ հին զապալաներից, որոնք պահւել են վասն ազգային օգտի»[28] Մելիք Ստեփանյանների սերնդի մեջ: Իսկ ըստ Լալայանի, նա պատանեկան հասակից լսել է իր և իրեն ազգակից մելիքական տոհմերի պատմությունն ու 1882-ին փորձել է գրառել այն: Նրա պատմության մի փոքր հատված տպագրվել է «Բանասեր» հանդեսի

[25] *Ալիշան. 1893, 256:*
[26] *Ալիշան. 1893, 256:*
[27] *Լիսիցյան. 1969, 58:*
[28] *Ծագումն Դաւիթ-Բէկի (հատած Մովսէս քահանայ Մելիք-Ստեփանեանցի յիշատակարանից). 1902, 382:*

1902-ի դեկտեմբերի համարում (էջ 381–382), իսկ ամբողջ նյութը՝ նրա խնդրանքով, խմբագրությունն ուղարկել է Լալայանին: Այսինքն՝ վերջինս Սյունիքում իր շրջագայության ընթացքում նախ լսել, ապա նաև ստացել է Մովսես քահանայի գրավոր պատմությունը, որը պարունակում էր նաև Մելիք Փարսադանի ճյուղագրության առաջին տախտակը, որտեղ Դավիթ Բեկը ներկայացված էր որպես ավագ Մելիք Փարսադանի որդի Աստվածատուր իշխանի որդին: «Առաջին Մելիք Փարսադանն… ուներ երիս որդիս՝ Մելիք Սափրազ, իշխանն Աստուածատուր եւ Ստեփաննոս: Երկրորդ Փարսադան էր որդի Սափրազի, Դավիթ Բէկ էր որդի Աստուածատուր իշխանի, Շահում, որոյ մականունն էր Շիկօ, էր որդի Մելիք-Ստեփաննոսի»[29],– կարդում ենք նրա պատմության մեջ, որտեղ, ինչպես կտեսնենք ստորև, ժառանգների հերթագայությունն ակնհայտորեն չփոթված է: Նկատենք, որ այս տախտակը հետագայում հիմք է դարձել Փարսադանյանների տոհմածառը կազմող որոշ հեղինակների համար: Այստեղ, այնուամենայնիվ, ուշագրավ դիտարկում կա այն մասին, որ Դավթի տնից գնալու և Վրաստան մեկնելու պատճառ է համարվում Փարսադան Բ-ի ավագ որդի Սաֆրազ բեկի՝ հոր հետ ունեցած վեճերի հետևանքով տնից հեռանալը:

Ե. Լալայանը Րաֆֆու նման ոտքով շրջել է պայքարի թատերաբեմ փոքր Սյունիքի բազմաթիվ բնակավայրերում և տարեց ծերերի [նաև Բալի զորավարի ծոռան՝ Հարություն բեկ Մելիք Փարսադանյանի (1847–1921), որն ուղեկցել է նրան] հետ զրուցելով՝ փորձել է վեր հանել չարժման պատմությունն ու գործող անձանց: Նա նշել է, որ տեղի մելիքական տներից ամենանշանավորը Մելիք Փարսադանյան տոհմն էր, որը կոչվել է այդ տոհմի առաջին պատմական անձնավորության՝ Մելիք Փարսադան Ա-ի անունով, և տալիս է տոհմի ավագ սերնդի ճյուղագրության հետևյալ պատկերը.

Մելիք Փարսադանի ճյուղագրությունը[30]



Մելիք Փարսադան Բ Աստվածատուր իշխան Շահում կամ Շիկօ
Սաֆրազ և Պալի (Բալի) Բ Դավիթ բեկ
Էյվազ բեկ
Մելիք Փարսադան Գ
Մելիք Հովհաննես
Մելիք Գալուստ
Հովհաննես բեկ

Այս և տեր Մովսեսի կազմած ճյուղագրությունները համադրելիս տեսնում ենք, որ Լալայանը ճշգրտել է առանձին ժառանգների հերթագայությունը,

[29] Ծագումն Դաւիթ-Բէկի (հատուած Մովսէս քահանայ Մելիք-Ստեփանեանցի յիշատակարանից). 1902, 382:
[30] Լ ա լ ա յ ա ն. 1904, 178:

պարզել՝ տեր Մովսեսի՝ ավագ Մելիք Փարսադանին վերագրված 3 որդիները նրա թոռներն են՝ Մելիք-Պալիի (Բալի) որդիները, իսկ Սաֆրազ բեկը ոչ թե Մելիք Փարսադան Բ-ի հայրն է, այլ՝ որդին, որը երիտասարդ հասակում հեռացել է տնից, մեկնել Կ. Պոլիս և հետագա իրադարձություններին չի մասնակցել:

Այսինքն՝ Մելիք Փարսադան Ա-ն ունեցել է մեկ որդի՝ Պալի (Պալասան), իսկ նա՝ երեքը՝ Մելիք Փարսադան Բ, Աստվածատուր իշխան և Շահում կամ Շիկո: Մելիք Փարսադան Բ-ն ունեցել է երկու որդի՝ Սաֆրազ ու Պալի, և մեկ դուստր՝ Վարդխաթուն, որը Տեր-Ավետիքի կինն էր, Աստվածատուր իշխանը՝ միայն մեկ որդի՝ Դավիթ Բեկը, որի չարունակության մասին այն ժամանակ, հավանաբար, հայտնի չի եղել:

Նկատենք, որ 1860-ական թվականներին Ռուսական կայսրության տարածքում գործած Բեկական հանձնաժողովի մատյաններում[31] գրանցված են Մելիք Փարսադանյանների 9 ընտանիք, որոնք իրենց համարել են Մելիք Փարսադան Ա-ի ժառանգներ՝ նրա Բալի որդու որդիները, թոռներն ու ծոռները. Մելիք Փարսադան Ա – Մելիք Բալի – Մելիք Փարսադան Բ – Մելիք Բալի Բ – Մելիք Փարսադան Գ և այլն:

Այսինքն՝ Մելիք Փարսադան Բ-ի ճյուղագրության ստույգությունը մեզ հետաքրքրող մասով պաշտոնապես արձանագրվել է նաև այդ մատյաններում: Իսկ Դավիթ Բեկի հոր և հորեղբայր եղիայի մասին այնտեղ հիշատակություն չկա, հավանաբար, այն պատճառով, որ նրանց սերունդներն այդ ժամանակ կամ Բեխում չեն ապրել և կամ նման խնդրով այդ հանձնաժողովին չեն դիմել: Նշենք նաև, որ մատյանում գրանցված տոհմի անդամները շատ ավելին են և բազմաճյուղ, քան կարող էր փոխանցվել ավանդազրույցներով:

Լալայանը նշում է նաև, որ «Մելիք-Փարսադանյաններից ոմանք ասում են, թե Մելիք-Ստեփանյանների նախահայր Շահումը իրենց նախահայր Մելիք Պալու որդին չէ, այլ Եկտաստան ավանի մելիքը»[32]: Մենք այս ենթադրության ճշմարտության մեջ կհամոզվենք ստորև՝ «Ուռպէլեանց վկայագիրը» դիտարկելիս, որը հույժ կարևոր դիտելով՝ բերում ենք ամբողջությամբ: Նկատենք միայն, որ այս վավերագիրը ժամանակին հայտնի էր Րաֆֆուն, սակայն հրատարակել է նրա այրին՝ Աննա Րաֆֆին 1904-ին՝ «Դավիթ Բեկ» վեպի Վիեննայի հրատարակության հավելվածում:

«Վկայագիր Ուռպէլեանց

Մեք՝ ի Սիւնեաց գաւառի բնակիչ ի ներքոյ ստորագրող անձինքս, տամք զծանօթութիւն եւ զվկայութիւն ամենայն տոհմականացն Դաւիթ Բէկին, յորմէ անմիջապէս ցմեր ժամանակ սերեալք են, առ այս, զի սոյն Դաւիթ Բէկն՝ որդի Աստուածատուր իշխանին Սիւնեաց, ունէր զհօրեղբայրս Սարգիս բէկ եւ Մէլիք Եղիայ անուն, որոց եւ բնակութիւն էր ի Ղափան գաւառի, ի բերդին Հալիճորոյ: Այլ Դաւիթ Բէկն հասեալ ի յարբունս հասակի եւ թողեալ

[31] Журналы Эриванской бекской комиссии за 1865 и 1866 годы. – Национальный архив Армении, ф. 10–14, оп. 1, д. 22, л. 84–86.

[32] *Լ ա լ ա յ ա ն. 1904, 178:*

զծնողս եւ զամենայն ազգային համացեղս իւր՝ գնաց ի Տփխիս, առ Շահնաւուզ իշխանն վրաց, որոյ եւ սիրով ընկալեալ գնա, կարգեաց զօրապետ ի վերայ զօրաց իւրոց: Եւ ինքն՝ Դաւիթ Բէկն. ցուցեալ ի պէս-պէս դիպուածս զմեծամեծ քաջութիւնս. սիրելի գտաւ յաչս իշխանին Շահնաւուզայ. վասն որոյ բնակիչք Սիւնեաց ի 1722 ամին գրեցին զթուղթ աղաչանաց առ Շահնաւուզ իշխանն՝ առաքեալ զօրաւոր ոք, զի իշխեսցէ ի վերայ գաւառին եւ յանդղրդրու պահեսցէ զՀայս որք ի նմին: Ընթերցեալ իշխանին վրաց զթուղթն եւ կոչեալ առ ինքն զզօրապետ իւր զԴաւիթ Բէկն, եւ ցուցեալ նմա զթուղթն Սիւնեցւոց յուղարկեաց գնա ի հայրենի իւր աշխարհ, որոյ եւ եկեալ, զօրաժողով արար եւ վանեալ զթշնամիս ամենայն, նստաւ քաջ զօրապետ եւ իշխան Սիւնեաց:

Հռչակահամբաւ քաջութեան սորին լուր եհաս առ Շահ-Թամրազ արքայն Պարսից, վասն որոյ ընծայամատոյց եղեւ նմին վերստին զիշխանութիւն ի վերայ Սիւնեաց եւ ամենայն գաւառաց մինչև ցԿուր գետ, եւ կրտսեր հօրեղբայր նորին՝ Եղիան Ւա, ստացեալ զմելիքութիւն ի նոյն արքայէն Շահ-Թամրազայ, իշխէր ի վերայ գաւառացն: Արդ զկնի Դաւիթ Բէկին, իշխեաց որդի իւր Սարգիս բէկն, եւ ծնեալ զորդի մի էյվազ անուն՝ մեռաւ: Էյվազն զկնի ժամանակաց ձեռնադրեցաւ քահանայ, որոյ և անունն փոխադրեալ կոչեցաւ Տէր Սարգիս, որ կայ այժմ կենդանի, եւ ծնեալ է զերկուս որդիս, յորոց մինն է այժմ Տէր Ստեփան անուն քահանայ, եւ միւսն հանգուցեալ՝ եթող զորդիս, որք կան արդէն կենդանի, Հօրեղբայր Դաւիթ Բէկին Սարգիս բէկն ծնաւ զմելիք Պալին: Մելիք Պալին ծնաւ զմելիք Փարսադանն, եւ սա ծնաւ զմելիք Յոհաննէսն, որ կայ արդէն կենդանի: Միւս հօրեղբայր Դաւիթ Բէկին՝ Մելիք Եղիան, ծնաւ զմելիք Հարութիւն, և սա ծնաւ զմելիք Ստեփաննն, եւ սա ծնաւ զհանգուցեալ Տէր Կարապետ քահանայն, որոյ որդիքն են արդէն կենդանի՝ Մահտեսի Յոհաննէսն եւ Յակովբն, Արդ՝ իշխանազն եւ աղնուատոհմ գոլ սոցին վկայեմք կնքով եւ ստորագրութեամբ, թէ՛ հոգևորական եւ թէ՛ աշխարհական 60, 70 եւ 80 ամեայ անձինք:

Ի 25 սեպտեմբերի 1835 ամի ի Սիւնիս Արքեպս. Սիմէոն Տաթևացի
Արքեպս. եւ ասպետ, մետրապոլիտ համայն Հայոց Աղուանից՝
Բաղդասար Հասան-Ջալալեանց
Վիճակաւոր առաջնորդ թեմին Ղարաբաղու՝
Սարգիս արքեպս. Հասան-Ջալալեանց
Այնուհետև հաջորդում են եւս 27 ստորագրութիւններ»[33]*:*

Այս վկայութեան մէջ ոմանց մասնակցութիւնն ու ստորագրութիւնները կասկածի տակ է առել Ն. Ադոնցը՝ տարբեր հիմնավորումներով, ինչը, սակայն, այս պարագայում էական չէ, որովհետև, ամենայն հավանականութեամբ, կատարվել է փաստաթղթի կարևորությունն ընդգծելու համար և կապ չունի նրա բովանդակության հետ:

Ըստ այս վկայագրի՝ Դավիթ Բեկը այսնյաց Աստվածատուր իշխանի որդին է, ունեցել է 2 հորեղբայր՝ Սարգիս բեկը և Մելիք Եղիան, որոնց ծննդաբանական տախտակները հետևյալն են.

---

[33] *Ր ա ֆ ֆ ի. 1986, 580:*

1. Աստվածատուր իշխան	2. Սարգիս բեկ	3. Մելիք Եղիա
Դավիթ Բեկ	Մելիք Պալի	Մելիք Հարություն
Սարգիս բեկ	Մելիք Փարսադան	Մելիք Ստեփան
Էյվազ (Սարգիս քահանա)	Մելիք Հովհաննես	Կարապետ քահանա

Այս տախտակների ստույգության առումով, անկասկած, կարևոր է այն, որ եղբայրների թոռնորդիները՝ Սարգիս քահանան, Մելիք Հովհաննեսը, Կարապետ քահանան և նրա երկու զավակներ Մահտեսի Հովհաննեսն ու Հակոբը 1835-ին ողջ են եղել, և վկայագիրը, ըստ Աղոնցի, գրված էր ներկայացնելու ռուսական կառավարությանը՝ նրանց ազնվական և թերևս իշխանական կարգը դասելու համար՝ հաստատելու, որ նրանք «իշխանազն են եւ ազնուատոհմ»[34]:

Վկայագրից հետևում է նաև, որ պարսից շահ Թահմազ Ղուլին (Թահմասպ Բ) Դավիթ Բեկին Սյունյաց իշխանությունն ընծայելու («ընծայամատոյց եղեւ նմին») հետ միաժամանակ մելիքություն է շնորհել նաև նրա կրտսեր հորեղբորը՝ Եղիային: Այսինքն՝ Եղիայի՝ Աստվածատուր իշխանի եղբայրը լինելու հանգամանքն արձանագրված է նաև Թահմազ շահի գրության մեջ, և կասկածի տեղիք տալ չի կարող: Իսկ Դավիթ Բեկն ունեցել է որդի՝ Սարգիս Բեկ, որի որդի Էյվազը քահանա է ձեռնադրվել և վերանվանվել Տեր Սարգիս: Հավանաբար, այս Տեր Սարգսի որդիներն են վերոհիշյալ փոխգնդապետ Ստեփան Դավիդովը՝ Գրիգորիուպոլսի դատավոր, և Իսահակ վարդապետը, որը Էջմիածնի միաբան էր, կաթողիկոսական նվիրակը Կ. Պոլսում և Զմյուռնիայում[35]:

Այժմ, եթե այս ծննդաբանական տախտակի 2-րդ սյունակը՝ Սարգիս բեկի ճյուղը, համադրենք Ե. Լալայանի կազմած Մելիք Փարսադան Ա-ի տոհմածառի ավագ սերնդի ճյուղագրության հետ[36], կունենանք հետևյալ պատկերը.

Ըստ Ուռվելեանց վկայագրի	Ըստ Լալայանի կազմած ճյուղագրության
Սարգիս բեկ	Մելիք Փարսադան Բ
Մելիք Պալի	Մելիք Սաֆրազ և Պալի Բ
Մելիք Փարսադան	Մելիք Փարսադան Գ
Մելիք Հովհաննես	Մելիք Հովհաննես

Այսինքն՝ այս անվանացանկերը բացարձակ նույնական կդառնան, եթե 1-ին սյունակի Սարգիս բեկ անունը փոխարինվի Մելիք Փարսադան Բ-ով: Մնում է հավաստիանալ ընդամենը, որ այդ անձնանուններն իսկապես վերաբերում են նույն անձին: Այդ բանում օգնության է գալիս 1726-ի մարտի 25-ին Մխիթար Սպարապետի գլխավորությամբ կազմված, Ռուսաստանի

[34] Ա դ ո ն ց. 2006, 67:
[35] Ա բ ր ա հ ա մ յ ա ն. 1977, 63–79:
[36] Լ ա լ ա յ ա ն. 1904, 178:

կառավարությանն ուղղված օգնության ուղերձը[37]: Բանն այն է, որ այս փաստաթուղթը ստորագրողների թվում էր նաև Ղափանի Մելիք Սարգսի որդի Պալասանը (նույն ինքը՝ Պալին). փաստաթղթի շրջերեսին դրված է նաև նրա կնիքը՝ Սարգիս և Պալասան մակագրությամբ, որոնց մեջտեղում խաչի պատկերն է, իսկ կնիքի կենտրոնում՝ Ռձ/լա մակագրությունը, որը, հավանաբար, տարեթիվ է՝ 1132, հայոց թվագրությամբ, այն է՝ 1683:

Այսինքն՝ Մելիք Փարսադան Բ-ն այդ փաստաթղթում ներկայացված է նաև Սարգիս անունով, իսկ 1683-ն առաջին մոտավորությամբ կարող է լինել նրա որդի Պալասանի ծննդյան տարեթիվը:

Դավիթ Բեկի ծագումնաբանության վերաբերյալ վերջին շրջանի միակ հոդվածի հեղինակ, լրագրող Սողոմոն Օրբելյանը շատ հպանցիկ է անդրադարձել խնդրո առարկային, որևէ հետազոտություն չի կատարել, ընդամենը գրել է՝ «… Ալիշանի «Ուռբելեանց ցեղն այ» խորագրով տոհմածառի բացատրագիրը («Սիսական», 97), Րաֆֆու «Դավիթ Բեկը» (էջ 163), Զամչյանի «Պատմութիւն հայոց»-ի Գ գիրքը (էջ 72, 1958, Վենետիկ), «Արմենիա» (Մոսկվա, էջ 308, 1967) աշխատությունը և Տաթևի վկայագիրը վկայում են, որ Դավիթ Բեկը սերված է Ուռբելեանց ազնվական տոհմից»[38] և ոչ ավելին: Ընդ որում, հենվելով Ալիշանի վերոհիշյալ անդրադարձին, որտեղ ներկայացված է Ուռբելյանց տոհմի 7 սերունդ և տախտակն ավարտված Մինասի որդիներ Աստվածատուր և Ստեփան եղբայրներով՝ նրանցից առաջինին Ս. Օրբելյանն ընդունել է որպես Դավիթ Բեկի հայր, իսկ մյուսի՝ Ստեփան եղբոր գոյությունը հիմնավորելու համար գրում է, որ Տաթևի վկայագրում Ստեփանը թյուրիմացաբար ներկայացված է որպես Եղիայի թոռ: Այն, որ տեղեկագրում որոշ չփոթություններ կան, ակնհայտ է, բայց, որ այստեղ անտեսված է ամենագլխավորը՝ Ալիշանի մոտ եղբայրները ոչ թե Մելիք Բալիի (Պալասանի), այլ Մինասի որդիներն են, մեզ անհասկանալի է մնում: Ավելին՝ Ս. Օրբելյանը, վկայակոչելով Տաթևի վկայագիրը, գրում է, որ Դավիթ Բեկն «ունէր գՀօրեղբայրս Սարգիս բէկ (Փարսաղանյանների նախնին) և Մելիք Եղիայ (Օրբելյանների նախնին) անուն»: Սակայն վկագծերում բերված արտահայտությունները բնագրում բացակայում են և, մեր համոզմամբ, իրականության հետ որևէ աղերս չունեն, որովհետև այդ տոհմերն ավելի հին են նման հիմնադիր-նախնիներ ունենալու համար:

Մյուս կողմից, քանի որ Ալիշանը քաջ ծանոթ էր Դավիթ Բեկի պատմությանը և մեկ անգամ չէ, որ հիշատակել է նրան ու բառացի մեջբերումներ կատարել Ղ. Սեբաստացու պատմությունից, նա չէր կարող հիշյալ տոհմածառում շրջանցել այդ Աստվածատուրի՝ Դավիթ Բեկի հայրը լինելու հանգամանքը, եթե դա իսկապես այդպես լիներ: Ուստի, Ս. Օրբելյանի սույն հոդվածը Դավիթ Բեկի ծննդաբանության հետ կապված անորոշությունը որևէ կերպ չի լուծում և ընդամենը կրկնում է Րաֆֆուն՝ բացառությամբ այն բանի, թերևս, որ պնդում է հիշյալ Սարգիս բեկի և Մելիք Փարսաղանի (Բ) նույնության:

[37] Арутюнян. 1952, 83–99.

[38] *Օրբելյան. 1971, 173–184:*

Հետևաբար, ապավինելով ավանդազրույցի և վավերագրի հիման վրա կազմված տոհմաբանական տախտակների համընկմանն ու անձնանունների հավաստիությանը՝ կարող ենք պնդել, որ, ամենայն հավանականությամբ, Դավիթ Բեկը Մելիք Բալի Ա-ի որդի Աստվածատուր (Ալահվերդի) իշխանի զավակն է, ինչը ժամանակին ավանդազրույցի մակարդակով արձանագրել է Ե. Լալայանը:

Այժմ, եթե Ե. Լալայանի կազմած Մելիք Փարսադան Ա-ի ճյուղագրությանն ավելացնենք Ուռպէլեանց վկայագրից հանված Աստվածատուր իշխանի չարունակության տախտակը, իսկ Շահումի կամ Շիկոյի ճյուղը փոխարինենք Մելիք Եղիայի ճյուղով, Փարսադան Բ-ի ճյուղից էյվազ բեկին տեղափոխենք Աստվածատուր իշխանի ճյուղ, ինչպես ներկայացված է Ուռպէլեանց վկայագրում, կունենանք Փարսադան Ա-ի տոհմածառի առաջին շերտի հետևյալ պատկերը.

Մելիք Փարսադան Ա

Մելիք Պալի (Բալի) Ա

Մ. Փարսադան Բ (Սարգիս բեկ)	*Աստվածատուր իշխան*	*Մելիք Եղիա*
Սաֆրազ և Պալի (Բալի) Բ	*Դավիթ Բեկ*	*Մելիք Հարություն*
Մելիք Փարսադան Գ	*Սարգիս բեկ*	*Մելիք Ստեփան*
Մելիք Հովհաննես	*Էյվազ բեկ (Սարգիս քահանա)*	*Կարապետ քահանա*
Մելիք Գալուստ	*Ստեփանոս քահանա*	

Իսկ ինչ վերաբերում է Դավիթ Բեկի ընտանեկան վիճակին՝ ամուսնացած լինել-չլինելու հանգամանքին, ապա հակառակ նրա չամուսնացած լինելու քաղաքացիությունն ստացած տեղեկության (այդ կարծիքին էր նաև Րաֆֆին. «Դավթից ժառանգ չմնաց, շատ հավանական է, որ նա ամուսնացած ևս չլիներ»)[39], ինչպես այս վկայագիրը, այնպես էլ գրավոր ու բանավոր մի քանի այլ աղբյուրներ վկայում են ճիշտ հակառակը: Նա ունեցել է ընտանիք, եղել է Թիֆլիսեցի Փարսադան բեկի փեսան, ունեցել որդի և չարունակություն: Այդուհանդերձ, նշենք, որ Դավիթ Բեկի ընտանիք ունենալու հանգամանքը շատերը չէ, որ հիշատակում են, որովհետև թաքուն է պահվել, որի համար, հավանաբար, պատճառ է եղել նրանց անվտանգության խնդիրը: Զէ՞ որ նրա ընտանիքն ապրել է Թիֆլիսում և կարող էր հաշվեհարդարի թիրախ դառնալ թշնամի թուրքերի և պարսիկների համար:

Երախտապարտ հայ ժողովուրդն, ըստ ամենայնի, գնահատել ու արժևորել է իր հերոսին. 1921-ին Կապանի հայ գինվորականությունը նոր ժամանակների իր հայրենապաշտ հերոս Գարեգին Նժդեհին սուր է նվիրել հետևյալ մակագրությամբ. «Գարեգին Նժդեհին, որին Ղափանն անվանեց 2-րդ Դավիթ Բեկ ...», իսկ 1978-ին Կապանում տեղադրվել է նրա ձիարձանը (քանդակագործ՝ Սարգիս Բաղդասարյան):

[39] *Ր ա ֆ ֆ ի. 1985, 519:*

Ավելացնենք նաև, որ վերջերս համացանցում հայտնվել է Դավիթ Բեկի ծննդյան նոր տարեթիվ՝ 1699 թ., և նոր ծննդավայր՝ Սյունիքի Բաղք գյուղը, առանց բավարար փաստարկման: Այդ տեղեկության հեղինակին հիշեցնենք ընդամենը, որ ցայսօր եղած միակ աղբյուրը, որով որոշվել է Դավիթ Բեկի ծննդյան տարեթիվը՝ 1674 թ., Մատթեոս Թեոփիլյանի «Կենսագրութիւն երեւելի արանց» բառարանն է, որի Ա հատորում կարդում ենք՝ Դավիթ Բեկը «անկաւ հիւանդութեամբ մահու, որով մեռաւ ի Հալիճոր, յամի Տեառն 1728 ի հասակի իբր 54 ամաց, վարեալ զիշխանութիւն իւր զամս վեց»[40]: Ուստի, յուրաքանչյուր նոր թիվ ու փաստ շրջանառության մեջ դնելուց առաջ անհրաժեշտ է այն ամենայն լրջությամբ հիմնավորել:

Եզրակացություն

Սյունիքի XVIII դարի ազատագրական շարժման առաջնորդ Դավիթ Բեկի ծագումնաբանության և կենսագրության վերաբերյալ տվյալները սուղ են, եթե չասենք՝ բացակայում են: Տարբեր հեղինակների ուսումնասիրությունների վերլուծության և առանձին վկայությունների, վկայագրերի և ձեռագրերում այդ մասին եղած կցկտուր տեղեկությունների համադրմամբ՝ կարող ենք եզրակացնել.

1. Դավիթ Բեկն, ամենայն հավանականությամբ, Տաթևում ծնված սյունեցի է, որով և գուցե պայմանավորված էր նրա ընտրությունը՝ որպես Սյունիքի ազատագրական շարժումների առաջնորդի:

2. Հակառակ տարածված այն տեսակետի, թե Դավիթ Բեկն ամուսնացած չի եղել և ընտանիք չի ունեցել, վավերագրերում առկա են նրա ամուսնացած լինելու և ժառանգներ ունենալու մասին ոչ եզակի հավաստի տեղեկություններ:

3. Եթե հիմք ընդունենք «Ուռպէլեանց վկայագրում» բերված ծննդաբանական տախտակների անձնանունների հավաստիությունը, ապա մեծ է հավանականությունն այն բանի, որ Դավիթ Բեկի հայր Աստվածատուր իշխանն իսկապես եղել է Մելիք Փարսադանի տոհմից՝ Մելիք Բալի Ա-ի որդին, Մելիք Փարսադան Բ-ի (Սարգիս բեկ) և Մելիք Եղիայի եղբայրը, որը ժամանակին արձանագրել է Ե. Լալայանը:

Հովհաննես Այվազյան – ք. գ. դ., «Հայկական հանրագիտարան հրատարակչության» գլխավոր խմբագիր-տնօրեն: Գիտական հետաքրքրությունները՝ հայկական քիմիական անվանակարգության և հայոց պատմության առանձին հարցեր: Հեղինակ է 1 մենագրության, 6 գեղարվեստական գրքի և շուրջ 100 հոդվածի:
hovh.ayvazyan@gmail.com

[40] *Թեոփիլեան. 1839, 185:*

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աբրահամյան Ա. Գ. 1972, Սյունիքի XVIII դարի ազատագրական շարժման պատմության շուրջ. – ՊԲՀ, № 4, էջ 159–184:

Աբրահամյան Ա. Գ. 1974, «Դավիթ Բեկի պատմության» նախագաղափար բնագրի շուրջը. – ՊԲՀ, № 4, էջ 184–206:

Աբրահամյան Ա. Գ. 1977, «Արարատյան դեսպանը» ռուսական արքունիքում. – «Բանբեր Երևանի համալսարանի», № 3, էջ 63–79:

Ադոնց Ն. 1937, Դավիթ բէկ եւ Տէր Աւետիքի սերունդը. – «Հայրենիք» (Բոստոն), թիւ 2, էջ 67–71:

Ադոնց Ն. 1937. – «Դավիթ Բեկ» վեպի պատմական հիմքը և գաղափարախոսական արժեքը. – Րաֆֆի (Հակոբ Մելիք–Հակոբյան). Կյանքը, գրականությունը, հիշողություններ, Փարիզ, էջ 122–148:

Ադոնց Ն. 2006, Երկեր, հ. Ա, Երևան, ԵՊՀ հրատ., 652 էջ:

Ալիշան Ղ. 1893, Սիսական, Վենետիկ –Սբ.Ղազար, 643 էջ:

Այվազյան Ա. Մ. 1990, № 2, 1720-ական թվականների Սյունյաց ազատագրական շարժման պատմությունից (սկզբնաղբյուրների համադրման փորձ). – ՊԲՀ, էջ 119–134:

Այվազյան Ա. Մ. 1990, № 3, Դավիթ Բեկի Հայաստան գալու ժամանակն ու հանգամանքները. – ՊԲՀ, էջ 76–85:

Այվազյան Ա. Մ. 1992, «Ղափանցվոց պատմության» ժամանակագրության հավաստիությունը և կառուցվածքը. – ՊԲՀ, № 1, էջ 85–100:

Այվազյան Ա. Մ. 2006, «Ղափանցվոց պատմության» «երրորդ» նախնական պատումը. – «Բանբեր Մատենադարանի», № 17, էջ 177–188:

Բարսեղյան Խ. 1985, Այսպես ապրեցին, Երևան, «Հայաստան», 432 էջ:

Գյուլամիրյանց Ա. 1871, Ընտիր պատմութիւն Դաւիթ բէգին եւ պատերազմաց Հայոց Խափանու, որք եղեն ընդդէմ Թուրքաց ի մերում ժամանակի, այն է յամի տեառն 1722 և հայոց 1171, Վաղարշապատ, տպ. Ս. Էջմիածնի, 136 էջ:

Գրիգորյան Գ. Մ., Հախվերդյան Ս. Գ. 2001, Սյունիքի պատմություն, Երևան, «Գրիգոր Տաթևացի», 316 էջ:

Լալայան Ե. 1904, Զանգեզուրի գաւառ. Կապան կամ Ղափան. Պատմական համառօտ տեսութիւն. – Ազգագրական հանդէս, գիրք XII, Թիֆլիս, էջ 175–202:

Լեո. 1946, Հայ զինվորությունը Ղափանում. Դավիթ Բեկ. – Հայոց պատմություն, հ. 3, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ, էջ 665–699:

Լիսիցյան Ս. 1969, Զանգեզուրի հայերը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 334 էջ:

Խաչերյան Հ. Գ., Խաչատրյան Հ. Ն. 1974, Դավիթ Բեկի «Ընտիր պատմության» նախագաղափար օրինակի մասին. – ՊԲՀ, № 1, էջ 201–220:

Ծագումն Դաւիթ-Բէկի (հատված Մովսէս քահանայ Մելիք-Ստեփանեանցի յիշատակարանից). – «Բանասէր» (Պարիս), 1902, № 12, էջ 381–382:

Հակոբյան Վ. 1954, Ուշագրավ աշխատություն պրոֆ. Աշ. Աբրահամյանի «Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից» (Երևան, 1973) աշխատության առթիվ. – «Տեղեկագիր» ՀՍՍՀ ԳԱ հաս. գիտ., № 6, էջ 101–106:

Հովհաննիսյան Ա. Գ. 1970, Դավիթ Բեկի գլխավորած Ղափանի ապստամբությունը. – «Բանբեր Երևանի համալսարանի», № 1, էջ 96–111:

Ղլտճյան Ա. 1905, Նիւթեր Դաւիթ Բէկի պատմութեան վերաբերեալ. – «Արարատ» (Վաղարշապատ), № 4, էջ 382–387:

Ղուկաս Սեբաստացի. 1978, Դաւիթ բէկ կամ «Պատմութիւն Ղափանցւոց», Վենետիկ–Սբ. Ղազար, 240 էջ:

Ղուկաս Սեբաստացի. 1992, Դավիթ բեկ կամ պատմություն Ղափանցոց, Երևան, ԵՊՀ, 112 էջ:

Մադոյան Ա. Գ. 1973, Դիտողություններ Դավիթ Բեկի ապստամբության պատմության շուրջը. – ՊԲՀ, № 3, էջ 179–193:

Միրզոյան Ա. 1952, Մխիթար Բեկի կողմից ռուսական կառավարությանն ուղղված ուղերձի հարցի շուրջը. – «Տեղեկագիր» ՀՍՍՀ ԳԱ հաս. գիտ., № 8, էջ 87–98:

Մեսրոպ եպիսկոպոս. 1921–1922, Զաքարիա նկարչի ձեռագիրը եւ Դաւիթ բէկի մասին յիշատակարանը. – «Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի», գիրք Ա և Բ, էջ 127–137:

Մ. Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 2888, 8815, 3297, 6835, 7429, արխիվային բաժին, կաթողիկոսական դիվան, թղթ. № 6, վավ. № 45, ձեռ № 2699, թ. 42 բ–43 ա:

Շիրմանզանյանց Գ. 1877, Ճանապարհորդութիւն Հայաստանումը. –«Արարատ» (Վաղարշապատ), թիւ 11, էջ 410–419, թիւ 12, էջ 447–457:

Չամչյան Մ. 1784, Պատմութիւն Հայոց՝ի սկզբանէ աշխարհի մինչեւ ցամ Տեառն 1784, հ. Գ, Վենետիկ, 1092 էջ:

Րաֆֆի. 1985, ԵԼԺ, հ. 7, Երևան, «Սովետական գրող», 606 էջ:

Арутюнян Л. Т. 1952, Послание Мхитар-бека русскому правительству. – «Известия» АН АрмССР, № 3, с. 83–99.

Журналы Эриванской бекской комиссии за 1865 и 1866 годы. – Национальный архив Армении, ф. 10–14, оп. 1, д. 22, л. 84–86.

ВНОВЬ К ВОПРОСУ О ПРОИСХОЖДЕНИИ ДАВИДА БЕКА

ОВАННЕС АЙВАЗЯН

Р е з ю м е

Ключевые слова: освободительные войны Сюника, Давид Бек, Мхитар Спарапет, Мелик Парсадан, Мелик Бали, Тер Аветик, Гукас Себастаци, Самуэль Арамян, «Избранная история…», Раффи, Лалаян, Адонц, Алидзор, Бех, Шинуайр, Татев.

Биографические данные о лидере освободительных движений Сюника в XVIII веке Давиде Беке очень скудны, если не сказать, что вообще отсутствуют. Объединив анализ исследований разных авторов, отдельных свидетельств и рукописей, можно сделать вывод:

1. Давид Бек, скорее всего, из Сюника, уроженец Татева, что, по всей видимости, и стало причиной его избрания лидером освободительных движений Сюника.

2. Основываясь на подлинности имен генеалогических записей, приведенных в Урпелеанском свидетельстве, весьма вероятно, что отец Давида Бека, Аствацатур, действительно происходил из рода Мелика Парсадана, являлся сыном Мелика Бали I, братом Мелика Парсадана II (Саргис Бек) и Ильи, что в свое время было записанно Ервандом Лалаяном.

3. Вопреки распространенному мнению, что Давид Бек не был женат, не имел семьи, в документах содержится достоверная информация о том, что он был женат и имел наследников.

Ованнес Айвазян – д. х. н., главный редактор-директор «Издательства Армянской энциклопедии». Научные интересы: вопросы армянской химической номенклатуры и некоторые вопросы истории Армении. Автор 1 монографии, 6 художественных книг и около 100 статей.
hovh.ayvazyan@gmail.com

ONCE AGAIN ON THE QUESTION OF THE ORIGIN OF DAVID BEK

HOVHANNES AYVAZYAN

Summary

Key words: the liberation movement of Syunik, David Bek, Mkhitar Sparapet, Melik Parsadan, Melik Bali, Ter Avetik, Ghukas Sebastatsi, Samuel Aramyan, "Selected History…", Raffi, Lalayan, Adontz, Halidzor, Bekh, Shinuhayr, Tatev.

The biographical information on David Bek, the leader of the liberation movement of Syunik of the 18th century, is scant or non-existent. The combined analysis of the research conducted by different authors, separute evidence and manuscripts, enables us to conclude:

1. David Bek was presumably from Syunik, born in Tatev. In all likelihood, this was the reason he became the leader of the liberation movement of Syunik.
2. Genealogy records from the Urpeleants Certificate indicate that most probably David Bek's father – Astvatsatur, actually descended from the Melik Parsadan lineage, was the son of Melik Bali I, the brother of Melik Parsadan II (Sargis Bek) and Ilya. This evidence was previously registered by Yervand Lalayan.
3. Contrary to popular belief that David Bek was not married and did not have a family, the documents contain reliable information that he was married and had heirs.

Hovhannes Ayvazyan – Candidate of Sciences in History, Editor-in-Chief of "Armenian Encyclopedia" Publishing House. Scientific interests: issues of the Armenian Chemical Nomenclature and some issues of Armenian History. Author of 1 monograph, 6 fiction books and about 100 articles.
hovh.ayvazyan@gmail.com

Doi:10.54503/0135-0536-2022.1-166

ՏԱՐԲԵՐԱԶԱՏՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԺՈՂՈՎՐԴԱՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ՃՅՈՒՂՈՒՄ*

ՄՀԵՐ ՆԱՎՈՅԱՆ

Բանալի բառեր՝ ժողովրդապրոֆեսիոնալ, աշխարհիկ պրոֆեսիոնալ, դուսան, աշուղ, «երգք ցցոց և պարուց», հաղներգություն (հռապսոդիա, ῥαψῳδία), պարերգական դրամա (խորային դրամա, χορεία):

Նախաբան

Հայ ավանդական երաժշտաբանաստեղծական արվեստի երեք հիմնական ճյուղերից ժողովրդապրոֆեսիոնալը, որը կարող է նաև միջնադարի ձևաչափով «Աշխարհիկ պրոֆեսիոնալ» կոչվել, արտահայտվել է «Գուսանական» ու «Աշուղական» կոչված արվեստների ղրսևորումով:

Այստեղ, նախ, խնդիր ենք տեսնում նշված ճյուղի տարբերազատման և նույնականացման հարցում: Նկատի ունենք այն մշակութային արտահայտությունների երկակի բնույթը, որը դասակարգվել են մերթ որպես ժողովրդական, մերթ՝ որպես ժողովրդապրոֆեսիոնալ: Երբեմն նույնիսկ ժողովրդականը «հավակնել» է ժողովրդապրոֆեսիոնալի դերակատարությանը՝ ի հակադրություն պրոֆեսիոնալի: Ասենք միջնադարյան մշակույթի քննությունը տասնամյակներ առաջ կարող էր բացահայտել բազում «առաքինություններ» պարունակող աշխարհիկ արվեստի հակադրությունը «արգահատելի» պրոֆեսիոնալ-կրոնականին և այդ հակադրության մեջ աշխարհիկը, իր ներքին բաժանումներից ու ենթաճյուղերից անկախ, որպես բնութագրիչներից «ամենավեհն ու վերինն» առնում էր «ժողովրդական» ցուցիչը[1]: Թեև, իրավ է նշել նաև այն, որ ժողովրդապրոֆեսիոնալ կամ աշխարհիկ պրոֆեսիոնալ ճյուղը, իսկապես, կարող էր ունենալ բնութագրեր, որոնք նրան կնույնացնեին ժողովրդականի հետ կամ ավելի ստույգ՝ կմատնանշեին դեռևս ամբողջությամբ չտարբերազատված, մշակութային և երաժշտաբանաստեղծական արվեստի ճյուղային նույնականացմանը հստակորեն չենթարկված իրողություններ:

Ինչևէ, գուսանականի և աշուղականի վերաբերյալ ստորև բերվող դիտարկումներում հրնթացս կերևա նաև այս հիմնահարցը: Դրա որոշ լուսաբա-

---

* *Ներկայացվել է 16. IX. 2021 թ., գրախոսվել է 23. XII. 2021 թ., ընդունվել է տպագրության 17. I. 2022 թ.:*

[1] *Խոսքը, հատկապես, հասարակարգային տեսության դիրքերից, այսպես ասած, պատմական մատերիալիզմի տեսանկյունից հարցի քննության է վերաբերում, որտեղ դասակարգերի հակադրության, պայքարի գաղափարները պրոեկցվում են մշակութային իրողությունների մեկնաբանության վրա: Համմմտ. Գ ր ի գ ո ր յ ա ն. 1980, 4–6:*

նումներ կառաջարկենք գուսանների և աշուղների արվեստին առնչվող մեր մոտեցումներին առընթեր:

Թեև գուսանների հիշատակումները, ի հակադրություն աշուղների, բավական ընդգծված ինքնուրույնությամբ երևում են հայ դասական մատենագրության բազում էջերում, այդուհանդերձ, վերջին մեկ-երկու հարյուրամյակի ընթացքում գուսանն ու աշուղը հաճախ նույնացվել են, հարադրվել և առաջացրել նաև «Գուսանաաշուղական» ձևակերպումը: Ջենք խոսում երաժշտական առօրյայում դրանց անկումյթ և վստահ նույնացումների մասին: Էլ ավելին՝ լեզվական պուրիտանիզմով տարված որոշ գործիչներ աշուղներին գուսան են անվանում, իբր մեկի օտար ու մյուսի՝ ընիկ-հայրենական լինելը չեչտելու և դրանով առաջնահերթություններ սահմանելու համար:

Գուսանի և գուսանականի, աշուղի ու աշուղականի տարանջատված ընկալումը ներկայացնելիս հատուկ նշելի է, որ Կոմիտասի կողմից աշուղներին գուսան կոչելը և դրանով նույնացնելը[2] մեզ ո՛չ հակառակն է ապացուցում, ո՛չ էլ մեր տեսակետն է հակադրում իրեն: Կոմիտասի երկերում մի շարք երաժշտական եզրեր դեռևս կայունացած չեն իր ժամանակներում համապատասխան իրողությունների դեռ ուսումնասիրված չլինելու պատճառով: Լավագույն օրինակ է ժողովրդական երաժշտական արվեստի ժանրային բաժանումների կոմիտասյան աստիճանակարգությունը, որը մեկից ավելի տարբերակներ ունի և, փաստորեն, սկսել է մշակվել հենց Կոմիտասի կողմից: Այս փուլում հայ ավանդական երգարվեստի տերմինաբանական աստիճանակարգության բազմաթիվ հանգույցներ դեռևս հստակեցված չեն: Ավանդական արվեստի շատ հարցեր՝ այդ թվում և եզրաբանական, հստակեցված ու մշակված չեն ժամանակի երաժշտական գիտության ողջ ճեռաչափով, և Կոմիտասը որոշ դեպքերում դրանց առաջին ուսումնասիրողներից է՝ արևմտյան գիտության չրջագծում անգամ: Ուստի, այս առումով, վերջնական և բյուրեղացած պատասխաններ նրա երկերում պետք չէ փնտրել. քննարկվող դեպքում հարկ է անդրադառնալ արդի գիտության կուտակած փորձին:

Այդուհանդերձ, հարկ է նկատել նաև, որ, նչված չփոթին զուգահեռ, այսօր մի շարք հիմնարար հետազոտություններով արդեն հաստատված է գուսանականի և աշուղականի տարբերակվածությունը: Դրանք, իհարկե, դիտարկվում են հայ ավանդական երաժշտաբանաստեղծական արվեստի ճյուղերից մեկի ընդհանրություններով միավորված, սակայն նաև ներքին որոշարկվածությամբ, երբեմն նույնիսկ՝ ներհակությամբ: Այս առումով մեզ համար կարևոր են ակադ. Մ. Աբեղյանի, Գ. Լևոնյանի, Բր. Կուշնարյանի և ժամանակակից ուսումնասիրողներից Լ. Երնջակյանի հետազոտությունները: Որոշ կետերում

---

[2] *Կ ո մ ի տ ա ս. 1941, 16–17: Հարկ է նկատել, որ այդ անդրադարձի մեջ Կոմիտասը բավական խիստ է արտահայտվում «գուսանների», իրականում՝ աշուղների օտար մշակութային հակումների մասին: Նույն մոտեցումն է արտահայտված նաև «Հայ եկեղեցական ու ժողովրդական երաժշտության յատկանիշները, – օտար երաժշտութեանց ազդեցութիւնը հայ եկեղեցական եւ աշուղական երաժշտութեան վրայ» խորագրով կարդացած դասախոսության մեջ (1914 թ., Փարիզ), որտեղ արդեն հստակ խոսում է աշուղների մասին (Կ ո մ ի տ ա ս Վ ա ր դ ա պ ե տ. 2007, 187, 193):*

մնում է միայն մի քանի չեչոտադրումներ անել և հստակեցնել տարբերակիչների կշռելի քանակությունն, հարացույց:

Ի տարբերություն գուսանների և գուսանական արվեստի, որոնց մասին արդի պատկերացումներն առավել չափով դրքային են, մասամբ՝ պահպանված գեղարվեստական տեքստերով պայմանավորված[3] և ավելի քիչ՝ երաժշտաբանաստեղծական նմուշներով, վեպի երգվող հատվածներով[4], Ակնա երգերով[5], հայ աշուղների արվեստը տակավին կենդանի ժառանգություն է: Ուստի անհամեմատ ավելի դյուրին է հետաքրքրող մի շարք բնութագրեր նախ հստակեցնել այս ոլորտում, ապա անդրադառնալ գուսանական արվեստի համարժեք համեմատելիների որոշարկմանը:

Գուսան և աշուղ

Հայ ավանդական երգարվեստի այս երկու արտահայտությունների բաժանարարը մենք համարում ենք դրանց ձևավորման ու զարգացման հիմքերի և ժամանակափուլերի, ենթաճյուղերի (ներճյուղային բաժանումների), գեղարվեստական բնութագրերի, արտահայտչաձևերի, կիրառած ժանրերի տարբերությունն ու տարասեռությունը:

Բնավ նպատակ չունենալով տալու աշուղական արվեստի բնութագրիչների ամբողջական համակարգը՝ բերենք սոսկ մի քանիսը, որը համապատասխան են մեր առանձնացրած տարբերակիչներին:

Հայ աշուղական արվեստի գրեթե բոլոր ակնառու հետազոտողներն այդ արվեստի ազգային ակունքների հետ մատնանշում են համաարևելյան երաժշտաբանաստեղծական արվեստի հարուստ շերտերը: Զմտնելով մանրամասների մեջ՝ նկատենք, որ ազգային հիմքերից նշվում են միջնադարյան գուսանների, աշխարհիկ տաղասացների, քաղաքային երաժիշտ-կատարողների արվեստը: Արևելքն այստեղ ներկա է արվեստի կրողին ցուցանող «Աշուղ» (աշըղ, աշըգ)՝ արաբերեն սիրահար (նաև՝ տարփածու) բառով[6], ապա՝ տաղաչափական և մեղեդիական մոդելների, ժանրերի, թեմատիկ ու կերպարային դաշտերի և ավելի կամ պակաս չափով ընդգծված այլ ժառանգականությամբ:

Դեռևս միջին դարերում Արևելքի տարբեր մշակույթներում հիշատակելի են վիպական, էպիկական, քնարական արվեստի զանազան ենթատիպեր, որ իրենց բնութագրերով իրավացիորեն կարող են դիտվել աշուղական արվեստի նախահիմք: Լ. Երնջակյանը նրանց տիպականացնում ու նույնականացնում է իրանական, արաբական և արևելյան այլ մշակույթների հիմքի վրա: Սակայն իրավացիորեն չեչոտում է նաև արևելյան պրոֆեսիոնալ երաժշտարվեստի զարգացման մեջ հայ վարպետների և հայ երաժշտական մշակույթի գործուն դերը՝ ենթադրելով տարածաշրջանային ընդհանուր ավանդույթի մի

---

[3] *Աբեղյան. 1967:*

[4] *Գրառեցին՝ Կոմիտաս, Ա. Քոչարյան, Սպ. Մելիքյան, Վ. Սամվելյան, Մ. Մուրադյան, Մ. Բրուտյան, Ա. Փահլևանյան և այլք: Առավել ամբողջական Սահակեան, Փահլեան. 1996, տե՛ս նոտային հավելվածներ՝ 100–122:*

[5] *Հ. Ճանիկյանից գրառեց Կոմիտասը որպես «Ակնա շար» (դրանց կարող են հավելվել Գ. Մեհտերյանի և Մ. Թումաճանի գրառումները ևս). Կոմիտաս. 1999:*

[6] *Լևոնյան. 1944, 7:*

լային արեալի գոյությունն, որում «ազգային մենաշնորհների» սահմանման փորձը գիտականորեն անարդյունք մի բան է[7]:

Թեկուզ և այդպես. ուրեմն հայ աշուղական արվեստի ակունքները մի կողմից հայ միջնադարյան գուսանական-քաղաքային արվեստի շերտերում են, մյուս կողմից՝ համաարևելյան երաժշտաբանաստեղծական ավանդույթի ընդերքում:

Եթե Լ. Երնջակյանի համեմատական հետազոտություններն այդ արևելյան ընդհանրական ավանդույթի համաբնույթ արտահայտությունները դիտարկում են միջին դարերից, ապա դրա վերջնական տեղայնացման և ձևավորված գեղարվեստական արտահայտությունների ժամանակափուլը մեզանում մոտավորապես XVII դարն է (չնայած մանավոր արտահայտություններին, այդ ժամանակափուլի «հնեցման» հաջող կամ անհաջող փորձերին): Հայ աշուղական արվեստի այլևս ինքնուրույն դիմագիծը բնութագրող ավանդական դպրոցներն ու վերջնական «ազգայնացումը» XIX–XX դդ. մշակութային արդյունք են: Ի դեպ, վերջինն՝ աշուղական արվեստի ազգայնացումը, պնդում ենք, որ զուգահեռ պետք է դիտվի հայ պրոֆեսիոնալ-կոմպոզիտորական արվեստում և, ընդհանրապես, XIX դ. հայ հասարակական-քաղաքական մտքի այլ ոլորտներում նկատված համաբնույթ իրողություններին:

Աշուղությունն՝ իր տարբեր ենթատեսակներով հանդերձ, բավական կուռ նկարագրով բնութագրվող արվեստ է: Մենակատարային թե անսամբլային, գյուղական, քաղաքային կամ պալատական, ստեղծող-կատարող ու սոսկ կատարող ենթաբաժանումներով հանդերձ՝ այս արվեստը, հիմնականում, կարող է բնութագրվել որպես վոկալ-նվագարանային արվեստ՝ մեկ և նույն «աշուղ» բառով նույնականացվող:

Եթե, վերն ասվածի համաձայն, Արևելքում այս ավանդույթի նախնական շերտավորումները գոյացնում են վիպական բնույթի երգախառը պատումներ, հեքիաթ, սիրավեպ և քնարական այլ ստեղծագործություններ, հայ իրականության մեջ արմատացած աշուղական արվեստը, աստիճանաբար բյուրեղացնելով իր թեմատիկ դաշտերն ու գեղարվեստական բնութագրերը, բազում այլ ճյուղավորումներով հանդերձ՝ ներկայանում է որպես հիմնականում սիրային քնարերգության (այսպես ասած՝ վարդի և սոխակի) ու բարոյախրատական բովանդակության արվեստ[8]:

Կիրառվող ժանրերի աստիճանակարգությունը թեև զարգացած է, սակայն որոշակիորեն առանձնանում են գովերգը՝ աշուղական գովքը, դաստանը, խրատը, ամենածավալուն վոկալ-նվագարանային կերտվածքը՝ սիրավեպը (հանելուկը, հեքիաթը, մրցության նպատակով ստեղծվող վարպետության ցուցադրանքի երգերը չենք անտեսում):

Այսքանը բավարար համարելով աշուղականի վերաբերյալ՝ դառնանք գուսանական արվեստի մեկ-երկու ցուցիչի քննարկմանը, որ, հուսանք, նույնակարգ բնութագրիչների հարացույց կապահովեն համեմատության համար:

---

[7] Ե ր ն ջ ա կ յ ա ն. 2009, 39:

[8] Գ. Լևոնյանն աշուղական արվեստում առանձնացնում է յոթ թեմատիկ ոլորտ, որոնցից այս երկուսն առանցքային տեղ են զբաղեցնում. տե՛ս Լ ե ո ն յ ա ն. 1944, 8–15:

Գուսանական արվեստի պահպանված նմուշների մասին խոսելն այստեղ որոշակի բարդություն ունի, որովհետև նախ անհրաժեշտ է հստակեցնել այս արվեստի կազմն ու բնութագրերը, ապա միայն որոշարկել դրա գեղարվեստական արտահայտությունները:

«Գուսան» բառի բազում հնարավոր բացատրություններից նախապատվությունը տալիս ենք «գովասան» բառին[9] (Գէորգյան, ըստ Մովսես Խորենացու), որ Հր. Աճառյանը բերում է՝ ի շարս այլ բացատրությունների: Թեև բառը ստուգաբանում է այլ հիմքով՝ չմոռանալով նշել, որ իր բերած համեմատական դիտարկումները հակադիր են Հ. Հյուբշմանի հայեցակետին:

Այդուհանդերձ, գովասանը հստակ և բացատրելի համադրվում է գուսանական արվեստի վերաբերյալ մեր պատկերացումներին: Մյուս կողմից՝ Արևելքի որոշ մշակույթներում երաժշտաբանաստեղծական իրողություններ ցուցանող «օգան» բառի հայկական ծագումը ևս անուղղակի փաստարկ է հօգուտ «գովասանի»[10]: Միևնույն ժամանակ կա ևս մեկ զուգահեռ, որ դարձյալ Հր. Աճառյանի ստուգաբանություններից կարող է բխել: «Գուշակ» բառի հիմքը կազմող հնդեվրոպական gŭš (գենդ.), ghuš (սանս.), ghus (հնդեվ. նախալեզու) արմատները համապատասխանաբար նշանակում են՝ «լսել, ականջ դնել», «բղավել, հայտարարել», ապա՝ «հնչել, գոչել», իսկ՝ «… պարզական ghu արմատը պահուած է գովել բառի մէջ»[11]: Արդյոք հնարավո՞ր է գուսանը ծագեցնել ghus կամ ghu հնդեվրոպական նախալեզվային արմատներից. թողնում ենք լեզվաբանների վճռին, բայց այն, որ «գովասան» ու «գովել» բառերը նույն իմաստաբանական շրջանակն են մատնանշում, ակնհայտ է[12]: Մյուս կողմից՝ բերված հնդեվրոպական արմատների նշանակությունը ևս շրջագծում է իմաստների այն դաշտը, որ ուղիղ ծածկում է «գուսանն» ու «գուսանությունը» կամ անուղղակի առնչակցվում, սերտաճում դրանց: Իսկ «գուշակն» այլ դիրքերից ևս, կարծեք, կարող է համադրվել «գուսանին», որը կփորձենք ցույց տալ:

Սակայն, գուտ լեզվական իմաստից զատ, գուսանի ինչ լինելը Նոր բառգիրքն է մեկնում՝ բերելով և՛ մատենագրական հիմքեր, և՛ օտար համարժեքներ: Վերջիններս՝ հիմնականում կատակերգական արվեստի արտիստին նկատի ունեն, կատակերգականի առավել լայն ընկալումով. կատակերգու, խեղկատակ, «խաղացօղն կամ երգիչն ՚ի թատրոնս»: Առաջին իմաստը հենց μίμος*-ն է (միմոս): Բեմական արտիստի ուղիղ ցուցիչ են նաև* ՙο ἐπί σκηνής*-ն ու* Histrio scenicus*-ը: Մատենագիտական վկայություններում թատերային տարրի ընդգծումն ուղեկցվում է մերթ երգային, մերթ պարային բնութագրիչների հարադրությամբ. « … գուսան երգեցիկ դիւական ՚ի խաղս թեատրօնի», «Այլք ՚ի գուսանաց և ՚ի կաքաւչաց ընդ երկինս թռեան»: Իսկ ահա «գուսանական» մակդիրն առավել երաժշտական բովանդակություն ունի. «գուսանական գործիք, կամ երգք, կամ դայլայլիկք … »[13]:*

---

[9] *Համմտ. Երնջակյան. 2009, 36:*
[10] *Համմտ. Երնջակյան. 2009, 38:*
[11] *Աճառյան. 1971, 596–597:*
[12] *Աճառյան. 1971, 582–583:*
[13] *Նոր Բառգիրք Հայկազեան լեզուի. 1979, 582:*

Այսուհանդերձ, թե՛ նշված բնութագրերը, թե՛ այդ արվեստից պահպանված նմուշներն ամբողջական պատկերացում չեն տալիս դրա ինչպիսին լինելու մասին: Պարզ արտահայտվելիս հարկ է գտնել այն արվեստական համակարգը, որում հիշատակված բոլոր տարրերն օրգանական, բայց որ կարևոր է՝ պատմականորեն վկայված, իրական, իրենց ժամանակի մեջ կենդանի և ոչ մտացածին ամբողջություն են կազմել: Այլապես, մեր ունեցածն ու կարդացածը մի բանի մասին է, որ մեկ երաժշտական է, մեկ՝ պարային, մեկ էլ՝ թատերային ու երգչական և այլն:

Հարցի լուծման բանալին, թերևս, գուսանական արվեստի ժանրային արտահայտությունների հետազոտությունը կլիներ, քանի որ նշված գեղարվեստական ամբողջական արտահայտությունը ստեղծագործություն է՝ ժանրային հատկանիշներով բնութագրված:

«Երգք ցցոց և պարուց», «Հադներգություն»

Մեկնակետը դարձյալ մատենագրական բանաձևումներն են, որ այս դեպքում ընդգրկում են IV–V դարերից մինչև բարձր միջնադար: Այս հատվածում ամենակարևոր աղբյուրը, ինչպես շատ դեպքերում, Սբ. Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» է: Դրա հետ մեկտեղ կարևորվում են նաև Ագաթանգեղոսի ու Փավստոս Բուզանդի երկերը, բարձր միջնադարից՝ Սբ. Գրիգոր Նարեկացու, Գրիգոր Մագիստրոս Պահլավունու որոշ ձևակերպումներ: Հարցի առնչությամբ դիտարկումների ուրիշ շավիղ են բացում քննարկումների, համեմատությունների ու բանավեճերի առիթ տված, ողջ միջնադարն ընդգրկող Դիոնիսիոս Թրակացու Քերականական արվեստի հայ մեկնությունները[14]:

Այստեղ առանձնանում է, նախ, Սբ. Մովսես Խորենացու հիշատակած «Երգք ցցոց և պարուց» արտահայտության Հ. Հովհաննիսյանի մեկնությունը: Հեղինակի հիմնավորումն այս հարցը քննելիս այն է, որ տեսակետ կա դրամայի և բանաստեղծության լծորդված ծագման, ինչպես նաև դրամայի ու թատրոնի նախնական պարերգական նկարագրի վերաբերյալ: Հետևապես, հին բանահյուսական իրողությունների քննությունն այս լույսի տակ կարևոր է: Այդ իրողությունների տեսակային ցուցիչների մի շարք Հ. Հովհաննիսյանը, իրավացիորեն, առանձնացնում է Պատմահոր երկից՝ «երգք առասպելաց, երգք վիպասանաց, երգք թուելեաց, երգք ցցոց և պարուց»[15]: Սրանցից էլ՝ գատում վերջինը:

«Հայոց պատմությունից» քաղված այդ ձևակերպումներն այստեղ հետաքրքիր են նրանով, որ, գրեթե, բոլոր ուսումնասիրողների կողմից, ավել կամ պակաս չափով, առնչակից կամ նույնական են դիտվել գուսանական արվեստին: Ուրեմն ի՞նչ է երգք ցցոց և պարուցը և ինչ արվեստական բնութագրեր է պարունակում, որ կօգնեին հստակ հասկանալու գուսանությունը՝ գոնե այս մեկ արտահայտությամբ:

---

[14] *Քննարկվող խնդիրների առնչությամբ առանձնացնում ենք Հովհաննիսյան. 1978, նաև՝ Հովհաննիսյան. 1990, ապա նրա՝ 2010 աշխատությունները:*

[15] *Հովհաննիսյան. 1978, 106–108:*

Արտահայտությունը, ինչպես հեղինակն էլ դիպուկ նկատել է, Սբ. Մովսես Խորենացին կիրառում է իր նպատակներից ելնելով, որն իհարկե, «արվեստագիտական» չեն, սակայն իր բնութագրումի մեջ հիշատակած սակավ բառերն արդեն արվեստագիտական ողջ տեսություն ծնելու ներունակությամբ են օժտված: Հիշատակությունն այս է, որ Հ. Հովհաննիսյանի դատողական չղթայի հիմքում է դրվել. «Բայց առաւել յաճախագոյն հինքն Արամազնեայց ի նուագս փանդռան և յերգս ցցոց և պարուց զայսոսիկ ասեն յիշատակաւ»[16]: Մեզ շատ հետաքրքիր նվագ, փանդիռ, երգ բառերը ոչ մի տարընթերցման տեղիք, կարծեք, չեն տալիս: Այլ է բանը՝ կապված «երգք ցցոց և պարուց» ամբողջական բանաձևումի հետ: Հեղինակը վկայակոչում է դրան անդրադարձած հետազոտողների գրեթե ողջ ցանկը: Իր առաջարկի հիմնական առանցքն այն է, որ նախ հարկ է ճիշտ մեկնաբանել պար, ցուց/ցուցք և ցույց բառերը՝ նկատի առնելով դրանց հին իմաստները, ապա՝ զատելով-բաժանելով վերջին զույգը՝ երգը-պարը-ցուցը համադրել որպես մեկ-միասնական իրողության բնութագիր: Այլապես, եթե Պատմահոր արտահայտությունը մեկնաբանենք բառերի տարանջատ և ժամանակակից իմաստներով (օրինակ՝ պար բառը), ապա անխուսափելիորեն սխալ արդյունքի կհանգենք: Ուրեմն, պարն այն պլաստիկ արվեստի ենթատեսակը չէ, որ կարող էր այսօր հասկացվել այդ անվամբ, այլ պարերգը՝ χορεία, χορός (խորեա, խորոս) բառերի համարժեքը[17]: Այստեղից էլ Հովհան Մամիկոնյանի հիշատակած պարաւորքը χορευτής-ի (խորեվտես) նույնիմաստն է, որ կարող է նաև պարերգակ կոչվել: «Արամազնյան հնները» մեզ սովոր իմաստով պար ասելիս կօգտագործեին կայթ, Կաքաւք բառերը, թեև չենք անտեսում դրանց և պարի իմաստաբանական աղերսները ևս:

Ուրեմն կարող ենք եզրահանգել՝ «երգք ցցոց և պարուց» արտահայտությունը, կարելի է ասել, հայերեն առաջին գեղարվեստական եզրաբանական նշանակության բանաձևերից է, որ, հիրավի, Մեծ Պատմահայրը մշակել է հին աշխարհին հայտնի ու մեզանում իր օրերին կենդանի կենցաղավարում ունեցող կոնկրետ գեղարվեստական իրողությունը գիտականորեն նույնականացնելու համար:

Այդ եզրաբանական բանաձևը, ըստ Հ. Հովհաննիսյանի պարերգական դրամայի ցուցիչն է, որում երգային՝ խմբային և մենակատարային տարբերակմամբ, նվագարանային, պլաստիկ-թատերային տարրերը համաճուլ են նախնական միասնականությամբ. այդ գեղարվեստական արտահայտությունը սինկրետիկ է, իր տերմինով՝ միակառույց: Եվ եթե սա գուսանական արվեստ է, ապա այն սինկրետիկ արվեստ է՝ նշված բոլոր բնութագրերից չաղախված:

Այս իրողության ուղիղ կապը գուսանության հետ ևս մեկ խիստ որոշ գուգահեռական եզրով է ապացուցվում: Դրանում կարող ենք նշմարել այլ ժանրային որոշարկումներ ևս, որոնք, հարստացնում են «գուսանականի» մեր ընկալումները կամ այն բնութագրերը, որով կարող ենք նույնականացնել «գուսանականը»:

---

[16] *Մովսեսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց. 1913, 27:*

[17] *Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 1978, 117:*

«Հագներգուհիւն» եզրը, որ Դիոնիսիոս Թրակացու հայ մեկնիչները մշակել են որպես ῥαψῳδία (հռապսոդիա) եզրի հայերեն համարժեք, ըստ ամենայնի, տեսակային ցուցիչ է: Սակայն, ինչպես հին և միջնադարյան եզրաբանական նշանակութեան շատ բառեր՝ խիստ բազմիմաստ է և կարող է նշանակել միաւոր արվեստի տեսակից մինչև դրա կատարման եղանակ[18], գրական-երաժշտական ստեղծագործութեունից մինչև ժամանակի գիտական չարադրանք, դրա ամբողջութեունից մինչև առանձին մաս և այլն[19]: Եվ, այնուհանդերձ, հագներգուն (հռապսոդ) գուսանն է[20]: Այն, Հայր Ղևոնդ Ալիշանի վկայութեամբ, ցուցքն է, որը վկայակոչում է Հ. Հովհաննիսյանը[21] հաջորդիվ անդրադառնալով ցուցի-ցուցքի մասին վերը չարադրվածին: Այսինքն այս բառն էլ նախորդ արտահայտութեանը սերտ առնչակից իմաստ է արտահայտում:

Իր իմաստներից մեկով հագներգութեունը հոմերական հիմների կատարման ավանդույթի նշանակ է: Այն քննութագրվում է որպես «կարկատուն», երևի հարկ է հասկանալ՝ «հյուսվածո» կամ ուղիղ՝ «հյուսվածք», ստեղծագործութեուն, որ կատարողը ներկայացնում էր սարդենի ճյուղը կամ գավազանը ձեռքին (այստեղից՝ նաև գավազանագործութեուն) և, ըստ ամենայնի, որոշակի թատերային տարրերով հագեցած կատարողական վարպետութեամբը: Ստեղծագործութեան նյութը հոմերական պոեմներն էին: Հասկանալի է, որ դրանք չպետք է չփոթվեն հենց Հոմերոսի պոեմների հետ, այլ ավելի ուշ ձևավորված հոմերոյիդների ավանդույթին են մատնանշում: Մանավանդ որ հայ մեկնիչներից մեկը ուղիղ խոսում է Ապոլոնի առասպելի մասին, որն հոմերական պոեմների շարքին կարող է դասվել. դրանք հունական աստվածներին նվիրված ստեղծագործութեուններ էին[22], որոնցից ամենանշանակալին, նվիրված էր Դիոնիսոսին: Եվ նույն մեկնիչի «… որ ի Հոմերոնէ ասացեալ քերթածացն» արտահայտութեունը չի կարող մեզ շփոթեցնել[23]: Ինչևէ, հագներգութեան ունեցած աղերսները վիպականի և թատերականի հետ ակնբախ են: Այս նկատառումով է նաև հագներգութեանն անդրադարձել Հ. Հովհաննիսյանը[24]: Ավելին, հայ մեկնիչների բերած բացատրութեուններում նա մատնանշում է այլ տեսակային որոշարկումներ ևս, որ ակնհայտորեն հայ միջնադարյան իրականութեան մեջ բառին վերադրված իմաստային չերտեր են ցուցանում[25]: Հենվելով Գրիգոր Մագիստրոսի մեկնութեյանը՝ «երաժշտական հագներգութիւնք»-ը, «առականք հագներգութիւնք»-ը, ըստ Հ. Հովհաննիս-

[18] Դրա մասին առիթ ունեցել ենք խոսելու տաղ ժանրի վիպական ակունքների և եղանակավորման հարցերը քննարկելիս տե՛ս Նավոյան. 2001, 84–95:

[19] Նոր Բառգիրք Հայկազեան լեզուի. 1981, 2:

[20] Առաքելյան. 1968, 67:

[21] Հովհաննիսյան. 1978, 105:

[22] Առաքելյան. 1968, 67:

[23] Адонц. 1915, 92.

[24] Հովհաննիսյան. 1978, 99:

[25] Ի դեպ, դա վկայում է մեզանում երբեմն երևացած այն կարծիքի սխալական լինելու մասին, թե հայ մեկնիչները, իբր, մեքենայորեն փոխանցել են օտար մշակութային իրողութեունները՝ առանց ուշ դարձնելու մեզանում համապատասխան իրողութեունների առկայութեանը կամ բացակայութեանը:

յանի, տեղավորվում են Գրիգոր Մագիստրոսի նշած «ամենայն մրմունջք և երգք գուսանութեան» շրջանակի մեջ[26]*:*

Այսպիսով, ակնհայտ է դառնում Հ. Հովհաննիսյանի քննած այս երկու եզրաբանական նշանակութ յան բանաձևումների թե՛ ընդհանրութ յունն ու նույնականութ յունը գուսանականի հետ, թե՛ դրանց թատերային կամ նաև՛ թատերային բնույթը: Այս բնութագիրն ընդգծվում է նրանով, որ հեղինակը ցուցքի կամ ցցասացի և հագներգուի մեջ մարմնավորված է տեսնում պրոտագոնիստին՝ «առաջին դերասանին»[27]*:*

Հագներգութ յունը, որպես գուսանութ յան ցուցիչներից մեկը, պատշաճ հանգույց է սկզբում ակնարկված խնդիրներից պրոֆեսիոնալի կամ ժողովրդապրոֆեսիոնալի և ժողովրդականի տարբերազատմանն անդրադառնալու համար:

Գուսանականը՝ ժողովրդական, թե՞ ժողովրդապրոֆեսիոնալ

Հ. Հովհաննիսյանի բացատրութ յուններից կարելի է հասկանալ, թե հագներգութ յունը միջնադարում նույնացվել է կատակերգութ յանն այն պատճառով, որ բովանդակում է բանահյուսական տեսակների ողջ հարստութ յունը. «... սա (կատակերգութ յունը – Մ. Ն.) ընդհանուր մի անվանում է՝ տրված բանահյուսական երևույթներին և նրանց առնչվող գրական բոլոր տեսակներին»[28]*: Ուստի այդ բանահյուսականը, ապա նաև Հայր Ղ. Ալիշանի ընդգծումներով էլ հարստացած ռամկականը*[29] *հենց այն բնութագիրն է, որը կարող էր կատակերգական որակումը հաղորդել հագներգութ յանը:*

Այս բնութագրերը, կարծում ենք, հիմք են հանդիսացել այլոց համար գուսանականը կամ նրա որոշ արտահայտութ յուններ համարելու ժողովրդական արվեստ: Դրանից հետո էլ սովորական է, օրինակ, որ գուսանականի մաս կազմող վիպական արվեստը (ի մասնավորի՝ էպոսը) դասակարգվի որպես ժողովրդական արվեստ[30]*: Մինչդեռ, բազում ընդհանրութ յուններով հանդերձ,*

---

[26] Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 1978, 101–102:

[27] Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 1978, 135:

[28] Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 1978, 101:

[29] Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 1978, 104:

[30] Գր. Գրիգորյանը, օրինակ, ժողովրդական բանահյուսութ յան հիմնական հատկանիշներից մեկը իրավացիորեն համարում է դրա կոլեկտիվ բնույթը: Սակայն, այս ավազանում «Սասնա ծռերն» անպայման մկրտելու միտումով, փաստարկ է բերում, թե XIX դարում վեպն արձանագրվեց 70 ասացողից: Ապա վկայակոչում է IX դարը, որ է իր պաշտպանած տեսակետով վեպի ծննդյան դարը: Մինչ XIX դար, տասը հարյուրամյակի հաշվարկով բազմապատկվում է ասացողների թիվը և էպոսն ստանում է կոլեկտիվ բնավորութ յուն:

Այսօր դժվար է մեկնաբանել անվանի հետազոտողի այս «հաշվապահական» մոտեցումը, եթե նկատենք, որ նրան քաջ հայտնի էր վիպասացների և ասացողների այն զգուշավոր վերաբերմունքը, որով շատերը խստիվ հրաժարվում էին ինչ-որ բան հավելելու իրենց «վարպետների» ավանդածին: Ուստի, դարերի մեջ դրանց թիվը վերադրվում էր իրար՝ առաջացնելով ոչ թե պարզ գումարելիներից գոյացող բացարձակ գումարային արժեք, այլ միշտ սահմանափակ քանակութ յամբ վարպետների շրջանակ, որ ավանդածը փոխանցում էր նույնչափ նեղ շրջանակ ներկայացնող վիպասաց-ասացողների հաջորդ սերնդին: Դեռ նախորդ և հաջորդ սերունդների ազ-

դրանք տարբեր են: Եվ բանահյուսական լինելը կամ բանավոր լինելը կամ էլ ռամկական բարբառի բնութագրերը գուսանականը ժողովրդական չի դարձնում: Էլ ավելին. հակառակ այն բանին, որ բանահյուսականը նույնացված է ժողովրդականին կամ նույնիսկ՝ ֆոլկլորին[31], դրա հին իմաստն այլ էր[32]: Այն կարող էր նշանակել քերթողական, քանի որ «բանահիւս»-ը քերթողն էր[33]:

Ռամկական բնութագիրը՝ «նախնեաց ռամկօրէն» բանաձևումով, որ, ամենայն հավանականությամբ, գուսանական երկերի լեզվին է վերաբերում (կամ, գոնե, առաջին հերթին դրան), կարող է, իհարկե, մատնանշել հենց բարբառի հիմքով ձևավորվող աշխարհաբարը՝ խոսվածքի, ոչ գրի լեզուն: Սակայն չմոռանանք, որ նման բնութագրեր կարող են ունենալ նույնիսկ գրավոր լեզվի, օրինակ, գրաբարի[34] կամ միջին հայերենի[35] զարգացման որոշ փուլեր: Ուստի ռամկականը միշտ չէ, որ ժողովրդական արվեստն է մատնանշում: Այս առումով հետաքրքիր դատողություններ կարող են տանել Շապուհ Բագրատունու (IX դ.) չպահպանված պատմությունն ու դրա ռամկական բնութագրերը[36], նույնիսկ Սբ. Գրիգոր Նարեկացու տաղերի բարբառախառն լեզուն[37]:

Արվեստի այս կամ այն ճյուղին կամ ողջ մշակույթին հատուկ բանավոր ավանդման եղանակը նույնպես ժողովրդականի տարբերակիչ չէ: Այսօր Արևելքի երաժշտության դասական ավանդույթ համարվող արվեստը բանավոր ավանդույթի արտահայտություն է (կամ՝ հիմնականում բանավոր): Ավելին, դրանում առկա և վառ դրսևորված կանոնական երևույթները ևս բանավոր ավանդման սկզբունքին են ենթակա:

Շիրմին արմատավորող բազում գործոններից կարող ենք նշել հայ ավանդական արվեստի ճյուղերից ժողովրդականի ունեցած հիմնարար, մյուսների համար ակունքային նշանակությունն ու գործառույթը: Անվիճելի է, որ ժողովրդապրոֆեսիոնալ, պրոֆեսիոնալ ճյուղերը հիմնականում կամ ամբողջությամբ ձևավորվել ու զարգացել են ժողովրդական արվեստի ընդերքում, առանձնացել նրանից՝ պահպանելով սերտ աղերսներ, երբեմն նաև՝ ընդհանուր դաշտեր: Սակայն ժողովրդական արվեստի այդ հիմնարար նշանակության դրսևորումները ևս դիտարկելի և տարբերակելի են, գոնե հայ ավանդական երաժշտաբանաստեղծական արվեստի շրջանակներում: Դրանք, միևնույն է, չեն կարող զեղչել ավանդական արվեստի՝ արդեն ձևավորված այլ ճյուղերի գոյությունը:

գակցական, «դինաստիական», ուսուցիչ-աշակերտ և այլաբնույթ կապերն էլ չհաշված, որ այդ արվեստի կրողների հավաքականությանը յուրահատուկ պրոֆեսիոնալ համքարության նկարագիր էին հաղորդում: Հետևապես, այդ կոլեկտիվ ասածի ինչպիսին լինելը պարզ թվաբանությամբ մեկնաբանելի չէ: Համմտ. Գ ր ի գ ո ր յ ա ն. 1980, 6–7:

[31] *Ջ ր բ ա շ յ ա ն, Մ ա խ չ ա ն յ ա ն. 1972, 43–45:*

[32] *Ջ ր բ ա շ յ ա ն, Մ ա խ չ ա ն յ ա ն. 1972, 45:*

[33] *Նոր Բառգիրք Հայկազեան լեզուի. 1979, 434:*

[34] *Ա յ ո ն յ ա ն. 1987, 121:*

[35] *Ա յ ո ն յ ա ն. 1987, 150–151:*

[36] *Ա յ ո ն յ ա ն. 1987, 131:*

[37] *Ա ռ ա ք ե լ յ ա ն. 1975, 254, Ն ա վ ո յ ա ն. 2001, 71:*

Որպես միջճյուղային ընդհանուր դաշտ կարող է հանդիսանալ կամ չփոթմամբ այդպիսին համարվել նաև հայ երաժշտաբանաստեղծական, թատերական արվեստի ժողովրդապրոֆեսիոնալ (աշխարհիկ պրոֆեսիոնալ) և ժողովրդական ճյուղերում նույնանուն տեսակների հնարավոր առկայությունը: Սակայն դա նույնպես տարբերակելի է. օրինակ, եթե հնարավոր է ժողովրդական առակի տեսակը որոշարկել[38], ապա Մխիթար Գոշի առակները դրանից ժողովրդական չեն դառնում:

Եզակի չեն հայ ժողովրդական արվեստում ավանդական արվեստի տարբեր ճյուղերի՝ նույնիսկ վառ արտահայտված նմուշների հետագա կենցաղավարման օրինակները, որոնք այդ պատճառով ժողովրդական կոչվել մինուն է չեն կարող, այլ՝ սոսկ ավանդական: Ուրիշ խոսքով, հայ ավանդական արվեստի տարբեր ճյուղերում նկատված «ժողովրդականացման» գործընթացը ևս այդ ճյուղերի ժողովրդական լինելը չի հաստատում: Այն հայ արվեստի պատմության առանձնահատկություններով պայմանավորված երևույթ է, որ հիմնավորվում, բացատրվում, փուլայնացվում և բնութագրվում է՝ բնավ չսրբելով ավանդական արվեստի միջճյուղային սահմանները: Լավագույն օրինակներից են Սբ. Ներսես Շնորհալու՝ ժողովրդական ավանդույթում պահպանված «Առաւօտ լուսոյ» դիշերաժամու երգի մի քանի տասնյակ տարբերակները, որ կարող են բնութագրվել որպես ժողովրդականացված հոգևոր երգ, այլ ոչ՝ ժողովրդական երգ:

Խնդիրն այստեղ ավելի շատ «պրոֆեսիոնալի» որոշարկման չափանիշի մեջ է, որ այլ կարող է լինել ոչ միայն արվեստի զարգացման տարբեր փուլերում, այլև՝ մշակույթից մշակույթ անգամ:

Հիմնահարցի հնարավոր լուծման համար ժամանակին, որպես ավանդական արվեստի միջճյուղային տարբերակիչ սկզբունք, առաջարկել ենք դիտարկել անհատականացման և ավանդույթի փոխհարաբերությունը[39] նկատի ունենալով ժողովրդական արվեստի առնչությամբ Հեգելի ձևակերպած որոշ կարևոր դրույթները[40]:

Ինչևէ, հնարավո՞ր է արդյոք, որ հագներգությունը կատակերգություն կոչելու այլ հիմքեր ևս ունեցել են միջնադարյան մեկնիչները: Վստահ ենք, որ բանալին կատակերգակ-կատակ բառից պետք է բխեցնել: Դրա համարժեքներից է դիտվել նաև կատակագուսանը, գուսանը, միմոսը[41]: Հետևապես, եթե հագներգությունը, չեղվելով իր հին հունական բուն նշանակությունից, հայ միջնադարում, ինչպես տեսանք, բովանդակում էր գուսանական արվեստի բազում տեսակային երեսակներ ևս, ապա դրանք հավասար իրավունքով կարող էին որակվել գուսանական կամ կատակերգական: Գուսանական-հագներգությունը կատակերգություն էր, որովհետև գուսանը, հագներգուն, կատակը, գուսանկատակը, կատակերգակը, միմոսը նույնական էին՝ որպես նույն արվեստի արտիստ: Այստեղից էլ այդ արվեստի հավաքական անվանումը՝ հագներգություն, կատակերգություն:

---

[38] *Համմ. Զ ր ք ա շ յ ա ն. Մ ա խ չ ա ն յ ա ն. 1972, 44:*

[39] *Ն ա վ ո յ ա ն. 2009, 3–4:*

[40] H e g e l. 2007, 1289.

[41] *Նոր Բառգիրք Հայկազեան լեզուի. 1979, 1060:*

Այլ խոսքով, եթե հազներգու-գուսանի արվեստը հազներգությունն է, ապա գուսանակատակի կամ կատակի արվեստը՝ իր հավաքական ամբողջությամբ կատակերգությունը: Իսկ եթե գուսանը, հազներգուն և կատակը նույնն են, ապա հազներգությունն ու կատակերգությունն էլ նույնանում են՝ որպես գուսանի-հազներգուի-կատակի արվեստ առհասարակ: Կամ այլ տեսանկյունից՝ եթե գուսանին ասենք հազներգու, նրա արվեստի անունը հազներգություն է, եթե նրան կատակ կոչենք (իսկ կոչել ենք), արվեստը կատակերգություն կկոչվի:

Այսինքն, այստեղ կատակերգությունը κωμῳδία*-ն (կոմեդիա) չէ կամ մասամբ է համապատասխանում դրան: Մի դեպքում նկատի ունենք գուսանական ստեղծագործության տեսակային հարստությունը՝ իր հնարավորինս լիակատար ամբողջությամբ, այդ թվում նաև կատակերգական արտահայտություններով, մյուս դեպքում՝ արվեստի որոշակի տեսակ:*

Ասվածից պարզ է, որ գուսանական արվեստը տեսակային մեծ բազմազանության արվեստ էր և դրանից ոչ մի պայմանով հնարավոր չէ հերձել թատերային տարրը:

Գուսանականի թատերական և այլ բնութագրեր

Այս տեսակետն ամրացնող ևս մեկ շահեկան դիտողություն է անում Հ. Հովհաննիսյանը, որ նրա թատերագիտական հետազոտություններից ընտրաբար առանձնացնում ենք այստեղ: Խոսքը հին հունական ողբերգության մեջ (և ոչ միայն՝ նաև սրբազան հիմներում) երգին զուգընթաց երգչախմբի աջ ու ձախ շարժվելուն է վերաբերում՝ ստրոփե, անտիստրոփ դրվագների հերթագայությանը համապատասխան (էպոդոսը՝ որպես երրորդ դրվագ, ելակետային հանգրվան այստեղ չի դիտարկել): Մեր հեղինակը դրանք զուգահեռել է հայկական «թարս պար», «դուզ պար» պարային, պարերգական իրողություններին և աջ ու ձախ պտույտների շրջանաձևությունից տարել հաջորդ զուգահեռը, ասված այն մտքի հետ, որ երգչախմբի շրջանաձև շարժումներով և դրանք պայմանավորող ծիսական հանգամանքներով է գծագրվել անտիկ թատրոնի շրջանաձև հրապարակը՝ ὀρχήστρα*-ն (օրխեստրա): Այն այդպիսի տեսք ուներ հնագույն թատերական շենքերից Աթենքի Դիոնիսոսի և Էպիդավրոսի թատրոններում. հետագայում է միայն պայտաձև դարձել՝ այն էլ երգչախմբի դերի փոփոխությամբ պայմանավորված[42]:*

Սակայն, եթե այստեղ օրխեստրայի շրջանաձևության՝ Հ. Հովհաննիսյանի սիրած բառով՝ դետերմինանտը ծիսական գործոնն ու խմբապարի շարժման հետագիծն են, ապա ավելի ուշ իր մշակած դրամայի տեսության մեջ դրա պայմանը փոխվում է, ասվածին այլ շերտեր են վերադրվում: Դարձյալ Սբ. Մովսես Խորենացու «երգք ցցոց և պարուցն» է ելակետերից մեկը, պարերգական դրաման՝ որպես պատմա-առասպելական պատումի բանավոր ավանդման ունիվերսալ տիպ[43]: Հայկական պոլի, ցուցքի և այլնի վրայից անցնելով՝ հեղինակը ծանրանում է հունական պարերգական դրամայի ակունքների հարցին: Փնտրելով նրա նախնական ֆունկցիան, իրար հեռվով

[42] *Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 1978, 139–140:*
[43] *Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 2010, 61:*

Պլատոնի և Արիստոտելի ճևակերպումները՝ ասում է, թե այն «վերին ուժերի սիմվոլացում» էր, «ճակատագրի խորհուրդ, աստվածների կամքի կերպավորում» և այլն[44]: Ապա, հնագույն պաշտամունքային դերի շեշտումով, երկնային լուսատուների շարժմանը համադրելով, երգչախմբի ալ շարժումի ու հայկական պարի վերը բերված «ուղիղ» և «շրջանք» տեսակների համադրումով՝ դարձյալ հանգում է շրջանաճև օրխեստրայի նախնական տիպին: Սակայն շարունակության մեջ հավելվում են նոր՝ թե՛ հայկական, թե՛ քաղդեական «երանգավորումներ»: Մասնավորաբար, մարդուն շրջանակող կենդանակերպերի քաղդեական ժամանակացույցը՝ «որպես ճակատագրի խորհուրդ, հավերժություն և պահ»[45]: Ասվածին էլ համադրում է պյութագորական պատկերացումները երաժշտության և տիեզերքի մասին, թատրոնական շենքերի վիտրուվյան ընկալումները՝ խնդրի հանգուցալուծումը թատերագիտության և հին արվեստի պատմության դաշտից անսպասելիորեն տեղափոխելով տոմարագիտության բավիղներ:

Վ. Շևչենկոյի առաջադրած տեսակետով քաղդեական արևային ժամացույցի սխեման համադրելի է հին հունական թատրոնի՝ Վիտրուվիուսի տեսած պատկերին: Այլ տարրեր ևս համընկնում են՝ և՛ դրական ընթացք առած, աջուղի (տեղին է հիշել բարբառային ողջույնի ձևը՝ աջողում) երգչախումբը՝ գնումոն-սլաքի շարժումին, և՛ շրջանաճև հին օրխեստրան՝ շրջանաճև ժամացույցին, որ հետո կդառնան կիսաշրջան (պայտաճև ու կիսաշրջան)[46]: Շրջանաճև ժամանակի, ժամանակացույցի, կենդանակերպերի հիմքով խաղացվող միստերիայի ինչպիսին լինելը Հ. Հովհաննիսյանի համար ունի մեկ պատասխան. «Դա եղել է մարդու ճակատագրի միստերիան»[47]: Ու եթե սրանք վկայում են հին հունական դրամայի մերճավորարևելյան ակունքների մասին, ապա նույն մշակութային արեալն են հղում նաև Սբ. Մովսես Խորենացու աղբյուրները, ի մասնավորի՝ «Բերոսյան Սիբիլայի» քաղդեական մարգարեությունները՝ «և ոլորապտույտ պար՝ ճակատագրի անիվ տասներկու ամիսների անվերջ վերադարձով»[48]:

Սա ատաղձն է դրամայի իր տեսության, որ Հ. Հովհաննիսյանը կառուցել է ընդունված կաղապարներից բոլորովին տարբեր այս հունի մեջ և, մանավանդ, հայկական նյութի խիստ եզակի կիրառությամբ: Դա հանգում է ճակատագրի, տարեկապի, բռնաւորի և այլ գաղափարների ու տարրերի փոխկապակցված համալիրին, որն այստեղ ներկայացնել մտադիր չենք: Այլ միայն ցանկանում ենք օգտագործել հեղինակի այս երկու գաղափարն՝ իր դրամայի տեսությունից: Առաջինը՝ պարերգական դրամայի, մեր տեղային արտահայտությամբ՝ «ցուցերի պարերգի» աջընթաց շրջանն է և մյուսն՝ այս համատեքստում ճակատագրի հավերժական պտույտի «կրոնաաշխարհայացքային ակունքը»՝ հին քաղդեական մարգարեությունները:

Առաջինի կապակցությամբ նկատում ենք, որ հին հունական թատրոնի Վիտրուվիուսի գծագիրն ու քաղդեական արևային ժամացույցի շրջանաճև

---

[44] Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 2010, 65:
[45] Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 2010, 67:
[46] Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 2010, 68–69:
[47] Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 2010, 70:
[48] Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 2010, 71:

դիսկը, որպես պարերգական ղրամայի «աքսոնոմետրիկ հատույթի գծագիր», թե՛ ձևակազմությամբ, թե՛ ասվածի համատեքստում՝ իր բովանդակությամբ փոխարինվում են հայ իրականության մեջ առատորեն կիրառված արևի ու հավերժության շրջանաձև խորհրդանիշով: Այն, ի դեպ, և «աջուղի» կամ «հաջողակ» ու «ձախողակ» (բառերի իմաստաբանական ուղիղ համընկնումով) տարբերակներն ունի և ավելի լավ է համադրվում Հ. Հովհաննիսյանի բերած տրամաբանական շարքին՝ ստրոփե-անտիստրոփե, «թարս պար-դուզ պար» և այլն: Մյուս կողմից՝ կենտրոնից ճառագող ներքին «չառավղայինն» բաժանումները շրջանաձև և հավերժական շարժման մեջ են արտացոլված՝ աջ պտտվելիս դեպի ձախ աղեղված, ձախ պտտվելիս՝ աջ: Այսինքն հավերժական կամ ճակատագրական «դարձը» ուղղակի արձանագրված է պատկերագրորեն և շարժման մեջ:

Սակայն, եթե սրա «կրոնաաշխարհայացքային» հիմքը մարգարեություններն են, գուցե ասենք գուշակություննե՞րը: Այս դեպքում սկզբում բերված բառիմաստներից մեկը՝ գուշակը, ghu նախարմատով, որ թաքնված է հայերեն գովել բառի մեջ՝ կամար է կապում գուսանության քննարկված բոլոր հանգույցների վրա՝ իր տակ առնելով գուսանությունն ու գովասանությունը, դրա տեսակային ողջ հարստությունը՝ «ցուցքի և պարերի երգերով», հագներգու-կատակերգու արտիստների բազմատարը արվեստով, դրանց հնագույն պաշտամունքային-ծիսական-վիպական ետնախորշերով, հավերժորեն դարձող ժամանակային պտույտների և ճակատագրի դեմ ըմբոստության թատրոնական կամ «մաքուր խորհրդանշական» գծագրերի ու էլի շատ բանների պրոեկցումով:

Եթե դրան էլ հավելենք էպոսը՝ իր տարբերակների ողջ համալիրով, Մ. Աբեղյանի ուսումնասիրած միջնադարյան տեքստերը, Կոմիտասի գրառած «Ակնա չարը», բազում ձեռագրերի էջերում արտացոլված պատկերագրական նյութը, գուցե թե հաջողենք քիչ թե շատ ամբողջական պատկերացում կազմել հնագույն ակունքներով հին և միջնադարյան հարուստ ու անպայման պրոֆեսիոնալ այդ արվեստի մասին:

Եզրակացություն

Գուսան-աշուղ տարբերակումը հիմնավորելու համար մնում է տակ ասվածը դասդասել հոդվածի սկզբում բերված տարբերակիչների համեմատ:

Ձևավորման ու զարգացման հիմքեր և ժամանակափուլեր

Գուսանական արվեստի հիմքերը տեղային, առաջավորասիական պաշտամունքային-ծիսական մշակույթի ընդերքում են: Ժամանակափուլի հստակեցումը բարդ է, քանի որ հանգում է պաշտամունքային հիմքից արվեստի առաջացման պղտոր ժամանակներին, որ տարբե՛ր հայեցակետերից տարբե՛ր հաշվարկներ կարող է առաջադրել: Ուստի տեղին է այս տարօրինակ ճեպակերպումը՝ Ք. ա. մի քանի հազար տարի:

Զարգանում է մինչև, մոտավորապես «դասական» միջնադարի ավարտ՝ փոխակերպվելով գուտ երաժշտաբանաստեղծական արվեստի ուշմիջնադարյան ձևերի՝ աշխարհիկ տաղերգուներ, նվագածուներ և այլն: Դառնում է աշուղական արվեստի ազգային հիմքը:

Աչուղական արվեստը, որքան էլ որ հին արմատներ ունենա Արևելքի իր ծննդաբանական միջավայրում, մեզանում տեղայնացված, ավանդական արվեստի նույն՝ ժողովրդապրոֆեսիոնալ ճյուղի բնիկ և հնավանդ արտահայտությունների ներհյուսված կամ դրանց պատմական փոխակերպմամբ կերպավորված և լիարժեք արտահայտություններով ներկայանում է, մոտավորապես, XVII դարից (նախնական և հնարավոր մի քանի արտահայտությունների չենք անդրադառնում): Իր որոշ փոխակերպումներով հանդերձ կենդանի է ցայսօր:

Ենթաճյուղեր

Գուսանական արվեստի ենթաճյուղերն արտահայտված ենք տեսնում այդ արվեստի կրողների, արտիստների մատենագրական տարբեր հիշատակություններով՝ գուսան, վիպասան, հազներգու, ասացող, ցուց, վարձակ, ողբասացեղերերգու, կատակ (հացկատակ, գուսանկատակ, կատակերգակ), միմոս և այլն:

Աչուղն՝ աչուղ է, այդ արվեստի բոլոր ներքին տարբերակումներով հանդերձ:

Գեղարվեստական բնութագրեր, արտահայտչաձևեր

Գուսանական արվեստն ընդգրկում է արվեստի վիպական-պատմական, դրամատիկ, քնարերգական, կատակերգական ոլորտները՝ երաժշտաբանաստեղծական (երգային և նվագարանային, մենակատարային ու խմբական), թատերական, պլաստիկ արվեստային տարրերի միաձույլ, միակառույց (սինկրետիկ) արտահայտությամբ: Պատկերագրությամբ վկայված դիմակների, այսպես ասած, բեմական արղուզարդի, զգեստների առկայությունը հուշում է դեկորատիվ-կիրառական արվեստի ակտիվ ներգրավվածության մասին ևս:

Նշված ոլորտները, որպես գուսանական արվեստի ներքին խոշոր բաժանումներ, իրենց կոնկրետ բնութագրերով (օրինակ՝ քնարականն ու վիպականը, տեսանք, որ դրամատիկականն էլ առկա է և այլն) կարող են հավակնել նույնիսկ սեռ կոչվելուն: Սակայն զգուշանում ենք այդ «բաժանարարն» օգտագործելուց՝ քննվող արվեստի լիարժեք հետազոտված չլինելու, նյութին եվրոպական տերմինների մասամբ համապատասխանելիության և այլ պատճառներով: Բայց դրանից այս ներճյուղային բաժանումների ընդգծվածությունն ավելի նվազ չի դառնում:

Պահպանված վկայություններով լեզուն հայերենն է՝ իր գրական և բարբառային ճյուղավորումներով: Երաժշտական բաղադրիչը, գոնե, «Ակնա չարի» և մի քանի այլ ենթադրելի նմուշների հիմամբ ապացուցելի հստակությամբ զուգահեռական է մի կողմից «Սասնա ծռերի» պահպանված երգվող հատվածների, մյուս կողմից՝ բացատրելի պատճառներով, նաև հոգևոր ու աշխարհիկ տաղերգության մի շարք նմուշների հետ:

Հայ ժողովրդական երգամտածողության հետ ունեցած հարազատությունը թե՛ այս, թե՛ աչուղական արվեստի դեպքում պայմանավորված է ժողովրդականի առաջնային նշանակությամբ:

Աչուղական արվեստը ներքին այնպիսի և այնքան շատ խորքային բաժանարարներ չունի, որ առկա էին գուսանականում: Այն հիմնականում քնարական, բարոյախրատական բնութագրերի արվեստ է (այլ թեմատիկ արտահայտություններով հանդերձ): Մեզանում սոսկ վոկալ նվագարանային արվեստ է՝ մենակատարային և անսամբլային դրսևորումներով: Եթե թատերա-

յին տարրեր, այդուհանդերձ, կան, ապա դրանք խիստ թերաճ են և ունեն հրապարակային ներկայացման այլ հատկանիշներ (օրինակ՝ մրցույթ):

Կիրառած լեզուն սկզբնական փուլում արևելյան օտար լեզուներն են, մեզանում բյուրեղացման շրջանում՝ հայ բարբառային կիրառություններով հանդերձ: XIX դարից բարբառախառն գրական և ժամանակի գրական հայերենն է:

Երաժշտական, երաժշտաբանաստեղծական մտածողությունը, արևելյան մեղեդիական մոդելների, տաղաչափական որոշ ձևերի կիրառությամբ, հայ ավանդական երաժշտական մտածողության արտահայտություն է՝ և՛ ժողովրդական[49], և՛ միջնադարյան քաղաքային արվեստի ու աշխարհիկ տաղերգության հիմքով բյուրեղացած:

Կիրառական ժանրեր.

Տեղին չենք համարում դրանք թվարկել՝ նախ գուսանականի դեպքում մինչև վերջ ուսումնասիրված չլինելու, ապա արդեն հստակեցված գուսանական և աշուղական ժանրերի խիստ տարբեր լինելու պատճառով: Եղած ընդհանրություններն անգամ տարբերակելի են: Օրինակ՝ գուսանական գովերգության արտահայտությունները, եթե փորձենք նույնականացնել գուսանականի ներբող, տաղ, հելենական համարժեքներով՝ գեղոն, ճոն և ժանրային-տեսակային այլ արտահայտություններով, ապա, մեևնույն է, դրանք խիստ տարբեր են աշուղական գովքից:

Ընդհանրություններից են

Երկուսն էլ հայ ավանդական արվեստի ժողովրդապրոֆեսիոնալ կամ միջնադարում (ուշ միջնադարում ևս) դրան համարժեք՝ աշխարհիկ պրոֆեսիոնալ ճյուղի արտահայտություն են:

Երկուսն էլ ազգային արվեստի արտահայտություն լինելով՝ մաս են կազմում առաջավորասիական լայն մշակութային արեալի:

Մհեր Նավոյան – արվ. դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ժողովրդական երաժշտության բաժնի վարիչ, առաջատար գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ հայ երաժշտության պատմության ու տեսության հարցեր, հայ երաժշտական միջնադարագիտություն: Հեղինակ է 3 մենագրության և շուրջ 70 հոդվածի: mhernavoyan@gmail.com

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աբեղյան Մ. 1967, Հայ քնարական բանահյուսություն (հայ գուսանական ժողովրդական երգեր), երկեր, հ. Բ, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 388 էջ:

Աճառյան Հր. 1971, Հայերենի արմատական բառարան, հ. 1, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 704 էջ:

[49] *Հարկ է նկատել, որ Կոմիտասը վերը նշված հոդվածներում և Գ. Լևոնյանը նույնպես, այս առիթով առավել հստակ ու բացասական են արտահայտվել: Օրինակ՝ վերջինս գրում է. «Աշուղական երգեր և ժողովրդական երգեր (նեղ մտքով) անհամեմատելի են, նրանք բոլորովին տարբեր են …» (Լ ե ո ն յ ա ն. 1944, 7):*

Այտնյան Ա. 1987, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 502 էջ:

Առաքելյան Ա. Գ. 1968, Հունական գրականության պատմություն, Երևան, «Լույս» հրատ., 629 էջ:

Առաքելյան Վ. 1975, Գրիգոր Նարեկացու լեզուն և ոճը, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 272 էջ:

Գրիգորյան Գր. 1980, Հայ ժողովրդական բանահյուսություն, Երևան, «Լույս» հրատ., 470 էջ:

Երնջակյան Լ. 2009, Աշուղական սիրավեպը մերձավորարևելյան երաժշտական փոխառնչությունների համատեքստում, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 255 էջ:

Լևոնյան Գ. 1944, Աշուղները և նրանց արվեստը, Երևան, Հայպետհրատ, 103 էջ:

Կոմիտաս. 1941, Հոդվածներ յեվ ուսումնասիրություններ, Յերեվան, Պետական հրատ., 198 էջ:

Կոմիտաս Վարդապետ. 2007, Ուսումնասիրութիւններ եւ յօդուածներ, գիրք Բ, Երևան, Սարգիս Խաչենց-Փրինթինֆո, 574 էջ:

Կոմիտաս. 1999, Հայ ժողովրդական երգեր, գիրք Ա, երկերի ժողովածու, իններորդ հատոր, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 223 էջ:

Հովհաննիսյան Հ. 1978, Թատրոնը միջնադարյան Հայաստանում, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 355 էջ:

Հովհաննիսյան Հ. 1990, Հայ հին դրաման և նրա պայմանաձևերը, Երևան, Հայաստանի ԳԱ հրատ., 297 էջ:

Հովհաննիսյան Հ. 2010, Հնագույն դրաման Հայաստանում. ծագման հարցի շուրջ, Երևան, «Նաիրի» հրատ., 199 էջ:

Մովսեսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց. 1913, աշխ. Մ. Աբեղեանի և Ս. Հարութեանի, Տփղիս, 430 էջ:

Նավոյան Մ. Ռ. 2001, Տաղերի ժանրի ծագումնաբանությունը և ազատ մեղեդիական մտածողությունը հայ միջնադարյան մասնագիտացված երգարվեստում, Երևան, «Արձեշ» հրատ., 205 էջ:

Նավոյան Մ. Ռ. 2009, Դրվագներ հայ երաժշտության պատմության, Երևան, «Զանգակ» հրատ., 47 էջ:

Նոր Բառգիրք Հայկազեան լեզուի. 1979, հ. առաջին, Ա-Կ, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1140 էջ:

Նոր Բառգիրք Հայկազեան լեզուի. 1981, հ. երկրորդ, Հ-Ֆ, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1067 էջ:

Զրբաշյան էդ., Մախչանյան Հ. 1972, Գրականագիտական բառարան, Երևան, «Լույս» հրատ., 328 էջ:

Սահակեան Ա., Փահլևանեան Ա. 1996, Սասնայ ծռեր դիւցազնավէպ. առասպելական ընդերք, վիպական կառոյց, վիպասանական եղանակ, Փասադենա, «Դրազարկ» հրատ., 122 էջ:

Адонц Н. 1915, Дионисий Фракийский и армянские толкователи. Петроград, Тип. Императорской академии наук, 307 с.

Hegel G. 2007, Vorlesungen über die Ästhetik I., Werke in 20 Bänden und Register, BD 13. Frankfurt/M., Suhrkamp, 1289 S.

ПРОБЛЕМЫ ДИФФЕРЕНЦИАЦИИ В НАРОДНО-ПРОФЕССИОНАЛЬНОЙ ВЕТВИ АРМЯНСКОГО ТРАДИЦИОННОГО МУЗЫКАЛЬНО-ПОЭТИЧЕСКОГО ИСКУССТВА

МГЕР НАВОЯН

Р е з ю м е

Ключевые слова: народно-профессиональный, светский профессиональный, гусан, ашуг, «Ергк ццоц ев паруц», «հагнергутюн» (рапсодия, ῥαψῳδία), хоровая драма (χορεία).

В армянском традиционном музыкально-поэтическом творчестве проявления гусанского и ашугского искусства зачастую не разграничиваются. Отсутствие ясности в этом вопросе является следствием игнорирования основных характеристик этих проявлений искусства, наряду с недостаточной исследованностью гусанского искусства в целом. Важное значение имеет и отсутствие четкой границы между народной и народно-профессиональной (светской профессиональной) ветвями армянского традиционного музыкально-поэтического творчества, что взаимосвязано с дифференциацией гусанского и ашугского искусства, которые представляют собой две области народно-профессионального творчества.

Что касается изучения особенностей гусанского и ашугского искусства, то в отношении последнего существует меньше сложностей, поскольку оно бытует поныне. Тогда как говоря о творчестве гусанов, мы имеем дело лишь с отдельными сохранившимися музыкально-поэтическими образцами, чаще всего исключительно с поэтическим текстом, древними и средневековыми упоминаниями, изобразительным материалом и результатами современных исследований.

Изучение упоминаний древних и средневековых авторов об искусстве гусанов обнаруживает его синкретический характер. Для дифференциации ашугского и гусанского искусства большое значение имеет, в частности, определяющее наличие элементов театральности.

Мгер Навоян – д. иск., проф., заведующий отделом народной музыки Института искусств НАН РА, ведущий научный сотрудник. Научные интересы: вопросы истории и теории армянской музыки, армянская музыкальная медиевистика. Автор 3 монографий и около 70 статей.
mhernavoyan@gmail.com

Պատմաբանասիրական հանդես 2022 № 1 Историко-филологический журнал

DIFFERENTIATION PROBLEMS IN THE FOLK-PROFESSIONAL BRANCH OF ARMENIAN TRADITIONAL MUSICAL-POETICAL ART

MHER NAVOYAN

Summary

Key words: folk– professional, secular professional, Gu,san, Ashu,gh, "Ergqkʻ cʻ cʻ ocʻ ev paru,cʻ ", "Hagnergutyun" (rhapsody, ῥαψῳδία), horeia (χορεία).

In traditional Armenian music-poetry, the manifestations of *Gusan* and *Ashugh* art very often are not differentiated. The lack of clarity on this issue is a consequence of disregarding the main characteristics of these expressions of traditional art, along with the lack of research on *Gusan* art in general. The absence of a clear distinction between the folk and folk-professional (secular-professional) branches of Armenian traditional musical-poetical art is also important, due to its relation to the differentiation between *Gusan* and *Ashugh* art, representing two areas of folk-professional branch. As for the study of the specific features of *Gusan* and *Ashugh* art, there is less difficulty regarding the latter, since today it is still in use. Whereas, when speaking of *Gusans*, we are dealing only with some surviving musical-poetical examples, most often exclusively the poetic texts, and ancient and medieval references, illustrative material, and current research findings. A study of references about *Gusan* art by ancient and medieval authors demonstrates its syncretic character. For the differentiation between *Ashugh* and *Gusan* art, in particular, the defining presence of theatrical elements is highly significant.

Mher Navoyan – Dr. habil, Professor, Honored Art Worker of Armenia, Head of the Folk Music Department of the NAS RA Institute of Arts, Leading Researcher. Scientific interests: issues of history and theory of Armenian music, medieval Armenian music studies. Author of 3 monographs and about 70 articles. mhernavoyan@gmail.com

Doi:10.54503/0135-0536-2022.1-185

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳՐԱԿԱՆ ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆԻ ԵՎ ԳԵՐՄԱՆԵՐԵՆԻ ԵՆԹԱԿԱՅԱԿԱՆ ՈՒ ՀԱՐԱԿԱՏԱՐ ԴԵՐԲԱՅՆԵՐԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ*

ԱՐԾՎԻԿ ՍՈՒՎԱՐՑԱՆ

Բանալի բառեր՝ քերականական տիպաբանություն, հայերեն և գերմաներեն, ենթակայական ու հարակատար դերբայներ, միաժամանակություն, նախաժամանակություն, ներգործական-կրավորական սեռ, գրական արևելահայերեն, արևմտահայերեն, հարակատար+եմ/էի կառույց, պարագայական դրծառույթներ:

Նախաբան

Բայը հայերենում, գերմաներենում և հնդեվրոպական այլ լեզուներում դրսևորվում է անդեմ կամ դերբայական, դիմավոր կամ եղանակային ձևերով: Օ. Մոսկալսկայան գրում է, որ դերբայները, ծագումով լինելով բայական ածականներ, հնդեվրոպական լեզուների զարգացման ընթացքում աստիճանաբար ներառվել են բայի ձևերի համակարգում՝ միաժամանակ պահպանելով ածականին բնորոշ որոշ հատկանիշներ: Գերմաներենի դերբայները, լեզվի առաջին գրավոր հուշարձաններում, ինչպես նաև լեզվի պատմության հետագա բոլոր փուլերում, ընդգրկված են բայի համակարգում[1]: Լ. Եզեկյանը գրում է, որ հայերենի դերբայները հայ քերականագիտության մեջ՝ հատկապես Մ. Աբեղյանի ուսումնասիրություններում, երկար ժամանակ դուրս էին մնացել բայի համակարգից: Աբեղյանը բայ էր համարում միայն բայի դիմավոր (եղանակային) ձևերը, որոնք արտահայտում են ստորոգում և նախադասության մեջ հանդես են գալիս ստորոգյալի չարահյուսական պաշտոնով: Դերբայները, ունենալով ոչ միանման ձևաբանական ու չարահյուսական հատկանիշներ, կիրառություններ և արտահայտած իմաստներ, տեղաբաշխվում են տարբեր խոսքի մասերի մեջ: Հետագայում վերանայվում են դերբայների դասակարգման սկզբունքները՝ հաշվի առնելով բայի խոսքիմաստային հիմնական հատկանիշները, որոնք յուրահատուկ են նաև բայի անդամ ձևերին, և դերբայները ներառվում են բայ խոսքի մասի համակարգում[2]:

Այսպիսով, ժամանակակից քերականագիտության մեջ բայեր են համարվում նաև հատկանիշ արտահայտող ձևերը: Այդ ձևերում առկա է դրծողության, ընթացքի գաղափարը, որը քերականական արտահայտություն է ստանում բայասեռի խնդրառությամբ, ինչպես՝ աշխատանք կատարող // կատարած մարդ, նամակ գրող // գրած ուսանող, գիրք կարդացող // կարդա-

---

* *Ներկայացվել է 25. XI. 2021 թ., գրախոսվել է 16. XII. 2021 թ., ընդունվել է տպագրության 21. I. 2022 թ.:*

[1] *Տե՛ս* Москальская. 1956, 338.

[2] *Տե՛ս Եզեկյան. 2005, 276:*

ցած աղջիկ: Այս ներգործական բայերի կրավորական ձևերը քերականական հատկանիշներով նշանակում են, որ կատարող-կատարվող, կատարած-կատարված ձևերը ներառվում են բայական համակարգում: Գրող-գրած բառաձևերը ենթակայական-հարակատար դերբայներ են և համապատասխանում են գերմաներենի Partizip I *(ենթակայական) և* Partizip II *(հարակատար) ձևերին՝ գրող ուսանող – der schreibende Student, գրված նամակ – der geschriebene Brief.*

Դերբայների կազմում հիմնական, սկզբնական դիրք ունի անորոշ դերբայը: Է. Աղայանը գրում է, որ անորոշ դերբայը, չարտահայտելով առարկայի վիճակ, գործողության կերպ, պարզապես անվանում է գործողությունը, ինչպես գոյականների ուղղական հոլովը: Այսինքն՝ անորոշ դերբայը հանդես է գալիս որպես գործողության բացարձակ անվանում, բայաձևերի ելակետային ձև, անկախ բառ, նաև հիմուլթ[3]:

Հայերենում և գերմաներենում մյուս բոլոր դերբայների կազմության համար ելակետ է ընդունվում անորոշ դերբայը (Infinitiv), *որը նախադասության մեջ կարող է ունենալ ինչպես դիմավոր, այնպես էլ անդեմ գործածություն: Գ. Ջահուկյանը գրում է. «Անորոշը սովորաբար դիտվում է որպես բայի դիմա-եղանակային ձևերի համար ելակետային ձև»[4]: Հայերենում ժամանակային ձևերը կազմվում են անորոշ դերբայի հիման վրա կազմվող ձևաբայերով (անկատար, վաղակատար, ապակատար, ժխտման), իսկ գերմաներենում բայի և՛ ներկայի, և՛ անցյալի խոնարհման ձևերի հիմքը միայն* Infinitiv-*ն է: Գերմաներենում բայի երեք անդեմ հիմնական ձևերից* (Infinitiv, Präteritum, Partizip II), *ինչպես նշեցինք, առաջինը* Infinitiv-*ն է, որի հիման վրա կազմվում են* Partizip I-*ը (ենթակայական դերբայ) և* Partizip II-*ը (հարակատար դերբայ): Օ. Մոսկալսկայան գրում է, որ հբգ-ում* Partizip-*ների երկու ձևերն էլ լայն կիրառություն են ունեցել: Դրանք գործածվել են կա՛մ որպես ստորոգյալի բաղադրիչ, կա՛մ էլ՝ որպես որոշիչ ու պարագա[5]:*

Ժամանակակից հայերենի և գերմաներենի ենթակայական դերբայի կառուցվածքը և կիրառական գործառույթների տիպաբանությունը

Partizip I-*ի վերաբերյալ իշխում է բայի ներկայի հիմքին ավելացվող* -(e)nd *ածանցով կազմությունը: Սակայն ըստ Ե. Շենդելսի՝* Partizip I-*ը կազմվում է* Infinitiv-*ին կցելով* -d *ածանցը[6]:* Partizip I steh**end**, schreib**end** / stehen**d**, schreiben**d**, der **schreibende** Student *(գրող ուսանող) կապակցության մեջ* Partizip I-*ի բայական իմաստում առավել էական են սեռը և կերպը. այն արտահայտում է ներգործական իմաստ և կատարվող գործողության տևողություն, ընթացք: Նախադասության մեջ ժամանակը բացահայտվում է*

[3] *Տե՛ս Աղայան. 1967, 347:*
[4] *Ջահուկյան. 1975, 48:*
[5] *Տե՛ս* Москальская. 1956, 117.
[6] Шендельс. 1988, 110.

ստորոգյալով, որին առնչվում է Partizip I-*ը: Օրինակ՝* Die Feuerwehrleute erloschen das **endflammende** Feuer. *Հրշեջները հանգցնում էին բորբոքվող կրակը:* Infinitiv I-ի (endflammen) Partizip I-*ով* (endflammend) *արտահայտվում է անկատար ընթացքի մեջ գործողություն, իսկ* Infinitiv II-*ի (անցյալի անորոշ)* Partizip I-*ով գործողությունն արտահայտվում է ավարտուն վիճակի, կատարյալ արդյունքի մեջ:* Partizip I-*ով ներկայացվող ժամանակները, կազմությամբ պայմանավորված, կարող են արտահայտվել երկու ձևով:* Infinitiv I-*ի (ներկայի անորոշ) հիման վրա կազմվող* Partizip I-*ով արտահայտվում է միաժամանակություն՝ ինչպես, օրինակ,* Der Reisende, **dies sagend,** setzte seinen Weg fort. *Ճանապարհորդը, այդ ասելով, չարունակեց իր ճանապարհը:*

Infinitiv II-*ի (անցյալի անորոշի) հիման վրա կազմված* Partizip I-*ով արտահայտվում է տարաժամանակություն, այն է՝ նախաժամանակություն:* Der Reisende, dies **gesagt habend**, setzte seinen Weg fort. *Ճանապարհորդը, այդ ասած լինելով, չարունակեց իր ճանապարհը: Ճանապարհորդի խոսքը նախորդում է նրա գնալու գործողությանը:* Partizip I-*ը (ենթակայական դերբայը) նախադասության մեջ, որպես ածական հանդես գալով, կատարում է որոշչի և ստորոգելիական վերադրի գործառույթ, իսկ մակբայական գործածությամբ՝ ձևի պարագայի:* Er gehörte dem Leben, dem **kommenden**, neuen und besseren, dem zu **erkämpfenden** Leben. *Նա պատկանում էր եկող, նոր և ավելի լավ, պայքարով ձեռք բերվող (նվաճվող) կյանքին:* Jetzt lebten sie nur noch für ihr häusliches Glück und genoßen die Vorfreude auf das zu **erwartende** Kind. *Այժմ նրանք ապրում էին դեռևս միայն իրենց ընտանեկան երջանկության համար և վայելում էին սպասվող երեխայի մոտալուտ ուրախությունը:*

Der kalte Wind in ersten Tage des März ist **schneidend.** *Մարտի առաջին օրերի սառը քամին կտրող է:* **Schneidend** kalt sind die Tage des März. *Մարտի առաջին օրերը կտրող ցուրտ են:* Verlegen und **stockend** erzählte er von seiner Reise. *Շփոթված ու կմկմալով՝ նա պատմում էր իր ճանապարհորդության մասին: Իսկ ճյունոտ ուղին խաբող էր ու նենգ (Ե. Զարենց)*[7]*:* Aber der beschneite Weg war **betrügend** und tückisch. *Ճանապարհին որոշ դժվարություններ հաղթահարելով՝ ուշ երեկոյան վերադարձանք գյուղ:* Unterwegs einige Schwierigkeiten **überwindend,** kehrten wir spät abends ins Dorf zurück.

Գերմաներենից հայերեն և հայերենից գերմաներեն թարգմանված օրինակներում արտահայտվում են Partizip I-*ի և ենթակայական դերբայի որոշչային, ստորոգելիական վերադրի, պարագայական կիրառությունները և ընդհանրությունները: Ենթակայական դերբայը զուգադրվող լեզուներում նաև գոյականացվում է ու կատարում գոյականին բնորոշ գործառույթներ՝* reisend– *ճանապարհորդող,* der Reisende – *ճանապարհորդողը,* leidend – *տառապող,* die Leidende – *տառապողը:*

[7] *Զ ա ր ե ն ց. 1983, 117:*

Partizip I-*ն ածականական կամ մակբայական իմաստով գործածվելիս հայերեն հիմնականում թարգմանվում է ենթակայական դերբայի և անորոշի գործիականի ձևով, երբեմն նաև այլ ձևերով՝* Der Junge spricht mit **singendem** Ton. *Տղան խոսում է երգեցիկ տոնով:* Diese Krankheit (Covid – 19) ist **ansteckend** und **sogar todbringend.** *Այդ հիվանդությունը (թագավորակ – 19) վարակիչ է և նույնիսկ մահաբեր* (մահ բերող)*: Մ. Աբեղյանը գրում է, որ ենթակայական դերբայի իմաստն արտահայտվում է նաև -իչ ածանցով կազմված բայական ածականներով, օրինակ՝ առաքիչ, վարակիչ*[8]*:* Der junge sieht es **fragend** an. *Տղան հարցական նայում է նրան:* Das ist ja ganz **entzückend.** *Բայց դա միանգամայն հիասքանչ է:*

Partizip I-*ը գերմաներենում կարող է գործածվել թեքվող և կրճատ՝ չթեքվող ձևերով: Ածականաբար՝ որպես որոշիչ կիրառելիս այն համաձայնեցվում է որոշյալին թվով, սեռով, հոլովով և համապատասխանում է հայերենի ենթակայական դերբային: Գերմաներենում որոշիչ-որոշյալի նման համաձայնությունը պայմանավորված է գոյականի ու ածականի քերականական առանձնահատկություններով: Ժամանակակից գրական արևելահայերենում գոյականը չունի քերականական սեռ և ածականը՝ բուն ածականական հոլովում: Այսինքն՝ նման համաձայնություն հայերենում չի կարող լինել. հայերենում որոշիչ-որոշյալ կապակցության համաձայնությունը իմաստային է (առդրական):* Ein Fuhrwerk rasselte ihm entgegen, auf dem lauter **schwatzende** Bäuerinnen saßen. *Մի սայլ ճոռաց նրան ընդառաջ, որի վրա բարձրաձայն չաղակրատող գեղջկուհիներ էին նստած: Գերմաներենի* Partizip I-*ի կրճատ ձևը, նախադասության մեջ ձևի պարագայի գործառույթով կիրառելիս, թարգմանվում է անորոշ դերբայի* (Infinitiv I-*ի) գործիական հոլովով՝* Das Mädchen tanzte **singend.** *Աղջիկը պարում էր երգելով:* Kofferbehangene Gepäckträger bahnen sich **schwitzend** ihren Weg. *Ճամպրուկներով բեռնավորված բեռնակիրներն իրենց համար ճանապարհ են բացում քրտնելով (չարչարվելով):*

Ներգործական բայերի Partizip I-*ը* zu *մասնիկով որոշչային կիրառությամբ ստանում է կրավորական իմաստ և արտահայտում անհրաժեշտություն, համապատասխանաբար հնարավորություն՝* das zu **lesende** Buch – *կարդացվող գիրքը (գիրքը, որը պետք է կարդացվի),* die nicht zu **lösende** Aufgabe – *չլուծվող խնդիրը (առաջադրանքը) (խնդիրը, որը չի կարող լուծվել, չլուծվող է),* den zu **bearbeitende** Rohstoff – *մշակվող հումքը (հումքը, որը պետք է մշակվի):*

Ժամանակակից գրական արևելահայերենի և գերմաներենի հարակատար դերբայների կառուցվածքային ու կիրառական տիպաբանությունը

Բոլոր բայերի Partizip II-*ը (հարակատար դերբայը) կազմվում է* ge- *նախածանցով, ուժեղ բայերը ստանում են* -en *վերջածանցը (ձայնաղարձի չնորհիվ ունենում են արմատական ձայնավորի հերթագայություն), թույլ*

[8] *Աբեղյան. 1974, 723:*

բայերը՝ -t *վերջածանցը:* Paris glich einer **belagerten** Festung: *Փարիզը նմանվում էր պաշարված ամրոցի:* Die belagerte Festung – *պաշարված ամրոց: Մ. Արսենևան*[9] *գրում է, որ ներգործական սեռի բայի* Partizip II-*ը (հարակատար դերբայը) արտահայտվում է կրավորական իմաստով: Կրավորական սեռի բայերի* Partizip II-*ը միշտ արտահայտում է ներգործական սեռի իմաստ՝* die angekommene Delegation, die Delegation, die angekommen ist – *ժամանած պատվիրակությունը, պատվիրակությունը, որը ժամանել է: Հարակատար դերբայն արտահայտում է նախադասության ստորոգյալի նկատմամբ վաղ ժամանակում կատարված, ավարտված գործողություն՝* Seine Nerven waren gestählt durch die Prüfungen der **vergangenen** Stunde. *Նրա նյարդերը կոփվել էին **անցած** դասի քննություններից:*

Հարակատար դերբայը որոշչային կիրառությամբ ցույց է տալիս առարկայի հատկանիշը որպես դրություն, վիճակ, օրինակ՝ «Արնոտված, խոցված սիրտը նախրյան // Բացվել է այսօր աշխարհի սրտում»[10]: «Մաշված դուռը դողդոջ երգում էր մի հին երգ»[11]: *Բերված օրինակները ցույց են տալիս հարակատար դերբայի ներգործական ձևով կրավորական (անանցողական) իմաստ արտահայտելու կիրառական առանձնահատկությունը և միաժամանակ ընդհանրությունը գուգադրվող լեզվի նկատմամբ: Որոշչի պաշտոնում կիրառվում է հիմնականում ներգործական բայերի հարակատարը:* Haben Sie die **neugebauten** Häuser in unserer Stadt gesehen? *Դուք մեր քաղաքի նորակառույց (նոր կառուցված) շենքերը տեսե՞լ եք:*

Հարակատար դերբայը, գործածվելով բայի հետ, բնութագրում է գործողությունը՝ հանդես գալով ձևի պարագայի շարահյուսական պաշտոնով, ինչպես՝ «Փողոցի անցուդարձ անողներից պահված, մի անկյունում քաշված, սրա-նրա համար տրեխ է գործում»[12]: Er sitzt **gebückt.** *Նա նստած է կորացած:*

Partizip II-*ի օգնությամբ կազմվում են* Infinitiv II-*ը՝* gebaut haben = *կառուցած լինել,* gekommen sein = *եկած լինել ձևերը, որոնցից ծնունդ են առնում* Perfekt *ու* Plusquamperfekt *(վաղակատար ներկա, վաղակատար անցյալ) ժամանակային ձևերը և* Vorgangspassev-*ի (ընթացքի կրավորականի) ու* Zustandspassiv-*ի (վիճակի կրավորականի) բոլոր անդեմ և դրանցից կազմվող դիմավոր ձևերը: Հարակատարով ինքնուրույն բառաձևերը հայերեն թարգմանվում են բայի հարակատար դերբայի ձևով, անցողական բայերի դեպքում էլ՝ կրավորական ձևով:* Das **gesungene** Lied gefiel mir sehr. *Երգված երգն ինձ շատ դուր եկավ:*

Օժանդակ և հանգուցային բառերի հետ Partizip II-*ը թարգմանվում է դրանց հետ համապատասխան քերականական ժամանակային ձևով:* Ich **habe** mehr von ihm **gelernt**, als von allen Lehrern meiner Zeit. *Ես ավելի շատ բան եմ սովորել նրանից, քան իմ ժամանակի բոլոր ուսուցիչներից (սահմ.*

[9] *Տե՛ս* Арсеньева и другие. 1963, 182.
[10] *Զարենց. 1983, 158:*
[11] *Բակունց. 1986, 32:*
[12] *Բակունց. 1986, 73:*

եղ. վաղակատար ներկա): Mein kleiner Junge **war** im Fluß **ertrunken**. *Իմ փոքրիկ տղան խեղդվել էր գետում (սահմ. եղ. վաղակատար անցյալ):*

Մ. Ասատրյանը գրում է, որ «ներգործական և կրավորական սեռերի արտահայտած գործողությունները բացարձակ հակադրություններ չեն. ներգործական սեռը, որպես կանոն, գործողություն է ցույց տալիս, իսկ կրավորական սեռն ավելի՝ դրություն և վիճակ: Այս իմաստով համահունչ է հարակատար ժամանակների իմաստային կողմին, որի չնորհիվ էլ կրավորականից կազմված հարակատարի ձևերը լայն կիրառություն ունեն ժամանակակից հայերենում»[13] *«Բացված է արդեն մի ուրիշ երկիր, ես այստեղ եմ, բայց ուրիշ եմ հիմա»*[14]*: Գերմաներենում անցողական բայի* Partizip II-*ը* sein *օժանդակ բայի հետ կազմում է մի առանձնահատուկ կառույց, որը նախադասության մեջ հանդես է գալիս որպես ստորոգյալ և ներկայացնում է ենթակայի վիճակը:* «sein + Partizip II» *(հարակատար դերբայ + եմ/էի) կառույցը կատարում է անվանական ստորոգյալի գործառույթ և իմաստով մոտ է ածականով արտահայտված ստորոգելիին՝* 1. Das Land ist befreit *(երկիրը ազատագրված է):* 2. Das Land ist frei *(երկիրը ազատ է): Հարակատարի և ածականական ստորոգելիի միջև տարբերությունն այն է, որ հարակատարն արտահայտում է վաղուց կատարված գործողության հատկանիշի արդյունք, իսկ ածականով արտահայտված հատկանիշն առնչություն չունի գործողությանը:* Meine Arbeit ist für heute beendet. *Իմ այսօրվա աշխատանքն ավարտված է:* Passiv-*ի այս ձևը վիճակի կրավորականն է* (Zustandspassiv)*: Այստեղ բայի ժամանակը պայմանավորվում է* sein *բայի քերականական ժամանակով՝ Դահլիճը զարդարված է (ներկա):* Der Saal ist geschmückt. *Դահլիճը զարդարված էր (անցյալ):* Der Saal war geschmückt. *Վիճակի կրավորականը կազմում է սահմանական եղանակի բոլոր ժամանակաձևերը:*

Մ. Աբեղյանը գրում է, որ «գրաբարի անցյալ դերբայը նայելով տեղին աշխարհաբար թարգմանվում է կամ վաղակատար, եւ վերջավորությամբ կամ հարակատար (ած վերջ.) դերբայով, օրինակ՝ Իմ տուեալ հրամանն կատարեցաւ: Իմ տված հրամանը կատարվեց: Յաւուրս սորա փոխին արքունիքն յԱրմաւիրն անուանեալ (անվանված) բլրոյ. քանզի էր հեռացեալ (=հեռացել էր) գետն երասխ: Ահավասիկ թագաւոր քո գայ նստեալ ի վերայ յաւանակի իշոյ = ահա (հրես) քո թագավորը գալիս է իշի վրա նստած: Նոքա առեալ տանէին զնա = նրանք առել տանում էին նրան: Նստեալ բարբառին = նստել խոսում են: Անցյալ դերբայն աշխարհաբար թարգմանվում է նաև կամ դիմավոր բայով, կամ անորոշ դերբայի գործիական հոլովով՝ Եւ հրաման առեալ (=առնելով, առած լինելով) չդառնալ անդրէն՝ ընդ այլ ճանապարհ գնացին յաշխարհն իւրեանց»[15]*:*

Ժամանակակից գրական արևելահայ լեզվում հարակատար ժամանակներով գործածվում են կրավորական և չեզոք սեռի բայերը (կատարված է, բարկացած է). ներգործական սեռի բայերը հարակատար ժամանա-

[13] *Տե՛ս Ա ս ա տ ր յ ա ն. 2002, 240:*
[14] *Տ ե ր յ ա ն. 1989, 98:*
[15] *Տե՛ս Ա բ ե ղ յ ա ն. 1974, 722:*

կաճևեր չեն կազմում: Մ. Աստոյանը գրում է, որ գրական արևմտահայերենում եղանակային ձևեր բաղադրող վաղակատար ու հարակատար ղերբայների միջև իմաստային տարբերություն չկա, ուստի հարակատար+եմ/էի կառույցը գործածվում է բոլոր բայերի՝ ներառյալ նաև ներգործականների համար, ինչպես՝ «Ամենևին, շատ սխալ ըմբռնած եք իմ խոսքերուս իմաստը»[16]*: «Տարիներու չրջանին մեջ, ջորին թուլիկ այլ համառ գործունեությանը պես քայքայած է իր առողջությունը»*[17]*:*

Հարակատար բայաձևի կիրառության մասին Ռ. Սաքապետոյանը գրում է, որ գրական արևմտահայերենի սահմանական եղանակի անցյալ ժամանակներ բաղադրող բայաձևերի մեջ հարակատար բայաձևը իր կայուն տեղն ու գործածության հաճախականությամբ տիրապետող դերն ունի վաղակատարով կազմվող ձևերի նկատմամբ[18]*:*

Partizip II-*ը համադրում է բայական և ածականական հատկանիշներ: Վ. Յունգը գրում է, որ հարակատարի երկակի արժեքը բխում է նրա մեջ անուն խոսքի մասի և բայի զուգակցման իրողությունից: Բնույթով և ծագմամբ այն ածական է, որը վերցրել է բայական հատկանիշ*[19]*: Վաղակատար և հարակատար դերբայների ու դրանցով կազմված ժամանակային ձևերի միջև զուգահեռ անցկացնելով՝ Մ. Աբեղյանը գտնում է, որ նշված ժամանակները կատարյալ կերպի ժամանակներ են, միայն հարակատարի մեջ կա դրության հետևանքային կողմ: Մ. Արսենևան գրում է, որ երբեմն հարակատարում առաջին պլան է մղվում բայական հատկանիշը՝ պայմանավորված նախադասության ամբողջական բովանդակությամբ, նախադասության սկզբնապատճառի կամ գործողությանը մոտ պարագաների ազդեցությամբ*[20]*: Այդ դեպքում* (sein + Partizip II) *հարակատար+ եմ/էի կառույցը դառնում է պարզ բայական ստորոգյալ և արտահայտած իմաստով մոտենում է կրավորականին*[21]*:* Partizip II+sein *կառույցը ներկա ժամանակում համապատասխանում է* Perfekt Passiv-*ին (վաղակատար ներկա կրավորական),* Präteritum-*ում՝ անցյալ կատարյալում* Plusquamperfekt *(վաղակատար անցյալ կրավորականին)* Passiv-*ին՝* Nachdem unser Freund verbunden und angekleidet war, eilte der Chirurgus Weg. *Երբ մեր ընկերը վիրակապված ու հագնված էր, վիրաբույժը հեռացավ:*

Հետազոտական-տիպաբանական աշխատանքի արդյունքում պարզվում է, որ գրաբարի անցյալ ժամանակն արտահայտվում է վաղակատար ու հարակատար ղերբայներով և նախադասության իմաստից է բխում նշված զուգահեռ ձևերից որևէ մեկով աշխարհաբար թարգմանությունը: Ժամանակակից գերմաներենում քանի որ Partizip II-*ն արտահայտում է նախապես կատարված գործողությունից արդյունք մնացած վիճակ ու դրություն,*

[16] *Պ ա ր ո ն յ ա ն. 1979, 589:*
[17] *Զ ո հ ր ա պ. 1989, 212:*
[18] *Ս ա ք ա պ ե տ ո յ ա ն. 2006, 156:*
[19] Jung. 1967, 211.
[20] Арсеньева и другие. 1963, 182.
[21] *Ա բ ե ղ յ ա ն. 1974, 271:*

ուստի ոչ բոլոր բայերից է հնարավոր լինում կազմել հարակատարի ժամանակաձևերը: Օժանդակ բայի հետ կարող են միացություն կազմել կրավորական ձևով գործածվող բայերը՝ ist geschrieben = *գրված է,* ist gebaut = *կառուցված է և չեզոք սեռի վիճակ ցույց տվող բայերը՝* liegt = *ընկած է,* sitzt = *նստած է: Իսկ ներգործական սեռի բայերի նախկինում ընդունված «գրած եմ», «կառուցած եմ» ձևերն արդի արևելահայերենում ընդունելի չեն և վերափոխվում են վաղակատար դերբայի տեսքով՝ «գրել եմ», «կառուցել եմ»:* Sie **hatten** sich zwei kleine reizende Damen **mitgebracht.** *Նրանք իրենց հետ երկու երիտասարդ հրապուրիչ կանանց էին բերել: Բերված օրինակում ստորոգյալն արտահայտված է օժանդակ բայով ու հարակատար դերբայով, վերջինս վերափոխվում է վաղակատար դերբայի ձևով և թարգմանվում է ոչ թե բերած էին, այլ բերել էին ձևով:* Frida Brenten umarmte und streichelte ihren nach dreizehn Jahren **heimgekehrten** Sohn. *Ֆրիդա Բրենտենը փարվում ու շոյում էր իր՝ տասներեք տարի հետո տուն (օջախ) վերադարձած որդուն:* Partizip II-*ն որոշչային կիրառությամբ թարգմանվում է համապատասխանաբար՝ հարակատարի ձևով:*

Partizip-*ներն արտահայտում են քերականական սեռ և ունեն հարաբերական ժամանակային նշանակություն: Նախադասության մեջ դրանք կարող են ունենալ բային բնորոշ լրացումներ (խնդիրներ և պարագաներ) և պահպանում են համապատասխան բայի խնդրառությունը:*

Partizip-*ն իր լրացումներով կազմում է* Partizipialgruppe = *դերբայական խումբ (դարձված), որը հայերեն թարգմանվում է դերբայական դարձվածով՝* Die zwei… Männer schlichen, vorsichtig, **wiederholt aufmerksam um sich blickend**, durch das Gewirr der Gassen. *Երկու տղամարդ… սողոսկում էին, զգույշ, կրկին ուշադիր չուրջը նայելով, նեղ փողոցների իրարանցման միջով:* Partizip-*ի խումբը (այսուհետ՝ դերբայական դարձվածը) ձևավորվել է* Partizip-I-*ով (ենթակայական դերբայով), կատարում է ձևի պարագայի գործառույթ* (Adverbialbestiumung der Art und Weise), *հայերեն թարգմանվում է անորոշի գործիականով:* Er trank, **am Tische stehend,** langsam seine Kaffee und aß ein Hörnchen dazu. *Նա խմում էր, սեղանի մոտ կանգնելով (կանգնած), դանդաղ իր սուրճը և դրա հետ ուտում մի եղջյուրաձև թխվածք: Ձևի պարագա դարձվածը* (Adverbialbestimuung der Art und Weise) *կազմված է ենթակայական դերբայով, հայերեն թարգմանվում է անորոշի գործիականով (կամ հարակատարով):* In der Innenstadt angekommen, erledigt Quangel erst einige Einkäufe. *Քաղաքի կենտրոն հասնելով՝ Քվանգելը նախ կատարում է մի քանի գնումներ: Դարձվածը (կազմված է հարակատար դերբայով) կատարում է ժամանակի պարագայի* (Adverbialbestimmung der Zeit) *գործառույթ, հայերեն թարգմանվում է անորոշի գործիականով:* **Noch erfüllt von dem Spiel,** war Aina auf dem Heimweg sehr schweigsam. *Դեռևս խաղով կլանված՝ Աինան տունդարձի ճանապարհին շատ լուռ էր: Հարակատարով դարձվածը կատարում է հիմունքի պարագայի* (Adverbialbestimmung des Grundes) *գործառույթ, հայերեն թարգմանվում է համանուն դերբայով:*

Գերմաներենի ենթակայական դերբայը՝ որպես որոշիչ և ստորոգելիական վերադիր հանդես գալով, հայերեն թարգմանվում է ենթակայականի ձևով, իսկ պարագայական կիրառությամբ (ձևի պարագայի գործառույթով)՝ անորոշի գործիականով: Գերմաներենի պարագայական պարտիցիպները (ենթակայական և հարակատար դերբայները), կազմելով դարձվածներ, կատարում են ձևի, ժամանակի, հիմունքի պարագայի գործառույթներ: Ենթակայական դերբայի պարագայական ձևերին հայերենում համապատասխանում են դերբայական դարձվածները: Գերմաներենի հարակատար դերբայը սերտորեն կապված է բային, երեք հիմնական ձևերից է, մասնակցում է անցյալի դիմավոր բաղադրյալ ժամանակաձևերի և անցյալի անորոշի կազմությանը, այսինքն՝ բայի համակարգի ակտիվ տարրերից է:

Եզրակացություն

Ենթակայական և հարակատար դերբայների կառուցվածքային զուգադրական քննությունը պարզում է, որ բայի խոնարհման ձևերով (Ա, Ե / «ուժեղ», «թույլ») պայմանավորված՝ նշված դերբայները կազմվում են հայերենում կատարյալի ու անկատարի հիմքով, գերմաներենում՝ անորոշի հիմքով, ածանցման միջոցով: Գերմաներենի բուն անորոշի և անցյալի անորոշի հիման վրա ստեղծվել են ենթակայական դերբայի երկու ժամանակային ձևերը, ընդ որում անցյալի անորոշ ենթակայականը կազմված է հարակատար դերբայով և օժանդակ բայի ենթակայականով, այսինքն անցյալի գաղափար է արտահայտում: Գերմաներենի ենթակայական դերբայով արտահայտված ձևի պարագան հայերեն թարգմանվում է անորոշ դերբայի գործիական հոլովով՝ դրսևորելով ընդհանրություն գրաբարի անցյալ դերբայի աշխարհաբար նմանատիպ թարգմանությանը: Հայերենի ենթակայականը՝ որպես անկախ դերբայ, ժամանակային ձև ի տարբերություն գերմաներենի, չի կազմում: Գերմաներենի հարակատար դերբայն ունի բարդ և տարբերակված կազմություն՝ արմատական ձայնավորի հնչյունափոխություն, ածանցում՝ պայմանավորված բայի խոնարհման տեսակով: Հետազոտական-զուգադրական քննությունը բացահայտում է, որ գրաբարի անցյալ ժամանակն աշխարհաբար թարգմանվում է վաղակատար կամ հարակատար դերբայներով: Քանի որ ժամանակակից գրական արևելահայերենում հարակատարով դիմավոր ձևերը չեն կիրառվում (գործածական չեն), ուստի հարակատար դերբայը վերափոխվում է վաղակատարի ձևով՝ գերմաներենի ու գրաբարի լեզվավիճակի նկատմամբ ձևավորելով առանձնահատկություն: Գերմաների հարակատար դիմավոր ձևերը, ի տարբերություն ժամանակակից արևելահայ գրական լեզվի, ավելի մոտ են գրաբարին և որպես քերականական կարգ, ընդունված են գրական արևմտահայերենում: Ներգործական բայերի հարակատար ժամանակաձևերի կազմության սահմանափակությունը ու կրավորականի լայն գործածությունը բացատրվում է բայական սեռի դրսևորած գործողության բնույթով: Կրավորական բայերն արտահայտած իմաստով ավելի մոտ են հարակատարի իմաստային կողմին:

Այսպիսով, զուգադրական քննությունը պարզում է ցեղակից լեզուների՝ լեզվավիճակների ընդհանրությունները և պատմական զարգացման ընթացքում ձևավորված առանձնահատկություններն ու ձեռքբերումները:

Արծվիկ Սուվարյան – բ. գ. թ., ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտի ընդհանուր և համեմատական լեզվաբանության բաժնի ավագ գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունը՝ լեզվաբանական տիպաբանություն: Հեղինակ է 1 գրքի և 17 հոդվածի: Suvaryan@sci.am

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աբեղյան Մ. 1974, Երկեր Ձ. Հայոց լեզվի տեսություն, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 847 էջ:

Աղայան Է. 1967, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 403 էջ:

Ասատրյան Մ. 2002, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, ԵՊՀ հրատ., 432 էջ:

Բակունց Ա. 1986, Երկեր, Երևան, «Սովետական գրող», 672 էջ:

Եզեկյան Լ. 2005, Հայոց լեզու, Երևան, ԵՊՀ հրատ., 398 էջ:

Զոհրապ Գ. 1989, Երկեր, Երևան, «Խորհրդային գրող», 650 էջ:

Չարենց Ե. 1983, Երկեր, Երևան, «Սովետական գրող», 672 էջ:

Պարոնյան Հ. 1979, Երկեր, Երևան, «Սովետական գրող», 669 էջ:

Ջահուկյան Գ. 1975, Ժամանակակից հայերենի անդեմ բայաձևերը («դերբայները»). – «Բանբեր Երևանի համալսարանի», № 3, էջ 40–54:

Սաքապետոյան Ռ. 2000, Արևմտահայերենի դասագիրք, Երևան, ԵՊՀ հրատ., 495 էջ:

Տերյան Վ. 1989, Երկեր, Երևան, «Սովետական գրող», 608 էջ:

Арсеньева М. Г. и другие. 1963, Грамматика немецкого языка. М., Госиздательство, 2-е стереотипное издание, «Высшая школа», 427 с.

Москальская О. И. 1956, Грамматика немецкого языка. М., Издательство литературы на иностранных языках, 396 с.

Шендельс Е. И. 1988, Практическая грамматика немецкого языка. М., «Высшая школа», 3-е издание, исправленное, 416 с.

Jung W. 1967, VEB Bibliographisches Institut Leipzig, 518 с.

ГРАММАТИЧЕСКАЯ ТИПОЛОГИЯ СУБЪЕКТНОГО И РЕЗУЛЬТАТИВНОГО ПРИЧАСТИЙ В СОВРЕМЕННОМ ЛИТЕРАТУРНОМ ВОСТОЧНОАРМЯНСКОМ И НЕМЕЦКОМ

АРЦВИК СУВАРЯН

Р е з ю м е

Ключевые слова: грамматическая типология, армянский и немецкий, субъектные и результативные причастия, одновременность, предшествование, действительно-страдательный залог, литературный восточноармянский, западноармянский, конструкция результативный+եմ/էի, обстоятельственные функции.

Субъектные причастия современного немецкого и литературного восточноармянского языков сохраняют единообразие построения. Резуль-

тативное причастие в немецком выступает в двух разных, обусловленных спецификой глагола, построениях, обнаруживая определенные отличия по сравнению с построением армянского результативного причастия. Результативное причастие немецкого тесно связано с системой глагола: будучи одной из трех основных форм глагола, оно участвует в построении личных составных временных форм и формы прошедшего неопределенного времени. В современном литературном восточноармянском языке глаголами действительного залога результативные временные формы, в отличие от немецкого, не образуются, а в литературном западноармянском языке прошедшие временные формы, образованные результативными причастиями, по частоте употребления превосходят формы, образованные перфектными причастиями. Поскольку перфектные времена – совершенного вида и между ними нет смысловой разницы (причастие прошедшего времени древнеармянского переводилось на новоармянский перфектным или результативным причастием), выбор причастия диктовался смыслом предложения. В немецком, участвующее в построении личных составных временных форм прошедшего времени результативное причастие неизбежно преобразуется в перфектную форму. Субъектные и результативные причастия, совмещая глагольные и именные признаки, выступая в сопоставляемых языках в соответствующих синтаксических ролях, становятся более емкими и употребимыми и выполняют также функции исчезнувших форм и причастий.

Арцвик Суварян – к. филол. н., старший научный сотрудник отдела общего и сравнительного языкознания Института языка им. Г. Ачаряна. Научные интересы: лингвистическая типология. Автор 1 книги и 17 статей. Suvaryan@sci.am

GRAMMATICAL TYPOLOGY OF SUBJECT AND RESULTATIVE PARTICIPLES OF MODERN LITERARY EASTERN ARMENIAN AND GERMAN LANGUAGES

ARTSVIK SUVARYAN

Summary

Key words: grammatical typology, Armenian and German languages, Subject and Resultative Participles, simultaneity, pre-tense conditions, active-passive voice, literary Eastern Armenian, Western Armenian, resultative+ եմ/էի construction, circumstantial functions.

Subject participles of modern German and literary Eastern Armenian maintain the uniformity of composition. Resultative participle of German, due to the peculiarities of the verb, appears in two different forms of composition, by revealing certain peculiarities over composition of the Resultative participle

in the Armenian language. Resultative participle is closely connected with the German verb system. Being one of the three main forms of the verb, it participates in the composition of compound finite tense forms and the Simple Past. In the modern literary Eastern Armenian language, resultative tense forms, unlike German, are not formed, and past tenses with the Resultative participle of literary Western Armenian have a predominant role over the perfect tenses in the frequency with which they are used. As the Perfect tenses are of the same form and there is no semantic difference between them (in Grabar = Old Armenian the Past participle was translated to Modern Armenian = Ashkharabar as Perfect or Resultative), the choice of the participle comes from the meaning of the sentence. The Resultative participle form in German used in the formation of the compound finite tenses of the Past is necessarily transformed into the Perfect tense form. Subject participle and Resultative participle, by combining verbal and noun features, appearing in corresponding syntactic positions in paralleled languages, become more capacious and practical, expressing also the functions of disappeared forms and participles.

Artsvik Suvaryan – Candidate of Sciences in Philology, Senior Researcher at the Department of General and Comparative Linguistics of the NAS RA Institute of Language. Scientific interests: Linguistic typology. Author of 1 book and 17 articles. Suvaryan@sci.am

Doi:10.54503/0135-0536-2022.1-197

ԱՐԱԲԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԲԱՌԱՇԵՐՏԸ*

ՍՈՆԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Բանալի բառեր՝ փոխառություն, հայերենի արաբական փոխառություններ, դրական փոխառություններ, բարբառային փոխառություններ, ուղղակի և միջնորդավորված փոխառություններ, բառիմաստային և բառակազմական փոփոխություններ, կենսունակ և ոչ կենսունակ փոխառություններ:

Նախաբան

Լեզվի բառաֆոնդի անբաժանելի մաս է փոխառյալ բառաշերտը, որը ձևավորվել է նրա պատմական զարգացման տարբեր փուլերում՝ արտալեզվական և լեզվական բազմաթիվ գործոններով պայմանավորված: Տարաժամանակյա ու համաժամանակյա հայեցակարգերով փոխառությունների ուսումնասիրության նպատակն է երևան հանել լեզուների և դրանք կրող ժողովուրդների միջև առկա պատմական, մշակութային-քաղաքակրթական փոխհարաբերությունների բնույթը (սա հանրալեզվաբանական քննության առարկա է): Ժամանակագրական իրողություններով, լեզվի պատմական զարգացմամբ պայմանավորված՝ փոխառությունների մի մասը բնականորեն և անխուսափելիորեն դառնում է ոչ կենսունակ, մի մասը՝ փոխարինվում մայրենի համարժեքով, իսկ առանձին դեպքերում էլ՝ կազմում հիմնական բառաֆոնդի բաղկացուցիչ մաս, չարունակաբար գործառվում լեզվի (գրավոր և բանավոր) համակարգում՝ դադարելով գիտակցվել որպես փոխառված:

Այդպիսին են հայերենի՝ արաբական ծագման փոխառությունները ևս: Դրանց առավել ամփոփ առաջին բառացանկը ներկայացնում է Հ. Աճառյանը, 702 բառային միավոր՝ քաղված միջնադարյան հայ մատենագրությունից: Նա նշում է, որ թեև դրանց թիվը ստվար է, բայց ոչ ամբողջական[1]: Արաբական ծագման մեծաթիվ փոխառություններ են ներառված նաև Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարան»-ի հատորներում[2]:

Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարան»-ի արաբական փոխառությունները

Բառարանը ներառում է հայերենի (գրաբար, միջին հայերեն, բարբառ, աշխարհաբար) բառապաշարը, այդ թվում՝ փոխառությունները: Մեր հարցի համար առավել հետաքրքրություն է ներկայացնում արաբերեն ծագման անմիջական և միջնորդավորված բնույթի բառաշերտը: Այն ևս, ըստ բառարանի

* *Ներկայացվել է 01. VII. 2021 թ., գրախոսվել է 12. VII. 2021 թ., ընդունվել է տպագրության 27. III. 2022 թ.:*

[1] *Ա ճ ա ռ յ ա ն. 2013, մաս II, 213:*

[2] *Մ ա լ խ ա ս ե ա ն ց. ՄԲԲ, 1944, հ. I, 1944, հ. II, 1944, հ. III, 1945, հ. IV:*

*կառուցվածքի, պարունակում է ընդհանուր գործածություն ստացած բառեր (առանց նշումի), գավառական կամ բարբառային բառեր (+ նշումով), մեռած կամ հազվադեպ կիրառվող բառեր, մեռած բառեր և նշանակություններ (*նշումով) բաժինները[3]:*

Մեր նախորդ հոդվածում ընդհանուր հատկանիշներով ներկայացրել ենք դրանց մի մասը, ինչպես նաև անդրադարձել արդի գրական հայերենում ցայսօր կիրառություն ունեցող մի շարք բառերի[4]:

Առավել ընդգրկուն է, սակայն, արաբերեն ծագման բարբառային և ժողովրդախոսակցական բառաշերտը. Մալխասյանցի բառարանում, մեր հաշվումներով, ներառված է գրեթե երկու հարյուր բառ (չհաշված բառակազմական ձևերը): Դրանց զգալի մասը կիրառվում է փոխատու լեզվում ունեցած նույն կամ մոտ իմաստներով, այսինքն՝ բառիմաստը հիմնականում պահպանված է[5]: Օրինակ՝ դավա/ի «դաստ, վեճ, պահանջ» (արաբ.՝ daʿva), թամահ (արաբ.՝ tama «մի բան ունենալու ախորժակ, մի բանի աչք տնկելը, ագահանալը»), զուլալ «խիստ վճիտ, պարզ, պայծառ» (արաբ.՝ zulāl), հալալ «օրինական, արդար, անխարդախ» (արաբ.՝ halāl), հալ «վիճակ, իրավիճակ, դրություն» (արաբ.՝ hāl), նալ «պայտ» (արաբ. naʿl), ջամ «գումար, համադումար» (արաբ.՝ jamʿ), սաբաբ «պատճառ» (արաբ.՝ sabab «պատճառ, դրդապատճառ, առիթ»), խալխ «ժողովուրդ, կողմնակի մարդիկ, բազմություն» (արաբ.՝ xalq), ջեյբ «գրպան» (արաբ.՝ jayb), վախտ «ժամանակ» (արաբ. waqt) և այլն:

Արաբերեն ծագման բարբառային փոխառությունների բառիմաստային և բառակազմական առանձնահատկությունները

Բարբառային կամ գավառական բառաշերտից ուսումնասիրության առումով առավել հետաքրքրություն են ներկայացնում այնպիսի փոխառությունները, որոնք, այսօր էլ կենսունակ լինելով բարբառներում և ժողովրդախոսակցական լեզվում, փոխատու լեզվի զուգադրությամբ բառիմաստային ու բառակազմական որոշ փոփոխությունների են ենթարկվել:

Ստորև դիտարկենք դրանցից մի քանիսը:

1. ԱԼԱՓ «*1. անասունների կեր, խոտ, դարման, 2. ընդեղենի առևտուր անող*». *բառն առաջին իմաստով տրվում է Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարան»-ում՝ որպես միջնադարյան շրջանի փոխառություն[6]: Բառի երկրորդ իմաստն առկա է միայն Ստ. Մալխասյանցի բառարանում: Հարկ է նշել, սակայն, որ արաբերենում առաջին և երկրորդ բառիմաստների*

---

[3] *Հեղինակի ընորոշմամբ՝ այս վերջին դասակարգումը սուբյեկտիվ է և պայմանական, թեև մեր դիտարկմամբ՝ բավական արժանահավատ (տե՛ս Մալխասեանց. ՄԲՌ, 1944, հ. 1, 16):*

[4] *Միքայելյան. 2019, № 2, 38–42:*

[5] *Հոդվածում ներկայացվում են փոխառությունների բառարանային ձևերը: Դրանց բարբառային տարբերակներին անդրադառնալու ենք փոխառությունների հնչյունաբանական քննության համատեքստում:*

[6] *Աճառյան. ՀԱԲ, 1971, հ. I, 288:*

արտահայտման համար կիրառվում են բառային տարբեր միավորներ՝ ʾalaf *«անասուններին տրված կեր կամ խոտ» և* ʾallāf *«անասնակերի վաճառական»: Այս բառերը հնչարտաբերական հատկանիշներով մոտ են միմյանց. հավանաբար, այս հանգամանքն արտասանական, աստիճանաբար նաև բառիմաստային չփոթի կամ նույնական գործածության է հանգեցրել[7]: Բառիմաստի ավելի ուշ զարգացմամբ երևան են եկել նաև «ավար, կողոպուտ» իմաստները, որոնք գործածվում են ալափել «կողոպտել, թալանել» բայաձևով: Մեր դիտարկմամբ, ժողովրդախոսակցական լեզվում և բարբառներում կիրառվող լափել բայը, որն ուղիղ իմաստով գործածվում է կենդանիների համար «լեզվով բերանը լցնել և ուտել» նշանակությամբ (այստեղից էլ՝ լափ) և փոխաբերական իմաստով նշանակում է «կողոպտել, թալանել», այս բառի հետ աղերս ունի:*

2. ԱԹԼԱՍ, ԱԹԼԱՉ *«1. գ. մետաքսյա կտոր՝ փայլուն, ողորկ երեսով. կերպաս՝ ալեաս չոր», 2. ած., փխբ.՝ «ողորկ, հարթ. ալեաս երես, ալեաս մարմին»: Ստ. Մալխասյանցը բառը համարում է տաճկերենից կատարված փոխառություն[8]: Ըստ Հ. Աճառյանի՝ բառի միայն առաջին իմաստը՝ «թանկագին կտորեղենի տեսակ, սնդուս», փոխաբերաբար կիրառությունը բառիմաստի հետագա զարգացման հետևանք է: Բացի այդ, նա տալիս է «ատլաս» ձևով, իսկ «ալեաս» տարբերակն առհասարակ չկա: Ստ. Մալխասյանցն «ալեաս»-ը տալիս է վերոնշյալ իմաստներով և տարբերակում է «ատլաս» ձևից, որը ներկայացվում է որպես հունական Ատլանտ դիցաբանական աստծո անունից ծագող բառ և ունի «1. առաջին ողը, որն իր վրա կրում է գլոբուսը, 2. քարտեզագիրք, 3. նկարների ժողովածու» իմաստները: Հատկանշական է, որ արաբերենում* ʾatlasᵘ *և* atlasᵘᵐ *բառերը դաղարային (բառարանային) արտասանությամբ հնչարտաբերական առումով չեն տարբերվում միմյանցից. ունեն միայն քերականորեն արտահայտված տարբերակում (ᵘերկհոլովության և ᵘᵐեռահոլովության ցուցիչներ). Առաջինն ունի «ատլաս՝ կտորի տեսակ», իսկ երկրորդը՝ «1. քարտեզագիրք, 2. ժողովածու» իմաստները:* atlas *բառը վերոնշյալ երեք իմաստներով համանուն-նային կիրառությամբ առկա է տաճկերենում, որից կարելի է ենթադրել՝ նույն կերպ էլ անցել է հայերեն բարբառներին[9]:*

[7] *Հոդվածում արաբերենից փոխառյալ բառերի գրառման համար կիրառվել է* Basker ville MT for Brill 02 *տառադարձման համակարգը* (www. brill.com), *իսկ դրանց համարժեք ձևերի ու իմաստների՝ հայերեն նշված աշխատություններում տրված տարբերակները մեր կողմից համեմատվել են* "Al-Qamus al-jadid" (Tunis, *1985, արաբերեն) և* Баранов. Большой арабско-русский словарь, т. I–II (M., 2002) *բառարաններում ներկայացված տարբերակների հետ: Արաբերեն բառերի վերոնշյալ աղբյուրներում ներկայացված տառադարձումը ճշգրտվել է:*

[8] *«Տաճկերեն» ասելով՝ հեղինակը նկատի ունի թուրքերի գրական լեզուն, որը պարունակում է մեծ քանակությամբ արաբերեն և պարսկերեն բառեր, իսկ «թուրքերեն» բառը հատկացրել է զուտ թուրքական (օսմանական) բառերին (տե՛ս Մ ա լ խ ա ս ե ա ն ց. ՄԲՌ, 1944, հ. I, 17): Ներկայացնում ենք ըստ բառարանի:*

[9] Баскакова. 1977, 75.

3. ԱԼՎԱՆ *«1. ած.՝ զանազան գույներով, երփներանգ. ալվան ծաղիկներ, 2. մկբ.՝ պայծառ գույնով, վառվռուն. Թելը ալվան ներկվեց, 3. գ. խաղողի տեսակ». բառն առավել կենսունակ է հատկապես ածականաբար կիրառվելիս: Այն արաբերեն՝* lawun *«1. գույն, երանգ, նրբերանգ, 2. ներկ, 3. ուտեստ, 4. տեսակ» գոյականի* alwān *«գույներ» հոգնակի թվի ձևն է: Ուշագրավ է, որ փոխատու և փոխառու լեզուներում բազմիմաստությամբ կիրառվող բառային համարժեքները իմաստային համընկումներ չունեն: Իմաստային զարգացումը նկատելի է դառնում գոյականի՝ ածականաբար կիրառման դեպքում. տվյալ պարագայում «ալվան»-ը գրական հայերենի «բազմագույն, երփներանգ» ածականների ժողովրդախոսակցական կամ բարբառային համարժեքն է:*

4. ԱՄԻ *«1. ընտանեկան խոսակցության մեջ՝ հորեղբայր. «Ամի՛, ինձ էլ տար հետդ», 2. չափահաս մարդկանց հարգանքի դիմելաձև, որ տրվում է հատուկ անունից հետո. «Գասպար ամի», 3. հարգանքի դիմելաձև, որով դիմում եմ հատկապես ծերունիներին. «Քանի՞ տարեկան ես, ամի՛» (արաբ.՝* ʿamm *«հորեղբայր»): Փոխատու և փոխառու լեզուների բառային համապատասխան միավորների բառիմաստների զուգադրությունից, հնարավոր միջնորդ լեզվում դրանց կիրառության բացակայությունից ելնելով՝ կարելի է հավանական համարել, որ վերջին երկու իմաստները բարբառային խոսքում կիրառություն են ստացել լեզվի ներքին զարգացման օրինաչափությունների չնորհիվ:*

5. ԱՋԱԼ *«վերջ, կյանքի վերջ, մահ». բարբառային կիրառությամբ առավել կենսունակ է «աջալն եկել է, պիտի մեռնի» արտահայտության մեջ: Ստ. Մալխասյանցը բառը համարում է տաճկերենից կատարված փոխառություն: Հնարավոր է՝ հենց այստեղ էլ այն ստացել է վերոնշյալ բառիմաստները, քանի որ ունենալով արաբական ծագում՝ փոխատու լեզվում այդ իմաստները չունի (համմտ.՝ արաբ.՝* ʿagal *«չտապողականություն, արագություն»):*

6. ԶԻԲԻԼ *«1. գ. մանր թափթփուկ, աղբ, 2. ած., փխբ.՝ անպետք, արժանիքից, նշանակությունից զուրկ» (արաբ.՝* zibl *«աղբ»): Բառը հայերենի բարբառներում փոխատու լեզվում կիրառվող ուղիղ բառիմաստին համարժեք կիրառությունից բացի ձեռք է բերել նաև փոխաբերական իմաստ՝ կիրառվելով ածականաբար. զիբիլ ապրանք էր:*

7. ԶՈՒԼՈՒՄ *«1. գ.՝ աղետ, մեծ չարիք, 2. ած.՝ խիստ չար, աղետալի. զուլում աշխարհ»: Բառը հայերեն բարբառներում և ժողովրդախոսակցական լեզվում այսօր էլ կենսունակ է: Հատկանշական է, սակայն, որ այն փոխատու լեզվում ունի միայն գոյականական իմաստ և կիրառություն՝* zulma *«անարդարություն, բռնաճնշում, կեղեքում»: Միայն գոյականական կիրառություն ունի նաև տաճկերենում: Այսինքն՝ իմաստային զարգացումը հայերենում է տեղի ունեցել:*

8. ՀԱԽ *«1. արդար, իրավացի, 2. աշխատավարժ, արդար պահանջ». բառը հայերեն բարբառներում և ժողովրդախոսակցական լեզվում կիրառվում է և՛ ածականաբար՝ քեզ հախն է, և՛ գոյականաբար՝ հախը որքան է, հախից դալ և այլն: Արաբերեն համարժեք* haqq *բառը ևս երկու խոսքիմաստային արժեք ունի՝ «1. իրավունք, 2. ճշմարտություն, 3. պարտավորություն, պարտք» և*

«իրական, իսկական, արդար»: Նույնական կիրառություն ունի նաև տաճկերենում:

9. ՀԱՐԻՖ *«1. ընկեր, բարեկամ, 2. տղամարդ, 3. խամ, անփորձ»* (արաբ.՝ harif *«1. ընկեր, 2. խաղընկեր, 3. հաճախորդ»*) *բազմիմաստ բառն իր առաջին իմաստով, որով տրվում է և՛ ՀԱԲ-ում, և՛ ՄԲԲ-ում, նույնն է փոխատու ու փոխառու լեզուներում: Սակայն, ինչպես կարելի է նկատել, բառիմաստի հետագա զարգացման շնորհիվ այն ձեռք է բերել նոր իմաստներ. բարբառային գործածությամբ՝ «տղամարդ», ժողովրդախոսակցական լեզվում՝ «անփորձ, խամ» իմաստները. «Շատ հարիֆ է, ով ասես հիմարացնում է»: Բառի՝ արդի գրական հայերեն համարժեքներ են «միամիտ, պարզամիտ, անփորձ» բառերը:*

10. ՀԻՆԱ *«1. բուսատեսակ, 2. դրանից պատրաստած փոշի». բառն ունի և՛ գրական, և՛ բարբառային կիրառություն (արաբ.՝* hinnāʾ *«հինա»): Ստ. Մալխասյանցի բառարանում առկա են այս բառով կազմված հետևյալ արտահայտությունները՝ հինա դնել «ուրախանալ մեկի դժբախտության վրա», հինան քամուն տալ՝ «տապալել», փխբ.՝ «սպանել»:*

11. ՄԱԼ *«հարստություն, գույք (շարժական իրերով), 2. խոշոր եղջերավոր անասունների խումբ», որը, ըստ էության, գյուղացու հիմնական հարստությունն է: Արաբերենում* māl *նշանակում է «1. հարստություն, 2. ունեցվածք, ապրանք, սեփականություն». բարբառում ունեցած երկրորդը իմաստով բառն արաբերենում չի կիրառվում:* mal-*ը վերոնշյալ երկու իմաստներով կիրառվում է տաճկերենում, որի միջոցով էլ անցել է հայերեն բարբառներին: Այս առումով հատկանշական է, որ մի շարք բարբառային միավորներում որպես բառային զուգաբանություններ են կիրառվում տավար, մալ, հայվան, ապրանք տարբերակային ձևերը:*

12. ՄՈՒՆՆԱԹ *«անտեղի հիշատակություն իր արած մի լավության մասին, որ անհաճո կերպով ազդում է լավությունը ստացողի վրա, նրան մի տեսակ պարտավորեցնում ու ճնշում»* (արաբ.՝ minna *«1. սիրալիրություն, բարեգործություն, 2. երախտապարտություն, չնորհակալություն»): Ստ. Մալխասյանցը համարում է թուրքերենով միջնորդավորված արաբերեն ծագման բառ: Ուշագրավ է, որ փոխատու լեզվի համեմատությամբ տեղի է ունեցել բառիմաստի շրջում. բառը կիրառվում է հակառակ իմաստով: Բարբառային խոսքում կենառնակ են մունննաթը քաշել, մուննաթ դալ, մուննաթի տակ ընկնել, մուննաթի տակից դուրս գալ և նման օրինակ այլ դարձվածքներ:*

13. ՄՈՒՇԹԱՐԻ *«Լուսնթագ մոլորակ»* (որպես արխաիկ, հնացած իմաստ) *և «1. հաճախորդ, 2. ձեռք բերել կամեցող»* (որպես բարբառային բառ): *Միջին հայերենի բառարանում (ՄՀԲ), ՀԱԲ-ում, Հայերեն ստուգաբանական բառարանում (ՀՍԲ) (մուշտարի) բառը տրվում է «Լուսնթագ, Յուպիտեր (մոլորակ)» իմաստով՝ արաբերեն* mustari *համապատասխան ձևով: Ստ. Մալխասյանցի բառարանում է միայն, որ մուշթարի բառը տրվում է երկու առանձին իմաստներով՝ մուշթարի և մուշտարի (մուշթարի): Հատկանշական է, որ արաբերենում* al-mustar^{in} *բառը, որոշյալ առմամբ որպես հատուկ անուն կիրառվելիս, աստղագիտական եզրույթ է՝ Յուպիտեր մոլորակ: Իսկ* mustar^{in} *ձևը, անորոշ առմամբ, փոխատու լեզվում ունի «գնորդ» իմաստը: Հայերեն*

բարբառային խոսքում բառն առավել կենսունակ է «մուշտարու աչքով նայել» արտահայտության մեջ գործածվելիս:

14. ՆԱՂԼ *«պատմություն» (արաբ.՝* naql *«1. տեղափոխում, 2. փոխադրամիջոց, 3. թարգմանություն») բառը բարբառային և ժողովրդախոսակցական լեզվում կիրառվում է անել բայի հարադրությամբ՝ նաղլ անել: Հատկանշական է, որ հոգնակի թվի նաղլեր անել ձևը իմաստային նրբերանգ է հաղորդել բային՝ «ստահոդ, անհավատալի բաներ պատմել». այս բառիմաստը փոխառու լեզվում բացակայում է:*

15. ՍԱԲՐ *«1. համբերություն, 2. փուշտալը, որ համարվում է նախազգուշություն ինչ-որ բանի». բառը բարբառային կիրառություն ունի. Ստ. Մալխասյանցն այն համարում է տաճկերենից հայերենին անցած արաբերեն փոխառություն: Արաբերենում* sabr *բառի իմաստն է՝ «1. համբերություն, հանդարտություն, 2. սպասում»: Որպես համանուն բառ՝* sabr *նշանակում է նաև՝ «ալոե»: Ուշագրավ է, սակայն, որ բարբառային կիրառության երկրորդ իմաստն արաբերենում չկա. այն հանդիպում է տաճկերենում: Իմաստային առումով հնարավոր որոշ աղերս ունի* sabra *բառը, որը նշանակում է «սաստիկ ցուրտ, սառնամանիք»:* Սաբր *բառի կիրառությունը երկրորդ իմաստով ավելի հաճախադեպ է, առավել հայտնի է օրինակ՝* «պիչերվա սաբրը խեր է» *արտահայտության մեջ գործածվելիս:*

Արաբերենից փոխառված բառ-բաղադրիչով կազմված բարբառային բառեր

Փոխառու լեզվի զուգադրությամբ բառիմաստային հետաքրքիր զարգացումներից բացի Ստ. Մալխասյանցի բառարանում տեղ են գտել նաև բարբառային կամ ժողովրդախոսակցական բառաշերտին առնչվող բառակազմական ուշագրավ մի շարք դրսևորումներ: Մասնավորապես՝ բանավոր խոսքում առավել կենսունակ և բառարանային գրանցում ունեն փոխառյալ բաղադրիչով ու հայերենի ածանցներով ստեղծված պարզ և ածանցավոր բայեր[10]: Օրինակ՝ թարկ-ել *կամ* թարգ-ել, թարգը տալ, *«թողնելը, վերջը տալը»՝ նա չի թարգում ծխելը: Սա արաբերենի* taraka *«թողնել, լքել» բայարմատից և հայերենի* -ել *բայական վերջածանցից կազմված ձև է: Նմանօրինակ՝* թամամ-ել *«լրացնել, ամբողջացնել»* (tamām *«ողջ, ամբողջ, ավարտուն»*), զավթել *«1. գրավել, տիրապետել, իր իշխանության տակ առնել, 2. նվաճել, գրսպել (արաբ.՝* dabata *«1. պահել, զսպել, 2. բռնել, գրավել»*), թֆլ-ել (փխնկ.՝ թլֆել, թըլըֆել, թալաֆ անել*) «վատնել, իզուր ծախսել» (արաբ.՝* talaf *«վնաս, կորուստ, վատնում»*), հարամ-ել *«կեղտոտել, անսուրբ դարձնել» (արաբ.՝* harām *«1. արգելված, 2. սուրբ, 3. անօրինական»*), հերսուտ-ել *«բարկանալ, զայրանալ» (արաբ.՝* haras *«բարկություն, ցասում»*), նաֆս-ել *«աչքով տալով, վնասելով գործը խանգարել» (արաբ.՝* nafs *«1. հոգի, 2. մարդ, … 9. չար աչք»*), նաղլ անել *«ստահոդ, անհավատալի բաներ պատմել» (արաբ.՝* naqala *«1. տեղափոխել, 2. նկարագրել, 3. պատմել, փո-*

[10] *Գիտական գրականության մեջ ավելի ընդունված է բառակազմական այս ձևերը համարել փոխառյալ բաղադրիչով և փոխառու լեզվի բառակազմական միջոցներով ստեղծված նորակազմություններ:*

խանգել»), ռադ անել «վանել, մերժել» (արաբ.՝ radda *«1. վերադարձնել, հետ տալ, 2. վանել, մերժել»), հարամ անել «խանգարել, թույլ չտալ վայելել» (արաբ.՝* harām *«1. արգելված, 2. սուրբ, 3. անօրինական»), ջամ անել (արաբ.՝* jamʿ *«գումար»), իլաջ անել «ելքը գտնել, բուժել» (արաբ.՝ «ելք, հնար, դեղ, միջոց») և այլն:*

Գոյականական ձևերից առավել կենսունակ են արաբերեն փոխառյալ բաղադրիչով և հայերենի -ություն վերջածանցով կազմված բառերը՝ հարամ+ություն, հերսոտ+ություն, ազապ+ություն, ախմախ+ություն, աչուղ+ություն, դալլալ+ություն, դալլաք+ություն, ջահիլ+ություն և այլն:

Բառակազմական առումով հետաքրքրություն են ներկայացնում նաև ան- ժխտական նախածանցով և փոխառված բաղադրիչով կազմված ածականները՝ ան-խեր «անօգուտ, անպետք» (արաբ.՝ xayr *«1. լավ, բարի, 2. բարիք»), ան-լազալի «անհամ, անհաճո, առանց բավականության» (արաբ.՝* lazza *«քաղցրություն, հաճելիություն»), ան-հարաքալի «անուժ, ուժասպառ» (*haraka *արաբ.՝ «1. շարժում, 2. գործողություն, 3. գործունեություն») և այլն:*

Մյուս խոսքի մասերին պատկանող բառերը խիստ սակավաթիվ են՝ հալա/հըլը «1. դեռ, տակավին, 2. հորդորական խոսք մի բան սկսելու, անելու» (արաբ.՝ «մինչև ոչ…» hal +la*), աման, համա «1. բայց, թեև, 2. զարմանքի և դոհունակության արտահայտություն, 3. զարմանքի և հանդիմանության, հեգնանքի արտահայտություն» (արաբ.՝* ʾamma*), ֆլան/ֆիլա «այսինչ, ոմն» (արաբ.՝* fulān *«այսինչ, ոմն»):*

Եզրակացություն

Ընդհանրացնելով արաբերեն ծագման փոխառությունների բարբառային ու ժողովրդախոսակցական կիրառություն ունեցող բառաշերտում առկա բառիմաստային հիմնական զարգացումների ուսումնասիրության արդյունքները՝ հնարավոր է արձանագրել դրանցում բառիմաստի զարգացման, մանավորեցման, շրջման երևույթների առկայություն, որոնք երևան են գալիս փոխատու և փոխառու լեզուների համապատասխան ձևերի զուգադրական քննության պարագայում: Բառիմաստային նշված փոփոխություններն արդյունք են հիմնականում լեզվական երկու՝ արտաքին և ներքին զարգացումների. արտաքինը միջնորդ լեզվի ազդեցություն է. բառիմաստն առաջացել է միջնորդ լեզվում և ներքին՝ այն նոր իմաստներ ձեռք է բերել փոխառու լեզվում (հայերեն բարբառում): Բառակազմական առումով ուշադրավ են փոխառյալ բաղադրիչով և հայերենի բառակազմական միջոցներով ստեղծված բայական, գոյականական ու ածականական նորակազմությունները:

Սոնա Միքայելյան – բ. գ. թ., ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ընդհանուր և համեմատական լեզվաբանության բաժնի գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ հայերենի արաբական փոխառություններ, տիպաբանական (զուգադրական) լեզվաբանություն, հայ բարբառագիտություն: Հեղինակ է 1 մենագրության և 15 հոդվածի: sonmiq20@gmail.com

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աճառյան Հ. 1971, Հայերեն արմատական բառարան (ՀԱԲ), հ. I, Երևան, ԵՊՀ հրատ., 697 էջ:

Աճառյան Հ. 2013, Հայոց լեզվի պատմություն, մաս II, Երևան, ԵՊՀ հրատ., 365 էջ:

Մալխասեանց Ստ. 1944, Հայերէն բացատրական բառարան (ՄԲԲ), հ. I, Երևան, ՀՍՍՌ պետ. հրատ., 608 էջ, 1944, հ. II, Երևան, ՀՍՍՌ պետ. հրատ., 512 էջ, 1944, հ. III, Երևան, ՀՍՍՌ պետ. հրատ., 614 էջ, 1945, հ. IV, Երևան, ՀՍՍՌ պետ. հրատ., 646 էջ:

Միքայելյան Ս. 2019, Արդի գրական հայերենի՝ արաբերեն ծագման մի քանի փոխառությունների մասին.– «Լեզու և լեզվաբանություն» (Երևան), № 2, էջ 38–42:

Баскакова Н. А. 1977, Турецко–русский словарь. М., Изд. «Русский язык», 967 с.

ДИАЛЕКТНЫЙ СЛОЙ АРАБСКИХ ЗАИМСТВОВАНИЙ АРМЯНСКОГО ЯЗЫКА

СОНА МИКАЕЛЯН

Р е з ю м е

Ключевые слова: заимствование, арабские заимствования армянского языка, литературные заимствования, диалектные заимствования, прямые и косвенные заимствования, смысловые и словообразовательные изменения, продуктивные и непродуктивные заимствования.

Неотъемлемой частью словарного состава языка являются заимствованные слова, которые передавались в различные периоды его исторического развития и обусловлены разными языковыми и внеязыковыми факторами. Целью изучения заимствований по диахроническому и синхроническому принципам является выявление особенностей исторических и культурных взаимосвязей, существующих между языками и народами-носителями данных лингвокультур.

Исследование диалектных слов, которые, согласно «Армянскому толковому словарю» Ст. Малхасянца, имеют арабское происхождение, показало, что их значительная часть употребляется в прямом значении или имеет близкое значение к соответствующему слову в языке-источнике [например, **դավա/ի** «суд, спор, требование» (араб. da‘va), **զուլալ** «прозрачный, чистый, ясный» (араб. zulāl), **հալալ** «справедливый, законный» (араб. halāl)] и т. д. Но в некоторых словах произошли семантические изменения, которые выявляются при сопоставлении с языком-источником [ср. **աջալ** «конец, конец жизни, смерть» (араб. ʿajal «спешность, быстрота»), **զիբիլ** мусор «ненужный, неценный» (араб. zibl «мусор»)]. Семантические изменения происходят в основном из-за влияния языка-посредника, или данное слово приобретает новые значения в заимствующем языке (в диалектах).

Сона Микаелян – к. филол. н., научный сотрудник отдела общего и сравнительного языкознания Института языка им. Г. Ачаряна НАН РА. Научные интересы: арабские заимствования в армянском языке, типологическое (сопоставительное) языкознание, армянская диалектология. Автор 1 монографии и 15 статей. sonmiq20@gmail.com

DIALECTAL WORD LAYER OF ARABIC BORROWINGS IN THE ARMENIAN LANGUAGE

SONA MIKAYELYAN

Summary

Key words: a borrowing, Arabic borrowings in Armenian, literary borrowings, dialectal borrowings, direct and mediated borrowings, semantic and derivative changes, active and passive borrowings.

The borrowed layer of vocabulary is an inseparable part of a language, formed at different stages of its historical development due to numerous extra-linguistic and linguistic factors. Synchronic and diachronic approaches to the study of borrowings aim at exploring the nature of the existing historical and cultural interrelations between the languages and the peoples of the given linguo-culture.

The study of the dialectal words that are of Arabic origin according to "Armenian Explanatory Dictionary" compiled by St. Malkhasyants, shows that most of them have fully or partially preserved the lexical meaning that they had in the source language, for example: **դավա/ի** 'trial, dispute, demand' (Arabic: da' va), **զուլալ** "light, clear, bright" (Arabic: zulāl), **հալալ** "lawful, just" (Arabic: halāl), etc. A number of words, however, have undergone semantic changes as compared to their original variant in the source language (cf. **աջալ** "end, end of life, death – Arabic: 'ajal "hurry, speed", **զիբիլ** "useless, worthless" – Arabic: zibil "garbage"). Semantic changes may be the result of the influence of a third language or a borrowed word may acquire a new meaning in the borrowing language (i.e. in dialects).

Sona Mikayelyan – Candidate of Sciences in Philology, Researcher at the Department of General and Comparative Linguistics of the NAS RA Institute of Language after H. Acharyan. Scientific interests: Arabic borrowings of Armenian, typological (comparative) linguistics, Armenian dialectology. Author of 1 monograph and 15 articles. sonmiq20@gmail.com

Doi:10.54503/0135-0536-2022.1-206

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀՈՒՄ ԿԻՄԵՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ*

ԳԱՐԵԳԻՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Բանալի բառեր՝ նոր մոտեցում, հատկանիշներ, կիմերական մշակույթ, դամբանային համալիր, դամբանախմբեր, թաղման ծես, ցեղախմբեր, հեծյալ ռազմիկներ, զենք, ձիասարք:

Նախաբան

Կիմերները, ըստ էության, Արևելյան Եվրոպայի պատմական առաջին ժողովուրդն են[1]: Հնագիտությանը հայտնի է «կիմերական մշակույթ» եզրը: Այն սկսել են գործածել հյուսիսմերձևւծովյան նախասկյութական մշակույթները հետազոտող Դ. Յա. Սամոկվասովը, Մ. Էբերտը, Ա. Տալգրենը՝ անցած դարասկզբին[2]: Վ. Ա. Գորոդցովը, անդրադառնալով կիմերական մշակույթի խնդրին, փորձել է առանձնացնել հիշյալ մշակույթին բնորոշ աշխատանքի գործիքների և զենքի առաջատար տիպերը[3]: Կարծիքը, որ կիմերները կոբանյան մշակույթի կրողներն են[4], հետագա հետազոտություններով չի հաստատվել: Ակնբախ էր Յեսսենը գտնում էր, որ բուն կիմերական մշակույթը դեռ պետք է փնտրել[5]: Ուսումնասիրողներն անդրադարձել են Հյուսիսային Կովկասում և Ղրիմում կիմերական մշակույթի առկայության խնդիրներին[6]: Ա. Յու. Ալեքսեևը ստիպված է խոստովանել, որ Արևելյան Եվրոպայի տափաստաններում հայտնի չէ որևէ հնագիտական մշակույթ, որը կարելի է միարժեքորեն մեկնաբանել որպես կիմերական[7]: Ակոլդ Իվանչիկի հայտնի աշխատության մեջ նշվում է, որ կիմերական հնագիտական մշակույթն ինչպես եղել է, այդպես էլ մնացել է խնդրահարույց, սակայն այդ հիմնախնդրի լուծման ճանապարհներ կարելի է գտնել[8]: Հյուսիսմերձևւծովյան տափաստանների վաղերկաթեղարյան դարաշրջանի սկզբնական փուլն ընդունված է անվանել կիմերական կամ նախասկյութական[9]:

---

* *Ներկայացվել է 30. XI. 2021 թ., գրախոսվել է 11. I. 2022 թ., ընդունվել է տպագրության 18. I. 2022 թ.:*

[1] Городцов. 1928, 46–47; Крупнов. 1958, 176; Махортых. 2008, 375.

[2] Иванчик. 1996, 14.

[3] Городцов. 1928, 53–58.

[4] Ельницкий. 1949, 23.

[5] Иессен. 1954, 131.

[6] Крупнов. 1960, 110, 127; Щепинский. 1958, 146–147; Щепинский. 1962, 64–65.

[7] Алексеев. 1992, 77.

[8] Иванчик. 1996, 14–15.

[9] Мелюкова, Мошкова. 1989, 7.

Կիմերական հիմնախնդրի արդի վիճակը

Ա. Յեսսենը, 1950-ականների սկզբին անդրադառնալով կիմերական և սկյութական մշակույթների հարաբերակցությանը, եկավ այն եզրակացության, որ սկյութական ցեղերն ու կիմերները մ. թ. ա. VIII–VII դարերում ունեին արտակարգ մոտ մշակույթներ և որպես այդ վաղ շրջանի մշակութային համալիրների ստեղծողներ՝ կարելի է ընդունել ինչպես սկյութների նախնիներին, այնպես էլ կիմերներին[10]: Որոշ ժամանակ անց հնագիտական ուսումնասիրություններում սկսեց հանդիպել նաև «կիմերա-սկյութական մշակույթ» եզրը[11], թեև մեկ միասնական «կիմերա-սկյութական մշակույթի» գոյությունը մինչ այժմ ապացուցված չէ: Ի. Ն. Մեդվեդսկայան վաղսկյութական մշակույթի ժամանակագրության վերաբերյալ գիտական բանավեճի շրջանակներում 1992 թ. հավաստել է, որ «քոչվորների մշակույթը միասնական էր»՝ հիմք ընդունելով Իրանում ու Թուրքիայում հայտնաբերված հնագիտական համապատասխան նյութերի տիպաբանական նմանությունը: Կիմերների և սկյութների հնագիտական մշակույթների միասնականության մասին խոսք է գնում նաև նույն հեղինակի մեկ այլ հոդվածում[12]: Սակայն այն հանգամանքը, որ երկու ցեղախմբերի զենքն ու ձիասարքը միասնական են[13], դեռևս բավարար չէ ապացուցելու համար՝ կիմերները և սկյութները միևնույն հնագիտական մշակույթի կրողներն են: Այլ խոսքով, քիչ հավանական է, որ մ. թ. ա. VIII դարի վերջ – VII դարում պատմական Գամիրքի և Շակաշենի մշակույթները նույնական են եղել[14]: Ստեղծված փակուղային իրավիճակից ելք գտնելու նպատակով՝ մեր կողմից նախկինում գիտական շրջանառության մեջ է դրվել «կիմերա-սկյութական մշակութային ընդհանրություն» եզրույթը՝ տարբեր մշակույթների վերաբերյալ միահյուսված հասկացությունները հետագայում տարանջատելու համար[15]:

Վերջին տարիներին արտերկրում հրատարակված աշխատանքներից կարելի է առանձնացնել Ա. Իվանչիկի մենագրությունը, որտեղ կիմերներին առնչվող հարցերը քննարկվում են արևելաեվրոպական տափաստանների և Կովկասի հնագիտության ընդհանուր համատեքստում: Պարզելու համար, թե ինչ հնագիտական իրողություններ են թաքնված կիմերների վերաբերյալ գրավոր աղբյուրների հաղորդումների ետևում, հեղինակի կարծիքով,

[10] Иессен. 1953, 110; Иессен. 1954, 130.

[11] Воронов. 1980, 200; Медведская. 1992, 105.

[12] Медведская. 1994, 124–125, 129.

[13] *Նույնիսկ այս դրույթն ապացուցված չէ: Օրինակ՝ կիմերական սուրը՝ հետզհետե լայնացող և ծայրի մոտ կտրուկ նեղացող շեղբով, չի հանդիպում սկյութական համալիրներում: Կարելի է նշել նաև «թռչնագլուխ բլթակով» երկմետաղ մարտական կացինների առկայությունը կիմերական համալիրներում ու դրանց բացակայությունը զենքի սկյութական հավաքածուներում: Լատինական D տառի ձևն ունեցող վերջավորություններով կիմերական լկամները բնորոշ չեն սկյութական ձիասարքին: Տիպաբանական ապագա հետազոտությունները կօգնեն վեր հանել այլ տարբերություններ ևս:*

[14] *Գամիրքը Հյուսիսային Կովկասում տեղադրելու վարկածը (տե՛ս* Махортых. 2008, 358*), մեր կարծիքով, քննադատության չի դիմանում:*

[15] *Թումանյան. 2018, 216:*

կարիք է առաջանում անդրադառնալ ոչ միայն և ոչ այնքան բուն կիմերական տափաստանային տարածքների նյութերին, այլ՝ նախ և առաջ՝ Առաջավոր Ասիայի տարածաշրջաններում հայտնաբերված համապատասխան համալիրներին: Թեև կիմերների ասպատակություններին ենթարկված հիշյալ տարածաշրջանները նրանց մշակույթի համար «լուսանցքային» են համարվում, այնուամենայնիվ, գրավոր ու հնագիտական աղբյուրների տվյալների համաձայնեցման խնդրում գերակայությունը հենց դրանց է պատկանում: Ա. Իվանչիկն առաջ է քաշում այն վարկածը, որ կիմերական հնագիտական մշակույթի առանձնահատկություններից են ստորգետնյա քարարկղներում կատարված թաղումները և դրանցում երկմետաղ կոցավոր կացինների առկայությունը, որոնց չեղքի տակ «թուչնագլուխ բլթակ» կա[16]: Այսպիսով, Իմիրլերի (Ամասիայի մարզ) և Նորշունթեփեի (Ծոփք) քոչվորական դամբարանները համարվել են կիմերական[17]:

Ուշադրության է արժանի, անշուշտ, Ս. Վ. Մախորտիխի ղոկտորական ատենախոսությունը[18]: Այս աշխատության մեջ մանրամասն անդրադարձ է արվում հիմնախնդրի նախապատմության: Ատենախոսության հեղինակը համակարծիք է այն ուսումնասիրողներին, որոնք համարում են՝ կիմերների թրակական պատկանելությունը հնագիտական տվյալներով չի հաստատվում: Նույն կերպ ժխտվում են վարկածները, որոնց համաձայն՝ կիմերները կոբանյան կամ մեոտական մշակույթների կրողներն են: Մերձևւեծովյան տարածաշրջանում առանձնացվում են վաղքոչվորական ցեղախմբերի վեց ենթախմբեր՝ ըստ հնագիտական համալիրների նկարագրի: Միաժամանակ ընդգծվում է դրանց մշակութային անհամասեռությունը: Եզրակացություն է արվում, որ կիմերներն իրականում գոյություն են ունեցել:

Կիմերական հիմնախնդրի պարզաբանման գործում լուրջ ներդրում է Վ. Ս. Օլխովսկու մենագրությունը, որը նվիրված է վաղ երկաթի դարաշրջանում եվրասիական տափաստանների արևմտյան հատվածի բնակչության կոթողային քանդակագործությանը[19]: Այս աշխատությունը՝ քննարկվող հարցերի ընդգրկման ամբողջականության, կատարման ու ներկայացման որակի առումով, իր բնագավառում առայժմ ամենածանրակչիռ և հիմնարար հետազոտությունն է: Այստեղ պատկերաքանդակները հիմնավորված դիտարկվում են որպես հնագիտական սկզբնաղբյուր: Ուսումնասիրության

---

[16] Ivantchik. 2001, 12, 49, 55–56. *Հատկանշական է՝ հիշյալ հեղինակն իր այս մենագրության հրատարակությունից ընդամենը տասներեք տարի առաջ այն կարծիքն է հայտնել, որ «մենք չատ քիչ գիտենք» մ. թ. ա. VIII–VII դարերում քոչվոր կիմերների և սկյութների Առաջավոր Ասիա ներխուժումների մասին, թեև դրանք լրջորեն ազդել են քննարկվող տարածաշրջանի «ճակատագրի» վրա (տե՛ս* Иванчик. 1988, 38*):*

[17] Ivantchik. 2001, 279. *Այս աշխատությունը ենթարկվել է չափազանց սուր քննադատության և համարվել «հնագիտական տվյալների պարզունակ գործածում պատմաբանի կողմից», քանի որ այստեղ բացակայում է հեղինակի կողմից օգտագործվող հնագիտական աղբյուրի «տարրական քննադատությունը» (տե՛ս* Скаков, Эрлих. 2005, 201–203; Скаков. 2005, 16–17*):*

[18] Махортых. 2008.

[19] Ольховский. 2005.

ամենածավալուն հատվածը՝ երրորդ գլուխը, նվիրված է «կիմերական» պատկերաքանդակներին: Դրանով լուրջ հիմքեր են ստեղծվում կիմերական հուշակոթողները սկյութական մարդակերպ մահարձաններից տարբերելու և առանձնացնելու համար:

Ուսումնասիրության հեռանկարները

Կիմերական և սկյութական մշակութային համալիրների տարանջատումն ու սահմանազատումը կարևոր խնդիր է, որը մինչ այժմ արմատապես չի լուծվել, մասնավորապես՝ առաջավորասիական տարածաշրջանում: Կիմերների ու սկյութների հնագիտական մշակույթների մերձավորությունը նշել են բազմաթիվ հետազոտողներ[20], դրանց թվում՝ տողերիս հեղինակը: Հետևություն ենք արել, որ քոչվորների հիշյալ ցեղախմբերը պատկանում են միևնույն տնտեսական-մշակութային տիպին, մեր պատկերացմամբ՝ մեկ մշակութային ընդհանրությանը[21]: Դամբանային համալիրների վերաբերյալ խոսելիս՝ չենք բացառել, որ թաղման ծեսի բաղադրամասերի մանրակրկիտ վերլուծության արդյունքում հնարավոր կդառնա կիմերական ու սկյութական դամբանային համալիրները քննարկել առանձին՝ որպես տարբեր մշակույթների բաղկացուցիչներ[22]:

Հայկական լեռնաշխարհի դամբանային համալիրներում կիմերական և սկյութական թաղման ծեսերի դրսևորումները նախկինում քննարկման առարկա են դարձել[23]: Եթե կիմերները, իրոք, դուրս են մղվել իրենց բնակության տարածքներից, ապա, հավանաբար, նրանք ճանապարհ պիտի ընկնեին ընտանիքների հետ[24]: Այսինքն, հեծյալ ռազմիկների չարաչարանքների հետ պետք է լինեին սայլեր, որոնցով հարմար կլիներ տեղափոխել կանանց, երեխաներին և ապրելու համար անհրաժեշտ գույքը: Իսկ կիմերներին «հետապնդող» սկյութների զորագնդերում, ըստ երևույթին, կանայք ու երեխաներ չկային[25]: Սկյութների արշավանքը սկզբնական փուլում, ավելի շուտ ռազմական ձեռնարկում էր[26]: Զենք հետևում այն ուսումնասիրողներին, ովքեր գերադասում են «կիմերա-սկյութական մշակույթը» քննարկել որպես մեկ ամբողջություն[27]: Նրանցից, օրինակ, Ա. Իվանչիկը համարժեք է համարում «վաղսկյութական» ու կիմերական հուշարձաններ արտահայտությունները: Ինչ վերաբերում է հյուսիսմերձևւծովյան տարածաշրջանում կիմերական հիմնախնդրի շուրջ քննարկումներին, ապա ենթադրյալ կիմերական մշակույթին որոշակի հնագիտական հուշարձաններ վերա-

[20] Алексеев. 1992, 40, 91; Алексеев. 2003, 99; Ivantchik. 2001, 172–176.
[21] Tumanyan. 2010, 189–191; Tumanyan. 2016, 27–31.
[22] *Թումանյան. 2018, 216:*
[23] Tumanyan. 2017, 196–201.
[24] Phillips. 1972, 136.
[25] Ильинская. 1983, 55; Мелюкова. 1989, 113.
[26] Черненко, Махортых. 1986, 227, 229; Иванчик. 1988, 38–48.
[27] Воронов. 1980, 200; Медведская. 1992, 105; Дьяконов. 1994, 112; Алексеев. 1992, 40; Алексеев. 2003, 98; Ivantchik. 2001, 174.

դրելու փորձերից[28] և ձիասանձի մետաղական պարագաների հիման վրա մ. թ. ա. VIII–VII դարերի տափաստանային հուշարձանների դասակարգումից հետո[29], թաղման ծիսակարգում նկատվել[30] և ընդհանրացվել են[31] որոշ օրինաչափություններ: Օրինակ՝ դեպի արևելք ու հյուսիս-արևելք ուղղված կմախքները սովորաբար կծկված են և ուղեկցվում են գույքի չեռնոգորովյան տիպի համալիրներով, իսկ դեպի արևմուտք ուղղված ու մեծ մասամբ ձգված դիրքով կմախքների հետ հայտնաբերվում են նովոչերկասկյան տիպի արտեֆակտեր: Հիշյալ օրինաչափությունների հիման վրա փորձ է արվել դասակարգել մ. թ. ա. VIII–VII դարերի դամբարանները[32]: Հարկ է հավելել նաև, որ ժամանակագրական գծային սխեման ոչ բոլոր ուսումնասիրողների կողմից է ընդունվում: Չի բացառվում չեռնոգորովյան և նովոչերկասկյան խմբերի հուշարձանների մասնակի համադրակցությունը[33]: Համարվում է, որ կիմերական մշակույթը կազմավորվել է Դնեպրի և Նախակովկասի միջև ընկած տափաստաններում, Հյուսիսային Կովկասի նատակյաց ցեղերի հետ սերտ շփումների պայմաններում[34]:

Հայկական լեռնաշխարհում կիմերական մշակույթի առկայության խնդրի ուսումնասիրության բնագավառում անհրաժեշտ է նոր մոտեցում ցուցաբերել: Դա հատկապես կարևոր է վերացնելու համար այն հակասությունը, որ կա հնագույն գրավոր աղբյուրների հաղորդած տեղեկությունների և գիտական հետազոտությունների արդյունքների միջև: Գտնում ենք, որ հնագիտական իրողությունները հնարավորինս պիտի համաձայնեցվեն և համաժամանակացվեն պատմական իրադարձությունների հետևանքով ձևավորված մշակութային իրավիճակին: Մյուս կողմից՝ առանձնապես արդիական է այն միտքը, որ կիմերական մշակույթի ծագման և կիմերների վաղ ժամանակաշրջանի պատմության լուսաբանման խնդիրը հնարավոր չէ լուծել միայն հյուսիսսևծովյան կամ հյուսիսկովկասյան տարածաշրջանների տվյալների հիման վրա:

Այսպիսով, Հայկական լեռնաշխարհում առկա կիմերական մշակույթի ուսումնասիրության հարցը խիստ կարևոր է և արդիական: Այն անտեսելը հանգեցնում է գիտական լուրջ սխալների՝ Հայքի կիմերական մշակութային համալիրները, ակամա, վերագրվում են էթիունյան կամ ուրարտական մշակույթներին: Մյուս կողմից, հարկ է խուսափել հակառակ ծայրահեղությունից: Չի կարելի բոլոր ոչ ուրարտական հնագիտական համալիրները համարել կիմերական կամ սկյութական: Այսինքն, ոչ միայն պետք է հաշվի առնել համաժամանակյա էթիունյան բնիկ մշակույթի գոյությունը հավաստող բազմաթիվ փաստերը, այլև հարկ է գիտակցել մ. թ. ա. VII–VI դարերի տեղական մշակույթի հետագա լուրջ ուսումնասիրության անհրաժեշտությու-

[28] Городцов. 1928, 53–59.
[29] Иессен. 1953.
[30] Смирнов. 1966, 41–42; Лесков. 1971, 87–91.
[31] Тереножкин. 1976, 36–60; Махортых. 2008, 31–32, 105.
[32] Шарафутдинова, Дубовская. 1982, 129–132.
[33] Ivantchik. 2001, 120.
[34] Махортых. 2008, 301–303.

նը: Առաջին հայացքից էլ երևում է, որ Հայաստանի հիշյալ ժամանակաշրջանի մի շարք հուշարձաններում (Օշականի № 61 ու № 87, Դարանջի, Գյոզլուի[35], Զոլաքարի[36] դամբարաններ և այլն) շարունակվում է էթիունյան մշակութային ավանդույթը: Մասնավորապես՝ Գյոզլուի դամբարանը համարվում է ուշուրարտական և հին հայկական մշակույթները կապող օղակ: Ինչպես տեսնում ենք, քննարկվող թեման արդիական է ոչ միայն կիմերագիտության, այլև՝ հնագիտության և հայագիտության համար ընդհանրապես:

Այս դժվարին խնդիրը պարզաբանելիս հարկ է ցուցաբերել համակողմանի մոտեցում: Ստացված բուն հնագիտական արդյունքները պետք է զուգակցել գրավոր վկայությունների, պատմալեզվաբանական, մասնավորապես՝ տեղանվանաբանական տվյալների, բանագիտական և ազգագրական տեղեկույթյունների հետ: Ինչպես ամեն մի հնագիտական ուսումնասիրություն, որը նման հնարավորություն է ընձեռում, այս ուսումնասիրությունը ևս ճիշտ կլինի սկսել գրավոր աղբյուրների քննությունից: Քանի որ կիմերները գիր և դրամ չեն ունեցել, ուստի մեր ձեռքի տակ են թեմային առնչվող ընդամենը երկու տեսակի գրավոր սկզբնաղբյուրներ՝ սեպագիր արձանագրություններ և պատմիչների հաղորդումներ: Անհրաժեշտ է օգտվել այս բոլոր սկզբնաղբյուրներից՝ ասուրաբաբելական սեպագիր արձանագրություններից, Աստվածաշնչի և պատմիչների հաղորդումներից, որոնք գնահատելի ու կարևոր տեղեկություններ են հաղորդում քննարկվող հարցի առնչությամբ:

Խնդրի պարզաբանմանը նպատակաուղղված նոր մեթոդի էությունն այն է, որ Հայկական լեռնաշխարհի կիմերական հնագիտական համալիրներն առանձնացնելու համար ներմուծվելու են դրանք բնութագրող որոշակի հատկանիշներ, որոնց կիրառման շնորհիվ կմեծանա ուսումնասիրությամբ ստացվելիք արդյունքների պատմական իրականությանը մոտ լինելու հավանականությունը: Թեմային առնչվող բազմաքանակ տվյալներն ամփոփելիս գործ ենք ունենալու հնագիտական երեք տիպի տեղեկությունների հետ: Դրանց հիմնական մասը վերաբերում է առանձին դամբանային համալիրներին, սակայն կա նաև հաղորդումների մի ստվար հատված, որտեղ խոսք է գնում դամբանախմբի կամ դամբանադաշտի մասին ընդհանրապես: Այդ տիպի տեղեկատվությունը հնարավոր չէ վերագրել որոշակի դամբարանի, առավել ևս, երբ հաճախ անհայտ է մնում, թե տվյալ մշակույթին պատկանող թաղման քանի՞ համալիր կա այդ դամբանադաշտում: Սակայն չօգտագործել այս երկրորդ տիպի աղբյուրը, նշանակում է նաև հատկանիշների մակարդակում զրկվել բազմաթիվ կարևոր փաստերից: Միևնույն ժամանակ, նույն աղյուսակում ընդգրկել մեկական տողով ներկայացվող վիճակագրական տվյալներ՝ ընդամենը դամբանային մեկ համալիրի ու ամբողջ դամբանախմբի վերաբերյալ, ճիշտ չի լինի, քանի որ դրանք համարժեք հասկացություններ չեն և դրանց «կշիռը» հատկանիշների ընդգրկման թե՛ որակական, թե՛ քանակական հարաբերակցության առումով, տարբեր է: Հատկանիշների ընդգրկման որակական առումով դամբանախմբերը, անշուշտ, գիջում են դամբարաններին, քանի որ վերջիններիս վերաբերյալ տեղեկատ-

[35] Есаян. 1965, 233.

[36] Hakobyan. 2002, 466.

վումյունն ավելի մանրամասն ու հանգամանալից է[37]: Իսկ քանակական առումով ավելին են դամբանախմբերի հատկանիշները, քանի որ գործ ունենք բազմաթիվ դամբարանների համախումբ տվյալների հետ: Ուստի ձեռք բերված տվյալները ներկայացվելու են երկու տիպի վիճակագրական աղյուսակներում: Մեկում տեղ են գտնելու առանձին դամբանային համալիրներին առնչվող և հաշվառման ենթակա տեղեկությունները, իսկ մյուսում ընդգրկվելու են դամբանախմբերին կամ քննարկած դամբարաններից բացի՝ նույն դամբանախմբի այլ դամբանային համալիրներին առնչվող տվյալները: Բնակատեղիներին վերաբերող երրորդ տիպի տեղեկությունները ևս՝ ըստ առանձին հատկանիշների, ամփոփվելու են վիճակագրական աղյուսակում:

Հետազոտության աշխարհագրական սահմանները, ընդգրկելով Հայկական լեռնաշխարհն ու հարակից տարածաշրջանները, հասնում են մինչև Հյուսիսային Կովկաս ու Սև ծովի ավազան: Առանց մերձսևծովյան և հյուսիսկովկասյան տարածաշրջանների կիմերական հնագիտական համալիրների մանրամասն ուսումնասիրության անհնար կլիներ Հայկական լեռնաշխարհի համապատասխան համալիրների հետ տիպաբանական զուգահեռների անցկացումը և ընդհանրությունների պարզաբանումը: Հետաքրքիր է, որ սկյութական հնագիտության հետ կապված բազմաթիվ հարցերի լուծումը ևս թերի կլիներ առանց կիմերական մշակույթի հետազոտության, քանի որ երկրորդն առաջինի ձևավորման սկզբնաղբյուրներից է[38]:

Ուսումնասիրության ժամանակագրական սահմաններն ամփոփվելու են մ. թ. ա. VIII դարի վերջ – VI դարի երրորդ քառորդ միջակայքում: Կարելի է հավաստի համարել, որ կիմերների ներխուժումներն Առաջավոր Ասիա կայացել են մ. թ. ա. 714 թ. ոչ ուշ, երբ նրանք արդեն հասել էին Ուրարտուի սահմաններին[39]:

Այսօր ավելի է կարևորվում գիտական նոր մոտեցման նշանակությունը կիմերական խնդրի լուծման ճանապարհին: Գնահատելով հատկապես սեպագիր աղբյուրների և անտիկ շրջանի պատմիչների հաղորդումների դերն այս հարցում՝ հարկ է ընդգծել հնագիտության առաջնային տեղն ապագա հետազոտությունների շարքում: Հնագիտական ամեն մի նոր հուշարձանի հայտնաբերումը կարող է ճշգրտումներ մտցնել քննարկվող խնդրի պարզաբանման գործում: Հաշվի առնելով այսօրվա ձեռքբերումները հին մշակույթների ուսումնասիրության ոլորտում՝ կարելի է հավաստել, որ առանձին իրերի ընտրության սկզբունքը կարող է նպաստել միայն տարբեր առնչությունների պարզաբանմանը, իսկ յուրաքանչյուր մշակույթի գիտական քննությունը հարկ է սկսել մշակութակազմիչ համալիրները լիարժեք ներդրավելուց և հետազոտելուց:

Հայկական բարձրավանդակը հինարևելյան քաղաքակրթության հիմնական օջախներից էր: Այստեղ վաղուց տարածված էին քաղաքային մշա-

---

[37] *Դամբարանը նկարագրելիս հետազոտողները սովորաբար անդրադառնում են դրա կառուցվածքին, թաղման ծիսակարգին, կատարված զոհաբերություններին, ուղեկցող գույքի տեսականուն և, երբեմն, առանձին իրերին:*

[38] Махортых. 2008, 6.

[39] Sulimirski. 1954, 283; Иванчик. 1990, 8, 16; Алексеев. 1992, 28; Ivantchik. 2001, 14.

կույթը, կոթողային ճարտարապետությունը, դիրը: Իսկ եվրասիական քոչվորների հասարակությունը մ. թ. ա VIII–VII դարերում իրենից ներկայացնում էր տնտեսական-մշակութային այլ տիպ: Բնականաբար, Հայկական լեռնաշխարհ ներթափանցման առաջին փուլերում ավելորդ է խոսել ոչ միայն կիմերների «քաղաքների», այլև քիչ թե շատ ամրացված բնակավայրերի մասին (բացառություն կարող էին կազմել հընթացս նվաճված բերդ–շենները): Այդ պատճառով՝ կիմերական մշակույթի գիտական հետազոտության պարագայում՝ չերտագրական դիտողությունների սակավության պայմաններում, լայնորեն կիրառվելու է համեմատական-տիպաբանական մեթոդը: Հարկ է ընդգծել, որ մերձևւծովյան տարածաշրջանների կիմերական մշակույթը և Այսրկովկասում հիշյալ մշակույթի դրսևորումները լրիվ նույնական չեն կարող լինել: Դրա հիմնական պատճառն այն է, որ շարժուն և ռազմատենչ ցեղախմբերը պիտի օգտագործեին Հայկական լեռնաշխարհում առկա մշակութային հզոր ավանդույթները, միջավայրի հազարամյա ստեղծագործ ոգու հարուստ հնարավորությունները: Քոչվորների արագ շարժվելու հմտությունը թույլ էր տալիս նրանց պատմական կարճ ժամանակամիջոցում սփռվել ընդարձակ, այդ թվում՝ թշնամական տարածքներում: Ըստ այդմ՝ կիմերական հուշարձաններին աղերսվող հարցերը քննարկվելու են Առաջավոր Ասիայի հնագիտության պատմամշակութային ու ժամանակագրական հիմնախնդիրների շրջանակներում:

Կան նախադրյալներ, որպեսզի Հայկական լեռնաշխարհի հուշարձանների համակարգում առանձնացվեն կիմերական հատկանիշներով մի շարք դամբանային և բնակելի համալիրներ: Գիտական քննության ընթացքում հաշվի են առնվելու դամբանային համալիրի կառուցվածքային տարրերի, հուղարկավորման ծիսակարգի և զոհաբերությունների վերաբերյալ տվյալները: Դամբանային համալիրի նույնացման գործում առաջնային են համարվելու դամբանախցի պատ(եր)ի կոր լինելը, որոշակի տիպի (ոչ մարդակերպ) մահարձանի կամ հուշակոթողի առկայությունը դամբանաթմբի վրա կամ դամբանախցում, բազմամարդ այնպիսի թաղումները, որոնցում կմախքներից մեկը կամ մի քանիսն առանձնանում են մյուսներից իրենց դիրքով, հանդչելատեղով կամ այլ հատկանիշներով, ինչպես նաև՝ եղբայրական թաղումները: Քննարկվող դամբանախմբերում և առանձին դամբարաններում, հաճախ, հեծյալ ռազմիկներ են ամփոփվել: Ուստի, կիմերական թաղումների համար հարկ է առանձնացնել ևս երկու կարևոր բնութագրիչ՝ ձիու և ձիասարքի տեղադրումը դամբանասրահում: Բացի այդ, որքան հնարավոր է, ամբողջության մեջ է դիտարկվելու կիմերական հեծյալ ռազմիկներին հատուկ իրերի հավաքածուն (զենք, ձիասարք, աշխատանքի գործիքներ և այլն): Այլ տարածաշրջանների կիմերական դամբաններում բրոնզե բազմաթիվ զենքերի առկայությունը ծանրակշիռ փաստարկ է հօգուտ այն տեսակետի, որ զարգացած երկաթի դարաշրջանում Հայկական լեռնաշխարհ ներթափանցած ցեղախմբերը գտնվում էին մետաղամշակության ավելի ցածր մակարդակի վրա, քան տեղաբնիկները:

Նորահայտ փաստերի և հին տվյալների վերլուծությունները մեզ հիմք են տալիս եզրակացնել, որ Հայաստանի կիմերական տիպի հնագիտական համալիրներում պետք է օրինաչափ համարել ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանանց աշխատանքի գործիքների առկայությունը՝ կամեր, սրոցաքարեր,

բզեր, տնտեսական դանակներ, տաշուրագներ, սանդեր, աղորիքներ, ճաճում-ներ, իլիկներ: Հիշենք, որ մ. թ. ա. VIII–VII դարերի ուրարտական հուշարձան-ների պեղումներով հայտնաբերված գենքերը պատրաստված են բացառա-պես երկաթից[40]: Մերժելի է ներմուծված առարկաների հիման վրա հնագի-տական համալիրների թվագրման սկզբունքը, քանի որ այդ իրերը կարող են որևէ համալիրի կազմում հայտնվել իրենց արտադրությունից երկար ժամա-նակ անց[41]: Այսպիսով, քննարկվող խնդրի արմատական լուծման համար հարկ է ցուցաբերել հայեցակարգային այլ մոտեցում:

Առանձնացնելով կիմերական տիպի թաղումներում դիտվող հատկանիշ-ները՝ ամենևին չենք բացառելու, որ դրանք կարող են սովորական լինել նաև ուրարտական, էթիոնյան կամ համաժամանակյա այլ մշակութային փակ համալիրների համար: Դրանցում կարող են հանդիպել նաև ասուրական, իրանական, փոյուգական, արևմտաափոքրասիական մշակույթներին պատկա-նող առարկաներ: Մեր ընտրանքի մեջ են մտնելու տղամարդկանց այն դամ-բարանները, որոնցում համատեղ առկա են կիմերական թաղումներում հանդիպող առնվազն չորս հատկանիշներ: Կին կամ երեխա ննջեցյալների դեպքում կարելի է բավարար համարել բնորոշիչ հատկանիշի առկայությու-նը (օրինակ՝ կատակոմբում կատարված թաղումը) և համապատասխան թվա-գրությունը (մ. թ. ա. VIII դարի վերջ – VII / VI դար): Հավելելով համատեղ հանդիպող հատկանիշների քանակը՝ կարելի է առավել վստահելի և ճշգրիտ արդյունքներ ակնկալել, սակայն, օպտիմալ համարվելու համար բավարար է տղամարդկանց թաղումներում փոխադարձ հանդիպող չորս հատկանիշը, որոնցից առնվազն մեկը՝ բնորոշիչ: Թեև վիճակագրական վերլուծություն-ները պարզ ներկայացնելու նպատակով ամեն մի հատկանիշի տրվելու է միավոր արժեք, հասկանալի է, որ դրանք իրականում չեն կարող հավասար-արժեք լինել: Նույնիսկ բուն կիմերական հատկանիշները, ինչպիսիք են թաղ-ման կատակոմբային կառույցները, կիմերական ոչ մարդակերպ մահար-ձանները, ասպանդակաձև, ուղձաձև կամ D-աձև ծայրերով լկամները, կիմե-րական սրերը, խողովակակոթառ կիմերական («սկյութական արխաիկ տի-պի») նետասլաքները, տվյալ փակ համալիրի մշակութային պատկանե-լության բնորոշման հարցում հավասար «կշիռներ» չեն կարող ունենալ: Օրինակ՝ կատակոմբի կամ որոշակի տիպի քարե հուշակոթողի առկայությու-նը խոսուն վկայություն է մշակութային պատկանելության վերաբերյալ, մինչդեռ առանձին «կիմերական» տիպի նետասլաքի հայտնաբերումը դեռ չի նշանակում, որ գործ ունենք կիմերական թաղման հետ:

---

[40] Куфтин. 1941, 53; Мартиросян. 1956, 83. *Բ. Ա. Կուֆտինը Հայ-կական լեռնաշխարհում երկաթի լայն տարածման դարաշրջանը համաժամանա-կացրել է կոբանյան բրոնզի ծաղկման փուլի հետ: Իր մեկ այլ աշխատությունում նա նկատել է, որ բրոնզի փայլուն ծաղկմամբ բնորոշվող կոլխիդյան մշակույթի ավարտը համապատասխանում է Վանի թագավորության ժամանակաշրջանին և հինարևելյան պետություններում երկաթե զինատեսակների կողմից բրոնզե զեն-քերը դուրս մղելուն (տե՛ս* Куфтин. 1944, 68*): Սրանով ժխտվել է այն կար-ծիքը, իբր, կիմերների զենքը և գործիքները որակապես չէին տարբերվում Առաջավոր Ասիայի ամենակուլտուրական ժողովուրդների զենքից և աշ-խատանքի գործիքներից* (Городцов. 1928, 50*):*

[41] Рабинович. 1936, 79–80.

Եզրակացություն

Քննարկվող հիմնախնդիրը մինչ այժմ գրեթե չի լուսաբանվել գիտական հետազոտություններում, ուստի կարիք կա ուսումնասիրողների ուշադրությունը հրավիրել արծարծվող հարցերին՝ ընդգծելով նոր մոտեցումների կարևորությունը: Եկել է ժամանակը «կիմերա-սկյութական մշակութային ընդհանրությունից» կիմերական մշակույթի տարանջատման, սահմանազատման և առանձին ուսումնասիրության փորձ կատարելու: Համամիտ ենք այն հեղինակների հետ, որոնք կասկածի տակ չեն առնում կիմերների ռեալ գոյությունը: Կարծում ենք, որ Հայկական լեռնաշխարհում կիմերական մշակույթի տեղն ու դերը պարզաբանելը հնարավորություն կտա հնագիտական իրողությունները համաձայնեցնել և համաժամանակացնել պատմական իրադարձությունների արդյունքում ձևավորված մշակութային իրավիճակին:

Գարեգին Թումանյան – պ. գ. դ., ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի Հայաստանի վաղ հնագիտության բաժնի ավագ գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ Հայկական լեռնաշխարհի բրոնզ-երկաթեղարյան հնագիտական մշակույթներ, թաղման ծես, կիմերական հնագիտական մշակույթ: Հեղինակ է 5 գրքի և 66 հոդվածի:
gstumanyan@gmail.com

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Թումանյան Գ. 2018, «Կիմերա-սկյութական մշակութային ընդհանրություն» եզրույթը. – Արագածի թիկունքում: Հնագիտական հետազոտություններ՝ նվիրված Տ. Խաչատրյանի հիշատակին (խմբ. Հ. Ավետիսյան), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., էջ 214–217:

Алексеев А. Ю. 1992, Скифская хроника (Скифы в VII–IV вв. до н. э.: историко-археологический очерк). СПб., «Петербургкомстат», 206 с.

Алексеев А. Ю. 2003, Хронография Европейской Скифии VII–IV вв. до н. э. СПб., Изд. Государственного Эрмитажа, 416 с.

Воронов Ю. Н. 1980, О хронологических связях киммерийско-скифской и колхидской культур. – Скифия и Кавказ. Сборник научных трудов. Ред. А. И. Тереножкин. Киев, «Наукова думка», с. 200–218.

Городцов В. А. 1928, К вопросу о киммерийской культуре. – Труды секции археологии Института археологии и искусствознания, II. М., с. 46–60.

կրակ կը տեղացնէ մեր վրայ: Գիշերը վրայ կը հասնի ու մութին մէջ կը կորսուինք: Հետեւեալ օրն ալ եւ միշտ պարբերական կռիւներ մղելով. Սիսէն, Թումլու Գալէ եւ վերջապէս Ճիհան կը հասնինք, մխիթայն չորս հարիւր հոգի ...: Ահա այս է վերապրող Հաճընը: Ճիհան հասնողներէն 150ը հնչ. ընկերներ են, որոնց 40ը Զորք-Մարզուան ղրկուեցաւ, Ճիհանի ֆրանս. ուժերու կողմէն. հարիւր տասն հասանք Ատանա: Ատանայի մասնաճիւղը բարոյական աջակցութիւն չի խնայեց մեզի. փչրուած Հաճընի մասնաճիւղը վերակազմուեցաւ. եօթը հոգինոց վարչութիւն մը կազմեց, նորէն Սուրբ գործին փարած կը մնանք: Տնաքանդ հաճընցին, ներկայիս անտուն, անտէր, մերկ ու բոպիկ, կիսաքաղց ու թափառական կոչ կուղղէ Ձեզ, արտասահմանի եղբայրներ: Եթէ չուտով նիւթական օգնութիւն չի փութացնէք մեզի, դո՛ւք եւս մնաք բարով. մեզմէ ալ յոյսերնիդ կտրեցէք ...: Ժիրայրի եւ Մուրատի հայրենիքին տասը հազարի միակ նեցուկները չորս հարիւրը գէթ ապրեցուցէ՛ք: Մենք մեր կրցածը ըրինք. դուք ալ Ձեզի արժան[ի]ն ըրէք:

Ընկերական բարեւներով

Հաճնոյ Ս. Դ. Հնչ. Մասնաճիւղի Վարչութիւն

Յարութիւն Ատենադպիր Գ. Ածիլածեան Ռուբէն Ատենապետ Ս. Երկաթեան[24]*:*

(կնիք)

[24] Ռուբէն Ս. Երկաթ (Տէմիրճեան): *Կիլիկիոյ շրջանի ազգային, կուսակցական գործիչ: Մաս կը կազմէ Հաճնոյ Ինքնապաշտպանութեան Բարձրագոյն Խորհուրդին: Կիլիկիոյ հայաթափումէն ետք ազգային-կուսակցական գործունէութիւնը կը շարունակէ Լիբանանի մէջ, ուր եւ կը մահանայ:*

ՇՈՒՇԻ ՔԱՂԱՔԻ ԷՋՄԻԱԾՆԱՊԱՏԿԱՆ ՏՊԱՐԱՆԸ ԵՎ «ՁԵՌԱՑ ՄԱՇՏՈՑԻ» ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ (1858 թ.)*

Շուշի քաղաքում տպագրությունը սկիզբ է առել 1828 թ., որի նախաձեռնությամբ Շվեյցարիայի Բազել քաղաքի Ավետարանական քարոզչական ընկերության գործունեությունն էր տարածաշրջանում[1]: 1837 թ. Շուշիում ծավալած գործունեության դադարից հետո բողոքական քարոզիչների տպարանը գնում է Ղարաբաղի թեմի առաջնորդ Բաղդասար արքեպիսկոպոս Հասան-Ջալալյանցը: Վերջինս մտադիր է եղել իր մահից հետո տպարանը կտակել Ղարաբաղի հայոց թեմին[2]: Սակայն 1854 թ. Ներսես Աշտարակեցի կաթողիկոսի հանձնարարությամբ Շուշի ժամանած Գևորգ եպիսկոպոս Վեհապետյանցին[3] հաջողվեց տարհամոզել մահվան մահճում գտնվող Բաղդասար արքեպիսկոպոսին. կաթողիկոսը նրան կարգադրել էր կարգավորել թեմակալ առաջնորդի սեփականության հարցերը, ինչի արդյունքում էլ նա տպարանը կտակեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին: Բաղդասար Հասան-Ջալալյանցի ցանկությունն էր, որ կաթողիկոսի բարեհաճությամբ այնտեղ տպագրվելիք գրքերում տպարանի անունը նշվեր հետևյալ կերպ. «Տպեցաւ գիրքս՝ այս անուն՝ ի տպարանի կաթողիկէ Էջմիածնի, ընծայելոյ յԱղուանից Տէր-Բաղդասար Բարձր-Սրբազան մետրապոլիտ արքեպիսկոպոսէն Հայոց Հասան-Ջալալեանց և Ասպետէ»: 1854 թ. հունիսի 27-ին Բաղդասար մետրոպոլիտը կնքեց իր մահկանացուն[4]:

Երեք տարի առաջնորդական աթոռը թափուր մնալուց հետո՝ 1857 թ., Ղարաբաղի թեմի առաջնորդի պաշտոնակատար է նշանակվում վերը հիշատակված Գևորգ եպիսկոպոսը[5]: Նրա պաշտոնավարման ժամանակ, ի տարբերություն իր նախորդի կառավարման տարիներին, այդ տպարանը չունեցավ բեղուն գործունեություն: Գևորգ եպիսկոպոսի թեմակալության տարի-

---

* *Ներկայացվել է 22. XII. 2021 թ., ընդունվել է տպագրության 20. I. 2022 թ.:*

[1] *Մանրամասն տե՛ս Ս. Պետոյան. Բազելյան բողոքական քարոզիչների՝ Շուշիում հիմնադրած տպարանի պատմությունը (1827–1835 թթ.). – «Հայագիտության հարցեր» (Երևան), 2021, № 1, էջ 45–65:*

[2] *Մանրամասն տե՛ս Ս. Պետոյան. Բաղդասար արքեպիսկոպոս Հասան-Ջալալյանցը և Շուշիի հայկական տպագրությունը,– «Էջմիածին», մաս Ա., 2021 (յուլիս), թիւ Է., էջ 88–102, մաս Բ., 2021 (սեպտեմբեր), թիւ Թ., էջ 78–94:*

[3] *1854 թ. փետրվարի 19-ին Ներսես Աշտարակեցի կաթողիկոսի հրամանով Գևորգ եպիսկոպոսը նշանակվել էր Ղարաբաղի և Շամախիի եկեղեցական գործերի քննիչ [տե՛ս Տ. Գէորգ արքեպիսկոպոս Վեհապետեանց [մահախոսական]. – «Արարատ», թիւ Զ. (յունիս 30), 1882, էջ 264 (ի դեպ, ամսագրի էջակալության մեջ կան տպագրական վրիպակներ. այսպես, օրինակ՝ 264-րդ էջի վրա տպագրվել է 164)]:*

[4] *Լէօ. Պատմութիւն Ղարաբաղի Հայոց թեմական հոգեւոր դպրոցի 1838–1913, Թիֆլիզ, 1914, էջ 167, 172, 176:*

[5] *Տ. Գէորգ արքեպիսկոպոս Վեհապետեանց [մահախոսական], էջ 264:*

ներին Շուշի քաղաքի էջմիածնապատկան տպարանում տպագրվեց ընդամենը երկու գիրք, որոնցից առաջինը 1858 թ. «Ձեռաց Մաշտոցն» էր, իսկ երկրորդը՝ Միքայել վարդապետ Ջամչյանցի քերականության դասագիրքը[6]: Հենց Գևորգ եպիսկոպոսի նախաձեռնությամբ էր[7], որ արմատներով Թիֆլիսեցի, մոսկվաբնակ գործարար Հովհաննես Հովնանյանցը 1859 թ. հիշյալ տպարանին է նվիրել տպագրական սարքավորումներ և տառատեսակներ[8]:

Նկատենք, որ Գևորգ եպիսկոպոսը թեմում աչքի ընկավ մի շարք չարաչահումներով, որոնց մի մասը վերաբերում էր գրքերի տպագրության ընթացքին, թեմի կարիքների համար նոր գրքերի գնումներին և տպագրված գրքերի վաճառքին: Թեմակալ առաջնորդին պաշտոնից հեռացնելուն[9] նպաստեցին նաև վերը հիշատակված «Ձեռաց Մաշտոցի» տպագրությանը և հետագա սպառմանն առնչվող ապօրինություններ: Այս մասին տեղեկանում ենք էջմիածնի Սինոդին ուղարկված Ղարաբաղի կոնսիստորիայի գրություններից, որից պարզ է դառնում՝ Գևորգ եպիսկոպոսը գարտուղի ճանապարհներով ավելի շատ է տպագրել «Ձեռաց Մաշտոցը», քան նախատեսված էր, իսկ ավելացած տպաքանակը գաղտնի է պահել՝ ծառայեցնելով իր անձնական շահերին:

Կոնսիստորիան ի մի է բերում «Ձեռաց Մաշտոցի» տպագրության ընթացքում թույլ տրված չարաշահումների վերաբերյալ փաստերը և մի ընդարձակ գրությամբ ուղարկում Սինոդին, որի հիմքում ընկած էին Ղարաբաղի հայոց թեմի հոգևոր գործերի քննիչ Դանիել վարդապետ Շահնազարյանցի կատարած քննություններն ու բացահայտումները: Վավերագիրը միաժամանակ արժեքավոր տեղեկություններ է պարունակում XIX դարի կեսերին Շուշիում գրահրատարակչական գործի ընթացքի վերաբերյալ: Մասնավորապես տալիս է այն հարցերի պատասխանները, թե որոնք էին այդ շրջանում տպագրական դժվարությունները, ինչպես էր ճևավորվում գրքերի ինքնարժեքը, և դրանց վաճառքից որքան եկամուտներ էին գոյանում, ինչ սահմաններ էր ընդգրկում գրքերի տարածումը և այլն:

Ստորև առաջին անգամ[10] հրապարակվող վավերագիրը պահվում է Հայաստանի ազգային արխիվում: Այն հրատարակության պատրաստելիս հա-

---

[6] Մ. Ջ ա մ չ ե ա ն ց. Քերականութիւն հայկազեան լեզուի, երրորդ տպագրութիւն, Շուշի, 1859: Դասագրքի տպագրության և տնօրինման հետ կապված հարցերի շուրջ տե՛ս Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ., Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմը (1813–1933 թթ.), կազմեց՝ Սանդրօ Բէհբուդեան, Երեւան, 2001, էջ 268–269:

[7] Լ է օ. նշվ. աշխ., էջ 302:

[8] «Մեղու Հայաստանի» (Թիֆլիզ), 04. VII. 1859, թիւ 27, էջ 211, «Համբաւաբեր Ռուսիոյ» (Մոսկուա), 28. III. 1864, թիւ 61, էջ 2:

[9] Մատթեոս Ա. Կոստանդնուպոլսեցի կաթողիկոսը 1860 թ. հուլիսի 23-ի կոնդակով Գևորգ եպիսկոպոսին արձակեց Ղարաբաղի թեմի առաջնորդի պաշտոնակատարի պարտականություններից [տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 56, ց. 1, գ. 3909, թ. 101]:

[10] Վավերագիրը բացակայում է հետևյալ հրատարակություններից՝ Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ., Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք ԺԹ., Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմը (1649–1917 թթ.), Հ. Բ., կազմեց՝ Դոհար Աւագեան, Երեւան, 2017, Վաւերագրեր Հայ եկեղե-

բազատ ենք մնացել բնագրին՝ պահպանելով ուղղագրությունն ու կետադրությունը, իսկ պատվագրություններըը (հապավված բառեր) վերականգնել ենք ուղիղ փակագծերի մեջ: Ըստ անհրաժեշտության՝ կատարել ենք նաև ծանոթագրություններ[11] (ընդգծումները վավերագրինն են):

ՍՏՅՈՊԱ ՊԵՏՈՅԱՆ

՚Ի ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴՆ Ս[Ր]Բ[Ո]Յ ԷՋՄԻԱԾՆԻ ՎԻՃԱԿԱՅԻՆ[12] ՀԱՅՈՑ ԿԱՆՍԻՍՏՕՐԻՒՆ ՂԱՐԱՊԱՂՈՒ[13] ՅԱՅՏԱՐԱՐՈՒ[Թ]Ի[ՒՆ]

՚Ի կանսիստորիիս յայսմիկ լուան զգեկուցումն քննիչն Հոգևոր գործոց Վիճակիս Ղարապաղու Բարձր Արժանապատիւ Դանիէլ վարդապետն Շահնազարեանց գրութեամբ իւրով, ՚ի 23 անցե[ա]լ Դեկտեմբերի № 22, ՚ի միջի այլոց առաջին պարբերութեամբն խնդրէ ՚ի կանսիստորիէս հաստուցանել

ցու պատմութեան, գիրք Ի., Ս. Էջմիածինը եւ հայոց գրերի գիւտի 1500 ու տպագրութեան 400 ամեակների տօնակատարութիւնը 1912–1913 թթ., կազմեց՝ Գոհար Աւագեան, Էջմիածին, 2019: Վերջինիս հավելվածում տեղ են գտել նաև XIX դարում և XX դարասկզբին Ս. Էջմիածնի և թեմերի տպագրական գործունեությանն առնչվող մի շարք կարևոր վավերագրեր:

[11] Վավերագրում հիշատակվող եկեղեցական և աշխարհական տարբեր անհատների մասին կենսագրական տվյալները հիմնականում բացակայում են, ուստի նրանց մեծ մասի համար հնարավոր չէ տալ առանձին ծանոթագրություններ:

[12] «Վիճակ»-ը եպիսկոպոսական թեմ է, որի առաջնորդը ոչ թե ընտրվում է, այլ նշանակվում:

[13] 1836 թ. մարտի 11-ին Նիկոլայ I ցարի հրամանագրով հաստատվել էր «Положение»-ն («Положение об управлении делами Армяно-Григорианской церкви в России»)՝ *«Բարձրագոյն կարգադրութիւն յաղագս կառավարութեան գործոց Լուսաւորչական Հայոց եկեղեցւոյ ՚ի Ռուսաստան» վերնագրով: Այս օրենքով Ռուսական կայսրությունում կազմվում էին Հայ Առաքելական եկեղեցու վեց թեմերը, որոնցից էր նաեւ Ղարաբաղի (Արցախի) թեմը՝ Շուշի առաջնորդանիստ կենտրոնով (տե՛ս Բարձրագոյն կարգադրութիւն յաղագս կառավարութեան գործոց Լուսաւորչական Հայոց եկեղեցւոյ՚ի Ռուսաստան, Էջմիածին, 1836, գլուխ 4, յօդուած 56): Նախկին Աղվանից (Գանձասարի) կաթողիկոսության ենթակա շրջաններում Էջմիածնի կաթողիկոսության իրավասության ներքո կազմավորվել էր Ղարաբաղի առաջնորդական թեմը՝ Դիզակ, Վարանդա, Բերդաձոր, Խաչեն, Ջրաբերդ, Գյուլիստան, Շաքի, Կասպաղակ, Հաջի, Խենի, Կամբեճան, Արաչ (Արեչ), Լենքորան (Լանքարան) գավառներով, ինչպես նաև Շամախու առաջնորդական թեմը՝ Դերբենդի (Դարբանդ), Ղուբայի, Շամախու, Բաքվի, Սալյանի և Հարևան գավառներով: Բացի առաջնորդական երկու թեմերից՝ կազմավորվել էր նաև Թիֆլիսի կոնսիստորիային ենթակա մեկ «յայորդական վիճակ» (փոխանորդական թեմ), որի կենտրոնն էր Ելիզավետպոլ (Գանձակ) քաղաքը (տե՛ս Հ. Սվազյան. Աղվանից կաթողիկոսություն.– Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան, Երևան, 2002, էջ 43):*

ինքեան գտեղեկութիւնս, թէ՝ ի տպարանի Վիճակիս Ղարապաղու քանի՞ հատոր մաշտոց[14] մատեանք են տպագրեալ, ե՞րբ, ո՞յր հրամանաւ և թոյլտուութեամբ քանի՛ քն ի նոցանէ ցարդ անցուցեալ են ի վաճառ, և ո՞րքան գնով, իւրաքանչիւրն ի նոցանէ ո՞րքան ծախուք են կազմեալ, իսկ անվաճառ մնացեալ ցարդ նոյնպիսի մատեանքն ո՞ւր գտանին, ո՞վ է ստացեալ զդրամսն վաճառեալ մաշտոցացն, և դիտէ՞ արդեօք Կանսիստօրիայս, զի նախկին վիճակաւոր Առաջնորդն Ղարապաղու Սրբազան Գէորգ Եպիսկոպոսն ի հաշուոյ տպագրելի մաշտոցաց թոյլատրեալ է տպագրել յօգուտ ինքեան աւելորդութեամբ նա՛և գ500 հատորս ի մատենից անտի: Եւ ի վախճանի այսր գրութեան քննիչն խնդրէ հաղորդել առանց քողարկութեանց՝ եթէ յայտնի իցեն Առենակալաց Կանսիստօրիիս արտաքոյ գործոց, նաև զայլ հանգամանս, վերաբերեալս առ յիշատակեալ առարկայսն: Եւ գտեղեկութիւնս ի գործոց Կանսիստօրիիս, յորոց երևի, նախ՝ թէ՝ Հոգևոր Ատեանս՝ նկատելով, զի բազումք յեկեղեցեաց և ի հոգևորականաց Վիճակիս Ղարապաղու և այլոց Վիճակաց ունին զզգալի կարօտութիւն ծխարան կամ մաշտոց անուանեալ եկեղեցական գրքուկաց, խնդրեալ էր ի Լուսաւորչական Հայոց Սինօդէդ Ս[ր]բ[ո]յ Էջմիածնի, ի 18 Օգոստոսի 1855 ամի ընդ հ[ա]մ[ա]ր[ա]ւ 467, չնորհել զլուծումն առ ի տպագրել տալոյ ի տպարանի հանգուցեալ Մետրապոլտին Բաղտասարայ, ընծայելոյ նովաւ Մայր Աթոռոյն Ս[ր]բ[ո]յ Էջմիածնի, զհինգ հարիւր հատորս ըստ օրինակի մաշտոցին, տպագրելոյ ի նոյն իսկ տպարանի ի 1840 ամի[15], այնու՝ զի ծախքն նոցունց հոգացեալ լիցի ի Վիճակային արդեանց, որ ըստ դատման Կանսիստօրիիս չունէր առաւելուլ քան զերկու հարիւր րուբլիս արծաթեայ, և յետ վաճառմանն վերադարձուցեալ լիցի այն գումար ծախուց ի լրումն Վիճակային արդեանց, իսկ վասն մնացեալ օգտին թողեալ էր բարեհաճութեան Սինօդիդ Ս[ր]բ[ո]յ Էջմիածնի տնօրինել, որպ[է]ս գիա՛րդ և արժան դատիցի: Ուստի և Սինօդդ հրամանաւ ի

---

[14] Անվանաթերթի վրա՝ «Ծխարան որ կոչի Մաշտոց»: Յորում աւանդին ս[ր]բ[ա]գ[ա]ն արարողու[թ]ի[ւն]ք Առաքելական ս[ուր]բ եկեղեցւոյս Հայաստանեայց: Ի ժամանակիս Թէմական կառավարչու[թ]ե[ան] Առաջնորդական գործոց Վիճակին Ղարաբաղու Բարձր Եպիսկոպոսի Վեհապետեան և Ասպետի: Ի Տպարանի Շուշւոյ, ընծայեցելոյ Մայր Աթոռոյն Սրբոյ Էջմիածնի ի հանգուցե[ա]լ Բարձր Սրբազան Մետրապոլիտ Բաղտասար Արք Եպիսկոպոսէն Հասան-Ջալալեանց: Երկրորդ տպագրութիւն: 1858 ի Շուշի – ՌՅՀ: Անվանաթերթի դարձերեսին՝ «Հրամանաւ Հայոց Սիւնհոդոսին Սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի»:

«Մաշտոց» ծխամատյանը պարունակում է ծիսական արարողությունների կարգերն ու աղոթքները, որն, ըստ կիրառության, բաժանվում է երեք տեսակի. «Ջեռաց կամ Փոքր Մաշտոցը» պարունակում է քահանային վերապահված խորհուրդներն ու արարողությունները, «Մայր Մաշտոցը»՝ եպիսկոպոսինը, իսկ «Հայր Մաշտոցը»՝ կաթողիկոսինը (տե՛ս Մ. Օրմանեան. Միսական բառարան, Անթիլիաս, 1979, էջ 154): Ուստի «Փոքր Մաշտոցը», լինելով քահանաների ձեռքի («ձեռաց») ամենօրյա ծխասարանը, հայ տպագրության պատմության մեջ ունեցել է շատ հրատարակություններ՝ համեմատաբար մեծ տպաքանակով:

[15] Խոսքը վերաբերում է 1840 թ. Շուշիում Բաղդասար արքեպիսկոպոսի տպագրած «Ջեռաց Մաշտոցին» («Ծխարան որ կոչի Մաշտոց: Յորում աւանդին ս[ր]բ[ա]գ[ա]ն արարողու[թ]ի[ւն]ք ազգիս ըստ սահմանադրու[թ]ե[ան] ս[ուր]բ եկեղեցւոյս Հայոց»):

11 Հոկտեմբերի 1857 ամի ընդ հ[ա]մ[ա]ր[ա]ւ 1923, պատուիրեաց Կանսիստորիիս տպագրել տալ ի յիշեալ տպարանին զհազար հատ մաշտոցս, յորոց զհինգ հարիւրն հասուցանել ի Սինօդդ և զմնացեալ կէսն թողուլ ի Կանսիստորիիս վասն վաճառման ի լրումն պակասութեան եկեղեցեաց Թեմիս: Երկրորդ՝ յետ այսորիկ՝ նախկին Ատենապետն Կանսիստորիիս Գէորգ Եպիսկոպոսն և միւս Ատենակալքն յայտնեցին թէ՝ որովհետև Հոգևոր Ուսումնարանն Հայոց Վիճակիս Ղարապաղու չունի զգումար ինչ նշանաւոր առ պահպանութիւն ինքեան, և հա՛րկ է ի գործ դնել զամենակերպ միջոցս առ ի գտանել զաղբիւրս արդեանց յօգուտ այնորիկ, վ[ա]ս[ն] [որո]յ և հարկաւոր դատեցաւ, զի տպագրելի մաշտոցքն լիցին հազար երկու հարիւր յիսուն հատ, այնպ[է]ս՝ զի ի նոցունց հինգ հարիւր հատն մատուցի Սինօդիդ, և մնացեալ եօթն հարիւր յիսուն հատքն վաճառեսցին ի վերայ եկեղեցեաց և եկեղեցականաց Վիճակիս և այլոց ցանկացողաց, և ի գրամոցն ի ձեռս բերելեաց ի վաճառոյ անտի՝ գումարն ի գին հինգ հարիւր հատորոցն դարձուսցի ի լրումն Վիճակային արդեանց, ծախելեաց ի տպագրութիւն և ի պատրաստութիւն այնոցիկ մատենից, և յաւելեալքն թողեալ լիցին յօգուտ տպարանին վասն ապագայ հարկաւորու[թ]ե[ան] Նորին, իսկ գին 250 հատորոցն դարձուսցի յօգուտ Հոգևոր Ուսումնարանին Ղարաբաղու[16]: Վ[ա]ս[ն] [որո]յ և Կանսիստորիայս ի 5 Փետրվարի 1858 ամի օրագրական սահմանադրութեամբ իւրով տնօրինեաց տպագրել տալ գյիշեալ 1250 հատոր մաշտոցսն ընդ ձեռն Շուշաքաղաքացի Խաչատուր քահանային Ղալաբէկեանց[17], որ էր տպագրիչ յայնմ տպարանի, օգնականութեամբ և գործակցութեամբ տիրացու Իսահակայ Մախմուրեանց և տիրացու Թէոսայ Տ[է]ր Ա[ստուա]ծատրեան, նշանակելով ի տնունդ և ի կառավարութիւն նոցա ի տարին՝ առաջին երկուցն իւրաքանչիւրումն 75 րուբլի. և 5. չեթվերթ[18] ցորեան, իսկ վերջնոյն 40 րուբլի. և 3. չեթ. ցորեան: Ուստի և յիշեալ Խաչատուր քահանայն և միւս երկու օգնականքն ն[ո]ր[ա] ձեռնարկին յայնժամ ի տպագրել զնշանակեալ 1250. հատոր մաշտոցն, և՝ ո[ր]պ[էս] յայտնեն Անդամք Կանսիստորիիս, ի տիպ անցուցին նոքա գութ տետրակս[19] այնց գրքուկաց: Երրորդ՝ յայսմ միջոցի նախկին պաշտօնակատարն

[16] *Նկատի ունի Բաղդասար մետրոպոլիտի ջանքերով 1838 թ. հիմնադրված Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցը, որն իր գործունեության ընթացքում (1838–1920 թթ.), երբեմն ընդմիջումներով ու վայրիվերումներով, անուրանալի դերակատարություն է ունեցել ոչ միայն Արցախի, այլև, առհասարակ, արևելահայ կրթական կյանքում:*

[17] *Խաչատուր քահանա Ղալաբեկյանցը (1817–1904) Շուշիի ամենահին չրջանի տպագրիչներից էր, ով իր տպագրական գործունեությունն սկսել էր դեռևս 1845 թվականին Բաղդասար Հասան-Ջալալյանցի տպարանից (տե՛ս Լ է օ. Նչվ. աշխ., էջ 126):*

[18] *Ռուսերեն* «четверть» *(«քառորդ») բառը բնագրում գործածված է հայերեն տառադարձությամբ («չեթվերթ»): Այն հավասար էր որևէ չափական միավորի (փութ, լիտր և այլն) ¼ մասին (տե՛ս Ռուս-հայերեն բառարան, հ. 4, Երևան, 1958, էջ 680):*

[19] *Նկատի ունի ութ մամուլ: 1858 թ. Շուշիում տպագրված «Ձեռաց Մաշտոցը» կազմված է 41 տպագիր մամուլից (502 էջ):*

Վիճակաւոր Առաջնորդի Թեմիս Ղարաբաղու Գէորգ Եպիսկոպոսն ՚ի բաց կացուցանելով զյիշեալ Խաչատուր քահանայն և զնշանակեալ երկուս օգնականս նորա յայնմ գործոյ, զաշնաղրեաց յիւրմէ կողմանէ միայն ընդ Շուշաքաղաքացի Գրիգորի Խաչատրեանց, որպէս զի նա իւրով սեպհական ծախուք տպագրել տացէ ՚ի յիշեալ տպարանին զ1250 մաշտոցսն իւրաքանչիւր հատն 90. կօպէկօք արծաթեայ ընդ ձեռն Շուշաքաղաքացի տպագրիչ Մինասայ Տառղիճեանց[20], որով և խափանեցան կագաղրու[թ]իւն[ք]ն, արարեալք ՚ի կողմանէ Կանսիստորիիս վասն տպագրութեան նոյն մաշտոցաց: Զորը[ոը]դ՝ յետ բոլորովին աւարտման տպագրութեան այսոցիկ գրքուկաց ընդ անմիջական տեսչութեամբ Նորին Սրբազնութեանն և հետևաբար վասն այնոցունց արարեալ ՚ի կողմանէ իւրմէ կարգադրութեանցն՝ Նորին Սրբազնութիւնն տուե[ա]լ է Կանսիստորիիս գառաջադրութիւն իւր յ31. Յունվարի անցեալ 1859 ամի ընդ հ[ա]մ[ա]ր[ա]ւ 11, յորում նա գրեալ է այսպէս՝ «Թէև Վիճակային Կոնսիստորիայդ օրագրական եզրակացութեամբ իւրով, կայացելով ՚ի 5 Փետրվ[ա]րի անցեալ 1858 ամի տնօրինեալ էր սկզբնաւորել զտպագրութիւն 1250 մաշտոց գրքուկաց ՚ի Շուշւոյ Տպարանին Մայր Աթոռոյ Ս[ր]բ[ո]յ Էջմիածնի՝ ընծայելոյ ՚ի Մետրապօլտէն Բաղտասարայ Հասան-Ջալալեանց ծախուք Վիճակային արղեանց, այլ ըստ որում յընթացս այնր ամի չէին բաւական ընկալեալ արդիւնք վիճակին ՚ի ծածկել զանհրաժեշտ ծախսն Վիճակին յընթացս նոյն ամի, վ[ա]ս[ն] [որո]յ ես խորհրդով Աւետնակալաց Դորին ՚ի 1. Մարտի պայման ետի ընդ Շուշաքաղաքացի Աղայ Գրիգորի Խաչատրեանց, առ ՚ի տպագրել զնոյնաքանակ մաշտոցսն ՚ի յիշեալ Տպարանի սեպհական ծախուք Նորին ՚ի միջոցի վեց ամսոց այնու՝ զի նա յաւարտ տպագրութեանն զ1250 մաշտոցս յանձնարարեալ ինձ, ընկալցի յինէն առ իւրաքանչիւր հատորսն իննսուն կօպէկս արծաթոյ: Կատարեալ վերտառեալ Պ[ա]ր[ո]ն Խաչատրեանցին զիւր պայմանեալ խոստումն յանձնեաց ինձ լրիւ զ1250 հ[ա]տ մաշտոցսն, յորոց ես ընդ գրութեանց իմոց ՚ի 25 Օգոստոսի նոյն ամի № 107, 106 և 110, առաքեցի առ յաջորդն[21] Շաքւոյ[22] հարիւր հատ, առ գործակալն[23] Վարանդայ հարիւր քառասուն հատ.

---

[20] *Շուշեցի Մինաս Տառղիճյանցը 1840-ականների վերջերից Շամախիում գործող «Երից ընկերացն Մովսիսի Զօհրապեանց, Մինասի Տառղիչեանց եւ Մարգարէի Ղուլիեանց» տպարանի համահիմնադիրներից էր, ապա՝ սեփականատերը: Հետագա տարիներին Մ. Տառղիճյանցը միայնակ տնօրինեց տպարանը, իսկ 1851 թ. հունիսին Կովկասի փոխարքան նրան թույլատրեց իր տպարանը Շամախիից տեղափոխել Շուշի (տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 3269, թ. 5):*

[21] *Առաջնորդի փոխանորդ գավառական քաղաքում (տե՛ս Ստ. Մալխասեանց. Հայերէն բացատրական բառարան, հ. 3, Երեւան, 1944, էջ 393):*

[22] *1846 թ. ռուսական իշխանությունները Շաքիի գավառը համանուն կենտրոնով վերանվանել էին Նուխի [տե՛ս Գ. Ստեփանյան. Գանձակ-Ելիզավետպոլի նահանգի Նուխի և Արեշ գավառների ու Բաքվի նահանգի հայ բնակչության պատմաժողովրդագրական համառոտ ակնարկ. – «Արևելագիտության հարցեր» (Երևան), 2015, № 9, էջ 224] :*

[23] *Հոգևոր գործակալներն անմիջական շփումներ ունեին ժողովրդի հետ, ծանոթ էին թեմի անցուդարձին և եկեղեցական ցածր պաշտոնյաների ու հոգևոր բարձրագույն իշխանության միջնորդներն էին: Նրանք ղեկավարում էին գործակալությունները, որոնք թեմական վարչական միավորներ էին՝ կազմված միմյանց*

Ջրաբերդու հարիւր հատ. և ընդ նամակի իմոյ առ Կառավարիչն Հոգևոր գործոց Շամախւոյ վիճակի՝ Մովսէս վարդապետն Մաղաքեանց եօթանասուն և երկու հատ, և ի Սինօդն Ս[ր]բ[ո]յ էջմիածնի ի ձեռն անդամոյ Դորին Կարապետ քահանային Հախեանց հինգ հարիւր հատ, ի կատարումն հրամանագրութեան Նորին առ Կանսիստորիայդ ի 11 Հոկտեմբերի 1857 ամի № 1923. և մնայ ի Տպարանի անդ առ տպագրիչ Մինասն Տառղիճեանց երեք հարիւր երեսուն և ութ հատ միայն: Գնահատեալ իմ զառաքեալ հատորսն առ յայորդն Շաքւոյ իւրաքանչիւրն երեք րուբլի, առ գործակալսն՝ երկու և կէս րուբլի և առ Մովսէս վարդապետն երկու րուբլի 60 կօպ. ի վաճառմանէ յորոց մինչև ցայսօր ընկալեալ եմ ի չիշեալ գործակալացն և ի յայորդէն Նուխւոյ միայն զհինգ հարիւր րուբլիս, զորս նոյնութեամբ յանձնեալ եմ Պ[ա]ր[ո]ն Խաչատրեանցին ձեռագրաւ ի հաչիւ հասանելեաց ինքեան հազար հարիւր քսան և հինգ րուբլի գումարոյն ըստ պայմանագրութեանն: Ուստի առաքմամբ իսկական պայմանագրութի[ւնն] և ձեռագրի Պ[ա]ր[ո]ն Խաչատրեանցի ի տես կանսիստորիդ, յառաջադրեմ Դմին փութով տնօրինել զարժանն վասն ի վաճառ հանելոյ և զմնացեալ ի տպարանի անդ մաշտոցսն, և ի գնոյ նոցին լցուցանելոյ զբոլոր գումարն հասանելեաց Պ[ա]ր[ո]ն Խաչատրեանցին, յանձնելով զայն ի դէպս բացակայութեան Նորին՝ Աղայ Կարապետի Շահմուրատեանց ընդ ստորագրութեամբ նորա և զմնացորդն թողուլ յօգուտ չիչեալ Տպարանին»: – Եւ ի պայմանագրի անդ գրի այսպ[է]ս՝ «Ի 1. Մարտի 1858 ամի ես ի ներքոյ ստորագրեալ Շուշաքաղաքացի Գրիգոր Առաքելեանս Խաչատրեանց տամ զայս կապակցութեան թուղթ Բարձր Սրբազան Վիճակաւոր Առաջնորդին Ղարաբաղու Տ[եառ]ն Գէորգ Եպիսկոպոսի Վեհապետեանց և Ասպետի վասն այն, թէ՝ պարտաւորիմ ես սկսեալ ի վերոյ նշանակեալ թուոյն մինչև ցվեց ամիս ժամանակն տպագրել տալ յԱթոռապատկան տպարանի տեղւոյս ի վ[ե]ր[այ] մաքուր սպիտակ (կլասնի) թղթոյ[24] և գեղեցիկ կազմուածով վերջաւորել զհազար ե[ր]կու հարիւր չիսուն հատ մաշտոցս ըստ մի և նոյն օրինակի տպագրելոցն ի 1840 ամի: Ամ[ենայն] ծախքն տպագրութեան և այլոց ի պէտս չիչեալ մաշտոցացն պարտի լինիլ ի սեպհականու[թե]ն իմմէ, մի միայն վարձ տանն, յորում գետեղեալ է տպարանն, պարտի լինիլ ի կողմանէ Նորին Բարձր Սրբազնու[թ]ե[ան]ն և գործադրու[թ]ե[ան]ն տպարանական պարագայից, այն է՝ տառից, աղիւսակաց, և այլոց այսպիսեաց,

---

հարևանությամբ գտնվող մեկ տասնյակից ավելի եկեղեցիներից՝ իրենց ծխական համայնքներով: Ծխական համայնքները եկեղեցավարչական ամենափոքր միավորներն էին, իսկ ամենախոշորները՝ փոխանորդությունները: Գործակալությունները լինում էին ինչպես առանձին, այնպես էլ փոխանորդությունների կազմում: Գործակալներին նշանակում և ազատում էր թեմակալ առաջնորդը [Հմմտ. Վ. Գ ր ի գ ո ր յ ա ն. Հայ առաքելական եկեղեցու Վրաստանի և Իմերեթի թեմի գործակալությունների կառավարումը XIX դարի 30-ական թվականներին – XX դարի սկզբին. – «Երիտասարդական 3-րդ գիտաժողովի զեկուցումներ» (Երևան), 2018, էջ 222–223]:

[24] *«Ձեռաց Մաշտոցի» որոշ էջեր ունեն տպագրական դրոշմանշաններ՝ այդ ժամանակաշրջանում Ռուսական կայսրությունում գործող տպագրական թղթի մի քանի գործարանների անուններով:*

որք կան արդէն ՚ի պատրաստի ՚ի տպարանի անդ, պարտի լինիլ առանց վարձուց: Յետ անցանելոյ նշանակեալ վեց ամսոց և վերջանալոյ պայմանեալ տպագրու[թ]ի[ւն]ն, պարտաւոր եմ զհազար երկու հարիւր յիսուն մաշտոցն յանձնել Նորին Բարձր Սրբազնութեանն և ստանալ ՚ի նմանէ ՚ի գին իւրաքանչիւր մաշտոցի զիննսուն կօպ. արծ[աթեայ]. այն է՝ ՚ի գին ամենիցն զհազար հարիւր քսան հինգ րուբլիս արծ[աթոյ]: Առ որ և ստորագրեմ վկայութեամբ քանի մի պատուելի անձանց – Գրիգոր Խաչատրեանց: Վկայեմ Կարապետ Շահմուրատեանց»: Իսկ ձեռագիրն Գրիգորի Խաչատրեանց վ[ա]ս[ն] ստացման 500 րուբ. դրամոցն՝ գրեալ է օրինակ գայս՝ «՚ի 20 Յունվարի 1859 ամի ստորագրեալս ՚ի ներքոյ Շուշաքաղաքացի Գրիգորս Խաչատրեանց ըստ պայմանագրութեան՝ տուելոյ Տ[եառ]ն վիճակաւորին Հայոց Ղարաբաղայ Սրբազան Գէորգ Եպիսկոպոսի Վեհապետեանց վ[ա]ս[ն] տպագրութեան նորատիպ մաշտոցաց ՚ի տպարանին Մայր Աթոռոյ Ս[ր]բ[ո]յ Էջմիածնի ՚ի Շուշի ծախուք իմովք, ՚ի հաշիւ հասանելի ինձ դրամոց ըստ թուոյ մի հազար երկու հարիւր յիսուն հատից, ընկալայ ՚ի նորին Բարձր Սրբազնու[թեն]է միայն զհինգ հարիւր րուբլիս արծաթոյ, որում վ[ա]ս[ն] միամտութեան և ապագայ հաշուէտեսութեան տամ գայս իմով սեպհական ստորագրութեամբ: Գրիգոր Խաչատրեանց»: Հինգերորդ՝ ՚ի հետ[և]ումն այսորիկ Կոնսիստորիայս ըստ զօրութեան օրագրական սահմանադրութեան իւրոյ, կայացելոյ ՚ի 25 Մարտի 1859 ամի, զմնացեալ ՚ի տպարանի վիճակիս գ338 հատ մաշտոցսն ընկալաւ յիւր տեսչութիւն. ընդ նմին և յիշեալ գործակալացն Վարանդու և Ջրաբերդու և յայլորդին Նուխւոյ հրամանագրեաց, իսկ ՚ի Մովսէս վարդապետէն խնդրեաց գրութեամբ, փութով հաղորդել սմին զտեղեկութիւնս, թէ՝ նոքա ո՞րքան դրամս են առաքեալ ցայսօր առ Գէորգ Եպիսկոպոսն, ՚ի գին ո՞րքան յատկապ[է]ս մաշտոցաց, և ո՞րքան մնայ տակաւին: Առ այս գործակալն Վարանդու յայտարարու[թեամ]բ ՚ի 15 Մայիսի հ[ա]մ[ա]ր[ա]ւ 44, ետ Կանսիստորիիս զտեղեկութիւն, թէ՝ ՚ի հարիւր քառասուն հատ մաշտոցացն ինքն վաճառեալ է ՚ի վ[ե]ր[այ] քահանայից և եկեղեցեացն Վարանդու գ139 հատորս, իւրաքանչիւրն 2. րուբ. 50 կօպէկօք, ընդ ամէնն՝ 347 րուբ. 50 կօպ. և մի հատորն մնացեալ է առ Անդամոյ Սորին Գէորգ վարդապետին Արամեանց: ՚Ի յիշեալ դրամոցն գ325 րուբլիսն մատուցեալ է նորին Սրբազնութեանն, իսկ գ22 րուբ. 50 կօպէկսն ծախեալ է նա ՚ի գին գարւոյ և յարդի ՚ի պէտս երիվարաց և գրաստուց ն[ո]ր[ա], եղելոց ՚ի վանն Ամարասայ: Գործակալն Ջրաբերդու յայտարարութեամբ ՚ի 25 Յունիսի անցեալ ամի հ[ա]մ[ա]ր[ա]ւ 63, յայտնեաց Աւետիս, թէ՝ նախորդն ն[ո]ր[ա] Անդրէաս վարդապետն զհարիւր հատոր մաշտոցս վաճառեալ է ՚ի վերայ քահանայից և եկեղեցեաց ըստ իւրոյ տեսչութեան իւրաքանչիւրն 2. րուբ. 50 կօպ. արծ[աթեայ]. ընդ ամէնն՝ 250 րուբ. և զայս գումար դրամոց մատուցեալ է նա Սրբազան Գէորգ Եպ[ի]ս[կոպոս]ին ընդ յայտարարութեան ՚ի 10 Հոկտեմբերի 1858 ամի հ[ա]մ[ա]ր[ա]ւ 120, և վասն ստացման դրամոցն այնոցիկ նա ստորագրեալ է ՚ի յղելի թղթոց տետրակի գործակալութեանն վ[ա]ս[ն] 1858 ամի: Իսկ Վիճակային Հայոց Կանսիստորիայն Շամախւոյ ընդ գրութեան ՚ի 15 Յուլիսի նոյն ամի հ[ա]մ[ա]ր[ա]ւ 664, վերադարձուցեալ էր ՚ի Կանսիստորիայս զվերոյիշատակեալ 72. հատ մաշտոցսն ՚ի պատճառս

անհնարաւորութեանն վ[ա]ճ[ա]ռմ[ա]ն այնոցունց ի վիճակի անդ: Եւ ի վերջոյ՝ յայորդն Շաքւոյ Կարապետ վարդապետն Միրզաբէկեանց յայտարարու[թեամ]բ իւրով ի 5./այր/ Դեկտեմբերի հ[ա]մ[ա]ր[ա]ւ 47, յայտ առնէ Կանսիստորիիս, թէ՝ ի հարիւր հատ մաշտոցացն, առաքելոց առ նա ի Սրբազան Գէորգ Եպ[ի]ս[կոպոս]էն, զերեսուն վեց հատորն վաճառեալ է ինքն՝ իւրաքանչիւրն երեք րուբլւովք, ընդ ամէնն՝ 108 րուբլւոյ արծ[աթոյ]. զորս թէպէտ նա առաքեալ է ի Կանսիստորիայս Ղարաբաղու ընդ յայտարարութեան ի 25 Հոկտեմբերի անցեալ 1858 ամի N 80, սակայն զայնս ստացեալ է Նորին Սրբազնու[թ]ի[ւն]ն և վասն ստացմանն առաքեալ է առ նա յայորդն զառաջադրութիւն իւր ի 5 Նոյեմբերի սոյն ամի հ[ա]մ[ա]ր[ա]ւ 151: Յետ այսորիկ վաճառեալ է նա յայորդն ի մաշտոցաց անտի նաև զ31 հատորս, զորոց և զգինս, որ է 93 րուբ. արծ[աթոյ]. մատուցեալ ուղղակի Նորին Սրբազնութեանն ընդ յայտարարութեան ի 17 Յունվարի ներկայ 1859 ամի ընդ հ[ա]մ[ա]ր[ա]ւ 9, սակայն վասն ստացման սոյն գրամոց տակաւին ինքն չէ ստացեալ ի նմանէ գտեղեկութիւն ինչ: Բաց յայսմանէ վաճառեալ է նա նոյնպէս զեօթն հատ մաշտոց և զգինս նոցունց ընդ ամէնն՝ 21 րուբլի ընդ ներկայ յայտարարու[թեամ]բ իւրում, որ ի 5 նոյն Դեկտեմբերի N 47, մատուցեալ է Կանսիստորիիս ձեռամբ Յովհաննէս քահանային Մախմուրեանց: Ուստի և մնացեալ է առ ինքեան յայորդին առանց վաճառման քսան և վեց մաշտոց: <u>Վեցերորդ</u>՝ որ ինչ վերաբերի առ այն թէ՝ Գէորգ Եպ[ի]ս[կոպոս]ն ո՞րքան մաշտոցս է տպագրել տուեալ յօգուտ իւր՝ բաց ի վերոյ նշանակեալ 1250 հատորոցն, որո՞յ ծախուք արդեօք և ո՞ւր գտանին այժմ, չի՛ք յայսմ մասին տեղեկու[թ]ի[ւն]՝ ինչ ի գործս Կանսիստորիիս: — Այլ՝ որպ[է]ս յայտնեն Ատենակալքն Կանսիստորիիս, լուեալ է ն[ո]ց[ա], թէ՝ Գէորգ Եպ[ի]ս[կոպոս]ն տուեալ է տպագրել առանձինն յօգուտ իւր զ250 հատոր մաշտոցս բաց ի վերոյ նշանակեալ 1250 հատորոցն: Ուստի և հարկաւոր դատեցաւ ըստ այսմ բանի հարցանել ո[ր]պ[էս] գՅաչատուր քահանայն Ղալաբէկեանց, նոյնպ[է]ս՝ և զՇուշաքաղաքացի Մինասն Տատղիճեանց, որոց յայտնի են ամ[ենայն] հանգամանք տպագրութեան մաշտոց գրքուկացն, և նոքա յայնմ իսկ աւուր, այն է՝ յ30 Դեկտ[եմբերի] 1859 ամի ետուն գրացատրու[թ]ի[ւն]ս իւրեանց յԱտենի Կանսիստորիիս, յորոց առաջինն յայտնէ այսպ[է]ս՝ «Առ հարցումն Ատենակալաց Կանսիստորիիդ՝ ի մասին հանգամանց տպագրու[թ]ե[ան] մաշտոց գրքուկացն ամենախոնարհաբար բացատրեմ գյետագայս — Նախկին Ատենապետն Կանսիստորիիդ Սրբազան Գէորգ Եպ[ի]ս[կոպոս]ն և Անդամք Դորին յառաջին աւուրս Փետրվարի 1858 ամի, կոչեալ ինձ և Շուշաքաղաքացի Տ[ի]ր[ա]ց[ո]ւ Իսահակն Մախմուրեանց և Տ[ի]ր[ա]ց[ո]ւ Թէոն Տ[է]ր Ա[ստուա]ծատրեան՝ յանձնեցին մեզ տպագրել ի տպարանի Մայր Աթոռոյն Ս[ր]բ[ո]յ էջմիածնի, եղելոյ ի Շուշի քաղաքիս, զ1250 հատ մաշտոցս սեպհական ծախուք Հոգևոր Ատենիդ, խոստանալով ինձ և գործակցին իմոյ Մախմուրեանցին ի տարեկան վարձ իւրաքանչիւրոցն 75 րուբլի. 5 չեթվերթ ցորեան, իսկ Տէր Ա[ստուա]ծատրեանին ի տարին 40 րուբլի և 3 չեթ[վերթ] ցորեան: Յետ այսորիկ ձեռնարկաք յայնժամ ի տպագրել գնշանակեալ 1250. հատոր մաշտոցսն, և ո[ր]պ[էս] յայտնի է Ատենակալաց Հոգևոր Ատենիդ՝ տպագրեցաք մեք զուրթ տետրակս այնց

դրքուկաց՝ այն է մինչ ց66 երեան: Զկնի անցանելոյ ամսաչափ ժ[ա]մ[ա]ն[ա]կի, առանց յայտնի մեզ պատճառաց՝ Նախկին Պաշտօնակատարն Վիճակաւոր Առաջնորդի թեմիս Ղարաբաղու Գէորգ Եպ[ի]ս[կոպոս]ն դաշնագրեաց յիւրմէ կողմանէ ընդ Շուշաքաղաքացի Գրիգորի Խաչատրեանց, զի նա իւրով սեպհական ծախուք տպագրել տացէ ի յիշեալ տպարանին զ1250 մաշտոցսն ընդ ձեռն Շուշաքաղաքացի տպագրիչ Մինասայ Տառղլիճեանց, զիւրաքանչիւր հատորն 90 կօպ. արծ[աթեայ]: Վ[ա]ս[ն] [որո]յ և Նորին Բարձր Սրբազնու[թ]ի[ւն]ն խափանեաց զտպագրու[թ]ի[ւ]ն մեր, և առաջադրեաց մեզ զբոլոր հաշիւս նոյն տպարանին և զտպագրեալ մեօք թերթսն մաշտոցացն այնոցիկ յանձնել ցուցակագրու[թեամ]բ նոյն Տառղլիճեանին, ուստի մեք առանց ընդդիմու[թ]ե[ան] կատարեցաք զայն պատուէր Նորին Սրբազնու[թ]ե[ան]: Եւ յետ այնորիկ եկեալ մեր առ Սրբազան Գէորգ Եպ[ի]ս[կոպոս]ն յայտնեցաք թէ՝ զի՞նչ էր պատճառն, զի այդպ[է]ս՝ արարիք ընդ մեզ, մեք պատրաստ էաք տպագրել զայնոսիկ մաշտոցսն ծախուք Վիճակային Կանսիստորիին, ըստ որոյ իւրաքանչիւր հատորոյ ծախքն չունէր առաւելուլ քան զ50 կօպ. արծ[աթեայ]. այլ դուք ընդ հակառակն դաշնակցեալ էք ընդ Խաչատրեանին տպագրել տալ զիւրաքանչիւր հատն 90 կօպեկօք արծ[աթեայ]: Այլ նա յայսմ մասին ոչինչ տուե[ա]լ մեզ պատասխանի, հրամայեաց մեզ ստանալ ի Կանսիստորիէդ մի միայն զամսական ութ ութ րուբլի վարձն մեր և ի բաց հրաժարիլ յայնմ գործոյ, ո[ր]պ[էս] և եղև: Յաւելում և զայս յետ քանի մի ժամանակաց յայտնի եղև մեզ, թէ՝ իւրն Բարձր Սրբազանու[թ]ի[ւն] դաշնակցեալ է ընդ Խաչատրեանին տպագրել տալ ո՛չ թէ զ1250 հատոր մաշտոցս, այլ զ1500 հատորս, յորոց՝ որպ[է]ս գիտեմ, զ1250 հատորսն առաքեալ է Նորին Սրբազնու[թ]ի[ւն]ն առ զանազան գործակատար Հոգևոր անձինս վասն վաճառման յանուն Վիճակին, իսկ զմնացեալ 250 հատորսն ի նոցունց բարձե[ա]լ է յօգուտ իւր ինքեան, այլ թէ ո՞ւր է առաքեալ զայնս՝ ոչ գիտեմ: Զայս ամ[ենայն] բացատրեալ ամ[ենայն] ճշմարտու[թեամ]բ և արդարու[թեամ]բ, յայնմ ստորագրեմ — Խաչատուր քահանայ Ղալաբէկեանց»: Իսկ երկրորդն յայտնէ այսպ[է]ս՝ «Առ հարցումն Առենակալաց Դորին ի մասին հանգամանաց մաշտոց գրքուկացն՝ ամենայարգոյաբար բացատրեմ զյետագայս — ի 1858 ամի ի Մարտ ամսեանն Շուշաքաղաքացի Պ[ա]ր[ո]ն Գրիգորն Խաչատրեանց պայմանագրաւ յանձնեաց ինձ տպագրել ի տպարանի Մայր Աթոռոյն Ս[ր]բ[ո]յ Էջմիածնի, եղելոյ ի Շուշի քաղաքիս, զ1500. հատ մաշտոցս իմով սեպհական ծախուք, իւրաքանչիւր հատն 90. կօպ. արծ[աթեայ]: Յետ վերջաւորելոյ իմ զտպագրու[թ]ի[ւն]ն այնոցիկ 1500. հատոր մաշտոցացն՝ յանձնեցի զայնոսիկ Պ[ա]ր[ո]ն Խաչատրեանցին և ստացայ ի նմանէ զ1350 րուբլի վարձան տպագրու[թ]ե[ան] իմոյ: Իսկ նա Պ[ա]ր[ո]ն Գրիգորն Խաչատրեանց յետ ստանալոյ յինէն ըստ պայմանագրին մերում զյիշեալ քանակու[թ]ի[ւն]ան մաշտոցաց, յայտնեաց զայնմանէ Սրբազան Գէորգ Եպ[ի]ս[կոպոս]ին Վեհապետե[ա]նց, և Նորին Սրբազնու[թ]ի[ւն]ն յայնժամ կարգադրեալ յիւրմէ կողմանէ առաքեաց յայնոցիկ գրքուկացն առ ի վաճառ անցուցանելոյ՝ զ100 հատ ի Նուխի քաղաք՝ առ յաջորդ Կարապետ վարդապետն, զ100 հատ առ գործակալն Ջրաբերդու, զ140 հատ առ

գործակալն Վար[ա]նդու, զ72 հատ առ կառավարիչն Շամախւոյ Վիճակի Մովսէս վարդապետն Մաղաքեանց. զ200 հատ ի Թիֆլիզ՝ առ Գրիգոր քահանայ Տ[է]ր Բարսղեանց, զ50 հատ յելիսավետապոլ առ նախկին յայորդն տեղւոյն հանգուցեալ արդէն կարապետ վարդապետն, իսկ զ338 հատ մաշտոցն ստացեալ է յայսմ ամի ի Մարտ ամսեանն Անդամ Կանսիստօրիիդ Սիմէօն քահանայն Տ[է]ր Իսրայէլեանց, բաց յայսց ամենից առաքեալ է ի Սինօդն Ս[ր]բ[ո]յ էջմիածնի զ500 հատ: Այլ թէ՝ ի վերոյ նշանակեալ 1500 հատ մաշտոցացն ո՞րքան էր ի հաշիւ Վիճակային կանսիստօրիիդ և ո՞րքան յօգուտ Սրբազան Գէորգ Եպ[ի]ս[կոպոս]ին, ես ո՛չ գիտեմ յատկապ[է]ս: Զայս ամ[ենայն] բացատրեալ ամ[ենայն] ճշմարտու[թեամ]բ վ[ա]ս[ն] [որո]յ և ստորագրեմ – Մինաս Տաղլիճեանց»: ՍԱՀՄԱՆԵՑԻՆ – ի վերոյ գծագրեալ հանգամանաց գործոյս պարզապ[է]ս տեսանի, նախ՝ թէ՝ Լուսաւորչական Հայոց Սինօդդ Ս[ր]բ[ո]յ էջմիածնի թէպէտ թոյլատրեալ էր Կանսիստօրիիս տպագրել տալ ծախուք Վիճակային արդեանց զհազար հատ մաշտոց գրքոյկս, յորոց և զ500 հատորս առաքել ի Սինօդդ, և զմնացեալ 500 հատորսն թողուլ ի Կանսիստօրիիս ի լրումն պակասու[թ]ե[ան] եկեղեցեաց թեմիս, սակայն Հոգևոր Ատեանս համաձայն նախենթադատու[թ]ե[ան] Ատենապետի և անդամոց իւրոց բարւոք էր համարեալ տպագրել տալ յայնց գրքուկաց ընդ ձեռն Խաչատուր քահանային Ղալաբէկեանց և երկուց օգնականաց ն[ո]ր[ա] զ1250 հատորս[25], այնու դիտմամբ, զի զկնի մատուցման Սինօդիդ Ս[ր]բ[ո]յ էջմիածնի պահանջեալ 500 հատորոցն, ի վաճառմանէ մնացեալ 750 հատորոցն հնարաւոր լիցի լրացուցանել զգումարն ծախուց Վիճակային արդեանց, (որ չունէր առաւելուլ քան զ650 րուբլի արծ. ամ[ենայն] պարագայիւքն, ըստ որում յիշեալ Խաչատուր քահանայն յօժար էր յայնժամ տպագրել զիւրաքանչիւր հատորն յիսուն կօպ. արծ. դրամօք[26], ո[ր]պ[էս] և ի բացատրու[թ]ե[ան]ն իւրում խոստովանի ճշմարտու[թեամ]բ) և զաւելորդ չահն թողուլ յօգուտ Հոգևոր Ուսումնարանին Ղարաբաղու և մասամբ ինչ Ամոռապատկան տպարանին: Այլ ի վ[ե]ր[այ] այսր ամ[ենայնի]՝ Սրբազան Գէորգ Եպ[ի]ս[կոպոս]ն յետ

---

[25] *Գևորգ եպիսկոպոսի բացատրագիրն առանձին վավերագրի տեսքով մեզ հայտնի չէ. այն գտել ենք մեկ այլ վավերագրի բովանդակության մեջ (տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 3888, թ. 98–101), ուստի նպատակահարմար չգտանք տպագրել սույն հրապարակման մեջ: Բացատրագրում նա հայտնում էր, որ թեև ինքը սկզբից հանձնարարել էր Խաչատուր քահանա Ղալաբեկյանցին և նրա երկու գործակիցներին «Ձեռաց Մաշտոցը» տպագրել 1250 տպաքանակով, սակայն իր հանձնարարությունը մեկ ամիս անց կասեցրել է: Նա պատճառաբանում էր, որ Խաչատուր քահանան ծանրաբեռնված էր հովվական ծառայությամբ և ծխական պարտականություններով, ուստի չէր կարող կարճ ժամանակում գլուխ բերել դրա տպագրությունը (տե՛ս նույն տեղում, թ. 99):*

[26] *50 կոպեկ արժողությամբ «Ձեռաց Մաշտոց» գրքերից յուրաքանչյուրը տպագրելու մասին Խաչատուր քահանա Ղալաբեկյանցի հայտնած առաջարկության առնչությամբ Գևորգ եպիսկոպոսը իր բացատրագրում պնդում էր, որ ինքը խղճահարությունից դրդված չի ցանկացել տպագրական գործի չարունակությունը թողնել Խաչատուր քահանային՝ հաշվի առնելով նաև նրա նյութական դժվարությունները (տե՛ս նույն տեղում, թ. 99 շրջ.):*

այսօրինակ տնօրէնու[թ]ե[ան] Կանսիստօրիիս և յետ շարունակու[թ]ե[ան] տպագրու[թ]ե[ան] այնոցունց գրքուկաց ընդ ձեռն յիշեալ անձանց յընթացս ամսաչափ ժամանակի մինչև ց66 երեան ըստ հաշուոյ 1250 հատորոց, ապաքէն վ[ա]ս[ն] անձնական շահուն իւրոյ միայն՝ արհամարհելով զայս ամ[ենայն]՝ ինքնակամ պայմանագրեալ է գրաւոր ընդ Շուշաքաղաքացի Գրիգորին Խաչատրեանց[27] տպագրել տալ գնոյնչափ հատոր մաշտոցս, այն է՝ գ1250 հատորս, այլ բանաւոր և գաղտնի դաշամբ պարտաւորեալ է գնա տպագրել տալ գ1500 հատորս, յորոց 1250 հատորն յօգուտ Վիճակիս և Մայր Աթոռոյն Ս[ր]բ[ո]յ Էջմիածնի, իսկ մնացեալ 250 հատորն յօգուտ ինքեան, խոստանալով հատուցանել վասն իւրաքանչիւր հատորոցն գ90 կօպ. արծ. դրամս, այն է՝ 40 կօպեկօք աւելի քան զայն, որով յօժարիւր և թախանձանօք աղաչէր Խաչատուր ք[ա]հ[ա]ն[ա]յն Ղալաբէկեանց տպագրել զիւրաքանչիւր հատորն ի նոցունց: Եւ ըստ սմին հաշուոյ վնասն Վիճակին ըստ այսմ տպագրու[թ]ե[ան] է հինգ հարիւր րուբլի արծ.[28]: Երկր[որ]դ՝ Սրբազան Գէորգ Եպ[ի]ս[կոպոս]ն առաջադրու[թեամ]բ իւրով յ31. Յունվարի 1859 ամի հ[ա]մ[ա]ր 11, տալով Կանսիստօրիիս գծանօթու[թ]ի[ւն]ս զարարեալ իւր և տնօրէնութեանցն յայնմ թէ՝ ո՛ւր և առ ո՛ զո՞րքան հատոր մաշտոցս է առաքեալ ինքն. և ո՛րքան է մնացեալ աստանօր, — ի միջի այլոց ծանուցեալ է, թէ՝ ինքն մինչև ցայն վայր ստացեալ է ի գնոյ վաճառեալ մաշտոցացն միայն գ500 րուբլիս արծ. զորս և հատուցեալ է Պ[ա]ր[ո]ն Գրիգորին Խաչատրեանց ի հաշիւ հասանելի նմա 1125 րուբ. գումարոյն ի վարձ տպագրու[թ]ե[ան] 1250 հատոր մաշտոցացն. ընդ նմին և պատուիրեալ է Կանսիստօրիիս լրացուցանել յիշեալ Խաչատրեանին կ[ա]մ հաւատարմի ն[ո]ր[այ]

---

[27] *Գևորգ եպիսկոպոսը բացատրագրում պնդում էր, որ թեմական գանձարանում բավարար գումար չկար «Ջեռաց Մաշտոցի» տպագրությունն իրականացնելու համար: Ուստի խուսափելով այսպիսի դժվարություններից և Հոգևոր ատյանն ավելորդ պարտքերի մեջ չծանրաբեռնելու համար՝ որոշեց տպագրությունն ավարտելու համար գործակցել չուշեցի Գրիգոր Խաչատրյանցի հետ (տե՛ս նույն տեղում, թ. 99):*

[28] *«Ջեռաց Մաշտոց» գրքի յուրաքանչյուր օրինակը 50 կոպեկի փոխարեն 90 կոպեկով տպագրելու արդյունքում Ղարաբաղի կոնսիստորիան Գևորգ եպիսկոպոսից պահանջում էր 500 ռուբլու վնասի փոխհատուցում: Վերջինս չէր կամենում այդ գումարը վճարել իր գրպանից, քանի որ չէր ընդունում՝ «Ջեռաց Մաշտոց» գրքի յուրաքանչյուր օրինակի տպագրությունը 90 կոպեկով իրականացնելու դեպքում ինքը վնաս է պատճառել թեմական գանձանակին՝ 50 կոպեկով տպագրելու առաջարկն իրատեսական չհամարելով: Գևորգ եպիսկոպոսը հույս էր հայտնում, որ էջմիածնի Սինոդն արդարացի լուծում կտար և իրենից չէր գանձի կոնսիստորիայի պահանջած 500 ռուբլի փոխհատուցումը: Ավելին՝ նրա կարծիքով «Ջեռաց Մաշտոց» գրքի տպագրությունից չահել է ինչպես էջմիածնի Մայր Աթոռը՝ ստանալով 500 օրինակ, այնպես էլ՝ Ղարաբաղի հայոց թեմը, որին բաժին էր հասել 750 օրինակ: Գևորգ եպիսկոպոսի պնդմամբ՝ «Ջեռաց Մաշտոցի» յուրաքանչյուր օրինակը 2,5 ռուբլի գնով վաճառելու դեպքում խոշոր չահույթ կստանային թե՛ Մայր Աթոռը (2,5 ռուբլի x 500 օրինակ = 1250 ռուբլի) և թե՛ Ղարաբաղի թեմը [(2,5 ռուբլի-90 կոպ.) x 750 օրինակ = 1200 ռուբլի] (տե՛ս նույն տեղում, թ. 100 և շրջ.):*

Պ[ա]ր[ո]ն Շահմուրատեանին, գմնացեալ 625 րուբլի արծ. դրամն ՚ի գնոյ անվաճառ մն[ա]ցեալ գրքուկացն: Բայց այսու ամ[ենայն]իւ՝ ո[ր]պ[էս] բացայայտ տեսանի ՚ի յայտարարու[թ]ե[ան]ց գործակալացն Վարանդու և Ջրաբերդու և յայրորդին Շաքւոյ, նա Գէորգ Եպ[ի]ս[կոպոս]ն ստացեալ է ՚ի գին վաճառեալ մաշտոցաց ՚ի յիշեալ ստորագրելոց գ798 րուբ. 50 կօպ. այն է՝ աւելի քան զցուցեալն իւրև 298 րուբ. և 50 կօպ. արծ. և այս գումար ցայսօր ժամանակի գտանի առ նմա: Երր[որ]դ՝ թէ՝ վերոյիշեալ 250 հատոր մաշտոց գրեանքն ըստ վերջին գնահատու[թ]ե[ան]ն, (այն է՝ իւրաքանչիւրն 2 րուբ. 50 կօպ.), նշանակելոյ ի Նորին Սրբազնու[թեն]էն, ունին զարժէս 625 րուբլւոյ արծ. և յայնցանէ վասն վաճառման առաքեալ է նա առ Գրիգոր ք[ա]հ[ա]ն[ա]յն Տ[է]ր Բարսղեան Թիֆլիզեցի գ200 հատոր և առ նախկին յայրորդն Ելիսաւետօպոլու հանգ[ո]ւցե[ա]լ արդէն Կարապետ վարդապետն գ50 հատ: Ջորր[որ]դ՝ ՚ի թուոյ 750 հատ մաշտոցացն, տպագրելոց յօգուտ Վիճակիս, այժմ գտանին անվաճառ 26 հատ առ յայրորդին Շաքւոյ Կարապետ վարդապետին Միրզաբէկեանց, 1. հատ առ Անդամոյ սորին Գէորգ վարդապետին Արամե[ա]նց և 410 հատ ՚ի Կանսիստօրիիս, բոլորն 437 հատ, որոց գինն՝ եթէ վաճառեսցին այնոքիկ 2 րուբ. 50 կօպ. արծ. առ իւրաքանչիւր հատորն, լինի ընդ ամէնն՝ 1117 րուբ. 50 կօպ. յորոց վ[ե]ր[այ] յաւելեալ գ798 րուբ. 50 կօպ. դրամն ՚ի գին 313. հատոր մաշտոցացն, ցարդ վաճառելոց ընդ ձեռն գործակալացն Վարանդու և Ջրաբերդու և յայրորդին Նուխւոյ, զորս և ստացեալ է Սրբազան Գէորգ Եպ[ի]ս[կոպոս]ն՝ լինի բոլորն ՚ի միասին 1916 րուբլի արծ. յորմէ հանեալ գ1125 րուբ. գումարն ծախուց ՚ի պէտս տպագրու[թ]ե[ան] 1250 հատոր մաշտոցացն՝ ունի մնալ յօգուտ Վիճակին 791 րուբ. և յայսմանէ հանեալ զգումարն դրամոց, ծախելոց ՚ի վիճակային արդեանց ՚ի վարձ Խաչատուր քահանային Ղալաբէկեանց և երկուց օգնականաց ն[ո]ր[ա], նոյնպ[է]ս և ի գին արկղաց, պարանաց և ՚ի վարձ բեռնակիր գրաստուց ՚ի ժամ առաքելոց գ500 հատոր մաշտոցն ՚ի Ս[ուր]բ Էջմիածին, որ է 55 րուբլի 21. կօպէկ,- մնայ ՚ի վերջոյ 735 րուբ. 79 կօպ.: Վ[ա]ս[ն] [որո]յ և Վիճակային Հոգևոր Ատեանս արժան վարկանի ըստ վերոյ գծագրեալ հանգամանացն առնել գյետագայս – Նախ՝ բոլորագրու[թեամ]բ վերոյ բացատրեալ հանգամանաց խնդրել ամենախոնարհաբար ՚ի Լուսաւորչական Հայոց Սինօդէդ Ս[ր]բ[ո]յ Էջմիածնի բարեհաճել յետս ստանալ ՚ի Սրբազան Գէորգ Եպիսկոպոսէն Վեհապետեանց գ298 րուբ. 50 կօպ. արծ. դրամն, մնացեալս առ նմա ՚ի գումարացն մատուցելոց նմա ՚ի գործակալացն Վարանդու և Ջրաբերդու և ՚ի յայրորդէն Շաքւոյ, ՚ի գին վաճառեալ ընդ ձեռն ն[ո]ց[ա] մաշտոց գրքուկացն: Նոյնպէս և պահանջել ՚ի Նորին Սրբազնու[թեն]էն գ500. րուբլի դրամս, որչափ գումարաւ նա ինքն վնասակար է գտեալ օգտի Վիճակիս փոխանակ 50 կօպէկի 90. կօպէկի տպագրել տալովն գիւրաքանչիւր հատորն 1250. մաշտոց գրքուկացն,- և կամ հրամայել նմա գ250. հատոր մաշտոցսն, տպագրել տուեալս յօգուտ իւր՝ զարձուցանել յօգուտ Վիճակիս[29]: Երկրորդ՝ որովհետև ՚ի վերայ բոլոր եկեղեցեաց և

[29] *Ինչ վերաբերում է «Ձեռաց Մաշտոց» գրքի՝ Գևորգ եպիսկոպոսի մոտ մնացած հավելյալ և գաղտնի տպագրված 250 օրինակներին, հարկ է նշել, որ նա*

քահանայից Վիճակիս Ղարաբաղու արդէն բաժանեալ են մաշտոց գիրք, և չի՛ք այլևս հնարաւորութիւն ինչ յայսմ Վիճակի վաճառելոյ ՚ի մնացեալ 410 մաշտոցացն, վ[ա]ս[ն] [որո]յ խնդրել ՚ի Սինոդէդ Ս[ր]բ[ո]յ էջմիածնի առնել զպատշաճաւորն տնօրէնութիւն վասն վաճառման այնոցիկ յայլ վիճական Հայոց ՚ի Ռուսաստան, ուր գտցին կարօտութիւնք այնպիսեաց: Երրորդ՝ ըստ որում ՚ի ներկայ ժամանակի չգտանի ՚ի Կանսիստորիս գումար ինչ նշանաւոր ՚ի գնոյ մաշտոցաց, վ[ա]ս[ն] [որո]յ և զվճարումն Պ[ա]ր[ո]ն Գրիգորի Խաչատրեանց մնացեալ 625. րուբլի դրամոց ՚ի լրումն պայմանեալ գումարոյն ՚ի գին տպագրութեան 1250. Մաշտոցացն՝ թողուլ մինչև ցբոլորովին վաճառումն այնց գրքուկաց և ցստացումն ՚ի Սրբազան Գէորգ Եպիսկոպոսէն վերոյ նշանակեալ գումարացն դրամոց[30]: Եւ Զորրորդ՝ զամ[ենայն] յառաջ բերեալ ՚ի Կանսիստորիս տեղեկութեանցն ՚ի գործոյն և զներկայ արարեալ տնօրէնութեանց Հոգևոր Առենիս ծանուցանել հաղորդագրութեամբ Քննչիս Հոգևոր գործոց վիճակիս Ղարաբաղու Բարձր Արժանապատիւ Դանիէլ վարդապետին Շահնազարեանց ՚ի կատարումն պահանջման նորա առաջին պարբերութեամբն գրութեան իւրոյ ՚ի 23 այսր Դեկտեմբերի Հ[ա]մ[ա]ր 22:

Անդամք Կանսիստորիս Գէորգ վ[ա]րդ[ա]պ[ե]տ Արամե[ան]ց
Գրիգոր Աւագ քահ[ա]ն[ա]յ
Սիմէօն քահ[ա]ն[ա]յ Տ[է]ր Իսրայէլեանց
Յօհաննէս ք[ա]հ[ա]ն[ա]յ տ[է]ր Գաբրիէլեանց

Հ[ա]մ[ա]ր 35.
Յամի ազգական ՌՅԹ.
և փրկչական 1860.
յ9. Յունվարի[31]
՚ի Ք. Շուշի:

Ատենադպիր Յ. Շահնազ[ա]րե[ան]ց

ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 3888, թ. 22–27 շրջ.: Բնագիր: Ձեռագիր:

խնդրել էր Գրիգոր Խաչատրյանցին հոգալ նաև դրանց տպագրության ծախսը՝ խոստանալով 200 օրինակի վաճառքից ստացված գումարով մարել իր պարտքը՝ տոկոսներով հանդերձ, իսկ մնացած 50 օրինակի վաճառքից գոյացած գումարը կամ հենց 50 օրինակ գրքերը տալ կոնսիստորիային՝ որպես վարձատրություն Շուշիի տպարանին (տե՛ս նույն տեղում, թ. 100 շրջ.):

[30] *Գևորգ եպիսկոպոսը բացատրագրում կոնսիստորիային հայտնում էր, որ ինքը Գ. Խաչատրյանցին «Ձեռաց Մաշտոց» գրքի տպագրության համար 625 ռուբլի պարտքից հանձնել է 298 ռուբլի 50 կոպեկ գումար՝ հավաստիացնելով, թե պարտքը մնացել է 327 ռուբլի: Կոնսիստորիան Գևորգ եպիսկոպոսից պահանջում էր ներկայացնել նաև վճարման անդորրագրերը, որոնց փոխանցումը նա անհարկի ձգձգում էր (տե՛ս նույն տեղում, թ. 99 շրջ.):*

[31] *Սույն գրությունը էջմիածնի Սինոդում ստացվել է 1860 թ. փետրվարի 5-ին, որի մասին վավերագրի սկզբում կա հետևյալ նշումը. «՚ի 5 Փետրվարի 1860 ամի ստ[ա]ցե[ա]լ»:*

Doi:10.54503/0135-0536-2022.1-259

К 150-ЛЕТИЮ СО ДНЯ РОЖДЕНИЯ
БОРИСА ЛАЗАРЕВСКОГО

АРМЯНСКИЕ МОТИВЫ В ТВОРЧЕСТВЕ БОРИСА ЛАЗАРЕВСКОГО*

Среди русских литературных деятелей 10-х годов XX в., отразивших в своих произведениях армянскую действительность, достойное место занимает известный в свое время беллетрист Борис Лазаревский (1871–1936). Будучи сыном украинского историка, он получил образование на юридическом факультете Киевского университета, занимал посты в военном и морском ведомствах. После русско-японской войны посвятил себя литературе: «Ближайший преемник школы Чехова и Куприна»[1] в основном писал небольшие романы на любовные темы, считая себя специалистом – психологом «женской души».

Можно с уверенностью сказать: малоизвестного в армянской среде русского писателя многое связывало с Арменией и ее культурой, что нашло отражение и в его литературно-общественной деятельности. Так, известный армянский поэт В. Терьян в письме от 2 апреля 1915 г. из Петрограда, адресованном общественно-культурному деятелю К. Микаэляну, писал: «Мне сообщили, что мой адрес разыскивает Борис Лазаревский (знаешь его, конечно), думаю, с таким же делом (имеется в виду издание сборника «Поэзия Армении» – *А. З.*)»[2].

Ю. Веселовский в статье «Русская литература и армянская жизнь», написанной в 1916 г., говоря об отражении армянской действительности в новейшей русской литературе, упоминает и Б. Лазаревского, отмечая, что он «также показывает нам в одном из своих рассказов интересный женский образ, взятый из того же мира»[3].

В августе 1919 г. в тифлисской газете «Кавказское слово» печатается рассказ Б. Лазаревского «На чужбине», а в апреле 1920 г. в газете «Слово» – «Брошечка». В этих рассказах его героини – армянская девушка и женщина.

* Представлена 26. XI. 2021 г., принята к печати 25. I. 2022 г.

[1] С. Городецкий. Лирик прозы (портрет Бориса Лазаревского). – «Слово» (Тифлис), 05. IX. 1919.

[2] *Վ. Տերյան. Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1979, էջ 200–201:*

[3] Ю. Веселовский. Русская литература и армянская жизнь. – «Армянский вестник» (М.), 1916, № 15, с. 2.

В 1919–1920 гг. Б. Лазаревский для армянства городов России – Ростова, Армавира, а также Тифлиса и Еревана выступил с лекциями «Девушки и женщины Армении», где обстоятельно представлены взгляды и оценка писателем армянской женщины, армянской действительности в целом. Лекции вызвали большой интерес в армянских общественных кругах. После одной из этих лекций в Тифлисе Лазаревский посетил великого армянского поэта Ов. Туманяна, о чем свидетельствует его запись в альбоме поэта[4].

Б. Лазаревский, отправляясь в Париж через Константинополь, в 1920 г. в нескольких октябрьских номерах местной газеты «Чакатамарт» («Битва») публикует в переводе на западноармянский цикл очерков-исследований «Девушки и женщины Армении» [5].

Ниже публикуем рассказы Б. Лазаревского «На чужбине» и «Брошечка».

АНУШАВАН ЗАКАРЯН

НА ЧУЖБИНЕ

С чувством жгучего одиночества ходил я по горячим улицам Тифлиса, пошатываясь точно пьяный, под палящими лучами солнца и думал: «Вот сейчас упаду и умру здесь, на чужбине. Затем или обращусь в ничто, или улечу в ту страну, где ни для кого нет никакой чужбины, где все знают друг друга без слов и где для всех родина ...».

Подлейший из всех инстинктов – инстинкт самосохранения – загнал меня в какое-то маленькое, уютное и относительно прохладное кафе. Хорошенькие кельнерши весело подавали. Старушка-кассирша с ласковыми, спокойными глазами давала сдачу, курила тоненькие папиросски и отмечала что-то на квадратном листке бумаги.

Входили англичане и молча садились за столики. Разговаривали тихо какие-то дельцы. Возле окна ели мороженое две жгучие брюнетки в белых платьях – одна постарше, а другая совсем молоденькая, должно быть, лет шестнадцати, с темными невеселыми глазами, в которых было написано, что, может быть, и она скоро очутится там, где для всех – общая родина.

У меня всегда была способность угадывать это ...

И вдруг я вспомнил почти такие же глаза, которые я видел двадцать лет назад, сначала в вагоне, а затем здесь, в этом самом городе.

---

[4] См.: *Ա. Զ ա ք ա ր յ ա ն. Բորիս Լազարևսկին Հայաստանի և հայ կանանց մասին, Երևան, 2004, էջ 10–13:*

[5] См.: *«Ճակատամարտ» (Կ. Պոլիս), 7, 8, 9, 10, 12, 13, 14, 15, 16. X. 1920, Ա. Զ ա ք ա ր յ ա ն. նշվ. աշխ., էջ 58–84:*

Тогда я умел еще загораться от одного нежного колебания длинных ресниц.

Девушки ехали с отцом и матерью в купе 1-го класса, кажется, из-за границы. Мы познакомились, но разговаривали немного, хотя ехали вместе целые сутки. Я успел только узнать, что армянское имя девушки по-русски означает любовь, что она в прошлом году окончила гимназию и очень любит читать. Затем и без слов было видно, что это очень богатые люди.

Красота, богатство и молодость – три фактора, как выражаются г.г. марксисты, обеспечивающие личное счастье. А между тем первое чувство, которое проникло в мое сердце после знакомства с девушкой, – была грусть тихая, безнадежная и необъяснимая, какая остается во всем организме, когда выйдешь из церкви, прослушав спетую великолепным хором панихиду.

Самое имя девушки, Любовь, не говорило мне о радостях и наслаждениях и напоминало почему-то формулу Кнута Гамсуна: «Любовь – несокрушимая печать, что хранится всю жизнь, хранится до смерти, хранится и после смерти» ...

Однако, занимая свою попутчицу, я старался рассказывать ей все веселое и смешное и радовался, если она улыбалась.

Мы стояли у окна вагона и глядели на еще розовые, но уже потухающие вершины Эльбруса.

Когда совсем стемнело, поезд остановился возле какой-то большой станции, где я успел выпить стакан чаю и купил томик Чехова с его замечательным рассказом «Красавицы».

Снова поехали.

Мне захотелось подарить эту книгу барышне и сделать надпись, кому и от кого. Таким образом я узнал ее фамилию. Она поблагодарила меня одним движением ресниц. Затем мы разошлись по своим купе, чтобы спать.

Хотя я и лег и закрывал глаза, но забыться не мог. Влюбленность уже проникла в мой мозг и душу и тревожила. Сами собой выплывали слова Гамсуна и захватывала нервы радость не совсем обыкновенная: мне было весело от сознания, что я никогда больше не буду разговаривать с этой девушкой и никогда она не сделается моей шаблонной знакомой и не омрачится воспоминание о ней ничем обычным, – земным.

Впрочем на другой день я еще раз увидел мою спутницу на улице в Тифлисе, но она не заметила меня, я даже не успел снять фуражки; а вечером уехал дальше.

Все это было приблизительно лет двадцать назад.

Миновало много радостей и печалей.

Самые содержательные дни моей жизни протекали в Петербурге. Было много любви и ревности и даже восторгов, но никогда ничего похожего на то чувство, которое я пережил когда-то в вагоне.

Филологический журнал 2022 № 1 Историко-филологический журнал

Совсем случайно я узнал, что моя бывшая спутница также жила и была замужем в этом самом Петербурге, но уже умерла.

И насколько меня поразило то, что я мог ее видеть, но не увидел, – настолько же не поразило известие о ее кончине.

Я только подумал:

«Ведь не мог же в самом деле цветок гортензии красоваться и жить под небом, похожим на солдатское сукно…

Ведь не могли же зрачки, в которых отражались розовые вершины Эльбруса, долго глядеть на грязный лед Фонтанки ...

Ведь не могла же молодая душа, уже понимавшая проникновенного Чехова, понимать ту некрасивую насквозь материальную жизнь совсем чужого ей города».

Повторяю, я не удивился и даже не опечалился, как будто мне сказали, что она переехала только в другое место, где нет понятий, тесно связанных с понятиями о физической жизни на земном шаре, но остается способность мыслить и видеть, и потому ей там гораздо удобнее ...

Мало того, мне показалось, что в тот момент, когда я узнал о ее физической смерти, она вспомнила меня и нашу встречу в вагоне.

И сегодня, именно она, именно она нарочно послала в это кафе похожую лицом на нее, такую, какой я ее встретил, для того, чтобы в моей памяти снова прошел тот земной день моей молодости.

Когда я очнулся от набежавших мыслей и поглядел в сторону окна, где только что сидели две женщины, их уже не было.

Сам не знаю, почему я спросил кассиршу, кому принадлежит дом, в котором помещается кафе, и услыхал в ответ фамилию той, которая носила имя – Любовь.

Это совпадение тоже не поразило меня, только не показалось совпадением, а чем-то другим – я не знаю, как назвать ...

На улице была такая же трудно выносимая жара, через десять шагов я опять начал покачиваться и снова думал, что вот, может быть, сейчас упаду и умру, но подлейший из инстинктов уже не мучил и не пугал меня…

11 августа 1919 г.,
Тифлис

«Кавказское слово» (Тифлис), 13. VIII. 1919.

БРОШЕЧКА

Сначала Иванов и Коваленко шли в хвосте страшного обоза, шли целых пять дней, стараясь не обращать внимания на валявшиеся по краям шоссе трупы, которые люди почему-то поленились сбросить в пропасть. Слушали плач женщин и детей, ругательства погонщиков и глядели на искаженные лица и мучения, никогда не виданные и не слыханные ни в Сибири, ни на Сахалине.

И уже не было жаль ни самих себя, ни идущих впереди ...

По утрам, перед восходом солнца, они глядели, как сама собой любовалась и кокетничала природа: горы и снежные вершины из нежно розовых делались голубоватыми, затем контуры яснели и строились в синие цепи, те самые, на которые смотрел когда-то все понимавший и предвидевший пророк Михаил Лермонтов ...

Настанет год...

И чем необузданнее кокетничала на рассвете природа, тем злее бывали утренние морозы.

Южанин Коваленко несколько раз плакал, кутаясь в рваную шинелишку, которую таскал с 1914 г. Иванов молча стучал зубами. Но всходило солнце и делалось легче ...

Они отстали от обоза не сразу: Коваленко стер ногу – решили свернуть в сторону, на извилистую тропу поискать деревню и отлежаться. Опять шли двое суток, но деревни не нашли и людей не видели, только случайно наткнулись на большой мешок с сухарями и полудюжиной банок с консервами, должно быть, кто-то украл несколько таких мешков и один обронил. Коваленко увидел сухари, перекрестился и сказал:

– Это будут наши разговеты ... Впрочем, кто его знает – какая неделя страстная или святая, и какой день? ... Может, сегодня Благовещение, может, и светлый праздник.

– А тебе не все равно? – мрачно спросил Иванов.

– Оно, конечно, пожалуй, что и все равно ... А все-таки, может, Господь ради праздника и еще какое-нибудь чудо пошлет.

– Забудь эти пустяки ...

Чтобы переменить разговор, Коваленко сказал:

– Давят меня эти горы, дышать трудно ... То ли дело у нас на Украине: на сорок верст кругом видно.

И вдруг запел болезненным тенором:

Ой у полі могила
З вітром говорила
Не вій вітре буйнесенькій
Шоб я черніла ...

– И эти пустяки забудь ... Когда подохнем, так и здесь будет могила – и не одна, а две ... Впрочем некому будет их рыть. Шакалы поужинают...

– Могила в этой песне совсем другая – это сторожевой курган в степи ...

Поели сухарей и консервов, запили ключевой водой и перестали ссориться. Заговорили по-хорошему и никак не могли определить, куда забрели – в Бакинскую губернию или в Елизаветпольскую. Но не было ужаса перед будущим. И погода потеплела ...

– Я нисколько не жалею, что мы отстали, – сказал Коваленко, – все равно никто бы не в силах был нам помочь, и мы никому ... Ты знаешь, перед раскрытой могилой у меня всегда есть хоть некоторая надежда на чудо, на будущую загробную жизнь, а перед толпой, все равно перед гражданской или военной, я всегда и наверное знаю, что: не жди ни сочувствия, ни понимания, ни даже простой рассудительности ... Вот мы только вдвоем, а я все еще надеюсь и жду, если и не спасения, то хоть какого-нибудь хорошего момента, а там с ними ни секундочки не жди.

– Опять завел философию ... А я не надеюсь ни на что, понимаешь, ни на что и ни на кого, потому что хочу хоть в последние дни своего существования не быть идиотом ...

«Врешь: и ты надеешься», – подумал Коваленко, но, не желая снова рассердить друга, перестал говорить о будущем. Стали вспоминать Петербург и студенческие годы. И опять больше говорил Коваленко ...

– Знаешь, если бы мне семь лет назад, когда я был на третьем курсе, кто-нибудь сказал, что я сделаюсь офицером, я бы тому человеку в глаза плюнул. Семь лет, а все равно как семьдесят … была такая землячка Олеся Мирошниченко, жила на Васильевском острове, курсистка, я к ней зачастил. Комнатенка маленькая, убогая, самовар кривобокий и закуски к чаю на два рубля, а чувствовалось, как в раю. Из имущества только книги были, хорошие книги: Байрон, академическое издание, и Лермонтов, тоже академическое издание ... Словесница она была ... И все мы мечтали, когда поженимся, поехать на родину в Харьковщину, а затем путешествовать на Кавказе.

– Так вот ты же и путешествуешь по Кавказу, – перебил Иванов ...

– Да ... путешествую ... Одевалась Олеся очень скромно, но красавица была, и все к ней шло ... Была у нее брошечка тоже простенькая, вроде английской булавки, только золотая или вызолоченная и с красненьким камешком ...

– Вы хохлы сентиментальные люди ... поел и разболтался, а я поел и спать хочу ... Ты бы прошел к ручью, да промыл бы ногу ... Небось, болит? Ведь я уже две ночи не спал, по совести говоря, и всю минувшую ночь и глаз не сомкнул, тебя, дурака, стерег, думал, что заражение крови начинается.

– А болит и здорово ... Это ты правду говоришь, а то стемнеет, видно не будет.

– Иди, иди, да потом салом из консервов смажь, не век же мы будем сидеть в этом проклятом ущелье ...

Хромая и опираясь на палку, Коваленко побрел к ручью, а Иванов начал мостить под голову мешок, а под плечо похожий на тряпку китель.

Коваленко боялся потревожить посиневшую пятку и возился долго. Холодная струя показалась ему кипятком, всей голове стало жарко, потом от боли даже затошнило. Стучало в висках.

Вернувшись, он начал смазывать нарыв говяжьим салом, как посоветовал уже крепко спавший друг, а затем забинтовал остатками белья ... Сопел и вздыхал.

Когда поднял голову, то впереди, на тропинке, в полувечернем сумраке ему показалось, будто движется сгорбленная фигура, вроде старухи. Любопытство, смешанное с чем-то похожим на страх, заставило его снова поглядеть в ту сторону. Разбудить Иванова было жаль и стыдно. Старуха и на самом деле оказалась старухой с коричневым лицом и была такая худая и оборванная, что даже беженец удивился. Она подошла совсем близко, затрясла головой и хриплым голосом произнесла:

–Утелу бан ч'унэк?

Коваленко не понял, но догадался, полез в свою торбу, куда отложил штук пять сухарей, вынул их и подал. Старуха поклонилась, но не отошла и не села, а глядела и мигала запыленными веками. Она уже не казалась страшной. «И зачем такое создание живет на свете?», – подумал Коваленко. Старуха произнесла еще одно слово:

–Харкавор а.

Офицер снова не понял. «Разве дать ей еще консервов?». Он достал начатую банку, отковырял кусок английского красного вареного мяса и протянул. Старуха сейчас же его съела. Затем затопталась на месте, пошарила у себя за пазухой рукой, вынула из тряпья крохотный сверток в грязной бумажке, подала его офицеру и выговорила:

– Са на э инч вор к'эз харкавор а.

– Нет, консервов я не могу больше дать, – сказал Коваленко по-русски.

Старуха покачала головой, как будто улыбнулась и указала пальцем на сверток, который Коваленко держал в левой руке, не зная что с ним делать. Он сообразил, что надо развернуть, и когда снял два слоя почти истлевшей бумаги, то увидал золотую брошечку, простенькую, вроде английской булавки, только с красным камешком. В ушах у него загудело и набежала мысль, что все это или снится, или галлюцинация.

Хотелось что-то сказать, или спросить старуху, но она еще раз поклонилась, улыбнулась и довольно быстро пошла по тропинке вниз.

Филологический журнал 2022 № 1 Историко-филологический журнал

– Стой! – крикнул Коваленко. Старуха не обернулась. Догнать ее с больной ногой было нельзя. Разбудить Иванова он не посмел. Еще раз осмотрел Олесину брошку, поцеловал и положил перед собой на холст мешка ...

Над снежными вершинами горели крупные, точно золотые орехи, звезды; плакали где-то недалеко шакалы и сладко храпел Иванов, а Коваленко все глядел на золотую вещичку... взял отстегнул булавку и уколол ею свою руку. Боль почувствовалась совсем ясно.

Потом он положил брошечку в боковой карман, разостлал шинель и прилег.

Когда проснулся, было уже светло. Иванов сидел рядом и грыз сухарь. Коваленко полез в карман, достал брошечку с красным камешком и, ни слова не говоря, начал ее рассматривать. Иванов сделал глоток, покосился и произнес:

– Да и сентиментальный же народ вы, украинцы. Носит человек этакую штучку при себе, вероятно, уже не первый год, а только, в первый раз вынул ... Я бы при таких обстоятельствах, какие мы переживаем, давно бы ее продал, ведь золотая. Да и Олеся твоя, если бы и узнала, наверное, не обиделась бы ...

Коваленко густо покраснел и ничего не ответил.

«Слово», 10. IV.1920.

ԼԱՈՒՐԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ. ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԻՏՈՒՄՆԵՐ ԺԱՄԱՆԱԿԻ ՄԵՋ (ուսումնասիրություններ և հոդվածներ), *«Հայաստան» հրատ., Երևան, 2021, 528 էջ*:*

Բանալի բառեր՝ ժողովածու, Րաֆֆի, Ա. Արփիարյան, Վ. Փափազյան, գրական փոխազդեցություն, Հովհ. Հովհաննիսյան, գրական դիմանկար, ուսումնական ձեռնարկ, գրական զուգահեռներ:

Գրականագետ Լաուրա Մուրադյանը, որը հայ գրականության XIX–XX դարերի և մեր օրերի լավագույն գիտակներից է, բոլորովին վերջերս հրատարակել է իր ընտրությամբ կատարված վերջին տարիների հրապարակումների ժողովածուն: Դրանց մեջ կան և՛ ուսումնասիրություններ, և՛ առանձին հոդվածներ՝ նվիրված արևմտահայ, արևելահայ գրականություններին, թատրոնին, կինոյին, ուսումնական խնդիրներին:

Ժողովածուի ընթերցումը բացահայտում է կարևոր մի իրողություն. գրաքննադատը ընտրել է իր այն գործերը, որոնցում հնչում են իր նոր մեկնություննները՝ հարստացնելով քննվող հեղինակի կամ նկարագրվող երևույթի մասին եղած հետազոտությունները: Սա շահեկան ձեռնարկ է, որը ներկայացնում է մի կողմից Լ. Մուրադյանի ստեղծագործական ձեռքբերումները, մյուս կողմից՝ հայ գրականագիտական ու գրաքննադատական մտքի օրինակելի մակարդակի բացահայտ առկայությունը:

Անհնար է մեկ առ մեկ լուսաբանել ժողովածուում տեղ գտած նյութերը. դրանք չատ բազմազան են, սակայն դրանց մի մասի վրա ուղղակի անհրաժեշտ է ծանրանալ:

Ժողովածուն բաղկացած է երկու մասից: Առաջին մասը կոչվում է «Դրվագներ հայ նոր գրականության և քննադատության պատմության»: Այդ հատվածում զետեղված են ուսումնասիրություններ Վրթանես Փափազյանի, Արփիար Արփիարյանի, Սրբուհի Տյուսաբի, Ռափայել Պատկանյանի, Արտաշես Հարությունյանի, Արսեն Տերտերյանի և Ավետիք Արասխանյանի վերաբերյալ: Այս հատվածում քննվում է նաև «Մուրճի» գրաքննադատական միտքը: Թվարկված բոլոր հեղինակների վերաբերյալ տարբեր տարիների գրվել են գրականագիտական, գրաքննադատական գրքեր և հոդվածներ: Հենց ինքը՝ Լ. Մուրադյանը, երկար տարիներ աշխատելով «Արփիար Արփիարյան. Կյանքը և գործը» թեմայի վրա, 2002-ին

---

* *Ներկայացվել է 20. XII. 2021 թ., ընդունվել է տպագրության 21. I. 2022 թ.:*

հրատարակեց համանուն մեծարժեք մենագրությունն, որով և պաշտպանեց դոկտորական ատենախոսությունն:

«Վրթանես Փափազյան» ուսումնասիրության մեջ լիովին հիմնավորվում է, թե ինչ նորություններ բերեց այդ հեղինակը հայ գրականությունն, որքանով առաջ տարավ Խաչատուր Աբովյանի հիմնած հայ նոր գրականությունը: Հետաքրքիր ձևով Լ. Մուրադյանը ներկայացնում է գրողի կերտած հայ բոչաների կերպարները, որոնցից Խաթ-Սաբան մահվանից առաջ տալիս է հետևյալ պատվիրանն իր թոռներին. «Հող ունեցեք, զավակներս, ձեր փրկության միակ միջոցը հողն է» (էջ 28):

Լ. Մուրադյանը քննում է Վ. Փափազյանի բազմաժանր ստեղծագործությունը՝ երևան հանելով գրողի խոր ծանոթությունը հայ մատենագրությանը ու պատմիչներին: Նրա երկրորդ պիեսը՝ «Այծեմնիկը», հիմնված է Սամվել Անեցու պատմության 1125 թ. տեղի ունեցած Անիի ինքնապաշտպանության մարտերին, որոնցում իր հերոսությամբ աչքի է ընկնում Այծեմնիկը՝ խիզախորեն նետահարելով թշնամիներին, և ինքն էլ, խոցված նետից, նահատակվում է: Վ. Փափազյանն անդրադարձել է նաև Ավարայրի հերոսամարտի հետ կապված դեպքերին և հատկապես Վասակ Սյունեցու կերպարին «Հայրենիքի համար» դրամայում: Դրամայի նյութը, անշուշտ, քաղել է Ղազար Փարպեցու «Հայոց պատմությունից», որովհետև Վասակի փեսա Վարազվաղանի մասին եղիշեն ոչինչ չի ասում: Մինչդեռ Փարպեցին գրում է, թե Վարազվաղանը հալածում էր Վասակի զաւերը և հետո էլ գնաց Տիզբոն ու իր աներոջ դեմ դավեր էր նյութում՝ Սյունյաց տանուտերությունն իր ձեռքն առնելու նպատակով: Այս պիեսը ժամանակին արժանացել է Թիֆլիսի ղրամատիկական ընկերության՝ տարվա լավագույն պիես մրցանակին (էջ 60):

Փափազյանը և հայ թարգմանական գործը նույնպես ներկայացվում է ուսումնասիրության մեջ: Նա բազմաթիվ թարգմանություններ է կատարել համաշխարհային գրականության նշանավոր գրողների գործերից: Նրանցից են Էմիլ Զոլան, Ալֆոնս Դոդեն, Մաքսիմ Գորկին, Ռաբինդրանատ Թագորը և ուրիշներ:

Ուշագրավ է, որ Փափազյանի մանկավարժական գործունեությունն ընթացել է աշխարհագրական լայն շառավիղով՝ Վան, Կարին, Թեհրան, Թավրիզ, Աստրախան, Թիֆլիս, Շուշի, Բուխարեստ, Երևան: Լ. Մուրադյանն առանձնացնում է նրա ազգապահպան մի նախաձեռնությունը, որը դարերի պատմական հիշողության համար է: Նրա պահանջով և նախաձեռնությամբ Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ն ապրիլի 24-ը դարձնում է Հայոց ցեղասպանության նահատակների հիշատակի օր:

Բնականաբար, հետազոտության մեջ տպավորիչ ձևով մեկնաբանված է Փափազյանի «Ժայռ» դրաման, որը ցայսօր բեմադրվում է և դարձել է կինոնկար՝ Վարդան Աճեմյանի բեմադրության հիման վրա (էջ 61):

Լ. Մուրադյանի բոլոր հոդվածներն ու ուսումնասիրություններն ունեն իրենց հրատարակման թվականները: 2005-ին է գրվել «Ռափայել Պատկանյանը վիպագիր» ուսումնասիրությունը: Ռ. Պատկանյանի վիպագրության ճշգրիտ բնորոշումը տվել է ակադեմիկոս Սերգեյ Սարինյանը. «Պատկանյանը պատրաստի գտավ ռոմանտիկական վեպի իր տիպը, վեպի տուրգենևյան ձևը

նա յուրովի համատեղեց եվրոպական սենտիմենտալ-ռոմանտիկական մանրանկարչին և ստեղծեց գործեր, որոնց գրական կերպը ժամանակին ճիշտ էր բնորոշվում «ռոման» հասկացողությամբ» (էջ 187):

Նուրբ դիտողականությամբ և հմտությամբ են ներկայացված Պատկանյանի երեք վեպերը՝ «Ես նշանած էի», «Փառասերը», «Տիկին և նաժիշտ»: Բոլոր երեք վեպերում առկա է գրողի քնարերգության հիմնական ասելիքը՝ հայրենիքը և ազգայինը մոռանալն աններելի է:

«Փառասերը» վեպն առավել մոտ է իրականությանը, և նրա գլխավոր հերոսի կերպարում՝ Ալթմազովի մեջ, Պատկանյանը դրել է Քերովբե Պատկանյանի որոշ գծեր: Բանասերներին հայտնի է, որ Ք. Պատկանյանը երկու տարի Դորպատի համալսարանում սովորելուց հետո, թողեց այն, որովհետև չկարողացավ վարձը մուծել և չուզեց դիմել որևէ հովանավորի: Նա փայլուն ուսանող էր, և լատիներենի դասախոսը խոստովանում էր, որ իրենից գերազանց գիտի լեզուն: Փայլուն հիշողություն ուներ և անգիր արտասանում էր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի առանձին հատվածներ: Երիտասարդի այս գծերի նմանությունը կա Ալթմազովի կերպարում, սակայն Պատկանյանն առաջնակարգ հայագետ էր գրաբարյան բնագրերի թարգմանություններով, հայոց լեզվի և հայ բարբառների մասին գրված իր աշխատություններով:

«Փառասերը» Պատկանյանի լավագույն վեպն է, ու տեղին է Լ. Մուրադյանի հետևյալ բնութագրականը. ««Փառասերը» հատկանշում է և իր հարուստ, պատկերավոր լեզվով, ինքնատիպ ու ճկուն ոճական արտահայտչամիջոցներով: Վեպի լեզուն ներկայացնում է գրական հայերենի նոր մեկնակետը՝ գրողի անհատականության կնիքով» (էջ 204):

1997-ին է գրված «Արսեն Տերտերյան» ուսումնասիրությունը, սակայն իրականում երկարատև հետազոտության արդյունք է: Ա. Տերտերյանն իր գրական հայացքներում փորձում էր հակադրվել քննադատական ավանդական ուղղություններին և չեչտադրում էր գրողների ու տիեզերքի կապը, որը նրա գրականագիտական հայացքներին հաղորդում էր փիլիսոփայական ուղղվածություն: Այս իրողությունը դիտարկվել է Լ. Մուրադյանի ուսումնասիրության մեջ: Ուշագրավ է այդ իրողությունը հաստատող մեջբերումը. «Հենց բնության և տիեզերքի այդ մարդկայնորեն, գերազանցաբար մարդկայնորեն ըմբռնման ու ապրումի մեջ է թաղված քնարերգական հույզերի աղբյուրը» (էջ 246):

Վահան Տերյան, Միքայել Նալբանդյան, Հովհաննես Թումանյան, Հովհաննես Հովհաննիսյան, Նար-Դոս, Ավետիք Արասխանյան՝ ահա այս հեղինակների գրվածքներն արժանացել են Տերտերյանի գնահատականներին: Ըստ որում՝ Լ. Մուրադյանն այնպես հստակորեն է ներկայացնում վերոնշյալ հեղինակների մասին ասված տերտերյանական դիտարկումները, որ միաժամանակ ընթերցողը տեսնում է տվյալ հեղինակի կատարածի արժեքը՝ նույնիսկ առանց դրանց տրված գնահատականների: Սա նշանակում է, որ գրականագետ Լ. Մուրադյանը հրաշալի գիտի քննվող երկերի բնագրային արժեքը: Որոշակիորեն պատկերացնում ենք, թե ինչ շրջադարձային դեր ունեցավ Հովհ. Հովհաննիսյանի քնարերգությունը հայ պոեզիայի պատմության մեջ: Ա. Տերտերյանը բանաստեղծի պոեզիայի կատարած դերի

վերաբերյալ եզրահանգում է, որ նա «ստեղծել է որոշ չկոլա, ունի յուր աշակերտները, որոնք խորապես ազդվելով իրենց շնորհալի ուսուցչից՝ գնացին դեպի առաջ և նորանոր նվաճումներ արին հօգուտ գեղեցիկի զարգացման և գեղարվեստական ճաշակի խորացման մեզանում» (էջ 252):

Հետաքրքիր զուգահեռ է տարել Ա. Տերտերյանը Միսաք Մեծարենցի և Ֆյոդոր Դոստոևսկու միջև: Առաջին հայացքից դա կարող է թվալ արհեստական, սակայն, երբ գրականագետին հայտնի են երկու գրողների կենսագրությունները, ապա կռահում է, թե որն է այդ համեմատության հիմքը: Դոստոևսկուն դատապարտել էին մահապատժի, և դա իր կնիքը թողեց նրա ողջ կյանքի ու ստեղծագործության վրա: Մեծարենցը նույնպես մահվան էր դատապարտված իր հիվանդության պատճառով: Իրականում երկուսն էլ կենսասեր էին, և դա հաստատում է նրանց երկերում եղած չարի մերժումը:

Տերտերյանը սերը համարում է տիեզերքի շարժիչ ուժը: Զգիտեմ արդյոք նա գիտե՞ր, որ XIV դարում Կոստանդին Երզնկացին նույնպես իր տաղերից մեկում տիեզերքի շարժիչ ուժը համարում էր սերը:

Խորհրդանշական է Տերտերյանի՝ Մուրացանին նվիրված հետազոտությունը, որից պարզ է դառնում, թե որն է ազգի «անմիաբան» լինելու պատճառը:

Տերտերյանը, Շիրվանզադեին համարելով դասական առումով ռեալիստ, նրան համարում է հայ ընտանիքի երգիչ (էջ 266):

Տերտերյանը հիացմունքով է գրել Միքայել Նալբանդյանի հզոր հրապարակախոսության մասին:

«Ռուս գրականության հարցերը «Մշակում»» (1872–1892) հետազոտության մեջ Մուրադյանը օգտագործել է «Մշակի» քննադատական այն հոդվածները, որոնք վերաբերում էին ռուս գրականությանը: Դրանք այն տարիներն էին, երբ Գրիգոր Արծրունին հիմնադրել էր «Մշակը» և այն խմբագրեց մինչև իր մահը՝ 1892 թվականը: Հենց Արծրունին «Մշակի» էջերում տպագրեց մի շարք հոդվածներ՝ նվիրված ռուս գրականությանը: Դրանցից էին՝ «Ա. Ն. Օստրովսկի»[1], «Ռուս գրող Գոնչարով»[2], «Ռուսաց թատրոն»[3] և այլն: Մուրադյանն օգտագործել է ոչ միայն «Մշակի» տարբեր թվականների համարները, այլև հայ ու ռուս գրաքննադատների գործերը՝ կապված հետազոտվող թեմայի հետ: Հոդվածը գրված է 1997 թվականին:

Տաղանդավոր հոդված է «Րաֆֆի և Արփիար Արփիարյան» խորագիր կրողը: Կարևոր է, որ հենց հոդվածի սկզբում քաղվածք ունի Ա. Ավթանդիլյանից, որում չեչտվում է, թե Րաֆֆին շրջել է թուրքահայերի մեջ, որպեսզի սեփական աչքով տեսնի հայերի զրկանքներն ու նրանց նկատմամբ իրականացված սրտակեղեք բռնությունները: Վիպասանը նույնիսկ ծրագրել էր գնալ Կ. Պոլիս և Արևմտահայաստանի չատ վայրեր, սակայն նյութական միջոցների պատճառով չի կարողացել իրականացնել իր ծրագրերը: Լ. Մուրադյանը գրում է. «Գրողի «մեծ վախճանը» այդպես էլ մնում է չիրականացված, սակայն նրա ստեղծագործության հզոր արձագանքները

---

[1] *Գր. Արծրունի. Գրականություն, արվեստ, գեղագիտություն, հոդվածների ժողովածու, կազմող և խմբագիր՝ Յակ. Ի. Խաչիկյան, Երևան, 2009, էջ 302:*

[2] *Նույն տեղում, էջ 500:*

[3] *Նույն տեղում, էջ 477:*

հասնում են արևմտահայությանը, չարժում մտքերը, հուզում հոգիները, որին և ձգտում էր հայրենասեր գրողը» (էջ 366):

Րաֆֆին իր գործունեությամբ ու ստեղծագործությամբ բարերար ազդեցություն է թողել Արփիարյանի գրող ձևավորման իրողության վրա: Արփիարյանն իրավացիորեն նշել է Րաֆֆու ստեղծագործության վրա ռուս դրականության թողած բարերար ազդեցությունը:

«Րաֆֆին և հայ վիպասանությունը» հոդվածում Արփիարյանն իրավացիորեն բացատրում է, թե ինչպես Րաֆֆին իր ստեղծագործությամբ ներգործել է իր ազգի վրա: Տպավորիչ է հատկապես Արփիարյանի՝ Րաֆֆու բնաբանի նկարագիրը: Մուրադյանը հրաշալի է բացատրում Արփիարյան գրաքննադատի բացառիկ ճշգրիտ գնահատականները՝ տրված Րաֆֆու ստեղծագործությանը. «Րաֆֆու գաղափարների կենսագործող ուժը Արփիարյանը վավերացրել է նաև իր գեղարվեստական գործերում» (էջ 377):

Թարմաշունչ հոդված է ««Սասունցի Դավիթ» էպոսի թատերգական և բեմական կերպավորումները» վերնագրով տպագրվածը: Մուրադյանն անդրադառնում է գրեթե բոլոր բեմականացումներին՝ առանձնացնելով լավագույնները: Դրանցից մեկը Լ. Մանվելյանի դրամատիկական պոեմն է՝ բաղկացած տասը պատկերներից: Մեծարժեք է տաղանդավոր դերասան և դրամատուրգ Վաղարշ Վաղարշյանի դրամատիկական գործը, որն առավել հաջողված է: Եվ պատահական չէ, որ նշանավոր սամունքող Սուրեն Քոչարյանն այն վերածել է մենախաղի:

«Սասունցի Դավիթ» վիպերգին նվիրված գրվել են օպերաներ ու բալետային լիբրետոներ, որոնց հեղինակներն են եղել Դերենիկ Դեմիրճյանը, Արմեն Գուլակյանը և հանճարեղ Սերգեյ Փարաջանովը: 1969-ին էդգար Հովհաննիսյանին առաջարկվել է բալետի լիբրետոյի մի ապշեցուցիչ նմուշ: Ահա թե ինչ է գրում այդ մասին էֆ. Հովհաննիսյանի ստեղծագործության լավագույն գիտակ Ծովինար Մովսիսյանն այդ լիբրետոյի մասին. «Փարաջանովի բացառիկ ինքնատիպ տաղանդի ևս մի ծնունդն է, ուր առկա են պոեզիայի, թատրոնի, մենջախաղի, կինոյի գուտ «փարաջանովյան» ընկալման բնորոշ առանձնահատկություններ» (էջ 403):

Հայրենասիրական լիցքերով է «Խաչիկ Դաշտենց–100, Խ. Դաշտենց «Հանչպարների կանչը»» հոդվածը՝ գրված 1982-ին:

Հայտնի է, որ Յակով Խաչիկյանը շատ բեղուն գրականագիտական ու արվեստագիտական գործունեություն էր ծավալել իր կյանքի 60 տարուց ավելի տևած գիտական գործունեության ընթացքում: Լ. Մուրադյանը մանրամասներով գնահատանքի խոսք է գրել՝ նրա 90-ամյա հոբելյանին նվիրված: Գիտնականի բազմապիսի գրքերի մեջ կարևոր են նաև «Հայ կերպարվեստագետները արվեստի մասին», «Հայ կոմպոզիտորները արվեստի մասին», «Հայ ճարտարապետները արվեստի մասին» խիստ անհրաժեշտ հատորները: Լ. Մուրադյանը հետաքրքիր ու փաստահարուստ հոդված է նվիրել նաև բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ազատ Եղիազարյանի հոբելյանին: Եղիազարյանն այս ժողովածուի խմբագիրն է և գրքի սկզբում դրված նախաբանի հեղինակը:

Այս հարուստ ժողովածուն ավարտվում է «Հայկական կինոմոքի դիմապատկերը մեկ գրքում» հոդվածով, որը գրվել է 2016 թվականին: Գրքում

Պատմաբանասիրական հանդես 2022 № 1 Историко-филологический журнал

ուշագրավ գնահատական է տրված Հենրիկ Մալյանի «Կտոր մը երկինք» ֆիլմին, որի գրախոսող Խաչատուր Ավագյանը տվել է չհնացող գնահատական: Հոդվածում անդրադարձեր կան կինոգետներ Սաբիր Ռիզաևի, Վաղիմ Մելիքսեթյանի, Սուրեն Համիկյանի՝ հայ կինոյի լավագույն ձեռքբերումներին նվիրված ուսումնասիրություններին:

Իրավացիորեն բարձր է գնահատված Սվետլանա Գուլյանի «Հայերը համաշխարհային կինոյում» ռուսերենով տպագրված ուսումնասիրությունը: Դրանում ներկայացված են համաշխարհային կինոյի այնպիսի նշանավոր հայազգի դեմքեր, ինչպիսիք են Ռուբեն Մամուլյանը, Անրի Վեռնոյը, Եժի Կավալերովիչը, Ատոմ Էգոյանը, Շառլ Ազնավուրը, Կարեն Շահնազարովը: Բնականաբար, հոդվածում ըստ արժանվույն ներկայացված են նաև այնպիսի նշանավոր կինոբեմադրիչներ, ինչպիսիք են Սերգեյ Փարաջանովն ու Արտավազդ Փելեշյանը:

Լ. Մուրադյանի գիրքը լիովին հանձնարարելի է հումանիտար բաժիններում սովորող ուսանողությանը: Համոզված հավաստիացնում ենք, որ հեղինակի «Երկու խոսքում» ասվածը կիրականանա. «Կցանկանայի հուսալ, որ գրքում զետեղված նյութերը մեկնակետ կարող են դառնալ գրականագիտական նոր հետազոտությունների համար, ինչպես նաև օգտաշատ լինել ուսուցման գործընթացներում» (էջ 5–7):

ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

Բ. գ. դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ: Գիտական հետաքրքրությունները՝ հին և միջնադարյան հայ գրականություն, բանահյուսություն, ժամանակակից հայ գրականություն, գրականության դասավանդման մեթոդիկա, գրաքննադատություն, հայագիտություն, գրական կապեր: Հեղինակ է 33 գրքի և շուրջ 650 հոդվածի: aelita.dolukhanyan@gmail.com

«ԱՐՎԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ», *2021, № 1, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 245 էջ; 2021, № 2, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 276 էջ*:*

Բանալի բառեր՝ «Արվեստագիտական հանդես», ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ, երաժշտագիտություն, կերպարվեստագիտություն, թատերագիտություն, կինոգիտություն, ճարտարապետագիտություն:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ լույս են տեսել ինստիտուտի գիտական պարբերականի՝ «Արվեստագիտական հանդեսի» (գլխավոր խմբագիր՝ արվ. դ., պրոֆ. Աննա Ասատրյան) 2021 թ. երկու համարները:



Ինչպես 2019 թ. հրատարակված «Արվեստագիտական հանդեսի» անդրանիկ համարի «Վաղուց պահանջված գիտական հանդես» ներածական հոդվածում նշել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, արվ. դ., պրոֆ. Արարատ Աղասյանը, ««Արվեստագիտական հանդեսի» էջերում կլուսաբանվեն հայ արվեստի ու ճարտարապետության խնդիրները, ինչպես նաև հայ ժողովրդի մշակութային կապերը մյուս ժողովուրդների հետ: Հանդեսը լայնորեն կլուսաբանի Հայաստանի հանրապետության արվեստագիտական և մշակութային նվաճումները ... Պարբերականի ուշադրության կենտրոնում կդտնվեն նաև գեղարվեստական կյանքի արդի հիմնախնդիրները, Հայաստանի և Արցախի Հանրապետություններում և հայկական Սփյուռքում ընթացող գեղարվեստական պրոցեսները, դրանց հետազոտության ու գիտատեսական իմաստավորման խնդիրները:

Միանգամայն տրամաբանական է, որ «Արվեստագիտական հանդես»-ը ստեղծվում է հենց ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտում, որը հայ արվեստագիտության գլխավոր կենտրոնն է, այն միակ գիտական օջախը, որտեղ կատարվող ուսումնասիրությունների կարևոր ուղղություններն են հայ արվեստի գրեթե բոլոր տեսակների (կերպարվեստ, ճարտարապետություն, դեկորատիվ և կիրառական արվեստներ, երաժշտություն, թատրոն, կինո և հեռուստատեսություն) պատմության և տեսության հիմնահարցերը: 60-ամյա այս ինքնատիպ գիտահետազոտական հիմնարկում աշխատանքներ են տարվում հայ արվեստի դասականների ստեղծագործական, հուշագրային, նամակագրական ժառանգության ակադեմիական հրատարակման ուղղությամբ:

* *Ներկայացվել է 14. II. 2022 թ., ընդունվել է տպագրության 03. III. 2022 թ.:*

Վերը նշված նպատակներն իրականացնելու համար մեր վեցամսյա պարբերականը մտադիր է իր չուրջը համախմբել հայ արվեստով զբաղվող առաջատար արվեստագետների:

«Արվեստագիտական հանդես»-ի առաքելությունն է արվեստաբան-գիտնականների համատեղ ուժերով ու ջանքերով նոր լիցք հաղորդել հայ ժողովրդի արվեստի և ճարտարապետության ուսումնասիրության աչխատանքներին, նպաստել արվեստագիտության հետագա զարգացմանն ու վերելքին, արվեստագիտության մեջ հանդուցային հարցերի անաչառ ու սկզբունքային լուսաբանմանը»[1]:

Հանդեսը, որի խմբագրական խորհրդում ընդգրկված են վաստակաչատ գիտնականներ Հայաստանից, Ռուսաստանից, Ուկրաինայից և Բելառուսից, ունի «Հոդվածներ, հաղորդումներ», «Հրապարակումներ», «Գրախոսություններ», «Մեր երախտավորները», «Մեր հոբելյարները», «Գիտական լրատու» և «Ստեղծագործում են արվեստաբանները» բաժինները: Գիտական պատշաճ մակարդակով արդիական հոդվածները հրատարակվում են հայերեն, ռուսերեն և անգլերեն եռալեզու ամփոփումներով:

Հանդեսի 2021 թ. 1-ին համարի ներածական հոդվածը լուսաբանեց ՀՀ ԳԱԱ նախագահի, ԳԱԱ փոխնախագահի և ակադեմիկոս-քարտուղարի, ԳԱԱ բաժանմունքների ակադեմիկոս-քարտուղարների և ԳԱԱ նախագահության անդամների ընտրությունները: 2-րդ համարն արձանագրեց Արվեստի ինստիտուտի կյանքում տեղ գտած երկու նշանակալի իրադարձություն: Առաջինը՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, ՀՀ պետական մրցանակի դափնեկիր, արվ. դ., պրոֆ., Արվեստի ինստիտուտի երկարամյա տնօրեն, գիտական, գիտակազմակերպչական, մանկավարժական գործունեությամբ հայ արվեստագիտության մեջ մեծ ավանդ բերած Ա. Աղասյանի՝ ինստիտուտի առաջին գիտական ղեկավարի պաշտոնում ընտրվելու մասին լուրն էր և նրա վաստակին հակիրճ անդրադարձը: «Գիտական լրատու» բաժնում Ա. Ասատրյանը ռուսերեն լուսաբանեց ինստիտուտի միջազգային հաջողված համագործակցությունը. այսպես՝ Արվեստի ինստիտուտը 2021 թ. նոյեմբերի 23–25-ը Դոնի Ռոստովի Հարավային դաշնային համալսարանի կազմակերպած «Архитектура и искусство: от теории к практике» *խորագրով միջազգային գիտագործնական կոնֆերանսի շրջանակներում, որի համակազմակերպիչներից էր նաև ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը, նոյեմբերի 24-ին կազմակերպեց Կլոր սեղան «Հայոց Սիլյուքի կենտրոնների արվեստը. ուսումնասիրման և պահպանման հիմնահարցերը» խորագրով (համակազմակերպիչ՝ Մոսկվայի Ճարտարապետության և քաղաքաշինության տեսության և պատմության գիտահետազոտական ինստիտուտ), որի կազմկոմիտեում ընդգրկվել էին Ա. Աղասյանն ու Ա. Ասատրյանը: Ա. Աղասյանը Կլոր սեղանի համանախագահն էր: Աչխատանքներին մասնակցում էին մասնագետներ Մոսկվայից, Դոնի Ռոստովից ու Երևանից:*

Արդիական և հետաքրքրական են 1-ին համարում «Հոդվածներ, հաղորդումներ» բաժնի «Երաժշտագիտություն» ենթաբաժնի գիտական հոդվածնե-

---

[1] *Ա. Աղասյան. Վաղուց պահանջված գիտական հանդես. – «Արվեստագիտական հանդես», 2019, № 1, էջ 5–6:*

րը, որոնք կարևոր ներդրում դարձան երաժշտական կոմիտասականում: Աննա Ասատրյանը հայ երաժշտագիտության մեջ առաջին անգամ անդրադարձավ կոմիտասագետների ուշադրությունից վրիպած՝ հայ գրող, հրապարակախոս և գրաքննադատ Արփիար Արփիարյանի՝ Կոմիտասի մասին տպագրված առաջին հոդվածին («Սողոմոն Սարկաւագ».— «Հայրենիք» օրաթերթ, 1892 թ. նոյեմբերի 21): Կոմիտասի ստեղծագործության մեջ գերմանական որոշակի ազդեցություններին, մասնավորապես՝ Կոմիտասի լարային կվինտետում Բեթհովենի Op. 57 սոնատի թեմատիկ մոտիվի ակնհայտ նմանման, ինչպես նաև Կոմիտասի և Բեթհովենի ստեղծագործության մեջ Վ. Գյոթեի երկու բանաստեղծությունների երաժշտական մարմնավորման չուսումնասիրված խնդիրներին էր նվիրված արվ. թ. Տաթևիկ Շախկուլյանի հետազոտությունը: Արվ. թ. Մարիաննա Տիգրանյանը հայ երաժշտագիտության մեջ առաջին անգամ համակողմանիորեն ուսումնասիրեց Կոմիտասի ձայնագրած «Մշեցոց Բինգյոլը»՝ այն համեմատելով հայ ժողովրդապրոֆեսիոնալ երգաստեղծության մեջ մեծ տարածում գտած «Բինգյոլների» բոլոր տարբերակների հետ: Հայ ժամանակակից երաժշտության, մասնավորապես՝ Կոմիտասին և Հայոց ցեղասպանությանը նվիրված Տիգրան Մանսուրյանի երկերը վերլուծեց արվ. դ., պրոֆ. Աննա Արևշատյանը՝ բնորոշելով Մանսուրյանին որպես Կոմիտասի ավանդույթների ժառանգորդ ու նորարար: Առնո Բաբաջանյանի ծննդյան 100-ամյա հոբելյանի շրջանակներում արվ. թ., դոցենտ Աննա Թամիրօղլյանը քննության է առել Ա. Բաբաջանյանի Ջութակի և դաշնամուրի սոնատի կոմպոզիցիոն որոշ առանձնահատկությունների արտացոլման հայեցակարգը:

«Թատերագիտություն և կինոգիտություն» ենթաբաժնում արվ. թ. Աննահիտ Զեյանը հանգամանորեն ներկայացրեց իրանահայ թատերական գործիչ և կինոգործիչ Արբի Հովհաննիսյանի ստեղծագործական գործունեությունը, նրա վաստակն ինչպես իրանահայ թատերական արվեստում, այնպես էլ Իրանի կինոարվեստում: Արվ. դ. Նազենիկ Սարգսյանը համալիր ուսումնասիրության ենթարկեց Սրբուհի Լիսիցյանի գործունեությունը XX դարի 10–20-ական թվականների, մասնավորապես՝ 1917-ին նրա հիմնադրած Թիֆլիսի «Ամուսնքի ռիթմի և պլաստիկայի ստուդիան», որը 1923-ին վերանվանվեց «Ռիթմի և պլաստիկայի ինստիտուտ»:

Բովանդակային և ժամանակագրական բավականին լայն ընդգրկում ունեն «Կերպարվեստագիտություն» ենթաբաժնի հոդվածները: Այսպես, արվ. թ. Արթուր Ավագյանը և Մերի Կիրակոսյանը Արվեստի ինստիտուտի հիմնադրման 80-ամյակին ընդառաջ՝ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի՝ հայ արվեստագիտության գլխավոր օջախի, հայ արվեստագիտության մեջ ներդրման բացահայտմանը նվիրված ուսումնասիրությունների շրջանակներում առաջին անգամ լուսաբանեցին ինստիտուտի ներդրումը նոր և նորագույն շրջանների հայ կերպարվեստի ուսումնասիրության մեջ (Ա. Ավագյան) և ինստիտուտի կազմակերպած միջազգային հինգ սիմպոզիումներն ու դրանց դերը նոր և նորագույն շրջանների հայ կերպարվեստի ուսումնասիրման գործում (Մ. Կիրակոսյան): Իր հետաքրքիր և արդիական անդրադարձում Անի Մարգարյանը (Չինաստան) բացահայտել է կորոնավիրուսային համաճարակի ազդեցությունն արվեստի աշխարհի վրա: Հնագույն շրջանի՝

Ուբարտուի (Վանի թագավորության) կերպարվեստում դիմահայաց պատկերագրության դրսևորումների մասին է Գայանե Պողոսյանի հոդվածը: Համակողմանիորեն անդրադառնալով քաղաքական ծաղրանկարի ժանրին՝ արվ. թ., դոցենտ Սաթենիկ Մելիքյանը քննության է առել դրա յուրահատկությունը բացահայտող սահմանումները, ժանրաթեմատիկ առանձնահատկությունները և ոճակառուցողական հատկանիշները: Համարի «Ճարտարապետագիտություն» բաժնում արվ. թ., դոցենտ Մարտին Հարությունյանն անդրադարձել է Երևան քաղաքի այգիների ճարտարապետագիծայներական խնդիրներն ու առաջարկել դրանց բարելավման ուղիները: Արդիական է նաև ճարտ. թ. Արև Սամուելյանի՝ Հայաստանի պատմական մայրաքաղաք Դվինի պահպանության և թանգարանացման կազմակերպման հիմնախնդիրները բարձրաձայնող և լուսաբանող հոդվածը:

Հատուկ հիշատակելի է համարի «Արվեստի փիլիսոփայություն» բաժնում զետեղված՝ Գեորգ Վիլհելմ Ֆրիդրիխ Հեգելի ծննդյան 250-ամյա հոբելյանի կապակցությամբ փ. գ. դ. Գրիգոր Ասատրյանի ուսումնասիրությունը, որում քննության են առնվել արվեստի դերի մասին Հեգելի դատողությունները:

2021 թ. նոյեմբերի 1-ին լրացավ հայ ականավոր կոմպոզիտոր, դիրիժոր և երաժշտական-հասարակական գործիչ Ալեքսանդր Սպենդիարյանի (1871–1928) ծննդյան 150-ամյա հոբելյանը: Այդ կապակցությամբ «Արվեստագիտական հանդեսի» 2021 թ. 2-րդ համարը բացվեց «Ալեքսանդր Սպենդիարյան – 150» ենթաբաժնով, որտեղ տեղ գտան նրան նվիրված 4 ուսումնասիրություններ՝ Ա. Ասատրյանի «ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ներդրումը ակադեմիական սպենդիարյանագիտության կայացման ու զարգացման գործում», ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բ. գ. դ., պրոֆ. Ալլիտա Դոլուխանյանի «Ալեքսանդր Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայի լիբրետոն և Հովհաննես Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմը», արվ. թ. Տատյանա Բրոսլավսկայայի (ՌԴ, Սանկտ Պետերբուրգ) «Ժողովրդական գործիքային ավանդույթների կերպափոխությունները Ալեքսանդր Սպենդիարյանի ստեղծագործական էվոլյուցիայում» և արվ. թ. Լիլյա Բորոդովսկայայի (ՌԴ, Թաթարստանի Հանրապետություն, Կազան) «Ալեքսանդր Սպենդիարյանի «Ղայթարմայի» մեկնությունները Թաթարստանի Հանրապետության ժամանակակից կատարողների արվեստում» հետազոտությունները, որոնք կարևոր քայլ դարձան միջազգային սպենդիարյանագիտության ասպարեզում:

Հայ երաժշտության նորագույն շրջաններին են առնչվում Աննա Ասատրյանի և Տաթևիկ Շախկուլյանի հոդվածները: 44-օրյա պատերազմի հերոսների հիշատակին նվիրված «Հայոց ցեղասպանության արձագանքները Արամ Սաթյանի ստեղծագործության մեջ» հոդվածում Ա. Ասատրյանը քննության առավ կոմպոզիտորի «Զինար ես» և «1915» ստեղծագործությունները: Առնո Բաբաջանյանի ծննդյան 100-ամյա հոբելյանին նվիրված հոդվածում Տ. Շախկուլյանը բացահայտեց դողեկաֆոնիայի կամ տաներկուտոնային համակարգի կիրառումը հայ երաժշտության, մասնավորապես՝ Ա. Բաբաջանյանի ստեղծագործության մեջ: Հայ երաժշտական քննադատության ուսումնասիրությանը, հատկապես՝ XIX դարավերջին Փարիզում հրատարակվող «Անահիտ» հանդեսում հայ երաժշտական իրադարձությունների և հայ երաժիշտների գործունեության լուսաբանմանն էր նվիրված

արվ. թ., դոցենտ Աննա Ադամյանի հոդվածը: Երաժշտական արևելագիտության ասպարեզում բազմավաստակ գիտնական, կոմպոզիտոր և մանկավարժ Քրիստափոր Քուչնարյանի վաստակի, նրա «Հայ մոնոդիկ երաժշտության պատմության ու տեսության հարցերը» հիմնարար աշխատության մեջ առաջադրված դրույթների և սկզբունքային ելակետերի ուսումնասիրության հեղինակն է արվ. դ., պրոֆ. Լիլիթ Երնջակյանը: Անի Հակոբյանը հայ ակադեմիական երաժշտագիտության մեջ առաջին անգամ ուսումնասիրել է սփյուռքահայ երաժշտագետ-բանահավաք, խմբավար և հասարակական գործիչ, Բարսեղ Կանաչյանի սան Պետրոս Ալահայտոյանի ստեղծագործական գործունեությունը: Հետազոտության իրականացման համար առիթ դարձավ այն, որ Ալահայտոյանը 2020 թ. իր գրառած հսկայածավալ ժառանգության կարևոր մասը՝ 430 տուփ մագնիտոֆոնային ձայնագրություն և 125 տուփ մագնիտոֆոնային ժապավեն, նվիրաբերեց Արվեստի ինստիտուտի Արամ Խաչատրյանի անվան ձայնաղարանին: Նազենիկ Սարգսյանը համեմատական քննության ենթարկեց Միխայիլ Լերմոնտովի «Դիմակահանդես» դրաման և Էդգար Հովհաննիսյանի համանուն պարտիտուրը՝ «Դիմակահանդեսը» դիտարկելով որպես թատերական երաժշտության վրա կառուցված բալետ-պարաֆրազ: Շատ գնահատելի և հույժ կարևոր է, որ հանդեսի հոդվածներից մեկը նվիրված է Արցախի՝ Վարանդայի տարածաշրջանի (ներկայիս Մարտունու շրջան) երաժշտական լեզվամտածողությանը, մասնավորապես՝ հոռովելներին բնորոշ առանձնահատկությունների լուսաբանմանը՝ Կոմիտասի, Ռոբերտ Ամիրյանի և Մաթևոս Մուրադյանի՝ արցախյան հոռովելների գրառումների համեմատական վերլուծության հիման վրա: Մարիաննա Տիգրանյանը և Լինդա Սարգսյանը հրապարակել են Ռ. Ամիրյանի՝ 1957 թ. Արցախ կատարած գիտարշավի ժամանակ ձայնագրված հոռովելը:

«Թատերագիտություն և կինոգիտություն» ենթաբաժնում Սերգեյ Փարաջանովի «Նռան գույնը», Արտավազդ Փելեշյանի «Մենք» և Համո Բեկնազարյանի «Պեպո» ֆիլմերի օրինակների հիման վրա արվ. թ. Արսեն Համբարձումովը վերլուծում է դատարկ կադրի՝ ֆիլմի համատեքստում նշանակության և իմաստի մասին: Անահիտ Զեյնի հոդվածում ուսումնասիրության ենթարկվեց իրանահայ թատերական գործիչ՝ ռեժիսոր, դերասան, նկարիչ, ճարտարապետ ու երգիչ Մկրտիչ Թաշճյանի ստեղծագործական գործունեությունը և նշանակալի ներդրումը իրանահայ թատրոնի ասպարեզում:

Հետաքրքիր և արդիական հոդվածներով է հագեցած «Կերպարվեստագիտություն» ծավալուն ենթաբաժինը: Սփյուռքահայ, մասնավորապես՝ ֆրանսահայ արվեստին է նվիրված արվ. դ., պրոֆ. Արա Հակոբյանի հոդվածը, որը ուսումնասիրել և գիտական հանրույթին է ներկայացրել նկարիչ-արվեստաբան Ռաֆայել Շիշմանյանի՝ Փարիզի Նուբարյան գրադարանի ու Փարիզի հայ ուսանողների տան գլխավոր սրահների որմնանկարների վերաբերյալ ուսումնասիրությունը: Միջնադարյան կերպարվեստին՝ հայ և ռուսական արվեստում «Աստվածամոր Վերափոխման» պատկերագրության առանձնահատկությունների դիտարկմանն է նվիրված արվ. թ., դոցենտ Սեյրանուշ Մանուկյանի հոդվածը: Անի Մարգարյանի իր թեմատիկայով եզակի անդրադարձում քննության են ենթարկվում չին կայսրուհի

Ցըսիի՝ ամերիկյան նկարիչներ Քեթրին Ա. Կուլի և Հուբերտ Վոսի վրձնած դիմանկարները XX դարասկզբի ամերիկյան արվեստի ու աշխարհընկալման համատեքստում: Ենթաբաժնի մյուս հոդվածները նվիրված են նոր և նորագույն շրջանի հայ կերպարվեստի ուսումնասիրությանը: Արվ. թ. Մանե Մկրտչյանը Սարյանի գրառումների և ժամանակի սիմվոլիստական մտքի հետ համեմատությունների հիման վրա իմաստաբանական վերլուծության է ենթարկել Մարտիրոս Սարյանի՝ 1907 թ. ստեղծած «Գիսաստղը»: Արվ. թ. Ալիս Ներսիսյանը համակողմանի արվեստաբանական վերլուծության է ենթարկել խորհրդային նկարիչ Դմիտրի Նալբանդյանի ստեղծագործությունը: Արվ. թ. Հռիփսիմե Վարդանյանն ուսումնասիրել է հայ գրող, հրապարակախոս, սցենարիստ, դրամատուրգ, ռեժիսոր, գեղանկարիչ, շուրջ 150 գեղանկարչական և 40 գրաֆիկական աշխատանքների հեղինակ Աղասի Այվազյանի նկարչական ժառանգությանը:

Ուշագրավ է «Ճարտարապետագիտության» ենթաբաժնում պ. գ. թ. Օլգա Բաևայի (ՌԴ, Դոնի Ռոստով) հոդվածը, որում ներկայացրել է Դոնի Նախիջևանի քաղաքային ճարտարապետ Նիկոլայ Նիկիտիչ Դուրբախի (Դուրբախյան) ավանդը Դոնի Նախիջևանի ճարտարապետության մեջ:

«Արվեստագիտական հանդեսի» կարևոր արժանիքներից է «Հրապարակումներ» բաժինը: Հանդեսի 1-ին համարում հայ անվանի ջութակահար և մանկավարժ, Պետերբուրգի (այնուհետև՝ Լենինգրադի) կոնսերվատորիայի պրոֆեսոր, ՌՍՖՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Հովհաննես Նալբանդյանի (1871–1937) հոբելյանին ընդառաջ հրապարակվել և գիտական հանրույթին են ներկայացվել հատվածներ իսպանացի աշխարհահռչակ ջութակահար ու կոմպոզիտոր Պաբլո Սարասատեի մասին նրա՝ ՀՀ գրականության և արվեստի թանգարանում պահվող անտիպ հուշագրություններից (առաջաբանի հեղինակ՝ Ա. Ասատրյան): Ուշագրավ է, որ այս հրապարակումը մեծ հետաքրքրություն առաջացրեց ինչպես Հայաստանի, այնպես էլ Ռուսաստանի և Գերմանիայի երաժիշտների շրջանում: Նույն համարում հրապարակվեցին ՀՀ գրականության և արվեստի թանգարանում պահվող Նալբանդյանի անտիպ հուշերը մեկ այլ մեծանուն ջութակահարի, մանկավարժի, կոմպոզիտորի և դիրիժորի՝ հունգարացի Յոզեֆ Յոախիմի մասին՝ նվիրելով այն վերջինիս ծննդյան 190-ամյա հոբելյանին:

Հանդեսի 2-րդ համարի «Հրապարակումներ» բաժնում «Արվեստաբանների կենսագրությունները փաստաթղթերում» խորագրի ներքո (առաջաբանի հեղինակ՝ պ. գ. թ. Ստեփան Ղարիբջանյան) հրապարակվեցին հայ անվանի բանասեր, արվեստաբան, ՀԽՍՀ արվեստի առաջին վաստակավոր գործիչ, խմբագիր, մանկավարժ, պրոֆ. Գարեգին Լևոնյանի ինքնակենսագրությունը, ինչպես նաև նրա մասին ՀՍՍՌ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի դիրեկտորի պաշտոնակատար ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսյանի անտիպ բնութագիրը: Լևոնյանի կենսագրության և բնութագրի հետ ներկայացվեց արվ. դ., հայագիտության մեջ մեծ ավանդ բերած խոշոր ռուս գիտնական Նիկոլայ Տոկարսկուն ակադեմիկոս Հովսեփ Օրբելու և Էրմիտաժի տնօրենի տեղակալ Տիմոֆեևի կողմից տրված ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի արխիվի անտիպ բնութագրերը:

Հանդեսի 1-ին համարում գրախոսվեցին Արարատ Աղասյանի «Արվեստի պատմություն. կերպարվեստ» (հեղինակ՝ արվ. թ. Մարգարիտա Քամալյան) և Աննա Արևշատյանի «Գրիգոր Մագիստրոսը՝ չարականագիր և գեղագետ» (հեղինակ՝ արվ. թ. Գայանե Ամիրաղյան) աշխատությունները:

2021 թ. հոբելյանական էր Արվեստի ինստիտուտի աշխատակիցների համար: Հունիսի 3-ին լրացավ ինստիտուտի թատրոնի բաժնի վարիչ, «Արվեստագիտական հանդեսի» խմբագրական խորհրդի անդամ, Արվեստագիտության գծով գիտական աստիճանաշնորհման 016 մասնագիտական խորհրդի նախագահ, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, արվ. դ., պրոֆ. Հենրիկ Հովհաննիսյանի ծննդյան 85-ամյա հոբելյանը, որը համընկավ նրա՝ Արվեստի ինստիտուտում ծավալած գիտական գործունեության 60-ամյա հոբելյանի հետ: Հանդեսի 1-ին համարում հետաքրքիր ձևաչափով՝ հարցազրույցի տեսքով լուսաբանվում են Հ. Հովհաննիսյանի ներդրումը թատերագիտության մեջ, ինստիտուտի դերն ու նշանակությունը նրա կյանքում և այլ հարցեր: Նոյեմբերի 7-ին լրացավ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվ. դ., պրոֆ. Աննա Արևշատյանի, իսկ հունիսի 23-ին՝ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ժողովրդական երաժշտության բաժնի ավագ գիտաշխատող, արվ. թ., երաժշտագետ-ֆոլկլորագետ Մարիաննա Տիգրանյանի հոբելյանները: «Արվեստագիտական հանդեսի» 2-րդ համարում Ա. Աատրյանը ներկայացրել է երաժշտագետների բեղուն գիտահետազոտական և մանկավարժական գործունեությունը:

Յուրահատուկ և նորարարական «Ստեղծագործում են արվեստաբանները» բաժինը ներկայացնում է վաստակաշատ գիտնականների ուշագրավ նվաճումները ստեղծագործական ասպարեզում: Հանդեսի 2-րդ համարում, ռուս գրականության դասական Նիկոլայ Նեկրասովի ծննդյան 200-ամյա հոբելյանի շրջանակներում առաջին անգամ տպագրվեցին նրա երեք բանաստեղծությունների՝ Ա. Աղասյանի ինքնատիպ թարգմանությունները:

Առանձին հիշատակման է արժանի հանդեսի շապիկների ձևավորումը, որն իրականացրել է Մարտին Հարությունյանը: Ըստ մտահղացման՝ դրանք զարդարում են Արվեստի ինստիտուտին առնչվող արվեստի գործեր: Ուշագրավ է, որ ներկայացվող երկու համարները պսակեցին ինստիտուտի նվիրյալների դիմանկարները. Աննա Աատրյանը՝ ՀՀ ժողովրդական նկարիչ Փարավոն Մխրզոյանի (2021, կտավ, յուղաներկ) և ինստիտուտի կերպարվեստի բաժնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, արվ. դ., պրոֆ. Վիգեն Ղազարյանը՝ ՀՀ ժողովրդական նկարիչ Արամ Իսաբեկյանի (2017, կտավ, յուղաներկ) աչքերով:

Գրախոսությունն արդեն պատրաստ էր, երբ տեղեկացանք, որ համաձայն ՀՀ Բարձրագույն որակավորման կոմիտեի նախագահ Կարեն Քեռյանի 2022 թ. փետրվարի 1-ի № 09Ա հրամանի՝ «Արվեստագիտական հանդեսն» ընդգրկվել է առաջնահոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ԲՈԿ-ի կողմից 2022 թ. ընդունելի գիտական հրատարակությունների ցանկում:

Հանդեսի նախաձեռնողներին, աջակիցներին, հեղինակներին, մաղթում եմ

հետագա ծրագրերի անխափան իրականացում և չարունակական ընթացք:

Նկատենք, որ 2019 թ. հիմնադրված վեցամսյա պատկերազարդ պարբերականը հասանելի է նաև էլեկտրոնային տարբերակով Արվեստի ինստիտուտի և հայկական թվային գրադարանի կայքերում[2]*:*

ՄԱՐԳԱՐԻՏԱ ՔԱՄԱԼՅԱՆ

Արվ. թ., ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտքարտուղար, սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի ավագ գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունը՝ XX դարի հայ մշակույթ: Հեղինակ է չուրջ 30 հոդվածի: margaritakamalyan@gmail.com

[2] *Տե՛ս* http://arts.sci.am/reports.php?langid=1,https://arar.sci.am/dlibra/publication/301163 *և* http://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Journalofstu dies 2019/2019(1).pdf.

ՕՏԱՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԻ ՄԱՍԻՆ: *Հայր Ղևոնդ Ալիշանի ծննդյան 200-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, պրակ Ա, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2021, 404 էջ*:*

Բանալի բառեր՝ օտար աղբյուրներ, հայկական գաղթավայրեր, Հայր Ղևոնդ Ալիշան, Ռենատոսի կամ Հայոց վանք, Արևելյան Այսրկովկաս, արաբական և պարսկական աղբյուրներ, եվրոպական ճանապարհորդներ, չվեդ ճանապարհորդ, Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ-ի սկզբնաղբյուրներ, հունգարալեզու ձեռագիր, բուլղարահայության պատմամշակութային ժառանգություն, չվեյցարական վավերագրեր:

Ներկայացվող ժողովածուն ներառում է 23 հոդված, որոնց հեղինակներից 17-ը Հայաստանի Հանրապետությունից և Արցախի Հանրապետությունից (ԱՀ) են, մեկական՝ Իտալիայից, Հունաստանից, Ֆրանսիայից, Հունգարիայից, Բուլղարիայից, Շվեյցարիայից: Գիտաժողովի մասնակիցների աշխարհագրությունը ներառել է 8 երկիր:



Օտար աղբյուրները, մասնավորապես՝ ճանապարհորդների երկերը, հսկայական նյութ են պարունակում հայկական գաղթօջախների բնակչության թվաքանակի, տնտեսության, օտար ազգերի հետ ունեցած փոխհարաբերությունների, հայ ազգաբնակչության մշակույթի, կրթության և ներհամայնքային կյանքի բազմաթիվ իրողությունների վերաբերյալ: Հարկ է նշել, որ սույն ժողովածուի մեջ բացառություն է կազմում Ջավախքի հայությանը վերաբերող մեկ զեկուցում:

Ժողովածուն տպագրվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ՝ ինստիտուտի Հայկական գաղթօջախների և Սիյուռքի պատմության բաժնի վարիչ, պ. գ. դ. Գևորգ Ստեփանյանի խմբագրությամբ: Խմբագրական խորհրդի անդամներն են՝ նույն բաժնի գիտաշխատողներ ը. գ. թ. Արծվի Բախչինյանը, պ. գ. թ. Կարեն Մկրտչյանը և Էլիզաբեթ Թաջիրյանը:

«Մուտքի խոսք»-ում Գ. Ստեփանյանը գրում է, որ հայ գաղթօջախների ամբողջական պատմության ուսումնասիրման համար հայկական աղբյուրներից բացի, սկզբնաղբյուրային բացառիկ կարևոր նշանակություն ունեն օտար հեղինակների տարբեր ժամանակների երկերը՝ հուշագրությունները, ճանապարհորդական նոթերը, ուղեգրությունները, ուսումնասիրությունները և այլն: Նրա խոսքով՝ ժողովածուն, որը նվիրված է բանասեր, պատմաբան,

---

* *Ներկայացվել է 01. XII. 2021 թ., ընդունվել է տպագրության 04. I. 2022 թ.:*

աշխարհագրագետ, թարգմանիչ, բանաստեղծ, Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ Հայր Ղևոնդ Ալիշանի ծննդյան 200-ամյակին, յուրովի հարգանքի տուրք է հայագիտության մեծանուն նահապետին ու երախտավորին, նրա ազգաշահ գործունեությանը:

Վենետիկի Կա Ֆոսկարի համալսարանի և Հռոմի Քահանայապետական Արևելագիտության ինստիտուտի վաստակավոր դասախոս Տեր Լևոն պրք. Զեքիյանը *(Իտալիա) իր «Հ. Ղեւոնդ Ալիշան բանասէր, աղբիւրագէտ. Աղբիւրներուն հաւատարիմ, հաւաստի եւ բծախնդիր մեծ բանասէրը» վերնագրով հոդվածում համակողմանի քննարկում է Ալիշանի գրական ժառանգությունը: Այդ նպատակով հեղինակը նախ առանձնացնում է Ալիշանին՝ որպես Վերածննդի դասական հումանիզմի ժառանգ, ապա ներկայացնում նվիրյալ հայագետին արդի քննական բանասիրության համատեքստում:*

ԳԱԱ պատմության ինստիտուտի Հայկական գաղթօջախների և Սփյուռքի պատմության բաժնի գիտաշխատող Էլիզաբեթ Թաջիրյանը *«Հ. Ղեւոնդ Ալիշանի «Հայ գաղթօջախների մասին» ձեռագիր հատորը և նրա աղբիւրները» հոդվածում եզրակացնում է, որ Ալիշանն առաջին հայագետներից է, ով, գիտակցելով հայկական սփյուռքի անվիճելի դերն ու նշանակությունը հայ ժողովրդի պատմության ուսումնասիրության մեջ, առանձնահատուկ ուշադրություն է դարձրել նրա ուսումնասիրությանն ու համակարգմանը: Նրա արխիվում, ի թիվս այս թեմայով բազմաթիվ այլ տպագիր և ձեռագիր աշխատանքների, կա 550 A3 էջից բաղկացած անանուն ձեռագիր, որտեղ Ալիշանը վերաշարադրել է Իտալիայի հայկական գաղթօջախների, ինչպես նաև Եվրոպայի ու Հնդկաստանի բազմաթիվ հայկական համայնքների հիմնադրման ժամանակաշրջանի օտար և հայերեն բնագիր տեքստեր, կատարել հակիրճ ամփոփումներ՝ նշելով դրանց հեղինակները, գրաղարանները կամ արխիվային միավորները:*

«Հայ գաղթավայրերը հնագույն շրջանում» խորագրով բաժնում ներկայացված է 3 զեկուցում:

Աստվածաբանության դոկտորանտ Գևորգ Ղազարյանը *(Հունաստան) «Հայ վանականների՝ VII դ. Հռոմում ներկայության խնդրի շուրջ» վերնագրով հոդվածում նշում է, որ Հռոմում հայ եկեղեցականների ներկայության մասին հնագույն հիշատակությունը վերաբերվում է VII դ. երկրորդ կեսին: Խոսքը Ռենատոսի կամ Հայոց վանքի առաջնորդ աբբա Թալասիոսի մասին է, որը մասնակցել է 649 թ. Լատերանի եկեղեցաժողովին: Թալասիոս վանահոր ստորագրության հունարեն ու լատիներեն տարբերակների վերլուծությունը թույլ է տալիս կարծել, որ Հռոմի հայոց վանքի միաբանությունը բաղկացած է եղել այր և կին վանականներից:*

Պ. գ. դ. Քլոդ Մութաֆյանը (Ֆրանսիա) «Եւրոպական աղբյուրները նախաօսմանյան շրջանի հայոց Երուսաղեմի մասին» հոդվածում եզրակացնում է, որ, երբ խաչակրաց արշավանքների ընթացքում եվրոպացիները հայտնագործեցին Երուսաղեմը՝ հայությունն այստեղ արդեն կայացած համայնք ուներ: Արևմտյան ճանապարհորդների համար հայոց Երուսաղեմը յուրօրինակ աշխարհ էր և նրանց հուշագրություններն թանկարժեք աղբյուր են այն զանազան կողմերով բացահայտելու համար: Լատինների տիրապետության շրջանում Երուսաղեմի առաջին թագուհիները հայ արքայադուստրեր էին, իսկ Մելիսենդե թագուհու օրոք (1131–1153 թթ.) արդեն սկսեց գործել Սուրբ

Հակոբ Հայկական եկեղեցին, որին 1165 թ. իր հուշերում անդրադարձել է եվրոպացի ճանապարհորդ ու հոգևորական Յոհան Վյուրցբուգցին:

Պ. գ. դ. Յակոբ Զոլաքեանը «Արաբական աղբիւրները Անտիոք քաղաքի եւ շրջակայքի հայ հին գաղթականութեան մասին» հոդվածում արձանագրում է, որ բյուզանդական, ասորական, լատինական և, հատկապես, արաբ մատենագիրներն ու պատմիչները հաճախ են անդրադարձել Անտիոքի շրջանի հայկական մեծ գաղութին IX–XIII դարերում: Արաբ պատմիչները բազմիցս գրում են խաչակրաց արշավանքներով Անտիոքի գրավման և տեղի սելջուկյան առաջնորդ Յաղի Սուղանի սպանության մեջ հայերի դերի մասին:

Ժողովածուի «Այսրկովկաս և Միջին Արևելք» խորագրով բաժնում առկա է 10 հոդված:

ԳԱԱ թղթակից անդամ, պ. գ. դ. Ալբերտ Խաւատյանը, «Ուղեգիրները Զմյուռնիայի հայերի մասին (XVII դ. I կես–XIX դ. I կես)» վերնագրով հոդվածում հանրագումարի բերելով եվրոպական տասնյակ ճանապարհորդների՝ Զմյուռնիայի ազգաբնակչության վերաբերյալ տվյալները, գրում է, որ սկսած Թավերնիեից (1631)՝ նրանց հաշվումներով Զմյուռնիայի հայերի թիվը տատանվում է 7–10 հազարի միջև: Օտարերկրյա ճանապարհորդների այցերը կրում էին ճանաչողական և հետախուզական բնույթ, որտեղ նրանց ուշադրությունը սևեռվում էր փոքրամասնությունների, այդ թվում՝ Էգեյան ծովի արևմտյան հատվածի հայ համայնքների ազգային և տնտեսական դիրքի վրա: Նրանց ճանապարհորդական գրառումները շատ դեպքերում համարվում են տեղեկատվության կարևոր աղբյուր, հատկապես, երբ խոսքը վերաբերում է Զմյուռնիայի հայերի կրոնական կառույցներին, ազգային խառնվածքին, վարքին և զբաղմունքին:

Պ. գ. դ. Գևորգ Ստեփանյանը, «XV–XVIII դդ. եվրոպական հեղինակների երկերը որպես Արևելյան Այսրկովկասի հայերի պատմության սկզբնաղբյուր» համառոտ ակնարկում հանրագումարի բերելով XV–XVIII դդ. եվրոպական տասնյակ ճանապարհորդ-ուսումնասիրողների, առևտրականների և կաթոլիկ միսիոներների թողած ճանապարհորդական նոթերի տեղեկությունները, եզրակացնում է, որ դրանք լրացնելու են գալիս հայկական սկզբնաղբյուրներում պակասող նյութը: Սկզբնաղբյուրային արժեք ունեցող այդ վկայությունները փաստում են Արևելյան Այսրկովկասում Կուրից մինչև Ապշերոնյան թերակղզի ընկած տարածքում, հայերի՝ վաղ ժամանակներից բնակեցված լինելը, ինչպես նաև միջնադարում երկրամասի մի զգալի տարածքում ստվարաթիվ բնակչությամբ հայաբնակ գոտու իրողությունը: Որպես երկրամասի տեղաբնակ և մշակութակերտ ժողովուրդ՝ հայերը մասնակցեցին այդ տարածաշրջանի հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական, կրթամշակութային կյանքին և ստեղծեցին հարուստ պատմություն:

Բ. գ. թ. Արծվի Բախչինյանը «Շվեդ ճանապարհորդ Նիլս Մաթսոն Շխփինգը Հայաստանի և հայերի մասին» հոդվածում եզրակացնում է, որ Շխփինգի (մոտ 1621–1680) ծանոթությունը հայ ժողովրդի հետ չի եղել մակերեսային: Նա, բուն Հայաստանից բացի, հայերի է հանդիպել Եմենում, Պարսկաստանում, Իրաքում, հետագայում նաև՝ Հոլանդիայում, իր «Ասիայում, Աֆրիկայում և շատ այլ հեթանոսական թագավորություններում

ուղևորությունների հակիրճ նկարագրություն» վերնագրով ուղեգրության մեջ գնահատել է նրանց արժանիքները՝ համարելով առաքինի ու իրենց հավատին նվիրված մարդիկ և թեկուզ հանրահայտ ու կցկտուր, սակայն արժեքավոր տվյալներ հաղորդել հայոց դավանանքի, ավանդությների, կրթության, առևտրի և արհեստների վերաբերյալ:

Պ. գ. դ. Քրիստինե Կոստիկյանը «XVII դարի պարսկական աղբյուրները Շահ Աբբաս Ա-ի կողմից Այսրկովկասից Իրանի կենտրոնական ու հյուսիսային շրջաններ տարագրված հայության մասին» հոդվածում եզրակացնում է, որ պարսիկ պատմիչների տեղեկությունները վերաբերում են վերաբնակեցման կազմակերպմանը, Նոր Ջուղա քաղաքի հիմնադրմանը, հայ վաճառականներին, պարսիկ պաշտոնյաներին (դարուգա, վեզիր), որոնք զբաղվում էին հայության գործերով, նրանց տրված որոշ արտոնություններով: Քննարկվում է շահի կառավարության կրոնական հանդուրժողականության իրական կողմերը վերաբնակեցված քրիստոնյաների նկատմամբ, որոնց թույլատրվել է եկեղեցիներ կառուցել և նշել իրենց կրոնական տոները: Չնայած այս բոլոր խրախուսական միջոցառումներին՝ իրանցի պատմագիրները, ինչպես նաև այլ աղբյուրները, չեն թաքցնում Իրանի որոշ շրջաններում՝ մասնավորապես Ֆարիղանում (Սպահանի մոտ) և Մազանդարանում, հայերի բռնի իսլամացման մասին փաստերը:

Պ. գ. թ. Կարեն Մկրտչյանը «Եվրոպական աղբյուրները Պարսկաստանի հայկական գաղթօջախի որոշ հարցերի շուրջ» վերնագրով հոդվածում նկատում է, որ Պարսկաստանի հայկական գաղթավայրերը տարբեր պատմափուլերում գտնվել են եվրոպացի ճանապարհորդների հետաքրքրությունների կենտրոնում: Ըստ հեղինակի՝ Արևելքի երկրներում գործունեություն ծավալած օտար գործիչների հաղորդած տեղեկությունները լույս են սփռում հնամենի այս գաղթավայրի հայության սովորույթների ու կրոնական պատկերացումների, պարսկահայ կնոջ ավանդական կերպարի վրա, ինչպես նաև վերականգնում այն բնական միջավայրը, որտեղ ապրել և իր գործունեությունն է ծավալել գաղթաշխարհի հայության այս հատվածը:

Արվ. գ. թ. Իվեթ Թաջալյանը «Նոր Ջուղայի խոջայական ապարանքների հարդարանքը եվրոպացի ճանապարհորդների տեսանկյունից» վերնագրով հոդվածում գրում է, որ խոջայական առանձնատների գեղարվեստական ներքին հարդարման հիմքը Հին Ջուղայինն է, որոնք զուգակցվել են արևելյան պերճության ազդեցությանն ու Եվրոպայից եկող կենցաղավարման օրինակներին: Հեղինակն արձանագրում է, որ ժամանակի ընթացքում իրանական արվեստը չէր կարող անմասն մնալ այդ ամենից, և արդեն որոշակիորեն ձևավորված հայկական ու եվրոպական արվեստի միաձուլման հիմքը պահպանելով իր ավանդական կողմը՝ սկսեց անցում կատարել դեպի նորը՝ իր վրա կրելով իրանական կենցաղավարության և մշակույթի տարրերը, որն իր անհերքելի ազդեցությունն է թողել հայերի վրա:

Պ. գ. թ. Սեդա Տ. Օհանեանը «Միջագետք (Իրաք)-ի հայ գաղթօճախը ըստ բրիտանական աղբիւրներու (XIX դար)» վերնագրով հոդվածում եզրակացնում է՝ հայ վաճառականներն աշխույժ գործունեություն են ծավալել Հնդկական օվկիանոսի նավահանգիստներում, և, բնական է, որ անգլիացի ու այլազգի դիվանագետները կամ ուղևոր/զբոսաշրջիկի անվան տակ քաղաքական գործիչներն ուղիներ պետք է փնտրեին սիրաշահելու հայ վաճառականներին՝

իրականացնելու համար իրենց քաղաքական կամ առևտրատնտեսական հեռահար նպատակները:

Պ. գ. թ. Վենեդա Մակարյանը *«XVIII դարի Հալեպի հայ համայնքի ընդհանուր նկարագիրը Ալեքսանդր Ռասելի «Հալեպի բնական պատմություն» աշխատությունում»* վերնագրով հոդվածում նշում է, որ սույն աշխատությունը նշված ժամանակաշրջանի Հալեպի համապարփակ պատմության կարևորագույն աղբյուր է: Իսկ աշխատության մեջ այնպիսի հարցերի արծարծումն ու լուսաբանումը, ինչպիսիք են Բարձր Դռան քաղաքականության, մուսուլման-ոչ մուսուլման, թուրք-մուսուլման այլազգի, թուրք-ոչ մուսուլման փոխհարաբերությունները, հնարավորություն են տալիս հստակ պատկերացում կազմել Հալեպի հայերի կարգավիճակի վերաբերյալ:

Պ. գ. թ. Անի Փիլենկճեանը (Փչնկլյան) *«Մուհամմէտ Ճեմալ Պարուդի «Ժամանակակից Սուրիական Ճեզիրէի ձեւաւորման պատմութիւնը» աշխատութեան տեղեկութիւնները ղէպի Սուրիա հայերու գաղթի մասին (1915–1945 թթ.)»* վերնագրով հոդվածում եզրակացնում է, որ գիրքը, որպես սկզբնաղբյուր, գրեթե ամբողջությամբ կազմված է օտար աղբյուրների՝ ֆրանսիական, արաբական ու օսմանյան գրականության և փաստաթղթերի հիման վրա: Հոդվածագրի խոսքով՝ աշխատությունը ներառում է տեղեկություններ քրիստոնյաների՝ հատկապես հայերի նկատմամբ քեմալական Թուրքիայի որդեգրած քաղաքականության մասին, որի հետևանքով կիլիկիայից ու Արևմտյան Հայաստանից փրկվածները պարբերաբար գաղթել են իրենց հայրենիքից դեպի Սիրիա և այլուր:

ԳԱԱ պատմության ինստիտուտի հայցորդ Արմեն Ասատրյանը, *«Եվրոպացի ուղեգիրները Թիֆլիսի հայերի մասին»* վերնագրով հոդվածում ներկայացնելով եվրոպացի ուղեգիրների՝ Ամբրոսիո Կոնտարինի, Շևալիե Շարդենի, Ջոզեֆ-Պիտոն Տուրնեֆորի, Յոհաննես Գուլդենշտեդի, Ալեքսանդր Նեգրիի, գնդապետ Ջոն Ջոնսոնի, Ռոբերտ Քեր Պորտրիի և այլոց համառոտ հուշերն ու օրագրությունները Թիֆլիսի հայերի մասին, նշում է, որ նրանք ջերմ խոսքեր են ուղղել հայերին և նկարագրել նրանց գրական կողմերը՝ աշխատասիրությունն ու բարությունը, կամեցողությունը և օտարին օգնելու պատրաստակամությունը:

Ժողովածուի հաջորդ՝ «ԱՄՆ-ի և Եվրոպայի հայ համայնքները» բաժնում ներկայացված է 4 հոդված:

Պ. գ. թ. Քնարիկ Ավագյանը, *«Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ-ի սկզբնաղբյուրները գաղութային ժամանակաշրջանի Ամերիկա մեկնած առաջին հայերի մասին (XVII դ. սկիզբ – XVIII դ. առաջին կես)»* վերնագրով հոդվածում ի մի բերելով անգլիական գաղութատիրության շրջանում Ամերիկա մեկնած առաջին սակավաթիվ անհատ հայերի մասին մեզ հասած Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ-ի գրադարաններում պահվող սկզբնաղբյուրային սակավ, բայց արժեքավոր տեղեկությունները, եզրակացնում է, որ նրանց մեծ մասը տնտեսական ու պատմական հանգամանքների բերումով եվրոպական տարբեր երկրներում ցրված հայեր էին կամ նրանց օտարացած սերունդները, որոնք անհատական դրդապատճառներով անցել էին նոր վերաբնակվող գաղութ և ներգրավվել նրա տնտեսական ու հոգևոր կյանքի տարբեր բնագավառներում: Նրանք մեծ մասամբ կրել են օտարացած անուններ, նաև պատկանել քրիստոնեական հավատի տարբեր դավանանքների:

«Հայ ժողովրդի պատմությունը». Դոնդոնի Վարդան Յոզեֆի հունգարալեզու ձեռագիրը» վերնագրով հոդվածում պ. գ. դ. Բալինտ Կովաչը (Հունգարիա) եզրակացնում է, որ հայազգի հեղինակ Դոնդոնի Վարդան Յոզեֆը ներկայացնում է հայ ժողովրդի պատմությունը՝ սկզբից մինչև իր ժամանակները (XVIII դարի վերջ): Այն հունգարերենով գրված ձեռագիր է, որը պահվում է Բուդապեշտում՝ Հայ Կաթողիկե եկեղեցու թանգարանում: Ձեռագիրը բաղկացած է 595 էջից: Ըստ Կովաչի՝ ձեռագիրը հունգարերեն առաջին աշխատությունն է, որում հայոց պատմությունը ներկայացված է իր ժամանակի գիտական տեսանկյունից:

Ասպիրանտ Էլինա Մխիթարյանը (ԱՀ) «Հարավ-արևմտյան (Գալիցյան) Ռուսիայի հայ գաղթօջախների իրավական, սոցիալ-տնտեսական կարգավիճակի լուսաբանումը Ի. Ա. Լիննիչենկոյի աշխատություններում» վերնագրով հոդվածում եզրակացնում է, որ տեղացիները հայերին համարել են առևտրային և դիվանագիտական «միջնորդներ Արևելքի ու Արևմուտքի միջև»:

Պ. գ. թ. Արման Մալոյանը իր՝ «Հայերի թիվը Կոստանդնուպոլսում ըստ եվրոպացի հեղինակների տվյալների (XVIII դարի վերջին քառորդ – XIX դարի սկիզբ)» վերնագրով հոդվածում հավանական է համարում, որ նշված ժամանակաշրջանում Կ. Պոլսում հայ ազգաբնակչության թիվը եղած լինի քիչ ավելի, քան եվրոպացի հեղինակների տվյալների հիման վրա հաշվարկած 70.000–80.000-ը, այսինքն՝ չուրջ 100.000:

Ժողովածուի հաջորդ՝ «Հայ սփյուռքն օտար աղբյուրներում» բաժնում ներկայացված է 4 հոդված:

«Մատենագիտական տվյալներ՝ բուլղարահայության պատմամշակութային ժառանգության վերաբերյալ» վերնագրով հոդվածում պ. գ. թ. Գոհար Խնկանոսյանը (Բուլղարիա) գրում է՝ այդ թեման ուսումնասիրող հեղինակները հայեր են, որոնք հավաքում և պահպանում են այն ամենն, ինչ վերաբերում է Բուլղարիայի տարածքում ապրող հայերին կամ հայ-բուլղարական հարաբերություններին: Վերջին տասնամյակների ընթացքում նկատվում է նաև բուլղարացի գիտնականների հետաքրքրությունը հայերին առնչվող որոշակի թեմաների ուսումնասիրության հարցում: Հոդվածին կից ներկայացվել են բուլղարահայության վերաբերյալ պատմամշակութային աշխատությունների՝ ձեռագրեր, ժողովածուներ, մենագրություններ, հոդվածներ, ցանկ:

Աստվածաբանության և փիլիսոփայության դոկտոր Աբել Մանուկյանը (Շվեյցարիա) «Զուիցերիական վաւերագրերը Ժընեւի եւ Լոզանի հայկական գաղթօճախներուն մասին» վերնագրով հոդվածում Լոզանում հայկական ներկայության վերաբերյալ փաստաթղթերը ներկայացնում է ըստ Շվեյցարիայի Համադաշնության արխիվների, կանտոնների, համալսարանի, ինչպես նաև Ազգային գրադարանի նյութերի: Փաստաթղթերից պարզ է դառնում, որ Լոզանում հայ ուսանողների կողմից ստեղծված եվրոպայի հայ ուսանողական միության հայանպաստ գործունեությունն ուղղված է եղել Հայկական հարցի քարոզչությանը: 1886 թ. աշնանը համալսարանի ուսանողներ Ավետիս Նազարբեկյանի, Մարո Վարդանյան-Նազարբեկյանի, Ռուբեն Խանազատի, Գաբրիել Կաֆյանի, Գևորգ Ղարաջյանի և Քրիստափոր Օհանյանի չնորհիվ հիմնադրվում է «Հայ հեղափոխական ընկերությունը», որը

հետագայում վերափոխվում է որպես Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցության:

Պ. գ. թ. Հովհաննես Ալեքսանյանը «Հայերի թվակազմը Ռուսաստանում 1897–2010 թթ. (ըստ պաշտոնական վիճակագրական տվյալների)» վերնագրով հոդվածում ներկայացնում է հայերի թվաքանակի աճն ու նրանց տարածման աշխարհագրությունը Ռուսաստանում՝ Ռուսական կայսրության, ԽՍՀՄ-ի և Ռուսաստանի Դաշնության 1897–2010 թթ. անցկացված մարդահամարների միջոցով: 100 տարվա ընթացքում Ռուսաստանի (առանց Անդրկովկասի) հայ բնակչությունն աճել է ավելի քան 12 անգամ՝ 100 հազարից հասնելով 1,2 միլիոնի (ոչ պաշտոնական տվյալներով՝ 2,5–3 միլիոն):

«Ջավախքի հիմնահարցի վրացական ընկալումները և դրանց վրա ազդող գործոնները (ըստ 1999–2009 թթ. վրացական տպագիր մամուլի նյութերի)» վերնագրով հոդվածում պ. գ. թ. Վահե Սարգսյանը եզրակացնում է, որ ներկայիս Վրաստանի տարածքում բնակվող, տեղաբնիկ ժողովուրդ հանդիսացող, միևնույն ժամանակ՝ որպես ազգային փոքրամասնություն հանդես եկող ջավախքահայության պահանջները, որոնք համապատասխանում են միջազգային իրավունքի տառին ու ոգուն, վրաց հասարակական-քաղաքական միտքը որակել է անջատողականության դրսևորում, ՀՀ-ի և ՌԴ-ի կողմից ուղղորդվող սադրանք Վրաստանի տարածքային ամբողջականության դեմ:

Այսպիսով, ժողովածուն ներառում է գիտական ուսումնասիրություններ, որոնք նոր լույս են սփռում օտար միջավայրերում տեղի ունեցած, իսկ, երբեմն էլ, մոռացության մատնված իրադարձությունների վրա, որոնք կատարվել են հայության գործուն մասնակցությամբ: Դրանք հայտ են ներկայացնում փոխելու մեր պատկերացումները տարբեր դարաշրջաններում աշխարհի բազմաթիվ երկրներում բնակություն հաստատած հայերի և օտար ազգերի ներկայացուցիչների փոխհարաբերությունների հարցի վերաբերյալ:

Ընթերցողի սեղանին է դրված աղբյուրներով հարուստ արժեքավոր գիտական հոդվածների ժողովածու, որը հավակնում է դառնալ սփյուռքագիտական նոր մատենաշար:

ԿԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

Պ. գ. թ., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հայ գաղթօջախների և սփյուռքի պատմության բաժնի գիտաշխատող, Երևանի Հենակետային բժշկական քոլեջի դասախոս: Գիտական հետաքրքրությունը՝ Իրանի հայ համայնքի և ՀՀ – ԻԻՀ հարաբերությունների պատմությունն: Հեղինակ է 20 հոդվածի: K86Mkrtchyan@gmail.com

ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ
(Ծննդյան 80-ամյակի առթիվ)*

Անվանի գիտնական, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Աելիտա Գուրգենի Դոլուխանյանը իր կենսագրության մեջ չրջեց երբևէ այնքան իմաստավորված անհատի տարեդարձը: Միշտ նորովի և գիտության անճանճիր մչակին տրված մարդու իրավունքով, որն իր տասնամյակների արարման մեջ, սակայն, ոչ մի իրավունք էլ չի տեսնում, այլ միայն իր պարտքն ու պարտականությունը, որի համար շարունակում է սիրելի մնալ իր մերձավոր ու հեռավոր շրջապատին և մեզ՝ իրեն ճանաչող գործընկերներիս:

Հայրենի հայագիտության մեջ քիչ են այն ուսումնասիրողները, ովքեր իրենց տաղանդն ու հոգևոր ներուժը դրսևորած լինեին հետազոտական այսպիսի ընդարձակ աշխարհագրության տարածքներում՝ հայ հին և միջնադարյան գրականությունից ու դրա փիլիսոփայական արժեվորումից մինչև հայրենի և օտարազգի հայագետների երկերի գնահատականը, ժամանակակից հայրենի ու սփյուռքահայ գրողների գրականագիտական բնութագրից մինչև գրաբարյան բնագրերի թարգմանության տեսություն, մանկավարժական մեթոդիկայի հարափոփոխ հիմնախնդիրներից մինչև հանրակրթական պետական համակարգերի աղերսներ և այսպես շարունակ: Եթե այս ոչ լրիվ ցանկին ավելացնենք իր ավագ և տարեկից ժամանակակիցներին տրված նրա անաչառ գնահատականներն ու եվրոպական, ռուս և արևելյան գրականությունների թեմաներով ուշագրավ ուսումնասիրությունները, կտեսնենք, որ գործ ունենք գիտական լայն հետաքրքրություններով առանձնացող անհատականության, գիտնականի ու քաղաքացու որակների զարմանալի համադրման հետ, որի գործերում, և սա չի ասվում զուտ հաճոյախոսության համար, զգացնել է տալիս նաև կնոջ իմացական ու վերլուծական ինքնատիպությունը՝ հոբելյարին հատուկ տոհմիկ նրբագեղությամբ:

Ապագա գիտնականը ծնվել է 1942 թ. փետրվարի 14-ին Երևանում, կուսակցական աշխատող Գուրգեն Դոլուխանյանի և մանկավարժ Աղավնի Սարուխանյանի ընտանիքում: 1959 թ. ավարտել է Երևանի թիվ 1 դպրոցը և նույն տարին ընդունվել Խ. Աբովյանի անվ. մանկավարժական ինստիտուտի պատմալեզվագրական ֆակուլտետը: Այնուհետև ուսումնառության տարիներ, ասպիրանտուրա, գիտակազմակերպչական աշխատանքներ նույն ինստիտուտում, որ սկսվում է 1969 թ. և շարունակվում մինչև օրս՝ հայ գրակա-

---

* *Ներկայացվել է 04. III. 2022 թ., ընդունվել է տպագրության 11. III. 2022 թ.:*

նուիթյան ամբիոնի դասախոս, ապա դոցենտ: 1972 թ. Ա. Դոլուխանյանը հայ միջնադարյան գրականուիթյան թեմայով պաշտպանել է Ներսես Մոկացու ստեղծագործուիթյանը նվիրված ատենախոսուիթյուն, 1989 թ.՝ դոկտորական ատենախոսուիթյուն՝ ըստ էուիթյան չարունակելով իր նախասիրած հիմնահարցերից մեկը՝ «Հոգու և մարմնի պրոբլեմը միջնադարի հայ քնարերգուիթյան մեջ» թեմայով: 1990 թ. ստացել է պրոֆեսորի կոչում: Դրան զուգընթաց, վարել է մի չարք գիտավարչական պաշտոններ. 1969 թ.՝ Խ. Աբովյանի անվ. ՀՊՄԻ ասպիրանտուրայի վարիչ, մայրենի լեզվի և գրականուիթյան ֆակուլտետին առընթեր մանագիտացված խորհրդի գիտքարտուղար, 1990 թ. ընտրվել է ինստիտուտի հայ գրականուիթյան և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, 2013 թ.՝ ՀՊՄՀ հայ հին և միջնադարյան գրականուիթյան և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ: Իր գիտական ակնառու վաստակի համար 2010 թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ:

Ա. Դոլուխանյանի գիտական աշխատուիթյունների առանցքը մնում են նրա մենագրուիթյունները, որոնք իսկական ուքնուիթյան տարիների արդյունք են: Առաջին մենագրուիթյունը, որն ընկած էր իր՝ միևնույն թեմայով դոկտորական ատենախոսուիթյան հիմքում, ունի հետազոտական ընդարձակ ընդգրկումներ՝ սկսած հիմնահարցի փիլիսոփայական հիմքերի վերհանումից ու վերջացրած այն պսակող՝ Գրիգոր Նարեկացու, ապա և հետնարեկյան քնարերգուիթյունների արժեքավորումով: Աշխատուիթյունն առաջինն էր իր տեսակի գիտական հետազոտուիթյունների մեջ, մասնավորապես՝ հայ միջնադարյան քնարերգուիթյան համակարգում՝ հիմնահարցի գեղագիտական և փիլիսոփայական սերտաճումներն ու դրանց նշանակուիթյունը բացահայտելու տեսակետից: Ավելացնենք՝ այս աշխատուիթյունն արդեն իսկ հուշարկում է, որ հեղինակը չի ավարտել ասելիքը և այն ամբողջացնելու հայտ է ներկայացնում՝ իր հետազոտական դաշտի առավել լիարժեք գնահատանքի թելադրանքով: Հիրավի, ավելի քան երկու տասնամյակ անց լույս տեսավ Ա. Դոլուխանյանի նոր աշխատուիթյունը համանուն վերնագրով և ռուսերենով («Проблема души и тела в средневековой армянской поэзии». Ереван, «Зангак-97», 2008), *որտեղ, կարծում ենք, առավել չեչտադրված է միջնադարյան հետագա հայ քնարերգուիթյան վրա Գր. Նարեկացու թողած ազդեցուիթյան հիմնահարցը:*

Ա. Դոլուխանյանի աշխատուիթյունների մեջ, այսուհանդերձ, հստակորեն զգացնել է տալիս զուտ իրեն պատկանող և հետևողականորեն իրացվող ուղղվածուիթյունը ֆրանսագիր, գլխավորապես՝ ֆրանսիական հայագետների տարբեր սերունդների գիտական արգասիքների հետազոտուիթյունն ու դրա արդյունքների մատուցումը չահագրգիռ հանրուիթյանը՝ հասցեագրված լինի այն հայրենի, թե արտերկրի հայագետներին: Ա. Դոլուխանյանն ավելի քան երկու տասնամյակ հետազոտական նոր հուն բացեց հայագիտուիթյան պատմուիթյան ուսումնասիրուիթյան անդաստանում: Այս իմաստով խորհրդանշական է հետազոտական նշված ուղղուիթյունը սկզբնավորող իր աշխատուիթյան («Ցելիքս Նևը և հայ քրիստոնեական մատենագրուիթյունը», Երևան, «Արտագերս», 2001) հեղինակային ընծայականը. «Գիրքն անսահման սիրով և երախտագիտուիթյամբ նվիրվում է բոլոր օտարազգի հայագետներին՝ անցյալի, ներկայի և ապագայի»: Այն ոչ միայն երախտիքի խոսք է օտարազգի հա-

յագետներին՝ այս մարզում իրենց ունեցած մեծ ներդրումների համար, այլև հեղինակի ակնարկը՝ դրանց բովանդակությունն ու արժեքը ընթերցողին հետագայում ևս ծանոթացնելու մասին: Վերոհիշյալ աշխատության մեջ Ա. Դոլուխանյանը մասնագիտական հմուտ քննության է առնում XIX դ. բելգիացի գիտնականի հայագիտական ժառանգությունը, մասնավորապես՝ հայ հին և միջնադարյան գրականության ու պատմության, հայկական պետականության և եկեղեցու առանձնահատկությունների վերհանման գործում նրա ուսումնասիրությունների արդյունքները: Հարկ է նկատել Ա. Դոլուխանյանի՝ որպես հետազոտողի հմտությունը Ֆ. Նևի բազմակողմանիորեն հարուստ հետազոտական երանգապնակը ընթերցողին ցուցադրելու գործում:

Վերոհիշյալ շարքի հաջորդ աշխատությունն Ա. Դոլուխանյանը հատկացրել է ականավոր հայագետ և արևելագետ, ազգությամբ ֆրանսիացի Մարի Բրոսսեի գործունեության («Մարի Ժելիսիտե Բրոսսեն հայագետ», Երևան, «Արտագերս», 2002) վերլուծությանը: Հայ միջնադարյան պատմագրության խոշոր դեմքերի (Թ. Արծրունի, Ստ. Օրբելյան, Կիրակ. Գանձակեցի, Առ. Դավրիժեցի և ուրիշներ) վերհանումը, որոնց մեծ մասին եվրոպական հայագետների մեջ առաջինն անդրադարձել է Մ. Բրոսսեն, Ա. Դոլուխանյանը ներկայացրել է գիտնականի բծախնդրությամբ: Նույն մոտեցումն ենք տեսնում նրա գրչի ներքո լուսաբանվող և այս հեղինակի քննարկած միջնադարյան Հայաստանի իրավական մտքին, հայկական ղրամագիտության, մատենագիտական, ուղեգրական ու, առհասարակ, մասնագիտական բնույթի շատ ուշագրավ հարցեր:

«Եվրոպացի հայագետներ» շարքում Ա. Դոլուխանյանի հաջորդ երկու աշխատությունները վերաբերում են ֆրանսիացի և հայագիտության ասպարեզում առաջին կարգի մեծություններից Վ. Լանգլուային և Էդ. Դյուլորիեին («Վիկտոր Լանգլուան հայագետ», Երևան «Լուսակն», 2003: «Էդուարդ Դյուլորիեն հայագետ», Երևան, «Լուսակն», 2004): Հրատարակչական կտրվածքով այս սեղմ հաջորդականությունը վկայում է, որ դրանց նախորդում է տասնամյակների համառ և ավարտուն աշխատանքը: Առաջին աշխատության մեջ Ա. Դոլուխանյանն ըստ ամենայնի բացահայտում է Վ. Լանգլուայի՝ երիտասարդական տարիքն այդպես էլ չհաղթահարած այդ պայծառ մտավորականի անկրկնելի ավանդը հայ գրականության, պատմագրության, դրամագիտության, մասնավորապես՝ Կիլիկիայի հայկական պետության և խաչակիրների, ֆրանս-հայկական միջնադարյան հարաբերությունների ուսումնասիրության բնագավառում: Աշխատության մեջ՝ գրեթե ամենուրեք, ուրվագծվում է Վ. Լանգլուայի, որպես մարդու, գիտնականի ու հայասերի դիմագիծը, հատկապես նրա այն հրապարակումների գնահատմամբ, որոնք վերաբերում են օսմանյան լծի տակ գտնվող և դրա դեմ ընդվզող հայության ոչ միայն պատմական, այլև ժամանակի ազգային-քաղաքական կացությանը:

Ա. Դոլուխանյանը, կարծեք, լրացնում է ֆրանսիական դասական հայագիտության առանձնահատուկ նկարագիրը Էդ. Դյուլորիեին նվիրված իր վերոհիշյալ աշխատության մեջ: Այդ հայագետի գործերի հանգամանալի լուսաբանման մեջ Ա. Դոլուխանյանը հայտաբերում է նրա տաղանդն ու ինքնատիպությունը հայկական սկզբնաղբյուրների արժեքի և նշանակության տեսակետից: Նույն հաջողությամբ Ա. Դոլուխանյանը Դյուլորիեի օրի-

նակով ցույց է տվել ֆրանսիական հայագիտության ընդգրկումներն ու խորքերը իրենց թեմատիկ բազմազանությամբ (հայ միջնադարյան ժողովրդական ստեղծագործության վերլուծություն, հայ եկեղեցու պատմական ու դավանական առանձնահատկություններ, միջնադարյան հայոց տնտեսական, իրավական ու այլ հարաբերություններ և այլն):

Ֆրանսիացի հայագետ Ֆրեդերիկ Ֆեյդիի ծննդյան 100-ամյակի առթիվ Ա. Դոլուխանյանը հրատարակեց չարքի V գիրքը («Ֆրեդերիկ Ֆեյդին հայագետ», Երևան, ԵՊՀ հրատ., 2008), որտեղ ուշադրություն է գրավում հայ էպոսագիտության մեջ ֆրանսիացի հայագետի խոշոր ներդրման վերհանումը, երբ մեր առջև բացահայտվում է այն մնայուն աշխատանքը, որ կատարել է Ֆեյդին՝ իբրև «Սասունցի Դավիթ» էպոսի թարգմանիչ ու մեկնաբան՝ միաժամանակ հանդես գալով էպոսին կցած իր շատ արժեքավոր ծանոթագրություններով: Այս վաստակաշատ հեղինակին նույնպես գրականագետը ներկայացնում է հայագիտական հետաքրքրությունների ընդարձակ շառավղում, որպես հայոց հին վեպի գնահատողի, հայ բարբառագիտության ճչմարտացի գնահատողի, հայոց լեզվի դասագրքի հեղինակի, այլև արևմտահայ գրականությունը ֆրանսախոս աշխարհում ներկայացնողի: Ա. Դոլուխանյանը ուրվագծում է նաև Ֆեյդի մարդու և հայասերի նկարագիրը, երբ այդ գիտնականի հետազոտությունների հենքի վրա առանձնացնում է Բրյուսելում 1965 թ. նրա կարդացած ատենախոսությունը Հայոց ցեղասպանության 50-ամյակի առթիվ:

«Եվրոպացի հայագետներ» չարքի հերթական՝ VI հատորը հայ հետազոտողի երախտիքի տուրքն է նույնպես ֆրանսիական հայագիտության գագաթներից մեկին («Ֆրեդերիկ Մակլերը հայագետ», Երևան, «Զանգակ-97», 2011): Ֆ. Մակլերը ևս այս աշխատության մեջ հանդես է գալիս իր գիտական բազմաբնույթ նախասիրություններով ու ֆրանսիական հայագիտության մեջ ինքնատիպ տեղ է գրավում հայագիտական կառույցների կազմակերպմամբ և դրանց տևական ղեկավարմամբ, ինչը մեզ հայտնի է ղառնում Ա. Դոլուխանյանի չարադրանքից: Նշանավոր Ա. Մեյեի և այլ գիտնականների հետ Ֆ. Մակլերը հիմնել է «Հայագիտական ընկերությունը» (1919), դարձյալ նրա հետ սկսել է հրատարակել և խմբագրել «Ռևյու դեզ էտյուդ արմենիեն» հայագիտական հանդեսը (1920), դասավանդել է Փարիզի Արևելյան կենդանի լեզուների դպրոցում: Ֆրանսիական հայագիտության մեջ, ինչպես ցույց է տրվում խնդրո առարկա հատորում, Մակլերը երախտիք ունի հայ պատմագրության թարգմանության բնագավառում ևս (թարգմանել է Սեբեոս, Ստեփանոս Տարոնացի), իր ծանրակշիռ խոսքն է ասել Խորենացու և այլ պատմիչների մեկնաբանության ասպարեզում, լրջմիտ գնահատականներ տվել միջնադարյան հայ գրականությանը, ճարտարապետությանը, աշուղական երգարվեստին: Ա. Դոլուխանյանը դիպուկ բնութագրեր տալիս է հատկապես հայ նոր գրականության ուսումնասիրության ասպարեզում Ֆ. Մակլերի ներդրումներին՝ հաճախ առարկայական ղարձնելով վերլուծությունները, մասնավորապես՝ իր աշխատության II գլխում («Հայ գրականությունն ու մշակույթը Մակլերի հետազոտություններում»):

«Եվրոպացի հայագետներ» չարքը, կարելի է կարծել, անսպառ թեմա է նույնպես անսպառ ասելիք և աշխատասիրություն ունեցող Ա. Դոլուխան-

յանի համար, եթե նկատի առնենք այս ուղղությամբ նորանոր ծալքեր հայտնաբերելու նրա պատկառելի կարողությունները: Դրա վկայությունն են նրա ստվար աշխատությունը նույն մատենաշարով («Ֆրանսիացի հայագետներ, XIX–XX դարեր», Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2018) և շարքի հերթական հրատարակությունը («Ժան-Պիեռ Մահեն հայագետ», Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 2020): Առաջին գործն ունի ամփոփող նշանակություն. այն պարունակում է ֆրանսիական հայագիտության հիմնադիր Ա.-Ժ. Սեն Մարտենի, Վ. Լանգլուայի, Մ. Բրոսսեի, Էդ. Դյուլորիեի, Ֆ. Մակլերի, Ֆ. Ֆեյդիի հայագիտական գործերի վերլուծությունը՝ հեղինակային նորացված և կամ առաջին անգամ շրջանառության մեջ դրվող նյութերի հավելումներով, որոնք և հիմնավորում են Ա. Դոլուխանյանի վերստին անդրադարձն այս հայագետներին: Այս աշխատության մեջ ամբողջովին նորույթ է մեր ժամանակակից, ֆրանսիական հայագետների կոհորտայի ներկայացուցիչ Ժ.-Պ. Մահեի հայագիտական գործունեության վերհանումը, որ հեղինակն ամբողջացրել է հայագետին նվիրված վերոհիշյալ աշխատության հրատարակությամբ: Այստեղ Ա. Դոլուխանյանը կարևորել է Ժ.-Պ. Մահեի ուրույն վաստակը եվրոպական հայագիտության մեջ Մ. Խորենացու նոր թարգմանության (հայագետն այդ կատարել է իր կնոջ՝ նույնպիսի նվիրյալ Անի Մահեի հետ), թարգմանության առաջաբանի և խորհենացիագիտության մեջ դրա նշանակության, այլև Կորյունի երկի և Նարեկացու՝ Մահեի իրականացրած թարգմանություններին: Ա. Դոլուխանյանը հանգամանորեն և իրեն հատուկ բծախնդրությամբ խորամուխ է եղել հայագիտության ընագավառում Մահեի բերած այլ նորույթներին ևս՝ Ղևոնդի, Վարդան Արևելցու երկերի քննական վերլուծությանը, նշանավոր հայագետներին, արևելագետներին ու բյուզանդագետներին նրա տված գնահատականներին և այլն: Մեր օրերի ֆրանսիական հայագիտության այդ կարկառուն դեմքին ուղղված իր երախտիքը հեղինակն արտահայտել է «Ժան-Պիեռ Մահեի ակադեմիկոս օծվելու արարողությունը» ինքնատիպ և եզրափակիչ հատվածում: Այսուհանդերձ, ոչ առհասարակ եզրափակիչ՝ ֆրանսիական հայագետների հույժ պատկառելի վաստակի և նոր դեմքերի վերհանման տեսակետից, որովհետև Ա. Դոլուխանյանից ընթերցողն ունի նրա ազնիվ առաքելության շարունակության հիմնավոր ակնկալիքներ՝ առհասարակ եվրոպական հայագետներին անդրադառնալու առումով: Հոբելյարը դեռևս տասնյոթ տարի առաջ հրատարակել է «Հայագետները Մաշտոցի և հայոց այբուբենի մասին» (Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2005) վերնագրով, որտեղ հայ հանրությանն իրազեկել և ըստ արժանվույն է գնահատել նշված թեմայով եվրոպացի հեղինակների մտքերը:

Այս ամենի հետ կցանկանայի նշել «Եվրոպացի հայագետներ» շարքի երկու կարևոր առանձնահատկությունները: Նախ այն, որ Ա. Դոլուխանյանն այդ հայագետներին ամենուրեք դուրս է բերում զուտ անձնական գործողության շրջանակներից և ներկայացնում իրենց գիտական ու հասարակական միջավայրի հենքի վրա, որը հնարավորություն է տվել նրան՝ ցուցադրելու հայագիտական դպրոցները Եվրոպայում և Ռուսաստանում՝ ընթերցողին մատուցելով խնդրո առարկա բնագավառի ընդհանրացված արժեքները:

Եվ երկրորդ, մատենաշարի հատորներում Ա. Դոլուխանյանը հանդես է գալիս ոչ միայն իբրև արտասահմանի հայագիտության պատմաբան ու բանասեր, այլև մշակութաբան, որը դրսևորվում է նրա քննարկումների ամենատարբեր հիմնահարցերում (ազգային եկեղեցու և դավանանքի, արվեստի տարբեր ճյուղերի հետ կապված ու դրանք բնութագրող թեմաներ):

Վերն ասվածը բնավ չի սահմանափակում Ա. Դոլուխանյանի գիտական հետաքրքրությունների շրջանակները: Տարբեր տարիների իր հոդվածներով ու հրապարակումներով նա հանդես է եկել որպես հայ անցյալի և արդի գրականության պատմաբան, գրաքննադատ, բնագրագետ և ժողովրդական բանահյուսության հետազոտող: Առանձին ուշադրության են արժանի դասավանդման մեթոդիկային նվիրված և արդի հայ մանկավարժական միտքը հարստացնող աշխատությունները, մեր մտավորականներին նվիրված նրա ակնարկներն ու անաչառ բնութագրերը: Հանրապետության և արտերկրի մեջ կազմակերպված գիտաժողովներում նա հանդես է եկել նորույթներ պարունակող բազմաթիվ ուշագրավ զեկուցումներով: Գրականագետի գործունեությունը բարձր է գնահատվել պետության կողմից. արժանացել է բազմաթիվ մեդալների ու կառավարական և ստեղծագործական կառույցների մրցանակների ու պարգևների՝ ի տրիտուր իր տաղանդի և բազմաբեռ վաստակի, որոնք, ի դեպ, նշված են «Ալլիտա Դոլուխանյան. բանասերը, գիտնականը, մանկավարժը»՝ կիրթ և ճաշակով կազմված կենսամատենագիտության (Երևան, «Զանգակ» հրատ., 2017) էջերում: Թեև, պետք է ասել, որ այս կենսամատենագիտությունն ունի մեկ անխուսափելի թերություն՝ ավարտելով նրա գործունեության տարեգրությունը հրատարակության թվականով: Այս ակամա պարապուրդը եռանդով հերքում է ինքը՝ հոբելյարը՝ վերջին հինգ տարիներին գրելով տասնյակ արժեքավոր հետազոտություններ ու ապացուցելով, որ լիարժեք շարունակում է իր խմաստավորված և ավյունով լեցուն կյանքն ու գործունեությունը՝ ի հեճուկս որևէ արձանագրումների:

Մեզ մնում է ի սրտե չնորհավորել հոբելյարին, նրան մաղթել արևշատություն և արարման անսպառ տարիներ:

ԱԼԲԵՐՏ ԽԱՌԱՏՅԱՆ

Պ. գ. դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հայ պարբերական մամուլի և հասարակական մտքի պատմության բաժնի վարիչ, «Բանբեր հայագիտության» ամսագրի գլխավոր խմբագիր: Գիտական հետաքրքրությունները՝ հայ պարբերական մամուլի պատմություն, հայ գաղթօջախների պատմություն: Հեղինակ է 10 մենագրության ու ժողովածուների և ավելի քան 200 հոդվածի:
alkhar39@mail.ru

ԱԲՐԱՀԱՄ ՏԵՐՅԱՆ
(Ծննդյան 80-ամյակի առթիվ)*



ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ Աբրահամ Տերյանը ծնվել է Երուսաղեմի հայկական թաղամասում 1942 թ. ապրիլի 19-ին: Սովորել է տեղի Սրբոց Թարգմանչաց վարժարանում, որից հետո վեց տարի զբոսավար է աշխատել Սուրբ երկրում: Ուսումը շարունակել է ԱՄՆ-ում՝ Միչիգանի համալսարանում, որն ավարտել է 1970 թ.՝ իբրև հնագիտության մասնագետ, իսկ 1981-ին Շվեյցարիայի Բազելի համալսարանում ստացել է աստվածաբանության դոկտորի աստիճան:

1993 թ. տեղափոխվել է ԱՄՆ-ի Կանզասի համալսարան՝ նշանակվելով կրոնի ու փիլիսոփայության պրոֆեսոր և հումանիտար բաժանմունքի վարիչ:

1983–1985 թթ. եղել է Աստվածաշնչյան գրականության ընկերության (Society for Biblical Literature)՝ *հելլենիստական հուդայականության խմբի նախագահ:*

1979–1997 թթ. աստվածաբանության պրոֆեսոր է եղել Միչիգան նահանգի Էնդրյուս համալսարանում (Andrews University) *և դասավանդել Նոր Կտակարան, վաղ քրիստոնեական պատմություն ու գրականություն:*

1984–1987 թթ. Զիկագոյի համալսարանում հրավիրված մասնագետ-պրոֆեսորի կարգավիճակով դասավանդել է գրաբար և հելլենիստական հուդայականություն:

1997–2008 թթ. եղել է Նյու Յորքի Սբ. Ներսես ճեմարանի հայկական հայրաբանական գրականության պրոֆեսոր և գիտական գծով ղեկան, նաև խմբագրել է ճեմարանի հրապարակած հանդեսը՝ «St. Nersess Theological Review (SNTR)»*: Դանիել Ֆինդիկյանի հետ (2000 թվականից սկսած ղեկավարել է ճեմարանը) Ա. Տերյանը մեծ ջանքեր է գործադրել՝ ուսուցումը բարձրացնելու ԱՄՆ-ի և Կանադայի աստվածաբանական կրթական հաստատությունների մակարդակին:*

1982 թ. առաջին անգամ այցելելով Հայաստան՝ զեկուցումով հանդես է եկել Երևանի միջազգային հայերենագիտական գիտաժողովում: 2008 թվականից ԳԱԱ արտասահմանյան անդամ է: Մասնակցել և զեկուցումով հանդես է եկել Մաշտոցյան Մատենադարանում կազմակերպված Նարեկացիական երրորդ (2017) ընթերցումներին՝ «Նարեկեան մի քանի պատկերներու փիլոնեան նախապատկերները» զեկուցումով, որը լույս է տեսել «Բանբեր Մատենադարանի» հանդեսի 25-րդ հատորում (2018, էջ 15–

---

* *Ներկայացվել է 11. III. 2022 թ., ընդունվել է տպագրության 22. III. 2022 թ.:*

32)։ Դարձյալ Մատենադարանում հանդես է եկել Լևոն Խաչիկյանի 100-ամյակին նվիրված միջազգային հայագիտական գիտաժողովում «Հայոց ոսկեդարեան եկեղեցաբանութիւնը» զեկուցումով, որը հրատարակվել է գիտաժողովի ժողովածուի մեջ՝ ԼԵՎՈՆ ԽԱԶԻԿՅԱՆ. ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿ. «Նյութեր ակադեմիկոս Լևոն Խաչիկյանի ծննդյան հարյուրամյակին նվիրված հայագիտական միջազգային գիտաժողովի (28–30 հունիսի 2018 թ.)», Երևան, 2019, էջ 361–380։

Ա. Տերյանը դասավանդել է զանազան առարկաներ՝ հնագիտություն, հրեական փիլիսոփայություն, հին հունարեն, հին աշխարհի պատմություն, նաև դասախոսություններ է կարդացել՝ նվիրված XIX դարավերջի և XX դարի հայ գրականությանն ու հայոց ցեղասպանությանը։

Գիտնականի հիմնական ուսումնասիրությունները նվիրված են մ. թ. I դարի հունալեզու հրեա փիլիսոփա և աստվածաբան Փիլոն Ալեքսանդրացու ժառանգությանը, որի մոտ մեկ երրորդը և կարևորագույն գործերը, պահպանվել է միայն հունաբան դպրոցի հին հայերեն թարգմանությամբ։ Տերյանը հրատարակել և մանրամասն ծանոթագրել է նրա «Յաղագս բան ունել և անասուն կենդանեացդ» երկը՝ անգլերեն (Philonis Alexandrini De Animalibus, Chico, Calif., 1981) *և ֆրանսերեն* (Philon d'Alexandrie, Alexander De ratione quam habere etiam bruta animalia, e versione armeniaca, Paris, 1988) *թարգմանությամբ։ Առաջաբաններում մասնավորապես ներկայացված է Փիլոնի հայերեն թարգմանությունների ձեռագրերի ցանկը և հունաբան լեզվի քննությունը։ Փիլոն Ալեքսանդրացու երկերի նույն ֆրանսիական շարքում* (Les oeuvres de Philon d'Alexandrie) *լույս է տեսել նրա մեկ այլ կորսված հունարեն սկզբնագրով երկի՝ «Այնոցիկ որ յելսն է խնդրոց և լուծմանց» ֆրանսերեն ծանոթագրված թարգմանությունը* (Philon d'Alexandrie, Quaestiones et solutiones in Exodum, Lyon, 1992)*։*

Հունաբան դպրոցին նվիրված Տերյանի ամփոփիչ հոդվածը ("The Hellenizing School. Its Time, Place and Scope of Activities Reconsidered", Dumbarton Oaks Symposium. East of Byzantium, Syria and Mesopotamia in the Formative Period, Washington, 1982, pp. 175–186) *պարտադիր օգտագործում են այդ դպրոցն ուսումնասիրող բանասերները։*

2012 թ. «Hebrew University Armenian Studies» *մատենաշարի 14-րդ հատորում (մատենաշարի խմբագիր՝ Մայքլ Սթոուն) հրատարակել է Գրիգոր Մագիստրոսի մեծադիր պոեմը, որը հայագիտության մեջ պայմանականորեն կոչվում է «Հազարատողեան» կամ «Առ Մանուէէ»*[1]*, քննական բնագիրը՝ անգլերեն թարգմանությամբ և ծանոթագրություններով։ Տերյանը նախընտրել է պայմանական վերնագիր՝ «Զմեծամեծս աստուծոյ»՝* "'Magnalia Dei.' Biblical History in Epic Verse by Grigor Magistros, Critical Text, with Introduction, Translation, and Commentary (Hebrew University Armenian Studies 14), Leuven – Paris – Walpole, MA, 2012»*։ Նա ցույց է*

[1] *«Մատենագիրք հայոց» մատենաշարի ԺԶ հատորում (Երևան, 2012) նույն պոեմի մեր կազմած բնագիրը ձեռագրերի հետևությամբ խորագրված է «Տաղասացութիւնք» (էջ 139–196)։*

տվել, որ Մագիստրոսի ընդդիմախոսն Աբբասեան խալիֆայության վեզիր, աստվածաբան ու բանաստեղծ Աբու Նասր ալ-Մանազին[2] էր:

2016 թ. Ա. Տերյանի աշխատասիրությամբ լույս է տեսել Գրիգոր Նարեկացու տոնական ստեղծագործությունների՝ տաղերի, գանձերի, ներբողների անգլերեն թարգմանությունն ընդարձակ ուսումնասիրությամբ հանդերձ՝ «The Festal Works of St. Gregory of Narek: Annotated Translation of the Odes, Litanies, and Encomia. A Pueblo book. Collegeville, MN: Liturgical Press, 2016» *Նարեկացու այդ երկերն առաջին անգամ են անգլերեն թարգմանվել: Գրքի հավելվածում թարգմանված և ծանոթագրված են Գրիգոր Նարեկացու կենսագրության փաստերն ամփոփող պահպանված բոլոր աղբյուրները:*

Տերյանի մյուս գրքերից նշենք հետևյալները. «Հայրենասիրությունը և բարեպաշտությունը հայկական քրիստոնեության մեջ»՝ «Patriotism and Piety in the Armenian Christianity (Crestwood, NY, 2005)»*: Գրքում նա ցույց է տվել, որ այդ երկու թեմաների զուգակցումը լավագույնս արտահայտված է Գրիգոր Լուսավորչի միջնադարյան ներբողներում, մասնավորապես՝ Հովհաննես Երզնկացու հեղինակածում: Վերջինս ներկայացված է անգլերեն ծանոթագրված թարգմանությամբ, որին հետևում է ուրիշ ներբողների ընտրանի՝ ևս թարգմանված:*

Տերյանի «Հայերեն Տղայության Ավետարանը»՝ «The Armenian Gospel of the Infancy (Oxford, 2008)» *գիրքն ընդգրկում է նորկտակարանյան այդ պարականոնի (թարգմանվել է VI դարում այսօր չպահպանված ասորերեն սկզբնագրից) անգլերեն թարգմանությունը հայերեն պահպանված հնագույն ձեռագրից: Ընդարձակ ծանոթագրություններում բերված են բազմաթիվ զուգահեռ բնագրեր: Գրքի հավելվածում թարգմանաբար ներկայացված են Տղայության Ավետարաններից վաղագույնի՝ Հակոբի Նախաավետարանի երեք խմբագրությունները:*

«Մակար Երուսաղեմացու թուղթ ի հայս»՝ «Macarius of Jerusalem: Letter to the Armenians (Crestwood, NY, 2008)» *գրքում Տերյանը անգլերեն է թարգմանել և ուսումնասիրել Վրթանես կաթողիկոսին 335 թ. հղված նամակը (Գիրք թղթոց, Երուսաղեմ, 1994, էջ 1–9 և Կանոնագիրք հայոց, հ. Բ, Երևան, 1971, էջ 216–230), որում քննված են հայոց եկեղեցու ծնունդ առնող կարգերը, մասնավորապես՝ մկրտությունն ու հաղորդությունը: Նա բացահայտել է նախանիկիական հայկական քրիստոնեության կարևոր գծեր, նրա սերտ առնչությունը մկրտության և հաղորդության ասորական ավանդույթների հետ, որոշել հայոց եկեղեցու պատմության այս վաղագույն վավերագրի ժամանակը:*

Ա. Տերյանի նորագույն աշխատությունն է «Հաճախապատում ճառերի» թարգմանությունը՝ «Moralia et Ascetica Armeniaca: The Oft-Repeated Discourses (Fathers of the Church Patristic Series) Hardcover –

---

[2] *Ա. Տերյանը նշում է, որ արաբական «Մանազի» անվան ձևը երկու տառի փոփոխությամբ դարձել է «Մանուչի» / «Մանուչէ» (ավանդված միայն մեկ ձեռագրում), որն ընկալվել է որպես պարսկական Մանուչեհր անվան սղված տարբերակ:*

February 1, 2022». *Նա մերժում է Գրիգոր Լուսավորչին և Մեսրոպ Մաշտոցին այս ճառերը վերագրելու ավանդույթներն ու եզրակացնում, որ հեղինակը VI դարավերջի մի անանուն վանական է: Ճառերի խորագիրն ինքնին չեշտում է վանական միջավայրը, որտեղ դրանք բազմիցս կրկնվել են նորաթուխ եղբայրների համար: Դրանցում արտացոլվել են արևելյան եկեղեցու հայրերին հոգեհարազատ աստվածաբանական թեմաները: Ճառերը լեցուն են սուրբգրային մեջբերումներով և պատկերներով, ավանդական քրիստոնեական բարոյախոսությամբ, որը ներառել է ուշ անտիկ շրջանի բարոյախոսության շատ տարրեր: Մի քանիսում պարզ երևում են Բարսեղ Կեսարացու մտքի արձագանքներ, կան նրա կանոնների հետևությամբ գրված հատվածներ:*

Առաջիկայում լույս կտեսնի Կորյունի «Վարք Մաշտոցի» երկի՝ Ա. Տերյանի նոր անգլերեն թարգմանությունը[3] «The Life of Mashtots‘ by His Disciple Koriwn» *վերնագրով: Ինչպես և նրա մյուս թարգմանությունները, այս աշխատությունը ևս օժտված է ընդարձակ առաջաբանով ու մանրակրկիտ ծանոթագրություններով:*

Սույն թվականի մարտի 2-ին Ա. Տերյանն իր տիկնոջ հետ մասնակցել է Հռոմի Ֆրանցիսկոս պապի ավանդական ունկնդրությանը, այնուհետև անձամբ ողջունել նրան և նվիրել իր գրքերից երեքը, այդ թվում՝ վերջերս հրատարակված ու փետրվարի 28-ին Վատիկանի Ս. Թովմաս Աքվինացու անվան քահանայապետական համալսարանում ներկայացված Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» երկի իր ծանոթագրած թարգմանությունը (From the Depths of the Heart: Annotated Translation of the Prayers of St. Gregory of Narek)՝ *ստանալով պապի գնահատանքն ու օրհնությունը:*

Ա. Տերյանի այցելությունները Հայաստան միշտ իրադարձություն են ակադեմիական շրջանակներում. իր բարեկիրթ, զուսպ ու համակրելի կերպարով, հարուստ գիտելիքներով, գեղեցիկ և անբռնաղբոս արևմտահայերենով՝ միշտ հետաքրքիր ու հաճելի զրուցակից է հայագետներիս համար:

ԳՈՀԱՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Բ. գ. դ., Մ. Մաշտոցի անվ. Մատենադարանի թարգմանական գրականության բաժնի վարիչ: Գիտական հետաքրքրությունները՝ անտիկ և հայ միջնադարյան գրականություն, հայ-հունական միջնադարյան գրական կապեր: Հեղինակ է 10 մենագրության և 52 հոդվածի:
gohar_muradyan@yahoo.com

[3] *Գոյություն ունի մի հին թարգմանություն՝* Koryun. The Life of Mashtots, translated by Bedros Norehad, New York, 1964, *արտատպված հետևյալ գրքերում՝ Կորյուն, Վարք Մաշտոցի, խմբ. Է. Ա. Պիվազյանի (Երևան, 1981) և* Vark‘ Mashtots‘i: Life of Mashtots by Koriun, with an introduction by Krikor H. Maksoudian (Classical Armenian text reprint series), Delmar: Caravan Books, 1985.

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՀՀ ԳԱԱ ԹՂԹԱԿԻՑ ԱՆԴԱՄ ԼԵՎՈՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ՀԵՏ
(Ծննդյան 75-ամյակի առթիվ)*



ԳԱՅԱՆԵ ՇԱԳՈՅԱՆ – Չնայած գիտնականների կայացումը տեղի է ունենում հասուն տարիքում, սակայն մանկավիտուլթյան ընտրուլթյունն ու որոշակի աչխարհայացք չատերի մոտ ձևավորվում է վաղ տարիքից: Դրա համար պիտի խնդրեմ պատմեք ձեր առաջին ուսուցիչների մասին:

ԼԵՎՈՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ – Տատիկիս եմ համարում կյանքիս առաջին ուսուցիչը: Որ պատկերացնեք՝ ինչ նկատի ունեմ, պատմեմ մի դրվագ: Խորհրդային տարիներն էին, Սիբիրում մի կորեական ինքնաթիռ վթարի ենթարկվեց, և բոլորը զոհվեցին: Երբ ռադիոյով դա հայտնեցին, տատիկիս ողբը, ցավն այդ անծանոթ մարդկանց համար իմ կյանքի առաջին դասերից դարձավ. ես հասկացա՝ ինչպես է հնարավոր ուրիշի ցավն ընդունել որպես քոնը:

Մյուս ուսուցիչս ինձ հետ տանն անգլերեն պարապող Ղազարոս Զկրյանն էր: Նա հունահայ էր, միակն էր, ով եղեռնին ողջ էր մնացել իրենց մեծ ընդարձակ տնից, մեծացել Հունաստանի ամերիկյան որբատունը, հետո տեղափոխվել Հայաստան: Բժշկական ինստիտուտում անգլերեն էր դասավանդում, սակայն մի անմեղ անեկդոտի համար աքսորել էին Սիբիր: Այնտեղ թոքախտով հիվանդացավ, վերադարձավ Հայաստան, և այդ հիվանդությունից էլ մահացավ: Բացի անգլերենից, ես նրանից սովորեցի ինչպես հրաժարվել ատելությունից, նույնիսկ դաժան փորձություններից հետո:

Կյանքի մի կարևոր ուսուցիչ էլ եմ ունեցել. դա նկարիչ Հակոբյան Ղարիբջանյանն էր: Նա մեծ ազդեցություն է թողել ինձ վրա: Ես այն քչերից էի, ով իր մոտ գնալու իրավունքն ուներ: Մեզ ծանոթացրեց Մինասը: Առիթն այն էր, որ 1971 թ. երիտասարդ նկարիչների ցուցահանդեսին իմ մի գրաֆիկական նկարն ընդունվել էր, իսկ մյուսը՝ «1911 թ. անմոռանալի առավոտը» մերժվել: Մինասը ժյուրիի անդամ էր. նա հավանել էր աշխատանքը և անպայման ուզում էր ներգրավել այն ցուցահանդեսում: Երեք փուլ նկարիս համար պայքարել էր, և այն, ի վերջո, ընդունել էին: Սակայն վերջին խոսքը ժյուրիի որոշումից հետո պատկանում էր կոմերիտմիության հատուկ հանձնաժողովին, որը և այն մերժեց: Այդ ժամանակ Մինասը ինձ տարավ Ղարիբջանյանի մոտ: Ինքը երկար զննեց նկարը և գոհ մնաց: Ղարիբջանյանը ռեստավրատոր էր, մեկուսացած էր ապրում: Նա Սուրմալուից ընտանիքի հետ մանուկ հասակում գաղթել էր Թիֆլիս, որտեղից էլ իր գերմանուհի կնոջն ու աղջկան երկրորդ

---

* *Ներկայացվել է 31. III. 2022 թ., ընդունվել է տպագրության 01. IV. 2022 թ.:*

աշխարհամարտի ժամանակ աքսորել էին Ղազախստան, այնտեղից էլ նրանք Գերմանիա տեղափոխվեցին, և իրենց կապն ընդհատվեց: Ղարիբջանյանին համարում եմ իմ գիտակից կյանքի իսկական ուսուցիչը, թեև դժվար է ասել՝ ինչումն էր ուսուցիչ: Նա ինձ չի սովորեցրել նկարել կամ ինչ-որ կոնկրետ բան անել, բայց ինձ հրապուրում էր իր մոտեցումը կյանքի հանդեպ: Իր ասածներից մտապահվել է մի դրվագ. երբ տան դռներից մեկն էր նորոգում, սակայն այնպես, կարծես, դա արվեստի գործ լիներ: Եվ դա անելուց ասաց. «Գործը պետք է այնպես անես, կարծես, առջևում անվերջություն է»: Սովորաբար հակառակն են ասում՝ պետք է այնպես ապրել, որ, կարծես, վաղը վերջին օրն է: Ղարիբջանյանի մոտեցումը դրան հակառակն էր:

Գ. Շ. – Կհիշե՞ք այն պահը, երբ որոշեցիք թողնել ֆիզիկան և զբաղվել ազգագրությամբ:

Լ. Ա. – Ինձ միշտ հետաքրքրել է մշակույթի, մարդկային հասարակության կայացման հարցը: Ուսանողական տարիներին արդեն սկսել էի գրել «Զրույցներ ծառի մոտ» աշխատանքը: Ինձ համոզեց դա անել Վարդան Հայրապետյանը, ում հետ շփումը մեծ ազդեցություն է թողել ինձ վրա: Շատ խնդիրներ, որ հետո ներառվել են գրքումս, իր հետ ենք քննարկել: Այսինքն՝ ես արդեն սկսել էի զբաղվել նրանով, ինչ կարելի է անվանել ազգագրություն, բայց ո՛չ խորհրդային ակադեմիական ազգագրությամբ, ո՛չ նրանով, ինչ ընդունված էր այդպիսինը համարել: Ֆիզիկայի ֆակուլտետն ավարտելուց հետո ես երկու տարի աշխատել եմ նույն ֆակուլտետում, դասավանդել եմ մոլեկուլյար ֆիզիկա: Սխալ է մտածել, որ ֆիզիկոս էի ու հետո մի օր փոխեցի մասնագիտությունս: Ես զուգահեռ միշտ հետաքրքրվել եմ նախնադարով՝ արխայիկ մշակույթով, փորձել եմ դրան մոտենալ տարբեր տեսանկյուններից: Երբ առաջին կուրսում էի, արդեն հրապուրված էի Զոլոտարյովի աշխատանքով՝ և դրա հիման վրա սահմանել էի ինձ հետաքրքրող խնդիրների դաշտը: Այդ գրքի ազդեցությամբ էր, որ սկսել էի հետաքրքրվել նաև երկվորյակներով, և նրանց մասին աշխատանքս գրել եմ նույնպես ուսանողական տարիներին:

Քանի որ իմ համակուրսեցի Հրանտ Առաքելյանի տանը ուսանողական տարիներին հաճախ էինք լինում, իսկ նրա հայրն ակադեմիկոս Բաբկեն Առաքելյանն էր՝ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրենը, վերջինս առաջարկեց հանդիպել ինստիտուտի ազգագրագետներին ու նրանց հետ զրուցել՝ հասկանալու, թե որքանով իմաստ ունի ազգագրության ոլորտում շարունակել իմ պլպտումները: Ծանոթացրեց Դերենիկ Վարդումյանի, Էմմա Կարապետյանի հետ: Վարդումյանը իսկական ազգագրագետ էր. ահագին նյութ էր հավաքել, և, շատ ափսոս, որ փունդամենտալ աշխատանք չթողեց: Ուզում եմ մի դեպք պատմել: Մոսկվայում, ուր բոլորս միասին մեկնել էինք մասնակցելու գիտաժողովի, և մեզ հյուրընկալել էր Սերգեյ Հարությունովը, մի քննարկում ծավալվեց իր տանը: Ես պնդում էի, որ եթե սև կատուն կտրում է ճանապարհը, ապա մարդաբանը պիտի հետազոտի, թե ինչու են, ի պատասխան դրան, պատրաստում ձախ կողմով, և ինչ է ճանապարհի սկիզբն ու վերջը: Վարդումյանը հակաղարձեց, որ «եթե դու ազգագրագետ ես, դու պետք է ուսումնասիրես՝ ինչո՞ւ կատուն, և ինչո՞ւ Հայաստանում»: Ի միջի այլոց, ճիշտ

[1] А. М. Золотарев. Родовой строй и первобытная мифология. М., 1964.

էր ասում. դա ազգագրական խնդիր էր, բայց ինձ չէր հետաքրքրում: Հարությունովն անսպասելիորեն իմ կողմը կանգնեց՝ չմերժելով Վարդումյանի մոտեցումը, բայց նաև կարևորելով իմ առաջարկած հարցադրումը:

Այդ դիտաժողովի ընթացքում որոշվեց նաև իմ ապագա ղեկավարի հարցը. ինձ հետ համաձայնեց աշխատել Նախնադարյան պատմության բաժնի վարիչ Աբրահամ Պերչիցը: Այդպես, 1974 թվին դարձա ազգագրության գծով ասպիրանտ: Դա վճռորոշ տարի էր, քանի որ ես մտածում էի նաև իմ ապագան կապել կինոյի հետ և երկմտանքի մեջ էի: Բանն այն էր, որ ուսանող տարիներին նկարահանվել էի «Նռան գույնը» ֆիլմում և հակված էի շարունակել աշխատանքը կինոյում՝ կրելով Սերգեյ Փարաջանովի մեծ ազդեցությունը: Սակայն հենց այդ տարի՝ 1974 թ., նրան ձերբակալեցին, և Անդերսենի մասին նկարահանվելիք հաջորդ ֆիլմում իր հետ համագործակցելու ծրագրերը հօդս ցնդեցին:

Գ. Շ. – Մոսկվայում ասպիրանտուրայում սովորելու տարիներից կվատմե՞ք:

Լ. Ա. – *Ինձ շատ բան տվեցին այդ տարիները, բայց ոչ այնքան ինստիտուտը, որքան իմ իսկական ուսուցիչը՝ Վլադիմիր Տոպորովը: Այն, ինչով ես զբաղվում էի, դա, փաստորեն, նշանագիտություն էր: Շատերին թվում է, թե ուսուցիչ լինելն այն է, որ աշակերտին հատ-հատ ուղղություն ես ցույց տալիս, քննադատում, պարտադրում ինչ-որ բաներ կարդալ կամ գրել: Դա սխալ պատկերացում է. այդպես դպրոց չի ծնվում: Իսկական ուսուցչի միջամտությունը լինում է աննկատ՝ մտքի մի փոքր ճեղք բացելով, որը վերածվում է լայն ճանապարհի: Այդպիսինն էր նաև Վյաչեսլավ Իվանովը, ով դարձավ իմ ատենախոսության ընդդիմախոսը և առաջին գրքիս գիտական խմբագիրը*[2]*: Նա ուներ զարմանալի հատկություն՝ մի փոքր դիտարկում անել, որը բացում էր հետազոտության նոր ասպարեզ: Իսկ Տոպորովը զգում էր՝ ինչ է ինձ հարկավոր տվյալ պահին: Օրինակ՝ մի անգամ զրույցի ընթացքում, ինձ առաջարկեց մի առանձնատիպ, որն ուղղակի կապ չուներ քննարկվող թեմայի հետ՝ ասելով՝ «Համոզված եմ՝ սա Ձեզ կհետաքրքրի»: Դա Կյոյպերի հայտնի հոդվածն էր, որը տարիներ հետո թարգմանվեց*[3]*: Առանձնատիպը հեղինակն էր իրեն նվիրել: Հիմա այդ հոդվածը ես պարտադիր հանձնարարում եմ ուսանողներիս: Այն պահին հոդվածն ինձ համար շատ կարևոր դեր խաղաց, բայց որտեղի՞ց ինքն իմացավ, ո՞նց հասկացավ, թե որքան ունեմ ղրա կարիքն այդ պահին, չեմ կարող ասել:*

Գ. Շ. – Երևան վերադառնալուց ինչո՞վ սկսեցիք զբաղվել:

Լ. Ա. – *Երբ ասպիրանտուրայից հետո վերադարձա Երևան, չորս ընկերներով սկսեցինք գրել թվերի մասին մի աշխատանք: Դա չորսիս մեջ ծավալվող երկխոսություն էր՝ մեկը փիլիսոփա-մաթեմատիկոս Հրանտ Առաքելյանն էր, մյուսը՝ բանասեր Վարդան Հայրապետյանը, և երկու ազգագրագետ՝ Արա Գուլյանն ու ես: Մենք չուրջ երկու տարի ամեն չորեքշաբթի հանդիպում էինք, զրուցում մի թեմայի չուրջ, որը հետո վերածվում էր գրավոր տեքստի:*

---

[2] Л. А. А б р а м я н. Первобытный праздник и мифология. Отв. ред. Вяч. Вс. Иванов. Ереван, 1983.

[3] Ф. Б. Я. К е й п е р. Космогония и зачатие: к постановке вопроса. – В кн.: Ф. Б. Я. К е й п е р. Труды по ведийской мифологии. М., 1986, с. 112–146.

Զորսիցս մեկն այն չարաղրում էր, հաջորդ հանդիպմանը դա քննարկում էինք, խորացնում, գրույցի զարգացումը մեկ ուրիշն էր չարաղրում և այլն: Մեր՝ այդ ռուսերեն գրույցները կոչվում էին՝ «Беседы о круглых и абсолютных числах». *«Բացարձակ թվերը» ներկայացնում էր Հրանտը, իսկ «կլոր թվերը»՝ Վարդանը, Արան ու ես այդ երկու տեսանկյուններին միս և արյուն էինք հաղորդում՝ այն լցնելով ազգագրական նյութով, էպոսից դրվագներով: Այդ գործը մնաց անավարտ՝ չնայած գրույցները վերածվեցին մի ծավալուն ձեռագրի և, հույս ունեմ՝ այն կհրատարակենք, հատկապես, որ երկու հիմնական ընդդիմախոսներն, ավաղ, այլևս չկան: Մեզ հետաքրքիր էր միտքը, գործընթացը:*

Գ. Շ. – Ատենախոսությունը հաջրեցի՞ք երեք տարում դրել:

Լ. Ա. – Այո՛, հաջրեցի՛, ավելին, այդ ժամանակ պարզվեց, որ ես պետք է ընդհանուր պատմությունից հավելյալ քննություն հանձնեմ: Մի ահռելի ծավալ էր, որը հաղթահարեցի երկու ամսում՝ մեծ ստրես ապրելով: Դա ոչ թե քննության ծավալի պատճառով էր, այլ որովհետև շատ կարճ ժամանակում ստիպված էի ողջ մարդկության պատմությունը տեսնել խտացրած և խտացրած տեսնել մարդկային ստորությունը: Բոլոր սպանությունները, պատերազմները և դավաճանությունները, մեկը մյուսին հետևելով, ստեղծում էին մարդկային պատմության շատ տխուր պատկեր: Այդ դառը զգացողությունը մինչև հիմա մնացել է, ինչպես նաև մնացել է պատմության հանդեպ որոշակի հակակրանք: Մինչդեռ մեր գիտությունը պատմական գիտությունների ենթագիտություն է համարվում, ինչը թյուրիմացություն է: Սա գալիս է 1932 թվից, երբ տեղի ունեցավ մի խորհրդակցություն, և որոշվեց մեր գիտության տեղն ու «օժանդակ» կարգավիճակը: Մինչև հիմա գիտությունների այս նույն աստիճանակարգը վերարտադրվում է թե՛ Ակադեմիայի համակարգում, թե՛ համալսարանում՝ համապատասխանելով պատմության «էվոլյուցիոնիստական» մեկնաբանությանը: Առաջին կուրսում սովորում են նախնադարյան հասարակության պատմություն, որ տեսությունների առումով ամենաբարդն է, բայց անցնում են սկզբից, որպեսզի տեղավորվեն այդ էվոլյուցիոն զարգացման տրամաբանության մեջ, հետո անցնում միջնադար, հետո՝ նոր շրջան: Ազգագրությունն էլ, դրա մասը կազմելով, նույն տրամաբանությամբ էր մատուցվում: Հիմա էլ է այս ավանդույթը նույն ձևով շարունակվում:

Գ. Շ. – Ի՞նչ մարդաբանների եք հանդիպել, ո՞ւմ եք հիմա ընկալում որպես Ձեր ոլորտի դասական:

Լ. Ա. – 1988 թ. Մոսկվայում Ղարաբաղյան շարժումն ազգագրական տեսանկյունից զեկուցումս առիթ դարձավ ծանոթանալու ազգայնականությունն ուսումնասիրող դասականներից հայտնի Էռնեստ Գելլների հետ: Մոսկվայից բացի, այլ առիթներ էլ եմ ունեցել իրեն հանդիպելու: Մյուս անգամ Պրահայում հանդիպեցինք, երբ մասնակցում էինք Մարդաբանների կոնգրեսի՝ «Գաղտնի ոստիկանության» նվիրված նիստում: Ես նախատեսված չէի որպես զեկուցող, բայց մի ռումինացի հետազոտողի զեկուցումն ինձ մոտ այնքան զուգահեռ գաղափարներ հուշեց, որ դիմեցի Գելլներին՝ չնախատեսված ելույթ ունենալու առաջարկով: Պահի տակ ծնված զեկուցումս հետագայում

տպագրվեց և՛ անգլերեն[4], և՛ ռուսերեն[5]: Նրան հետագայում նաև ԱՄՆ-ում եմ հանդիպել՝ Պիտսբուրգում: Պայմանավորվեցինք հանդիպել Պրահայում՝ իր ինստիտուտում, սակայն նա չուտով մահացավ:

Շատ կարևոր մարդկանց եմ հանդիպել, բայց մի՛շտ չէ, որ այն ժամանակ գիտակցում էի իրենց կարևորությունը, վատ գիտեի աշխատանքները, երբեմն չէի լսել: Պետք է հաշվի առնել, որ մեզ գրականությունը ուշ էր հասնում (եթե հասնում էր), և հետո էի իմանում, թե ինչպիսի մեծանուն գիտնականների հետ եմ եղել նույն տարածքում, նույն գիտաժողովին կամ նույն ֆակուլտետում դասավանդել:

Այդպիսի մի իրավիճակ ստեղծվեց, երբ Նյու Յորքում էի առաջին անգամ, և Սեպուհ Ալանյանը մի՛ջամտեց, որ ինձ հրավիրեն Նյու Յորքի համալսարանում մի սեմինար անցկացնելու: Նա ծանոթացրեց ինձ Էրիկ Հոբսբաումի հետ, ում աշխատանքները ես հիմա պարտադիր հանձնարարում եմ ուսանողներիս: Իր և համախմբագրի՝ Թրեվոր Ռոջերի գիրքը[6] լույս էր տեսել 1983-ին և գնահատվել որպես գիտական հեղաշրջում, սակայն մեզ մոտ նույնիսկ տաս տարի անց այն ղեռ մնում էր անհասանելի: Ես այն ժամանակ այդ աշխատանքին ծանոթ չէի: Ինքն այնտեղ էր դասավանդում, և, պարզվում է՝ երբ իմանում է, որ ելույթ եմ ունենալու, խնդրում է Սեպուհին իրեն տալ իմ աշխատանքներից: Ես էլ ունեի անգլերեն գրած մի երկու հոդված, որոնք ԱՄՆ-ում տպվել էին, և դրանք փոխանցեցի: Նա կարդաց իմ հոդվածները և միայն դրանից հետո ուզեց հետս հանդիպել: Հիշում եմ նրա՝ հոդվածի վրա հիմնված խորը և հետաքրքիր հարցերը: Իսկ ես չգիտեի՝ ինքն ով է, ու հետո, երբ իմացա, կարդացի իր աշխատանքները, շատ էի ափսոսում տարբեր հարցեր քննարկելու բաց թողած հնարավորության համար …

Նման բացթողում էլի եմ ունեցել: Օրինակ՝ 1997 թ. հանդիպումս հայտնի Ջեյմս Սքոթի՛[7] հետ: Այսօր իր անունով երդվում են շատ մարդաբաններ, սոցիոլոգներ, իսկ ես իրեն կարողացա հանդիպել, քանի որ նա մտերիմ էր իմ ընկերուհու՝ Ուլլա Կաստենի հետ, ով Յելի համալսարանի Բաբելոնյան հավաքածուի կուրատորն էր: Սքոթը մեզ ճաշի հրավիրեց իր փերմայում: Հայտնի է, որ նա նախընտրում է ապրել փերմերի կյանքով, և ունի հիանալի աշխատանք գյուղացիության մասին: Այն ժամանակ ես նույնպես չգիտեի իր աշխատանքները. դրանք համեմատաբար վերջերս սկսեցին շրջանառվել մեզ մոտ:

Երբ Բրյուքլինում դասավանդում էի, նույն մարդաբանության ամբիոնում էր աշխատում հայտնի Ալեն Դանդեսը: Սա այն դեպքն էր, որ շատ լավ գիտեի աշխատանքները, հրապուրված էի դրանցով և ուզում էի հանդիպել, բայց ամաչում էի: Եվ երբ այդ ամբիոնում պիտի մի զեկուցում կարդայի, դրա մասին հայտարարությունն էլ նկարազարդել էի իմ ծաղրանկարներով, հետաքր-

---

[4] L. A b r a h a m i a n. The Secret Police as a Secret Society: Fear and Faith in the USSR. – "Anthropology & Archeology of Eurasia", v. 32, 1993 – Issue 3, pp. 12–31.

[5] Л. А. А б р а м я н. Тайная полиция как тайное общество: страх и вера в СССР. – «Этнографическое обозрение», 1993. № 5, с. 35–42.

[6] E. H o b s b a w m. T. Ranger (eds), The Invention of Tradition. Cambridge, 1983.

[7] *Տե՛ս* https://politicalscience.yale.edu/people/james-scott.

քիր վերնագիր էի դրել, հույս ունեի, որ կնկատի, կգա և կծանոթանանք: Ջեկով, և արդեն հասկացա, որ այլ առիթ չեմ ունենա, եթե ինքս չդիմեմ իրեն, քանի որ մեկնելուս ժամանակն էր: Անդլերեն հոդվածներիցս ընտրեցի մի քանիսը և գնացի իր մոտ: Ջափազանց ջերմ և լավ ընդունեց, հոդվածներս նայեց, հավանեց, և շատ զարմացավ, որ այսքան ժամանակ եղել եմ նույն ամբիոնում ու չեմ մոտեցել: Ցավոք, երբ երկրորդ անգամ էի հրավիրվել դասավանդելու նույն համալսարանում, նա արդեն չկար:

Եվս մի կարևոր և ինձ համար չափազանց պատվաբեր ծանոթություն եմ ունեցել Քլիֆորդ Գիրցի հետ, ով այսօր աներկբա դասականներից է ... Այս բոլոր մարդկանց, որ թվարկում եմ, իմ դասավանդվող դասընթացի պարտադիր հեղինակներից են: Պրինստոնում պիտի ելույթ ունենայի՝ ազգայնականության չորս մոդելների մասին էի խոսելու: Ու միայն կարելի է պատկերացնել հուզմունքս, երբ սեմինարին տեսա այնտեղ նստած Գիրցին, որը եկել էր ինձ լսելու, և շատ լավ ընդունեց ասածներս:

Իհարկե, շատ այլ հանդիպումներ նույնպես եղել են. օրինակ՝ Ստենլի Թամբիայի, Քեորին Վերդերիի, Ալեքսեյ Յուրչակի և այլ հետաքրքիր գիտնականների հետ, բայց շատ կերկարի խոսքս, եթե բոլորի մասին պատմեմ:

Գ. Շ. – Ուզում եմ մի քիչ խոսենք արդեն հրատարակած այն աշխատանքներից, որոնք չարունակելու հնարավորությունն և նպատակ կա:

Լ. Ա. – Երևի անդրադառնամ մեր՝ մեծ խմբով գրված գրքին, որը լույս տեսավ Ինդիանա համալսարանի հրատարակչությունում, և որի համախմբագիրներն էինք ես ու Նենսի Սուիդին, ով այդ գիրքը գրելու նախաձեռնողն էր: Այդ մասին նախկինում շատ եմ պատմել, հիմա միայն կանդրադառնամ դրա շարունակության հետ կապված հարցերին: 2016 թ. ԱՄՆ-ի Սմիթսոնիան հաստատության ներկայացուցիչ եկավ Հայաստան, և համագործակցությունն սկսվեց Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ու Վաշինգտոնի Սմիթսոնիան հաստատության միջև, որը շարունակվեց հինգ տարի: Այդ ընթացքում ներգրավվեցինք 2018 թ. Վաշինգտոնում անցկացվող ամենամյա Ազգագրական փառատոնի հայաստանյան ծրագրի մշակմանն ու իրականացմանը: Այս ծրագրի համար հավաքված նյութը, հուսամ, կընդգրկվի հայկական ժողովրդական մշակույթին նվիրված նոր հատորում, որի վրա արդեն սկսել ենք աշխատել: Փառատոնի աշխատանքներին ներգրավված էին չորս կուրատորներ՝ Ծատուրյան Ռուզանը, Սաթենիկ Մկրտչյանը, ես և մեր ամերիկացի գործընկեր Հայլե Բուտվինը: Սմիթսոնիան հաստատության փառատոնյան պատմության առաջին դեպքն էր, երբ համակարգման աշխատանքներին մասնակցում էին տեղացի ազգագրագետներ, և, իրենց կարծիքով, շատ հաջող փորձ ստացվեց: Ըստ փառատոնի կազմակերպիչների՝ տաս օրերի ընթացքում շուրջ 800.000 մարդ էր այցելել:

Գ. Շ. – Տարիներ առաջ Դուք մեկ այլ կարևոր ցուցահանդեսի համակարգող էիք. խոսքս պոլինեզական մշակույթի ցուցահանդեսի մասին է:

Լ. Ա. – Այդ ցուցահանդեսը ԽՍՀՄ ակադեմիայի և հավաքածուի սեփականատերեր՝ Նիկոլայ Միշուտուշկինի ու Ալոիս Պլիոկոյի համատեղ ծրագիրը էր: Միշուտուշկինը Ֆրանսիայում ծնված ռուս էր, սպիտակ էմիգրացիայի զավակներից, հայրը եղել է գեներալ: Պլիոկոն պոլինեզացի նկարիչ էր: Այս հավաքածուն ներառում էր Պոլինեզիայի և Մելանեզիայի ազգագրական նյութե-

րից՝ ծխական ու կենցաղային առարկաներ, արվեստ և այլն: Աշխարհի ամենահարուստ հավաքածուներից մեկն էր: 1979 թ. այդ ցուցահանդեսը խորհրդային մի քանի քաղաքներում ներկայացրեցին՝ այդ թվում Երևանում ու Թբիլիսիում: Երևանի ցուցահանդեսի կուրատորը ես էի՝ նշանակված Ակադեմիայից, քանի որ այդ ոլորտի քիչ մասնագետներից էի: Դա մի երջանկություն էր, քանի որ Ավստրալիա և Օվկիանիա չէի կարող գնալ, բայց այն-տեղի մշակույթն ինքն էր եկել, և ես հնարավորություն ունեի ձեռք տալ, աշխատել այդ նմուշների հետ, ծանոթանալ ու չփվել այդ զարմանալի մարդկանց հետ: Հայաստանում ցուցահանդեսը երկու տեղ արեցինք՝ և՛ Երևանում՝ Նկարչի տանը, և՛ Սարդարապատի ազգագրության թանգարանում: Երբ ցուցահանդեսը տեղափոխեցին Մոսկվա, ես նորից նշանակվեցի համակուրատոր: Ցուցահանդեսն ուղեկցվում էր տարբեր միջոցառումներով՝ ֆիլմերի ցուցադրությամբ, պլիոկոն ճեղքային թմբուկ էր նվագում և այլն: Ես էլ մի նոր մոտեցում առաջարկեցի, որ Միշուտուչկինը չատ հավանեց և իրագործեց: Բանն այն է, որ թանգարանում ցույց տրվող ծխական առարկաների մի մասը նախատեսած չեն ցուցադրության համար, բայց ցուցադրվում են: Ինձ դա մտահոգում էր. ես գտնում էի՝ սխալ է այդ սրբազան առարկաները, որոնք արգելված էին կանանց, նվիրագործումը չանցած տղաների համար, դնել ընդհանուր ցուցադրության մեջ: Եվ առաջարկեցի սրբազան հատվածի համար հրաժարվել բացատրագրերից, ու, քանի որ, բացի ինձանից, այնտեղ էին հրավիրված ազգագրագետներ նաև Մոսկվայից, Լենինգրադից և Նովոսիբիրսկից, որտեղ այդ ցուցահանդեսն արդեն եղել էր, որ մենք լինենք այն «ծխական էքսպերտները», որոնք բոլոր ցեղերում կան, և մենք մեր բանավոր բացատրություններով կվերականացնենք «ինիցիացիա»՝ «նվիրագործում», ու չմացողին կզարձնենք իմացող, այլ ոչ թե կեժանացնենք ցուցանմուշը՝ գրելով՝ սա ուղղակի սրբազան առարկա է: Այս մոտեցումը գործեց այն պատճառով, որ ցուցադրության աշխատանքներում ներգրավված էին ոլորտի նեղ մասնագետներ, ովքեր տիրապետում էին այնպիսի գիտելիքի, որ կարող էին հանդես գալ «ծխական էքսպերտի» դերում: Մեր այս փորձի մասին 2012 թ. զեկուցել եմ Երևանում անցնող ICOM-ի տարեկան միջազգային գիտաժողովի պլենար նիստում:

Գ. Շ. – Անդրադառնանք Ձեր դասախոսական գործունեությանը: Համեմատաբար վերջերս Բուն TV ծրագրի հարթակում «բաց լսարանին» ներկայացրեցիք մի ողջ դասաշար:

Լ. Ա. – 36 դասախոսություն կարդացի, որոնք իսկապես մեծ արձագանք ստացան, այնքան որ հետո ռադիոյով երկու անգամ կրկնեցին ողջ շարքը: Բուն TV-ն կարևոր գործ է անում՝ առաջարկելով այլընտրանքային տեքստեր, հարթակներ, չվիճելով, չմերժելով եղածը: Ոչ թե ասում է՝ սա լավն է, սա վատն է, այլ առաջարկում է այլընտրանք տարբեր գիտական բնագավառներում: Բուն-ից առաջարկեցին կարդալ մասնագիտությունիցս ցանկացած դասընթաց, և ես ընտրեցի իմ դասավանդվող առարկաներից մեկը՝ Ազգագրական մտքի պատմությունը, ու փորձեցի այն ներկայացնել՝ հաշվի առնելով անպատրաստ լսարանը և որոշ մասնագիտական մակարդակ ունեցողներին: Խնդիրը հնարավորինս տերմիններից խուսափելն էր, դրանք գրեթե չօգտագործելը, սակայն բավականին լուրջ դրույթներ կարողանալ փոխանցել: Ասեմ,

որ այդ հեռուստաշարքն ինձ հիմա օգնում է համալսարանի դասընթացս ավելի արդյունավետ կազմակերպելու գործում: Ուսանողներս խոստովանում են, որ հաճախ ընտանիքի անդամներն իրենց հետ են լսում այդ հեռուստաշարը:

Գ. Շ. – Եվ վերջին հարցը. կա՞ն բաներ, որ Ձեր ուսանողներից եք սովորում:

Լ. Ա. – Ամեն օր եմ իրենցից սովորում: Ոչ բոլոր կուրսերից ես նույն հաճույքը ստանում համատեղ մտածելուց, բայց չատ հաճախ նրանք դառնում են քո ընթացիկ աշխատանքի առաջին լսարանը: Մի հոդված ունեմ, որը, օրինակ, ուսանողի մի հարցից է ծնվել: Ես, ընդհանրապես, դասընթացս կառուցում եմ որպես գիտական լաբորատորիա, որտեղ կիսվում եմ ընթացիկ բացահայտումներով: Սա նաև առիթ է դառնում այդ մտքերը խորացնել, վերանայել, հավելել: Փորձում եմ ուսանողներին ներգրավել իմ հետաքրքրությունների դաշտ, ինչը, պիտի խոստովանեմ՝ գնալով ավելի է դժվարանում, քանի որ տարեցտարի ավելի քիչ մարդ է կարողանում օտար լեզուներով գրականություն կարդալ: Թարգմանություններ անելով՝ մենք, միևնույնն է, չենք կարողանալու ծածկել այդ ահռելի դաշտը, ուղղակի չենք հասցնի, և ռուսերենից հրաժարումն ու անգլերենին էլ չտիրապետելն անխուսափելիորեն իջեցնում է մեր կրթական մակարդակը: Լուծումը տեսնում եմ օտար լեզուներ դասավանդելու հարցում քաղաքականության կտրուկ փոփոխության մեջ: Կրթական համակարգը պիտի պարտադրի և ապահովի դրանց յուրացումը:

Գ. Շ. – Շնորհակալություն հետաքրքիր զրույցի համար:

Հարցազրույցը վարեց ԳԱՅԱՆԵ ՇԱԳՈՅԱՆԸ:

Պ. գ. թ., ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արդիականության ազգաբանության բաժնի առաջատար գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ ավանդական և ժամանակակից ծիսակարգ, քաղաքի և հիշողության մարդաբանություն: Հեղինակ է 2 մենագրության և շուրջ 100 հոդվածի: gayashag@yahoo.com

ԱՆԱՀԻՏ ՏՈՆԱՊԵՏՅԱՆ
(Ծննդյան 60-ամյակի առթիվ)*

Լրացավ ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ, բ. գ. դ., պրոֆ. Անահիտ Տոնապետյանի 60-ամյա հոբելյանը: Նա ծնվել է 1962 թ. ապրիլի 18-ին Ֆրանսիայի Լիոն քաղաքում: 1984 թ. ավարտել է Փարիզի Արևելյան լեզուների և քաղաքակրթությունների պետական ինստիտուտի հայագիտական ծրագիրը, 1985 թ.՝ Սորբոնի համալսարանի ռուսերենի լեզվաբանության բաժինը: 1987 թ. մասնակցել է պետական դասախոսների բարձրագույն մրցույթին (Agregation) և տեղ զբաղեցրել 2-րդ դիրքում: 1991 թ. Սորբոն-Նուվել համալսարանում պրոֆ. Կլոդ Աժեժի ղեկավարությամբ պաշտպանել է արևմտահայերենի քերականությանը նվիրված դոկտորական ատենախոսություն և ստացել բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: 1991 թ. Փարիզի Արևելյան լեզուների և քաղաքակրթությունների պետական ինստիտուտի հայագիտության ամբիոնի վարիչն է, իսկ 2002 թ. նույն համալսարանում ստացել է պրոֆեսորի աստիճան: Հայագիտության ամբիոնի ջանքերով ինստիտուտում դասավանդվում է արևմտահայերեն, արևելահայերեն, գրականություն, պատմություն, գրաբար, լեզվաբանություն: Արտերկրում միակ համալսարանն է, որտեղ հայերենն ուսուցանվում է նախնական մակարդակից մինչև ակադեմիական: 2011–2013 թթ. Ա. Տոնապետյանը եղել է Ինալքոյի և Ֆրանսիական ազգային հետազոտական կենտրոնի միացյալ հետազոտական լաբորատորիայի (ՍԵԴԻԼ) տնօրենն: 2013–2016 թթ., որպես հրավիրված պրոֆեսոր, աշխատել է Բեյրութի Ամերիկյան համալսարանում: 2012 թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ: 2014 թ. գիտական և գիտակազմակերպական վաստակի համար արժանացել է Ֆրանսիայի «Պատվո լեգիոնի ասպետի» շքանշանին:

Լայն և ընդգրկուն են Ա. Տոնապետյանի գիտական հետաքրքրության շրջանակները: Նրա աշխատանքները [«Վաղակատարը և հարակատարը արևմտահայերենում» (1996 թ.), «Վերլուծական ժխտականը և վաղակատարն արևմտահայերենում» (1999 թ.), «Լեզվական քաղաքականությունը Հայաստանում՝ Խորհրդային Միությունից մինչև անկախ Հայաստան», «Լեզու և պետություն» (1998 թ.), «Неоформленный субъект в западноармянском языке – к вопросу о неаккузативности» (*2010 թ.) և այլն]* նվիրված են արևմտահայերենի քերականությանն ու հանրալեզվաբանական հարցերին, կորպուսային լեզվաբանությանը, ինչպես նաև՝ հայերե-

---

* *Ներկայացվել է 16. II. 2022 թ., ընդունվել է տպագրության 10. III. 2022 թ.:*

նի բարբառագիտությանը: Ա. Տոնապետյանն «Աորիստը ժամանակակից հայերենում. հիմնական արժեք և համատեքստային իմաստներ» հոդվածում [The Aorist in Modern Armenian: core value and contextual meanings, in Guentchva, Zlatka (ed.), Aspectuality and Temporality. Descriptive and theoretical issues, John Benjamins, 2016] *դիտարկելով, որ դասական հայերենից սկսած՝ անցյալ կատարյալը հիմնականում պահպանել է իր ձևակազմական առանձնահատկությունը՝ ենթարկվելով միայն հնչյունական փոփոխությունների, կարծում է՝ կատարյալը իր ձևային արտահայտությամբ առանձնահատուկ տեղ է զբաղեցնում արդի հայերենի բայական համակարգում, քանի որ անցյալ ժամանակաձևերը կազմելու համար կա՛մ մասնիկի, կա՛մ օժանդակ բայի կարիք կա, մինչդեռ կատարյալը համադրական կազմություն ունի: Այս աշխատության նպատակն է հաշվի առնել համատեքստային իմաստների բազմազանությունը, որը կարող է դրսևորել հայերենի անցյալ կատարյալը՝ հերքելով քերականների և տիպաբանների կողմից նախկինում արված ընդհանրացումները: Կատարյալին բնորոշ 3 հատկանիշ է առանձնացնում հեղինակը, որոնցով հնարավոր է բացատրել հայերենի անցյալ կատարյալի իմաստային առանձնահատկությունները հնդեվրոպական այլ լեզուների համեմատությամբ:*

Իր հոդվածներում (Middle East and Beyond–Western Armenian at the crossroads: A sociolinguistic and typological sketch, in Bulut, Christiane, Linguistic Minorities in Turkey and Turkic-speaking Minorities of the Peripheries: Turcologica 111, Harassowitz Verlag, 2018; Cent ans après, l'arménien occidental au Liban: Vernaculaire et littératie au carrefour des enjeux identitaires, in Christine Babikian Assaf, Carla Eddé, Lévon Nordiguian et Vahé Tachjian, Les Arméniens du Liban, cent ans de présence, Beyrouth, Editions de l'Université Saint-Joseph, 2017) *Ա. Տոնապետյանն անդրադարձել է նաև գրական արևմտահայերենի մշակման և պահպանման խնդիրներին: Քայլ առ քայլ դիտակցելով՝ լեզուն ազգային ինքնության պահպանման հիմքն է, իսկ լեզվի մոռացությունը՝ ազգային ինքնության կորստի ճանապարհը, և ցավով նշելով, որ 2010 թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ն արևմտահայերենը դասել է վտանգի և կորստի ենթակա լեզուների ցանկում՝ նա «Արեւմտահայերէնը այսօր Լիբանանի մէջ. իրողութիւններ եւ պատկերացումներ» հոդվածում անդրադարձել է լիբանանահայ համայնքի լեզվին: Ա. Տոնապետյանը, ըստ սերունդների հաջորդականության, ներկայացրել է լեզվական փոփոխությունները համայնքում՝ վերլուծելով դրանք և մատնանշելով դրանց պատճառներն ու հանգամանքները: Հայտնի է, որ 1894–1896 թթ. Համիդյան ջարդերի, ապա 1915–1923 թթ. Օսմանյան կայսրության իշխանությունների իրականացրած ցեղասպանության հետևանքով հայաշատ համայնքներ են ձևավորվել կամ վերակազմավորվել Սիրիայում, Լիբանանում, Ֆրանսիայում և այլուր: Մինչև XX դ. հիսունական թվականները Լիբանանի հայկական դպրոցի գլխավոր նպատակը հայորդիներին լեզվականորեն հայացնելն ու գրագետ դարձնելն էր: Այս նպատակը, ըստ հեղինակի, հայկական դպրոցը հաջողությամբ իրագործել է: Ներկա պայմաններում ինչպես Սփյուռքի շատ համայնքներում, Լիբանանում ևս հայախոսությունն ու արևմտահայերենի գործածությունը զգալիորեն նահանջել են: Նոր սերունդը, ապրելով Լի-*

բանանի բազմալեզու միջավայրում և ենթարկվելով այլ լեզուների ազդեցությանը (արաբերեն, անգլերեն, ֆրանսերեն), չի գործածում արևմտահայերենը իբրև հաղորդակցության լեզու: Պատճառը, սակայն, ըստ Ա. Տոնապետյանի, միայն մեզ բաժին ընկած ճակատագիրն ու մեր լեզվի յուրահատուկ պատմությունը չեն: Համաշխարհայնացման արդի պայմաններում, երբ օտար միջավայրը և հասարակական ու քաղաքական զարգացումները գնալով ղառնում են պարտադրող, ազգային լեզվի ու մշակույթի պահպանությունը դժվարանում է: Հետևաբար պետք է ունենալ արևմտահայերենի պահպանության իրական և հստակ ծրագիր:

Հանրալեզվաբանական խնդիրներին նվիրված աշխատություններում Ա. Տոնապետյանն անդրադարձել է լեզուների փոխհարաբերություններին, դրանց փոխհարստացման, ներգործման ու զարգացման առանձնահատկություններին, երկլեզվության և բազմալեզվության դրսևորումներին: Նա դիտարկել է ժամանակակից քաղաքակիրթ աշխարհում մշակվող լեզվաքաղաքականությունը, մարդու ու լեզվի իրավունքների գործող չափորոշիչները, լեզուների՝ իրենց զարգացման ճանապարհին ունեցած ուղղվածությունը և այլ հարցեր:

Ա. Տոնապետյանը ծավալել է գիտական երկարատև և բեղմնավոր գործունեություն: Նա ներգրավված է եղել գիտական մի շարք ծրագրերի և նախաձեռնությունների ղեկավարման ու համակարգման գործընթացում: Մասնակցել է «Իրանի / Անատոլիայի / Կովկասի / Մերձավոր Արևելքի լեզուներ, բարբառներ և իզոգլոսներ» աշխատանքային փաթեթի կազմման աշխատանքներին, եղել է «Գերազանցության լաբորատորիա EFL (Լեզվաբանության էմպիրիկ հիմքեր)» ծրագրի համակարգող, ««Բառաստան» ֆրանսերեն-հայերեն ժամանակակից թեմատիկ առցանց բառարան» (35000 բառ) նախագծի համահեղինակ և համակարգող:

Բեյրութի Ամերիկյան համալսարանում Ա. Տոնապետյանը մասնակցել է «Բազմալեզվությունը Արևելյան Միջերկրականում» թեմայով ծրագրի աշխատանքներին: Եղել է Արևելահայերենի ազգային կորպուսի /eanc.net/ *գիտական խորհրդատու:*

Ա. Տոնապետյանը որպես խորհրդական մասնակցում է նաև «Գալուստ Գյուլբենկյան» հիմնարկության հայկական համայնքների բաժանմունքի կողմից ստեղծված սփյուռքահայ վարժարանների վերաբերյալ կրթական հատուկ հանձնախմբի աշխատանքներին:

Անվանի լեզվաբանը հիմնադրել և խմբագրել է գիտական ամսագրեր: 1999–2007 թթ. եղել է Cahiers de Linguistique de l'Inalco-*ի համահիմնադիրը և տնօրենը, 2012-ից* Faits de Langues-*ի* (Brill *հրատարակչության միջազգային հղումով ամսագիր) գլխավոր խմբագիրն է: Խորհրդատվական խորհրդի անդամ է եղել* "Revue du Monde Arménien moderne et contemporain", "Faits de Langues" *և դրախոս՝* "Bulletin de la Société de Linguistique de Paris", "Pragmatics Journal", "Belgian Journal" *ամսագրերի:*

Ա. Տոնապետյանի գիտական գործունեությունն այսքանով չի ավարտվում: Նա ոչ միայն մասնակցել է միջազգային բազմաթիվ գիտաժողովների աշխարհի տարբեր երկրներում, այլև միջազգային գիտաժողովներ է կազմակերպել Փարիզում, Կիպրոսում, Բեյրութում և Հայաստանում: 1999 թ. Փարի-

գում կազմակերպել է Հայ լեզվաբանության 6-րդ, 2001 թ.՝ Հայաստանում՝ Հայ բարբառագիտության 1-ին միջազգային գիտաժողովները, 2006-ին Փարիզում՝ Կովկասի լեզուներին նվիրված, 2012-ին Կիպրոսում՝ «Արևելյան Միջերկրականի վտանգված լեզուներ», 2015-ին՝ Փարիզում «Արևմտահայերենը հարյուր տարի հետո» և 2019-ին՝ «Նորարարությունը կրթության մեջ. մարտահրավերներ արևմտահայերենի ուսուցման մեջ» խորագրերով գիտաժողովները: Եղել է Հայ լեզվաբանության 9-րդ միջազգային գիտաժողովի, որը տեղի է ունեցել Սանկտ Պետերբուրգում 2012 թ., գիտական և կազմակերպչական խորհուրդների անդամ:

Ա. Տոնապետյանը լեզվաբանական տարբեր հարցերի վերաբերյալ («Լեզվաբանական տիպաբանություն և լեզվական չփում», «Արևմտահայերեն, սոցիալ-լեզվաբանական և տիպաբանական ակնարկ», «Արևմտահայերեն խոսելը. մարտահրավերներ 21-րդ դարի համար», «Բառերի կարգը արևմտահայերենում. տիպաբանություն և կոնտակտ», «Լեզվի փոփոխություն Արևմտյան Ասիայում» և այլն) դասախոսություններ է կարդացել Լիբանանում, Ստամբուլում, Ֆրանսիայում, Հայաստանում, Հունաստանում, Գերմանիայում ու այլ երկրներում: Իր դասախոսությունների ժամանակ նա անդրադարձել է արդիական հնչեղություն ունեցող թեմաների և դրանք ներկայացրել մասնագիտական հիմնավորվածությամբ: Այսպես՝ «Կենսունակ արեւմտահայերէնի աշխարհագրութիւնը» թեմայով դասախոսության ժամանակ նա առաջ է քաշել այն թեզը, որ աշխարհագրությունն արևմտահայերենի պարագայում սերտորեն կապված է ժամանակագրության հետ, և բնիկ վայրերից գաղթած ազգաբնակչությամբ է պայմանավորված լեզվի կենսունակության խնդիրը: Լեզվի կանոնարկումի և կենսունականացման երևույթների տարբերությունները մատնանշելով՝ Ա. Տոնապետյանը հաստատել է, որ կենսունականացման աշխատանքը կարող է շարունակվել սփյուռքահայության այլազանության պարագայում ևս: «Արեւմտահայերէնը՝ կենսունակ լեզու» վերնագրով դասախոսության ժամանակ նա անդրադարձել է նահանջի հոգեբանությանը և նրա հետևանքներին՝ համոզված լինելով, որ լեզուն գործածողի հոգեբանությունը սերտորեն կապված է լեզվի կրած հետևանքների հետ:

Արևմտահայերենի զարգացմանը նպաստող մեկ այլ աշխատանքի էլ է մասնակցել Ա. Տոնապետյանը: «Վիքիմեդիա Հայաստան» գիտակրթական կազմակերպության, «Գալուստ Գյուլբենկյան» հիմնարկության և նրա ջանքերի շնորհիվ արևմտահայերենը ևս, ինչպես արևելահայերենը, համացանցում ունի իր հատուկ կարգանիշը՝ «ISO»: Սա, ըստ նրա, կնպաստի արևմտահայերենի զարգացմանը, որովհետև համացանցի լեզու լինելով՝ այն երիտասարդների մոտ կենդանի լեզու լինելու տպավորություն կթողնի: Բացի այդ՝ նախքան այս կարգանիշն արևմտահայերեն ու արևելահայերեն բոլոր հոդվածները նույն բաժնում էին տեղադրվում: Այդ պատճառով էլ ղիմել են «Վիքիմեդիային», որպեսզի արևմտահայերեն նյութերն առանձին բաժնում գետեղվեն: Դիմումի հետ կցել են փաթեթ, որում ներկայացվել են երկու լեզուների՝ քերականական, լեզվաբանական և բառապաշարային տարբերությունները: Խմբային աշխատանքը տվել է իր արդյունքը, և արևմտահայերենն ունեցել է կարգանիշ, որը հնարավորություն կընձեռի արևմտահա-

յերենի դործածուԹյան համար համակարդչային օժանդակ ծրադրեր մշակել, ինչպես՝ Թարդմանիչ, սրբադրիչ, փոխադրիչ և այլն:

Ա. Տոնապետյանն անդրադարձել է նաև արևմտահայերենի ուսուցման հարցերին՝ մատնանշելով հայ դպրոցի առավելուԹյունները և այն մարտահրավերները, որոնց առջև կանգնած է հայ դպրոցը՝ ներկայացնելով տվյալներ՝ վիճակագրուԹյուններով, համադրուԹյուններով ու դիտարկումներով հանդերձ: Լեզվաբանի ուշադրուԹյունից չեն վրիպել նաև հայերենի դասավանդման խնդիրները: Հայկական դպրոցներում հայերենի ուսուցման ծրադրերը բարելավելու ու արդիական մեԹոդներով այն դասավանդելու նպատակով կազմակերպել և համակարդել է հայերենի ուսուցիչների վերապատրաստման ծրադրեր: 2021 Թ. ստեղծել է մադիստրատուրայի՝ առցանց հայալեզու հայադիտական նոր ծրադիր, որն արևմտահայերենի կենսունակուԹյան համար ունի հատուկ նշանակուԹյուն:

Թեև Ա. Տոնապետյանը ծնվել է հայրենիքից հեռու՝ ֆրանսիական օտար ափերում, սակայն որպես մասնագիտուԹյուն ընտրել է հայերենն ու հայադիտուԹյունը և հայանպաստ ու հայրենանվեր երկարամյա դործունեուԹյուն ծավալել: Մայրենիի հանդեպ սերն ու նրա մեջ մասնագիտանալու իր նախանձախնդրուԹյունը նա բացատրում է ծնողների ազդային նվիրվածուԹյամբ և մեծ հոր՝ Տոնապետ Տոնապետյանի՝ անուղղակիորեն փոխանցած ազդային ինքնուԹյան ու լեզվի պահպանուԹյան պատգամով:

Ջերմորեն չնորհավորելով մեր գործընկերոջը հոբելյանի կապակցուԹյամբ՝ մաղԹում ենք արևշատուԹյուն և քաջառողջուԹյուն՝ բազմաԹիվ ու բազմապիսի մտահղացումները կյանքի կոչելու համար:

ԳԱՅԱՆԵ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Բ. գ. դ., պրոֆ., Վ. Բրյուսովի անվ. պետական համալսարանի հայադիտուԹյան ամբիոնի վարիչ: Գիտական հետաքրքրուԹյունները՝ հայոց լեզվի պատմուԹյուն, ժամանակակից հայոց լեզու, բարբառագիտուԹյուն, ընդհանուր և համեմատական լեզվաբանուԹյուն: Հեղինակ է 3 դրքի, 1 դասագրքի և շուրջ 70 հոդվածի: gevgayane@gmail.com

«ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆ – 150» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ*

2021 թ. նոյեմբերի 1-ին լրացավ հայ դասական երաժշտության ականավոր ներկայացուցիչ, հայկական սիմֆոնիկ երաժշտության հիմնադիր, կոմպոզիտոր, դիրիժոր և երաժշտական-հասարակական գործիչ Ալեքսանդր Սպենդիարյանի (1871–1928) ծննդյան 150-ամյա հոբելյանը:

Խորհրդային Հայաստանի կառավարության հրավերով Ալ. Սպենդիարյանը 1924 թ. հոկտեմբերին տեղափոխվեց Երևան: Կոմպոզիտորի ստեղծագործության երևանյան շրջանն առանձնացավ բազմաժանրությամբ: Մի կողմից նա երգչախմբի, ձայնի ու դաշնամուրի կամ նվագախմբի համար կատարում է հեղափոխական երգերի, հայկական և ուկրաինական ժողովրդական երգերի մշակումներ, մյուս կողմից՝ գործիքավորում «Ալմաստ» օպերան, որն առանձնահատուկ տեղ ունի հայ երաժշտության պատմության մեջ: Սպենդիարյանի երևանյան ստեղծագործություններից հայկական սիմֆոնիզմի զարգացման համար կարևորագույն նշանակություն ունեցավ սիմֆոնիկ նվագախմբի համար գրված «Երևանյան էսքիզներ» սիմֆոնիկ պատկերը (1925), որտեղ կոմպոզիտորը չարունակեց «Ղրիմի էսքիզներում» սկիզբ առած, ժողովրդական կյանքից վերցրած պատկերների սիմֆոնիկ ուրվանկարների ստեղծման գիծը: Կոմպոզիտորն անդրադառնում է հայ ժողովրդի կենցաղին, ստեղծում ժողովրդական կյանքի տարբեր կողմերի ընդհանրացված կերպարներ:

Կոմպոզիտորի մահից հետո Երևանում սկիզբ առավ ու բեղմնավոր ճանապարհ անցավ ակադեմիական սպենդիարյանագիտությունը: Իսկ այդ ասպարեզում՝ Ալ. Սպենդիարյանի ստեղծագործական ժառանգության հրատարակման և գիտական ուսումնասիրության բնագավառում, ծանրակշիռ դեր կատարեց ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը:

Սպենդիարյանագիտության ասպարեզում Արվեստի ինստիտուտի աշխատանքներն ընթացան հետևյալ կարևոր ուղղություններով՝ Ալ. Սպենդիարյանի «Երկերի լիակատար ժողովածու»-ի ակադեմիական հրատարակության իրականացում՝ 11 հատորով (1951–1988), գիտական ուսումնասիրություններ [Քնարիկ Գրիգորյան. «Ալեքսանդր Սպենդիարով. կյանքը և ստեղծագործությունը» (1952), «Александр Спендиаров. Статьи и исследования» *գիտական հոդվածների ժողովածու (կազմող՝ Գևորգ Գյոդակյան, 1973) և բազմաթիվ գիտական հոդվածներ], կոմպոզիտորին առնչվող արխիվային փաստաթղթերի ու վավերագրերի հրապարակում [Գեորգի Տիգրանով.* А. Спендиаров. По материалам писем и воспоминаний (1953)*], կոմպոզիտորի գրական ժառանգության՝ «Նամականու» հրատարակում (կազմող՝ Քնարիկ Գրիգորյան, 1962), կոմպոզիտորի կյանքի և ստեղծագործության տարեգրության կազմում և հրատարակում (կազմող՝ Մարինա Սպենդիարովա, 1975), «Ժա-*

* *Ներկայացվել է 21. II. 2022 թ., ընդունվել է տպագրության 03. III. 2022 թ.:*

մանակակիցները Ալ. Սպենդիարյանի մասին» ժողովածուի կազմում և հրատարակում (կազմող՝ Ալեքսանդր Թադևոսյան, 1960) և այլն:

Կոմպոզիտորի հոբելյանների առիթով՝ 1951 և 1971 թվականներին, Արվեստի ինստիտուտը, իսկ մինչ այդ՝ ՀՍՍՀ ԳԱ արվեստների պատմության ու տեսության սեկտորը, կազմակերպել է հոբելյանական գիտական նստաշրջաններ:

Շարունակելով ավանդույթը՝ մեծ երաժշտի 150-ամյա հոբելյանի կապակցությամբ, Արվեստի ինստիտուտը՝ Ալեքսանդր Սպենդիարյանի տուն-թանգարանի և Հայաստանի կոմպոզիտորների միության հետ, 2021 թ. դեկտեմբերի 14–16-ին Երևանում՝ հեռավար ձևաչափով, գումարեց Ալ. Սպենդիարյանի կյանքի, ստեղծագործական, կատարողական ու երաժշտական-հասարակական գործունեության ուսումնասիրության, նրա թողած ժառանգության արժևորման հարցերին նվիրված «Ալեքսանդր Սպենդիարյան–150» միջազգային գիտական եռօրյա նստաշրջանը:

Միջգիտակարգային նստաշրջանի աշխատանքներին մասնակցեցին Հայաստանի, Ռուսաստանի, Ուկրաինայի, Լատվիայի, Նիդերլանդների և Շվեդիայի գիտական համայնքների շուրջ 40 ներկայացուցիչներ՝ ինչպես երաժշտագետներ ու երաժիշտներ, այնպես էլ՝ արվեստաբաններ, գրականագետներ, մշակութաբաններ, փիլիսոփաներ: Նստաշրջանն իր շուրջը համախմբեց թե՛ վաստակաշատ գիտնականների, թե՛ երիտասարդ հետազոտողների:

Գիտական նստաշրջանի մասնակիցներին ողջունեցին և գիտական աննախադեպ միջոցառմանը բարեհաջող ընթացք մաղթեցին ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Յուրի Սուվարյանը, *Ալ. Սպենդիարյանի տուն-թանգարանի տնօրեն* Մարինե Օթարյանն *ու Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահ* Արամ Սաթյանը:

Լիագումար նիստում հետաքրքիր ու արժեքավոր զեկուցումներով հանդես եկան՝ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բ. գ. դ., պրոֆ. Աելիտա Դոլուխանյանը՝ *«Ալեքսանդր Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայի լիբրետոն և Հովհաննես Թումանյանի «Անուշ» պոեմը», Լատվիայի Ի. Կոզակևիչի անվան ազգային մշակութային ընկերությունների ասոցիացիայի վարչության նախագահ, արվ. դ., պրոֆ.* Ռաֆֆի Խաչատրյանը *(Ռիգա)՝ «Ալեքսանդր Սպենդիարյան. մի քանի հայացքներ այսօր», ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար, արվ. դ., պրոֆ.* Աննա Ասատրյանը՝ *«ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ներդրումը ակադեմիական սպենդիարյանագիտության կայացման ու զարգացման գործում», Սանկտ Պետերբուրգի Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովի անվան պետական կոնսերվատորիայի նվագախմբային ֆակուլտետի դեկան, արվ. թ., դոցենտ* Անդրեյ Իվանովը *(Ռուսաստան)՝ «Լարայինների համար գրված ստեղծագործությունները Ալեքսանդր Սպենդիարյանի ժառանգության մեջ», ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի երաժշտության բաժնի առաջատար գիտաշխատող, արվ. դ.* Մարգարիտա Ռուվկյանը՝ *«Ալեքսանդր Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայի ավանդական բեմական հայեցակարգը», Սանկտ Պետերբուրգի Ա. Ի. Գերցենի անվան պետական մանկավարժական համալսարանի երաժշ-*

տուԹյան, Թատրոնի և խորեոգրաֆիայի ինստիտուտի դոցենտ, արվ. Թ. Նադեժդա Մեդվեդևան՝ «Ալեքսանդր Սպենդիարյանի ստեղծագործուԹյունը պետերբուրգյան դաշնամուրային դուետի հայելիում», Կազանի մշակույԹի պետական ինստիտուտի պրոֆեսոր, մշակ. գ., փ. գ. Թ. Տատյանա Գորդեևան (Ռուսաստան, Թաթարստանի ՀանրապետուԹյուն)՝ «Ալ. Սպենդիարյանի վոկալ երաժշտուԹյունը կազանյան երգիչների ուսումնամանկավարժական պրակտիկայում և համերգային երգացանկում», Դնեպրոպետրովսկի Մ. Ի. Գլինկայի անվան երաժշտուԹյան ակադեմիայի ավագ դասախոս, մանկ. գ. Թ. Լարիսա Գոնտովայան (Ուկրաինա)՝ «ԱվանդույԹի պարադոքսը. Ալեքսանդր Սպենդիարյան, Լև Ռևուցկի, Իգոր Ստրավինսկի», Կազանի մշակույԹի պետական ինստիտուտի դոցենտ, արվ. Թ. Լիլյա Բորոդովսկայան (Ռուսաստան, Թաթարստանի ՀանրապետուԹյուն)՝ «Թաթարստանի ՀանրապետուԹյան ժամանակակից երաժիշտների՝ Ալ. Սպենդիարյանի երաժշտուԹյան կատարողական մեկնաբանուԹյունները», Մ. Կ. Ամմոսովի անվան Հյուսիս-Արևելյան ֆեդերալ համալսարանի մշակուԹաբանուԹյան ամբիոնի դոցենտ, արվ. Թ. Տատյանա Պավլովա-Բորիսովան (Ռուսաստան, Սախա-Յակուտիայի ՀանրապետուԹյուն)՝ «Հայաստան-Յակուտիա. «Ա»-ից «Ֆ» կոմպոզիտոր Հրանտ Գրիգորյանի ստեղծագործուԹյան մեջ», ՀՀ ԳԱԱ ավետի ինստիտուտի ժողովրդական երաժշտուԹյան բաժնի ավագ գիտաշխատող, արվ. Թ., դոցենտ Անահիտ Բաղդասարյանը՝ «Նմանակումը Ալ. Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայում», Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովի անվան պետական կոնսերվատորիայի ազգային երաժշտական մշակույԹների կաբինետի վարիչ, արվ. Թ., դոցենտ Տատյանա Բրոսլավսկայան (Ռուսաստան)՝ «Ժողովրդական գործիքային ավանդույԹների փոխակերպումները Ալ. Սպենդիարյանի ստեղծագործուԹյան մեջ», ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ժողովրդական երաժշտուԹյան բաժնի ավագ գիտաշխատող, արվ. Թ. Մարիաննա Տիգրանյանը՝ «Ռուսական ֆոլկլորն Ալ. Սպենդիարյանի ստեղծագործուԹյան մեջ» և Մոսկվայի պետական համալսարանի պատմուԹյան ֆակուլտետի ասպիրանտ Ալեքսեյ Զաբրոդինը՝ «Ալ. Սպենդիարյանի կյանքի և գործունեուԹյան մոսկովյան և պետերբուրգյան շրջանները (1890–1899)»:

Դեկտեմբերի 15-ին գիտական նստաշրջանի առաջին նիստում (նիստի նախագահ՝ Մարինե Օթարյան) ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականուԹյան ինստիտուտի առաջատար գիտաշխատող, բ. գ. դ. Սուսաննա Հովհաննիսյանն անդրադարձավ Սպենդիարյանի և Հովհ. Թումանյանի հանդիպմանը, որից սկիզբ առավ «Ալմաստ» օպերայի ստեղծման պատմուԹյունը: Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի երաժշտուԹյան մանկավարժուԹյան ամբիոնի դասախոս Նարրա Մաղոյանը ներկայացրեց Սպենդիարյանի ստեղծագործական գործունեուԹյան երևանյան շրջանը: Դաշնակահար, կոմպոզիտոր Կարին Հելման-Գևորգյանի (Շվեդիա, Ստոկհոլմ) բանախոսուԹյունը նվիրված էր Սպենդիարյանի ստեղծագործուԹյան շքերԹին՝ սկսած Սկանդինավիայից, մասնավորապես՝ «Այ, վարդ» ռոմանսին, որը բանախոսի ջանքերով արդեն հնչում է շվեդերեն՝ շվեդ երգիչների կատարմամբ: Երևանի Ռ. Մելիքյանի անվան երաժշտական քոլեջի դասախոս Լիանա ՀալուԹյունյանը հանդես եկավ «Ալեքսանդր Սպենդիարյանը հայ մշակուԹային գործիչների հուշերում» զեկուցումով: Սպենդիարյանի և հայ արվեստագետների միջև ստեղծագործական կապերը

բացահայտեց Հայաստանի ազգային պատկերասրահի հայկական գեղանկարչության բաժնի վարիչ Հայկուշ Սահակյանը: Կոմիտասի թանգարան-ինստիտուտի գիտաշխատող Աստղիկ Մարտիրոսյանը լուսաբանեց Ալ. Սպենդիարյանի տուն-թանգարանի և Կոմիտասի թանգարան-ինստիտուտի ընդհանրություններն ու առանձնահատկությունները կրթական ծրագրերում:

Նստաշրջանի երկրորդ նիստում (նախագահ՝ Լիլիթ Երնջակյան) Մարինե Օթարյանը ներկայացրեց «Ստեղծագործական երկրորդ կյանք. Թիֆլիս» դեկուցումը: Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Գյումրու մասնաճյուղի տնօրեն, արվ. թ., դոցենտ Հասմիկ Հարությունյանը բացահայտեց ազգային ինքնության դրսևորումները Սպենդիարյանի ստեղծագործության մեջ: Ուշագրավ էին ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ժողովրդական երաժշտության բաժնի ավագ գիտաշխատող, պ. գ. թ., դոցենտ Հռիփսիմե Պիկիչյանի դիտարկումները կոմպոզիտորի ստեղծած և «Երեք արմավենի» սիմֆոնիկ պատկերում կիրառված սպենդիարաֆոնի վերաբերյալ, որը բանախոսի հիմնավորմամբ՝ ավանդական նվագարանների «սիմֆոնիզացված» հետնորդն է: ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի երաժշտության բաժնի գիտաշխատող Արուսյակ Պետրոսյանը լուսաբանեց Սպենդիարյանի կապերը ժամանակակից հայ արվեստագետների հետ: Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Գյումրու մասնաճյուղի փոխտնօրեն Անի Ասատրյանը հանդես եկավ «Գեորգի Տիգրանովը Ալեքսանդր Սպենդիարյանի գործունեության ղրիմյան շրջանի մասին» բանախոսությամբ: Ալ. Սպենդիարյանի տուն-թանգարանի գիտաշխատող Ինեսսա Խաչատրյանը գիտական շրջանառության մեջ դրեց կոմպոզիտորի դստեր՝ Տատյանա Սպենդիարովայի հուշերը հոր մասին: Նիստը եզրափակեց Նունե Պողոսյան-Զելցբուրգի (UWC Maastricht, MA, Նիդերլանդներ, Մաաստրիխտ) «Ալեքսանդր Սպենդիարյանը աշխարհի երաժշտարվեստի համակարգում. էթնո-երաժշտագիտական դիտարկումներ» բանախոսությունը:

Գիտական նստաշրջանի երրորդ նիստում (նախագահ՝ Մարգարիտա Քամալյան) Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի երաժշտության մանկավարժության ամբիոնի դասախոս, արվ. թ., դոցենտ Աննա Հարությունյանը զեկուցեց Ալեքսանդր Սպենդիարյանի անվան երաժշտական դպրոցի պատմության մասին: Մարտիրոս Սարյանի տուն-թանգարանի գլխավոր ֆոնդապահ Սոֆյա Սարյանը քննության առավ Ալ. Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայի սարյանական ձևավորումը: ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հայցորդ Քրիստինա Աբրահամյանը ներկայացրեց դրվագներ Ալ. Սպենդիարյանի և Հովհաննես Հովհաննիսյանի բարեկամության պատմությունից: Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի արվեստի պատմության տեսության և մշակութաբանության ամբիոնի դասախոս, արվ. թ., արվեստաբան Նապե Նադարյանը քննության առավ Սպենդիարյանին նվիրված Արա Սարգսյանի ու Ղուկաս Ջուբարյանի կերտած արձանները: Ստեփանակերտի Սայաթ-Նովայի անվան երաժշտական քոլեջի դասատու Նինա Հակոբյանի զեկուցումը նվիրված էր Սպենդիարյանի մասին ժամանակակիցների հուշերին: Նիստը եզրափակեց Ալ. Սպենդիարյանի տուն-թանգարանի գլխավոր ֆոնդապահ Աստղիկ Հարությունյանը՝ «Դիրիժորական փայտիկի կախարդական ուժը» զեկուցմամբ:

Նստաշրջանի եզրափակիչ՝ չորրորդ նիստը (նախագահ՝ Մարիաննա Տիգրանյան) մեկնարկեց ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի երաժշտության բաժնի առաջատար գիտաշխատող, արվ. դ., պրոֆ. Լիլիթ Երնջակյանի «Ալեքսանդր Սպենդիարյանի Արևելքը» բանախոսությամբ: ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի թատրոնի բաժնի առաջատար գիտաշխատող, արվ. դ. Նազենիկ Սարգսյանը բացահայտեց Սպենդիարյանի ստեղծագործության նշանակությունը պարարվեստի բնագավառում: ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտքարտուղար, արվ. թ., արվեստաբան Մարգարիտա Քամալյանը հանդես եկավ «Ալեքսանդր Սպենդիարյանը հայ նկարիչների աչքերով» զեկուցմամբ: ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի երաժշտության բաժնի ավագ գիտաշխատող, արվ. թ., դաշնակահար Լիլիթ Արտեմյանն անդրադարձավ կոմպոզիտորի դաշնամուրային ստեղծագործությանը: Ա. Սպենդիարյանի տուն-թանգարանի ավագ գիտաշխատող Հասմիկ Համբարյանը ներկայացրեց «Գրական հերոսների երաժշտական կերպավորումն Ալեքսանդր Սպենդիարյանի մելոդեկլամացիաներում» բանախոսությունը: Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Գյումրու մասնաճյուղի դասախոս, արվ. թ., դոցենտ Աննա Թամիրօղլյանը ճևակերպեց Սպենդիարյանի «Գուշակուհին» ստեղծագործության կոմպոզիցիոն որոշ սկզբունքները: Նստաշրջանի աշխատանքները եզրափակվեց Աննա Ասատրյանի «Ալեքսանդր Սպենդիարյան և Հովհաննես Նալբանդյան. էջեր ստեղծագործական համագործակցության» բանախոսությամբ:

Այսպիսով՝ զեկուցումների թեմատիկայի ընդգրկմամբ ու մասնակիցների աշխարհագրությամբ «Ալեքսանդր Սպենդիարյան–150» միջազգային գիտական նստաշրջանի արդյունքներն արտացոլեցին միջազգային սպենդիարյանագիտության արդի վիճակն ու կարևոր ներդրում դարձան ակադեմիական սպենդիարյանագիտության մեջ:

ԱՆՆԱ ԱՍԱՏՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԱՐՑԱԽՈՒՄ ԻՐԱԳՈՐԾՎՈՂ ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ադրբեջանի մշակույթի նախարարի 2022 թ. փետրվարի 3-ի պաշտոնական հայտարարությունից միանշանակ պարզ է դառնում, որ Ադրբեջանը, չարունակելով իր հայատյաց քաղաքականությունը, հստակ ծրագրված գործողություններով հետևողականորեն իրականացնում է Արցախի հայաթափման, հայկական մշակութային ժառանգության ոչնչացման, օտարման քաղաքականություն՝ այս անգամ արդեն բացահայտ կերպով սպառնալով վերացնել ու ջնջել Արցախի հայկական եկեղեցիների ու այլ սրբավայրերի արձանագրությունները: Հայտարարությունից բխում է, որ ստեղծվել է հատուկ աշխատանքային խումբ՝ բաղկացած աղվանական պատմության, մշակույթի և ճարտարապետության մասնագետներից, ինչպես նաև պետական կառույցների ներկայացուցիչներից, ովքեր «ուսումնասիրությունից» հետո պետք է հեռացնեն Արցախում (Ղարաբաղում) «աղվանական կրոնական/քրիստոնեական» կառույցների վրա «հայերի կողմից դրված, ավելացրած կեղծ դրությունները, արձանագրություններն ու հետքերը» (https:// report.az/en/cultural-policy/working-group-set-up-to-restore-armenianized-temples-of-ancient-albania/)*: Արցախի տարածքի քրիստոնեական հուշարձանները և դրանց վրա եղած գրությունները մեկ դարից ավելի է, ինչ մասնագետների կողմից ուսումնասիրվում են և դրանց իսկությունը կամ ազգային պատկանելությունը երբևիցե խնդրահարույց չի եղել (չհաշված պատմական իրողությունները կեղծելու դիլետանտական փորձերն ու հայտարարությունները):*

Արցախի տարածքում գտնվող հայ միջնադարյան ճարտարապետության արժեքավոր քրիստոնեական հուշարձանախմբեր Ամարասի վանքը, Դադիվանքը, Խաթրավանքը, Գանձասարի վանքը, Դտչավանքը, բազմաթիվ եկեղեցիներ, այդ թվում՝ Շուշիի նշանավոր Ղազանչեցոց տաճարը հանդիսանում են հայկական ճարտարապետության առանցքային օրգանական մասը:

Արցախի զարգացած միջնադարի մոնումենտալ կառույցները՝ եկեղեցիները, գավիթները, զանգակատներն իրենց ստեղծագործական կառուցվածքով (կոմպոզիցիայով) և դեկորով սերտորեն առնչվում են պատմական Սյունիքի և Այրարատի նախորդող ժամանակաշրջանի նույնատիպ կառույցների հետ, ինչը հետազոտություններով փաստել են հայկական միջնադարյան ճարտարապետությունն ուսումնասիրող արտասահմանյան հեղինակավոր գիտնականները ևս, այդ թվում՝ Ժան Միշել Թիերին (Ֆրանսիա), Պաոլո Կունեոն (Իտալիա) և այլոք:

Վիմագիր արձանագրությունների և այդ արձանագրություններով մեր օրերն հասած տվյալների գիտական վերլուծությամբ ժխտվում է դրանց «աղվանական» լինելու հանգամանքը, ուստի, որպես արցախահայության մշակութային ժառանգության «աղվանականացման» լավագույն տարբերակ,

ընտրվել է վիմագիր տվյալների խպառ ոչնչացումը, ինչպես ցույց է տալիս Նախիջևանի տարածքի հայկական մշակութային ժառանգության ոչնչացման կամ աղավաղման «ադրբեջանական փորձը»: Ադրբեջանում չկան քրիստոնեական մշակույթի ու հուշարձանների ուսումնասիրությամբ զբաղվող մասնագետներ, ինչի վկայություններն են իրենց իսկ հրապարակումները, որոնք սահմանափակվել են իսլամական ճարտարապետության ներկայացումով:

Նախ, անգամ եթե պայմանականորեն ընդունենք, որ դրանք հետագայի հավելում են, ապա, ըստ հուշարձանների պահպանության ընդունված չափորոշիչների, այդ դեպքում ևս դրանց վերացումը մշակութային վանդալիզմ է, քանի որ հաջորդող դարերում արված ավելացումները տվյալ ճարտարապետական հուշարձանի պատմության անբաժանելի մասն են:

Կասկածից վեր է, որ վերոհիշյալ հանձնաժողովը ստեղծվել է հայկական մշակութային ցեղասպանության ծրագիրը կյանքի կոչելու, արցախահայության մշակութային ժառանգությունն իր իսկության և ինքնության իրական տիրոջից օտարելու, տարածաշրջանի պատմությունը համալիր խեղաթյուրելու նպատակով:

Այս հայտարարությամբ Ադրբեջանն ի լուր աշխարհի, մեկ անգամ ևս հռչակում է, որ աներկբա խախտում է «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով» ամրագրված մտքի, խղճի, դավանանքի ազատությունը և այդ ազատության հետևանքով ստեղծված ժառանգությունն իր ուզած ձևով արժևորելու իրավունքը:

Արցախի հուշարձանների՝ աղվանական լինելու տեսության նպատակն է փորձել իբրև թե պատմականորեն հիմնավորել Արցախի հանդեպ Ադրբեջանի հավակնությունները և, գիտությունը ծառայեցնելով իրենց ցեղասպանական նկրտումներին, նախ՝ հիմնավորել Արցախի Հանրապետության այժմ բռնազավթված տարածքներում հայկական ներկայության ոչնչացումը, ապա նաև՝ «պատմամշակութային» կեղծ նախադրյալներ ստեղծել այժմ ռուսական խաղաղապահների կողմից վերահսկվող տարածքից ներս սողոսկելու համար:

Արցախի հուշարձանների վիմագրագիտական համակողմանի ուսումնասիրությունը, որը ներառում է այդ արձանագրությունների հնագրագիտական, լեզվաբանական, արվեստաբանական, աստվածաբանական, գրական-աղբյուրագիտական և, հատկապես, պատմագիտական քննությունը, միանշանակ ապացուցում է այդ եկեղեցիների և դրանց արձանագրությունների և այլ ռելիկվիաների հայկականությունը:

Համաշխարհային փորձից հայտնի է, որ ոչ միայն վիմական արձանագրությունների, այլև գրական տարբեր հորինվածքների և կեղծիքների դեպքում իսկույն երևում է, որ դրանք կատարվել են հետագայում: Արցախի հուշարձաններում հնարավոր չէ գտնել վաղ թվագրված և արհեստական գրաբարով հորինված որևէ արձանագրություն:

Ավելին, լեզվական առումով ինչպես վիմագրերի, այնպես և ձեռագրերի դեպքում ընդհանուր օրինաչափություն է, որ տեղի գրավոր խոսքում արտահայտվում են գրչության միջավայրի լեզվական իրողությունները՝ բարբառները: Արցախի վիմական արձանագրություններում նկատելի են արցախյան բարբառի տարրերը, մինչդեռ անհնար է գտնել ենթադրյալ աղվաներենի

որևէ հետք: Ավածը ևս մեկ անգամ վկայում է, որ մշակութային այս ժառանգությունը կերտել է Արցախի հայությունը՝ ճարտարապետական կոթողների որմերին դրոշմելով բարբառի տեղային իր շունչը: Էլ չենք խոսում Արցախի դրչության կենտրոններից մեզ հասած հարյուրավոր ձեռագիր մատյանների գոյության մասին, որոնց հիշատակարանների բովանդակությունն ինքնին լրացնում ու վերահաստատում է վիմագրերում վկայված սկզբնաղբյուրային տեղեկությունները:

Թե՛ ձեռագրերում և թե՛ ճարտարապետական հուշարձաններում հետագայում կատարվող հավելումները կառուցվածքային առումով, սովորաբար, դրվում են ոչ ճիշտ տեղում, քանի որ ճարտարապետական ընդհանուր հորինվածքում կառուցումից անմիջապես հետո, որպես կանոն, փորագրվում են տվյալ հուշարձանի կառուցման հետ կապված արձանագրությունները: Եկեղեցու ընդհանուր կառուցվածքային ստեղծագործական կառուցվածքի և խորհրդաբանության տեսանկյունից կարող ենք փաստել, որ արցախյան բոլոր նշանավոր կոթողների վիմական արձանագրությունները գտնվում են ճիշտ այն տեղում, որտեղ եկեղեցիների կառուցման մասին վկայող արձանագրությունները պետք է փորագրվեին այդ կոթողների կառուցումից անմիջապես հետո:

Պատմագիտական քննության ևս հնարավոր չէ ցույց տալ Արցախի հուշարձանների նվիրատվական կամ կառուցման մասին պատմական տեղեկություններ պարունակող՝ հետագայում ստեղծված, սակայն ավելի վաղ շրջանի վերագրվող որևէ արձանագրություն:

Հուշարձաններում, առհասարակ, ընդունված երևույթ է պատմության տարբեր շրջափուլերում տեղի ունեցած ուշագրավ իրադարձությունների արձանագրումը: Արցախյան հուշարձաններն այս առումով ևս բացառություն չեն, ուստի հետագա նորոգումների, նոր շինություններով համալրումների, նվիրատվությունների և այլ հիշարժան գործերի դեպքում կարևորվել է վիմագիր կազմելու ավանդույթը: Արցախի եկեղեցիների նման արձանագրությունները ևս վերաբերում են բացառապես հայկական միջավայրին և իրողություններին, ինչը ևս հաստատում է, որ այդ հուշարձաններն իրենց կառուցման օրից մինչև Ադրբեջանի վանդալիզմի այսօրվա դրսևորումները ոչ միայն հայ արվեստի մաս են, այլև դրանց հետագա պատմությունը ևս կապվել է այդ արժեքները ստեղծող հայ ժողովրդի հետ: Դա կրկնակի հաստատվում է նաև կոթողային հուշարձանների՝ հազարավոր խաչքարերի ու տապանաքարերի օրինակով, որոնց հայերեն՝ մեսրոպատառ վիմագրերը ևս հայկական միջավայրի գոյության ուղղակի արտացոլանքն են:

Եթե անգամ Արցախի Հանրապետության այժմյան օկուպացված տարածքում մշակութային վանդալիզմի իրականացման փորձ արվի, ապա, միևնույնն է, այդ հուշարձանների իրական լուսանկարները, չափագրությունները և արձանագրություններն իրենց վերծանություններով, ռուսերեն ու եվրոպական տարբեր լեզուներով արված թարգմանություններով չարունակելու են մնալ որպես մշակութային ցեղասպանության Ադրբեջանի դեմ ուղղված մեղադրանք՝ ցույց տալով, թե իրականում ինչպիսին են եղել այդ հուշարձանները նախքան Ադրբեջանի պետականորեն իրականացված ոչնչացումը:

Փաստորեն, հայկական մշակութային ժառանգության ոչնչացման, օտար-

ման քաղաքականությունը միջազգային հանրությանը ներկայացվում է որպես աղվանական ժողովրդի կրոնական իրավունքի վերականգնման քայլ՝ այդ նպատակի համար օգտագործելով Ադրբեջանում քաղաքական պատանդի կարգավիճակով գոյատևող ուղիղ ժողովրդի ներկայացուցիչներին: Ներկայումս ամեն գնով փորձ է արվում կյանքի կոչել նորահնար «Ուղիական» եկեղեցու նախագիծը: Այն դարձել է հայամերժ ազգային նպատակի, պատմության կեղծման կարևոր գործիք: Ադրբեջանական իշխանություններն առիթը բաց չեն թողնում հայտարարելու, որ իբրև «Աղվանից» եկեղեցու իրավահաջորդ «Ուղիական» եկեղեցին իրավունք ունի տնօրինելու Արցախում, պատմական Ուտիքում, անգամ՝ ներկայիս Թուրքիայի տարածքում գտնվող և ադրբեջանական աճպարար պատմաբանների կողմից աղվանական հռչակված եկեղեցիները:

Պատմական բազմաթիվ սկզբնաղբյուրների վկայություններից քաջ հայտնի է, որ Աղվանից եկեղեցին պատմության ողջ ընթացքում սերտորեն կապված է եղել Հայոց եկեղեցու հետ: Առաքելական քարոզության ավանդական շրջանից երեք դար հետո այն պաշտոնապես հաստատվել է Գրիգոր Լուսավորչի և նրա թոռան՝ Գրիգորիսի կողմից 4-րդ դարի սկզբներին և հետագա պատմության ողջ ընթացում «ի հոգևորս» Հայոց եկեղեցու նվիրապետական համակարգի մաս է կազմել:

Աղվանից եկեղեցու իրավազորությունը սկզբնապես տարածվում էր Բուն Աղվանից թագավորության տարածքի վրա, որն ընդգրկում էր Կուր գետի ձախափնյակը՝ մինչև Կասպից ծով, Կովկասյան լեռնաշղթա և Դերբենդի լեռնանցք (եպիսկոպոսանիստն այդ ժամանակ գտնվում էր Թագավորության մայրաքաղաք Կապաղակում): Սակայն երբ 428 թ. Սասանյան Իրանի արքայից արքան վերացրեց Հայոց Արշակունյաց թագավորությունը և Այսրկովկասում ստեղծեց երեք մարզպանությունների վարչական համակարգ, ընդ որում՝ Հայաստանի արևելյան և հյուսիսային նահանգները (Ուտիքն ու Արցախը՝ Աղվանք-Առանին, իսկ Գուգարքը՝ Վիրք-Վարջանին) մտցնելով հարևան մարզպանությունների կազմի մեջ, Աղվանից եկեղեցու իրավազորությունն անցավ (միջնադարի եկեղեցա-վարչական բաժանման սկզբունքների համաձայն) նաև Կուրի աջափնյակում գտնվող հայկական Ուտիք և Արցախ նահանգների վրա: Մարզպանության կենտրոնը 462 թ. Կապաղակից Ջող-Դերբենդ քաղաքը տեղափոխվելուց հետո այնտեղ հաստատվեց նաև Աղվանից եկեղեցու (որն արդեն արքեպիսկոպոսության-կաթողիկոսության կարգավիճակ էր ստացել) նստոցը: Սակայն չուտով՝ 6-րդ դ. առաջին տասնամյակներին, Աղվանից կաթողիկոսության կենտրոնը տեղափոխվեց Կուր գետի հայկական աջափնյակ՝ նորակառույց մարզպանանիստ Պարտավ քաղաքը (Ուտիք նահանգի Ուտի-Առանձնակ գավառում):

16-րդ դարի սկզբում Աղվանից եկեղեցու նստավայրը վերջնականապես հաստատվում է Գանձասարում՝ Արցախի կենտրոնում (նախորդ դարում նրան զուգահեռ կաթողիկոսանիստ էր նաև Ճալեթը՝ Կուրի ձախափնյակում): Դրանից հետո այն հանդես է գալիս նաև Գանձասարի կաթողիկոսություն անվամբ՝ իբրև Հայ Առաքելական Սուրբ եկեղեցու թեմերից մեկը, որը 19-րդ դարում Ռուսաստանի ցարական իշխանությունների իրավական ակտերով վերածվեց էջմիածնի կաթողիկոսության միտրոպոլիտության (արքեպիսկո-

պոսուվթյան):

Զարմանալի է, որ Ադրբեջանի՝ կովկասյան ալբանացիներին վերաբերող հռետորաբանությունում կենտրոնական տեղ է հատկացվում ուդիներին՝ մի ժողովրդի, որը վերջին 200 տարվա ընթացքում ենթարկվել է ֆիզիկական և բարոյական ծանրագույն հետապնդումների: 18–19-րդ դարերում ուդիների բռնի իսլամացման և ճնշման քաղաքական գործընթացը հանգեցրեց Աղվանքի ժառանգության այդ ամենաակներև ներկայացուցիչների գրեթե լսպառ ոչնչացմանը: Այդուհանդերձ, Նուխի գավառի, մասնավորապես, Շեքիի, Օղուզի (նախկին Վարդաշենի) և Գաբալայի (նախկին Կուտկաշենի) շրջանների առնվազն 43 ուդիական գյուղերի բնակչությունը պահպանել էր ուդիական (աղվանական) ինքնությունը և, չնայած լեզվական թյուրքացմանը և իսլամացմանը, շարունակել էր հարգել աղվանական պատմական հուշարձանները և սրբավայրերը, տոնել աղվանական տոները, տապանագրերում նշել իրենց ազգային ինքնությունը և այլն: Հնարավոր է, հենց այդ պատճառով ուդիները 1918–1920 թվականների էթնիկական բախումների ժամանակ թյուրքալեզու ադրբեջանցիների կողմից ենթարկվել են դաժան ֆիզիկական բռնության, ոչնչացման և արտաքսման: Վերջին ուդիական բնակավայրերի՝ Վարդաշենի, Միրզաբեյլուի, Սուլթան Նուխիի, Ջոռուդուի բնակչությունը և Նիժ գյուղի բնակիչների մեծ մասը, փախչելով հետապնդումներից, ստիպված եղան վերջնականապես լքել հայրենիքը, ուր իրենց նախնիները ապրել էին հարյուրամյակներ շարունակ: Ուդիների արտաքսումից հետո Ադրբեջանում «վերականգնվում է պատմական ճշմարտությունը». Աղվանքի ողջ նյութամշակութային ժառանգությունը ճշդրտվում կամ ոչնչացվում է:

